[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible] : 1829 ·

[illegible]

[illegible]

~~448~~ 281(2)
~~P.192~~ Ա 78

ԼՈՒՍԱՒՈՐ ՎԱՐՔ

ԵՒ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ՍՐԲՈՑ

Որք կան 'ի հին Տօնացուցի Եկեղեցւոյ
Հայաստանեայց։

Յօրինեալ հաւաքական բանիւք ճառընտրաց մերոց
և այլոց ազգաց, համեմատ ժամանակագրութեանց։

'Ի Հ. Մկրտիչ վարդապետէ Աւգերեան, յաշակերտութենէ մեծին Մխիթարայ Աբբայհօր։

Հրամանաւ Տ̃ն Տ̃ն Ստեփաննոսի Ագոնց Աբբայի և
Արքեպիսկոպոսի։

Արդեամբք ա̃ծասէր Մանուկ Աղայի Կարնեցւոյ մահտեսի Աճատուրեան։

ՀԱՏՈՐ Դ.

Միջոց Պենտեկոստէի ցվարդավառ։

'Ի Հռիփսիմեանց մինչև ցտօն Առաքելոց։

1812. 'Ի ՎԵՆԵՏԻԿ. [illegible]։
'Ի Վանս Սբյն Ղազարու։

2980
4448
591
179
Ա/1020
ՑՈՒՆԴԱՐԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ



Եղիցի յայտնի լեառն Տն. պատրաստեալ
՚ի գլուխս լերանց:

1649

ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Սրբց Հռիփսիմեանց կուսանաց:

Հյ. հոկտ. 5. և 6: Յն. սեպտ. 30: Լտ. սեպտ. 29: Ագաթանգեղոս: Խորէն. պատմ. հռիփսիմեանց 'ի ճառընտիրս. և դարձեալ ներբող հռիփս: Շարական: Շնորհալի. և այլք: Բոլլանդեանք 'ի սեպտ. 29: Մետափր. առ սուրիոսի. սեպտ. 30: Մնէ. արաբ. սեպտ. 30. և եգիպտ. սեպտ. 26: (1)

ՀՐԵՇՏԱԿ ՀՐԱՇԱգեղ Հռիփսիմէ, կոյսն մաքուր, և խաչազգեաց մեծ վկայուհին, պարծանք տանն Հռոմայ և պսակ փառաց եկեղեցւոյ Հայաստանեայց, էր օրիորդ Հռոմայեցի յերևելի տանէ և 'ի թագաւորական տոհմէ օգոստոս կայսեր կմ կղոդեայ ցեղապետ թագաւորաց, դուստր հաւատացեալ և բարեպաշտ ծնողաց, վայելուչ պատկերաւ և նշանաւոր գեղով, 'ի ժամանակս դիոկղետիանոսի կայսեր: Նա սնաւ անարատն հռիփսիմէ 'ի մանկութ՟է հետէ 'ի ձեռս գայիանեայ կուսանի՝ որ և էր 'ի նոյն ցեղէ, առաքինի և զարմանալի հօր և մօր դուստր․ զի հաւատացել՟ք ժամանակին թէպէտև ոչ ունէին համարձակութ՟ի 'ի մէջ հեթանոսաց, այլ սակայն ճշմարիտ ա՟ծպաշտութ՟բ և խաչակրօն վարուք իբրև զլուսաւորս փայլէին և 'ի նեղութ՟իս և 'ի հալածանս՝ նախանձ ունելով նմանօղ լինելոյ առաքելական դասուցն, որպ՟ աւանդապահք աւետարանական առաքինութ՟եց․ արքն որպ՟ թէ առաքեալք (ասէ խորենացին) լաւութ՟ե նախանձ ունէին․ և կանայքն զգաստանային նախանձելի օրինակաւ սբ՟ կոյս ա՟ծածնի, քն՟ի լինելով մարք, որպ՟ ասաց ոմն 'ի հարցն ։

Յայսպիսեաց աստի դստեր և սբ՟ն հռիփսիմէ, սան յաւազանէն լեալ սբ՟յն գայիանեայ, որ էր մայր կուսից վանականաց 'ի հռոմ՝ 'ի վանս սբ՟ առաքելոյն պօղոսի․ յորոյ 'ի շըրջաբնակութ՟ե առաւել քրիստոնէից էր տեղի՝ հանդերձ քահանայիւք, մինչև լինել անձանց երեք հարիւրոց․ և 'ի թուոյ նց՟ որչափ և աղջկունք կային, դաստիարակ ճանաչիւր բոլորից մեծն գայիանէ՝ և մայր հոգևոր, մանաւանդ որոց զկուսակրօն վարս ընտրէին առանձնութ՟ե 'ի վանսն նր՟ ը՟ պաշտպանութ՟բ տիրամօր կուսի ։ Արդ յայսմ տեղւոջ տեսուչ գոլով գայիանեայ՝ սնուցանէ առ ինքեան զհռիփսիմէ 'ի մէջ զգաստացելոց կուսանացն ։ Որ և պտուղ աղօթից նր՟ յարբունս հասեալ՝ ինքնակամ ընտրութ՟բ հաւանի հանաւնապազորդել անդ յուխտին կուսական մաքրութ̄, և դրել յաղախնութի̄ն ա̄ծամօր միշտ կուսի ։

Տեսեալ գայիանեայ 'ի սանն իւր 'ի Հռիփսիմէ զհոգւոյն մեծանձնութիւն՝ անուանէ զնա աղախին գոլ ս̄բյ ա̄ծածնի, և տայ զնա ուխտիւք և աղօթիւք ծառայել ա̄ծածնին ։ Արկանէ և 'ի նորին պարանոցն խաչ զս̄բյն յակովբայ՝ զմածեալն տ̄րունական արեամբ, որ կայր իբրև գանձ ժառանգութ̄ պահեալ յազգատոհմի նց̄՝ 'ի ժամանակէ անտի առաքելոց · զ̄ որում ասեն՝ յակոբոս եղբայր տ̄ն 'ի կենաց փայտէն հատեալ էր մ̄ս խնդրոյն պատրոնիկեայ տիկնոջ հռովմայեցւոյ հաւատացելոյ, որ և կոչի կին կղոդեայ կայսեր ։ Արդ զոր ունէր երջանիկն գայիանէ առեալ 'ի ծնողաց հռիփսիմեայ իբրև պահպան ինքեան 'ի վանս, յայնժամ 'ի նշանակ հարսնանալոյ սանին իւրոյ երկնաւոր փեսային՝ առաւել փափաքմամբ և երկիւղիւ՛ առեալ արկանէր 'ի պարանոց ս̄բյն մեծին հռիփսիմեայ, ո̄պ և երբեմն յականջսն ռեբեկայ գինտք եդան՝ հարսնանալ հօրն հաւատոց աբրահամու ։

Յայնմ հետէ ևս քան զևս յառաջադէմ լինէր երանելին հռիփսիմէ 'ի հոգևոր կեանս և յառաքինի սրբութ̄ · և վառեալ 'ի սէր ամենասբ̄ կուսին և կուսածին բանին հօր՝ գերազանցէր յոյժ քան զա̄մ քորս իւր հոգեհարազատս, որք խաչակիր վարուք ճգնէին · և կերակուր նց̄ ընդեղէն, և զգեստ և բըպաս անշուք ը՟ն օրինակի մերկացելոցն յՅէ. և աղօթակացուն և ընթերցուած անխոնջ, և ձեռագործ պէս՟պս. որում և զսակաւապէտ պարէնս 'ի ձեռս բերէին կամաւոր աղքատացեալքն վ՟ն Ք՟նի:

Եւ եղև ը՟ն այն աւուրս խորհեցաւ կայսրն դիոկղետիանոս կին առնուլ ը՟ն հեթանոսական օրինի 'ի վ՟ր այլոց կանանց իւրոց, 'ի պատիւ տանն հռովմայեցւոց 'ի թագուհի տիեզերապետութե՟ն. զի թերևս ամուլ էր առաջին կինն իւր, կ՟մ ատելի յաչս նորա, կոչեցեալն պրիսկէ սերենա ելևթերիա (ը՟ս առաջին փեմ ազատուհի): Սա՟յ և արքունի հրամանաւ խնդիր առնէին յա՟մ թագաւորութե՟ն ն՟ր, առաւել 'ի հռովմ վ՟ս աղնուական ազգին և սքանչելատեսիլ գեղոյ, գըտանել աղջկունս չքնաղագոյնս, և նկարել զպատկերս ն՟ց հասակաչափ. զի ընդ որ և հաճեսցի կայսրն, ածցէ զնա 'ի կնութի՟ն: Եւ լուեալ խնդրակաց՝ թէ յարգելավանս ուրեք 'ի սահմանս հռովմայ կան ժողովեալ կուսանք առաւել յազնուի և յարքունի զարմէ, եկին հասին 'ի վանս անդր գայիանեայ. և մտեալ բռնութ՟բ 'ի կայանս առաքինեացն, իսկ և իսկ ը՟ն տեսանելն զպարկեշտագեղն հռիփսիմէ՝ սքանչացան ը՟ն պայծառափայլ տեսիլ նորա. և նկարագրեալ 'ի տախտակի զպատկեր կերպարանաց ն՟ր՝ փութանակի հասուցին առ թագաւորն:

Իբրև ետես թագաւորն զգեղապանծ վայելչուն պատկերակերպ նկարագրին հռիփսիսիմեայ, հարաւ 'ի սէր ն՟ր . և անյապաղ ժամ տուեալ՝ որ սահմանէր կատարել զուրախութ՟ն հարսանեացն : Եւ սկսան սփռիլ այսր և անդր հրաւիրակք արքունի առ գլխաւոր իշխանս տեղեաց տեղեաց, զի օժտաբեր ընծայաւորութ՟ք հասցեն 'ի դուռն կայսերական՝ առնել տօն հարսանեաց ը՟ս օրինաց թագաւորաց :

Իսկ իբրև տեսին երամք մաքուր աղաւնեացն գունդք ս՟րց կուսանաց զգաղտնաձիգ նետս թշնամւոյն, զոր սովոր է ձգել 'ի ս՟րան ք՟սասէրս, 'ի միտ առին զպատրանս բանսարկուին, որ փորձի քակել զցանկ կուսութ՟ն սրբասիրաց. Սո՟յ 'ի ժամէ անտի պատկերագրութ՟ն սուգ ան՟հնարին պատե՟լ պաշարեաց զզգաստիցն դասս . և այնուհետև երանելին գայիանէ և պարկեշտասէր սան ն՟ր հռիփսիմէ իմացեալ հոգւոյ ակամբ զլինելոցսն՝ 'ի հոգս մտանէին յոյժ՝ հանդերձ այլ ևս սրբակրօն ընկերօքն . և յիշէին զուխտն սրբութ՟ն և զօրինաւոր կրօնս զգաստութ՟ն՝ բազում ողբովք և հառաչանօք յաղօթս ապաստան լինէին, խնդրելով 'ի բազումողորմ ա՟ծէ բարեխօսութ՟ք անարատ կուսի տիրամօր փրկել զն՟ս յառաջիկայ փորձութ՟ն :

Օգնեա՛ մեզ տ՟ր ասեն 'ի պատերազմիս՝ որ նեղէն զմեզ, զի յաղթեսցուք որոգայթից թշնամւոյն . և անուն քո տ՟ր փառաւոր լիցի . զի և մեք արժանի լիցուք հասանել յօթևանս արքայութ՟ն պատուիրանապահաց քոց : Մ՝ի լիցի պակասութ՟ի ձիթոյ լապտերաց

րաց մերոց, և մի՛ չիջցին ճրագունք հաւատոց ուխտի սրբութե՟ մերոյ. և մի՛ հասցէ տըխրական գիշեր կորստեան 'ի վ՟ր լուսաւոր ճանապարհաց մերոց, և մի՛ գայթակղեսցին ոտք մեր 'ի լուսագնաց շաւղաց քոց. և մի՛ կուրասցին բիբք տեսանելեաց մերոց 'ի զուարթարար ճառագայթից ճշմարտութեան քո. և մի՛ յափշտակեսցէ թռչունն մահացան զսերմանիս բուսոյն կենաց, զոր սերմանեաց 'ի մեզ միածին որդիդ քո տ՟ր մեր յ՟ս ք՟ս. և մի՛ տարցի զզգաստութ՟ի ս՟բ հօտի քո գազանն ապստամբ. և մի՛ յաղթահարեսցէ զգառինս հօտի քո գայլն ապականիչ. և մի՛ վարատեսցէ թշնամին ուխտիս մերոյ զոչխարս առաքելական եկեղեցւոյ քում ս՟բյ։

Տ՟ր ա՟ծ մեր դու առաքեցեր առ մեզ զմիածին որդիդ քո, որ եկն և ելից զա՟մ տիեզերս հոգւով իմաստութե՟, զի զամենեսեան նոր ի՟էլ անուամբ ա՟ծատեաս արասցէ. և նոյն ինքն ուսոյց մեզ ճանապարհ կենաց և փրկութե՟. և 'ի պահպանութ՟ի անձանց մերոց 'ի վտանգէ չարեաց ասաց, եթէ հալածեսցեն զձեզ 'ի քաղաքէ ուստեք, երթիջի՛ք յայլ. և զի մեք՝ որ զայս պատուէր առ 'ի նմանէ ընկալաք, առաջի աչաց տեսանեմք զկորստեան վտանգ, փութամք մեկնիլ 'ի տեղւոջէ աստի ը՟ հրամանի ն՟ր։ Արդ խընայեա՛ տ՟ր յանձինս երկիւղածաց քոց, որք ապաւինեցաք յանուն քո ս՟բ, զի մի՛ խառնակեսցուք ը՟ անարգութ՟ի պղծութե՟ հեթանոսաց . և մի՛ տար զզգաստութի սրբութն մերոյ շանազգեաց լկտութե նց , և մի՛ զմարգարիտս կուսութե հաւատոց մերոց 'ի շաւիղս խոզագնաց ամպարշտութե նց :

Մի՛ շարժեսցեն հեղեղք անածութե զհիմունս եկեղեցւոյ քո , որ բազմաթի՜ արդարովք իբրև բազմապատիկ քարամբք շինեցաւ 'ի վր վիմին հաստատնոյ , որոյ գլուխ անկեան եղև տր մեր յս քս : Խնայեա՛ 'ի մեզ տր , զի մի՛ լիցուք մեք իբրև զայն տունն՝ որ 'ի վր աւազոյն շինեալ էր , զոր դղրդուեցին բռնահոս փորձութիք . այլ հաստատեա՛ զմեզ ճշմարտութբ աւետարանին , և առաջնորդեա՛ մեզ ըստ կամաց քոց . և արժանի՛ արա զմեզ լուսապայծառ գիշերի հարսանեաց , յորում զգիշերն իբրև զտիւ լուսաւոր առնես 'ի ծագել ճառագայթից յերեսաց փառաց քոց . և ապրեցո՛ զմեզ 'ի ներքոյ թևոց քոց . զի և մեք հասցուք 'ի նաւահանգիստ կամաց քոց . և տուր մեզ , զի արբցուք զբաժակն նահատակութե , և առցուք զպսակն փոխարինաց յաւուր արդար դատաստանին 'ի յայտնութե փառաց քոց :

Օ այս ամ աղօթս և զպաղատանս 'ի բոլոր սրտէ մատուցեալ առ ած՝ հեղուին զանձինս առաջի տն , և խնդրեին հնարս փրկութե : Ապա խորհուրդ 'ի մտի հաստատեալ թելադրութբ հոգւոյն սբյ սբն գայիանէ և հռիփսիմէ հանդերձ պարկեշտաժողով ընկերօքն և քանի մի քահանայիւք և այլ ևս հաւատացեալ արամբք , ըստ ամ աւելի քան զեօթանասուն ոգիս, աջողակ համարեցան ծովագնաց ճանապարհաւ յեղակարծում պահու մեկնիլ 'ի հռովմայ յն՟ հեռաւորն. և ո՟ր յաջողեաց ն՟ց. զի կային նաւք պատրաստականք երթալ յաղեքսանդրիա եգիպտացւոց: Նու այնմ՟ ելին ս՟ք՟ն զանխուլ 'ի կայանից իւրեանց՝ որ մերձ էր 'ի տիբերիս գետ, և անտի նաւեցին յեգիպտոս՝ ծպտեալ յանծանօթ կերպարանս, փախստեայ լինելով տարաշխարհիկ օտարութ՟՝ ուր ո՟ր առաջնորդեսցէ ն՟ց. վ՟ զի լաւ համարեցան վտարանդի կենօք մոլորիլ յօտար աշխարհս, և կրել զա՟մ վիշտս վտանգի ը՟ մարմնոյ, քան 'ի բաց կալ 'ի ս՟բ սիրոյ հոգևոր փեսայէն: Նըմին իրի ը՟ օրինակին աբրահամու ո՟ր յա՟յ ընկալեալ պատուէր, թէ ե՛լ յերկրէ և յազգէ քումմէ, և ե՛կ յերկիր՝ զոր ցուցից քեզ, և տիրական խոստմանն ակնկալեալ, թէ որ թողցէ զկենցաղականս վ՟ս անուան իմոյ, զկեանս յաւիտենականս ժառանգեցուցանեմ նմա, կամակար մտօք իբրև ա՟ծակամ հրամանաւ թողին լքին միաբան զերկիր ծննդեան և զազգ և զտոհմ, և բարձին զխաչս իւրեանց՝ գնալ զհետ առաջնորդութ՟ ա՟ն, որ ձգէր զն՟ս յարևելս՝ ծագել նոքօք անդանօր զլուսաւորութի փառաց իւրոց:

Արդ յորժամ ելին յաղեքսանդրիա եգիպտացւոց՝ իբրև անծիկք և անծանօթք ա՟մ երկրի, սկսան պանդխտօրէն ճանապարհ առնել՝ ուխտ եդեալ անձանց նախ անցանել յեդէմ, և այց առնել ա՟ծակոխ քաղաքին և տնօրինական տեղեաց՝ բաժանելով 'ի միմեանց մերձ 'ի բնակութիս մարդկան, և համախումբ լինելով ըստ կարի յամայի տեղիս. մինչև գտանիցեն 'ի տրութե՟ ուրեք տեղի աներկեան և անկասկած յահէ ինքնակալութե՟ հռովմայ ։

Այլ հասեալք 'ի պաղեստին, և երթեալք 'ի յայրն բեթղեհեմի՝ աղօթս և պաղատանս մատուցանէին առաջի ամենօրհնեն՟ սրբուհւոյն, օգնել անձանց և առաւելապէս հռիփսիմեայ վտանգելոյ և փախուցելոյ, որ եղև նր՟ աղախին 'ի մանկութե՟ ։ Այլ գնացեալ անտի 'ի գեթսեմանի 'ի գերեզման ա՟ծածնին. և անդ աղօթելով ասէր երանելին գայիանէ. Մա՛յր լուսոյ կո՛յս անարատ, որ կուսութե՟ց ես վերակացու, և սրբութե՟ պահապան, և որբութե՟ օգնական, ընկա՛լ զաղաչանաց աղօթս յանարժան աղախնոյս. և զորդի հոգւոյ իմոյ՝ զոր սնուցի քեզ տուե՟լ աղախին, զգաստացեալ արդարացի արժանաւորապէս. և մի՛ տար փորձել օտարին, և մի՛ տացես աղտեղանալ անձամբ 'ի ձեռն պիղծ թագաւորայն. զի մի՛ ուխտս մեր՝ որ առ քեզ է, խափանեսցի. այլ յիշեա՛ ըզպանդխտութի՟ իմ և իմոյն, և զծուխս 'ի կենցաղս մեր՝ որ վ՟ քո. յիշեա՛ և զչարչարանս որդւոյ քո և ա՟յ մերոյ. և ողորմեա՛ մեզ. որով և մեք օրհնեմք զքեզ և երկրպագեմք ա՟ծածնիդ ը՟ սբ՟ միածնիդ (2) ։ Այլ այսպէս բազում արտասուս հեղեալ՝ մնացին անդ յեղ՟մ ամսօրեայ ժամանակաւ, ակն ունելով

լով այցելութե՟ ո՟ն և տիրամօրն ։

Ապա տեսիլ երևէր սր՟ցն , և հրաման առնուին յամենասր՟ ա՟ծածնէն՝ գնալ 'ի հայս 'ի յերկիրն արարատեան 'ի բաժինն Թադէոսի առաքելոյն . այլ նախ անցէք առ ը՟ եդեսիա 'ի տես անձեռագործ դաստառակի ո՟ն . և ապա զպատկերն փայտեղէն՝ որ եդեալ է յերեսս իմ յաւուր փոխման իմոյ , զնա խնդրեսջի՛ք 'ի հայս , մինչև կատարել անդ զընթացս ձեր արեամբ ։

Յայնժամ յարուցեալ խնդութե՟՝ եկին յեդեսիա քաղաք . և երկրպագեալ փրկչական պատկերին՝ լցան ուրախութե՟ , և համբարձան տեսեալ զբանն մարմին եղեալ . մինչև խղձ լինէին ոմանք 'ի սր՟ցն չմեկնիլ 'ի տեղւոջէ անտի ։ Ապա դարձեալ սքանչելի տեսիլ երևէր նց՟ , յորում յորդորէին 'ի ձգունս իւրաքանչիւր՝ ուր և առաջնորդեսցէ նց՟ տր՟ . և մ՟նկ ոմանք 'ի սր՟ կանանց անտի մեկնեալք 'ի բազմութէ՟՝ մնացին 'ի նմին քաղաքի 'ի մեծ եկեղեցւոջն աբգարու , 'ի հիման սր՟յն Թադէոսի կրօնաւորեալք ։ Սոյնպէս և այլք ոմանք դէմ եդեալ անցին 'ի վերին կողմանս . մինչև միում 'ի նոցանէ անցանել 'ի վիրս , և միւսումն 'ի դարանաղեաց գաւառ առնուլ զտեղի 'ի խորշ լերինն սեպուհ կոչեցելոյ . որոց անունք ասել 'ի վարս սր՟ց կուսանացն նունեայ և մանեայ ։

Իսկ մեծ առաքելուհին գայիանէ և սան նր՟ սր՟ն հռիփսիմէ հանդերձ այլովք՝ բազում տառապանօք գնացեալ եկին 'ի բզնունեաց

գա֊

գաւառ 'ի քաղաքն խլաթ · ուր երեկօթս արարեալ՝ և անտի փոխին 'ի գաւառն մոկաց 'ի տեղին կոչեցե՟լ սբ՟ խաչ · ուր և մեծ սքանչելիս կատարեաց ած՟ 'ի ձեռն նց՟ պատուական սբ՟ խաչին , ով՟ և ցաւուրս խորենացւոյն պատմեալ լինէր 'ի մէջ բնակչաց · վո՟յ ասէ առ սահակ արծրունի , կմ՟ առ իշխանն՝ առ որ գրէ · որում ես և դու հասու · և մեզ երկրորդել զի՞ է ։ Քանզի էր անդ տեղի դիւաց բագին երևելի՝ լցե՟լ պաշտամամբ · և 'ի հասանել անդ առաքելանման քահանայիցն (եսայեայ և դանիէլի) և սբ՟ց կուսանացն՝ զայրագնե՟լ դիւացն , և ոչ կարացեալ առնել ինչ նց՟ յերեսաց սբ՟ նշանին , դիմեցին 'ի վ՟ր պաշտօնէից իւրեանց՝ կծանել զնս՟ · խեղդէին զնս՟ , ծակէին , և պնչատէին ։ Յայնժամ առաքելանշան քահանայքն սաստեցին դիւաց զօրութ՟բ սբ՟յ նշանին , և հալածե՟լ զնս՟՝ քանդէին զպաշտամունս նց՟ · և բժշկէին զխեղեալսն · վո՟յ տեղին կոչեցաւ կծաւ · ուր և յետոյ հաստատէ վանս սբ՟ն գրիգոր ։

Եւ վ՟ն զի յայտնի եղև անուն սբ՟ցն , նոքա փութան՟կ մեկնեցան 'ի տեղւոջէն · և գաղտ գնացե՟լ ը՟ մէջ բարձրաբերձ լերանցն կորդուաց՝ եկին 'ի լեառն սողոփի որ 'ի բերկրացւոց գաւառի ։ Անդ տագնապեաց զնս՟ ախտ աչացաւութե՟ , (որ ստէպ պատահէ որոց փոխին տեղւոջէ 'ի տեղի ը՟ ծով և ը՟ ցամաք , մանաւանդ 'ի լեռնակողմանս ·) և 'ի կալ նց՟ յաղօթս առ տր՟՝ երկու աղբերք բղխեցան

ցան հանքային , զի էր ժանգ ջրոյն կարմիր և սպիտակ . որով գտին զառողջութի̃ . և մինչև ցայսօր օգնէ աչացաւաց յանուն սրբուհեացն (ասէ խորեն") ։

Այս լերինք են կորդուաց , զորս ասորիք համարէին լինել նոյն ը̃ արարատայ՝ յոր նստաւ տապանն նոյի . և զանուն մօտակայ քղ̃քագեղջն՝ որ կոչէր Թըմնիս (ո̃ւ ութ) մեկնէին 'ի նոյն միտս , զի ութ ոգիք ելին 'ի տապանէն ։ Արդ 'ի տեղիս անդ յապահովացեալք ս̃բքն՝ առ ժամանակ մի զտեղի առին յաշխատութէ̃ ճանապարհին , և խորճիթս շինել̃ բնակեցան ։ Եւ անտի գնացեալ և օթևանս արարեալ հանգեան 'ի փոքրս գետոյն մօտ 'ի կամուրջն 'ի կողմ̃ն ամորեաց 'ի ծառաւէտ ընկուզուտ տեղիս ։

Եւ անտի փոխեալ ելանեն 'ի Հայաստան գաւառ (կմ̃ 'ի հայոց ձոր) , 'ի խորին խորշ լերինն մշկունեաց . ուր ասին լինել այծեմունք մշկապորտք . ուր և բազում ուրուկս հալածականս գտեալ՝ բժշկեն զն̃ս ս̃բ խաչի̃ն ընտրեալ քահանայք . և զի 'ի ն̃նէ աղբիւր շնորհեցաւ ն̃ց , յայսմ տեղւոջ ընտրեցին կալ ծեր կանայքն մինչև ցոր կատարման իւրեանց ։ Իսկ այլոցն չուեալ անտի՝ եկին յեզր բժունեաց գետոյ (որ անկանի 'ի ծո̃վն բզնունեաց) . և յետ դադարելոյ անդ աւուրս ոչ սակաւ՝ անտի փոխել̃ բնակեցան յայնկոյս գետոյն մօտ 'ի յակն յորդաբուղխ . և անդ բազում աւուրս անցուցանէին՝ զուարճացեալք 'ի տեղւոյն բարեհամբաւութեն .

թին. մինչև ընտրել և ոմանց կալ մնալ անդ.
ուստի անուանի տեղին սբ̃ տիկին ։

Իսկ մնացեալքն յառաջ անցին 'ի վայր՝ ուստի հոսին փոքրագոյն չար ջուրքն 'ի լերանց կանգուարաց , որ կոչի ագռաւաքար , և անդ գարնանային ուղխքն գետացեալ գան յուժնդակուն գետոյն մեծի , այն է տիգրիս ։ Եւ իբրև հասին 'ի սահմանս անձևացեաց , գըտին սակաւ ինչ քրիստոնեայս . և 'ի նոցանէ տեղեկացեալ՝ թէ ուր իցէ պատկեր տիրամօրն հրաշագործ , եկին 'ի հոգւոց վանս , և երկրպագեցին ուրախացեալք , և տային գոհութի̃ սրբուհւոյն ։ Եւ յետ կալոյ անդ աւուրս սակաւ՝ ոչ կամեցան հաւատացեալք տեղւոյն յերկարել անդ դասուց կուսանացն, երկուցեալք 'ի կասկածանացն ։ Եւ նք̃ դէմ եդեալ գնացին 'ի գլուխ լերինն պաղատոյ . և ոչ գիտէին , թէ անդ էր երևելի տեղի դից և բնակարան դիւաց , զոր մեծարէին բնակիչք տեղւոյն իբրև տուն արամազդայ և աստղկայ . և յաճախ պաշտամամբք անուն կարդային տանն՝ պաղատ , իբրև ապարանք չա̅ծոց . որ էր 'ի խորաձորն է̅ զառ 'ի վայր լերինն յարեգականն կոյս ։ Եւ մերձ նմին սակաւ մի առ 'ի կողմն հարաւոյ՝ 'ի կատար լերինն , որ 'ի վայր իջանէ , գոյր տուն կրակի անյագ հրոյ անդադար վառելոյ 'ի պատիւ տանն չա̅ծոց . և [illegible] անուն ակն յորդաբուղխ աղբեր բղխելոյ 'ի մէջ քարանց յատն լերին , որ կոչէր բո[illegible] . և ոչ [illegible] [illegible]էին իբրև քար ջրոյ , նոյնպէս և զաղբիւրն իբրև եղեայր հրոյ ։ Եւ զի յայրս քարին որջացեալ կային վիշապք երկու սևացեալք , դևքն նոքօք այնչափ արհաւիրս արկանէին 'ի վ՟ր գաւառականացն , մինչև պաշտել և զվիշապսն իբրև ա՟ծս , և զենուլ երբեմն ն՟ց աղջիկ կոյս և պատանիս անմեղս ․ որոց արեամբն զուարձացեալ դիւաց՝ հանդերձ բագնօքն և հրով և աղբերբն , ահագին իմն տեսիլ և փայլումն և թնդմունս և կայծմունս գործէին ․ թող զոր 'ի մէջ խորաձորոցն օձս և կարիճս լի թունովք մահաբերին ․ յորոց ահէ դողային մերձակայք ։ Անդ հասեալ ս՟բ կանանցն , և իմացեալ զադէտս մոլորելոյն , գթացան 'ի ն՟ս ․ և աղօթիւք և արտասուօք յերկինս հայեցեալ՝ աղաչէին զա՟ծ այց առնել երկրին ․ և առեալ զք՟ր նշանն՝ կացին 'ի վ՟ր աղբերն , և խաչակնքեցին ։ Ուստի փախստական եղեալ դիւացն՝ 'ի բագինսն անկանէին պաղատան , վայ զվայիւ աղաղակէին ․ մինչ 'ի լեռնէ 'ի լեառն ոչ այլ ինչ լսիւր , բայց վայ և ճիչ ։ Իսկ ս՟բ կուսանացն անցեալ ը՟ն մէջ ձորոյն՝ նոյնպէս խաչակնքէին 'ի վ՟ր օձաբնակ վայրաց , և ընդդէմ բագնաց կռոց 'ի լեռնակողմանն ․ մինչև եկին 'ի գեօղն՝ որ կոչի կորիթ ։ Եւ այնպէս իսպառ հալածական արարին զա՟մ դևս զօրութ՟բ ն՟ր խաչին ․ զպատկերս կռոց փշրեցին , զօձսն թունաւորս սպանին և քարացուցին , և զաղբիւր դիւացն ցամաքեցուցին ։ Զոր տեսեալ բնակչաց գեղջն կորիթայ՝ հաւատացին 'ի ք՟ս 'ի ձեռն ն՟ր երանելեացն ․

լեառն · զոր և յետոյ զտեղին սբ՟ն Գրիգոր շինեաց եկեղեցիս երկուս , զի մի՛ մնասցեն հետք հին պաշտամանց հեթանոսաց · և 'ի կորիթ փայտեղէն սեղան կազմէ · և նշան Թողու անդ զգօտին և զգաւազանն իւր :

Եւ ինքեանք սբ՟ կուսանքն 'ի տոսբ գաւառ եկեալ՝ իջին 'ի դաշտն վանայ 'ի յոտն վարագ լերին , և հանդեան հանդէպ շամիրամակերտին 'ի վայելուչ վայրի · (որ յետոյ կոչեցաւ սբ՟ խաչ · և յայլազգեաց ղուռուպաշ) : Այլ անդէն հասանէր 'ի վ՟ր հալածումն մեծ վ՟ս համբաւոյ կործանելոյ նոցա զբագինս · և լուեալ սբ՟ցն՝ եթէ 'ի խնդիր են ինքեանց , Թողուն զսբ՟ նշանն հանդէպ վանայ 'ի հարաւակուսէ լերինն վարագայ 'ի փոքրագոյն խորձիթս՝ ամփոփեալ 'ի մէջ քարանց (կմ՟ 'ի խաչաքարին) · և ինքեանք անդ 'ի լեառն վարագ ամրացեալք՝ ցան և ցիր 'ի խորշս լերինն բնակեցան , արարեալ իւրեանց գետնափոր դադարս · մինչև յետ դարձի յուզակաց և խնդրակաց՝ անցանել նց՟ 'ի հիւսիսակողմն , և փախչել 'ի վերին հայս : Այլ երկուք ումանք 'ի քահանայիցն սբ՟ց՝ որք պահապան էին սբ՟յ նշանին , բնակեցան 'ի նմին տեղւոջ մինչև ցօր կոչման իւրեանց առ ք՟ս , և տեղիք նց՟ կոչեցան ուրբաթայրք · քանզի 'ի յուրբաթէ 'ի յուրբաթ մատուցանէին զսրբութ՟ն պատարագն , և բաշխէին արժանաւորապէս սբ՟ կանանցն զմարմին և զարիւնն տն՟ :

Արդ՝ ցայս վայր յելից անտի 'ի հռոմայ՝

բազմադիմի վշտօք ճանապարհ հատեալ երանելեացն խմբի, և գրեթէ կիսով չափ աստ և անդ տեղակալեալ յանծանօթս, մնացեալքն այնուհետև իբրև հոգիք երեսուն և հինգ՝ յուղի անկանէին ընդ սմին հռիփսիմեայ և գայիանեայ ազդմամբ տ̄ն 'ի բուն իսկ յարարատեան Ծ̄• և եկեալ դադարէին իբրև 'ի տեղի անդորր՝ մօտ 'ի վաղարշապատ արքայանիստ քաղաք թագաւորաց մերոց, որ և Նոր քաղաք կ̄մ քաղաքուդաշտ կոչիւր, և երեք քահանայք ը̄ նոսա ։ Քանզի գտեալ նոցա արտաքոյ վաղարշապատու 'ի հիւսիսոյ յարևելից կուսէ հնձանայարկս այգեստանւոյ, մտին հանգարտեցին անդ աւուրս քանի մի • և ոչ այլ ինչ գոյր թոշակ ը̄ ն̄ս, կ̄մ դրամ 'ի գնել զկերակուր, բայց միայն մի ո̄մն 'ի նոցանէ ունէր արուեստ ապակագործու̄թ՝ առնել ուլունս ապակեղէնս • զոր տային 'ի գին կերակրոյ և հանդերձի՝ հանդերձ դոյզն ձեռագործովք անձին իւրաքանչիւր ըստ կարի • և այնպէս սակաւապէտ թոշակօք շատանային՝ իբրև զպանդուխտս և զնժդեհս 'ի վ̄ր երկրի ։

Եւ այն ինչ զարմացեալ կային անցաւորք և տեսօղք ը̄ գալուստ այսպիսի օտարականաց անծանօթից, ոչ յետ բազմաց յայտնի եղեն պատճառք իրայն ։ Քանզի ընդ մեկնիլ նոցա 'ի սահմանացն հռոմայ, իբրև ազդ լինէր դիոկղետիանոսի կայսեր՝ թէ գաղտագնաց եղև գայիանէ մայր կուսանաց հանդերձ հռիփսիմեաւ, զոր ընտրեալ էր նր՟ 'ի հարսնութ՟ի, խռովեցաւ յոյժ, և հրաման ետ յոյզ և խնդիր առնել յամենայն տեղիս մօտաւորս և հեռաւորս ։ Եւ իբրև 'ի դերև ելանէր 'ի ժամուն, թափեաց զցասումն 'ի վր՟ այլոց քերց 'ի վանս գայիանեայ. և սպան զգլխաւորն 'ի նս՟ զոյի կամ եւզոյի անուն՝ հանդերձ այլովք ոմամբք, որք եղեն վկայք ք՟ի, յաղագս ոչ ըմբռնելոյ 'ի վարմս մահու զմեծ առաքելուհին ։ Յետոյ ուրեմն լուր հասանէր վր՟ ելից կուսանացն յաղեքսանդրիա, և անցանելոյ ը՟ պաղեստին և ը՟ միջագետս մինչև 'ի հայոց աշխ՟. նմին իրի դեսպանս և հրովարտակս արձակէր կայսրն 'ի տեղիս տեղիս վր՟ սոցին իրաց ։ Եւ ահա այն ինչ նորոգ եկեալ և դադարեալ էր հռիփսիմեանց յայգեստանս վաղարշապատու, եկն եհաս և դեսպան 'ի հռովմայ առ տրդատ արքայ հայոց մեծաց, և յանդիման եղեալ թագաւորին 'ի վաղարշապատ քաղաքի՝ մատոյց նմա զհրովարտակն դիոկղետիանոսի, որ ունէր օրինակ զայս ։

Ինքնակալ կայսր դիոկղետիանոս առ սիրելի եղբայր և աթոռակից մեր տրդատ՝ ողջոյն ։ Գիտութ՟ի լիցի եղբայրութեդ քում՝ նիզակակցի մերում՝ վր՟ չարեացս, որ անցանեն ը՟ մեզ հանապազ 'ի մոլար աղանդէն քրիստոնէից, զի յա՟մ ժամ դսրովեալ լինի տրութիս մեր յուխտէ նց՟, և արհամարհեալ լինի արքայութիս մեր 'ի նոցանէ. և ինչ համեստութ՟ի ոչ գոյ 'ի նս՟. զի ինքեանք զմեռեալ ումն խաչեալ պաշտեն, և փայտի երկիր պագանեն. և զոսկերս սպանելոցն պաշտեն. և զիւրեանց մահն՝ որ վասն ա̃յն իւրեանց է, փառս և պատիւ համարին ։ Եւ 'ի մեր արդար օրինացս դատապարտեալ լինին. վասն զի և զմեր նախնիսն զառաջին զթագաւորս դառնացուցեալ ձանձրացուցին. զի մեր սուրբս բթեցան, և նոքա ոչ զարհուրեցան 'ի մեռանելոյ ։ Օ ի ինքեանք զհետ հրէի ուրուեմն խաչելոյ մոլորեալ են, և զթագաւորս անպատուել ուսուցանեն, և զա̃ծս ինչ ոչ գրեն. նաև զլուսաւորացդ զօրութի̃ զարեգական և զլուսնի աստեղօք հանդերձ առ ոչինչ համարին. նաև արարած ասեն նորին խաչելոյ. և գլխովին ըզպատկերս դիցն ա̃ծոցն անարգել ուսուցանեն. և զա̃ծս ա̃մ փոխեցին 'ի պաշտամանէ դիցն. մինչ զի և զկանայս անգամ յարանց, և զարս 'ի կանանց կենդանւոյն մեկնեալս հեռացուցանեն ։ Թէպէտ և ազգի ազգի պատուհաս տանջանաց 'ի վ̃ր եդաք, առաւել ևս տոչորացեալ յորդագոյն տարածեցաւ աղանդն ն̃ց. Թէպէտ և բիւրապատիկ ինչ արհաւիրս սաստից 'ի վ̃ր արկաք նոցա, առաւել ևս բղխեաց յորդեաց ուսումն ն̃ց ։ Դէպ եղև ինձ տեսանել յաղանդոյ ուսման ն̃ց օրիորդ մի կոյս և գեղեցիկ, և կամեցայ առնուլ զնա ինձ կնութե̃. սակայն և զայն իշխեցին խորամանկել յինէն. և ոչ իբր 'ի թագաւոր ցանկութե̃ փափաքեցին յիս, և ոչ 'ի սաստից սպառնալեաց իմոց երկեան

նա

նոքա, այլ առաւել ևս մ՟ աղանդոյն իւրեանց՝ աղտեղի և պիղծ և գարշ համարեցան զնա. և զնուցիչ նորին հանդերձ օրիորդաւն 'ի կողմանս ձերոյ տ՟րութեդ փախուցեալ յուղարկեցին: Արդ՝ փոյթ լիցի քեզ եղբայր մեր, զի ո՛ւր և իցեն զկողմամբք զայդոքիւք, զհետս ն՟ց գտանել մարթասցիս. և որ ընդ նմայն իցեն դայեկաւն հանդերձ՝ վրիժուց մահու արժանի արասցես. և զհրապուրեալն զչքնաղագեղն ինձ 'ի սոյն արձակեսցես. ապա թէ հաճոյ թո՛ւեսցի քեզ տեսիլ գեղոյ ն՟ր, առ քե՛զ պահեսցես. զի ոչ երբէք գտաւ նման նմա 'ի մէջ հռոմոց աշխ՟իս: Ողջ լեր դիցն օգնականութ՟բ ամ՟ պատուո՛վ:

Եւ եղև իբրև ընթերցաւ զայս գիր արքայն տրդատէս, անդէն վաղվաղակի հրաման տայր մեծաւ սաստկութ՟բ՝ խնդիր առնել մ՟ բանին այնորիկ յամ՟ սահմանս աշխ՟ին հայոց, զի չև էր գիտակ զնորոգ գալստենէ հռիփսիմեանց մօտ 'ի բուն իսկ թագաւորական քաղաքն: Եւ ահա այն ինչ խնդրակքն այսր անդր սփռեալ խուզէին և քննէին, փութով 'ի վեր եղ բանն. քանզի եկեալ ոմանց յայդեստանեայց՝ պատմէին, թէ գուցէ նոքա իցեն՝ զորս տեսանեմք յայն ինչ հնձանս. զի և չէր իսկ պարտ թաքչել ճըշմարտուե՟ն վկայիցն առաքինուե՟ն, և ոչ լուսոյ ճրագին ը՟ գրո՛ւանաւ ծածկիլ, կ՟ ընդ ստո՛րերաւ թաքստեան աներևոյթ լինել. այլ ժամ էր այնուհետև կուսական լապտերաց 'ի վ̅ր աշտանակաց ոսկւոյ խղովք պարարտուէ ջահաւորեալ փայլել, և լուսաւոր առնել զհայաստան ծ̅ համօրէն՝ համապայծառ լուսով ա̅ծգիտուէ ։

Արդ իբրև հռչակեցան իրքն զ̅ր կուսանաց , հրաման ետ արքայ տրդատ լէգէոնի միում հետևակ զօրուն՝ սպարափակ առնել զաւուրս երկուս , և պահել շուրջանակի զն̅ո անդէն՝ ուր գտինն 'ի վանս հնձանին ։ Ապա յետ երից աւուրց հռչակեալ լինէր ը̅ քաղաքն համբաւ գեղեցկութե̅ հռիփսիմեայ , և շշնջէին 'ի հրապարակս տեսօղք և լսօղք , եթէ չի՛ք ուրեք նման նմա . և յաձախեաց զարմացումն առ ամենեսին՝ 'ի գիտել անդ , թէ ուստի՞ յո՞ փախուցեալ եկեղ է յերեսաց կայսեր . մինչև դիմել բազմութե̅ մեծամեծաց և փոքունց 'ի տեղին 'ի տես նորա առ հետաքրքրութե̅ և առ պագշոտ յիմարութե̅ ։

Իսկ պարկեշտագեղ և անարատ հարսն ք̅ի ն̅ր կոյսն հռիփսիմէ և ա̅մ երանելի կուսանքն իբրև տեսին զանմիտ և զշուայտաբարոյ հեթանոս մարդկանն զանպատկառութի̅ , յարտասուս հարեալ առ հասարակ և կական բարձեալ , զձեռս 'ի յերկինս համբառնային ջերմ աղօթիւք՝ խնդրել զփրկութի̅ յամենազօր յամենակալ ա̅նէն . զի որ յառաջին նուագին ապրեցոյց զն̅ո յանօրէն պղծութե̅ հեթանոսաց , նոյն տացէ և ըզմարտին յաղթութի̅ 'ի պարծանս և 'ի լուսաւորութի̅ ն̅ր հաւատոյ ։ Եւ առ սաստիկ պատ֊

պատկառանացն զերեսս իւրեանց պատեալ՝ 'ի վայր ունէին զգլուխս և յերկիր կորանային, զի մի՛ լիցի լկտի հայեցողաց համարձակ տեսանել զդէմս ն՟ց :

Այլ քանզի ումանք 'ի մերձաւորաց Թագաւորին երթեալ պատմեցին զաննման տեսիլ գեղոյ Հռիփսիմեայ, և արծարծեցին զսէր ն՟ր 'ի սիրտ տրդատայ, վ՟ն որոյ 'ի միւսում աւուր անդ չորրորդի ը՟ առաւօտն փութանակի ել հրաման 'ի Թագաւորէ անտի՝ զերանելին Հռիփսիմէ տանել յարքունիս, և զ՟որն դայիանէ անդէն պահել պարկեշտաժողով ընկերօքն հանդերձ : Անդէն արքունուստ վաղվաղակի ոսկիապատ դահաւորակս հասուցանէին առ դուրս հնձանին, ուր էին վանք ն՟ց արտաքոյ քաղաքին . Նաև հանդերձս ազնի՛ւս և գեղեցիկս, և զարդարանս երևելիս մատուցին կուսին, զի զարդարեսցի, և շքով և պատուո՛վ մտցէ 'ի քաղաքն, և յանդիման լիցի Թագաւորին . քանզի ուր չև էր տեսեալ զնա՝ խորհեցաւ կին առնել զնա 'ի վ՟ր աշխէն տիկնոջն առաջնոյ, սակս մեծի համբաւոյ վայելչու՟ե գեղոյ ն՟ր :

Իբրև ետես մայրն զդաստութ՟ե ս՟ն դայիանէ զեկեալ հասեալ յետին փորձանս չարին, խօսել սկսաւ անդէն ընդ սրբասէր սանուն իւրում Հռիփսիմեայ, և ասէ այսպէս . Յիշեա՛ որդեա՛կ իմ, զի թողեր լքեր զմեծապատի՛ւ շքեղաշուք ոսկիակուռ զաթոռն քո հայրենի զծիրանեաց Թագաւորութ՟ե՟ն (ուր կա-

կարողն էիր հարսնանալ կայսեր), և ցանկացար անանց ճառագայթարձակ լուսոյ թագաւորութեան ք՟ի · որ է արարիչ և կեցուցիչ և նորոգիչ, և խոստացեալ պահէ զանպատում բարիսն յուսացելոց իւրոց ։ Եւ դու ո՛րդեակ անարգեցեր զքո բնիկ զծիրանիսն · արդ որդեօք տացե՞ս դու զզգաստութ՟ի սրբութեան քո կերակուր շանց յայսմիկ 'ի բարբարոսծիս ։ Քա՛ւ քեզ որդեակ, եթէ լինիցի այդ այդպէս · այլ ընկալցի զմեզ քև հանդերձ՝ այն, որ առաջնորդեաց մեզ 'ի մանկութենէ մերմէ մինչև յօրս յայս և 'ի ժամս յայս՝ յորում հասեալ կամք ։

Իսկ ս՟րբն հռիփսիմէ իբրև ետես զայն ա՟մ ամբոխս չարեաց, և լո՛ւաւ զայնպիսի բանս 'ի դայեկէն իւրմէ, փութացաւ հոգւովն ս՟բվ, և ամրացեալ իբրև զինու զօրութ՟բ տ՟ն իւրոյ՝ արութ՟բ. զդէմ կալաւ բուռն յարձակման բանսարկո՛ւին · Ճչեաց մեծաձայն ուժով, և տարածեալ զբազուկս իւր 'ի նմանութ՟ի խաչին, սկսաւ գոչել յերկինս՝ ասելով · Տ՟ր ա՟ծ ամենակալ, որ հաստատեցեր զա՟մ արարածս քո 'ի ձեռն որդւոյդ քո միածնի և սիրելւոյ, և կազմեցեր զյօրինուա՛ծս երևելի և աներևոյթ արարածոց 'ի ձեռն հոգւոյդ ս՟բյ · դո՛ւ ես՝ որ յոչնչէ զա՟մ յէութ՟ի յօրինեցեր · և քոյով հրամանաւ փարին ա՟մ զօրութ՟իք երևելիք և աներևոյթք, որ յերկինս և որ յերկրի, 'ի ծովու և 'ի ցամաքի ։ Քանզի դու ես, որ ետուր յողող ջուրց զանօրէն պղծալից մարդիկ ութերորդ դարու (յութերորդ ազգի ծննդոց ը՟ մէջ ադամայ և նոյի) , և փրկեցեր զսիրելին քո զնոյ՝ որ պահեաց զհրամանս բանի քո . ապրեցուցեր խաչանման փայտին 'ի ջուրցն հեղեղէ ։ Արդ՝ որ յայնժամ օրինակաւ խաչին արարեր փրկութի քո՟ փրկիչ մեր , այժմ արա ճշմարտութբ՟ քո խաչիդ , յոր ելեր և հեղեր զարիւն քո սբ՟ 'ի բժշկութի՟ ցաւոց մերոց ։ Որ պահեցեր զաբրահամ 'ի մէջ ամպարիշտ ազգացն քանանացւոց . որ յամօթոյ խայտառականաց պղծութե՟ ապրեցուցեր զաղախին քո զսառայ . որ գթացար յիսահակ ծառայ քո , և փրկեցեր զաղախին քո զռեբեկայ յանօրէն փղշտացւոց անտի ։ Մի թողուր զմեզ 'ի ձեռանէ վն՟ մեծի անուանդ քո . որ ուսուցեր մզ՟պեցեր , և ետուր զբանս քո 'ի բերան մեր , զի այնու ապրել մարթասցուք յորոգայթից թշնամւոյն . և ասես , անուն իմ 'ի վր՟ ձեր կոչեցեալ է , և դուք տաճար էք ածութե՟ իմոյ . և ասես , թէ զանուն իմ սբ՟ աւնիջիք 'ի սիրտս ձեր . և եդեր բան 'ի մտի՝ խնդրել 'ի քէն՝ այսպս՟ ասելով յաղօթս . սբ՟ եղիցի անուն քո 'ի վր՟ մեր ։ Եւ արդ զդոյն զայդ խնդրեմք 'ի քէն . զի ահա ժողովեալ են 'ի վր՟ մեր բազում չարք՝ պղծել զանուն քո սբ՟ , որ 'ի վր՟ մեր է , և զտաճար անուան քո ։ Մեք թէպէտև տկար և անարժան եմք , սակայն դու տէր պահեա՛ յանարժան խայտառականացս՝ մարդասէր և քաղցր . որ արկեր զմեզ յայս փորձութի՟ , տո՛ւր մեզ յաղթել քո զօրութբ՟դ . զի քո՛ է յաղթութի՟ , և յաղթեսցէ անունդ քո , և պահեսցէ զմեզ ՚ի յոյս զգաստութե՟. զի այսու մտցուք ՚ի թիւ վիճակաց արդարոց քոց, և առցուք զվարձս վաստակոց՝ զոր տայցես և հատուսցես իւրաքանչիւր այնոցիկ, որ կացեալ իցեն յահի քում, և պահեալ իցեն զհրամանս քո: Որ ապրեցուցեր զնոյ ՚ի ջրոյն հեղեղէ, ապրեցո և զմեզ յանօրէնութեանս հեղեղէ՝ որ շուրջ պատեալ է ըզմեօք. զի թէ զգազանս և զանասունս ապրեցուցեր ՚ի տապանին, որչափ ևս խնայեսցես ՚ի քո պատկերս, որ զքեզ փառաւորեմք. իսկ եթէ ՚ի սողունս և ՚ի թռչունս խնայեցեր, որչափ ևս խնայեսցես ՚ի մեզ, զորս անուանեցեր տաճար կամաց քոց:

Մինչդեռ հռիփսիմէ այսպէս լալագին պաղատէր առ Տ՟ր, ժողովք ամբոխին հանդերձ արքունի սպասաւորօք և աւագ նախարարօք, որ եկեալ էին պատրաստ առնել կուսին և երթալ ընդ նմա յարքունիսն, աւետիս համարէին տալ նմա ՚ի ձեռն թարգմանաց՝ ասելով. ուրախ լեր կոյսդ չքնաղ և օրիորդ ազատ, զի արժանի եղեր տիկնութե՟ հայոց մեծաց. և զընկերս նր՟ փութացուցանէին զարդարել զնա մեծագին սպասուքն, զորս բերին ՚ի դրանէ. զի տարցուք ասեն շքով յապարանս արքունի. և ձեզ առհասարակ բարիք մեծամեծք և պարգևք ելցեն ՚ի թագաւորէն:

Յայնժամ սր՟բցն երամք առաջնորդութբ՟ մեծին գայիանեայ ՚ի բաց հերքէին զհրապոյրս թշնամւոյն, և արտասուագոչ ողորմ ողորմ հե-

հեծեծանօք զձեռս համբարձեալ յերկինս՝ խնդրէին 'ի կամարար տ՟նէն՝ այրեցուցանել զն՟ս յանօրէն և յանարժան պղծութ՟է հարսանեացն․ գոչիւն բարձեալ մեծաձայն ճըչէին, և ասէին․ ՚Վա՛յ լիցի մեզ, եթէ պատրիցեն զմեզ մեծութ՟իք, կ՟մ խախտեսցեն զմեզ փափկութ՟իք, կ՟մ հրապուրեսցեն զմեզ թագաւորութ՟իք․ կ՟մ նեղեսցեն զմեզ հալածանք, կ՟մ վտանգեսցեն զմեզ տանջանք հարուածոց․ թէպէտև բիւր և ազգի ազգի տանջիցէք զմեզ․ կամ երկիցո՞ւք մեք արդեօք յահագին մահուանէն՝ զոր ածելոց էք դուք 'ի վ՟ր մեր ։ ՚Վա՛յ լիցի մեզ՝ եթէ փոխանակեսցուք զանցաւոր կեանս ը՟ յաւիտենական կենացն, որ ոչ անցանէ․ զի հաստատեալ եմք 'ի տ՟ր մեր, որոյ անփոփոխ են բարիքն ա՟ծմ ։ Ա՟յ ո՛չ խորութ՟իք և ո՛չ բարձրութ՟իք, ո՛չ վիշտք և ո՛չ չարչարանք․ ո՛չ հուր, ո՛չ ջուր, ո՛չ սուր․ և ո՛չ զբօսանք և ո՛չ պատրանք․ ո՛չ մեծութ՟իք, ո՛չ աղքատութ՟իք․ ո՛չ այս աշխ՟ս, և ո՛չ այն աշխ՟․ ո՛չ կեանք և ո՛չ մահ, և ո՛չ այլ ինչ կարէ մեկնել զմեզ 'ի սիրոյն ք՟սի ։ Զի նմա աւանդեցաք զսրբութ՟իս մեր․ և նմա մ՟նամք, և սիրոյ ն՟ր փափաքեալ սպասեմք․ մինչև կայցուք առաջի փառաց մեծութ՟ե ն՟ր առանց ամօթոյ և պատկառանաց ։

Յայնմ վայրի եղև յանկարծակի որոտումն յերկնից սաստիկ անհնարին, մինչև ահաբեկել զա՟մ ամբոխն․ և լսելի եղև ձայն, զի ասէր․ Զօրացարո՛ւք, պի՛նդ կացէք, քաջալերացարուք , զի ես ը͞ ձեզ եմ, որ պահեցի զձեզ յա͞մ ճանապարհս ձեր , և ածի զձեզ պահեալս անարատութ͞բ , և հասուցի զձեզ մինչև 'ի տեղիս յայս . զի և աստ փառաւոր լիցի անուն իմ առաջի հեթանոսաց կողմանց հիւսիսականաց . մանաւանդ դու ՀՌԻՓՍԻՄԷ ուրախ լեր , զի ը͞ անուանդ քում արդարև ընկեցեալ եղեր 'ի մահուանէ 'ի կեանս գայիանեաւդ հանդերձ և քոյովդ սրբելեօքդ (3) . և արդ մի երկնչիք , այլ՝ եկեսջի՛ք 'ի տեղին յայն, զոր ես և հայր իմ պատրաստեցաք ձեզ՝ զանքննելին տեղի ուրախութե͞ , ձեզ և որ միանգամ իբրև զձեզդ իցեն ։ Եւ այնպէս յերկար որոտաց տ͞ր , զի թմբրեալ լինէին մարդիկն յահէ անտի . և երիվարք հեծելոց անդ եղելոց ընդոստուցեալ անդուչեալ՝ զբազումս առաւթուր հարեալ սատակէին . և մարդկանն ը͞ միմեանս իսկ ամբոխեալ՝ ը͞ կուտակելն զիրեարս կոխոտէին , և բազմաց լինէր կոտորած . և ձայն աղաղակի և վայոյ բազմանայր 'ի չփոթ ամբոխին . և անհնարին չարիք և արհաւիրք 'ի վ͞ր ամենեցուն հասանէր ։

Անդ ոմանք 'ի մեծ սպասաւորացն արքունի ընթացան պատմել թագաւորին զա͞մ անցս , և զա͞մ բանս կուսանացն . քանզի դիպեցան անդ նշանագիրք՝ որ գրեցին զա͞մ խօսսն , (որոց գլուխ էր արդեօք քաջ քարտուղարն ագաթանգեղոս՝ բանիցս պատմօղ ,) և ընթերցան առաջի թագաւորին ։ Ասէ թագաւորն . փոխանակ զի ոչ կամեցաւ գալ պատուով ու՜ով չքեղութե՟՝ կամօք , բռնաբար ածցեն մինչև յապարանսն , և մուծցեն զնա մինչև յիմ սենեակ ։ Արդ երթե՟լ սպասաւորացն , և բռնութ՟. ձգեալ զս՟ն Հռիփսիմէ՝ ածէին զնա մերթ վերամբարձ , և մերթ 'ի քարշ ։ Իսկ նա աղաղակէր և ասէր ․ տ՟ր յ՟ օգնեա՛ ինձ ․ նոյնպէս և ս՟բ ընկերք ն՟ր միաբան աղօթիւք կարդային առ տ՟ր վ՟ն ն՟ր ․ և ա՟մ ամբոխն զկնի ն՟ր փողեալ՝ թնդէր երկիրն 'ի բազմութե՟ն ։

Արդ ածին մուծին զնա այնպէս յապարանս թագաւորին ․ և իբրև արգելին զերանելի կոյսն 'ի սենեակն արքունի , և թողին առ վայր մի առանձինն , սկսաւ նա տարածել զանձն առաջի տ՟ն , և խնդրուածս առնել 'ի ձայն լսելի՝ այսպէս ․ տ՟ր տ՟ծ զօրութե՟ց , դո՛ւ ես տ՟ծ ճշմարիտ ․ դո՛ւ ես՝ որ հերձեր զծովն կարմիր , և անցուցեր զժողովուրդն քո ․ դու ես՝ որ զամուլ զվէմն դարձուցեր 'ի ծննդականութ՟ի ջուրցն վտակաց , և արբուցեր զժողովուրդն ծարաւեալ ։ Դու ես՝ որ իջուցեր զծառայ քո յունան յանդունդս խորոց ծովուն , և ետուր առնուլ զչափ քոյոյ զօրութե՟դ ․ և արտաքսեցեր զնա 'ի դուրս՝ ք՟ զմարդկային բնութ՟իս ․ և դարձե՟լ միւսանգամ առանց ապականութե՟ ածեալ ողջանդամ կացուցեր զնա 'ի կենդանութե՟ ․ զի և մազ մի անգամ ոչ շարժեալ լինէր 'ի վարսից ն՟ր ։ Դու և զդանիէլ՝ որ կերակուր արկե՟լ գազանացն , ապրեցուցեր յահագին ժանեացն , կացուցե՟լ զզրպարտե՟լն առաջի նեղչացն փառաւորութ՟ե ։ Դու և զերիս մանկունսն՝ որ արկեալ յայրել վ՟ն զքեզ պաշտելոյն, ողջ և անարատ 'ի հրոյն պահեցեր ․ զի փառաւորեցին զքեզ՝ որք տեսին զսքանչելիս քո ։ Դու ետուր խոտաճարակ լինել խիստ և անօրէն թագաւորին բաբելացւոց ․ զի ոչ իմացաւ փառաւորել զքեզ 'ի վ՟ր սքանչելեացն, զոր ցուցեր նմա, և փոխեալ զնա 'ի կերպարանս անասնոց՝ ը՟ գազանս անապատի եդեր զբնակութ՟ն նր՟, և ը՟ ցիռս վայրի զարօտ նր՟ ։ Դու և զաղախին քո Շուշան կըրկին ապրեցուցեր՝ յերկուց մահուց փրկել ․ և խայտառակամահ սատակեցեր զանօրէնս թշնամիսն ․ և պսակ պարծանաց արդարու՟ե յուսացելոյն 'ի քեզ շնորհել՝ կանգնեցեր ։ Դու նոյն ինքն ես, և ամք քո ոչ պակասեն ․ դու տ՟ր զփառս քո այլում ոչ տաս ․ դու ես՝ որ փառաւորեալդ ես 'ի վ՟ր ամ՟ տիեզերաց ․ մի՛ պղծեսցեն զանուն քո ս՟բ՝ հեթանոսք ․ դու կարող ես փրկել զիս 'ի պղծու՟էս յայսմանէ ․ զի սրբու՟ե մեռայց վ՟ն անուան քում մեծի ։

Արդ մինչդեռ ս՟բն հռիփսիմէ զայս ամ՟ աղօթս առ ած՟ մատուցանէր, եկն եմուտ թագաւորն տրդատ 'ի ներքս 'ի սենեակն՝ ուր էին զնա արգելեալ ։ Յայնմ պահու՝ առ հասարակ մարդիկն, ոմանք արտաքոյ ապարանիցն, և կէսք 'ի փողոցսն 'ի ներքսագոյն՝ երգս առեալ բարբառեցան, կայթիւք վազելով՝ ցուց բարձեալ ․ կէսք 'ի բերդամէջին, և կէսք 'ի քաղաքամէջսն խնջոյս կազմեալ՝ համարէին զհարսանեաց պարսն պարել, և զկաքաւսն յարդարել ։ Այլ ա̃ծ նայեցաւ յիւր սիրելին հռիփսիմէ՝ ապրեցուցանել զնա. զի մի կորիցէ աւանդն՝ որ պահեալ և զգուշացեալ էր. և լուաւ աղօթից նր̃՝ զօրացուցանել զնա իբրև զյայէլն և զդեբովրայն. ետ նմա զօրութի̃, զի ապրեսցի 'ի ստամբակ բռնութ̃է անօրէնութ̃է ։

Զի այն ինչ մտեալ թագաւորն բուռն հարկանէր զնմանէ՝ կատարել զկամս ցանկու̃ե իւրոյ, զօրացեալ լինէր կոյսն մաքուր 'ի հոգւոյն սր̃յ, և գազանաբար ոգորեալ՝ առնաբար մարտնչէր, յերեք ժամուն սկսեալ մինչև 'ի տասներորդ ժամ աւուրն ։ Անդ պարտեալ լինէր թագաւորն տրդատ. և այն՝ որ (ը̃ս ասից ագաթանգեղոսի) անհնարին համարեալ էր ուժով, որ մինչ յունաց ճ̃ին էր՝ բազում ոյժ պնդութե̃ ոսկերաց ցուցեալ էր և զարմացուցեալ զամենեսեան. և 'ի թագաւորութե̃ն իսկ՝ իբրև 'ի հայրենի բնակութի̃ն եհաս, բազում գործս արութե̃ քաջութե̃ և անդ ցուցեալ. և այն՝ որ այնպէս ա̃մբ հռչակեալ էր, արդ յաղջկանէ միոջէ պարտեալ վատթարանայր՝ կամօք և զօրութե̃ն ք̃սի ։

Արդ իբրև պարտեցաւ, վաստակեցաւ և լքաւ արքայն, ել արտաքս, և ետ ածել զերանելին գայիանէ. հրամայեաց խառան արկանել 'ի պարանոց նր̃ (4), և ածել ունել զնա առ դուրս սենեկին. և ինքն 'ի ներքս մտանէր անդրէն, եդեալ բանս 'ի բերան սպասաւորացն՝, զի ստիպեսցեն զանհրապոյրն գայիանէ՝ ասել 'ի դրաց անտի 'ի ներքըս 'ի սենեակն առ հռիփսիմէ, թէ արա՛ զկամս դորա, և կեա՛ց դու և մեք։

Իսկ նր̄ յանձին կալեալ խօսել ը̄ սանուցն իւրում, և մատուցեալ ասէր ընդ դուրս առ հռիփսիմէ. Որդեակ, պահեսցէ զքեզ քս̄ 'ի պղծուէ̃դ, և լիցի քեզ զօրավիգն. քա՛ւ քեզ որդեակ, եթէ լիցի քեզ ելանել 'ի ժառանգութէ̃ անտի կենացն ա̃յ, և ժառանգել զանցաւորս՝ որ ոչինչ է. այսօր, և վաղիւ̃ կորնչի։ Իբրև իմացան՝ թէ զո՛ր խրատ յաճախեաց մատուցանել, բերեալ քարինս՝ հարկանէին զբերանն գայիանեայ, մինչև թափել ատամանց նորա. և ստիպէին ասել նմա, զի արասցէ զկամս թագաւորին։

Իսկ նա ևս քան զևս պնդեալ՝ ասէր. Քաջալերեա՛ց, պի՛նդ կաց. և այժմ տեսանես զքս̄՝ առ որ անձկացեալն էիր։ Յո՛ւշ լիցի քեզ որդեակ հոգեխառն սնունդն, որով զքեզ սնուցի. յո՛ւշ լիցի քեզ ա̄ծեղէն խրատն, որով զքեզ պարարեցի. յո՛ւշ լիցին հալածանք իմ և քո 'ի միասին. և բաժակ մահու, զոր 'ի միասին եմք ըմպելոց։ Յո՛ւշ լիցի քեզ որդեակ, զի քս̄ի հարսնացար. տ̄ր խաչիւ̃ նշանեցար, և յա̄ծածինն յանձնեցար։ Յո՛ւշ լիցի քեզ և յարուէ̃ն ամենայն տիեզերաց. յո՛ւշ լիցի քեզ և մեծատանն յանդիմանուէ̃ն, որ ընկալաւ զանցաւոր բարիս յաստի կեանս. և այլումն յաւիտենական

կան գեհենին տանջանաց. յուշ լիցի քեզ և անապական պարգևք արդարոցն. զոր և մեզ է պատրաստեալ տ̃րն խոստաւ համբերողացս:

Յուշ լիցի քեզ ա̃ծեղէն և երկնաւոր բարբառն, զոր լուար դու քեզէն իսկ քո ականջօք յայսմ աւուր, քաջալերեա՛ց, որ զօրացոյց զքեզ մեօք հանդերձ. նոյն և արժանիս արասցէ պսակին և հանգստեանն զոր խոստացաւ. և զօրացուսցէ զքեզ մեօք հանդերձ, զի լիցուք բնակիչք ա̃յ լուսեղէն յարկացն յաւիտենականաց: Ապաքէն տ̃րն և Թագաւորն և ա̃ծն մեր՝ որ վ̃ս մեր խոնարհեցաւ յանարգութ̃ի, ոչ թողցէ զմեզ յանարգանս. զի զօրութ̃եց ն̃ր ցանկացաք. փրկիչն հ̃աց օգնեսցէ մեզ, որ ոչ թողու ը̃ն վայր զօծեալս իւր և զյուսացեալս իւր. այն՝ որ արժանիս համարեցաւ զմեզ իւրոց բանիցն քաջալերս տալոյ. զի նա անարգամեծար տ̃ր է. և նա ինքն պահեսցէ զմեզ զաղախնայքս իւր յա̃մ մեղաց. ո̃պ և այսօր իսկ լուաք, զի նա էր՝ որ պահեաց զմեզ ամենազօր աջով իւրով, և պահեսցէ մինչև յաւիտեան: Բայց միայն 'ի սիրոյ նորա մի՛ մեկնեսցուք. և նա զարթուսցէ զզօրութ̃ի իւր, և եկեսցէ կեցուցանել զմեզ. և մեք զանունն տ̃ն կարդասցուք, և երևեցուսցէ տ̃ր զերեսս իւր 'ի մեզ, և կեցցուք. զի նա է ա̃ծ փրկիչ մեր, և մեք վ̃ս ն̃ր համբերեցաք զօրհանապազ:

Յուշ լիցի քեզ տ̃րն, որ վ̃ս զմեզ բարձրացուցանելոյ խոնարհեցաւ, և եհեղ զարիւն իւր 'ի վ՟ր խաչին. վ՟ս կենաց մերոց և փրկութ՟ե 'ի մահ վարեցաւ։ Դի՛ր զնա 'ի մտի քում, և կարդա՛ զնա սրտիւ քով. ահա հասեալ է քեզ յօգնականութի. և զօրացուսցէ՛ զբազուկս քո ո՟պ զմանկանն դաւթի 'ի վ՟ր արջուցն և առիւծուցն, որ իբրև զուլս այծեաց ձեղքեալ բեկանէր։ Նա՛ որ զանարի սկայն ջարդեաց 'ի ձեռն դաւթի ծառայի իւրոյ, խորտակեսցէ զչարութի բռնաւորիդ՝ որ առաջի քո, դո՛ւստր մարգարէութ՟ե հաւատոցն դաւթի, և ծնեալ յարդարութ՟ե 'ի վ՟ր բազկաց իմոց. առաջի ս՟բ և փառաւորեալ սեղանոյն ա՟յ մնար դու աղախին ք՟սի. այն՝ որ այսօր իսկ յայտնութ՟բ գթութ՟ե և մարդասիրութ՟ե իւրոյ յայտնեցաւ մեզ՝ որ իմաստութ՟բ խնդրեցաք զնա, նոյն տացէ քեզ մեօք հանդերձ առանց ամօթոյ տեսանել զնա դէմյանդիման։

Արդ զայս ա՟մ խօսեցաւ գայիանէ 'ի բարբառ հռոմ (ա՟յ հռոմայեցի) է՟ անունն իւրում 'ի դրաց սենեկին, մինչդեռ թագաւորն ոգորէր ը՟ ս՟բյն հռիփսիմեայ։ Բայց գոյին անդ ոմանք 'ի սպասաւորացն արքունի՝ որ լսէին զայն ա՟մ 'ի բարբառն հռոմայեցւոց. վասն որոյ զայրացեալ 'ի բաց առին զգայիանէ 'ի դրաց անտի. զի թէպէտև բազում անգամ հարին զնա, և ծեծեցին քարամբք զերեսս ն՟ր, և թափեցին զատամունս նորա, և ջարդեցին զմսուր բերանոյ ընդդաց ն՟ր. սակայն ոչ շրջեաց զբանս իւր՝ խօսել ը՟ աղջկանն այլ ինչ. այլ զո՟ր սկիզբն

արարեալ էր բանիցն իւրոց առաջնոց՝ զնոյն
յաճախեալ բազմացուցանէր ։

Իսկ Թագաւորն մարտուցեալ ը̄ Հռիփսիմեայ և յայս նուագ 'ի տասն ժամէ աւուրն մինչև 'ի պահ մի գիշերոյն՝ կրկին ևս յամօթ լինէր . վ̄ս զի զօրացեալ լինէր աղջիկն 'ի հոգւոյն ս̄բյ, և հարեալ վանէր պարտեալ վաստակաբեկ առնէր զԹագաւորն . մինչև մեղկեալ ընկենոյր զնա մերկ և կողոպուտ ևս 'ի հանդերձիցն, զպատմուճանն պատառեալ, և զնշան Թագին ցրուեալ, կողոպտեալ և ամօթալից թողոյր . Թէ̄պտ և զիւր զգեստիկն քճքճէր պատառատուն 'ի դուրս բերէր՝ յաղթօղ պահեալ զանձն իւր սրբութ̄բ ։ Եւ բացեալ զդուռն սենեկին բռնաբար 'ի դուրս ելանէր, հերձեալ զամբոխ մարդկան, և ոչ ուրուք կարացեալ յաղթահարել զնա . ընթացեալ ը̄ քաղաքամէջսն՝ ելանէր ընդ արևելս կոյս ընդ արեգդուռն քաղաքին ։

Եւ երթեալ առ հնձանօքն, ուր էին իսկ յառաջ վանքն իւրեանց, ձայն աւետեաց մատուցանէր ընկերացն (5) . և ինքն անցանէր հարուստ մի 'ի քաղաքէն 'ի կողմ̄ն հիւսիսոյ յարևելս կոյս . և հասեալ 'ի բարձրաւանդակ աւազին տեղի մի մօտ 'ի բուն պողոտայն՝ որ երթայր յարտաշատ քաղաք, ծունր եդեալ՝ կայր յաղօթս, և ասէր .

Տ̄ր ա̄ծ ամենակալ, ո̃վ կարիցէ հատուցանել քեզ փոխարէն բարեացս՝ որ 'ի քէն շնորհեցաւ մեզ . զի պահեցեր զկոյսն մեր հաստատուն՝ որ 'ի քեզ էր , և ապրեցուցեր ըզմեզ 'ի պղծալից ժանեաց գազանին՝ որ կամէր ապականել զմեզ ։ Այլ զի՞նչ ես կայցէ 'ի մեզ կար՝ փոխարէնս հատուցանել քեզ , բայց անձինք մեր լի՛ցին փոխանակ փրկութ̄ե քում ․ զի դու ինքնին տ̄ր արժանի արարեր զմեզ արքանեկութ̄ե՝ կրել զանուն քո , որով ապրեցուցեր զմեզ ․ զի բաց 'ի քէն տ̄ր զայլ ոք ոչ գիտեմք ․ և զանուն քո անուանեմք զօրհանապազ ։ Այլ մեզ լաւ է մեռանել 'ի սրբութ̄ե մերում , քան թէ ձգիցեմք զձեռս մեր առ ա̄ծս օտարս , որ չեն իսկ ․ զի ոչինչ իսկ են ա̄մ պաշտամունք հեթանոսաց ․ այլ դու ես արարիչ , և ա̄մ 'ի քէն է ․ և որդւովդ քո միածնիւ , առանց որոյ եղև և ոչինչ ․ և հոգիդ քո բարի առաջնորդեսցէ մեզ 'ի յերկիր ուղիղ , որ տանի զմեզ 'ի բարութիս յաւիտենականս յերկինս , ուր յանդիման լինելոց եմք առաջի միածնիդ քո ․ զի առանց ամօթոյ կայցեմք և յաջակողման ն̄ր ․ յորժամ առաքեսցես զդա 'ի պատրաստ լուսոյ բնակութ̄եդ՝ հայել յա̄մ բնակիչս երկրի ․ որ ստեղծ իսկ զսիրտս որդւոց մարդկան , և 'ի միտ առնու զա̄մ գործս ն̄ց ։ Ով և մեք 'ի ժողովրդենէ քումմէ եմք , և խաշն արօտի քոյ , տո՛ւր զի մտցուք 'ի յարկս քո՝ զոր պատրաստեցեր սիրելեաց քոց ․ փութամք տ̄ր՝ զի ելցուք 'ի մարմնոյս , և խառնեսցուք 'ի գունդ միածնի որդւոյ քո սիրելւոյ , և 'ի թի՛ւ այնոցիկ՝ որ սիրեցին զօր երևելոյ գալստեան տ̄ն մերոյ յ̄սի ք̄սի ։ 'Ի պղծութ̄ես եւեթ ապրեսցուք · այլ եթէ եկեսցէ տանջանք 'ի վ՟ր մեր վ՟ս անուան քոյ, պատրաստ եմք · զի ոչ զրկես դու զմեզ ։ Եւ դու Տ՟ր ինքնին վկայես ինձ, զի վաղուց երկրակեաց կենացս ես ինչ ոչ ցանկացայ 'ի մանկութենէ իմմէ · վ՟ս զի նայեցայ եւ հաւատացի բանի քում, զոր ասացեր, թէ վա՛յ է ձեզ՝ յորժամ բարի ասիցեն զձէնջ մարդիկ · այլ երանի՛ է ձեզ, յորժամ նախատիցեն զձեզ եւ հալածեսցեն, եւ ասիցեն զա՟մ բան չար սուտ զձէնջ վ՟ս իմ · ցնծացէ՛ք եւ ուրա՛խ լերուք ։ Արդարեւ ցնծացաք եւ ուրախ եղաք ը՟դ այս պատերազմ, որ եհաս մեզ, մարտնչել սիրով քով · զի յաղթեաց յաղթօղ զօրութ՟իդ քո, եւ ետ մեզ յաղթել ։ Ուրախ եղաք ը՟դ այս փոխանակ աւուրցս՝ որ խոնարհ արարին զմեզ, եւ ամացս՝ յորս տեսաք զչարչարանս · հայեա՛ց Տ՟ր 'ի ժառանգութ՟իս քո եւ 'ի գործս ձեռաց քոց · եւ առաջնորդեա՛ մեզ 'ի վերին քաղաքդ քո եդէմ, որ 'ի բարձունս · ուր ժողովելոց ես զա՟մ արդարս՝ զս՟բս եւ զսիրելիս անուան քոյ · եղիցի լոյս

Տ՟ն Ա՟յ 'ի վ՟ր մեր ։

Զայնակից լինելին ս՟բյն Հռիփսիմեայ եւ ոմանք յընկերաց անտի ն՟ր հանդերձ քահանայիւքն, որք ընթացան զկնի ն՟ր 'ի լուր աւետեացն վ՟ս անարատ պահելոյ զնա Տ՟ն 'ի հանդիսի փորձանաց · եւ մնային տեսանել զկատարածն ։ Եկեալ էին զհետ ն՟ր եւ ոմանք յարքունի սպասաւորաց · այլ ոչ իշխէին արկանել 'ի նա ձեռն, մինչեւ տեսցեն՝

Թէ զի՞նչ հրամա՛ն ելանէ յարքայէ ։ Եւ ահա մինչդեռ երանելին Հռիփսիմէ յերկարէր յաղօթս, անդէն 'ի նմին գիշերի եկին հասին վաղվաղակի 'ի տեղի անդր իշխանք թագաւորին և դահճապետն դահճօքն հանդերձ, և ջահք լուցեալք առաջի նոցա, առ արագ արագ կորուսանել զնա 'ի կենաց չարաչար տանջանօք ։

Եւ մատուցեալ կապեցին զանարատ որոջն ք՟ի զՀռիփսիմէ ձեռս յետս ․ և խնդրէին հատանել զլեզուն ։ Իսկ նա կամօք իւրովք բացեալ զբերանն՝ իւրովի հանեալ մատուցանէր զլեզուն ։ Եւ ապա յետ կտրելոյ զայն, անդէն զհանդերձիկն պատառատուն՝ որ էր զնովաւ, 'ի բաց զերծուին 'ի նմանէ, և հարեալ չորս ցիցս 'ի գետնի՝ երկու ձեռացն և երկու ոտիցն, պրկեցին զնա ․ և մատուցե՟լ կանթեղս ցմեծ ժամս՝ այրեցին և խորովեցին զմարմինս նորա հրով կանթեղացն ․ և քարինս սայրասուրս վարեցին ը՟ գոգս ն՟ր, և 'ի վայր վայթեցին զաղիս ն՟ր ո՟պ զգառին եկելոյ 'ի զենումն ։ Եւ մինչդեռ ևս կայր կենդանի, փորեցին զաչս ն՟ր ․ ապա անդամ անդամ յօշեցին զնա ․ և ասէին, թէ ամենեքեան՝ որ իշխեսցեն անգոսնել և անարգել զհրաման թագաւորաց, ը՟ նմին օրինակի կորիցեն ։

Ո այսպիսի բազմահնար տանջանօք զկատարումն փառաւորեալ կուսին Հռիփսիմեայ տեսեալ համօրէն ընկերացն ն՟ր՝ արտօսրալից հեծեծանօք համագունդ 'ի վ՟ր հասին, ժո-

ղոզովել զպատուական արիւն ն՟ր , և ամփոփել և թաղել զՏ՟ր մարմինն հրաշալի վկայուհւոյն ք՟սի : Եւ 'ի ցասմունս իշխանաց և դահճաց 'ի վ՟ր ն՟ց՝ նոքա ոչ ինչ երկեան 'ի մահուանէ առ սէրն ք՟սի · յորոց վ՟ր սուր եդեալ կոտորեցին իբրև լ՟ք ոդիս · իսկ նոքա ուրախութ՟բ ասէին 'ի ժամ կատարմանն · Սիրեցաք զքեզ Տ՟ր , զի լուիցես ձայնի աղօթից մերոց · խոնարհեցուցեր զունկն քո բարերար , և մեք կարդացաք առ քեզ · զքեզ Տ՟ր փառաւորեմք , որ ոչ զրկեցեր զմեր անարժանութիս 'ի քոց բարեացդ մարդասէր · որ պահեցեր զմեզ իբրև զբիբ ական , և ընդհովանեաւ թևոց քոց ապրեցաք յամենայն փորձութ՟է 'ի մէջ բազմութ՟ե անօրինաց · և ահա մեռանիմք վասն փառաւորեալ անուանդ քո :

Իսկ ս՟բն Գայիանէ հանդերձ երկու ընկերօք մնաց զայն գիշեր 'ի դիպահոջ յարքունիս : Քոյր և միւս այլ երջանիկ կուսան անկեալ հիւանդագին 'ի հնձանատեղին , վ՟ն և ոչ եհաս տեսանել զկատարումն հռիփսիմեայ և այլոցն · բայց փութով արժանի եղև նահատակակից լինել նոցա · քանզի եկեալ դահճաց 'ի վանս ն՟ց՝ զի մի ոք մնասցէ անդ , իբրև տեսին զհիւանդ կոյսն 'ի ներքս 'ի հընձանի անդ , անդէն հարին և սպանին զնա ևս · որ այսպէս ասէր 'ի ժամ հրաժարման իւրոյ · գոհանամ զքէն Տ՟ր բարերար , զի և զիս ոչ զրկեցեր · զի թէպէտև ես հիւանդ էի , և ոչ կարացի ընթանալ և զհետ ընկերացս ժամանել , սակայն դու տ̃ր մարդասէր և քաղցր ընկա՛լ և խառնեա՛ և զիմ ոգիս 'ի դունդ ս̃բց վկայիցն քոց՝ քերցն իմոց և ընկերաց , առ քո աղախինն և մայրն մեր և գլուխն գայիանէ , և զքեզ սիրէ և որդեակն մեր Հռիփսիմէ ։ Եւ սա այսու օրինակաւ խօսեցեալ փոխեցաւ ։ Եւ քարշեալ ընկեցին զմարմինս ս̃բց կուսանաց Հռիփսիմեանց առ հասարակ առ 'ի կեր լինել շանց քաղաքին և գազանաց երկրի և թռչնոց երկնից ։

Իսկ թագաւորն տրդատ թողեալ զիւր ամօթ կորանայն , զի որ այնչափ անուա՛նի էր քաջութե̃՝ հսկայազօր երևեալ է̃ ա̃մ տեղիս , յաղջկանէ միոջէ այնպէս վատթարե̃լ և յաղթահարե̃լ գտաւ , ոչ դնէր 'ի մտի զայն ամօթ նախատանացն , այլ 'ի տեսիլ գեղոյ Հռիփսիմեայ ջեռեալ՝ տռփէր և սգայր ըղ̃մահ նր̃ զայն գիշերն ողջոյն ․ տեսէ՛ք ասէ զկախարդասար աղանդ ազգիդ քրիստոնէից , զիա՛րդ կորուսանեն զանձինս բազում մարդկան՝ հանել յա̃ծոյն պաշտամանէ ․ և յերկրաւոր կենացս վայելչութե̃ն խափանեն , և 'ի մահուա՛նէ ոչ դողան ․ մանաւանդ վ̃ն սքանչելւոյն Հռիփսիմեայ , որոյ ո՛չ գոյր համեմատ յերկրի 'ի ծնունդս կանանց ․ զի ո՛չ երբէք տեսաւ յարևելս և յարևմուտս՝ յորս շրջեցայ , նմանու̃ն այդր գեղոյ , զոր եղև կորուսանել այս կախարդաց ․ զի և այնչափ զօրացան կախարդութի̃քն , մինչև ինձ յաղթեցին ։

ԿԱՏԱՐՈՒՄՆ

Ս՟րց Գայիանեանց ։

Իսկ 'ի վաղիւ՛ն անդր՝ որ յետ գիշերոյ կատարման ս՟րց հռիփսիմեանց, մատուցեալ դահճապետն առ արքայ՝ հրաման առնոյր վ՟ս ս՟րյն գայիանեայ սպանմանն, որ երկու ընկերօք 'ի պահեստի էր յարքունիս ։

Իսկ թ՟գւորն իբրև լուա՛ւ՝ թէ տակաւին կենդանի են ոմանք 'ի կուսից, ապշեալ 'ի խորհուրդս իւր առ սէրն հռիփսիմեայ, համարեցաւ՝ եթէ կենդանի իցէ․ վ՟յ, ո՛չ յիշեալ զիւր հրամանն, մեծ աւագուն բարձի և պատուո՛յ պարգևս խոստանայր, եթէ յանկարծ ոք հնարիցէ պարտել զմիտս աղջկանն գալ առ նա ։ Յայնժամ ասէ դահճապետն․ այնպէս կորիցեն թշնամիք քո ա՛րքայ, և որ զ՟ծս անարգեն, և զհրամանն ձեր թագաւորաց․ այլ կախարդն այն կենդանի է, և երկու ևս ընկերք նո՟ր, որ կորոյս զչքնաղագեղն ։

Իբրև լուա՛ւ թագաւորն՝ թէ մեռաւ ս՟րն հռիփսիմէ, դարձեալ տրտմութ՟ի կալաւ զնա․ իջեալ նստէր 'ի վ՟ր գետնոյ, և լայր, և 'ի սուգ մտանէր ։ Ապա դառնացեալ սրտի՛ հրաման տայր վ՟ս ս՟րյն գայիանեայ չարաչար սպանմանն․ նախ զլեզուն ը՟ ծոծրակս հանել, և ապա սպանանել․ վ՟ս զի իշխեաց ասել վնասակար խրատու իւրով կորուսանել զայն․

զայնպիսին, որ զդիցն գեղեցկութ՟ի ունէր 'ի մէջ մարդկան. իսկ զորին խրատ անշնորհ տանել զդիան իշխեաց, որոց նմա զայն շնորհեալ էր գեղեցկութ՟ի. վ՟ա այնորիկ զնա կտտամահ սպանցեն :

Արդ ելեալ դահճապետն պարծելով չարամահ տանել զնա, ետ հանել զգայիանեանս շղթայիւք 'ի քաղաքէն ընդ դուռն հարաւոյ՝ ը՟ կողմ՟ն պողոտային, որ հանէր 'ի մեծամարի կամուրջն, 'ի տեղին յայն ճախճախուտ՝ ուր սովոր էին սպանանել զա՟մ մահապարտս, մօտ 'ի պարկէն փոսին՝ որ շուրջ գայր զքաղաքաւն : Եւ վարսեցին 'ի գետին չորս ցիցս միում միում 'ի նոցանէ : Եւ մինչդեռ կազմէին զայն, սկսաւ ասել սբ՟ն գայիանէ ընկերօքն համդերձ այսպ՟. Գոհանամք զքէն տ՟ր, որ արժանի արարեր զմեզ մեռանել վ՟ա անուան քո մեծի. եւ յարդեցեր զհողեղէն բնութիւս մեր, զի լիցուք արժանի մ՟ծութե՟դ քում. եւ հաղորդեցեր զիս մասին ս՟բց քոց՝ հռիփսիմեայ, եւ ընկերացն : Եւ արդ փութամ եւ անձկացեալ եմ հասանել նց՟, որ սիրեցին զքեզ, զի եւ ես ժամանեցից զկնի դստերն իմոյ եւ որդեկին հռիփսիմեայ եւ քերցն իմոց եւ ընկերաց : Արդ յիշեա՛ զմեզ տ՟ր, որ վ՟ա անուան քո մեռանիմք զօրհանապազ, համարեցաք իբրեւ զոչխար 'ի սպանումն. արի՛ եւ մի՛ մերժեր զմեզ իսպառ վ՟ա անուան քոյ. եւ դու տուր մեզ զյաղթութ՟ի քո. եւ չարն գործակցօքն իւրովք համդերձ նկուն լիցի յահէ փառաց քոց :

Յետ այսորիկ պատառեցին զհանդերձս նց՟ յանդամոց նց՟, և պրկեցին զնս՟ մի մի 'ի չորս ցիցս . և ծակեցին զմորթս 'ի պճղունս նոցա ը՟ օրինակի ոչխարաց , և եդին փողս , և փչելով այնպ՟ կենդանւոյն մորթեցին զսբ՟ն զերեսին 'ի ներքուստ 'ի վեր մինչ 'ի ստինսն (6) . և ծակեալ զծոծրակսն՝ ը՟ այն հանեին զլեզուն . և վարեցին քարինս ը՟ գոգս նոցա , և ցրուեցին զաղիս նոցա յորովայնիցն ը՟ գոգս նց՟ . և քանզի դեռևս կային կենդանի , ապա բարձին զգլուխս նց՟ սրով : Եւ այսպ՟ սքանչելի համբերութբ՟ կատարեցան նաև սբ՟ գայիանեանք զկնի սբ՟ց հռիփսիմեանց :

Արդ՝ եղև կատարումն սբ՟ կուսանաց 'ի վեշտասաներորդ ամի թագաւորութեն տրդատայ , և յութուտասներորդ ամի կայսերուե՟ դիոկղետիանոսի , այն ամ՟ էր տն՟ . 301 : 'Ի քսան և վեց ամսոյն հոռի , (որ յայնժամ անկանէր 'ի նոյեմբերի . 7 .) կատարեցաւ սբ՟ն հռիփսիմէ՝ դասուն իւրով . լգ՟ . նահատակակից ընկերօքն հանդերձ . և 'ի քսանեւեօթն ամսոյն հոռի (որ է նոյեմբ . 8 .) սբ՟ն գայիանէ . բ՟ . ընկերօքն (7) . որ ը՟ նմա պատերազմեալ պսակեցան , և առին զնշան յաղթութե՟ . ը՟ ամ՟՝ ոգիք . Լ և Է (8) : Իսկ թէ զխո՛րդ յետ վեց աւուրց եհաս պատուհաս ա՟ծասաստ 'ի վր՟ արքային տրդատայ , մինչև այսահարիլ և փոխիլ 'ի խոզակերպ տեսիլ քստմնելի , ը՟ նմին և բազմաց դիւաբախ մոլեգնիլ . և թէ որպէս զկնի այլ ևս երից աւուրց եղեալ սբ՟յն գրիգորի 'ի վիրապէն՝ ամփոփեաց զնշխարս սրբոց կուսանաց, և բժշկեաց զթագաւորն և զհարուածեալսն, և լուսաւորեաց զհայաստան, և շինեաց ըզվկայարանսն զերեսին՝ զհռիփսիմեանց և զգայիանեանց և զմինաւորին որ 'ի հնձանին սպանաւ, հանդերձ եկեղեցեաւն էջմիածնի, ունիմք ասել 'ի վարս սրբոյ լուսաւորչին, որում և սրբոյն տրդատայ և որոց ընդ նմա ։

Այլ յայսմ վայրի շատ լիցի նշանակել, թէ մարմինք սրբոց կուսանացն ինն օր անթաղ մնացին 'ի բացի՝ անմերձ 'ի գազանաց և 'ի թռչնոց, անապական և անուշահոտ ․ մինչև ամփոփեալ ձեռամբ լուսաւորչի յիւրաքանչիւր տապանս՝ եդան յերիս վկայարանս ․ և կնքեցան տապանք միոյ միոյ 'ի նոցանէ արքունի մատանեաւ ․ և ապա 'ի քահանայանալ սրբոյն գրիգորի՝ կնքեցան նաև հայրապետական կնքովն իւր ։ Իսկ յանցանել դարու միոյ 'ի վերայ՝ իբրև աներևութանայր տեղի տապանացն, սուրբն սահակ պարթև խնդրեաց յայտ աղօթիւք ․ և գտեալ զնոսա՝ կնքեաց անդրէն իւրով մատանեաւ, և հանգոյց յերևելի տեղւոջ 'ի նոյն վկայարանս ։ Իսկ 'ի միանգամ անհետանալ յետ երկու այլ դարուց՝ կոմիտաս կաթողիկոս վերստին ետ փորել, և հանել 'ի դուրս ․ և նորոգեալ զվըկայարանս նոցա պայծառ ևս շինուածով՝ հաստատեաց և իւրով կնքով ․ և ապա 'ի նաւակատիս տաճարի նոցա զպանծալի շարականն ըստ այբուբենից՝ * Անձինք նուիրեալք սիրոյն քրիստոսի ‖ ․ թող զհին քարոզն սքանչելի զատ 'ի լուսաւորչէ ասացեալ 'ի պատիւ սրբ՟ց Հռիփսիմեանց . * Ա՟ծ մեծ հզօր և փառաւորել ||։ Իսկ զկնի ժամանակաց բացեալ ոմանց 'ի հայրապետաց զտապան ս՟րց կուսանաց՝ բաշխեցին զմասն ինչ յոսկերաց ն՟ց . որպէս և այլք 'ի ծածուկ բարձին զմասն ինչ . ուստի գտանի սփռեալ ուրեք ուրեք . կայ և մասն փոքրիկ 'ի ս՟ք նշխարաց անտի հռիփսիմեայ կուսին 'ի ձեռս մեր՝ պարգևեալ յումեմնէ յեպ՟սաց եկելոց յէջմիածնէ ։

Ուր արժա՛ն է սքանչանալ ը՟ անբաւ մարդասիրութ՟ի փրկչին և ը՟ անքննելին տեսչութ՟ի վերին իմաստու՟ե , որ հեղմամբ արեան ս՟ք կուսանացս և բարեխօսու՟ք ն՟ց պարգևեաց հրաշապէս լուսաւորութ՟ի հայաստ՟ն եր՟իս . ո՟պ բազմօք հաստատեաց և նա ինքն երիցս երանելի ս՟ք լուսաւորիչն մեր 'ի վ՟դպութ՟ե քարոզու՟ե իւրոյ առ տրդատ և առ ա՟մ ժողովուրդն հայաստանեայց ։

Սմին երբ և ս՟բն մովսէս խորենացի այսպէս կնքէ զառանձին իւր պատմութ՟ի զս՟բց Հռիփսիմեանց (բաց 'ի ներբողինէ՝ զոր արար 'ի վ՟ր Հռիփսիմեայ) . * Արդ ո՞վ պատմես-
„ ցէ զզօրութ՟իս ա՟ծն՝ լսելի լինել սքանչելեաց
„ ն՟ր . որ 'ի ձեռն օրհնու՟ե իւրոյ ծագեաց
„ մեզ լոյս գերազանց՝ յարևմտից արևելից
„ հայաստան երկրի , մանաւանդ 'ի ձեռն
„ կանանց , յորոց մտին մեզ ք՟յս . զի ա՟մ ինչ
„ կարելի է նմա , և տկարանայ առ 'ի նմա-
„ նէ և ոչինչ . . . Յորոց ձեռն ծագեաց մեզ
„ անստու՟եր արեգակն 'ի բարձանց՝ լուսա-

„ ւո

,, ւորելով զմեզ լուսով ա̃ծգիտութե̃, և պայ-
,, ծառացուցանելով զսիրտս ժողովրդոց տօ-
,, նասիրաց և ա̃ծասիրաց ||: (9)

* * *

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ:

(1) Որչափ ստոյգ է և աներկբայելի պատմութի̃ բովանդակ վարուց սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Հայաստանեայց լուսաւորչի, նոյնչափ ստոյգ գտանի և վկայաբանութի̃ սրբոց Հռիփսիմեանց և Գայիանեանց, զի է մասն նոյն պատմութե̃ էական • որպէս և յայտ է: Եւ զոր օրինակ առաջին աղբիւր պատմութեանս է ժամանակակից և ականատես ատենադպիրն տրդատայ ագաթանգեղոս, նոյնպէս հաւատարմութե̃ զնորայն երկրորդեն աւանդս՝ ա̃մ յետագայ պատմիչք, սկսեալ 'ի խորենացւոյն • զայսմանէ լիով ասացեալ է 'ի ծանօթութիս պատմութե̃ հայոց՝ ը̃դէմ տարապարտ առարկուածոց ստիլտինդայ բօլլանդեան • Նմին իսկ աւելորդ է մեզ կրկին հետազօտել:

Միայն ծանիր, զի 'ի Հ • գտանի պատմութի̃ ճ̃պհորդութե̃ Հռիփսիմեանց 'ի Հռովմայ յարևելս՝ անցանելով ը̃ զանազան գաւառս հայոց մինչև 'ի գալուստ նոցա 'ի վաղարշապատ • զորոյ ճշտութի̃ խնդրեալ մեր 'ի բազմաց հետէ՝ հուսկ յետոյ գեղեցիկ յաջողուածով գտաք 'ի միում 'ի հին ձեռընտրաց զհարազատ հեղինակ բանիցն, այն է խորենացին • և ը̃ նմին կարգեցաք՝ ոչ զայլ բանս շարագրութե̃ ագաթանգեղոսի, նոյնպէս և զայն իբր որ զզանազան տեղեաց ճ̃պհորդութե̃ն՝ շարագրութե̃ խորենացւոյն • Թէպէտև առ սխալագրութե̃ օրինակին ինչ ինչ մթին կա̃ հոմաձայն տեսանիւր: Օրինակի վ̃ դիցուք աստ զսկզբնաւորութի̃ բանին, (որ է իբր թուղթ գրեալ առ ո̃ն 'ի նախարարաց հայոց •)

* Պատմութի̃ սրբոց Հռիփսիմեանցն՝ Մովսիսի Խորենա-
,, ցւոյ ասացեալ: Յաղագս զանազան տեղեաց և գնա-
,, ցից և վարուց սրբոց Հռիփսիմեանցն՝ ոչ երբեք գրե̃
,, 'ի յոլովից ճոխաբան պատմութե̃, 'ի բազմաց մատենա-
,, գրաց յունաց արարեալ քննութի̃ • և իմացեալ զմիտս

,, Ճառից՝ որ հեռի էր 'ի սոսուէ, կարգեցի զճշմարտութիւն,
,, զատենաբանութի իմաստնոց յելլոդացուց իմ թերա_
,, ցեալ՝ բնիմ անգամ գտի զոճ գրոցս . և 'ի պատմութեա
,, մերոյ հիւսմունս յեղակարգեցէք . զոր թարգմանել կա_
,, մեցայ . և ոչ ժամանեցի մնացեալ այլում անդէաց . զի
,, մահկանացու գոլով՝ և ծեր և հիւանդոտ, երկու_
,, ցեալ՝ ոչ հրեշտակ գոլով, կա̅մ որդի բարձրելոյ, որպ̅ս
,, ա̅ծայինն ասէ բան, սակայ մի երկրորդեցի 'ի նոյն
,, գրոցս, զոր քաջ քարտուղարն թողեալ ագաթանգե_
,, ղոս . որ և ոչ կարէր զա̅մ զբանս և զգործս 'ի միասին
,, ծովացուցանել, մնալով և այլոց ևս : Եւ արդ՝ 'ի
,, նոյն գիրս պատմի, 'ի նոյն թագաւորական տոհմէ գո_
,, լով սո̅յն լինել օգոստոս կայսեր, ցեղապետ թագա_
,, ւորաց . լինի և գայիանէ 'ի նոյն ցեղէ, առաքինի և
,, զարմանալի հօր և մօր դուստր, նախանձ ունելով
,, առաքելական դասուցն, գրէ ո̅պ տեսուբ̅ նոքա էին
,, մօտագոյնք առ նա̅, որոց ոչ հին համբաւով 'ի մտա_
,, ցուցմն ինչ էին եկեալ գործք նց̅, ընդելեալ, կա̅մ յու_
,, լացեալ՝ որպէս առ մերովք ժամանակօքս ա̅ծպաշ_
,, տութե̅ն նուաղեալ, սրբուն լռեալ, և ունկե̅ մեղք .
,, այլ՝ արքն որպ̅ս թէ առաքեալք՝ լաւութե̅ նախանձ
,, ունէին, և կանայքն զգաստանայլին՝ նախանձ ունե_
,, լով ա̅ծածնին, քա̅ի լինելով մարք . ո̅պ ասաց ու̅ն 'ի
,, հարցն || . և որ 'ի կարգին՝ ա̅ եգելոյս 'ի վկայաբա_
նութե̅ :

Ուր տեսանես, զի որպ̅ս վերնագիրն՝ նոյնպէս և ոճն ա̅մ սարօք վկայէ զայդ գործ լինել խորենացւոյն . այլ գրչախալութիւն աղօտացուցեալ է զբանն . որոյ իմաստ մեզ կարևոր այս երևի, թէ խորենացին 'ի կարգի բուն պատմագրութե̅ իւրոյ լոկ զյիշատակ հռիփսիմեանց նշանակեալ 'ի բանից ագաթանգեղոսի, և ապա յայլ յունական մատեանս խուզարկեալ, և ոչ գտեալ զխնդրելին, 'ի ձեռս բերեալ է զգիրս ինչ կա̅մ յիշատակարան պատմական վ̅ս ճ̅պհորդութե̅ հռիփսիմեանց . և այնպէս յաւելեալ 'ի նոյն և զաւանդութիւնս գաւառացն՝ ը̅ որս անցին ն̅ք (ո̅պ յայտ է յընթացից բանին), լցեալ է զմնացուածն կամ զթերին ագաթանգեղոսի, * որ և ոչ կարէր (ասէ) զա̅մ զբանս և զգործս 'ի միասին ծովա_
,, ցուցանել || :

(2) Որպէս վայելուչ գրէ խորենացին ստորանօր զայս աղօթս 'ի բերանոյ գայիանեայ առ տիրամայրն՝ յանձնելով նմա զսանն իւր զհռիփսիմէ, (զոր և նովին ի_

մատանիք և պարզագոյն ոճով 'ի մէջ բերէ Հ.) Նոյնպէս և առաւել պանծագոյն դնէ 'ի ներբողեանն Հռիփսիմեայ 'ի բերանոյ նորուն բանս ուրախակցութե ընդ կատարումն իւր՝ աղօթական ձևով առ սբ̄ Ածածինն, այսպէս. * Աւետիք ցնծութե և քեզ մայրդ լուսոյ մա-
,, րիամ, աղբեւր մաքրութե. զի քո լուսովդ մերկա-
,, ցայ զանէծսն, արկեալ զինև զճառագայթ սրբութեն
,, լուսոյ քո. և զամ հարսն որդւոյ քո, զարեան նորա
,, վարդագոյն 'ի գլուխ ունելով պսակ: Ընկալ զիս
,, ցնծութբ̄ հանդերձ 'ի լուսոյ քո յարկս. զի հրոյ և ա-
,, րեան մարտիւ շիջուցի զբոց մեղաց. և անթառամ
,, զվարդ կուսութե իմոյ պահելով՝ ծաղկեցուցի զախ-
,, եզերս ցօղով իմոյ արեանս. փափաքեալ քեզ յողջոյն
,, տենչմամբ մայրդ լուսոյ՝ մեծ յառագաստ 'ի սրբութ
,, ոբ̄ցն՝ առ Թագաւորն, որ ցանգացաւ գեղոյ իմոյ,
,, զի յագեցայց և ես 'ի փառաց լուսոյ նր̄ ||:

(3) Անունն Հռիփսիմեայ է ձայն յունական. զի ՌԻՓ-ՍԻՄԷՆԻ նշանակէ ԸՆԿԵՑԵԱԼ (ընդունելութի իգ".) ծագեալ 'ի բայէս ՌԻՓՏՕ, որ է ԸՆԿԵՆՈՒՄ. ուստի բայանունն ՌԻՓ-ՍԻՍ. ԸՆԿԵՑՈՒՄՆ: Եւ յայս իմաստ ը̄ երկնաւոր ձայնին հայի առեալն շարականի. * Հռիփսիմէ մեծ խորհուրդ, և ա-
,, նուն ցանկալի ||: Իսկ գայիանէ ստուգաբանի 'ի բարբառ հռովմայեցւոց՝ տիրական. ըստ որում և գայիոս կմ̄ կայիոս, է տր̄, կմ̄ անուն տիրական իշխանութե:

(4) Խառան դնի սատանօր փոխանակ անրոյ եղելոյ 'ի պարանոցի, եթէ երկաթի և եթէ փայտեղէն իցէ. սուրիոս 'ի յունականէն մետափրաստեսի դնէ՝ փայտ կախեալ զպարանոցէ:

(5) Քանզի վայելուչ նկարագրէ շնորհալին յերգս Հռիփսիմեանց * Երջանիկ հոգեխահրաւէ||, զայս ամ̄ անցս նոցա, անտի երևելին փոխաբերեալ և 'ի Հ. այս բանք. * Ձայն աւետեաց մատուցանէր ընկերայն, և ասէր.
,, ուրախ լերուք անփորձ կանայք, և ցնծացէք կոյսք
,, իմաստունք. զի ես հարի զհսկայ արքայն, և զախոյեանն
,, վանեցի: Արք ելէք 'ի հռովմ քաղաք, տուք աւետիք
,, առաքելոցն. հարսանիք են ինձ այսօր. եկայք տեսէք
,, զիս հարսնացեալ. փող հարէք, յօրինեցէք, կարմիր
,, արեամբ զարդարեցէք. յառագաստն զիս մուծէք, ը̄
,, փեսայն միացուցէք ||. սոյնպէս և այլ ինչ ինչ ասացուածք: Գեղապանծ է և միւս տաղ շնորհալւոյն 'ի վր̄ Հռիփսիմեայ. * Հանճարեղ շնորհալիդ ընտրեալ է ||:

(6) Տող մի կամ 'ի բաց անկեալ է 'ի հայերէն օրինակէ

ապա-

ագաթանգեղոսի, և կամ յաւելեալ 'ի յունականն առ մետափր · ուր ասի, թէ մորթեզերծ արարին զնոսա
* նոյնօրինակ ('ի պարանոցէ և 'ի վեր) հանդերձ հե-
" րով գլխոյ ||:

(7) Հ · որ անշարժ կալէ զհամաձայնութն հայերէն ամսոց ը՟ հռովմայեցւոց՝ ը՟ վիճակի դարու թարգմանչաց · կմ՟ որ նոյն է՝ հայելով 'ի թարգմանութն ածաշնչին, ը՟ նմին դնէ զկատարումն հռիփսիմեանց 'ի 5 · հոկտեմբ · և զգայիանեանց 'ի 6 · հոկտ · զի յաւուրս թարգմանութն սբ՟ գրոց այնմս դիպէր հոռի ամսոյն · ի՛զ · և ի՛է · այլ մեք նշանակեցաք ը՟ այնմ՝ որ դիպաւ իրօք յաւուրս հռիփսիմեանց · զի և գրիչն ագաթանգեղոս էր յայնմ ժամանակի: Եւ զի ը՟ մէջ աւուրց ագաթանգեղոսի և թարգմանչաց երկու լեալ և տարածումն պատմութես 'ի մէջ յունաց և այլոց ազգաց, նմին իրի և նոքա ըստ միջին այնր ժամանակի եդեալ են զհամեմատութն աւուրց ամսոյն · ց՟ 'ի սեպտեմբերի 30 · կմ՟ 29 · և կմ՟ 26 :

(8) Ուր միաբան գրեն ամենեքին ը՟ ագաթանգեղոսի, թէ նահատակեալքն էին ոգիք երեսուն և եօթն, համարակօրէն կարծի՝ թէ երեսուն և եօթեանքս առ հասարակ էին կուսանք կանայք · բայց մարթ է և ասել, թէ 'ի նոյն համար գտան և քանի մի քահանայք և արք ուղեկիցք և գործակիցք նց՟ · թող զկանխաւ ցրուեալսն եթէ 'ի թուոց կուսանաց, և եթէ յարանց: Եւ արդարև անորոշ թուէին ըստ ինքեան այս բանք ագաթ՟ ·
* Արդ որք միանգամ եկեալ էին ը՟ նմ՟ անտուստ 'ի
" հռովմայեցւոց աշխարհէն, որք միանգամ եկին հասին յեր-
" կիր հայաստան աշխարհն՝ աւելի քան զեօթանասուն մարդ ·
" իսկ որք սպանան ը՟ սբ՟ կուսանն ընդ գայիանեայ և
" ընդ հռիփսիմեայ, նոքօք հանդերձ՝ որ թուեցան 'ի
" թիւ վկայեցելոցն, ընդ ամն՟ սպանեալսն · լ · և է ·
" մարդ ||: 'Ի բանից տառի վրիպակ իմացուածով առեալ՝ եդեալ է 'ի Յ · բս · այսպէս * Եւ ընդ նմա (հռ-
" իփսիմեայ) սպանան արք քրիստոնեայք եօթանա-
" սուն, և կանայք երեսուն և երկու || · թող և զայլ վրիպակս 'ի պատմութե կարդի · զնոյն է տեսանել և
'ի ժամագր · Յ :

'Ի վախճանի ծանիր, զի մեծ հալածումն դիոկղետիանոսի չև էր սկսեալ յաւուրս հռիփսիմեանց, այլ եղև յետ իբրև տարւոյ և կիսոյ զկնի նահատակութե նոցա 'ի հայս: Ասացի՝ մեծ հալածումն, որ սկսաւ յամի տն՟ 303 · այլ ինչ ինչ կայծ հալածանաց 'ի հռովմ և յայլ տեղիս՝

ոչ երբէք պակաս լինէր յաւուրս հեթանոս թագաւորաց․ և ըստ այսմ գոյր կին՝ ևս զոյն մին 'ի քերց գայիանեայ մնացելոց 'ի Հռովմ, նահատակեալ 'ի պատճառս փախստեան Հռիփսիմեանց՝ յիշի 'ի խորենացւոյն և 'ի Հ․ որ կարէ լինել կոյս ոք, և կարէ լինել կին առնակին իբրև վանապան արգելավանից կուսանացն․ և եթէ ացուք ըստ վերջին վիճակի, նոյնանայ ընդ այնմ՝ որ դրի 'ի Լ․ յուլիսի․ 5․ * 'ի Հռովմ (կատարուածն) սր̄յն զոյն ,, վկայուհւոյ, կնոջ երանելւոյն նիկոստրատոսի վը-,, կայի ․․․ առ կայսերուբ̄ դիոկղետիանոսի ||․ զորոյ և զպատմութիւն ոչ գտանեն լիով բովանդակեալք, այլ միայն յիշատակումն 'ի վկայաբանութե̄ սր̄յն սեբաստիանոսի 'ի 20․ յունվարի:

(9) Արժան էր աստանօր դնել ամբողջ և զներբողեան նորին երանելւոյն Մովսէսի քերթողահօր հրաշազարդյօրինուածովք 'ի յիշատակի սր̄յն Հռիփսիմեայ և նորին վկայակցացն․ այլ քանզի երկար է յոյժ, և ուրոյն տպագրել զայն դիպողագոյն, խուն մի ճաշակ տացուք 'ի ժամուս, առ 'ի տալ գիտել՝ թէ որչ̄ խորենացւոյն բանք զագաթանգեղոսի զպատմուն ստորագրեն նոյնպ̄ և բանք չարականին և տաղից և գանձուց և ամ̄ մատենագրաց յայսմ մասին՝ զոյգ ը̄ ագաթանգեղոսի և զխորենացին քաղեն: Արդ սկիզբն ներբողենին ունի այսպէս․ * Նորահրաշ և գերապայծառ է տօնս, և զա-,, ւետիս հոգևոր ցնծութե̄ ը̄հանուր առաձայնէ բոլոր ,, հայաստանեաց ․․․ կուսական է տօնս ․․․ մարտիրո-,, սական է տօնս, և ճգնաւորական հանդէս ||, այլովքն հանդերձ․ յորոց քաղեմք զառաջիկայ բանս և եթ․

* Այսօր յիշատակ սր̄ և մաքուր անարատ քր̄ի հար-,, սինն․ Հռիփսիմեայ ասեմ, և որ ը̄ նմա աղբեւր ըղ-,, դաստուե̄ և մայր հաւատոյ գայիանեայ, և որդէք ,, սրբուե̄ կուսանք իմաստունք՝ մշտավառ լուսով ջա-,, հազգեաց՝ ծագեն յարևմտից զերրորդուե̄ն համա-,, պայծառ 'ի հայաստանս փայլատակեալ աշխարհ (ըղ-,, լոյս) ․․․ Ուրախ լեր, և ցնծա հայաստան ծ, նոր ,, իէլ, երկիր աւետեաց և դրախտ ա̄ծատունկ՝ զար-,, դարեալ առաքելօք և մարգարէիւք, և սր̄ցն լուսե-,, ղէն դասիւքն․ վկայից արեամբ՝ 'ի քեզ մոլորուե̄ն ,, չիջաւ բոց, և ճ․ մարտուե̄ ջահ վառեալ բորբոքի ,, բոց՝ լոյսն անաղօտաբորբոք ճառագայթիւք ․․․ Ահա ,, դայ հարսն կոյս սլացեալ 'ի թևս հոգւոյն ․․․ դայ ,, մտանէ ցնծութ̄բ 'ի յառագաստ արեան, տեսել զտ̄ր ,, իւր՝

,, իւր՝ ընծութբ՟ եկեալ 'ի նոր առագաստ 'ի զենումն
,, խաչին ։ Հրով և արեամբ հարսնանայ այժմ, որ 'ի
,, հուր ա՟ծուն՟ մաքրեաց զնա, և արեամբն իւրով ծի-
,, րանաներկեալ՝ խաչազգեաց լուսով պսակեալ՝ ին-
,, քեան հարսնացոյց · որում հոգին սբ՟ հովանաւորել
,, ա՟ծային հարսանեացն՝ անապական կուսութբ՟ ծնաւ
,, 'ի յոյս կենդանի · այս է բազմերջանիկ և սբ՟ կոյսն
,, Հռիփսիմէ . . .

,, Բայց վն՟ զի պսակեալս այս 'ի հոգւոյն սբյ՟ հարսն՝
,, մայր իմոյ հոգւոյս, կուսութբ՟ անապական զիս ծնել,
,, և 'ի գիրկս սրբութե՟ գգուեալ, կուսական արեամբն
,, զա՟ծգիտութե՟ արբուցեալ կաթն՝ հաղորդեցոյց զիս
,, 'ի բանն կենաց · և բնաւորականն այն 'ի ծննդոց առ
,, մարս առանց ուսման բնաւորել զգութ՝ զիմս ստի-
,, պէ դեռաբոյս անձն՝ զողջ մօրս և զկուսի (որ) ա՟ծա-
,, վայելուչ արանց ներբողելի, (սակաւուք ներբողել)
,, 'ի յարախմբմունս հոգևոր սորա ծննդոց . . .

,, Սա՝ որպս՟ ամենեցունց յայտնի է, 'ի հռովմայեցւոցն
,, դերապայծառ նահանգէն, 'ի ծիրանափառ օգոստա-
,, կանացն կայսեր՝ երկնային բուսաւ ծաղիկ, առաքե-
,, լական արեամբն պետրոսի և պօղոսի . . . առոգեալ,
,, փթթեալ . . . ոչ միայն հոգւոյն՟ մաքրութբ՟ն բազմա-
,, պայծառ կուսութե՟ն ճառագայթիւք փայլեալ . . . այլև
,, որպէս արդարև ճշմարիտ լուսոյն հայելի՝ արեգակ-
,, նապէս փայլէր մարմնովն՝ գեղեցկապէս ստեղծմամբ
,, քան զծնունդս կանանց . . . բանաւոր դրախտ երկ-
,, րորդ ադամայ՝ հրեղէն պարուքն շուրջ փակեալ . . .
,, Յայս դրախտ՝ նախաչարն ջանայր մտանել օձ . . . սա
,, զկերպարանեալն 'ի պատկեր արարչին՝ զկոյս հովա-
,, նացեալ զօրութբ՟ բարձրելոյն՝ տեսեալ 'ի կերպի յան-
,, ցաւոր կնոջն, հնարէր ը՟ մահուն արկանել թիւնիւք,
,, փոխանակ գեղեցկապատկեր պտղոյն՝ զոսկեակուռ ծի-
,, րանազարդ կայսերական պատուով շքեղացեալ գո-
,, ռոզն հռոմայեցւոց մոլեկան տրփանօք 'ի տենչանս
,, բորբոքէր՝ հարսնացուցանել ինքեան . . .

,, Արդ չարին այսքան · իսկ կուսին զինչ ։ զփեսաւե-
,, րացն խանդաղատական արձակէր ձայն, թէ ո՞ մեկ-
,, նեսցէ զմեզ 'ի սիրոյդ քումմէ · և թէ՝ ահա մեք թո-
,, ղաք զա՟մ, և եկաք զկնի քո · և թէ՝ ա՟մ կեցցուք, և
,, ը՟ քսի՟ խաչեսցուք · և թէ՝ ը՟ հովանեաւ նր՟ փափա-
,, քեալ նստցուք, և աջ քո ընկալցի զմեզ ։ Վասն կենա-
,, րար փրկչին, զի ասաց, ո՛ն արիք գնասցուք աստի,

,, զարթուցեալ այսու ձայնիւ զուարթուն սուրբ սերով-
,, բէն հոգեղէն՝ իմաստուն կուսանացն դասուք, սլացեալ
,, 'ի թեւս հոգեւորս զգաստ և մաքուր կուսութեան, հա-
,, մանման թեթեւ ամպոյ (միշտ կուսի՝) յոր Տէրն նըս-
,, տեալ մանուկ էր յեգիպտոս, վերանայր 'ի ծագաց երկ-
,, րէ, 'ի գլուխս լերանց՝ որ անդ նստէին, և զընդ
,, երկնաւ շրջափակեալ, լերինք՝ յորս Աստուածն հանգչի, որք
,, են մարգարէութեան ցնծան առաջի տեառն, պետրոս և պօ-
,, ղոս. 'ի սոյն գրկաց լուսաւորս այս գաւառ, ամպ ո-
,, րոտմնասիր՝ զանձրև հոգւոյն սրբոյ հոսեալ, և ցօղեալ
,, 'ի ծագս հիւսիսոյ յաշխարհն այրարատոյ՝ յանդաստան երկ-
,, նաւոր մշակացն, թադէոսի և բարթողոմէոսի սրբոց
,, առաքելոյն, զուարթացուցանել զբազմածաղիկ քա-
,, րոզութեան նոցա բոյս:

,, Ծագեալ եհաս առաւօտն անստուեր լուսոյն բազ-
,, մաստեղն լուսով առ զամբարաջահիւք պարուք հո-
,, գևոր աստեղացն, աւետարանել զծագումն արեգա-
,, կանն արդարութեան, (որ) բազմափայլ ճառագայթար-
,, ձակ լուսով երեք հնգից ամօք 'ի ծոց երկրի ազանէ
,, (սուրբ լուսաւորիչն.) ելանել և զխանջենաւորն առնել
տիւ այսմ աշխարհի . . . . (Այսուհետև ճոխ նկարագրէ զբնա-
կել հռիփսիմեայ և ընկերացն 'ի հնձանս. զմենամար-
տութիւն է արդարոյ, և զյաղթութեան աւետիսն առ ըն-
կերս իւր, և այլն. այլ մեզ 'ի դէպ է սոսկ զնկարա-
գրութի Նահատակութեան ԼԷԹ յառաջ բերել. զի ասէ.)
,, Կոյսն զփեսայն աղաչէր, և աւանդեալ զինքն՝ խո-
,, նարհեցուցանէ զգլուխն 'ի պսակն. քանզի եհաս
,, այնուհետև խաւարազգեաց վանիչն՝ ընդ իւր առեալ
,, զիշխանին պարթևազանց, և զօրս հրաբորբոք ջահիւք՝
,, խամրացուցանել այրել զանթառամ կուսութեան վարդն,
,, որ լուսեղէն կանաչութեամբ հրոյն էր ծաղկեալ. անգի-
,, տացեալ չարն՝ եթէ մոլորութեան իւրոյ բոց՝ այրմամբ
,, նորա էր շիջանելոց, և ցօղով արեամբ նորա պարթևք էին
,, ծաղկելոց յաստուածութեան գաւիթս . . . . Քանզի հրապու-
,, րեալք 'ի նմանէ իշխանք թագաւորին և զօրք՝ դառն
,, և անողորմս տանջանս 'ի վերայ ածէին մարմնոյ: Եւ այս
,, լինէր մեզ առիթ կենաց. իսկ չարին՝ մահուն: Քան-
,, զի կապեալ լինէր մաքուրն՝ միացեալ 'ի բանն. և զ-
,, մեզ լուծեալ 'ի կապանաց բազմաստուածութեան՝ չարին կա-
,, պելով զիշխանութիւն: Մերկանայր մարմինն լուսազ-
,, գեաց առագաստեալ սրբութեամբ. և զմեզ զգեստաւո-
,, րեալ սրբութեամբ աւազանին լուսով, մերկացուցանելով

„ զչարին կործեցեալ փառսն ։ Այրէր տապալէր 'ի
„ հրաբորբոք կանթեղայն՝ մարմինն կենդանախարու-
„ կեալ 'ի հուր աստուածութեան լուսոյ , և հրդեհեալ կիզոյր
„ զմոլորութիւն չարին . բորբոքելով 'ի մեզ զբոց հոգւոր
„ հրոյն՝ զոր արկ յերկիր ։ Հերձոյր սրով կուսական ո-
„ րովայն մաքրազգեաց . և զբանն կենաց 'ի հոգւոյն
„ սրբոյ յղացեալ՝ հոգւոր երկամբք ծնեալ զմեզ յորդե-
„ գրութիւն հօրն լուսոյ , զօձին ջնջելով զբազմածնունդ
„ չարութիւնն ։ Հատանէր լեզուն՝ երկնաւետեացն քա-
„ րոզ , և լռեցուցանէր զկռապաշտութեանցն հնչմունս ,
„ յորդորելով զմեզ 'ի քաղցրութիւն հոգւոր երգոց օրհ-
„ նութեանց ։

„ Փորեալ շիջանէր աչք սրբոյ վկային վայելչացեալ լու-
„ սով , և շիջուցեալ խաւարեցուցանէր զմոլորութեան
„ կայծակն , ծագելով 'ի մեզ զճառագայթս երրորդու-
„ թեան ։ Կոտորէր յօշէր բովանդակ կենդանի մարմնոյն
„ անդամք , և սպանանէր զանդամս մեղաց , առնելով
„ զմեզ անդամս արդարութեան՝ ինքեամբ միացեալ 'ի գլ-
„ լուխն Քրիստոսի՝ առնել զանձունս իւր ...

„ Եւ որ ընդ նմա օրիորդք սրբութեան՝ նովին հանդիսիւ
„ արեամբ պսակեալ . կոխեալ զմահ , և փշրեալ զգլուխ
„ օձին , խաչազգեաց մշտավառ լուսովն ելին զհետ նորա
„ յառագաստն լուսոյ երկնից արքային . և լցաւ գիրն՝
„ որ ասէ , թէ տարցին թագաւորի կուսանք զհետ նորա ,
„ և զընկերս նորա տարցին նմա .... Այս է կուսական վը-
„ կայիցն հանդէս . սոքա են՝ որ մերոյ Յիսուսի որպէս լուսա-
„ ւորք փայլեալք՝ լցին աստուածութեան հնչիւք զընդհանուրս ...
„ սոցա նախանձաւորք լիցուք ամենեքին՝ նմանապէս սիրել
„ զՔրիստոս ... Այսոքիկ քեզ յիմոց բանիցս պտուղ երջա-
„ նիկդ 'ի կանայս , նահատակ յաղթօղ և հարսն սուրբ ...
„ առաջին քրտունք իմոյ նորաբոյս հոգւոյս , որ զքեզ
„ սիրէ սիրեցեալդ խնկապէս բարւոյն . որ և ընկալցիս
„ գթութեամբ՝ որպէս և արդարև մայր գորովագութ , և յիս
„ դարձուսցես զգթութիւն սիրողին զքեզ փեսայացեալ
„ բանին || ։

ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆ ՆՇԽԱՐԱՑ

սբ̃յն Յովհաննու կարապետի , և Ա.թանագինեայ եպ̃սին :

Հ . Օգոստ . 11 . որ է նաւասարդի . ա . ըստ անշարժ տոմարի յայսմաւ" : Ա.գաթանգեղոս : Զ.ենոբ գլակ : Տ.արաւնոյ : Մ.ամիկոնեան յամի . 311 . համար . եէ : (1)

Ա. ՅՍ ԵՐԿՐՈՐԴ ՏՕՆՆ Է

սբ̃յն յովհաննու կարապետի և մկրտչի՝ 'ի կարգի տօնացուցին . այլ զօրութ̃ առաջին , զ̃ի որում * Ա.յսօր շնորհեցան մեզ դեղ կենաց նշխարք սորին ոսկերաց 'ի ձեռն սբ̃ լուսաւորչին հայաստանեայց Տ̃ի‖ . և 'ի գլխաւոր տօնախմբութ̃ աստի սբ̃ կարապետին՝ զոր կարգեաց սբ̃ լուսաւորիչն 'ի պատճառս փոխադրութե̃ նշխարաց , 'ի սկզբան տարեգլխոյ հայոց՝ ո̃ր յառաջնում աւուր նաւասարդի , առեալ եղեն և պատճառք տօնելոյ զմկրտիչն 'ի զանազան աւուրս յզկնի դարս . ոչ̃ նշանակեսցուք զկնի պատմութե̃ փոխադրութե̃ նշխարացս :

Ա.րդ՝ զ̃ի որում գրեն ագաթանգեղոս ատենադպիր տրդատայ , և զենոբ գլակ աշակերտ լուսաւորչին, յորժամ յետ ինն աւուր կատարման սբ̃ց հռիփսիմեանց՝ 'ի ձեռն տեւլեան երևելոյ խոսրովիդխտոյ քեռ Թագաւորին՝ ել սբ̃ գրիգոր 'ի վիրապէն, և բժշկեաց զտրդատ և զամ̃ հարուածեալսն, և յայտնեցաւ լուսաւորիչ Հայաստան աշխ̃ին, յայտ առնէր նմ̃ այրն ա̃յ, թէ պիտոյ է ձեզ խնդրել զոք քահանայ ա̃յ և հովիւ և առաջնորդ աշխ̃ին, որ մկրտեսցէ զձեզ և լուսաւորեսցէ և զարդարեսցէ ամ̃ եկեղեցական կարգաւորութբ̃։ Իսկ Թագաւորն ամ̃ աշխ̃աւ զնա ինքն զգրիգոր խորհեցաւ տալ ձեռնադրել 'ի քահանայապետութի̃ ազգին. և թէպէտ բազմօք հրաժարէր սբ̃ լուսաւորիչն, բայց ստիպեալ յերկնաւոր հրամանէ՝ որ եղև առ նա 'ի ձեռն հրեշտակին, ընդունել զկարգ քահանայութե̃, ել գնաց 'ի կեսարիա քաղաք կապադովկացւոց՝ որ և մաժակ կոչի՝ յառաջին հայս, հրովարտակաւ տրդատայ արքայի և ուղեկցութբ̃ երևելի նախարարաց հանդերձ զօրօք նոցին. և անդ մեծապէս ընդունելութի̃ գտեալ և արժանաւոր պատիւ խոստովանող վկայի յամ̃ ուխտէ եկեղեցւոյն, ձեռնադրեցաւ 'ի սբ̃յն ղևոնդեայ պատրիարգէ տեղւոյն քահանայ և եպ̃կոսապետ Հայաստանեայց՝ յամի տն̃. 302։

Իսկ եղև զկնի հանդիսի օծուե̃՝ 'ի դառնալ բանակին հայոց ուրախութբ̃, յորժամ կամեցաւ սբ̃ն ղևոնդ մեծարել զսբ̃ն գրիգոր հոգևոր ուղերձիւ նշխարաց սբ̃ց, սբ̃ն գրիգոր խնդրեաց 'ի նմանէ 'ի պարգևի մասին և յօգնականութե̃ վ̃ն նորադարձ ազգին՝ մասն երևելի 'ի նշխարաց մեծին յովհաննու առաքելոյ և մարգարէի և կարապետի և մկրտչի որդւոյն ա̃յ · զի այն իսկ էր պատճառականն և նշանաւոր քան զա̃մ մասունս գտեալս 'ի կեսարիա, անցեալ 'ի ձեռն ս̃բյն յովհաննու աւետարանչի 'ի ձեռս աշակերտի ն̃ր ս̃բյն պօղիկարպոսի զմիւռնոյ հայրապետի · որ և պահիւր երբեմն յեփեսոս · իսկ փիրմիլիանոս աշակերտ որոգինի՝ եպ̃ս եղեալ կեսարացւոց յաւուրս հալածանաց դեկոսի յամի տ̃ն 251 · բերեալ էր զայն 'ի կեսարիա · և պահիւր պատուով յաւուրս ս̃բյն ղևոնդեայ ։ (2)

Արդ 'ի խնդրել ս̃բյն գրիգորի 'ի ղևոնդիոսէ զայսպիսի մեծ խնդիր, զառաջինն դժուարին թուեցաւ նմա՝ առաւելապէս վասն ահի ժողովրդեանն · այլ յետոյ հրաման առեալ 'ի տ̃նէ լնուլ զգեղեցիկ խնդիր գրիգորի, 'ի գիշերի վերջնումն՝ յորում ունէր նա մեկնիլ 'ի կեսարիոյ, ետ զխնդրելին ։ Այլ զի արդէն իսկ չէր ինչ ամբողջ մարմին կամ մեծամեծ ոսկերք, վ̃ն վաղագոյն բաժանեալ գոլոյ 'ի զանազան տեղիս, այլ՝ մասն ինչ նշխարաց (և որպ̃ս կարծի, բազուկ ս̃բյն), տայ նմա գրեթէ զբովանդակն իսկ (ասէ զենոբ), զսակաւ ինչ մասն 'ի տեղւոջն թողեալ · Ը̃ որ ուրախ եղև յոյժ ս̃բն գրիգոր, և մեծապէս շնորհս կալաւ պատրիարգին ղևոնդի ։

Այլ 'ի վաղիւ́ անդր՝ 'ի ժամուն, յորում հանհամդերձեալ էր ելանել 'ի քաղաքէ բանակն Հայոց , իմացեալ կեսարացւոց՝ թէ նշխարք սր̃բյ կարապետին տուեալ են Հայոց 'ի պարգև , խռովեցան յոյժ , և այր զարամբ ելեալ 'ի կռիւ պատրաստէին ը̃դէմ նո̃ց : Իսկ նախարարքն Հայոց զգուշացեալ՝ զի մի զօրքն արիւնհեղութ̃ի առնիցեն 'ի խռովեալ քաղաքացիս , կշռեցին քաղաքապետին կեսարիոյ երկոտասան հազար դահեկանս . զի հանձնեսցէ զմիտս ամբոխին : Եւ իբրև այսու օրինակաւ ելանէին բռնաբար 'ի քաղաքէն , իշխանն անդեղտան՝ գլուխ զօրացն Հայոց՝ ծանրացասումն եղեւ ը̃ գործ կեսարացւոց , և ը̃ ծախս այնչափ դրամոց 'ի պատճառս նո̃ց , խորհուրդ առնէր ը̃ իւրսն՝ հուր արկանել 'ի քաղաքն առ 'ի մերժխնդրութ̃ի :

Բայց երանելին գրիգոր իրազգած եղեալ՝ խրատուք և յանդիմանութ̃բ արգել զիշխանն 'ի խորհրդոց անտի . միանգամայն և ազդաբար զիրսն ղեւոնդեայ առ 'ի զգուշութ̃ի : Յայնժամ երանելին ղեւոնդ եկեալ անձամբ՝ համոզէր զիշխանն 'ի խաղաղութ̃ի . և առաւել խաղաղել զն̃ս՝ ետ նո̃ց , և մանաւանդ իշխանի անդեղտան , 'ի պարգևս՝ զամբողջ մարմին կմ̃ զոսկերս սր̃յն աթանագինեայ եպիսկոպոսին սեբաստիոյ , որ էր անէր սր̃յն գրիգորի , և այն ինչ նահատակեալ էր յարքանեկաց դիոկղետիանոսի (3) . ետ և սր̃յն գրիգորի երկուս լուսաւոր ակունս պատուականս , զորս յղեալ էր նմա հռովմայ հայրապետն , իբրև ընծայ նշխարաց երկոցունց սբ̃ցն • Թո́ղ զմնծայն՝ զորս ետուն սբ̃յն ղևոնդի Հայք ՚ի դիմաց արքային տրդատայ և գրիգորի • և այնպէս արձակեցան սիրով ՚ի խաղաղութ̃ի :

Արդ եկեալ սբ̃յն գրիգորի ՚ի կեսարիոյ հանդերձ նախարարօք՝ եկն նախ ՚ի սեբաստիա • և անդ մնայր աւուրս ինչ , և հաւաքէր առ ինքն զդասս կրօնաւորաց և քահանայից և զայլ անձինս երևելիս ՚ի վ̃պութ̃ն՝ ՚ի յունաց և յասորւոց , գործակից ունել զն̃ս ՚ի լուսաւորութ̃ի համօրէն հայաստանեայց • յորոց սակի անուանի էին անտոն և կրօնիդէս սրբակրօն միայնակեացք , զորս ետ սբ̃ն ղևոնդ ՚ի գործակցութ̃ի լուսաւորչին : Ընտրեաց սբ̃ն գրիգոր և զայլս բազումս յաշակերտութ̃ի՝ ձեռնադրել զն̃ս ՚ի քահանայս և յեպ̃սունս ՚ի պէտս աշխարհին հայոց • յորոց մի եղև և եղբայրն եղիազարու նիւստրացւոց եպ̃սի՝ զենոբ. ասորի , մականուանեալն գլակ , որ պատմէ զայսոսիկ :

Ապա չու արարեալ եկին ՚ի սահմանս մեծին հայոց • և իբրև հասին ՚ի տուրուբերան աշխարհ (որ է մշու երկիր) , ոմանք յիշխանաց անտի զգացուցին սբ̃յն գրիգորի՝ թէ ՚ի գաւառին տարօնոյ յիննակնեան տեղիս կան երկու բագինք կռոցն դեմետրի և գիսանեայ՝ գլխաւոր տեղիք հեթանոսական պաշտամանց , ուր դեռևս ձօնեն դիւաց • վ̃յ դէպուղիղ գնացին անդր ՚ի քանդել զայն մեհեանս : Զայն իբրև զգացին քուրմք տեղւոյն՝ ը̃ յառաջագոյն ազդեցին ուխտանենց իշխանին Հաշտենից , փութացան զօր կազմել 'ի գաւառականաց · ազդ արարին և յաշտիշատ քրմոցն երից մեհենից՝ վահագնի, անահտայ և աստղկան , և ելին պատերազմաւ ը̅դդէմ բանակին գրիգորի · այլ 'ի պարտուե̅ մատնեալ՝ չարաչար խորտակեցան , և մնացեալքն հարկեցան զիջանիլ առաջի իշխանաց հայոց ։

Բայց քանզի մեծ էր կռիւն , սր̅ն գրիգոր Թաքոյց յառաջագոյն զսր̅ նշխարսն յանյայտ տեղի ուրեք առ ափամբ սոյգետանեայց · և ինքն ը̅ս ստիպելոյ նախարարաց ամրացաւ 'ի բերդի ուրեք ։ Ապա 'ի դադարել մարտին՝ յորժամ ժողովէին ցրուեալքն 'ի բանակէն ը̅ մութն գիշերի , յանկարծակի ծագեաց լոյս սաստիկ 'ի տեղւոջէ անտի՝ ուր ամփոփեալ կային նշխարք սր̅ցն · մինչև լուսաւորել զմերձակայ դաշտս և զգիւղօրէս · վ̅ոյ անդր դիմեցին հանդերձ բնակչօք տեղեացն · և զայն գիշեր անցուցին աղօթիւք և խնդրուածովք առ ա̅ծ · և բազումք իսկ 'ի յամառելոյն 'ի հեթանոսութե̅՝ զղջացեալ դառնային առ տ̅ր ։

'Ի վաղիւ անդր իբրև պատմեցին սր̅յն գրիգորի զա̅մ անցս պատերազմին , արտասուեաց երանելին վ̅ս այնոցիկ որք յանհաւատութե̅ իւրեանց մեռան · և ապա առեալ զնշխարս սր̅յ կարապետին՝ տ̅նագրեաց շուրջ զա̅մ կողմամբք գաւառին , ասելով · Եղիցին աչք քո տ̅ր 'ի վ̅ր երկրիս այսորիկ՝ պահել 'ի թշնամեաց · և եթէ վ̅ս մեղաց խորա-

տեա

տեսցին առ 'ի քէն, սակայն մի՛ զօրասցին թշնամիք նց՟ ի սպառ. և եթէ մտցեն հերձուածօղք աստ, սակայն մի՛ տացես նց՟ բնակել յայսմ վայրի. աջ ս՟բյ կարապետիս հալածեսցէ զնոսա, և եղիցին ո՟պ փոշի առաջի հողմոյ:

Յետ այսորիկ իբրև հասին 'ի տեղին՝ որ կոչիւր իննակնեան՝ վ՟ն ինն ականց բարեհամ աղբերաց եղելոց անդ, գտին կործանեալ ինքնին զմեծ բագին կռոցն դեմետրի, և զարձանն նր՟՝ որ հնգետասան կանգուն բարձրութե՟, 'ի չորս մասունս բաժանեալ և ցրուեալ. տեսին և զպաշտօնեայսն նր՟, զի աղաղակ բարձեալ ողբային չարաչար: Այլ որ մեծն է, երևեցան և դևք յօդս՝ որք իբրև զպիծակ և զմարախ խուռն զեռային, և կոծէին 'ի լուր ամենեցուն, և ասէին. վա՜յ մեզ՝ զի մեռելոց ոսկերք հալածեն զմեզ յերկրէս: Իսկ ոմանք 'ի քրմաց այսահարեալք 'ի դիւաց չարաչար լլկանօք անկեալ տարածեալ էին 'ի գետնի իբրև զմեռեալս:

Յայնժամ մատուցեալ ս՟րբն գրիգորի՝ բժշկեաց զն՟ս. և ապա հրամայեաց կործանել զմիւս ևս մեծ բագինն դիսանէ կոչեցեալ, որոյ արձանն էր պղնձի՝ երեսուն կանգուն յերկայնութի՟, և երկու կանգուն և թզաւ 'ի լայնութի՟. և անդ ևս երևեցան դևք՝ որ յայլևայլ կերպարանս ճչէին և կրճտէին զատամունս:

Եւ իբրև կործանեցին զկուռսն, սկսաւ ս՟րբն գրիգոր արկանել զհի՟մն վկայարանի յանուն ս՟բյ կարապետին 'ի տեղւոջ անդ , ուր էր մեհեանն գեմետրեայ · ո՟պ զի անհետասցի յիշատակ սնոտի պաշտամանց · և արար անդ զաւուրս երկոտասան , և ամփոփեաց մասն ինչ 'ի նշխարաց ս՟բյ կարապետին , և մասն ինչ 'ի նշխարաց ս՟բյն Աթանագինեայ · և մկրտեաց 'ի բնակչաց տեղւոյն ոգիս իբրև հինգ հազար և յիսուն 'ի ձորն եմանու · և 'ի ժամ մկրտութեան երևեցաւ լոյս սիւնաձև 'ի վերուստ զերիս ժամս : Ապա առեալ ս՟բյն գրիգորի զմկրտեալսն՝ եկած 'ի տեղի վկայարանին հիմնարկելոյ · և ետ առնել տօն 'ի պատիւ ս՟բյ կարապետին · և զի օրն այն (ը՟ գրելոյ զենոբայ) հանդիպեցաւ տարեմուտ հայոց , ա՟ առաջին օր նաւասարդի , յայն օր կապեցաւ և տօն փոխադրութե՟ նշխարաց ս՟բցս · այն օր էր յայնմ տարւոջ՝ ա՟ յամի տ՟ն · 302 · ժ՟ը երրորդ օր սեպտեմբերի՝ ըստ շարժուն և սովորական տումարի ազգին · Թող զի ը՟ անշարժ տումարին յայսմաւուրաց դնի 'ի ժ՟ա օգոստոսի :

Այս է ասելն և ագաթանգեղոսի · (եր · գ՟ճհը ·) * Իսկ զյիշատակ վկայիցն բերելոց
,, ժամադրեաց 'ի տօն մեծ հռչակեալ յա-
,, ռաջագոյն կարծեցեալ սնոտեացն պաշ-
,, տաման 'ի ժամանակի դիցն՝ ամանորաբեր
,, նոր պտղոց տօնին՝ հիւրընկալ դիցն վա-
,, նատրի, զոր յառաջագոյն իսկ 'ի նմին տեղ-
,, ւոջ պաշտէին յոր ուրախութե՟ նաւասարդ-
,, աւուր (որ՟պս թէ՝ նոր արդեանց տարւոյ
,, օր) · զի ժողովեալ 'ի յիշատակ մեծի երա-
,, նե-

,, նեղի մկրտչին յովհաննու , և զոր վկային
,, քի զաթանագինեայ՝ յայնմ աւուր խըմ-
,, բել 'ի նմին յաւանի ‖ ։

Բայց քանզի չև էր աւարտեալ շինուած վըկայարանին , կանգնեաց սրբն գրիգոր ըզփայտեայ նշան խաչի 'ի դուռն եկեղեցւոյն , որպ և 'ի տեղւոջ կռոցն զխամնեայ . և եթող անդ 'ի վերակացուի և 'ի պաշտօն եկեղեցւոյն զանտոն և զկրօնիդէս . և սահմանէր տեղի շինութե վանաց առ վկայարանաւն՝ հաստատեաց զզենոբ՝ գլակն կոչեցեալ՝ առաջնորդ տեղւոյն ։ Բայց քանզի յայնժամ ը իւր երթալ կամեցաւ զենոբ , կարգեաց երկրորդ նր հայր վանաց զեպիփան . և ընդ ձեռամբ նր եթող կրօնաւորս քառասուն և չորս . և սահմանեաց երկոտասան դաստակերտս շրջակայս՝ 'ի պէտս ծառայութե վկայարանին և վանիցն . այն է եկեղեցին և վանքն կոչեցեալ յայժմուս սբ կարապետ տարօնոյ կամ մշոյ . որ և կոչի 'ի գիրս՝ իննակնեան վանք , ևս և գլակայ վանք՝ յանուն զենոբայ , որ եղև կատարիչ շինուածոյն հիմնարկելոյ 'ի լուսաւորչէ ։

Եւ չուեաց անտի սրբն գրիգոր հանդերձ մնացեալ պաշտօնէիւք յաշտիշատ տարօնոյ (որ այժմ կոչի տը սահակ , զի անդ թաղեցաւ մեծն սահակ պարթև) . քանզի լուեաւ գրիգորիոս , թէ վահէվահեան մեհեանն առաւել հռչակաւոր մնացեալ է անդ յերկրին տարօնոյ , մեհեան մեծագանձ՝ լի ոսկւով և արծաթով , և բզմնուէրք մեծամեծ թագաւորաց ձօնեալ անդ՝ ութերորդ պաշտօն հրուչակեալ՝ անուանեալ վիշապաքաղն վահագնի (կմ̃ վիշապասպանն հերակլեայ) , յաշտից տեղիք թագաւորացն հայոց մեծաց՝ 'ի մնարս լերինն քարքեայ 'ի վր̃ գետոյն եփրատայ (որ և արածանի) , որ հանդէպ նայի մեծի լերինն տորոսի · որ և անուանեալ է̃ յաճախապաշտ պաշտամանն տեղեացն յաշտիշատ · զի յայնժամ դեռևս չէն կային երեք բագինք 'ի նմ̃ ։ Առաջին մեհեանն վահէ վահեանն · երկրորդն ոսկեամօր ոսկեծին դից (այն է անահիտ՝ որ և արտեմիս կոչի , նշանակեալ 'ի լուսին) , և բագինն նր̃ ոսկեհատ ոսկէմօր կոչեցեալ · և երրորդ մեհեանն անուանեալ աստղկան դիցն (դր̃ արուսեկի , որ և լուսաբեր և գիշերավար) սենեակ վահագնի կարդացեալ է̃ յունականին (դր̃ հարձ̃ հերակլեայ) · որ է խնքն ափրոդիտէ ։ Արդ գիտեաց զաւր̃ն գրիգորիոս , զի քանդեսցէ և զայն ևս · զի տակաւին իսկ ագէտ մարդիկն զոհէին յայս բագինս մնացեալս ։ Նա բարձեալ բերէր ընդ իւր զմնացուած նշխարաց մեծի մարգարէին երանեալ մկրտչին յովհաննու , և զս̃բ վկային ք̃ի զաթանագինեին ։

Իբրև եկին հասին յանդիման մեհենեացն , կամէր հանել զնս̃ 'ի վեր 'ի բարձրաւանդակ տեղի մեհենիցն , զի կործանեսցէ զբագինսն , և շինեսցէ վկայարանս սբ̃ցն ։ Այլ յորժամ մօտ եղեն 'ի գետն եփրատ իբրև ձիոյ արշաւանօք երկու , և դեռևս է̃ փոքբաձորակ մի անցանել կամէին ընդ ջուր մի սակաւ՝ որ է արածանի, զտեղի առին սպիտակ ջրիք կառացն՝ ուր կային գանձքն ա՟ծային՝ նշխարք ս՟րբց, և ոչ կարացին անցանել ընդ ձորակն։ Նա յայտնեալ հրեշտակ տ՟ն ասէ առ գրիգոր. հաճեցաւ տ՟ր բնակել ս՟րբցդ ա՟յ 'ի տեղւոջդ։ Ուր և անդէն բազմու՟է զօրացն մէն սակաւ սատարեալ շինեցին զվկայարանն, և զս՟րբսն 'ի հանգիստ փոխեցին. և կոչեցաւ տեղին այն՝ յովհաննու վանք, կ՟մ յոհանավանք. և դարձեալ՝ մատրավանք կ՟մ վանք մատուան յովհաննու կարապետի. (որ ռամկօրէն կոչի և մանրավանք, որպէս թէ մանրուք ոսկերաց ս՟րբց եդեալ իցեն անդ. կամ մատնէվանք, զի անդ եդաւ ասեն ճկոյթ մատն ս՟րբյ կարապետին. այլ ագաթանգեղոս՝ որ պատմէ զայս, պարզապէս կոչէ մատուռն, որ է մարտիրոսարան, ո՟ր վկայարան՝ կամ եկեղեցի փոքրիկ)։

Նա մինչդեռ զշինուած մատրանն կազմէին, հրաման ետ գրիգոր զօրականին և իշխանացն՝ որ ը՟ իւր էին, զի ելցեն և մրճօք տապալեսցեն զշինուածս երեցունց բագնացն նախաճառելոց. ուր ելեալ՝ շատ ջանացան, և ոչ կարացին զդուրս բագնացն գտանել՝ զի 'ի ներքս մտցեն. քանզի ծածկեցին դևքն 'ի նոցանէ. և 'ի կողմանցն արտաքուստ ջանացան, և ոչ գծեաց անդր երկաթ գործոյն. ապա փութացան իջին իշխանքն առ ս՟րբն գրիգոր, և պատմեցին նմա զ՟ամ։

Իսկ նա առնէր զնշանն տ̅րունական խաչին , և ել եկաց 'ի ձորակին յանդիման բարձրաբերձ տեղեաց շինուածոյն · ասէ , հրեշտակ քո տ̅ր հալածեսցէ զնոսա ։ Եւ ը̅ բանիցն հողմ ուժգին բղխեաց 'ի խաչանիշ փայտէն , զոր ունէր 'ի ձեռին իւրում եպ̅սն · և երթայր հողմն ուռուցեալ՝ լերինն հաւասար , և չոգաւ հարթեաց տապալեաց ընկէց զա̅մ շինուածս բագնացն · և այնչափ կորոյս , զի յետ այնորիկ ոչինչ ոք յայնմ տեղւոջ նշմարանս կարէր գտանել՝ ոչ քարի , և ոչ փայտի , ոչ ոսկւոյ և ոչ արծաթոյ · և ոչ բնաւ երեւէր՝ թէ լեալ ինչ իցէ անդ · թող զի կոտորեցան անդ 'ի մէջ մեհենաց մարդիկ պաշտօնեայք քրմութեան , և անհետ եղեն ոսկերք ն̅ց · և զայսպիսի ահաւոր նշան տեսեալ բնակչաց երկրին՝ անթիւ մարդիկ հաւատացին ։

Ասէ գրիգորիոս · արդ տեսէք , թէ որպէս ջնջեցան գայթակղութիւնք ձեր · զի և չէին իսկ ինչ · այլ ծառայեցէք յայսմհետէ տ̅ն ա̅յ՝ որ արար զերկինս և զերկիր ։ Յետ այսորիկ եղանէր անձամբ 'ի վեր 'ի տեղիս անհետացեալ մեհենիցն աշտիշատայ , և ժողովել դարձուցանէր և կրթէր զմարդիկ երկրին յա̅ծպաշտութ̅ի ։ Եւ եդ անդ յաշտիշատ զհիմունս եկեղեցւոյ մեծի , և ուղղեաց սեղան փառացն ք̅ի · զի նախ անդ սկիզբն աւար շինելոյ եկեղեցեաց ։ Եւ ուղղեալ յանուն ա̅յ և կազմեալ աւազան մկրտութե̅՝ նախ զայնոսիկ լուսաւորեաց մկրտութ̅բ , որ ընդ նմա երթեալ էին 'ի քաղաքն կեսարացւոց, զմեծամեծ նախարարքն. և ապա զգաւառական բնակիչս երկրին զբուրաւոր մարդիկ, երեկօթս առնելով անդանօր աւուրս քսան: Յայնուհետև իջեալ անդրէն 'ի մատրավանս՝ կանգնէր սեղան 'ի վկայարան սբ̃ցն հանգստի, զոր շինեաց. անդ մատուցանէր զառաջինն զպատարագն փրկութեան, և բաշխէր զկենդանարար մարմին և զարիւնն ք̃ի:

Նաև հրամայեաց կատարել անդ տօն ամ յամէ՝ 'ի նմին տեղւոջ ժողովելով ամենեցուն 'ի յիշատակ սբ̃ցն, որ օր եօթն էր սահմի ամսոյ, (և անկանէր յայնժամ 'ի ժէ, կմ̃ ժը̃ նոյեմբերի.) զի մեծապէս խնդութ̃բ տօնախմբեսցեն զայն օր (4). զի նախ անտի ըսկիզբն արար շինելոյ զեկեղեցիս. և կացուցանէր քահանայս 'ի տեղիս տեղիս. և ելից զվայրսն եկեղեցեօք և քահանայիւք: Նաև ինքն չու արարեալ անտի մեծապարծ պարծանօք զօրութ̃բ խաչին ք̃ի. և բարձեալ նշխարս անտի կէս մի 'ի սբ̃ցն, զի և յայլ տեղիս հաստատեսցէ զնոցա յիշատակսն, եկն 'ի բագրևանդ գաւառ, ուր ընդ առաջ եկեալ սպասէր նմա արքայ տրդատ ա̃մ ընտանեօք և մեծաւ բանակաւ. և հանդիպեալ մերձ առ ստորոտով նպատ լերին առ ափն եփրատ գետոյ՝ անդ մկրտեցան 'ի նմանէ. որպէս ունիմք ասել 'ի վարս տրդատայ և լուսաւորչի:

Յասացելոցս աստանօր՝ կէս մի 'ի բանից զե-

նո

նորայ , և կէս մի 'ի բանից ագաթանգեղոսի , յայտնի է խորհուրդ առաջիկայ տօնի նշխարաց սբ̃յ կարապետին ը̃ սբ̃յն աթանագինեայ , միանգամայն և խորհուրդ տօնի եկեղեցւոյ կարգելոյ 'ի լուսաւորչէն յելսն 'ի վերայ է · զոր կատարեմք յայսմ միջոցի յերկրորդ կիրակէի պենտեկոստէին ։ Ո̃ւ զի ո̃չ 'ի տարեգլուխն , այլ 'ի նաւասարդի ա̃ · կարգեաց լուսաւորիչն զտօն սբ̃յ կարապետին յիննականեան վանս , նոյնպէս և զկնի երկու ամսոց՝ 'ի մատրավանս և յաշտիշատ կարգեաց տօն 'ի սահմի է̃ , 'ի պատիւ նոյն ն̃ր նշխարաց , և 'ի յիշատակ հիմնարկութե̃ եկեղեցւոյ · այն էր 'ի ժամանակին յայնմիկ ը̃ ատացելոյս՝ տօնն առաջին 'ի ժը̃ · սեպտ · և տօնն երկրորդ 'ի նոյեմբ · ժը̃ ։ Բայց ք̃զի ամիսք հայոց՝ ըստ նմին և տարեգլուխն է շարժուն ը̃ ինքեան , զի յիւրաքանչիւր դարու գրեթէ մի մի ամսով կ̃մ քսան և հինգ աւուրբ տարբերի համեմատութիւն ամսոց հայոց ը̃ ամսոց հռովմայեցւոց , ը̃ որում 'ի չորս ամի միանգամ՝ այլ 'ի նահանջ տարւոջ՝ օր մի այլայլի · վասն որոյ 'ի կարգել յետոյ զանշարժ տումար ը̃ հաշուի դարու թարգմանչաց (որով վարի յայսմաւուրքն) , այս տօնք սբ̃յ կարապետի այսպէս կարգեցան ։ Տօն տարեգլխոյն զատեալ 'ի տօնէ նշխարաց՝ եդաւ յօգոստ · 11 · զի յայնմ աւուր սկսանէր նաւասարդն առ թարգմանչօք · և միանգամայն վերածել եղև 'ի պատիւ ծննդեան ն̃ր կարապետին · զի 'ի դրուէ թուա-

կա

կանին Հայոց՝ միով դարու զկնի Թարգմանչաց՝ նաւասարդն սկսանէր 'ի յուլիսի 11. որ է ծնունդ մկրտչի ը̄ Հայոց: Իսկ զատուցել տօնն նշխարաց՝ որ 'ի սահմի է , (ը̄ դարու Թարգմանչաց 'ի Հոկտեմբ. ժը̄ .) եդաւ յայս միջոց զկնի տօնի Հռիփսիմեանց. և զուգեալն ը̄ նմին 'ի Լուսաւորչէ տօն եկեղեցւոյ՝ որոշեցաւ յանմիջական կիւրակէ նոյն եօթնեկին , ը̄ մէջ արկանելով յորն շաբաթու զտօն ելից Լուսաւորչին 'ի վիրապէ. զորմէ ունիմք ասել յառաջիկայդ:

'Ի նոյն պատճառաց երևի յառաջադայեալ և կրկին տօն ս̄բյ հայրապետին զկնի այսր միջոցի. ք̄ո յետ պահելոյ զայս տեղի 'ի յիշատակ փոխադրութե̄ նշխարաց նորա , ըստ այլ և այլ դարուց դիտելով զնաւասարդ և զսահմի՝ եդան և այլ երկու յիշատակք ս̄բյն ընդ զաքարիայի հօր նորա , և ընդ այլ մարգարէս. այլ զայսցանէ տեսցես յիւրում կարգի:

XXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXX

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ:

(1) Զբովանդակ պատմութի̄ փոխադրութե̄ նշխարացս ս̄բյ հայրապետին և ս̄բյն աթանագինեայ հանդերձ հիմնարկութբ̄ եկեղեցեաց և կարգաւորութբ̄ տօնից 'ի ս̄բյ Լուսաւորչէն, հաստատութբ̄ ունիմք յերկուց ժմկակից և ականատես վկայից՝ յագաթանգեղոսէ և 'ի զենոբայ. վ̄ն չկարօտիմք այլուստեք քննութե̄. միայն հարկիմք ծանուցանել զեղանակ համաձայնութե̄, և անհամաձայնութե̄ երկոցունց պատմագրացս 'ի կարգի բանիցս: Քանզի ագաթանգեղոս զանց արարեալ զխօ-

վու.

վութիւք կեսարացւոց և զհանդամանօք ելից բանակին գրիգորի 'ի կեսարիոյ, և զկործանմամբ բագնաց դեմետրի և գիսանեայ յԻննակնեան տեղիս, պարզապէս զայս ասէ (յերես. յկը̄), թէ * Իբրև դարձեալ գայր
,, նա 'ի կողմանցն յունաց, բարձեալ բերէր ը̄ իւր նշ-
,, խարս ինչ յոսկերաց մեծի մարգարէին երանելւոյ մկրտ-
,, չին յովհաննու, և զսր̄ վկային ք̄ի զաթանագինէին ||. և սկսանի Ձոխագոյն պատմել (ը̄ գրելոյս շարագրութ̄ նր̄) զշինութիւն մատրաւանից՝ ուր հրամանաւ հրեշտակի ամփոփեցաւ մասն ինչ նշխարաց, ը̄ նմին և զքանդումն երից բագնեաց աշտիշատայ, և զհիմնարկութիւն մեծի եկեղեցւոյն՝ որ անդ, և զկարգումն տօնի 'ի սահմի է̄. (մինչև յերես. յկէ) ։ Իսկ ապա յետ գրելոյ յերկար զմկրտութե̄ տրդատայ մօտ 'ի բագուան՝ որ և դիցաւան, յայնժամ յիշէ առանց անուան տեղւոյ Իննակնեան վանաց՝ զկարգումն տօնի 'ի նաւասարդի ա̄. որ̄ թէ յիշատակ նշխարաց 'ի հայս բերելոց տօնախմբելի իցէ 'ի նմին աւանի բագուանայ. որ̄ է տեսանել յերես. յհգ. 'ի նոյն ականակէն և նախընթաց բանիցն՝ որ յերես. յկէ. * և բարձեալ նշխարս անտի կէս մի 'ի սր̄ցն, զի և յայլ տեղիս հաստատեսցէ զնց̄ յիշատակսն ||։ Մեր կամ յետնեաւ ազգութիւն պատմութե̄ սպառ է համարել, և կմ̄ ասել՝ թէ ոչ միայն յԻննակնեան վանս և յաշտիշատ, այլև ուրոյն 'ի բագուան կատարիւր տօն նշխարաց սր̄ց. յորմէ և բազմացան աւուրք տօնից սր̄յ կարապետին 'ի մեզ ։ Մինչ զի զոր ասէ բուզանդ. թէ սովորութիւն էր թագւորաց հայոց յամի եօթն անգամ ելանել 'ի սր̄ կարապետս տարօնոյ առ 'ի կատարել զտօն նր̄ յԻննակնեան վանս, մարթ է իմանալ 'ի վր̄ այլևայլ վկայարանաց նոյն սր̄յն 'ի զանազան տեղիս ։

Իսկ զենոբ՝ որ և գլակ, համառօտիւ եւեթ խօսի ըզմատրաւանից. և բնաւին ինչ ոչ յիշէ զն̄ քանդման մեհենիցն աշտիշատայ կմ̄ հիմնարկութե̄ եկեղեցւոյ անդէն. այլ Ձոխագոյն գրէ որ̄ զառնչութե̄ նշխարաց 'ի սր̄յն ղևոնդեայ, նոյնպէս և զնախկին փոխադրութե̄ նց̄ յԻննակնեան վանս, որ և գլակայ վանք. յայտ է թէ զի եղև ինքն առաջնորդ այնր տեղւոյ, և զայնմանէ եւեթ եղև նմա փոյթ լիագոյն գրել ։ Այլ սովոր եղև պէսպիսաբանել յետին մատենագրաց, կմ̄ ոչ միօրինակ իմանալ յետնոց զբանս առաջնոց. նմին իրի ինչ ոչ զարմասցիս՝ եթէ և մեր գրչութե̄ ոչ յամի միաձայնեսցի ը̄ այլոց ։ Մեք ուրոյն քաղելով զբանս զենոբայ, ուրոյն

եւ գրեցաք զաւանդեալսն յԱգաթանգեղոսէ, զի կարի համաձայնելով իրերաց. և զատանելով զբան 'ի բանէ զի կարգի ժմկին : Իսկ Հ. զի սովորական օրինակաց և զի տպ. 'ի կամիլն բաղադրել զերկոսին պատմութիս յօգուտ. II. չփոթէ զԻննակնեան վանս ընդ մատրավանից, ասելով. * 'Ի բերել լուսաւորչին զնշխար սրբոյ
„ կարապետին յՏս հայոց, մասն ինչ եդ 'ի մատրուանս
„ հրամանաւ տեսլեան գիշերոյ. և զայս եդ 'ի տեղի
„ մեհենեացն, որ կործանեցան. և այն կոչեցաւ վանս
„ Իննակնեան... այլև կոչեցաւ վանս գլակայ վասն հօր
„ վանացն ||, եւն : Ուր զի մերումս տեսութեն՝ փոխանակ գրելոյ, * և զայս եդ ||, պա՛րտ է ընթեռնուլ, * զայս եդ : Եւ արդարև յետ ուղղագրելոյ մեր այսպէս մօք՝ գտաք և 'ի հնագոյն ձեռագրի. Հ. զի ասի, * մասն
„ ինչ 'ի մատրավանս եդ՝ հրամանաւ տեսլեան գիշերոյն. և մասն ինչ 'ի տեղիս մեհենիցն, որ կործանեցան (իմա՛ գեմետրի և գիսանեայ). և այն կոչեցաւ
„ վանս Իննակնեան ||, եւն. որ է ուղիղ :
Թո՛ղ զգրեալսն անդ 'ի Հ. վասն տարեմտի հայոց, * Թագաւոր մի կայր հայոց արտաւազ անուն ||, եւն. բատ հին աւանդութեան ռամկաց, զոր զի իմքյիշէ և Խորենացին 'ի խօսելն զարտաւազդայ :

(2) Ո՞ր այն նշխարք սրբոյն յովհ. կարապետի մնացին առ եէմացիս 'ի սեբաստուպօլիս, զի 'ի սամարիա՝ ուր էր գերեզման մկրտչին, և ո՞ր մասունք փոխադրեցան յանտիոք և յաղեքսանդրիա, և թէ զիա՛րդ առ յուլիանոսիւ այլ ոսկերք այրեցան ընդ անուամբ մկրտչին. փոքր 'ի շատէ ունիս իմանալ 'ի գրելոցս 'ի տօնի գլխատման. ուր և զայն 'ի միտ առնուս, թէ ո՛չ է տկարագոյն քան զայն աւանդս, այլ՝ զօրագոյն՝ աւանդութիւն ազգիս, որ 'ի պատմութեան ասա : Գիտեմք զի անտիոքացիք զաջն սրբոյն ասէին ունել առ իւրեանս. և ազգ մեր զնոյն կարծիս ունի՝ թէ բերեալն 'ի հայս, աջ էր սրբոյն ընդ այլ մասունս. այլ զայսմանէ չէ՛ արժան վիճել, որպէս և չէ՛ իսկ մարթ ստուգել զմին՝ քան զմիւսն. որովհետև նշխարք սրբոց յոլովակի յաջաձև բազկի դնին պատուով, և թէև ձախն իցէ՝ աջ անուանի. և չէ՛ ինչ. զի միօրինակ յաջողէ բարեխօսութիւն նոցա յաջ և յահեակ՝ ըստ օրինակի յաջողակ եղելոց երկոքումբք ձեռօք, զօրութեամբ ամենազօր տեառն :

Օրինակ առ քեզ և զսքանչելիս՝ որ եղեն 'ի փոխադրութեան պատուական գլխոյ մկրտչին. զի որպէս պատմեցաք անդանոր

նոր բանիւ սողոմնոսի՝ ջորիք կառաց կացին մօտ 'ի բանտիք քաղկեդոնի · և ահա նոյն սքանչելիք եղեն և մօտ յաշտիշատ տարոնոյ · և չէ՛ մարթ չփոթել զերկոսին պատմութիւնս , զի այս եղև առ լուսաւորչիւ · և այն յետոյ առ թգ̄րութ̄ վաղեսի և թէոդոսի · մին 'ի հայաստան , և միւսն 'ի յունաստան · մին 'ի փոխադրութե̃ ածոյն կի՛մ ձեռին ևն̄ , և միւսն՝ գլխոյն :

(3) Իսկ վն̄ նշխարաց ամենագինեայ գրէ բարոնիոս՝ յամի տն̄ · 311 · 'ի համարն · իէ · այսպէս · * Սա էր
„ եպս̄ սեբաստիոյ՝ որ 'ի փոքր հայս , սակաւ ինչ ա_
„ մօք յառաջ (ը̄ մեզ՝ միով ամաւ , կմ̄ 'ի նմին ամի ·
„ 302) պսակեալ նահատակութբ̄ 'ի ժամանակս այն
„ այս հալածանաց դիոկղետիանոսի : Արդ արժան է
„ հաւատալ , թէ 'ի սմին ճանապարհորդութե̃՝ յորժամ
„ էանց գրիգորիոս ը̄ սեբաստիա , յայց ելեալ իցէ 'ի
„ պատուել զնոյն վկայն , և առե̄լ զնշխարս նր̄ || : Ոչ
է անյարմար մակաբերութի · բայց ստոյգն այն է , զի մարմին սբ̄յն ամենագինեայ տանէաւ սբ̄յն գրիգորի 'ի սբ̄յն ղևոնդեայ · և այն՝ ոչ մարմին վկայի՝ նորուն ազգականի՝ փոքր ինչ յառաջ նահատակելոյ :

(4) Փոխանակ հայերէն ամսոյ՝ սահմի է · 'ի յն · և լտ , թարգմանութիւս ագաթ" առ մետափրաստէսի եդեալ է , * որ է ը̄ հռովմայեցւոց՝ յամսեանն հոկտեմբերի || · յայտ է թէ ըստ շարժման տումարի՝ մօտ 'ի դարն թարգմանչաց · ապա թէ ոչ՝ 'ի ժամանակս լուսաւորչին սահմի · է · անկանէր 'ի նոյեմբ · 18 · և յայնօր վերածեալ է ը̄ Հ · յայժմուս վարք սբ̄յ լուսաւորչին · զոր յիւրում տեղւոջ քննեսցուք :

ԵՒՔ

ԵԼՔ Ի ՎԻՐԱՊԷՆ

Սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի.

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ.

Որս յաւուրս բարենշան՝ յաւերժայիշատակ ցընծութե և տօնախմբութե արժանի, ըստ որում 'ի սմա ծագեալ մեզ առաւօտ լուսոյ ածգիտութե, հայելով 'ի կարգ ժամանակին՝ ունէր կարգել զնոյն տօնի Հռիփսիմեանց և Գայիանեանց կատարելոյ 'ի հոռի ամսոյն իզ. և իէ. ինն աւուրբք յետոյ. զի յայնժամ ել սբն Գրիգոր 'ի Վիրապէն. և ըստ նմին ունէր կատարել յառաջ քան զփոխադրութե նշխարաց սբյ կարապետին և Աթանագինեայ, որ եղև 'ի սահմի է յաջորդ աւուրն : Այլ քանզի զտօն նշխարացն՝ որպէս և զհանգստեանց նա ինքն սբ Լուսաւորիչն սահմանեաց, յետ կատարելոյ զնոյնս պատշաճ դատեալ եղև հարց մերոց առաջնոց կարգել զյիշատակ ելիցն 'ի Վիրապէն 'ի սահմի ժ. (որ էր առ Լուսաւորչիւ. Նոյեմբերի. 20. Թէպէտև բուն ելք նր եղև 'ի սահմի. զ. 'ի Նոյեմբ. 16. յամի տն. 301.) և այնպէս 'ի կարգաւորութե տօնացուցի՝ որ չէ՛ ըստ ամսոց, այլ՝ ըստ միջոցի եօթնեկաց, խորհրդով եդաւ ելքն յաւուր աւր շաբաթու՝ որ է նախընթաց տօնի Եկեղեցւոյ կարգելոյ 'ի նմին Լուսաւորչէ յետ ելիցն 'ի Վիրապէ : Արդ քանզի զլիակատար պատմութե անցիցն եղելոց 'ի նոյն աւուրս ունիմք աւանդել յառաջին վարս սքանչելի հօրս մերոյ, աստանօր 'ի ճառ ներբողական բովանդակեցուք ինչ ինչ 'ի կարևոր խորհրդածութեանց տօնիս :

ՍԵՐ-

ՆԵՐԲՈՂԵԱՆ։

ԵԿԱ՛ՅՔ ԼՈՒՍԱՒՈՐԵԱԼՔ 'ի ձեռն հրաշափայլ ծագման լուսաւորչին հոգւոց մեծին գրիգորի՝ 'ի խորունկ խաւարչտին գբոյ, անցցո՛ւք միաբան՝ մտաց ակնարկուբ̃ 'ի տեսիլ ահաւոր խորհրդոյս, զի՞նչ է բանս այս՝ զոր տ̃ր եցոյց մեզ։ Ո՛վ սքանչելեացս. զի ահա յերկրէ 'ի վեր ճառագայթէ այսօր իմանալի արեգակնս, զի յերկրէ յերկինս զմեզ հրաւիրեսցէ. 'ի խոր գերեզմանէ վերաբերի՝ ո՛չ չորեքօրեայ մահացեալն ը̃ ղազարու, այլ չորեքտասանամեայն ը̃ մեռեալս համարեալ, զի զմեռեալքս հոգւով 'ի կեանս վերափոխեսցէ անմահուե̃. 'ի միջոյ զեռնոց թունաւորաց կորզի անապական՝ մահաթոյն վիշապին ընդոտնիչ, զի տացէ մեզ առ ոտն կոխել զապականարար ախտիցն հոյլս՝ զօձս և զվիշապս և զա̃մ զօրութ̃իս թշնամւոյն. 'ի կաւոյ և 'ի տղմոյ սրբի մաքուրն հոգւով՝ որ եղև տառապեալ վ̃ն մեր մարմնով, զի մաքրեսցէ զաղտեղուե̃ի հոգւոց մերոց՝ վերածնութբ̃ սբ̃ աւազանին, և զաշխտեալքս 'ի մեղաց հանգուսցէ յա̃ծ։ Եւ այս որո̃ց երախտեաց փոխարէն. և զի՞նչ ասեմ երախտիս։ Ո՞ւ 'ի մէնջ ապերախտուե̃ի, և յա՟յ բարերարուլ՟ի · ա՟ն ա՟յ մերոյ արդարուլի, և մեր ամօթ երեսաց · զի արդարասցի ասացեալն , ուր առաւել եղեն մեղքն , անդ առաւելան շնորհքն ։ Ա՜յ գոչեսցուք յաւուր յայսմիկ · այլ շնորհք ա՟յ 'ի վ՟ր անպատում պարգևաց ն՟ր · այն՝ որ 'ի ձեռն ն՟ր , որում ապաշնորհք գտաք , (զի իմ են նախահարց իմոց յանցանք՝ որք զԳրիգորիոս չարչարեցին անբերելի տանջանօք ,) առատաձեռնեաց 'ի մեզ զշնորհս · զի անոխակալութ՟բ և անյիշաչարութ՟բ յա՟ծանմանութ՟ի 'ի վեր ելեալ հայրն հոգւոց՝ 'ի նոյն և զորդիս իւր կրթեսցէ · վ՟ս զի ուր մեք զնա զարփիազգեաց անձն գլխովին խաւարեցուցանել խորհեցաք , և շիջուցանել 'ի մէնջ զբազմալոյս ճառագայթն , 'ի կենաց լուսոյ զրկել կարծելով վիրապընկեց պատժաւորութ՟բ , այլ ա՟ծ կարգեաց զնա լուսատու լինել խաւարելոցս՝ եօթնպատիկ լուսափայլ ծագմամբ յելն 'ի վիրապէն ։

Եւ զի այս այսպէս՝ աներկբայ խոստովանեալ և հանդիսական տօնախմբութ՟բ հռչակեալ , ապա ուրեմն եթէ յետ ա՟յ ամենաբարի բնութ՟է կայցէ ոք մեզ բարերար , առաջին սա մեզ իրաւամբք ճանաչելի և արդեամբք մեծարելի ։ Օ ի թէ ը՟ր մարմնոյ ծնողք այսպէս , իբրև երկրորդ պատճառք՝ զկնի առաջնոյն պատճառի անպատճառի , քանի՞ն և հոգևոր ծնողս մեր ա՟ծանման սիրով գորովագութ հայր պարծանաց ս՟ր Գրիգորիոս ։ Եւ եթէ զնշնէ ասացաւ պատուիրանաւ ,

նաւ , պատուեա՛ զհայր քո և զմայր , քանի՞ն առաւել իմասցուք զհօրէն հոգւոց պարտականութի մեզ անհամեմատ 'ի պատուել զնա արժանաւոր պաշտմամբ յարգութե , ունկնդրութբ բանից լուսաւոր վրդպուէ նորա , և պահպանութբ առաքելական կանոնաց նր , յորմէ և յորում՝ նմանութի և կերպարանաց հարազատութե նր ։

Տէ՛ր նա՝ ըս ակնարկութե նորուն գրիգորի , և մայր մեզ առանձինն՝ օգնական հօրս մերում , և յետ նր ընդ նմա վերապատուելի կայ առաջի . ո՞ այլ , բայց սքանչելին 'ի սբ կուսանս անարատն հռիփսիմէ . որ և զելս տիրանշ մեզ առթեաց զգրիգորի 'ի գբոյն , միանգամայն և արուսեակ Տէր հայոց ծագեաց՝ նախընթաց արփւոյն մերոյ գրիգորի . զի արևելք և արևմուտք , պարթևք և հռովմայեցիք , սահմանեցան 'ի տնէ ձեռն տալ հիւսիսականացս այցելութե ։

Ծանէրո՛ւք և տեսէ՛ք որդիք Թորգոմայ (հընչէ 'ի լսելիս մեր անդուլ բարբառ իսկապէս լուսաւորչին մերոյ) , զի սքանչելիս արար տր , որոյ անքննելին են խորհուրդք , և անհասանելի՝ տեսչութի խնամոց արարչական սիրով . զի այց արար ձեզ ամենատրն՝ ոչ 'ի ձեռն ծանօթից և մերձաւորաց , այլ անծանօթից օտարաց հիւրից՝ 'ի ձէնջ անարգելոց , խոտելոց , և կառափնատելոց . զի զվէմն՝ զոր անարգեցիք շինօղքդ , զիս ասեմ՝ զոր առիք գլեցիք 'ի խոր վիրապն արտաշատու , արար ձեզ տր գլուխ անկեան . 'ի տնէ եղև այս , և ո՛չ լինէին. և է սքանչելի յաչս ձեր. մինչև ասել ձեզ ը՟ տեսանողին, եթէ 'ի վ՟ր վիմի՝ զոր եհան տ՟ր 'ի գբոյ տառապանաց, եօթն աչք են՝ դիտապետ լինել և լուսատու հայոց աշխ՟իս. արդ ինձ՝ որ տրուպս եմ ա՟մ ս՟բց, տուեալ շնորհքս այս՝ ը՟ պօղոսի, աւետարանել 'ի ձեզ զանքննելին մեծութ՟ի խորհրդոյն ա՟յ. զի թէպէտև բիւր դաստիարակս ունիցիք 'ի ք՟ս, այլ ոչ եթէ բազում հարս. զի 'ի ք՟ս յ՟ս աւետարանաւն ես ծնայ զձեզ:

Ո՛չ փոքր սքանչելիք և այն, զի զքարինս ս՟բս՝ որովք է շինութ՟ի կաթողիկէ եկեղեցւոյ, զառ 'ի ձէնջ քակտեալս, ձեզ պարիսպ կանգնեաց նորոգուե՟ հոգւոյ՝ երկնաւորն ճարտարապետ. վ՟ն զի զիմաստուն կուսանացն դասս՝ զորս չարաչար մահուամբ բարձիք 'ի կենաց, զնոսին 'ի ձեռս էառ սքանչելարարն՝ 'ի յարուցանել զձեզ 'ի նոր կեանս: Դու արդ՝ եթէ զիս երախտաւոր հայր կարդայք, և զդոսա ծաներո՛ւք բարեացապարտ ձեզ մարս հոգևորս. զի ծնան կուսանք ազգս բազումս, և մարք մանկունք զհրապարակս ծերոց. հա՛պա 'ի գիրկս սրբութ՟ե նց՟՝ աղօթիւք և պահօք դաստիարակեալք, աղչեցէք հաւատովք՝ զարգացեալք 'ի ք՟ս: Զի թէ չէր երկնեալ հռիփսիմեայ կուսի իւրով նահատակութ՟բ զհայաստան աշխ՟, չէր և իմ ծնեալ զազգ մի ողջոյն միանգամայն. և եթէ չէր արիւն նր՟ վ՟ն ձեր բարեխօսեալ, ոչ առաքէր զիս տ՟ր 'ի մշակել զայդիդ խոպանացեալ:

Զայս գոգցես և նմին գրիգորի նա ինքն փառաւորեալ վկայուհին և հարսն քսի հռիփսիմէ աւետարանեաց 'ի վիրապին , զայսօրինակ խորհրդաբար առձայնելով՝ յաւուր անդ կատարման իւրոյ , ըստ ճահագրուե քերթողահօր . ,, Քե՛զ աւետիք երկնաւո՛ր նահատակ և քարոզ փրկութե՝ բազմափայլ ճառագայթ , որ ծագեալդ ես 'ի գբի . ահա հասի քեզ 'ի թիկունս՝ սլացեալ յարևմտից յարևելս թեթևընթաց ամպով իմոյ կուսուես : Զփայլակնաբորբոք ճառագայթ տիեզերածաւալ լուսոյ աւետարանին իմոյ հարց պետրոսի և պօղոսի՝ 'ի վայրս քո եկի ծագել , վանել փարատել զմէգ խաւարի՝ որ զքոյդ արգելեալ փակեալ (ունէր) զկենդանի լուսոյդ ճառագայթ : Ծագեա՛ լուսաւո՛րդ մեծ 'ի խորոց անդնդոց քաղցրանուա՛գ լուսովդ զընդարձակ ճառագայթեալ լոյս փայլումն քոյ սբց հարցն աւետարանին թադէոսի և բարթողոմէոսի , երկաքանչիւր լուսով փթթել զհիւսիսի : Լա՛ր զխորան քո արևու , և ե՛լ արեգակն արդարութե՝ 'ի գնացս քո ցնծութբ՝ յողջոյն արիւնազգեստեալ հարսին , որ մարտիրոսական արեամբ ճգնեալ եկեալ 'ի քո խորանիս հարսնանման անմահ փեսային : Ե՛կ պատահեա՛ ծածկեալ ողորմութիդ իմում ճշմարտութես , զի իմ և քո խաղաղութիդ՝ համբուրիցս հարցն մերոց՝ ողջոյն և խաղաղութի (աւթեսցեն , նուէրմք) զայս լցեալ ն : Ահա բացի զերկինս,

,, կլինս , զորոտումն հոգւոյն ս՟բյ 'ի դաշտս
,, քո հնչեցի՝ յօղել զցօղ քաղցրութ՟ե 'ի հո-
,, վիտս արեամբ , ոռոգել զուարթացուցա-
,, նել զարդիւնս արդարութ՟ե՝ ցօղ քոյոց բու-
,, սոց աշխատեալ երկրագործ ։ Ահա խլե-
,, ցի յանդէ քումմէ զփուշ անիծից՝ զտա-
,, տասկս մեղաց կուսակին իմով հանդիսիւս․
,, Եւ սերմանեա՛լ սերմանահա՛ն քաջ զսեր-
,, մանիս աւետարանին լուսոյ․ որպէս զի 'ի
,, հասանել հնձոյն 'ի միասին ցնծասցուք ։
,, Ահա զիմն 'ի քոյդ խառնեալ արեան վը-
,, տակս՝ շիջուցանելով զխաւարին բոց , վա-
,, ռեալ բորբոքեալ (է իմ) զհուր մ՟ծութ՟ե
,, լուսոյն առ 'ի սրբել զանդաստանս ա-
,, րեամբ քո ներկեալ․ Եւ տնկեալ մշակդ
,, քրտնե՟լ զորթն կենաց ։ Ողկոյզն ծաղ-
,, կեալ զմշակեալն 'ի հօրէ զարիւն խաղո-
,, ղոյն՝ վաստակեալ ս՟բ աջովդ , պաշտեա՛լ
,, յուրախութ՟ի վերնոց և ներքնոց 'ի տաճա-
,, րի իմոյ հարսանեացս ։ Ահա ճմլիմ 'ի քո
,, հնձանսդ՝ կուսութ՟ե իմոյ բաժակաւս ,
,, զանմահութ՟ե հոսեալս պսակեալ քո ժողո-
,, վրդեան , զհրով և սրով կոտորեալս զվար-
,, դապետութ՟ե մերոյ ծաղկանցս , Եւ ժողո-
,, վեա՛լ բոլորե՟լ պսակ քո նոր ժողովրդեանս․
,, զի այսու մտցեն առ մեզ 'ի յարկսն լուսոյ ‖ ։

Օ այսօրինակ մաքուր աղաւնին հռիփսիմէ՝
զտերև ձիթենւոյն ունելով 'ի բերան՝ ըզ-
հաշտութ՟են ա՟յ նշանակ է հայաստանեայս,
զհոգւոյն աւետիս տայր այնմ՝ որ 'ի խորս
եջ անդնդոց , որ՟պս նոյ 'ի ծոց տապանին 'ի

նոյն

նոյն լերինս արարադայ ։ Քանզի և մերս նահապետ այսպիսում պատահեր մեծի աւետեաց , հնգետասանամեայ տքնեալն ասեմ ՚ի խորս վիրապին՝ հայր ազգիս արթունն գրիգոր՝ հոգւոր լուսոյն ճառագայթ , քարոզ միածնին՝ լուսաւորիչն մեծ ։ Նա զոյգ ընդ ազդմանս՝ աղօթք յերկրէ , աղօթք յերկնէ առ բարձրեալն վերանայր ը̃ բուրման խնկոց անուշից՝ վ̃ն փութով կատարման ա̃ծառաք առ մեզ այցելութ̃ե · հռիփսիմէ իւր երամովն անդ ՚ի վեր բարեխօս լինէր հայոց ազգիս , զտիրականն աղօթելով ՚ի վ̃ր խաչահանու՛աց · և գրիգորիոս ՚ի խորոց սրտին ՚ի գբոյ անտի վերագոչէր՝ աղօթելով ը̃ ստեփաննոսի ՚ի վ̃ր քարաձգողաց ։

Յայնժամ քաղցրանայր գութ մարդասիրին ՚ի վ̃ր մեր · և զի զոր սիրէ տ̃ր՝ խրատէ , տանջէ զա̃մ որդի՝ զոր ը̃ունի , նախ ընդոստուցանէր զազգն դաւազանաւ բարկութ̃ե՝ առ ՚ի զյիմարութ̃ին յիմաստ փոխարկել , պատուհասակոծ թագաւորաւն և մեծամեծօք զամենեսին առհասարակ յահ և յերկիւղ իւր ա̃ծ կրթեալ · մինչև ՚ի մարդկայնոց ՚ի դերև ելեալ դարմանոց՝ զվերինն խնդրեսցեն օգնականութ̃ի ։ Ապա առաքէր զզօ՛րութիւնն առ կոյս մի պարկեշտ ՚ի տանէ արքայի՝ բնաւորական մաքրութ̃բ անարատ քաղաքավարեալ , նա իսկ էր քոյր արքային տրդատայ՝ խոսրովիդուխտ անուն , պատու՛էր տալ հրաշալի տեսլեամբ միանգամ և երկիցս՝ և ես աւելի , հանել զկապեալն գրիգոր ՚ի վիրապէն արտաշատու . զի նա բժշկեսցէ ասէ զհարուածեալսն , և լուսաւորեսցէ զհայաստան աշխ՟ ա՟ծգիտութ՟բ : Եւ բանն արդիւնք լինէր . երթեալ աւագ նախարարին Օտայ անյուսութ՟բ իբրև առ մեռեալն 'ի վաղուց , կենդանի գտանէր հրաշապէս զթաղեալն 'ի վիրապին . և այնպէս խնդութ՟բ արկեալ պարան' 'ի վեր հանէին 'ի գբոյն զերանելի այրն ա՟յ զառաքելանման նահատակն զգրիգոր , որ՟պս եղբարք յովսեփու զյովսէփ զարկեալն անդր ձեռօք իւրեանց :

Արդ ելանէ արփիականն գրիգոր նոր արև' 'ի խորոց անտի իբրև յարևելից , ո՟ր արտաքին տեսլեանն 'ի ժամուն' ո՟չ ամպով ծածկեալ' թխատեսակ գունով մարմ՟նոյն , և այլագունեալ 'ի խստութ՟է բազմամեայ արգելանին . այլ այն իսկ էր առաւել նշանակ պայծառութ՟ե ոգւոյ' հոգւոյ լուսատու՟ին :

Այս իսկ և իսկ 'ի վաղարշապատ ածեալ յարքայարանն' ծագեաց 'ի վե՟ր տանն արամայ ո՟չ զարեգակն գերարփի . ցնծայաւ հայաստան աշխ՟ 'ի տեսիլ լուսոյ յետ երկար գիշերոյ . զի ետես զմեծ լուսաւորն տունջեան զգրիգոր . որ և անդէն և անդ զա՟ծապարգևն 'ի կիր արկեալ հրաշանշան զօրութ՟ի' զհինն 'ի նոր կերպարանէ աշխ՟ . զի զկարծեցեալն անփարատելի յիւրոց անհնարին արկածից , և զհամակեալն 'ի սուգ տխրութ՟ե' ո՟ր թանձր մառախլոյ հեթանոսութ՟ե , լուսազարդէ , սփոփէ , և կենդանածնէ . զհարուածեալսն բժշկէ աղօթիւք և պահօք , և ո՟չ 'ի մարմ՟նոց' առաւել 'ի հողւոց զայսմ հալածէ զխաւարասէրս ․ զի յերևել լուսոյ զխա՟րդէր հանդուրժել խաւարի , և 'ի ծագել Ճշմարտութե՟՝ ո՛ւր թաքչել ունէր ստութի՟ մոլորութե՟ ։

Նու արդ չէ՛ ժամանակս պատմելոյ վ՟ մեծամեծ գործոց եօթնաջահեան լուսատու՛ին հողւոց մերոց՝ յելսն անդ 'ի վիրապէն, եթէ ո՛րպէս առ օրին զնշխարսն ամփոփեաց ս՟բ կուսանացն հռիփսիմեանց ․ կա՟ ո՛րպէս այնուհետև 'ի հնձանատեղին՝ ուր վանքն իսկ էին ն՟ց , օթևանս կալեալ՝ քարոզեաց թագաւորին և ա՟մ ժողովրդեան լուսաւոր վարդապետութ՟բ զխորհուրդն ա՟ծպաշտութե՟ աւուրս վաթսուն և հինգ ․ կա՟ զխո՟րդ յետոյ զմեհեանս և զբագինս ա՟մ քանդեաց կործանեաց գործակցու՟բ թագաւորին ․ և ընդ ա՟մ տեղիս և 'ի հրապարակս կանգնեաց ըղնշան տ՟րունական խաչին ․ մինչև երկնաւոր կոչմամբ հրաւիրեալ 'ի կարգ քահանայութե՟՝ չոքաւ 'ի կեսարիա , և ձեռնադրեցաւ 'ի քահանայապետութի՟ հայոց աշխ՟ին 'ի ս՟բյն ղևոնդեայ պատրիարգէ ․ և եկեալ մկրտեաց ըղթագաւորն տրդատ ազգովին ․ շինեաց եկեղեցիս , և լուսազարդ պայծառացոյց զտունն արևելից արեգակնապէս փայլմամբ ։

Ն՛յս հանդէս ելից լուսաւորչին 'ի վիրապէն , և ա՛յս ծագումն նորարփենւոյն՝ որ ելից լուսով իւրով զհայաստան աշխ՟ 'ի ծագաց մինչև 'ի ծագս նորուն ․ և նոյն աննուաճելի զօրութի՟ սքանչելահրաշ փայլման ն՟ր յաւերժանայ 'ի մեզ մինչ 'ի կատարած ․ զի անմուտ արեգակն էր՝ որ ծագեաց 'ի տուչուէ անըսպառ աղբերն լուսոյ, և աներեկ օր՝ զոր ծաւալեաց 'ի մեզ լոյսն անեղական բնակեալն 'ի լոյս անմատոյց ։ Մ՝իայն թէ՝ որպէս Հայրս մեր յաստուածակոյս կողմանէ մեզ լուսաւորիչ եղև, և անուանեցաւ, նոյնպէս և մեք լուսաւորեալք միշտ գտանիցիմք իբրև Հարազատ զաւակք լուսածնունդք. և մի փակեացուք զպատուհանս սրտից մերոց ընդդէմ միջօրեայ լուսաւորութեան խաւարասէր մտօք, և մի խցցուք զիմանալի տեսանելիս հոգւոց մերոց ընդդէմ պայծառութեան երկնաւոր իմաստութեան. մի լիցուք բաժանորդք անպտղութեան գործոցն խաւարի. և մի կուրօրէն 'ի խորխորատն բերիցիմք կորստական Ճանապարհաց. մի զանձինս, և մի զընկերս գայթակղեսցուք, կամ գլորեսցուք 'ի վիրապն անդընդային, այլ միմեամբք միմեանց նպաստամատոյցք՝ 'ի վեր ելանել փութասցուք 'ի խաւարէ 'ի լոյս. չեմք գիշերոյ, չեմք խաւարի, իբրև 'ի տունջեան զգաստացեալ շրջեսցուք որպէս զորդիս լուսոյ և զորդիս տունջեան ։ Ա՛յլ դու լուսաբուն Հայր Համատարած և գեղեցիկ արևակն տանս Թորգոմայ՝ պարթևազեանդ գրիգոր, Հովիւ Հսկող և վարդապետ Ճշմարտութեան, խոստովանող վկայ՝ և բազմաչարչար նահատակ, Հանապազ կենդանի 'ի միջի մերում, զարթո զզօրութիւնս քո լուսացնցուղ Ճառագայթիւք յերկնից 'ի բարձանց, և արդիւնացո յանդաստանի Հոգւոց մերոց զամենայն բերս բարեաց. ծաղկեցո զերփն երփն վայելչութիւն առաքինութե՟ և ա՟ծահաճոյ վարուց յա՟ծատունկ ՚ի դրախտին ուղղելոյ արեամբ քո . և պտղաբերեալ ազգի ազգի բարեկարգութիւն յայգի տ՟ն զօրութե՟ց , զոր տնկեաց աջն անեղական , և մշակեաց քիրտն երեսաց քոց . ջերմացո՛ զհովացեալ սիրտս մեր յեռանդն ա՟ծպաշտութե՟ , և լուսաւորեալ պայծառացո՛ զեղեցկութ՟ բազմագունի կարգաց՝ իբրև ականց պատուականաց փայլելոց յեկեղեցի ս՟բ , պաշտել մեզ ը՟ քումդ նմանութե՟ և ը՟ հետոց ուղղափառ վ՟դպուե՟դ՝ սրբութ՟ և արդարութ՟ զամ՟ աւուրս կենաց մերոց , զոր քև ծանեաք՝ զարարիչն մեր և զկեցուցիչ և զնորոգիչ , զհայրն ամենակալ և զորդին միածին և զկենդանարար ս՟բ հոգին , երկրպագանելով հոգւով և ճշմարտութ՟՝ ս՟բ երրորդութե՟ն և մի ա՟ծութե՟ . որում փառք , պատի՛ւ , և իշխանութի՟ յաւիտեանս յաւիտենից . ամէն :

ԿՈՏՈՐՈՒՄՆ

Ս͞բց անմեղ Մանկանցն Բեթղեհեմի ։

Հ̄. մայիս. 10. ըստ ձեռ ։ Յսմ տպ. 11. և յունվար. 8 ։ Տ͞ր եէլ. մայիս. 9 ։ Յ. դեկտ. 29 ։ Լ. դեկտ. 28 ։ Գր. Նիւս. 'ի ճառընտ. Գ. եր. ջէ ։ Եւսեբ. պատմ. ա. 8 ։ (1)

ՊԱՏՃԱՌ ԿՈՏՈՐԱԾի բանաւոր գառանցս 'ի տանէն Եփրաթայ՝ փոխանակ հովուին եկելոյ 'ի խնդիր մոլորեալ ոչխարաց, որ և գառն էր՝ բարձող մեղաց աշ͞ի, գեղեցիկ բովանդակի 'ի պատմուե͞ ս͞բյ աւետարանին՝ որ է Մատթէոսի ։ Զի յորժամ մոգք եկին յարևելից աստղագուշակ տեսլեամբ 'ի Հրէաստան յերկրպագուե͞ նորածին Մեսիային՝ փրկչին աշ͞ի, մտեալ 'ի թագաւորական քաղաքն Ե͞մ՝ հարցանէին, թէ ո՞ւր է որ ծնաւ արքայն Հրէից ։ Յայնժամ դղրդեցաւ քաղաքն ա͞մ. այլ առաւել խռովեցաւ Հերովդէս արքայ մեծ՝ որ և Ասկաղոնացի, մի՛ արդեօք ծնեալ իցէ ճշմարիտ օծեալն՝ այն է յունարէն Քրիստոս, և եբրայեցերէն Մեսիա, որդի դաւթի և ժառանգ արքայութե͞ն ի͞էլի. և ինքն իբրև օտարազգի անկցի 'ի թագաւորութե՟, միանգամայն և նշաւակ լինիցի՝ ուր ինքն յաչս հերովդիանոսաց իբրև մեսիա էր համարե՟լ ։ Ապա հարցաքննեալ 'ի քահանայապետաց և 'ի դպրաց՝ թէ ո՞ւր ծնանիցի ք՟ն, իբրև 'ի վ՟ր եհաս՝ թէ 'ի բեթղեհեմ յուդայ լինել վկայէ մարգարէն միքիա, զոր և ժողովուրդն անգամ գիտէր՝ թէ ը՟ս գրոց 'ի բեթղեհեմ գեղջէ, ուր դաւիթն էր, գալոց է ք՟ս, ոչ կարաց ծածկել զբանն · այլ խորհեցաւ դաւել նենգանօք · զի ինքեան և որդւոց իւրոց մնասցէ թագաւորութիւնն հրէից ։

Վասն որոյ կոչեաց խորամանկն զմոգսն առանձինն, և ստուգեաց 'ի նոցանէ զժամանակ աստեղն երևելոյ, զի ը՟ս այնմ գուշակեսցէ զժամանակ ծնիցելոյ մեսիայի, և սպանցէ զմանուկն · և եթէ ոչ գտանիցէ զնա յականէ յանուանէ, կոտորելով զա՟մ համահասակ մանկունս բեթղեհեմի՝ ընդ նոսին մարթասցի բառնալ 'ի կենաց և զմեսիայն ։ Եւ այսպիսի խորամանկ խորհրդով կեղծաւորեցաւ ասել առ մոգսն · գնացէ՛ք 'ի բեթղեհեմ, և ստուգեցէ՛ք վ՟ս մանկանն · և յորժամ գտանիցէք, ա՛զդ արարջիք ինձ · զի և ես եկեալ երկիրպագից նմա ։

Այլ խաբեցաւ չարաչար՝ ուր կարծէր խաբել · մանաւանդ թէ անձամբ զանձն խաբեաց, զի կուրացոյց զնա չարութի՟ իւր · և ոչ 'ի միտ էառ չուառականն, զի թէ ծնեալն իցէ ճշմարտապէս մեսիայ՝ որ եկն զայլս կեցուցանել, կարող է և զանձն ապրեցուցանել. և եթէ թոյլ տայ այլոց մեռանիլ՝ ի պատճառս իւր, գիտէ անդրէն կենդանացուցանել՝ զանձն իւր մատնելով վ՟ն ամենեցուն, երբ և յորժամ ինքն կամի, և ոչ յորժամ սպանօղքն կամիցին. զի տ՟ր է կենաց և մահու։ Այլ եթէ ոչ հաւատայր զմեսիայն այսպիսի գոլ, շա՛տ էր գիտել՝ եթէ յ՟յ առաքեցաւ. և ոչ վրիպի բան մի ՚ի բանիցն ա՟յ։

Այլ ահա ա՟մ ինչ ը՟ տնտեսութե՟ նորածին արքային վճարեալ լինէր. քանզի ազդմամբ ն՟ր մոգքն երկրպագուք ՚ի բեթղեհէմ՝ հրաման առեալ ՚ի տեսլեան չդառնալ անդրէն յեղ՟մ առ հերովդէս, ը՟ այլ ճանապարհ գնացին յ՟ն իւրեանց. և ինքն յս՟ թագաւորն փառաց կամաւոր հալածանս յանձն առեալ փախչէր գիշերայն ը՟ մօր իւրում ՚ի ձեռն յովսեփայ յեգիպտոս. և անդ էր մինչև ցվախճան հերովդի։

Իսկ հերովդէս անգիտացեալ այսմ ա՟մի, իբրև ետես՝ եթէ ոչ դարձան առ նա մոգքն, համարեցաւ՝ թէ նոքա գիտակ գոլով չարութե՟ իւրում՝ ծածկեցին զիրսն, և խաբեցին զինքն. վ՟ն որոյ բարկացաւ յոյժ, և անագորոյն մտօք առաքեաց զօրականս զազանամիտս և արեանարբուս, և կոտորեաց զա՟մ ստնդիաց մանկունս՝ որ էին ՚ի բեթղեհէմ և յա՟մ սահմանս ն՟ր, խառնելով զկաթն ստեանց մարց ընդ արեան անմեղ տղայոց , եթէ՛ նորածին լիցին , և եթէ քանի մի ամսոց կ՟մ միամեայ՝ և ևս աւելի , յերկեմենից և 'ի խոնարհ՝ ը՟ ժամանակին զոր մարթացաւ գուշակել 'ի բանից մոգուց վ՟ս աստեղն երևելոյ · իբրև զի և մանուկն յ՟ս ոչ ապրեսցի 'ի կոտորածէ անտի հասակակցաց իւրոց առ հասարակ :

Ուա՛րբէ անքննին խորհրդոց վերին տեսչուե՟ , եթէ որպէս թողացուցանէ առնել մարդկան ը՟ կամս ազատութե՟ իւրեանց՝ զոր կամինն զբարի և զչար անխտիր · այլ ինքն ամենաբարի բնութեամբ յա՟մի հանէ և 'ի չարէն զբարի՝ առաւել քան զոր մեքս իմանամք :

Օ ի ահա և աստանօր՝ յամօթ եղև չար բանսարկուն և գործակից ն՟ր անօրէն թագաւորն հերովդէս , և ոչ կարացին ինչ սպանանել փրկչին Ք՟ի , այլ միայն պատճառ պատկաց եղեն բազմութե՟ հոգւոց մանկանց տղայոց՝ այսպիսի պանծալի վկայութ՟բ վ՟ս ք՟ի · որոց եթէ 'ի չափ հասեալ էր կենաց Ք՟ի , յոլովք արդեօք ը՟ բերման ապականե՟լ բնութե՟ս զրկեին 'ի յաւիտենից փրկութե՟ · ապա կատարեցաւ քաջ ևս 'ի վ՟ր ն՟ց այն , թէ յափշտակեցան 'ի մատաղ տիս , զի մի չարութ՟ի ինչ շրջեսցէ զմիտս ն՟ց · թող զի ոչ այլ ի՞նչ կարգօք յայնպիսի փառաւորու՟ի վերանայինն՝ ա՟յ սովին նախանձելի վիճակաւ : Ո՛ ինչ զի և գոյժ և լալումն և աշխարումն հաւաքելի 'ի դէմս մարց նոցա՝ յարտաքինն եհեթ հայի սուգ ը՟ Ք՟ի · ը՟ որում նա ինքն նախամայրին համարեալ 'որ մանկանցն այն է մայրն յովսեփայ նահապետի, թաղեալ էր 'ի բեթղեհէմ. և 'ի լինել ահագին կոտորածի հազարաւոր տղայոց 'ի սահմանս նորա, այնչափ ողբ և կոծ լինէր ծնողացն, զի գոյժ նց՟ հասանէր մինչև 'ի հռամա (որ թարգմանի բարձր), այն էր քաղաք 'ի սահմանս գաբաայ բենիամենի 'ի բարձրաւանդակ վայրի՝ իբր երկոտասան մղոնաւ հեռի 'ի բեթղեհեմէ. այլ սակայն՝ և նմին իսկ հռաքելի եղելոյ է՟ երամս արդարոց 'ի գոգն աբրահամու՝ ցնծուն՟ աւետարանեցաւ մեծ՝ յիջանել անդր աղաւներամ բազմութ՟ե՟ն սբ՟ տղայոցս՝ իբրու զաւակաց իւրոց, որք եղեն նմա պարծանք յաւիտենական: (2)

Եւ կարի իսկ քաջ. զի թէ ը՟ առածի գրոց՝ և սաւուղ 'ի մարգարէս, քանիօ՞ն է ասել, և մանկունք 'ի մարտիրոսս, կամ՝ և տղայք ստնդիայք 'ի վկայս. ո՞րպիսի տղայք. անմեղք, գեռաբոյսք, նորաբողբոջք, մատաղերամք. և այն՝ ո՞րպիսի վկայք. գերագոյնք, նորահրաշք. զի ո՛չ լոկ զարիւն էր հեղուլ վ՟ր անուան տ՟ն իբրև զայլսն 'ի հնումն և 'ի նորումս, այլև զանձինս դնել 'ի վ՟ր անձին տ՟ն. մեռանիլ, զի ապրեսցի կեանքն. և պարզաբար՝ տալ զանձինս փոխանակ որդւոյն ա՟յ. զի զի՞նչ այնպէս պանծալի և փառացի 'ի քաջայաղթ մրցանս հանդիսի, ո՟ր դիմագրաւ լինել զօրականին 'ի մահ՝ 'ի վտանգիլ անդ զօրավարին, ևս առաւել արքային՝ 'ի խռան մարտի, և մահուամբ իւրեանց ապրեցուցանել զթագաւորն 'ի ձե-

ռաց

ուաց թշնամեաց ։ Եւ ո՞ր պսակք և վարձք փոխարինաց չիցեն պատրաստեալ այսպիսեացս յերկնաւոր Թագաւորէն ։ Ն͞ որոյ բազում են բանք գեղեցիկ գովեստից առ'ի սբ͞ց հարց և 'ի վարդապետաց 'ի վերայ սբ͞ մանկանցս բեթղեհեմի ։ Այլ զի զաղետս կոտորածի նոցա ըստ մարմնոյ՝ կենդանի նկարագրէ յանդիման աչաց մեր գրիգոր նիւսացի 'ի ճառընտիրս մեր , զայն քաղել կամ եղև մեզ յայսմ վայրի՝ օրինակ զայս ։

* Արդ զիս դեռևս տղայոցն (ասէ) հնչե-
,, ցուցանէ գոչումն . և տեսեալ զն͞ս կար-
,, ծեմ ճչել անգուշակս զարհուրելով , և 'ի
,, նշոյլս սրոյն կափուցեալք , և երկիւղիւ
,, խոնարհեալք 'ի գիրկս մարց իւրեանց իբ-
,, րև յապաւէնս , այլև 'ի ծոցս խուսափէին ։
,, Ապա և զմայրսն կարծեմ տեսանել ,
,, այլ զոմն առ այլուրս փախուցեալս 'ի քա-
,, ղաքէն այնու ողորմելի և քաղցր բե-
,, ռամբք , և խնդրողս տեղի ապաստանի .
,, և զոմն 'ի նոցանէ՝ ոչ ծածկոյթ բարեշուք
,, զիւրեաւ առեալ 'ի դառնութե͞ն . իսկ ոմն՝
,, և զոր ունէր 'ի բաց ընկեցեալ 'ի շփոթա-
,, կան փախստենէն . և զայլ ոմն՝ զման-
,, կամբն անկեալ յայնպիսի ծածկութիւն
,, զտղայն վտանգէր՝ գողանալ յուսալով . և
,, զմիւս ևս այլ՝ հասեալ 'ի հալածչացն (յըն-
,, թանալն) ուժգնակի , և ապա պակասել
,, 'ի գնացիցն , և պարաւանդեալ յերկիւ-
,, ղէն , և արտասուալից աչօք հայեցեալ 'ի
,, փայլումն սրոյն . և զհայեցուածսն՝ յեր-

,, կուս բաժանեալս, և զանձն առաջի ե֊
,, դեալ փութայէս իջմամբ սրոյն ։ Եւ
,, դարձեալ միւս այլ ոմն ոչ կարացեալ շար֊
,, ժել ուրեք՝ կապեալ ոտիցն ՚ի զարհուր֊
,, մանցն ․ այլ յառաջ կործանեալ ՚ի սպան֊
,, մանէ իւրոյ զաւակին ․ և սպանողին՝ սուղ֊
,, ինչ անսացեալ հառաչմանն ․ և ուրեք ձե֊
,, ռօքն լուծեալք և յոյժ սասանելովք, ան֊
,, գիտացեալք և զմանուկն ՚ի գիրկսն սա֊
,, տակեալ, և կանխեալ զմահուանն դիա֊
,, կոյտ նախ քան զսրոյն կորուստ ․ ․ ․ ․ ․ ․
,, (Իսկ անողորմ զինուորք) զձեռս ՚ի վեր
,, ձգեալ զինալիցս՝ ․ ․ ․ զմատաղ գառինսն
,, խողխողէին, և յոմն կողմանց աղեխուրք
,, արեանց յորդաբուղխք զդէմս երկրին շա֊
,, ղախէր ․ ․ ․ և ոմն ուրեք զմանկունսն իբ֊
,, րև զգառն ամոլս խուզէին ․ և ոչ ոք ՚ի նո֊
,, ցանէ թաքչէր ՚ի սրոյն ․ իւրաքանչիւր ոք
,, ՚ի նոցանէ՝ ոմն զի նա է քն, իւրաքանչիւր
,, արեան խնդիր ։

,, Բայց որք էին քաջ սիրտք համարձակ
,, մարքն, ընդդէմ հաստատեալ խոցմանց
,, սրոյն՝ վիրաւորէին վն իւրեանց տղայոցն
,, իբրև հեշտ իմն վիրօք ․ այլ օգուտ առ֊
,, նէին և ոչինչ, բայց երկայնագոյն առ֊
,, նէին իւրեանց զվտանգին ժամանակն ։
,, Իսկ կէսքն բուռն հարեալ բռնաբար ՚ի
,, ձգմանէ մանկանցն՝ զոր և իցէ անդամ
,, ձեռօքն պնդեալ զայն ունելով, յետ այ֊
,, սորիկ երևեցան, սրոյն՝ մօրն՝ որոց ձգէին,
,, զմանուկն բաժանելով ։ Իսկ մի ոմն ընդ֊
,, ձեռնն,

,, ձեռնն, և զմի մասն ոտինն, և այլ ոմն
,, այլ ինչ անդամ՝ ոչ զբոլոր մանուկն ու-
,, նելով ընթանայր։ Իսկ բազումք 'ի փա-
,, խստեանն սրոյն 'ի գլխակուտեալ մարմինսն
,, գլորելով, և 'ի կարծրութի երկրին բաղ-
,, խելով դեռևս մատաղ իւրեանց ման-
,, կունքն․ որ սրոյ ինչ ոչ պիտոյանայր ըղ-
,, մանկունսն կորուսանելոյ։
,, Իսկ մի ոմն՝ հանդերձելոյ վիրաւորել
,, զտղայն առաջի անկեալ՝ բազումանգամ
,, երդմնեցուցեալ զնա մի իւրոյ զաւակին,
,, այսպիսի ինչ արտադուչէր ասելով․ Ո՜ նոր-
,, հեա՛ ինձ զինուո՛ր, որ 'ի քէնդ գո՛րծի
,, ագիտութի, և նախ քան զմանուկդ՝ զիս
,, (հարջի՛ր) եղեալ ցոյց․ և մի տրտմեցու-
,, ցաներ այդպիսի տեսլեամբ զաչս մօրս։
,, Ի՛ ուրեք արդեօք, բայց եթէ քո մայր․
,, է՞ քո կին՝ ստացեալ մանկունս․ արդ 'ի
,, քոյոյն՝ և իմնում ողորմեա․ յիշեա՛, զի 'ի
,, դժնդակութէ մանկանց դալարին աղէք
,, ծնողաց և խռովին։ Իսկ նր իբրև թէ բե-
,, կանէր անձնն, արտասուքն ընդ ծնօտսն
,, հեղուին․ այլ սակայն կատաղութեն հե-
,, րովդի ծառայելով, մինչդեռ բանքն 'ի
,, բերանն էր, 'ի ձեռս ծնողացն սպանանէր
,, զմանուկն․ և զտապան՝ սպանմանն ող-
,, բումն հատանէր․․․ Եւ գոչումն յառնէր
,, խառնակիցս, և ողբաձայնս ընդր պէս-
,, պէս․ մեծագոյն մանկանցն լալով զեղ-
,, բարս․ հարցն կողկողելով զոր ծնանն․
,, իսկ մարցն ձիչ բառնալով 'ի չարչարանսն,

„ և ծերունեացն ոչինչ այնպիսի տեսեալ
„ (է մեր) աղաղակելով . . . և ամենեցուն
„ աւաղելով զգաւնն լոյս աւուրն այնո-
„ րիկ || ։

Արդ՝ եթէ լուր պատմութե̅ս այսչափ կսկըծագին, զի՞նչ անցք իրացն իցեն . և եթէ գութ 'ի սիրտ ա̅մ մարդոյ անկանի 'ի վերայ մանկանց անմեղաց, զի՞նչպիսի իմասցուք կարեկցութի՛ ը̅ նոսա զողայյացեալն էմմանուէլի, և ըստ նմին խոստում̅ն աներկբայ՝ պսակել զնոսա փառօք յարքայութե̅ իւրում, և նստուցանել ը̅ աջմէ իւրմէ 'ի փառս ։ Հաւատամ, եթէ և ը̅ ծնօղս նց̅ եղև բազմօք այցելութի՛ 'ի տ̅նէ . այլ ճշմարիտ է և այն, զի պատժոց պարտական գտան բեթղեհեմացիք յոչ լինել ասպնջական ա̅ծամօր կուսի առ 'ի տալ նմ̅ տուն մի 'ի ծնունդ ա̅ծորդւոյն, վ̅ոյ և հարկեցաւ բանն բազմիլ յանբանից մսուր . զի յիւրսն եկն, և իւրքն զնա ոչ ընկալան . այլ նա ընկալաւ զորդիս նոցա՝ ժողովելով իբրև հովիւ մի զգառինս իւր ։ Կամ է այսու հետև նշանակել և զարժանահաս պատուհաս եկե̅ 'ի վ̅ր անօրէն բռնաւորին հերովդի, ը̅ որում մի ը̅ միոջէ դրէ յովսեպոս եբրայեցի . զի թէպէտև զմանկանցն կոտորած ո՛չ ուրոյն նշանակէ, այլ յայտ առնէ զդատաստանն ա̅յ՝ որ եկին հասին 'ի վ̅ր նր̅ վ̅ն բազմապատիկ արեանցն՝ զոր արար ո՛չ միայն յօտարս, այլև յընտանիս, մինչև 'ի սպանումն կնոջ իւրոյ և որդւոց իւրոց և այլոց սիրելեաց՝ որ պատճական էին

'ի

'ի տոհմի անդ իւրում: Իսկ զանմեղ մանկանցն զկոտորած իբրև հռչակեալ մինչ 'ի հռոմ յայտնապէս նշանակէ մակրոբիոս այր հեթանոս ('ի կռոնոսեան գիրս · Բ՟ · գլ · Դ ·) յասելն մ՟ն օգոստեայ կայսեր , թէ * յոր-
,, ժամ լուաւ , զի 'ի մէջ մանկանց՝ զորս յեր-
,, կրին ասորւոց հերովդէս արքայ հրէից հր-
,, րաման ետ սպանանել յերկեմենից և 'ի
,, խոնարհ , սպանեալ իցէ և որդին ն՟ր , ա-
,, սաց (կայսրն) · լա՛ւ է՝ հերովդի խոզ լի-
,, նել , քան որդի ‖ · զի այն՝ որ ոչ զենոյր
զխոզ 'ի սպանող և ոչ ուտէր , ետ սպանանել զանտիպատրոս զորդի իւր զանդրանիկ 'ի նոյն իսկ աւուրս կոտորածի մանկանցն բեթղեհեմի : Եւ ինքն ոչ յերկարեաց զկեանս՝ այսպիսի ընկալաւ օրհաս չարաչար՝ ը՟ գրելոյ եւսեբի 'ի յովսեպոսէ ·

*Ախտ հիւանդութե՟ն հերովդի զայրանայր 'ի
,, վ՟ր ն՟ր առաւելա՟պ , զա՟ծայվրէժս հատուց-
,, ման չարաչարս խնդրէր 'ի նմանէ զանիրա-
,, ւութե՟ն՝ զոր անօրինէր նա: Զի հուր տապա-
,, խառն տենդոյ վառեալ տոչորէր 'ի նմա , որ
,, արտաքս ոչ ցուցանէր զյարու՟մն տապոյն
,, իւրոյ · ո՟մ զի 'ի ներքուստ յաճախէր հա-
,, շու՟մն տանջանաց նորա · և ը՟ունել ինչ կե-
,, րակուր բնաւ նա ոչ ցանկանայր · զի ոչ լի-
,, նէր անց կերակրոց ը՟ պորտ ն՟ր · և կեղ
,, չարակեղ և ցաւք անհնարինք անկեալ էին
,, զաղեօք ն՟ր · և այրու՟մն գիջուե՟ զոտիւք
,, ն՟ր · և գոգ ն՟ր ասէ տորորեցաւ և որդնա-
,, լից եղև · և 'ի թասել ոգւոցն՝ և նա ևս

,, տառապեցուցանէր զնա 'ի հոտոյ անտի
,, ժահուն.... Իսկ նա թէպէտև տանջեալ
,, չարչարէր այսու ա՟մի՛ ցաւովք , սակայն
,, ջանայր նա կեալ , և ակնունէր փրկուե՟ ,
,, 'ի բժշկութ՟ի անձին իւրում հնարէր....
,, Հաճոյ եղև բժշկաց , զի անդ ('ի ջեր-
,, մուկս՝ որ յայնկոյս յորդանանու) լուա-
,, ցեն զա՟մ մարմինս նորա ձիթով . և իբրև
,, ընկլաւ նա բոլորովին անձամբն յաման
,, անդր՝ որ լի էր ձիթովն , լուծաւ իսկն ,
,, և շրջեցան աչք ն՟ր.... Եկն յերիքով ,
,, և լի էր սրտմտութ՟բ բարկութ՟բ , և զայ-
,, րանայր և սպառնայր նա մահու . բայց
,, խստացեալ զօրանայր նա 'ի նենգու՟ի գոր-
,, ծոց չարի . էած ժողովեաց նա յա՟մ քաղա-
,, քաց անտի յուդայ զերևելի երևելի այր՝
,, 'ի տեղի մի , որ անուանեալ կոչէին աս-
,, պարէզ . և հրամայեաց դնել զն՟ս 'ի բան-
,, տին : Կոչեաց նա զշաղոմէ զքոյր իւր , և
,, զայր ն՟ր զաղեքսա , և ասէ ց՟ն՟ս . գիտեմ ,
,, զի հրէից տօն մեծ լինի 'ի մահու իմում .
,, բայց կարող եմ ես սուգ մեծ առնել 'ի
,, վ՟ր իմ 'ի ձեռն այլոցն , և կոծ սքանչելի լա-
,, լեաց , եթէ արասջիք զպատուէր իմ . ըզ-
,, մարդիկս զայս՝ զոր միանգամ եդեալ են 'ի
,, բանտի , նոյնժամայն իբրև մեռանիմ ես ,
,, կացուսջիք 'ի վ՟ր ն՟ց արս ոստիկանս 'ի ծա-
,, ռայից ասատի , և կոտորեսցեն զն՟ս . զի ա՟մ
,, հրէաստան առ հասարակ և ա՟մ տուն յա-
,, կամայ կամս իւրեանց լացցեն 'ի վ՟ր իմ...
,, Եւ իբրև ձգնեցաւ նա 'ի ցաւս անձին իւ-

,, րոյ , կամեցաւ նա դիւրովին երթալ , մինչ-
,, չև հասեալ էր օր վախճանի իւրոյ . և էառ
,, իւր խնձոր , և խնդրեաց դանակ . . . և վե-
,, րացոյց զաչս իւր , ո̃չ զի սպանցէ զանձն
,, իւր . . . և ապա ինքն դառն չարաչար ցա-
,, ւօք մեռաւ : Այսպէս եղև կատարած
,, մահու՛ան հերովդի . զի ընկալաւ նա ըզ-
,, հատուցումն արդար դատաստանացն ա̃յ
,, (ասէ եւսեբիոս) , փոխանակ զի կոտորեաց
,, նա զմանկտին բեթղահէմացւոց՝ նենգու-
,, թ̃ն , զոր նենգեաց նա զփրկիչն մեր || :

Թի՛ւ համարոյ երանելի մանկանցն կոտորելոց՝ ը̃ յայսմաւուրաց մերոց ասի լինել հազար չորս հարիւր վաթսուն և երկու , 'ի սահմանաց անտի բեթղեհեմի առ հասարակ՝ յութսուն և չորս գիւղից . իսկ ըստ յունաց և եթէովպացւոց կարի շատ գրի , որ̃պս թէ լինել չորեքտասան հազար . ստոյգն ա̃յ է գիտելի : Պատանին ցարդ ևս 'ի զանազան տեղիս նշխարք յանուն ս̃բ մանկանցս . բայց և այնք ստուգութ̃ե կարօտին . զի առաւել 'ի մանրութ̃ե ոսկերաց գուշակեալ երևին :

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ։

(1) Բանզի անյայտ է առոյգ ամիս և օր կոտորածի սբ՟ մանկանցս, յոյնք և լատինք յարմարութբ՟ կարգեցին զտօն նց՟ ՚ի դեկտ. 28. կմ՟ 29. ըս՟ նմին և ՚ի Հ. եդեալ է ՚ի յունիւ. 8. բայց ըս՟ սովորութե՟ եէ՟մացւոց՝ ո՟պ ցուցանեն հին ճաշոցք մեր, կատարիւր տօն նց՟ ՚ի մայիսի. 9. ըս՟ որում դնէ և տ՟ր իէ՟լ. վ՟յ և Հ. կրկնէ միւանգամ ՚ի մայիսի 10. կմ՟ 11: Եւ զի ամիսն մայիսի հասարակօրէն անկանի ՚ի մէջ յինանց՝ յորում ոչ կատարի ՚ի մեզ տօն սբ՟յ, վ՟յ ո՟պ այլ տօնք մայիսի՝ նոյնպէս և անմեղ մանկանցս՝ վերածեալ են ՚ի միջոցն, որ զկնի պէնտեկոստէի:

(2) ՚Ի Հ. մայ. 10. կմ՟ 11, ոչ գիտեմ յումմէ մուծեալ է (զի չէք առ տ՟ր իէ՟լի,) նորալուր պատմութի՟ ինչ, ո՟պ թէ հուաքեալ ոմն այր բարեպաշտ լեալ իցէ ՚ի բեթղեհէմ, զորոյ զմիամօր որդին գեղեցիկ՝ կարծեալ զինուորաց՝ թէ նա ինքն իցէ մանուկն երկրպագելի, անխնայ սպանեալ իցեն, ոչ ներելով արտասուաց հօրն և մօրն. և այլ ևս բանք մուրացածոյ՝ կէս մի ՚ի բանից նիւսացւոյն, կէս մի ՚ի սխալ իմացուածոյ գրոց. և գուցէ բովանդակն հիւսուածք ասորւոց:

ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Սրբ՟յն Ակակիոսի վկային ։

Երկին են փառաւոր վկայք սովին գեղեցիկ կոչմամբ, յ՟ ակակիոս, որ Թարգմանի անչար կմ՟ անբիծ, վայելուչ պատկանեալ է՟ տօնի անմեղ մանկանց ։ Եւ որպէս մին յերկուց մանուկ կոչի, զի էր պատանեակ հասակաւ, վ՟յ է՟ իմիք սա կարծի եդեալն աստանօր 'ի տօնացուցի, (առեալ 'ի յունիս կմ՟ յուլիս ամսոյ,) իբրև յարևելեան ա՟ց սակի • նոյնպէս և միւսն, որ հարիւրապետ կոչի, է՟ այլում տեսութեան առաւել 'ի դէպ գայ կարգի տօնիցս • զի յամենայնն մայիսի նշանակի կատարումն նր՟, և աւելի հռչակաւոր գտանի պանծալի վկայաբանութե՟ ։ Յայսոսիկ հայեցել՝ զերկոցունց վարս և կա՛մեղև մեզ պատմել յայսմ վայրի, եթէ իբրև յիշատակելի, և եթէ իբրև տօնելի ։ (1)

ՆԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆ

Ակակիոսի մանկան ամասիացւոյ ։

Հ. յունիս. 10. ըստ տոմ ։ 11. ըստ յէս ։ Յ. Լ.
յուլ. 28 ։ Բոլլանդեանն գինիրոս. 'ի Է. հատ. յուլ.
էր. 547 ։

ԵՐԱՆԵԼԻՍ ԱՅՍ Ակակիոս էր մանուկ հասակաւ, որդի հաւատացեալ ծնողաց 'ի կողմանց պոնտոսի կմ՟ սինոպայ, ծնեալ կմ՟ սնեալ յամասիա քաղաքի պոնտացւոց. ուր 'ի հալածանս լիկիանոսի կռապաշտ թագաւորի՝ ձերբակալ եղև վ՟ն քրիստոնէութե՟ն. և յանդիման եղեալ յատենի արքային՝ աներկիւղ խոստովանեցաւ զքրիստոնէական հաւատն իւր. և ոչ էառ յանձն 'ի բաց կալ 'ի քս՟է՝ ո՛չ ողոքանօք և ո՛չ սպառնալեօք ։ Ապա կախեցին զնա, և յոյժ գան հարին. (այլք ասեն, թէ քերեցին.) և կոտորեցաւ ամ՟ մարմին նր՟. իսկ սբ՟ն աղօթէր առ ա՟ծ. յայնժամ ձայն եղև առ նա յերկնից. զօրացի՛ր ա՛կակիէ, զի ես ընդ քեզ եմ ։

Տեսեալ թագաւորին զհաստատութ՟ի մնաց պատանւոյն՝ յանձն արար զնա 'ի ձեռս տերենրենտիոսի եպարքոսի կմ̃ պռետորի . և նա գտեալ զնա անհրապուրելի՝ եւ ջեռացուցանել տապակ ձիթով և ճարպով . և ընկեցին անդ զսբ̃ վկայն . այլ յաղօթել նր̃ շիջաւ հուրն , և ցրտագոյն եղև տապակն . և ել սբ̃ն ամբողջ : Դէպ եղև եպարքոսին գընալ յաւուրսն յայնոսիկ յապամիա , և յապողոնիա , որ և ապողոնիադէ (պրոպոնտոսի) . տարաւ և զսբ̃ վկայն զկնի . և անդ կացոյց առ բագինսն՝ որ էին 'ի քաղաքին , և բռնադատէր զոհել ե̃ իւր կռոցն : Յայնժամ յաղօթս եկաց ակակիոս . և անկան ա̃մ բագինքն և կործանեցան :

Ապա մատնեաց զնա եպարքոսն 'ի ձեռս զիլիկինթոսի տրիբունի կմ̃ դատաւորի տեղւոյն . և նա հարցափորձել բազմօք , և հաստատուն գտեալ զսբ̃ն 'ի հաւատս , գան եհար զնա սաստիկ հարուա՛ծով . և ապա ընկեցին առաջի ահաւոր առիւծու , և գազանն ոչ մերձեցաւ 'ի նա : Հրաման ետ դատաւորն արկանել զնա 'ի բորբոքեալ հնոց . և հրեշտակ տ̃ն եհան զնա անարատ . լուա՛ւ զայն զիլիկինթոս , և ոչ հաւատաց . վ̃յ եկն անձամբ , զի տեսցէ զհնոցն՝ եթէ վառեալ իցէ . և ահա ել բոցն , և հրկիզեաց զերեսս նորա :

Յետ այսորիկ ետուն զսբ̃ն ակակիոս 'ի պոսիդոնիոս կամ պիսիդոն դուքս ո̃մն . և նա ծանր շղթայիւք տարաւ զհետ իւր 'ի քաղաքն մելիտիոյ , որ և գրի մելիտոն կմ̃ մելտինէ . (զոր ոմանք համարին լինել նոյն՝ որ 'ի կարիա գաւառի մօտ յեփեսոս . այլ գուցէ իցէ մալաթիա կ՟մ մելիտինէ հայոց) . և անդ ևս մուծին զնա 'ի տաճար կռոց . իսկ վկայն ք՟նի իշխանաբար հրամայեաց դիցն , և անկեալ յերկիր՝ խորտակեցան : Ապա արկին զնա 'ի բանտ , և պնդեցին զոտս ն՟ր 'ի փայտի . և 'ի գիշերին երևեցաւ նմա հրեշտակ տ՟ն , և քաջալերեաց . և անդէն խորտակեցաւ փայտն յոտից ն՟ր :

Իսկ 'ի միւսում աւուր տարան զնա յայլ երկուս տաճարս կռոց . և ոչ կարացին հաւանեցուցանել զնա յերկրպագութ՟ի և 'ի զոհ տծոց իւրեանց . այլ զմիոյն բագինսն աղօթիւք կործանեաց . և 'ի միւսումն առեալ ջուր՝ լուա՛ց զձեռս և զերեսս իւր , և ցանեաց զջուրն 'ի վ՟ր բագնաց . և առ ժամայն անկան յերկիր և փշրեցան : Յայնժամ ել հրաման հատանել զգլուխ ս՟ր՟ն իբրև զմոգ և զկախարդ . զի ոչ կարէին դիքն կալ առաջի անու՛անն ք՟նի , զոր կարդայր հաւատով ս՟ր՟ն ակակիոս : Եւ իբրև տարան զնա 'ի տեղի կատարման , եդ ծունր և կայր յաղօթս . ձայն եղև յերկնից , և ասէ . ահա եկեսջի՛ր 'ի բարձունս . զի պատրաստե՟լ է քեզ պսակն անապական ը՟ն ա՟մ ս՟ր՟ս . և ն՟ր խոնարհեցուցել զպարանոցն՝ կատարեցաւ գլխատմամբ սրոյ 'ի ք՟ս . և ըստ ասելոյ յոյն վկայագրաց՝ կաթն բղխեաց զոյգ ը՟ն արեանն : Իսկ քահանայ ո՟մն գէորգէոս անուն (զոր ոմանք զեւոնդէոս կոչեն) գաւառակից ս՟ր՟յն՝ առեալ ըզպատուական մարմինն երանելի մանկանն

աակակիոսի՝ տարաւ 'ի քաղաքն սինոպ· և եդ անդ 'ի ծածուկ տեղի։ Եւ յամս բարեպաշտ արքային Մօրկայ Հայկազնոյ յայտնեցան անդ նշխարք սբ̃յն ակակիոսի· զի ինքնին սբ̃ վկայն երևեալ պատմեաց, թէ իմ են նշխարքս· և շինեցին 'ի վ̃ր եկեղեցի պայծառ և հոյակապ յանուն սբ̃յն ակակիոսի, յամի տ̃ն իբր 590· իսկ կատարումն ն̃ր եղև յամի իբր 310։ (2)

ՆԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆ

մեծին Ակակիոսի հարիւրապետի՝ բիւզանդացի կոչեցելոյ· և որոց ը̃ նմա։

Հ· Մայիս· 9։ Տր̃ էէլ· ամս· 8։ Յ· ամս· 7։ Լ· ամս· 8։ Բոլլանդեանն հենսքենիոս· 'ի է̃· հար· ամս· եր· 291· Լծ̃։ Լէպոմանոս, և ոսուբէոս· և այլք։ (3)

ՄԵԾԱԶՕՐ ՎԿԱՅՆ ք̃ի ակակիոս՝ բիւզանդացի կոչեցեալ, էր ազգաւ կապադովկացի, երիտասարդ քաջ և երևելի 'ի դասս զօրականաց մաքսիմիանոսի կայսեր՝ փեսային դիոկղետիանոսի· մինչև եղև հարիւրապետ ը̃ ձեռամբ փիրմոսի հազարապետի , որ գլուխն էր գնդին անուանելոյ առ հռովմայեցիս մարտեան կամ մարսեան , որ և արէսեան՝ յանուն չ՟ոյն մարտի և պատերազմայ : Այլ քանզի յառաջագոյն մարզէին զինուորք 'ի դպրոց կրթանաց , վ՟յ գրեն այլք՝ թէ ակակիոս էր զինուորեալ 'ի կարգի ըսքոլայց մարտի :

Եւ եղև 'ի յարուցանել մաքսիմիանոսի հալածանս ը՟դէմ քրիստոնէից , եհաս հրաման և առ զօրագլուխս տեղեաց տեղեաց՝ քննել զդասս զինուորաց. զի թէ գտցեն զոք քրիստոնեայ , հարկեցուսցեն 'ի պաշտօն դից մահուչափ տանջանօք : Յայնժամ փիլիմոս տրիբունն հարցփորձ արարե՟լ իւրում գնդի , յորում գտանէին ոմանք 'ի քրիստոնէից, էր զոր ողոքանօք՝ և էր զոր սպառնալեօք ձգեաց 'ի կամս ամպարշտութե՟ թագաւորին՝ ուրանալ զ.ք՟ս , և զոհել կռոց : Իսկ իբրև եկն 'ի հարցափորձել զ.քաջն ակակիոս ,նա համարձակ զայս արար պատասխանի . Ես քրիստոնեայ ծնայ , քրիստոնեայ եմ , և եղէց՝ կամօք տ՟ն իմոյ յ՟ի ք՟ի : Սաստեաց նմ՟ փիլիմոս . և կրկնէր և երեքկնէր զհարցուածն , և ստիպէր հաւանել օրինաց ինքնակալաց : Իսկ երանելի վկայն ք՟ի պնդե՟լ կայր 'ի բարուոք դաւանութե՟ իւրում , յոչինչ գրելով զ՟մ խրոխտութ՟ն և զխոստմունս չարին : Յայնժամ հազարապետն ընդ կամեցեալ զհրամանն արքունի՝ առաքեաց կապանօք զակակիոս առ բիբիանոս դատաւոր , որ էր դուքս հրամանատար ա՟մ զօրուն , և նստէր 'ի պերինթոս

քղք

քաղաք Թրակիոյ՝ որ և Հերակլեա կոչի, գրեալ առ նա և թուղթ օրինակ զայս :

Փլաբիոս փիրմոս՝ բեբեխանու դքսի ողջոյն ․ Ակակիոս Հարիւրապետ՝ զգինուորեալն է իմոյս Հազարապետութեանս, որ բազմօք խրատեալ 'ի մէնջ՝ կէս մի ողոք բանիւք խոստմանց, և կէս մի սպառնալեօք, զի 'ի բաց կացցէ յաղանդոյն քրիստոնէից, իբրև հաստատեաց զանձնէ քրիստոնեայ գոլ, և 'ի նոյն միտս յամառեալ պնդեցաւ, ես՝ անյաղթ և մշտայաղթ ինքնակալաց մերոց հրամանացն հնազանդեալ՝ կապեալ առաքեցի առ քեզ ․ որ և ոչ պարտ և արժանն է՝ տանջանաց և պատժոց ներքոյ անկցի, ոչ զի օրինաց մերոց զանձն ներքոյ արկանիցէ :

Իբրև ածաւ ակակիոս 'ի բնակութիւն բեբեխանու, 'ի վաղիւ անդր 'ի նստել նորա յատեան առ 'ի քննել զհաւատացեալս, մատեաւ առ նա անտոնինոս կալանաւորակալ, և ասէ ․ յերեկեան աւուր յղեաց առ տէրդ իմ բեբիանոս՝ փիրմոս հազարապետ արեսեան գնդին զակակիոս հարիւրապետ կապեալ՝ վասն անսաստ լինելոյ նորա արքունի հրամանաց, և պաշտելոյ զՔրիստոս ․ զայս ասացեալ՝ մատոյց և զթուղթն գրեալ 'ի փիրմոսէ : Իբրև ընթերցաւ դատաւորն, ասէ ․ ածցի՛ այսր ակակիոս : Անտոնինոս ասէ ․ աւասիկ առաջի ձեր է ․ և մատեաւ ակակիոս զուարթերես ուրախութեամբ :

Եհարց ցնա դատաւորն ․ զի՞նչ անուն է քո : Պատասխանի ետ երանելին ․ ցանկալի ինձ և համօրէն իմումն ազգատոհմի անուն՝ է քրիստոնեայ , 'ի պանծալի անուանէն ք͞ի • այլ որ ը͞ մարդկան սովորութ͞ե իցէ , ակակիոս կոչիմ ։

Առ այս ասէ դատաւորն , զի՞ է՝ զի անչար անուն առեալ քո , որպէս դուդ ասես , չար գտար այժմիկ՝ անհնազանդեալ հրամանաց ինքնակալաց • զի զայդ յայտ առնեն բանք փիլմոսի տրիբունի որ զքէն գրեալք ։ Պատասխանի ետ առաքինին • պատրանք են 'ի բանսդ ո՛վ դատաւոր • այլ ես զճշմարիտն պատմեցից քեզ՝ թէ ո՛րպէս անչար ձայնիմ • վ͞ս զի չկամեցայ հաղորդ լինել չարութ͞ե արիւնահեղ դից , և ոչ միաբանիլ ը͞ հեթանոսս՝ որք դիւաց հնազանդին ։ Բարկացաւ դատաւորն , և ասէ • ուստի՞ ես դու՝ ա՛յր դու , որ այդպէս յանդուգն պարծանօք խօսիս ։ Ակակիոս ասէ • և զի՞ է քեզ հարցանել զտեղի հայրենեաց իմոց ։ Դատաւորն ասէ • քանզի մարդասէր բարս ունիմք , և հայրենի կարգաց խելամուտ գտանիմք , կամիմ ստուգել՝ թէ ուստի՞ իցես • զի ը͞ արժանի պատուոյ հայրենեացդ վարեցայց ը͞ քեզ յատենիս ։ Եւ ակակիոս ասէ • ազգաւ եմ աքիացի , և 'ի կապադովկիա ծնեալ • և 'ի բնակիլ ծնողաց իմոց անդէն՝ եկի ես 'ի զինուորութ͞ի , ուր զբազումն 'ի զինուորակցաց իմոց յառաջ քան զիս վկայս լինիլ ք͞ի լուայ , մանաւանդ թէ և զիմ մերձաւորս և զհասակակիցս նովին առաքինութ͞բ առաքինացե͞լս՝ ծանեայ • որք արհամարհեցին զան-

ցա

ցաւոր զկեանս , և յաւիտենից փառաց առ յա՟յ արժանաւորք եղեն , և սքանչելեօք փայլեցին յետ մահու 'ի վ՟ր երկրի ․ արդ սոցին նմանօղ լինել և ես տենչացայ՝ քան զհետ երթալ նոմոսաց ձերոց , որով որք վարեցանն՝ զհետ եղեն ունայնութե՟ և ունայնացան ։

Յայնժամ ասէ բիբիանոս ․ զգո՛յշ լեր ա՛կակիէ , մի կարծեր՝ թէ չափով և եթ տանջանք մնան քեզ ․ զի ծանր ծանր պատժոց ես պարտական վ՟ն բանիցդ յանդգնութե՟ և մեծաբանութե՟դ զկռօնից քոց ։ Հա՛պա՝ զի մի զայնպիսիս կրեսցես , թո՛ղ անդր 'ի բաց զայդ ա՟մ՝ խորհուրդ սնոտի , և անսա՛ նոմոսաց ինքնակալաց՝ հպատակելով ա՟ծոցն պաշտաման ․ որոց օգնականութե՟ զօրացեալ իշխեն 'ի վ՟ր ա՟մի յաղթօղ սեբաստոսք ։ Այլ և 'ի մէնջ և յատենէս մերմէ ակնածել պատկառ կաց ․ և մի առնիցես զանձն քո իմաստնագոյն ք՟ զամենեսեան՝ որք անսան դենիս այսմ , տարադէպ կարծեօք մոլորութե՟ դնելով զքոյոյս 'ի մարդ ոք՝ որ օրինօք ներքոյ արկաւ պատուհասի և մահու խաչի ։

Պատասխանի ետ ս՟ն ակակիոս , և ասէ ․ խաբիս ո՛վ դատաւոր՝ ըմբռնել 'ի պատրանս մոլորութե՟ խաւարասէր թշնամւոյն ․ զի ո՛չ եթէ առ պաշտաման դիցն՝ զոր դուդ ասես , տիրեն թ՟ի ինքնակալ սեբաստոսք , այլ վերին տեսչութ՟ի մարդասիրին ա՟յ թողացուցանէ զայդ այդպէս ։ Իսկ զոր ասացեր , թէ 'ի մարդ ոք մահու դատեալ՝ եդեալ է իմ զյոյս , ծանի՛ր զտ՟րն մեր յ՟ս ք՟ս մեր մարդկան մարդ եղեալ, և եկեալ յաշխարհս յայս՝ զի տացէ մեզ զփրկութիւն. և այն զի Աստուած էր ճշմարիտ, հրաշափառ խորհրդով տնօրէնութեան խոնարհեցաւ կամաւ առնուլ զմերս բնութիւն. այլ քեզ անհնար է 'ի միտ առնուլ զխորհուրդն Աստուծոյ, և կամ բնաւ իսկ լսել, ցորչափ օտարանաս 'ի քրիստոնէական կարգաց: Ապա թէ ոչ՝ այս ինչ յայտնի լիցի քեզ, զի այն՝ որ բնութեամբ էր Աստուած ճշմարիտ, և ըստ անանջատ առ 'ի հօրէ՝ մշտնջենակից իւրում ծնողի, 'ի սահմանեալ ժամանակի՝ յորում ինքն կամեցաւ՝ եկն 'ի կատարել զգործ փրկութեան մերոյ, և ազատեաց զմեզ 'ի դատապարտութենէ և 'ի գերութենէ բանսարկուին, որ 'ի սկզբանէ անտի մախանօք էր ընդ մեզ: Իսկ դատաւորն հեգնելով ասէ. եթէ այդպիսի ոք էր Քրիստոսն ձեր, զի՞ է՝ զի ոչ պատուհասէ զինքնակալս, որք զինեալ են ընդդէմ նորա. զի գործ մի դիւրին էր վրէժ առնուլ 'ի նոցանէ, եթէ լինէր Աստուած հզօր: 'Ի վերայ եած ակակիոս. և ահա աստի յայսմանէ ունիս 'ի միտ առնուլ զամենաբարի մեր տէրն, և զմարդասիրութիւն նորա ընդ ամենակալ զօրութեան. զի ոչ վաղվաղակի պատուհաս 'ի վերայ ածէ՝ որոց դառնացուցանեն զնա, այլ երկայնամիտ լինի, զի դուք հեթանոսքդ՝ որք դիւաց ընծայէք զաստուածավայելն պաշտօն, զղջացեալ դարձջիք առ նա. միանգամայն և զհաւատարիմ իւր ծառայից զընտրութիւն և զարդիւնաշատ յառաջադիմութիւն 'ի գլուխ տանի սովին կարգօք: Ոչ թէ կամք էին նմա արագ-

աւ

արագ պատուհասել զձեզ, դուք առ օրինս 'ի յաւիտենից կորուստն մատնէիք, և ծառայք նր՟ ոչ այնպէս յայտնի լինէին. թող զի և զօրութ՟ի շնորհացն՟ր անգործ երևէր։ Քանզի զիա՞րդ փառաւոր լինէր տ՟րն մեր յ՟ս արժանւոյն, եթէ ոչ ցուցանէր զհանդէս երկայնմտութ՟ե իւրոյ՝ յոչն առնուլ փութով զվրէժ չարեաց ձերոց։ Բայց արդ ներէ այսմ ա՟մի այսպէս լինել, զի թէ ոչ զդատանայցէք ցվախճան, և զերկայնմտութ՟ի նր՟ արհամարհել անձամբք զանձինս կացուջիք արժանիս կորստեան, ձեր լիցի մեղն, և ոչ գտանիցէք ամենևին տեղի պատասխանւոյ։ Իսկ մեք, որ ծանեաք զտ՟րութ՟ի նր՟, յաւիտեան կեցցուք ը՟ նմա. այլ փառք նր՟ առաւել մեծասցի 'ի նս՟, որք 'ի միտ առին զչարն՝ զոր գործեցին, և սրբեալ զանձինս յա՟մ մեղաց՝ ը՟ունելութ՟ի գտին 'ի մարդասիրէն ա՟յ։

Զայս ա՟մ լուեալ բերբիանու՝ ասէ ցվկայն. գրովք ուրեմն վարժեալ է քո. վ՟յ և այդպէս գիտնօրէն բարբառեցար. քանզի երդուեալ 'ի դիս, զարժանին ընդունելութ՟ե ճառեցեր բան՝ 'ի ցուցանել անդ, թէ մարդկան փրկութ՟ի 'ի ձեռին ա՟յ է, այլ 'ի մերմէ կատարեալ գիտութ՟ե թերի գտանիս։ Պատասխանի ետ ակակիոս. ո՞չ ահա և աստուստ ունիս իմաստասիրել զզօրութիւն և զշնորհս ա՟յ մերոյ և տն՟ բոլորեցունց. զի ուր չիք իմ ուսեալ զծ՟ի դպրութ՟իս՝ որք մեծ ինչ թուէին յաչս ձեր, այլ միայն ինչ ինչ 'ի կա-

րեւո

բնորաց առ խնամութի՟ ա՟ծեղէն տառից, նա ինքն ա՟ծ փոխանակ մեր անպիտան ծառայից առնէ պատասխանի, և տայ մեզ գովել յա՟մ մարդկանէ, որպէս և 'ի ձէնջ՝ որ 'ի դպրութս էք դեգերել։ Քանզի և 'ի սկզբանէ անտի փրկագործ տնօրէնութե՟ իւրոյ՝ 'ի պէտս աւետարանական քարոզութե՟ ոչ առ 'ի ձեռս զարս ազնուատոհմիկս կամ զմեծատունս կա՟մ զճարտարուսմունս, այլ զձկնորսս և զմաքսաւորս և զտխմարս. զի յայտնի արասցէ զզօրութի՟ իւր՝ որ 'ի վեր է քան զա՟մ միտս։

Զայս վայր ունկն դնէր նմա դատաւորն. ապա ասէ. Թողեալ իմ զոր արժանն է առնել ընդ քեզ՝ վայրապար ժամավաճառ լինիմ 'ի պայքար բանից. արդ դու ինքնին գիտես զահագին հրաման ինքնակալաց՝ եդեալ 'ի քրիստոնէից վ՟ր, կամ զոհել և պատուոյ հասանել, և կա՟մ մատնիլ 'ի տանջանս մահուառ անսաստութե՟. և արդ ա՛ղէ ասա ինձ. զոհես ա՟ծոց և հնազանդիս օրինացս, եթէ 'ի բաց հրաժարես։ Պատասխանի ետ վկայն ք՟սի. զայդ բան և 'ի փիլիմոսէ հազարապետէ բազում անգամ հարցաքանեալ՝ խոստովան եղէ, թէ քրիստոնեայ եմ. և արդ ըզնոյն երկրորդեմ. քրիստոնեայ եմ ես, և պիղծ դիւաց ոչ զոհեմ։

Դատաւորն ասէ. այլ ես խնայեմ յառոյգ հասակդ. քանզի տեսանեմ զքեզ ոչ աւելի քան զքսան և հինգ ամօք անցեալ. և առաւել 'ի զինուորական պատուոյդ ակն ածեալ՝

ծեալ՝ ոչ կամեցայ իսկ եւ իսկ տանջանաց մատնել. բայց թէ արդարեւ 'ի դոյն միտս անմտութե̅ անդեալ կաս, հարկ առնես ինձ արկանել զքեզ ը̅ անհրաժեշտ տանջանօք ։ Ակակիոս ասէ. զոր առնեմ եւ խորհիմ միշտ առնել, ո՛չ անմտութի̅ ինչ է, այլ կատարեալ իմաստութի̅ եւ գործ ա̅ծահաճոյ. զի որ արարն զիս, եւ պահեաց մինչեւ ցօրս ցայս՝ քաղցր տեսչութե̅ իւրով, ոչ ուրացայց եւ ոչ թողից՝ զմիայն ճշմարիտն ա̅ծ ։ Դարձեալ յաղթահարեալ բռնաւորին 'ի բանից սբ̅յն, մեծամեծս սկսաւ սպառնալ նմա. եւ նա ասէ. մի՛ կարծեր ահ արկանել ինձ խորխտանօք. ահաւասիկ 'ի քո ձեռս է մարմինս իմ՝ պատրաստ առ ա̅մ հարո՛ւածս տանջանաց. արա՛ ընդ սա՝ որ ինչ հաճոյ թուի յաչս քո. այլ զմիտս իմ եւ զհաստատութի հօգւոյս ո՛չ դու, եւ ո՛չ ինքնակալն քո, եւ ո՛չ խուժան դիւա՛ց քոց կարեն երբէք խախտել եւ տալ անօրինել յա̅ծն իմ ։

Յայնժամ լի եղեւ բարկութե̅ բռնաւորն. ձայն ետ պաշտօնէից ատենին. հարէք ասէ 'ի գետին չորս ցիցս, եւ կապեալ զդա զձեռաց եւ զոտից՝ գա՛ն հարէք կարծր արջառաջլօք ը̅ թիկունս եւ ը̅ փորն. զի ուսցի ոչ եւս բանդագուշել զայդպիսի բանս, եւ մի՛ համարեսցի յանձն գիտուն լինել, երբ գիտէ եւ ոչ ինչ. թո՛ղ տեսցուք՝ եթէ օգնէ՞ դմա ա̅ծն իւր, եւ զչափ առցուք անդութե̅ ոգւոյ դորա ։ Եւ հարկանէին զնա վեց դահիճք անխնայ. իսկ երանելին զայս եւեթ բարբառ վերաձայնէր · ք՟ս՛ հա՛ս ինձ յօգնութիւն նուաստացեալ քում ծառայի · տ՟ր ա՟ծ իմ մի՛ թողուր զիս :

Իսկ իբրև փոխեցան դահիճքն , և արիւն վկային ոռոգանէր զերկիր , և մարմին նորա ողջոյն պատառոտեալ՝ լի լինէր վիրօք , հայեցաւ ը՟ նա դատաւորն , և ասէ · արդ զոհեցե՞ս այսուհետև ա՛կակիէ · կա՞մ թէ լա՞ւ համարիցիս այսպէս թշուառանալ՝ քան բարեկամ լինել ինքնակալաց : Վկայն ասէ · քա՛ւ ինձ զոհել երբէք դիւաց , կամ փախչիլ՝ ի տանջանաց · քանզի զօրավիգն է ինձ և օգնական տ՟րն իմ յ՟ս ք՟ս · և դու ո՛չ գիտես , թէ սովին հարուածով զօրագոյն և յաղթարամիտ առաւել զիս կացուցեր յա՟մ ազգս չարչարանաց · քանզի յառաջագոյն ակնկալութի՟ տանջանաց իւ՛իք իրօք խռովէր զխորհուրդս իմ · այլ յորժամ սկիզբն եղև տանջելոյ , արիացեալ եղէ զօրութ՟բ տ՟ն · մինչև զուա՛րթամիտ բերիլ ինձ այսուհետև յա՟մ չարչարանս՝ ապաւինեալ յա՟ծն իմ 'ի յոյսն կենդանի :

Ասէ դատաւորն · զայդ այդպէս խօսիս , զի չև է իմ արկեալ զքեզ ը՟ մեծամեծ տանջանօք · այլ ես նկուն արարից զապարասանութի՟դ քո · զի ո՞չ ասեսդ՝ յանդուգն ըզքեզ կացոյց չափով չարչարելն և խնայելն իմ 'ի քեզ : Ակակիոս ասէ · արա՛ վաղվաղակի՝ զոր ինչ և կամիս , զի ը՟ յաճախուն չարչարանացդ՝ շահս ինձ առաւելուս , յակամայս առթելով քեզէն զմեծամեծ շնորհս տ՟ն իմոյ առ իս․ ապա թէ ոչ՝ մի՛ համարիցիս տանջանօք զիս հաւանեցուցանել․ զի ո՛չ երբէք արարից զկամս հօր քո սատանայի ։ Ասէ բիբլիանոս ցդահիճս․ հարէ՛ք զծնօտս դորա ծանր ծանր կապարօք, և ձմլեալ անպիտանս կացուսջի՛ք․ զի մի՛ ևս զմեր երկայնմտութի՟ ՚ի յանդգնութի՟ ապառուամ բանից ՚ի կիր արկանիցէ ։ Եւ իբրև արարին զայն, ասէ Ակակիոս․ ահա եղև՝ զոր և կամէիր․ այլ շահեցար և ոչինչ․ զի չարարուեստ հնարք քո ո՛չ կարող են յաղթել սիրոյն իմոյ, որ առ ք՟ս ։

Դարձեալ դատաւորն յողոքանս զիջանէր, և ասէր․ զոհեա՛ այլ դու․ և զերծի՛ր ՚ի մնացելոց քեզ պատժոց ։ Պատասխանի ետ Ակակիոս․ ասացի՝ թէ ո՛չ զոհեմ․ և թէ՝ արհամարհեալ են յաչս իմ ա՟մ չարչարանք քո, զորս ետուր և տալոց ես․ վ՟ զի տ՟ն իմ տայ ինձ ոգի զօրութե՟, և տ՟ր ամենակալ է ը՟ իս․ մինչև ոչինչ հոգս է ինձ զտանջանաց քոց ։ Զարմացեալ իշխանին ը՟ համարձակախօսութի՟ վկային՝ ասէ․ զիա՞րդ դու այր զօրական և առանց դպրութե՟՝ ճարտար ես ՚ի պի՟ննաստուէութի՟ վ՟ անձին քո ո՟չ փաստաբան զոք ։ Ակակիոս ասէ․ միթէ համարիցի՞ս, թէ անձի՞ն ինչ զօրութե՟ բերիմք մեք ՚ի պատասխանիս ատենին․ ՚ի բա՛ց տար․ այլ ինքնին հոգին ա՟յ տայ իւրոց ծառայից բան իմաստութե՟, ո՟չ և զօրութի՟ համբերութե՟, ըստ անսուտ խոստման փրկչին մերոյ՝ որ այսպէս ասաց․ յորժամ մատնեսցեն զձեզ յատեան վ՟ս անուան իմոյ, մի՛ հոգայցէք և մի՛ զմտաւ ածիցէք՝ թէ զիա՛րդ կամ զի՛նչ խօսիցիք. զի տացի ձեզ 'ի ժամուն յայնմիկ՝ զի՛նչ ասիցէք. զի ոչ եթէ դուք էք՝ որ խօսիցիքն, այլ՝ հոգին հօր ձերոյ, որ խօսեսցի 'ի ձեզ:

Յայնժամ անտոնինոս իշխանն կալանաւորաց ասէ ցվկայսն. և զի՞նչ շահ լինիցի քեզ ա՛յ տառապեալ, եթէ չառնուս այժմ յանձն ունկնդիր լինել խրատու. իսկ ապա այլ ևս ծանունց մատնեալ տանջանաց՝ յակամայ կամս խոնարհեսցիս 'ի հրամանս ինքնակալաց: Պատասխանի ետ ս՟բն ակակիոս. երթ և խրատի՛չ լեր անձին քո չո՛ւհաւակա՛նդ. զի թէ ոչ բանից և ոչ սպառնալեաց դատաւորիդ երբէս ինչ արարի, և ոչ 'ի տանջանաց երկեայ ինչ՝ օգնական ինձ ունելով զա՟ծն իմ, կարծիցե՞ս եթէ ո՞ւնկն մատուցից քում չար հրապուրանաց:

Ապա ասէ դատաւորն ցսպասաւորս. զակակիոս զերբեմն զօրական՝ զայրն անմարդի՝ տարա՛յք արկէ՛ք 'ի բանտ ներքին, պրկեալ 'ի կոճղ երեքկին, և պնդեալ 'ի ծանր շղթայս է՟ պարանոցն և է՟ բովանդակ մարմինն. զի պահեսցի այլում պահու ատենի. և մի՛ թողացուսջիք ումեք 'ի մարդկանէ ազգին իւրոյ տեսանել զդա, զի մի՛ իբրև երանելի զոմն հռչակեսցեն զնա, և ոգի առնուցունովիմբ պնդագոյն լինել յայլում հարցափորձի: Իբրև տարան զնա 'ի բանտն, գոհանայր նա ուրախութ՟բ վ՟ս շնորհացն ա՟յ եղե-

լոյ առ ինքն․ և մնաց անդ աւուրս եօթն
անհնարին տառապանօք ։

Յաւուրսն յայնոսիկ փլակկինոս անթիհիւպատոս՝ այս է փոխանակ բդեշխի, որ նստէր յեւրոպեան մասին Թրակիոյ, կամեցեալ գալ՚ի բիւզանդիոն, յղեաց զիր առ բիբիանոս դուքս ՚ի պերինթոս քաղաք, զի փութասցի յառաջել քան զինքն՚ի բիւզանդիոն՝ ընդ իւր ածելով զամ կալանաւորսն ։ Եւ եղև յորժամ յուղի անկաւ բիբիանոս հանդերձ կապելովք, բազում նեղութիս կրեաց ընդ ճանապարհայն սբ․ վկայն քսի ակակիոս․ քանզի թող զվէրսն այտուցեալս և խղխայթեալս, և զանհնարին աշխատութի ՚ի ծանրութէ շղթայից յերկայնութէ ճանապարհին, զոր ամ խոշտանգեալ և կոփեալ լինէր ՚ի զօրականաց, և սովու և ծարաւու տանջեալ՝ յոգիս պարզել ապաստան լինէր․ և ոչ գոյր նր մխիթարիչ ոք ՚ի մարդկանէ՝ ոչ ՚ի դահճաց, և ոչ յուղեկցաց, կմ ՚ի գերեկցաց․ քանզի հեթանոսք էին․ և ոչ այլ ումեք ՚ի քրիստոնէից թոյլ տուեալ էր մերձենալ առ նա ։

Եւ երբև այսպէս յամ կողմանց վտանգեալ՝ հազիւ ոտն յոտանէ կարէր փոխել, աղաչեաց զդահիճսն յուղւոյն՝ փոքր մի թոյլ տանել նմա զտեղի առնուլ․ և ՚ի գիջանիլ նոցա կամօքն այ, եկաց յաղօթս երանելին, և ասէ․ Փառք քեզ ած, որ մարդասիրութբ քո գթասիրեալ հայիս ՚ի սիրելիս անուանդ քո․ փառք քեզ ած իմ, որ և զիս զմեղուցեալ

ցեալ ծառայս քո կոչեցեր յայս վիճակ շնորհաց քոց. փառք քեզ յ͞ս, որ գիտակդ ես ակարութե մարմնոյ մերոյ, և ը͞ն նմին ետուր ինձ համբերութի՝ հանդուրժել չարչարանաց ժուժկալութե͞ ։ Եւ արդ քանզի տեսանես տ͞ր իմ զբազմապատիկ աշխատութիւնս՝ որք եկին հասին 'ի վ͞ր իմ, մինչև ստիպեն զոգիս ելանել 'ի մարմնոյս, դու տ͞ր ինքնին առաքեա՛ զհրեշտակ քո զօրացուցիչ, որ փարատեսցէ յինէն զցաւս անձին իմոյ. և շնորհեա՛ ինձ կատարել զը͞նթացս իմ վկայութ͞ե յատենի դատաւորաց, և վաղագոյն գալ առ քեզ ։

Յայնժամ յանկարծակի ձայն եղև յամպոյն՝ որ ունէր զերեսս երկնից. զօրացի՛ր և քա՛ջ լեր անկակիծ ։ Եւ այնպէս յայտնաբարբառ հնչեաց երկնառաք ձայնն, զի և դահիճքն և կապեալքն ա͞մ լսէին զայն. և պակուցեալ 'ի զարմացմանէն՝ ասէին այլ ցընկեր. եթէ և ամպք խօսիցի՞ն երբէք. կա՞մ ո՞յր ուրուք լուեալ իցէ այսպիսի ինչ՝ զոր մեքս լուաք այժմիկ. և անկաւ 'ի նո͞ց մաքառումն և վարանումն, թէ զի՞նչ իցէ նշանն այն ։ Իսկ ս͞րբն զօրացեալ յոյժ հոգւով և մարմնով, և պատճառս առեալ 'ի սքանչելեացն ա͞յ՝ սկսաւ քարոզել նո͞ց զճանապարհն ճշմարտութե͞. քանզի և նո͞ց շարժեալ 'ի վերուստ՝ մտադիւրութ͞բ լսէին նմա. և եկեալ բազմաց 'ի կապելոց անտի չարագործաց՝ անկանէին յոտս ս͞ր վկային, և հաւատային յա͞ծ նո͞ր, և խնդրէին ցուցանել նո͞ց զճանապարհ փրկութե՟ ։ Ասէ ցն՟ա ակակիոս զուարթութ՟ք . ես թէպէտև 'ի զինուորական եկի կարգ , այլ անդստին 'ի մանկութէ առատս քահանայից եմ սնեալ , զի և 'ի քահանայական ցեղէ ծնեալ եմ գլխովին . արդ զոր լուայ 'ի նցէ բանիւ տ՟ն , զայն պատմեմ ձեզ ։ Եւ սկսեալ զճանապարհայն յարարչութէ մարդոյն և յանկմանէն ադամայ՝ առաջի դնէր ն՟ց զխորհուրդ մարդանալոյն ա՟յ վ՟ս փրկութե մարդկան ազգի , և զկենսաբեր տնօրէնութիւս ն՟ր , և զմահ խաչի , և զա՟ծային յարութի և զվերանալն յերկինս , և զհանդերձեալ միւսանգամ գալուստն՝ առնել յարուի տիեզերաց . զի ը՟ նմա կեցցուք աստ յաւիտեան յ՟ն կենդանեաց՝ որք 'ի նա հաւատացաք , և մտերմութ՟բ պաշտեցաք զն՟ա . քանզի կենցաղս այս առ ժամանակ մի է , աղցաւոր և անցաւոր ։ Օ այս ա՟մ լուեալ ն՟ց՝ դարձան բոլորով սրտիւ առ տ՟ր ։

Յետ այսորիկ 'ի ժամ գիշերոյ աւուրն երկրորդի՝ երբ ագանէին ուրեք 'ի բացի , տեսանէին որք զ՟որ վկայիւն էին , արս փառաւորս և պայծառազգեստս 'ի ձև և 'ի զարդ զինուորութե՝ զի խօսէին ը՟ ակակիոսի ։ Յայնժամ ոմանք 'ի տեսողայն համարեցան ընդ միտս , թէ զինուորակիցք և բարեկամք ակակիոսի իցեն ն՟ք . որոց զանգիտեալ յահէ ինքնակալաց՝ գիշերախառն եկեալ իցեն 'ի տես ն՟ր . իսկ այլք ասէին , եթէ ա՟ծային է տեսիլն ։

Եւ եղև յորժամ հասին 'ի բիւզանդիա 'ի

միւս ևս գիշերի, և կաղանաւորքն ա՟մ արգելան 'ի միում տան, տեսին դարձե՟լ զնոյն զու՛արթունս՝ զի խօսակից լինէին ը՟ ակակիոսի, և զմեծս մարմնոյ նր՟ լու՛անային ջերմ ջրով, և ողջացուցանէին․ և իբրև գտին ըզնա ողջանդամ, 'ի միտ առին զսքանչելիսն ա՟յ՝ որ եղեն յայցելութ՟է երկնային զինուո՛րութե՟ց հրեշտակաց առ վկայն քո՟ի ։

Ապա 'ի վաղի՛ւն անդր հրամանաւ դատաւորին արկաւ երանելին ակակիոս 'ի ներքսագոյն բանտ՝ անդեալ 'ի կոճեղս հանդերձ շղթայիւք․ իսկ այլք 'ի կապելոց կային յարտաքին բանտի ։ Եւ ահա 'ի մէջ գիշերին դարձեալ տեսանէին 'ի ներքս կոյս նոր ըսքանչելիս․ քանզի երևեցան ճրագունք բազումք և ջահք վառեալք 'ի տեղին՝ ուր ակակիոսն էր․ և եկեալ լուսատեսիլ արանց՝ մատչէին առ վկայն․ կէսք 'ի բաց լուծանէին զկապանս նր՟, կէսք զցաւս նր՟ փարատէին․ և այլք կերակուր ջամբէին նմա ։ Եւ իբրև յերկարէր տեսիլն, գիտացին՝ թէ չէ երազ․ ազդ արարին բանտապետին, զի ինքնին ականատես լիցի և վկայեսցէ ստուգութե՟ իրացն ։ Եւ նր՟ տեսեալ՝ հիացե՟լ պակեաւ․ և երթեալ պատմեաց բազմաց յընկերաց և 'ի բարեկամաց իւրոց ։

Իսկ դատաւորն՝ որ չէր ինչ գիտակ այսմ ա՟մի, յեօթներորդ աւուր գալստեան իւրոյ 'ի բիւզանդիա՝ հրաման ետ բերել զառաջեալ զակակիոս․ և տեսե՟լ զնա ողջ և կայտառ լուսափայլե՟լ իբրև զտեսիլ հրեշտակի, անկաւ 'ի զարմացումն մեծ , և ասէ ցիւրսն ․ ո՞չ ասացի ձեզ ո՛վ անլսօղ պաշտօնեայք , զի զայրդ վնասակար միշտ 'ի խոշտանգանս և 'ի նեղութի՟ս բանտի պահեսջիք ․ և զիա՞րդ տեսանեմ ես զդա աւադիկ 'ի վ՟ր այնչափ հարուածոց գիրացեալ և վայելչացեալ քան զառաջինն իբրև նահատակ զօրաւոր ։ Պատասխանի ետ անտոնինոս կալանաւորակալ ․ երդուեալ 'ի զօրութի՟ն քո տ՟ր մեր և դատաւոր , եղև որ՟պս և հրամայեցերն ․ այլ թէ զիա՞րդ յետ այնչափ տառապանաց ճանապարհի և բանտի և կապանաց անվնասելի տեսանի , մեք ո՛չ գիտեմք ․ ա՛դէ հա՛րց և զբանտապետ տեղւոյս ։ Ասէ դատաւորն ․ կոչեսցի այսր բանտապետն ։ Իբրև եկն , ասէ ցնա ․ ընդէ՞ր ո՛վ թշուառական չարարեր զոր քեզն հրամայեցաւ ․ այլ այնպէս դարմանեալ և պարարեալ ածեր զդա առաջի մեր , ո՟պ այն թէ զայր պատերազմօղ ախոյեան մեզ հանել ։

Յայնժամ վայրի ասէ ս՟ն ակակիոս ցդատաւորն ․ մի՛ բանտապետիդ գրեր ինչ զիմ սպառազինու՟ն ․ քանզի զօրութի՟ս այս յերկնից 'ի ճշմարիտ զօրագլխէն իմմէ յ՟սէ ք՟սէ պարգևեցաւ , այն՝ որ զօրացուցիչն է իմ և հանդիսադիր նահատակութե՟ս ․ նա ինքն առողջացոյց զիս բոլորովին ․ զի այսպէս բժշկէ տ՟ր մեր զծառայս իւր բանիւ և եթ ։ 'Ի բարկութե՟ն բրդեցաւ դատաւորն , և ասէ ․ հարէ՛ք և ջարդեցէ՛ք զատամունս դորա ․ զի ուսցի չխօսել՝ մինչև հարցեալ յումեքէ ․ և ջախջախեցին զծնօտս մեր ։ Ապա անդրէն ասէր իշխանն ցքահանայապետն ․ և արդ զի՞նչ պ̄խնի տայցես ո՛վ չարագործ ։

Յայնժամ ասէ քահանայն , որում անուն էր կասսիոս ․ երդուեալ յարև տ̄նդ իմոյ , զի աւելի քան զոր պատուիրեցերդ՝ արարի ը̄ դա ․ և եթէ իմոց բանիցս ոչ հաւատայք , վկայ են ինձ ա̄մ կալանաւորք և որք բանտին ․ արդ եթէ այլազգ ինչ լսես ՚ի նոցանէ , ոչ երկնչիմ ՚ի մեռանելոյ , ՚ի քո ձեռս է գլուխ իմ ․ արա՛ զոր հաճոյ թուի ։ Ապա եթէ ունկն դնիցես բանից ծառայի քո , պատմեցից տ̄ն իմոյ զկրացն ճշմարտութի ․ քանզի տեսանէաք բազում անգամ զօրականս նորատեսիլս եկեալս առ սա ՚ի զգեստս լուսապայծառս ․ յորոց ոմանք հանգոյն ճարտար բժշկաց սրբէին զվէրս դորա , և այլք բուժէին ՚ի ցաւոց ․ կէսք իբրև խրատատուք սրտապնդէին զնա , և ազգի ազգի կերակուրս ջամբէին , և ոմ̄ սեղանակից և բարձակից զուարթացուցանէին զնա ։ Զայս և յառաջագոյն տեսեալ է ոմանց զճանապարհայն ․ և որք միանգամ ՚ի բանտի տեսին՝ ն̄ք պատմէին ինձ ․ և ես քանզի ոչ հաւատայի , անձամբ երթեալ ականատես եղէ ․ ապա մտի ՚ի ներքս տեսանել՝ թէ ո՛յք իցեն օտարքն այն զինուորք ․ և ոչ զոք գտի , բայց զդա միայնիկ ՚ի կոճեղս պնդեալ՝ զի կայր յաղօթս առ ա̄ծ իւր ։

Իսկ անամօթ դատաւորն ասէ ցքահանայապետն ․ գիտեմ , զի կաշառս առեալ քո յաղ-

գա

դականաց առնդ՝ զխուրեցեր զմա. և արդ հնարիս ևս խաբել զատեանս մեր բանիւք սնոտուովք. Նմին իրի այր մահու ես դու. և անդէն հրաման տայր հարկանել զթիկունս նր̅ կապարածայր ձաղկօք։ Իսկ նա աղաղակէր ը̅ բանիւք. աղաչեմ զքեզ ով դատաւոր, ճշմարտեալ քննեա՛ զիրսդ. և եթէ կայցէ ինչ սուտ 'ի բանս իմ, սպան զիս։ Ասէ դատաւորն. եթէ այդպէս իցէ՝ որպ̅ս ասացերդ, ապա կախարդ ոք է այրդ. դու զի՞ ասես վ̅ն դորա։ Եւ նա ասէ. ես զոր տեսի՝ զայն ասացի և ասեմ. այլ թէ կախարդ իցէ կա՞մ ոչ, զայն ինչ ոչ գիտեմ։

Մինչդեռ նք̅ այսպէս կագէին ը̅ միմեանս, ստիպեալ լինէր ս̅բ վկայն ակակիոս 'ի ծաղր ջախջախեալ ծնօտիւք իւրովք, և ծիծաղէր 'ի վ̅ր անմտութե̅ նց̅։ Ընդ որ առաւել մոլեալ դատաւորին՝ ասէ. ա՛յր դու միթէ 'ի ծա՞ղր առնել զմեզ եկիր մոգութ̅բ քով։ Պատասխանի ետ ակակիոս. ես ո՛չ ծիծաղիմ իբր խնդալով ը̅ չարն՝ յոր վարակիք, այլ զարմանալով ը̅ ապշութե̅ սրտից ձերոց. ապա թէ ոչ՝ ողբամ 'ի սրտէ ընդ յաւիտենից կորուստն՝ յոր ունիք յուղարկիլ. այլ դուք անձամբ զանձինս ծաղրելի ցուցանէք, զի թողեալ զճշմարիտն ա̅ծ՝ երկնի և երկրի արարիչ, անշունչ քարանց երկիր պագանէք, և զն̅յ ծառայս՝ մոգս անուանէք։

Դատաւորն ասէ. մի՛ կարծեր յաղթել ինչ զովլին պնդութե̅ յամառութեդ. ոչ թողից ըզքեզ կենդանի, թէ ոչ երկիր պագանիցես և դու ամծոց մերոց՝ ըստ հրամանի անյաղԹ ինքնակալաց ։ Ակակլիոս ասէ . եԹէ երկնչէի 'ի սպառնալեաց քոց , կանխաւ ևս արդեօք անսայի քեզ . այլ զի միտք և խորհուրդ իմ լաւ են քան զքոյդ , ոչինչ զանգիտեմ 'ի բանից քոց . արա զոր քեզ հաճոյ Թուի ։ Յայնժամ վերստին սկսաւ բռնաւորն մատուցանել զնա 'ի տանջանս . և հարին զնա միւսանգամ արջառաջլօք ընդ լանջս և ընդ Թիկունս . մինչև փոխեցան տասան արք՝ որք գանէին զնա անխնայ ։

Իսկ երանելին զսովորականն կարդայր առ փրկիչ իւր զբարբառ . քս՛ օգնեա՛ նուաստացեալ ծառայի քում . և ո՛րչափ դառնանայր բռնաւորին ը՟ լուր անուանն քի՟ , նա ևս քան զևս ստէպ երկրորդէր . տր՟ յս՟ քս՟ օգնեա՛ ծառայի քում ակակլիոսի ։ Եւ եղև առ նա ձայն յերկնից՝ որ ասէր . մի՛ երկնչիր ա՛կակլէ , այլ զօրացի՛ր յանձն քո և ուրա՛խ լեր . քանզի արժա՛ն է քեզ այսուհետև երկնաքաղաքացի լինել ընդ հարս քո՝ մտանելով յանձառ ուրախութի՟ տն՟ քո , փոխանակ զի արիաբար դաւանեցար զխոստովանութի՟ անուան իմոյ ։

Եւ իբրև եղև բարբառս այս ահաւոր հնչմամբ, Թմրեալ ը՟արմացան մարդիկն՝ որ հարկանէին զվկայն , և ոչ ևս կարէին շարժել զձեռս իւրեանց ։ Յայնժամ և դատաւորն գլխովին անյոյս եղեալ յաղԹահարել զքաջ նահատակն՝ լաւ համարեցաւ առաքել զնա 'ի մեծ ևս ատեան անԹիհիւպատոսին եկե-

ըոյ 'ի բիւզանդիա՝ հանդերձ նամակաւ, որ
ունէր օրինակ զայս. Ամենափառ և մեծ դատաւորիդ
փղակկինոսի փոխանակի բդեշխի՝
բիբիանոս կուսակալութ̄ պատուիրեալ ողջոյն։
Օակակիոս Թեկնածու անարժան կրօնի
քրիստոնէից զառ 'ի փիրմոսէ հազարապետէ
արհեսեանց առ իս առաքեալ, և անհաւան
դատեալ ակնարկութե̄ կամաց անյաղթ
ինքնակալաց մերոց, զոր յաւուրց հետէ քսանևերկուց
առ իս ունելով մանրախուզին
հարցափորձեալ ինչ ոչ շահեցայ՝ սակս յամառ
պնդութ̄ 'ի միտս կամակորս, գիտելով
չափ՝ զի ձեռոյինդ իշխանութ̄ի առաւել ահընկէց
գտանի, նմին իրի զայրս զայս ցայսվայր
առ յինէն օրինօք դատաստանի պատուհասեալ,
յղեցի առ քեզ՝ տեղեկութ̄ հանդերձ
անցիցն անցելոց ը̄ նա յիմում ատենի, ծանուցեալ
զգալուստ տ̄րութ̄դ քո այսր։
Իբրև էառ փլակկինոս զԹուղթն, հրաման
ետ պահել զվկայն 'ի դիպահոջ առանց կապանաց
և նեղութ̄. քանզի կին նր̄ քրիստոնեայ
էր. որոյ և աղաչեալ էր զայր իւր, և
դաղտնի երդմամբ հաւանեցուցեալ, զի մի
զոք 'ի քրիստոնէից՝ որք մատնին 'ի նր̄ ձեռս,
յերկարագոյնս և բազումս չարչարեսցէ։
Ապա յետ աւուրց հնգից հրաման ետ փոխանակ
բդեշխին ածել զակակիոս զառաջեաւ.
և ետ ընթեռնուլ յատենի զգործս
դատաստանաց եղելոց 'ի բիբիանոսէ։ Եւ
իբրև 'ի միտ էառ զամ̄, զարմացաւ ը̄ անագորոյն
խստութ̄ի բիբիանոսի, և ը̄ անպար-

տելի ամրութե̄ն մտաց ակակիոսի. այլ առաւել սքանչացաւ ը̄ անլուր անցս՝ զորս պատմէր գիրն իբրև մոգութե̄ն՝ յաղագս երևման նորատեսիլ զօրականաց, որք բժշկեցին զակակիոս յառաջին հարուածոց. և ոչ գտեալ զելս իրաց՝ սկսաւ մեղադրել դատաւորին վասն յերկար և անողորմ տանջելոյ զայր պատուեալ 'ի զինուորական կարգի. ուր պարտ էր նմա ասէ գէթ փութով կարճել զնա 'ի կենաց :

Սովին խորհրդով ընտրեաց փլակկինոս՝ իսկ և իսկ գլխատել տալ զքաջ նահատակն, գրել վ̄ն նորա դատակնիք այսպիսի. Զակակիոս զգալիլեացւոց կուսակիցն, և զանարգուն մշտայաղթ տ̄րութե̄ ինքնակալաց մերոց, որ ոգւով չափ պնդեցաւ վաղագոյն տեսանել զվախճան կենաց իւրոց՝ ը̄ օրինակին զոր յայտ առնեն խնդիրքն՝ որ եղեն վ̄ն նորա, զայրս զայս ասեմ զապստամբսն յօրինաց հրամայէ ատեանս մեր սրով վախճանել, և գլխատութե̄ վճարել 'ի կենաց :

Իբրև լուաւ երանելին ակակիոս զվճիռ մահուն իւրոյ, և ետես՝ եթէ ընդ հուպ ունի կատարիլ, լցաւ ուրախութե̄ իբրև ը̄ լուր մեծի աւետեաց. զի զոր ա̄մ օրպէս ծարաւի պապաքեալ էր յարբումն բաժակի նահատակութե̄. վասն որոյ և առ ետեղ մեծաձայն գոչեաց ասելով. Կամէի լեզուօք բազմօք օրհնել զքեզ ք̄ս՝ որդի ա̄յ՝ ճանապարհ կենաց և փրկութեան մերոյ. զի այդպէս բազումողորմ և բարեգութ ցուցար առ մե-

զուղուցեալ քո ծառայ , և արժանի համարեցար զիս այսպիսում շնորհաց վիճակի :

Եւ առեալ ածին զնա 'ի տեղի կատարման արտաքոյ քաղաքին բիւզանդիոյ · անդ աղաչեալ նորա զդահիճսն ներել նմա վայրիկ մի , եդ ծունր 'ի գետին , և զայս աղօթս մատուցանէր 'ի ձայն գոհութե · Փառք քեզ ա՟ծ , քեզ վայելէ օրհնութի , և քում անբաւ մեծվայելչութե վայելէ անլռելի գովութի , որ այդպէս պանծալի երևեցուցանես զքեզ 'ի մեղուցեալ անձինս մեր · զի որչափ առաւել առատաձեռնես 'ի մեզ զշնորհս երախտեաց քոց , և մարդասիրապէս քաւես զանօրէնութիւնս մեր , այնչափ գերահրաշ փայլէն փառք բարեգթութեդ քո : Օրհնեալ է անուն ս՟բ փառաց քոց , զի այսպէս հաճեցար պատուասիրել զմարդիկ 'ի ձեռն միածնի որդւոյ քո և հոգւոյդ ս՟բյ · որպէս և այժմ զիս զանարժանս արժանացուցեր այսպիսի բարեմասնութեան , և ո՛չ յաղագս իմոց ինչ գործոց , այլ վ՟ս բարեսէր կամաց քոց հրաւիրեալ կոչեցեր 'ի սոյն փառս : Վ՟ս որոյ օրհնեմ զքեզ հ՟ր ա՟ծ ս՟բդ իշէլ ընդ որդւոյ քում միածնի և ը՟ ս՟բ հոգւոյդ · զի քո՛ է փառք , քո՛ է պատիւ , այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից · ամէն :

Զայս ասացեալ՝ խոնարհեցոյց զգլուխն , և մատոյց զպարանոց իւր 'ի բերան սրոյ դահճին · և այնպ՟ս կատարեցաւ բազմայաղթ և փառաւոր վկայն ք՟ի մեծն ակակիոս՝ յութեբորդ աւուր ամսեանն մայիսի , յամի տ՟ն 303 ·

303. այն ամ̄ առաջին էր սաստիկ հալածանաց դիոկղետիանոսի և մաքսիմիանոսի, և սկիզբն թուականի մարտիրոսաց. վ̄ս որոյ և յեկեղեցիս ինչ կատարի ը̄ սբ̄յն ակակիոսի և հանրական յիշատակ այլոց վկայից բազմաց նահատակելոց ը̄ նմ̄ 'ի նոյն աւուրս. և են որ հաշուեն. հէ. անձինս զարս և զկանայս. յորս ոմանք 'ի ծնէ քրիստոնեայք էին, և կէսք 'ի կապելոց անտի հեթանոսաց՝ որք դարձան 'ի ձեռն սքանչելեաց և քաջողութե̄ սբ̄յն ակակիոսի։

Իսկ զպատուական մարմին ակակիոսի վկային բարձին արք երկիւղածք և ք̄նասէրք, և ամփոփեցին պատուով 'ի տեղին կոչեցեալ յունարէն ըստաւրիոն (որ թարգմանի խաչեան, կմ̄ խաչետղ)։ Ուր յետ ոչ բազում ամաց շինեաց վկայարան մեծ կոստանդիանոս, անուանեալ սբ̄ ակակիոս եօթնասանդուղք կամ եօթնաստիճան. զոր և զկնի յուստինիանոս կայսր 'ի ժամանակս շինելոյ զսբ̄ն սոփի՝ վերստին նորոգեալ հոյակապ կառուցանէր։ Այս է ասելն պրոկոպիոսի (յղ. շին. յուստ. գիրք. ա.) * Ո՞ ոք լռութե̄
,, անցանիցէ զտաճարաւն ակակիոսի.
,, զոր նա վասն խարխալե̄լ գոլոյն քակեալ,
,, և վերստին շինեաց 'ի հիմանց՝ սքանչելի
,, մեծութե̄, որ հաստատեալ կայ 'ի վերայ
,, սպիտակափայլ սեանց. ո̄ր և յատակն է
,, 'ի նոյնպիսի կճեայց. ուստի այնչափ փայլումն պայծառութե̄ ցոլանայ, որպէս թէ
,, ձիւնապատ իցէ տաճարն ողջոյն։ Շինեցան
,,

,, ցան յառաջոյ և երկու դաւիթք . յորոց
,, մին է սիւնազարդ , և միւսն հրապարակա-
,, հայեաց ‖ ։ Այլ զկնի ժամանակաց՝ ըստ
պատմելոյ կեդրենոսի (յերես . 588 .) դար-
ձեալ * Վասիլ կայսր մակեդոնացի (այն է
,, արշակունի) պայծառ շինուածով վերա-
,, կանգնեաց զտաճար ակակիոսի վկային ,
,, որ յեօթնասանդուղս ‖ ։

Գոյր և այլ վկայարան յանուն սրբյն ակակիոսի 'ի կոստանդինուպօլիս , կարծեցեալ իբր 'ի բուն տեղւոջ կատարման նորա . ըստ որում գրէ նիկեփորոս կալլիստոս խառն աւանդութեամբ (պատմ . եկեղ . ժԳ . 38) , ասելով . * Այս տաճար մեծ և գեղեցիկ 'ի
,, կոստանդինուպօլիս՝ գառիա , որ ընկզենի
,, կոչեցեալ 'ի բնակչաց . զի 'ի միջի նր կայր
,, տնկեալ ծառ ընկուզի ահագին բարձրու-
,, թբ . զայնմ ծառոյ կախեցաւ սուրբն ակա-
,, կիոս վկայն , և այնպս կատարեցաւ վկայ-
,, ութբ ‖ . որ ոչն ստուգի այլազգ , եթէ ոչ՝
գուցէ կապեալ իցեն զվկայն ը այն ծառ , կմ յետ գլխատման կախեալ իցեն զթևոցն 'ի տեսիլ բազմութեան . բայց և զայդ ոչ ոք ասէ ։ Ստոյգ է այն , զոր գրէ կոդինոս 'ի հնութիս կոստանդնուպօլսոյ (յերես . 54 .) թէ * Զեկեղեցին սրբյն ակակիոսի զանուա-
,, նեալն գառիա՝ շինեաց եղբայրն ներսեսի
,, պատրկի (հայկազնոյ) 'ի ժամանակս յուս-
,, տինոսի (կայսեր) և պրոկոպիոյ (թագուհ-
,, ւոյն) ‖ . գուցէ յանուն միւս ակակիոսի իցէ
այս եկեղեցի . այլ չունիմք զստոյգն ասել ։

Այլ յետ ժամանակաց նշխարք մեծին ակակիոսի փոխադրեալ եղեն 'ի բիւզանդիոյ յարեւմուտս. և ը̅ վերին տեսչութե̅ 'ի հասանելն 'ի ծովեզերեայ քաղաք նահանգին նէապօլսոյ 'ի կաղաբրիա գաւառի, 'ի սկիւլլակիոն (որ և ըսքիլլաչէ. ռամկ. չիլլա գալաբրիոյ,) եդան 'ի մայր եկեղեցին ա̅ծածնի : Անցաք և մեք 'ի սիկիլիոյ 'ի նոյն քաղաք, որ է այժմ աւան փոքրիկ. այլ չեղև ժամանակ ստուգելոյ զաւանդութիւն տեղւոյն (4) :

XXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXX

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ:

(1) Որպէս 'ի Հ. նոյնպէս և 'ի Յ. երկոքին համանուն վկայքս միօրինակ գրին ակակիոս, ագագիոս. այնպէս է հասարակօրէն և առ լատինս, ր̅ ագաչիուս. բայց են 'ի նո̅՝ որ զակակիոս մանուկ ագաթիուս կոչեն, և են որ զհարիւրապետն ագացիուս կամ ագաթիուս գրեն :

(2) Պատմութի̅ ակակիոսի ամասիացւոյ միօրինակ գտեալ ը̅ գոյացութե̅ 'ի Հ. Յ. Լ. նոյնօրինակ գրեցաւ և 'ի մէնջ. այլ փափաքէաք 'ի ձեռս բերել զլիակատար վկայաբանութի̅, զի յայնժամ ը̅ կարգի լինէր և պատմութի̅ բազմապատիկ գործոց և բազմահնար չարչարանաց. որք 'ի համառօտութե̅ դժուարալուր լինին իբրև անկերպարան : Այլ յայսր ամի վերայ՝ ընտրագոյն է և կարգաւորագոյն պատմութի̅ սորա 'ի մեզ.քան առ այլս. որոյ է տեսանել և առ բոլլանդեանս, որք կցկտուր ևեթ բանս 'ի մէջ բերեն՝ թէպէտև համաձայն հայումն : միայն յաւելուն բերել և զփոքր ինչ աստղանշեալ այսպիսի 'ի ձեռագիր օրինակէ ռուսաց յունաց. * Իսկ զևանդիոս ոմն
,, երէց առեալ զմարմին սրբոյն (ակակիոսի նահատակե-
,, լոյ 'ի մելիտոս քաղաքի), և իւղովք անուշիւք պատ-
,, ուեալ՝ հանդերձ յիշատակարանօք եդ 'ի տեղի հան-

Ը ,, նու

,, նաւոր, 'ի քաղաքապետութենէ ուրումն գորխմեդոն_
,, տայ 'ի սինադայ, որ մարտիրոսացաւ ը՟ սբ՟յն տրո_
,, փիմոսի||։ Յորմէ չփոխեալ և պինիոսի բոլանդեան՝ ոչ գտանէ զելս իրաց, զի գորխմեդոն մին յիշխանաց սինադայ ('ի սահմանս ասորւոց) ը՟ տրոփիմոսի և սաբատիոսի յանտիոքայ պիսիդեայ՝ նահատակեցաւ բազմօք յառաջագոյն, ք՟ առ պրոբոս կայսերաւ, ոպ՟ է տեսանել 'ի սեպտ. 19. Հ. Յ. Լ. և զիարդ կարէր առնուլ զնշխարս ակակիոսի նահատակելոյ իբր երեսուն ամօք զկնի առ լիկիանոսիւ։ Այլ մեք ազատ եմք յայսմ չփոթութենէ. զի 'ի Հ. ոչ գնի զղեւոնդիոս, այլ գէորգէոս քահանայ. և քաղաքն ոչ գրի սինադ, այլ սինոպ, կամ սինաւպ։ Թող զի պինիոս և ոչ զայն գիտէ, թէ սբ՟ն էր ամասիացի 'ի պոնտոսէ կմ՟ 'ի սահմանաց սինոպայ։

(3) Բայց 'ի համաձայնութենէ յայսմաւուրաց Հ. Յ. և Լ. վս՟ ակակիոսի կապադովկացւոյ՝ բիւզանդացի կմ՟ բիւզանդեցի կոչեցելոյ 'ի հին ճաշոցս մեր (որք զսա համարին տօնել ը՟ անմեղ մանկունս), պանծալի է վկայաբանութիւն առաջիկայ. զորոյ զհին օրինակն յունարէն գտեալ տպագրեն բոլանդեանք 'ի վախճան ը՟ հատորոյն մայիսի. զլատին թարգմանութիւն յառաջ բերելով 'ի բուն օրն։ Կայ և այլ լատին թարգմանութիւն, զոր 'ի կիր առնուն լիպոմանոս և սուրիոս, և կարծեն՝ թէ բնագիրն իցէ մետափրաստեսի. բայց այլք հաստատեն՝ թէ հնագոյն մատենագրի է գործ. ոպ՟ և հենսքենիոս բոլանդեան ասէ, * որչափ հնար է իմաստասիրել,
,, այս գրուածք են դարու մեծին կոստանդիանոսի՝
,, հաստատե՟լ 'ի հեղինակութե անթիհիւպատական գըր_
,, ծոյ՝ մեծանձն և վայելուչ ոճով. վս՟յ և տմ՟ ընդու_
,, նելութե՟ արժանի||։

(4) Աւանդութիւն արեւմտեայց ը՟հանրապէս այս է, թէ մարմին սբ՟յն ակակիոսի՝ որ թաղեալ կայր 'ի ստաւրիոն բիւզանդիոյ, յետ ժամանակաց 'ի դիմել անդր այլազգեաց՝ եդաւ յարճճեայ տապան, և արկաւ 'ի ծով. և ա՟ծային խնամօք հանեալ եղև 'ի ծովափն կաղաբրիոյ 'ի քաղաքն սկիւլակիոն, որ է եպսանիստ ը՟ մետրապօլտութե՟ հռեգիոնի, հանդէպ մեսինայ քաղաքի սիկիլիոյ կղզւոյն։ Եւ թէպէտ ցարդ եւս անդ ասի լինել ընդ այլ նշխարս սբ՟ց, բայց տամայոս սպանիացի 'ի վկայագիրս ազգին իւրոյ ջանայ հաստատել, թէ փոխադրեցան նշխարքն այն ակակիոսի 'ի սկիւլակեայ 'ի սպանիա, և եդան յեկեղեցին սրբուհւոյ, և

գլուխ նորա յեկեղեցին կոնքայ : Այլ գիտեմք, զի և յայլ տեղիս եւրոպիոյ յիշատակին զանազան նշխարք յանուն սր̄յն անակլետի . և զի ոչ հարկ զսոյն ընծայել միում վկայի, ուր կան երկու փառաւորեալ վկայք համանունք ը̄ գրելոցս . որք և անակլետս երրորդ վկայ՝ աշակերտ պատրիկիոսի եպիսկոպոսի, ը̄ Հ. Յ : մայիսի . 19 . և Լ. ապր . 28 . և անակլետս չորրորդ՝ խոստովանող եպիսկոպոս ամդայ . որ յիշի՝ ի Հ. ապր . 11 : Յ. մարտ . 29 : Լ. ապր . 9 :

* * *

ՎԱՐՔ

սրբոց կուսանացն Նունեայ և Մանեայ :

Հ. հոկտ. 29 : Ճառընտ. Ա. շէտ : Ա. գալ : Խորէն. Բ. 83 : Յովհ. կաթ. և այլ պատմիչք հայոց : Ռուֆս վն̄ Նունեայ՝ Սոկրատ. Ա. 20 : Սոզոմ. Բ. 7 : Թէոդորետ. Ա. 24 : Թէոփանէս : (1)

ԱՄՈԼՔ ՀԱՒԱՏՈՅ առաքելուհի պարկեշտ կուսանքս Նունէ և Մանէ հռովմայեցիք յընկերաց անտի սրբոց Հռիփսիմեանց, երևելիք էին 'ի մէջ նոցա, և աւուրբք հնագոյնք քան զբազումս 'ի նոցանէ, գործակիցք և աջակիցք մօրն զգաստուէ մեծին Գայիանեայ : Արդ ը̄ ա̄ծային խնամոց՝ ուր այլ ընկերք սր̄ պարկեշտաժողով կուսանք վկայական պսակի եղեն արժանի, սոքա երկոքին զնմանօրինակ ընկալան քան սպառ՝ ձգնողական վարուք և առաքելանման վաստակօք ․ ո՟ք կոյսն մանի կի՟ մանէ ՚ի հայս , և Նունի կի՟ Նունէ ՚ի վիրս ։ Քանզի ՚ի հասանել անդ զաւաջինն հռիփսիմեանց ՚ի հայաստան ծ՟ , և ՚ի ցրուիլ ոմանց ոմանց ը՟ս ազգմանն ի՟յ յառանձնութ՟ի ձգնութեան , դէմ եդեալ գնաց կոյսն մանի յեկեղեաց գաւառ ՚ի կողմն երզնկայու , և հաճեցաւ դադարել անդէն յառանձնութե լերինն սեպուհոյ՝ որ է մի ՚ի լերանցն դարանաղեաց ․ քանզի եգիտ անդ քարայր մի , և համարեցաւ զայն պատրաստեալ յի՟յ ՚ի բնակութ՟ի իւր ․ և այնպէս մեկուսացեալ յա՟մ մարդկանէ՝ հանդարտեալ նստէր ՚ի լերին անդ , տուեալ զանձն աղօթից և ձգնութ՟եց ․ զի էր լուսաւոր մտօք և կիրթ հոգևոր ճանապարհին՝ ամրացեալ շնորհօք հոգւոյն ի՟յ ։ Եւ եկաց այնպիսի հրեշտակակրօն կարգօք յերկար ժամանակս , մինչև մաշեալ փտեցան զգեստք մարմնոյն ․ և ինքն անձամբ ողջոյն արևակէզ յամարայնի , և ցրտահար ՚ի ձմերան՝ կրելով զա՟մ նեղութ՟իս խնդամտութ՟բ ՚ի սէր անմահ փեսային իւրոյ ք՟ի , համբերձ հանապազորդեան անսուաղութ՟բ յայնմ ամայութ՟ե ․ զի խոտաբուտ ճարակօք ևեթ անցուցանէր զա՟մ աւուրս ։ Այլ հոգի նորա գեղեցիկ պարարէր իմանալի խորտկօք ա՟ծային այցելութ՟եց , որք ՚ի մուացօնս արկանէին նմա զա՟մ վիշտս մարմնոյ ․ և այնպէս իբրև զուարթուն ՚ի մարմնի՝ ա՟ծամերձ կեանս կեայր երանելին ։

Եւ եղև յետ ամաց բազմաց՝ ս՟բն գրիգոր լուսաւորիչ հայաստանեայց անցեալ ընդ ամուրն անի՝ որ է կամախ, ել 'ի մերձակայ գաւառն դարանաղեաց 'ի լեառն սեպուհ, և շրջէր անդ միայնակեցութ՟բ՝ խնդրել իւր տեղի առանձնութե. և իբրև նշմարեաց 'ի բացուստ զքարայր մի, դիմեաց գնալ անդր։ Իսկ սրբուհին մանի՝ որ անդ նստէր, ձայնեաց առ նա 'ի հեռուստ յունական բարբառով, թէ մերկ եմ ո՛վ ս՟բ հայր. համբերեա՛ երիս աւուրս, և ապա եկ առ իս. որովբանի՛ գուշակեաց զերջանիկ փոխումն իւր. և եղև այնպէս։ Զի յետ երից աւուրց գնացեալ անդր ս՟բյն գրիգորի՝ եգիտ զմանի վախճանեալ, և ելաց 'ի վ՟ր ն՟ր մեծաւ կարօտով. և ապա ամփոփեալ թաղեաց զնա սաղմոսիւք և օրհնութ՟բ 'ի տեղւոջն, զո՛ր օրինակ ամփոփեալ էր և զնշխարս հռիփսիմեանց վկայելոց արեամբ։ Եւ ինքն այնուհետև անդէն կրօնաւորեցաւ մեծաւ ճգնութ՟բ մերձ առ ոսկերս կուսին. և կոչեցաւ տեղին այն՝ մանեայ այրք։

Իսկ սրբուհին նունէ՝ որոյ երթեալ էր ընդ այլ ընկերս իւր մինչև 'ի ներքին կողմանս երկրին հայոց, 'ի միւսանգամ ցրուելն հռիփսիմեանց 'ի պատճառս հալածմանց՝ զոր կրեցին 'ի սահմանս վանայ առ վարագ լերամբ, կամ 'ի վտանգի յայտնելոյ նոցա յարարատեան երկրի, խոյս տուեալ 'ի տեղւոջէն՝ գնաց տարադէպ 'ի վերս առաջնորդութ՟բ տ՟ն, և եհաս մինչև 'ի քաղաքն վրաց մծխիթայ.

ուր ցուցեալ զանձն իբրև գերի ոք անարգ յաղախնայց կարգէ՝ կայր յանծանօթս առ ժամանակ մի, ծառայելով 'ի տան ուրեք՝ մեծաւ ճգնութ՟բ հանդերձ. և օրինակաւ սքանչելի քաղաքավարութե՟ իւրոյ քարոզ լինէր ճշմարտութե՟. և առեալ յայ՟ զպարգևս բժշկութե՟՝ փարատէր զախտս 'ի մարդկանէ անուամբն ք՟ի :

Եհաս լուր նորա 'ի տունն միհրանայ վրաց արքային, որ մին էր 'ի չորից սպարապետացն տրդատայ. և զի հիւանդ էր որդին միհրանայ, և մայր մանկանն (որ յետոյ կոչեցաւ սողոմէ) առաքեալ զնա առ բազումս 'ի բժիշկ կանանց՝ ոչինչ էր օգտեալ, յղեաց առ նունէ. և նորա խաչակնքեալ 'ի վերայ մանկանն՝ ասէ. ք՟ս որ զբզ՟մս բժշկեաց, բժշկէ և զմանուկս զայս. և նոյնժամայն առողջացաւ մանուկն : Զկնի այսորիկ հիւանդացաւ և մայր մանկանն թագուհին վրաց. վ՟ոյ փութապէս եկեալ կոչէին զնունէ իբրև բժիշկ ճարտար 'ի դուռն. այլ նա չէառ յանձն, զի մի փառաւորեսցի կմ՟ յայտնի լինիցի. իսկ թագուհին ետ տանել զինքն առ նա. յայնժամ հարկաւորեալ նունեայ՝ արար աղօթս 'ի վերայ նր՟, և ողջացոյց անուամբ տ՟ն : Զայս ամ՟ իմացեալ միհրանայ արքային՝ հրամայեաց բերել զնունէ յարքունիս, և ետ նմա պարգևս բազումս. բայց նա ոչինչ կամեցաւ առնուլ, և զարմացոյց զթագաւորն. և 'ի հարցանել միհրանայ՝ թէ ո՞յր զօրութ՟բ կատարես զբժշկութի՟ս, պատմեաց նմա փոքր 'ի շատէ զճանապարհն ճշմարտութե̄ . և այնուհետև առաւել համարձակութբ̄ սկսաւ ուսուցանել սրբուհին յարքունիս և արտաքոյ զհաւատս ա̄ծպաշտութե̄ 'ի տուչութե̄ հոգւոյն :

Դէպ եղև 'ի նոյն աւուրս ելանել Միհրանայ արքայի յորս երէոց . և մինչդեռ դեգերէր 'ի բացի , յանկարծակի պաշարեաց զնովաւ մէգ և մառախուղ թանձրամած իբրև խաւար շօշափելի . և վարանեալ յոյժ՝ ոչ կարէր երթալ յաջ կամ յահեակ : Եւ իբրև յանհնարս եմուտ , երկեաւ՝ թէ այնպիսի ինչ դիպեսցի և ինքեան , զոր այն ինչ լուեալ էր զհարուածոյն Տրդատայ 'ի գընալն յորս . վ̄ն 'ի բոլոր սրտէ կարդաց զանուն ճշմարտին ա̄յ՝ զոր Նունէ քարոզէր , և ուխտեաց՝ զի թէ փրկեսցի 'ի վտանգէն , պաշտեսցէ զա̄ծն Նունէի : Եւ առ ժամայն լոյս ծագեալ՝ փարատեաց զմէգն , և առաջնորդեալ հասոյց զարքայ 'ի տուն իւր . և նա այնուհետև հաւատաց 'ի ք̄ս ա̄մ տամբ իւրով և համօրէն ազգաւն՝ անսալով վարդապետութե̄ն Նունեայ :

Եւ զի 'ի նմին ժամանակի հասեալ էր լուր 'ի Վիրս վ̄ն ելից ս̄բյն Գրիգորի 'ի վիրապէ , և դարձի ազգին Հայոց յա̄ծգիտութի̄ , վ̄ն խնդրեաց սրբուհին Նունէ առ 'ի թագաւորէն Միհրանայ , և յղեաց 'ի Հայս առ ս̄բն Գրիգոր՝ տալ առաջնորդ զոք Վրաց , և կամ հրամայել զի՞նչ պարտ իցէ նմա գործել այնուհետև . զի յօժարութե̄ ընկալան առէ

վիրք

վերք զքարոզութ̃ն աւետարանին ։ Այլ նա քանզի չև էր առեալ զկարգ քահանայական և զաստիճան եպ̃սութե̃՝ հրամայեաց առժամն զկուռսն կործանել, և կանգնել ըզխաչն տ̃րունական՝ ը̃ս օրինակին, զոր արարեալ էր ինքն 'ի հայս. մինչև տացէ նց̃ ա̃ծ հովիւ և առաջնորդ ։

Եւ ս̃րբն նունէ արար անյապաղ ը̃ս հրամանի ս̃րբյն գրիգորի՝ գործակցութ̃բ միհրանայ. կործանեաց զամպրոպային պատկերն արամազդայ, որ կայր յանդիման թագաւորական քաղաքին մծխիթայ՝ յայնկոյս մեծի գետոյն. որում սովոր էին երկիր պագանել քաղաքացիք այգուն այգուն 'ի տանեաց իւրաքանչիւր, զի հանդէպ նոցա երևէր. և որք կամէին զոհել՝ անցեալ ը̃դ գետն երթային 'ի մեհեան անդր ։ Այլ 'ի կործանել զայն մեհեան՝ յարեան գլխաւորք քաղաքին 'ի վ̃ր թագաւորին, եթէ զո՞ ունիմք այսուհետև պատուել երկրպագութ̃բ փոխանակ կռոցն. և նա ուսեալ 'ի սրբուհւոյն՝ եցոյց նց̃ զխաչն ք̃սի. զոր առեալ հրամանաւ նունեայ կանգնեցին 'ի վ̃ր վայելուչ բլրոյն յարևելից կողմանէ, որ և բաժանիւր 'ի քաղաքէն փոքրագոյն գետով ։ Եւ 'ի վաղիւն անդր քաղաքացիքն առ հասարակ 'ի տանեաց իւրեանց երկրպագէին ս̃բյ խաչին. այլ իբրև գնացեալ տեսին բազումք 'ի նոցանէ զխաչն՝ զի փայտ լոկ էր, արհամարհեալ յետս դարձան. ո՞չ լի է ասեն անտառ մեր այսպիսի փայտիւք ։ Յայնժամ ս̃բ կոյսն նունէ աղաչեաց զա̃ծ՝

բառնալ զգայթակղութիւնս տգիտաց. և աղօթիւք նորա էջ սիւն ամպոյ 'ի բլուրն, և լցաւ լեառն բուրմամբ անուշուէ. և քաղցր բարբառ հրեշտակաց լսելի լինէր, որք օրհնէին սաղմոսիւք զա՟ծն 'ի բարձանց. Ը՟ նմին և լոյս պայծառ խաչանման հանգեաւ 'ի վ՟ր փայտեղէն խաչին՝ գեղեցիկ ցոլացեալ հանդերձ շրջապատեալ երկոտասան աստեղօք ։ Զայս ա՟մ սքանչելիս տեսեալ ամբոխին՝ հաւատացին 'ի խաչն, և հաստատեցան 'ի հաւատս ք՟ի. քանզի և նշանք բժշկութե՟ ոչ սակաւ լինէին 'ի նշանէ անտի ս՟բյ խաչին ։

Եւ քանզի կարօտէր ժողովուրդն ունել և տուն աղօթից փոխանակ մեհենաց, ետ Նունէ Միհրանայ զօրինակ ձեւոյ եկեղեցեաց քրիստոնէից, և սկիզբն արարին շինելոյ եկեղեցի մեծ հրամանաւ արքայի. և եղև 'ի կանգնել զսիւնս 'ի մէջ տաճարին, անկարացան գործաւորք 'ի վեր առնուլ զմին 'ի մեծամեծ սեանց, և դնել 'ի տեղին՝ ուր կամէին. և յետ աշխատ լինելոյ նոցա և ոչինչ վճարելոյ՝ երթեալ Նունեայ գիշերայն 'ի տեղին՝ աղօթեաց առանձինն. և ահա ինքնին 'ի վեր բարձրացաւ սիւնն, և եկաց ուղղորդ 'ի սահմանեալ տեղին, այլ իբրև յօդս 'ի կախ, զի չէր յեցեալ 'ի վ՟ր խարսխին. և զայն ոչ գիտէին թագաւորն և ոչ 'ի ճարտարապետաց ոք. այլ իբրև եկեալ հասանէին 'ի վաղիւն անդր 'ի տեղին բազմութի՟ն՝ գտանել զելս իրացն, տեսին՝ զի յանդիման ամենեցուն էջ նստաւ սիւնն 'ի վ̃ր խարսխին ։ Յայնժամ ձայն բարձեալ միաբան գոչէին . Մե՛ծ է ա̃ծն քրիստոնէից . և ճշմարիտ է՝ զոր ինչ և քարոզէ նունէ . որով ևս քան զևս հաստատէին 'ի հաւատս ։ Յետ այսորիկ իբրև լու եղև վրաց աշխ̃ին՝ մկրտութ̃ին տրդատայ և պայծառութ̃ քրիստոնէութ̃ե 'ի հայս , ա̃պ և 'ի յոյնս յետ դարձին կոստանդիանոսի , յղեաց առ նա̃ միհրան հրեշտակս՝ ը̃ աւետարկութ̃ սրբուհւոյն նունեայ , և ետ բերել եպ̃սկոպոսս և քահանայս . որք եկին և մկրտեցին զվրացիս , և հաստատեցին յաշխ̃ի անդ զա̃մ կարգս պաշտամանց ։

* Իսկ երանելին նունէ (ասէ խորենացին)
,, եւ գնաց աշակերտել և զայլ ևս գաւառսն
,, վրաց յանապակ լեզուէն , շրջելով անպաճուճաբար
,, և առանց աւելորդաց , օտարացեալ
,, յաշխ̃է՝ և որ 'ի սմա . կամ թէ ճշմարտագոյն
,, ասել , 'ի խաչ ելեալ՝ 'ի կրթութ̃ի
,, մահու զկեանս ունելով , բանիւ վկայ
,, բանին ա̃յ , և յօժարութ̃բ̃ իւրով որպէս
,, արեամբ պսակեալ . զոր համարձակեալ
,, ասեմք՝ առաքելուհի եղեալ քարոզեաց
,, 'ի կղարջաց սկսեալ առ դրամբք ալանաց
,, մինչև ցսահմանս մազքթաց . որպէս ուսուցանէ
,, քեզ ագաթանգեղոս ॥ ։ (2)

Իսկ այնպիսի քարոզութ̃բ̃ շրջան առեալ և դարձեալ 'ի մծխիթա՝ խաղաղութ̃բ̃ հանգեաւ 'ի ք̃ս , լի աւուրբք և արդեամբք առաքելական մշակութ̃ե . զորոյ զպատուական մարմինն առեալ եղին վրացիքն 'ի տապանի սաղմոսիւք և օրհնութ̃բ̃ . և պատուէին և պատուէին իսկ մինչև ցայսօր զսքանչելին Նունէ՝ որպէս ճշմարտիւ լուսաւորիչ ծնին իւրեանց:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ:

(1) Զկարևոր և զպանծալի յիշատակ սրբոյ կուսին մանեայ ընդ կատարման 'ի լերինն սեպուհոյ՝ ունի ազգ մեր 'ի կենդանի աւանդութեան սրբոյ լուսաւորչին մերոյ բնակելոյ 'ի նոյն մանեայ այրսն. զի որպէս երևի՝ յետ առաջին նուագի հանդիպելոյ նմա, որպէս և յետ թաղմանն, պատմեաց զայն ինքնին ոմանց յաշակերտաց իւրոց առանձինն. և ապա տարածեցաւ 'ի մէջ ազգին. զի թէպէտև 'ի վերջին աւուրս իւր իսպառ ծածկեաց զանձն սուրբն գրիգոր 'ի մարդկանէ, այլ յառաջնմէ էր զի 'ի լերինս առանձնանայր, և էր զի իջանէր այց առնել աշակերտելոցն:

Իսկ զսրբոյն Նունեայ՝ որպէս ազգն վրաց ունի բազմապատիկ աւանդութիւս (զորս չեղև մեզ 'ի դէպ հաւաքել ընդ կարի, որպէս կամէաք), նոյնպէս և 'ի գիրս հայոց և յունաց հաստատութեամբ աւանդի՝ որչափ ինչ եգաք: Միայն ծանիր, զի նախ՝ յոյն մատենագիրք առ չգիտելոյ՝ թէ Նունէ էր յընկերաց աստի հռիփսիմեանց կուսանաց, համարին զնա լինել գերի ոք քրիստոնեայ անկեալ 'ի վիրս. զի իբր այնպիսի երևէր կամ հնչէր անուն նորա առ հեռաւորս: Երկրորդ՝ խորենացին և այլ պատմիչք մեր՝ միայն զբժշկութիւն թագուհւոյն յիշեն. ուր յոյնք յաւելուն և զնախընթաց բժշկութիւն մանկանն. ընդ հակառակն յոյնք ոչ յիշեն զսքանչելիս խաչին՝ զորմէ ճոխագոյն ճառէ խորենացին. որպէս և զհրաշից սեանն կանգնելոյ 'ի շինութեան տաճարի՝ զոր ոչ յիշէ խորենացին, յոյնք լիագոյն պատմեն ընդ գրելոյս: Երրորդ՝ Հ. չփոթէ զտեղի մեհենին կործանելոյ՝ ընդ տեղւոյն, ուր խաչն կանգնեցաւ. այլ մեք ընդ խորենացւոյն որոշեցաք: Չորրորդ՝ 'ի Հ. պարզապէս գրի, թէ Նունէ * փախեաւ 'ի նահատակութեան ժամուն սրբոց հռիփսիմեանց, և գնաց տարադէպ 'ի վիրս||. ուր պարտ է իմանալ զաւուրս պանդխտութեան և հալածանաց՝ յորս ցրուեցան. զի այլ է խոյս տալ 'ի վտանգէ՝ որ ըստ ինքեան է գովելի, և այլ է 'ի բաց փախչել 'ի պահու նահատակութե՟, որ լինի պարտաւելի։ Արդ Խորենացին՝ ոչ յառանձին պատմութե՟ Հռիփսիմեանց, նոյնպէս և աստանօր 'ի գիրս ը՟հանուր պատմութե՟ իւրոյ՝ ըստ առաջին եղանակի խօսի, մանաւանդ թէ և զկամաւոր առանձնութի՟ ոմանց ոմանց զճանապարհայն յայլ և այլ տեղիս լինել նշանակէ. և յայս միտ տայ իմանալ զայն, թէ * կին ոմն անուն Նունէ յընկերաց ,, սրբ՟ց Հռիփսիմեանցն 'ի ցրուելոցն փախստեամբ հասեալ յաշխարհն վրաց 'ի Մցխիթայ 'ի նց՟ քաղ՟ք նախադահ||։ Եւ թէ յառաջագոյն էր մեկնեալ Նունէ, և ոչ ետես զժամ նահատակութե՟ ընկերաց իւրոց, յայտ առնէ Խորենացին անդանօր՝ յասելն, թէ յետ փայլելոյ Նունեայ նշանագործութե՟ 'ի վիրս, և քարոզելոյ Միհրանայ զք՟ն, * իսկոյն եհաս 'ի նա լուր սքանչելեացն՝ որ եղեն 'ի ,, Հայս 'ի Թագաւորին և 'ի նախարարսն, և զընկերացն ,, երանելեացն Նունեայ||. յորմէ յայտ է, թէ ինքն իսկ Նունէ յետոյ ուրեմն 'ի լրոյ առեալ գիտաց զկատարումն ընկերաց իւրոց։

(2) Որպէս յայլ ինչ ինչ իրս, նոյնպէս և յայսմ վայրի՝ ուր Խորենացին վկայ բանից իւրոց կոչէ զԱգաթանգեղոս, տեսանեմք՝ զի ոչ գտանին այն ասացուածք 'ի կարգի բուն պատմագրութե՟ Ագաթանգեղոսի, այլ միայն 'ի Թուղթն գաշանց՝ որ կայ տպագրե՟լ զկնի պատմութե՟։ Յորմէ հարկ է իմաստասիրել, զի որչափ և խանգարեալ երևեսցի այժմու օրինակ Թղթոյ գաշանց, հարազատ և ստոյգ օրինակ ն՟ր կայր 'ի ձեռս Խորենացւոյ. մինչ զի և բանք ինչ անհաւատալի կարծեցեալք՝ յարևնման ընթերցե՟լ լինէին 'ի Խորենացւոյն (որ մօտ էր ժամանակաւ), ոչ մեքս ընթեռնումք յայժմուս. զորօրինակ առաջիկայ վկայութի՟ն յառաջ բերեալ 'ի Խորենացւոյն՝ գտանի 'ի տպագրեալ օրինակի Թղթոյ գաշանց յերես. 411. այսպէս. * Յիշեցուցանէր մեզ և ,, վն՟ Նունեայ և Մանեայ վրաց վարդապետի, թէ որ-,, պէս 'ի Մծխիթայ քաղաքի բժշկեաց յանբժշկական ,, ախտէն զԱղովմէ զդուստր Սոճօր, որ էր կին Միհ-,, րանայ աղախնորդւոյն Արտաշրայ պարսկի. և որպէս ,, հրաշիւք քարոզեցաւ անունն Ք՟նի 'ի լեռնամէջան Կով-,, կասու 'ի մէջ վայրենամիտ բարբարոսացն||։ և յերես. 416. ամի, վն՟ վրաց աշխարհին, * որ մերոյն Նունեայ և ,, Մանեայ աշակերտեցան||։ և 419. Հռիփսիմեանք կոչին առ հասարակ, * օրիորդք՝ դասերք հռովմայեցւոց.

„ և մարք հայոց և վրաց || ։ Իսկ որ գրի անդ․ եր․ 420․
՚ի հայս * կայ և փայտեղէն պատկեր ս̃ր ա̃ծածնին․․․․
„ և խաչամատն պատրանիկէի || էն, ունին զանգիս ՚ի
զանազան գրութիս խորենացւոյն ։

ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Սր̃յն Սարգսի և Բագոսի ։

Հ․ Յ․ Լ․ հոկտ․ 7 ։ Մետափր․ առ Սուրիոսէ․ հատ․ Ե․ էր․ 689 ։ Բարոնեաս․ հատ․ Գ․ և այլք ։ (1)

ՍՈՔԱ ԷԻՆ ԱՐՔ ՓԱՌաւորք յարքունի դրան Մաքսիմիանոսի կայսեր, ազգաւ հռովմայեցիք և որդիք ազնու̂ականաց՝ կարգեալք ՚ի պաշտօն աւագութե̃․ զի Սարգիս՝ որ և սերգիոս՝ էր պրիմիկուռ (որ ՚ի լատին բարբառ ասի բռիմիչէռիուս), այս է դիւ̂անապետ, կ̃մ առաջին ատենադպրպետ՝ ՚ի կարգի դասուն կոչեցելոյ կենդիղոն կամ կենդինառիոն․ և Բագոս՝ որ և բակքոս՝ ընկեր նորա երկրորդ՝ սեկունդիկուռ (կամ սէգունտիչէռիուս) անու̂անեալ, այս է երկրորդ դիւ̂անադպիր (2)․ երկոքին ևս լաւաբարոյ և գովելի առաքինութ̃բ, զու̂արթատեսիլ և կայտառ դիմօք ։ Այլ զի հաւատով քրիստոնեայք էին, և տեղեակք ա̃ծային ին գրոց , պարկեշտ գնացին քաղաքավարեալ 'ի մէջ հեթանոսաց պալատականաց՝ փայլէին իբրև լուսաւորք 'ի կարգի արքունի պաշտօնէից ․ և սիրելի լինէին յաչս ամենեցուն , և Թագաւորին գլխովին ։

Յայնժամ մախացեալ ոմանց 'ի պաշտօնակցաց նոցա՝ ամբաստան եղեն առաջի մաքսիմիանոսի , և ասեն ․ ո՞չ գիտես արքայ՝ զի երկոքին դոքա սարգիս և բագոս , զորս ինքնակալութ͞ի ձեր այդչափ մեծարեաց իբրև արս հաւատարիմս յիրս արքունի , թշնամի են ա͞նդ մերում և ա͞ծոց քոց ․ զի զնազովրացւոց ա͞ծն պաշտեն զ͞ք͞ն անուն ․ և զանձինս ծառայս նորա դաւանին , և քրիստոնեայս կոչեն ։ Ընդ այս տրտմեցաւ յոյժ Թագաւորն , զի մեծապէս սիրէր զնոսա ․ և ոչ կամեցաւ իսկ և իսկ հաւատալ բանից յաչաղկոտաց , այլ խորհեցաւ պատճառանօք զոհից 'ի վերայ հասանել իրացն ստուգութ͞ե ․ և եթէ ճշմարիտ իցէ ասէ բանդ այդ , ո՛չ խնայեմ 'ի նոսա առ 'ի խնդրելոյ զվրէժ դիցն ։

Հրաման ետ քրմաց իւրոց առնել պատրաստութ͞ի մեծ զոհից ․ և յարեաւ գնաց ինքնին Թագաւորն բազմութ͞ե աւագաց 'ի մեհեան անդր 'ի զոհել՝ ը͞ իւր առեալ և զսարգիս և զբագոս ։ Իսկ եղև 'ի մտանել մաքսիմիանոսի և իւրոցն ամենեցուն 'ի տուն կռոց , և 'ի զբաղնուլ 'ի հանդերձանս զոհից , երկոքին նոքա ծառայքն ք͞ի ոչ մտին 'ի ներքս , այլ պատճառանօք կացին մնացին արտաքոյ դրան (ո՞վ և յայլ նուա՛զս). և ամբարձեալ զձեռս իւրեանց՝ աղաչէին զԱ̄ծ փրկել զանձինս 'ի փորձութենէ, և զկուրացեալ հեթանոսս ազատել 'ի մոլորութենէ կռոցն. Տ՛ր ո̄՛ր ասեն՝ Ա̄ծ ա̄մի, և թագաւոր տիեզերաց, լո՛ւր ձայնի աղօթից մերոց, և քաւի՛չ լե՛ր ժառանգութեան քում. խնայեա՛ Տ̄ր, և լուսաւորեա՛ զաչս սրտից սոցա, և վերածեա՛ 'ի խաւարէ անգիտութեան 'ի լոյս Ա̄ծգիտութեան. զի դու միայն ես Ա̄ծ ճշմարիտ. այլ դոքա օտարացեալ 'ի փառաց քոց՝ խոտորեցան 'ի քէն չարութ̄բ, և զնման զհետ սնոտեաց՝ պաշտօն տանելով անշունչ կռոց 'ի նմանութ̄ի անասնոց և չորքոտանեաց և զեռնոց և ամենայն կենդանեաց. դարձո՛ զնոսա Տ̄ր, և ծանիցեն զքաջանչելիս քո, և հաւատասցեն 'ի միածին որդին քո՝ որ կենարար խաչիւն իւրով արար զփրկութ̄ի տիեզերաց. և զմեզ պահեա՛ ամբողջս և անարատս 'ի պահպանութ̄ի օրինաց քոց ս̄բց՝ անխափան համարձակութ̄բ ընթանալ 'ի ճանապարհս քոց պատուիրանաց:

Իսկ թագաւորն շուրջ հայէր 'ի մեհենին անդ՝ տեսանել զսարգիս և զքագոս 'ի ժամ զոհին. և իբրև գիտաց՝ եթէ չառին նոքա յանձն 'ի մեհեանն անդամ մտանել, թող թէ հաղորդ լինել զոհից, խռովեցաւ յանձն իւր, և գոյն երեսաց նորա շրջեցաւ: Գոչեաց 'ի տեղւոջն իբրև զառիւծ՝ ահ արկանելով ա̄մ ծառայիցն. ասէ. Հա՛պա զի՛ կայք, բերէ՛ք զանօրէնսն առաջի իմ, զի կամ զոհեսհեցեն , և կամ դատեցին ը՟ արժանւոյն օտարացեալքն 'ի դենէս մերմէ . որպէս և ը՟ ա՟մ տեղիս սաստիկ հրաման տուեալք : Եւ անդէն փաղփաղակի բուռն հարեալ զծառայիցն ք՟ի՝ մուծին բռնութ՟բ 'ի տաճար անդր կռոց , և կացուցին յանդիման կայսեր :

Հայեցեալ ընդ նոսա մաքսիմիանոսի թիւրեալ աչօք և գժնեայ դիմօք՝ խօսել սկսաւ և ասէ . մի՛ լիցի ձեզ ապաւում յանդգնութ՟բ բերել ը՟դէմ մեծի մարդասիրութեան մերոյ՝ որ առ ձեզ , և. այնպէս անմիտս զմեզ ցուցանել 'ի բարերարելն առ ձեզ . և՛ս առաւել հակառակ յառնել իշխանութե՟ա՝ ամպարշտելով առ դիսն մեր , և ապաշնորհ առ մեզ և առ ն՟ո միանգամայն գտանելով : Եւ արդ ասեմ ձեզ , զի եթէ ոչ զոհէք և հաշտ առնէք զերեսս դ՟ծոց մերոց և մեր , ես փոյթ դարման տանիմ իրացդ , և դուք փութանակի 'ի միտ առնուք զչափ ցասման դիցն՝ զորս բորբոքեցիք 'ի վերայ ձեր բարկութ՟բ : Յայնժամ աներկիւղ յառաջ մատուցեալ ս՟բն սարգիս և ս՟բն բագոս՝ պատասխանի ետուն իբրև 'ի միոջէ բերանոյ , և ասեն . Քա՛ւ լիցի մեզ փոխանակել զճշմարտութ՟ի ընդ ստութե՟ , կամ զլոյսն ը՟ խաւարի . մեք քրիստոնեայ եմք , և զք՟ս ա՟ծ պաշտեմք ը՟ հօր և ընդ հոգւոյ իւրում ս՟բյ . իսկ չ՟ա՟ծքն ձեր ո՛չ են ա՟ծք , այլ սնոտի նիւթք տարրեղէնք , ոսկի և արծաթ , քար և փայտ , ձեռագործք մարդկան մոլորելոցն 'ի ճշմարտուտութ՟է խաբանօք դի՛ւաց ․ եւ զիա՞րդ լինիցի մեզ ինքնակամ մոլորիլ զհետ մոլորելոց , եւ կամ ունկն դնել ա՟ծընդդէմ հրամանաց ։ Մ՝եք ո՛ ինքնակալ՝ այսմ եւեթ պարտական զանձինս գիտեմք , հաւատարիմ ծառայութ՟ հպատակել տ՟րանց մարմնաւորաց , եւ լինել զգործ արքունի՝ որ ոչ հակառակ ելանէ հրամանաց երկնաւոր Թագաւորին մերոյ ․ որպէս եւ ցարդ արարեալ է մեր ․ ապա թէ ոչ՝ անհնար է մեզ 'ի բաց կալ 'ի ճշմարտէն ա՟յ , եւ խուլ եւ համր դի՛ւաց պաշտօնատար լինել , թէպ՟տեւ իբրեւ զհուր վառեսցի բարկութ՟ի ձեր 'ի վերայ մեր , թէպէտեւ անողորմ պատուհաս 'ի վ՟ր բերցի առ 'ի ձէնջ , թէպէտեւ հրով կամ սրով եւ այլ եւս տանջանօք ելցուք 'ի կենաց ․ զի եւ այդ մեծապէս ցանկալի է մեզ՝ մեռանել արիաբար վասն անուա՛ն տ՟ն մերոյ ․ վասն զի զի՞նչ առաքինագոյն քան զբարեպաշտութ՟ի , կ՟մ զի՞նչ երանագոյն՝ ո՞չ վասն բարեպաշտութ՟ե մահուչափ ճգնիլ ։

Գ՝իտաց այնուհետեւ Մաքսիմիանոս զանդրդո՛ւելի միտս քաջ նահատակացն ք՟սի ․ հրաման ետ վաղվաղակի լի ցասմամբ՝ 'ի բաց առնուլ 'ի նոցանէ զա՟մ նշանակս արքունի պատուո՛յ , ետ հանել 'ի պարանոցէ նոցա զականակապ ոսկի մանեակն , եւ զպատմուճան իշխանական եւ զքղամիդն ճոխութեան յանձանց նոցա ։ Ապա ը՟ս ակնարկութեան բռնաւորին զգեցուցին ն՟ց զզգեստս անարգս կանացիս , եւ արկին շղթայս յոտս նոցա եւ 'ի պարանոցս. և այնպ՟ս այպանելով շրջեցուցին զնոսա ընդ ամ՟ քաղաքն, մինչև ածել անդրէն յապարանս :

Իսկ երանելիքն փառս անձանց համարէին զայն ամ՟ նախատինս՝ որ վ՟ս անուանն ք՟ի. և միաձայն զայս սաղմոսէին զճանապարհայն. Թէպէտև գնասցուք 'ի մէջ ստուերաց մահու, ոչ երկիցուք 'ի չարէ, զի դու ը՟ մեզ ես տ՟ր. և Թէ՝ արի՛ տ՟ր օգնեա՛ մեզ, և փրկեա՛ զմեզ վասն անուան քո ս՟բյ. և դարձեալ ասէին 'ի ձայն գոհութե՟. ցնծասցեն 'ի քեզ անձինք մեր, զի զգեցուցեր մեզ հանդերձ փրկութե՟. և արկեր զմեօք պատմուճան ուրախութե՟ :

Եւ իբրև կացուցին զն՟ս միւսանգամ յատենի ապարանից, ասէր Թագաւորն ցիւրան. Ահա այսպէս յանդգնեցան բարերարեալքն 'ի մէնջ՝ անսաստել հրամանաց մերոց, և ոտնհար լինել դիցն անմահից, մանաւանդ մեծին արամազդայ հօր ած՟ոյ, նախամեծար առնելով զյ՟ս ոմն որդի հիւսան՝ զխաչեալն 'ի հրէից 'ի մէջ չարագործաց և զմահու խայտառակեալն. այլ ես ինքնին եմ պատճառ ապերախտութե՟ դոցա, որ 'ի վեր քան զարժանն մարդասիրել կամեցեալ՝ 'ի վեր առի զդոսա յիմ բարեկամութի՟ և 'ի կցորդութի՟ պատուոյ : Զայսոսիկ 'ի դէմս ածեալ՝ դարձաւ առ ս՟բսն ողոք բանիւք հրապուրս մատուցանել. Բայց արդ (ասէ) եթէ և այժմ նոյն այն էք դուք սարգի՛ս և բագո՛ս՝ երբեմ՟ն իմ սիրելի բարեկամք, պատկառեցարո՛ւք յաթոռոյս , և ա́կն ածէք անխարդախ սիրոյ իմոյ առ ձեզ • Թողէ́ք անդր 'ի բաց զօտար կրօնս , և ջերմ պաշտօնեա́յք լերուք ա̅ծոյն, զի մի́նչև ցմահ փայլեսջիք 'ի սէր մեր ։ Եւ ես` որ կարօղն էի խստի́ փարիլ ը̅ ձեզ իբրև ընդ օտարախորթս , և անյապաղ տանջանս 'ի վերայ ածել , խնայեմ 'ի ձեզ ո́ բարեկամք • քանզի ցարդ ևս դողին քաղցր ընտանութե̅ անուշամբ փարիմ առ ձեզ • և վ̅ս այնորիկ յապաղեցուցանեմ զպատուհաս ձեր , զի պատկառիմ յօրինաց բարեկամութե̅ ։

Առ այս պատասխանի ետուն երանելիքն , և ասեն • դու քեզէն տուր վկայութիւն ա́րքայ , թո́ղ վկայեն և ա̅մ աւագանիդ , եթէ խարդախեալ ի́նչ իցէ մեր ը̅դէմ օրինաց սիրոյ և հպատակութե̅ առ ինքնակալս , կ̅մ թէ վերջացեալ իցէ մեր երբէք 'ի հաւատարիմ ծառայութե̅ քումմէ • զի այսպէս եղեալ էր մեր 'ի մտի , և 'ի սոյն էին կամք մեր , նոյնօրինակ կատարել միշտ զամենայն արքունի գործ իբրև 'ի հրամանէ բարձրելոյն` որ պատուի́րէ հնազանդ լինել թագաւորաց 'ի նմանէ կացուցելոց • և բազում այն էր` զի ը̅ կարգի քրիստոնէութե̅ մերոյ հաշտ առնէաք աղօթիւք զա̅ծ ը̅ ձեզ ։ Այլ այժմ քանզի բուռն առնէք մեզ ստամբակիլ ընդդէմ արարչին և փրկչին բոլորեցունց , խորհիք բառնալ 'ի մէնջ զգլուխ ա̅մ պատուո́յ և զպսակ գլխոյ մերոյ զա̅ծպաշտութի̅ , և հնարիք զրկել զմեզ յա̅յ` որ յետինն է ա̅մ վնասուց , այդմ անհնար է լինել • յոչինչ համարեալ են այսուհետև ա̃մ պատիւ և մեծութի̃ ձեր . քանզի և ոչ կարող եմք նախապատիւ առնել զսէր մարդոյ քան զա̃ծսիրութի̃ ։ Իսկ զխո̃րդ . միթէ առ երախտագէտ երևելոյ առաջի ձեր ստութ̃ք՝ ապերախտեսցո̃ւք առ արարիչ մեր և փրկիչ հոգւոց մերոց ։ Ո՛չ արժան էր 'ի դէմս ածել հեթանոսացդ , եթէ որպէս կա̃մ զխո̃րդ անճանաչօղ լինիք անբաւ բարերարութեանց հաստչին . և օտարացեալ 'ի նմանէ՝ դիմաց ծառայէք ։ Հապա մի կարծեր զմեզ հաղորդս լինել այդպիսի ապաշնորհութեան , կամ ուրացօղ գտանիլ ճշմարտութե̃ . իսկ զոր ինչ դուդ մեզ առաջի առնես ո՛վ կայսր , եթէ բարիս և եթէ չարիս , եթէ կեանս և եթէ մահ , միօրինակ արհամարհեալ են յաչս մեր վասն սիրոյ տն̃ մերոյ , և վս̃ յուսոյն՝ զոր ունիմք առ քս̃ ա̃ծ մեր ։

Զայս ա̃մ և առաւել քան զայն լուեալ Մաքսիմիանոսի 'ի ս̃րցն՝ կամէր անդէն խոշտանգանս մահու ածել 'ի վերայ նոցա . այլ տեսեալ՝ թէ առաւել փառաւորի անուն քս̃ի , և ինքն ամօթ կրէ առաջի ա̃մ մեծամեծաց վս̃ չկարելոյ յաղթահարել զս̃բսն , հնարս խորհեցաւ ոչ անձամբ և 'ի մօտոյ պատուհասել զայնպիսի արս երևելիս , այլ 'ի հեռաւոր տեղիս մատնել զն̃ս անողորմ դատաւորի ։ Ապա հրաման ետ տանել զն̃ս առ անտիոքոս դուքս արևելից , որ դատաւորն էր քաղաքին օգոստեայ եփրատիսեայ մերձ 'ի տաճկաստան , և էր այր անագորոյն՝

հալածիչ քրիստոնէից · շատ է ասել անուն նորա առ արկանել սոցա · և քաջ գիտեմ, զի նա առ գործ մի հաճոյական ցուցանելոյ յաչս իմ՝ խստագոյնս տանջեսցէ զարդ, և նուաճեսցէ 'ի կամս մեր · թող զի և երկայնութի̅ ճանապարհին բաւական է ոգեսպառ առնել կամ զգաստացուցանել զնս̅ ։ Այլ որ մեծն է, քանզի նա ինքն անտիոքոս յառաջ ժամանակաւ էր ը̅ ձեռամբ իշխանութե̅ երանելւոյն սարգսի, և նորին միջնորդութբ̅ հասեալ էր այնմ պատուոյ դքսութե̅ արևելից, խորհեցաւ կայսրն կարեվէր խոցել զսիրտ սարգսի՝ մատնելով զնա 'ի ձեռս առն երախտաւորելոյ 'ի նմանէ, զի փոխան երախտեացն չարիս ընկալցի 'ի նմանէ ։ Իսկ սովին մտօք գրեաց հրովարտակ առ անտիոքոս, զի թէ ոչ հաւանեսցին սարգիս և բագոս թողուլ զօրէնս քրիստոնէութեան, չարաչար պատուհասիւք բարձցէ զնս̅ 'ի կենաց ։

Առեալ զօրականաց զհրովարտակն արքունի՝ ելին 'ի ճանապարհ, տանելով զերկոսին սր̅բսն կապեալս ծանր շղթայիւք · զհետ գնացին և ոմանք 'ի ծառայից սր̅ցն, զի մինչև 'ի մահ սպասահարկու լինիցին նոցա ։ Իսկ 'ի ճանապարհի ունկն դնէին պատմելոյ երանելեացն առ միմեանս, թէ որպէս 'ի գիշերին՝ յորում ելին 'ի քաղաքէն հռովմայեցւոց, երևեցաւ նց̅ հրեշտակ ա̅յ 'ի տեսլեան, և ասաց · զօրացարո՛ւք և մի՛ երկնչիք · այլ զո՛ւարթ մտօք վառեցարո՛ւք 'ի պատերազմն՝ որ առաջի կայ ձեզ, և խնդամիտ ելէք 'ի

ճա

Ճանապարհդ՝ որ վասն ք՟սի ։ Եւ այս տեսիլ միօրինակ երևեալ ս՟բյն սարգսի և ս՟բյն բագոսի՝ այնպէս սրտապնդեալ էր զերանելիսն , մինչև զի ամ՟ նեղութ՟ի Ճանապարհին քաղցրանայր նոցա , և ծանրութ՟ի շղթայից թեթևընթաց առնէր զգնացս նոցա . վասն որոյ ցնծալից ուրախութ՟բ սաղմոսէին . 'ի Ճանապարհս վկայութ՟եց քոց զուարճացաք

տ՟ր՝ ո՟պ յա՟մ 'ի մեծութե , ճժը ։

Արդ յետ բազմօրեայ և տաժանելի ուղևորութե հասեալ 'ի սահմանս իշխանութե անտիոքոսի՝ մտին 'ի քաղաք մի վառավառիսոն կամ բարբալեսոն անուն՝ մերձ 'ի գաւառն լիմիտանացւոց , երեկօթս առնել 'ի նմին(3) ։ Եւ ահա անդ դիպաւ յաւուր յայնմիկ ինքնին գուքսն անտիոքոս . վ՟ն որոյ ազդ արարեալ իսկ և իսկ՝ տարան կացուցին զս՟բսն առաջի նորա . և որք միանգամ տեսին զերեսս երանելեացն , իբրև զհրեշտակս տեսանէին , և ոչ յագէին 'ի հայելոյ 'ի զուարթագին և 'ի կայտառ դէմս և 'ի շնորհալից կերպարանս առաքինեաց ։ Բայց դատաւորն իբրև հայեցաւ ը՟ նոսա՝ զորս քաջ գիտէր , խռովեցաւ և զարմացաւ ը՟ պատճառս գալստեան նոցա կապանօք . և ընթերցեալ զթուղթ մաքսիմիանոսի՝ սկսաւ օտարանալ 'ի նոցանէ , և խոժոռ հայէր ը՟ նոսա . և զարմացեալ ընդ միտս իւր՝ թէ զիա՞րդ այնպիսի արք փառաւորք յայսպիսի յետին անարգութ՟ի հասին կամաւ իւրեանց , գիտաց այնուհետև՝ թէ նոքա պատրաստ են և 'ի մահ վասն ք՟սի , և ինքեան. անմարթ է նու՛աճել զն̅ս 'ի կամս ինքնակալին: Այլ առ ժամ̅ն ոչինչ յայտնի խօսեցեալ ը̅ նոսա՝ կոչեաց զբանտապետն, և ասէ. ա՛ռ զկապեալսդ, և պահեա՛ զգուշութ̅բ մեծաւ 'ի դիպահոջ՝ առանց նեղելոյ զն̅ս և ոչ միով իւի՛ք. զի ես յորժամ ժամ առից, յատեան քննութե̅ մատուցից զն̅ս:

Իսկ արգելեալ սր̅ցն 'ի բանտի ը̅ երեկս՝ յաղօթս կացին առ ա̅ծ, և ասեն. նայեա՛ց 'ի մեզ տ̅ր 'ի ս̅բյ բնակութէ̅ քումմէ. այս յո՛ւշ լիցի քեզ, զի թշնամին նախատեաց զտ̅րդ, ժողովուրդ անզգամ բարկացոյց զանուն ս̅բ քո. մի՛ մատներ գազանացե̅լ մարդկան զանձինս՝ որք խոստովան առնին առ քեզ. հայեա՛ց յուխտ քո, և ընկա՛լ զմեզ տ̅ր, և փրկեա՛ զմեզ վասն անու՛անդ քո: Իսկ յերկարեալ զսաղմոսերգութ̅իս՝ իբրև հանդեան փոքր մի, և 'ի քուն մտին, երևեցաւ նոցա անդրէն հրեշտակ ա̅յ 'ի մէջ գիշերի պայծառ հանդերձիւք և արեգակնափայլ դիմօք, մինչև ճառագայթք հատանէին 'ի նմանէ. և ասէ ց̅նս. քաջալերեցարո՛ւք ծառա՛յք ք̅ի, և մի՛ երկնչիք, այլ հաստատո՛ւն և պի՛նդ կացէ՛ք 'ի խոստովանութե̅ տ̅ն մերոյ յ̅սի ք̅ի. զի նա ընդ ձեզ է՝ վերակացու լինել ձեզ:

Իսկ սր̅ցն զարթուցեալ 'ի քնոյ լի ուրախութ̅բ և մխիթարութ̅բ՝ պատմէին միմեանց զսքանչելի տեսիլն լու 'ի լու այլոց կապելոց և սպասաւորաց: Ապա յարուցեալ կացին յաղօթս բերկրալից սաղմոսերգութ̅բ. 'ի նեղութե՟ կարդացի առ տ՟ր , և տ՟ր լու՛աւ ինձ ’ի լեռնէ սբ՟յ իւրմէ · ես ննջեցի և ’ի քուն եղէ , և զարթեայ՝ և տ՟ր ընդունելի իմ է · արի՛ տ՟ր և փրկեա՛ զիս , զի քո է փրկութի՟ , և ’ի վ՟ր ժողովրդեան քո օրհնութի՟ քո ։

Եւ ’ի վաղի՛ւ անդր նստեալ դքսին յաթոռ դատաւորութե՟՝ շուրջ պատեալ ’ի բազմութե՟ զինուո՛րաց , ետ բերել առաջի իւր զսբ՟ն կապանօք · և նախ հրաման տու՛ե՟լ ընթեռնուլ զարքունի հրովարտակն ’ի լուր նոցա՝ դարձաւ և ասէ ցնոսա · Պա՛րտ էր ձեզ ո՛վ քաջք՝ անսալ ինքնակալին հրամանի , և զոհել դից , և ո՛չ գրգռել զցասումն կայսեր ’ի վ՟ր ձեր · և զի զընդդէմն գործեցիք անխորհրդաբար , վ՟նյ եղև ձեզ անկանիլ ’ի պատու՛հաս ձերմէ մեծի , և շահել զայս անարգութի՟ և զտառապանս · բայց արդ՝ եթէ խորհրդակից զիս ձեզ առնուք , և խոնարհիք կատարել զկամս արքայի , ’ի նոյն փառս դարձջիք բազում առաւելութե՟ · և այս չէ՛ ինչ ծանր · զոր առանց խորհրդոյ արարիք՝ այժմ զգաստանալ ուղղել զառաջին սխալանս · վ՟ն զի թեթև իրք են սխալել յանգէտս , և պարծանք մեծ՝ յուղղութի՟ գալ · այն են յանցանք ծանր , եթէ ոք կամակորեսցի ’ի միտս անուղղայս ։

Եւ արդ ընտրեցէ՛ք ձեզէն զոր բարին է · զի և ես զբարին ձեր կամիմ , յիշելով զառաջին մեր բարեկամութի՟ և զսէր , մանաւանդ զառ ’ի քէն ընկալեալ երախտիս տէ՛ր իմ սարգիս , որով պարտական զիս կացուցեր . այլ անդետանամ, զինչ գործեցից յայսմ այլափոխութեան բախտի . ուր ես նստեալ կամ իբրեւ դատաւոր, եւ դուք ոչ պարտաւոր յոտին կայք յանդիման ատենիս՝ հանդերձեալք համարս տալ վ՟ն առ ա՟ծան ամպարշտութեան եւ առ կայսրն ստահակութեան ձերոյ :

Իսկ սրբքն լուռ եւեթ կային . եւ ոչ արժանի համարէին պ՟խնւոյ զայրն . յայնժամ 'ի վ՟ր էած դատաւորն . ապա եթէ չկամիք անսալ խրատու իմում, հարկ 'ի վերայ կայ ինձ 'ի գլուխ տանել զհրամանն արքունի . եւ յակամայս թշնամութի՟ ցուցանել առ պատուհական տեարսդ . մինչեւ չարաչար մահուամբ կարճել զձեզ 'ի կենաց : Իբրեւ ծիծաղեցան սրբքն ը՟ն սպառնալիս նորա, սկսաւ անօրէնն 'ի համար արկանել զա՟մ տեսակս տանջանաց, եւ նոքիմբք կարծէր ահ արկանել ն՟ց : Յայնժամ պ՟խնի ետուն երանելիքն իբրեւ ը՟ն մի բերան, եւ ասեն . Որոց միանգամ հաւատացեալ է 'ի մտի ով դատաւոր շահել զք՟ս եւեթ, եւ զոր ը՟ն նովաւ ծածկեալ կեանս անմահականս, ոչինչ փոյթ է ն՟ց վ՟ն անցաւորացս ա՟մի եւ կորստականաց . ոչ փառք եւ ոչ իշխանութի՟ եւ ոչ այլ ինչ յասպիսեաց աստի պատրեն զնոսա, եւ ոչ տանջանք կա՟մ վիշտք եւ մահ իսկ գլխովին դրդուեցուցանեն զն՟ս . վ՟յ զուգապէս արհամարհեալ են առաջի մեր ողոքանք եւ սպառնալիք երկրորդեալ 'ի քէն 'ի լսելիս մեր : Հա՛պա դադարեա՛ եւ դու 'ի լինելոյ մեզ խորհրդակից չարեաց, և մի՛ հեղուր զթոյնս դառնութեան ո̄պ զօձի 'ի բերանոյ քումմէ • քանզի արդարև դեղ մահու կաթէ 'ի շրթանց քոց , զոր քա՛ւ լիցի մեզ ճաշակել և մահանալ 'ի հոգիս ։ Նաև մի՛ խաբիր սնոտի խորհրդով որսալոյ զմեզ 'ի կամս քո , և մի՛ ը̄դ վայր ծախեր զժամանակ • զի ո՛չ տանջանօք նուաճել զմեզ կարես , և ո՛չ խոստմամբք թակարդել • քանզի անհնար է մեզ թողուլ զա̄ծ ճշմարիտ , և դիւ՛ցաց խլից և անզգայից զոհ մատուցանել ։ Ոի մեզ որ̄պս բարի է կեալ վ̄ս ք̄սի , նոյնպէս և մեռանել վ̄ս նորա՝ շահ • զոր չէ՛ մարթ քեզ ասել վ̄ս քոյոց դիցդ • զի են անշունչ տարերք , որ ո՛չ օգտել և ո՛չ վնասել ումեք գիտեն • վ̄րյ նման նոցա եղիցին՝ որք պաշտենն զնոսա , և որ յուսանն 'ի նս̄ ։

Լուեալ դքսին զայսպիսի բանս համարձակութեան 'ի բերանոյ ս̄ցն , ձեռն էարկ փորձել զնոսա տանջանօք • և զի ակն ածէր առաւելապէս 'ի սարգսէ , ետ առ ժամն տանել զնա 'ի բանտ , և զբագոս յառաջ մատուցանել 'ի տանջանս ։ Յայնժամ ը̄ս ակնարկելոյ բռնաւորին կապեցին դահիճք զերանելին բագոս 'ի չորս ցիցս զձեռաց և զոտից , և սկսան անխնայ հարկանել զնա արջառաջլօք • մինչև պատառոտեալ անկանէին մասունք մարմնոյ նորա , և արիւնն խաղայր ը̄դ գետին • վ̄ս զի որչափ նա անհոգ ցուցանէր զանձն և սքանչելի համբերութբ̄ տանէր , նոյնչափ և դատաւորն կատաղե̄լ ստիպէր զդահիճսն՝ ուժգին և չարաչար հարկանել •

նել. և այնչափ տանջեցին զնա, մինչև վաստակեալ լքան լուծան զահիճքն, և անկան յերկիր ։ Զոր տեսեալ սբ͞յն Բագոսի՝ կըշտամբեաց զբռնաւորն ասելով. ո՛վ թշուառական և 'ի զօրականդ ոչ խնայես. ո՞չ գիտես՝ զի զիս ք͞ս զօրացուցանէ, և տայ ինձ համբերութի͞ ա͞մ տանջանաց մինչև յելս շնչոյ իմոյ ։

Եւ նոյնժամայն եղև ձայն յերկնից՝ որ ասէր. Ե՛կ Բագոս արի և քաջ զօրական իմ, և հանգի՛ր 'ի պատրաստեալ քեզ տեղի յարքայութի͞ս ։ Եւ իբրև լուաւ զձայնն 'ի վերուստ, գոհացաւ զա͞յ. և առժամայն աւանդեաց զհոգի իւր առ ա͞ծ ։ Իսկ զմարմին երանելւոյն հրամայեաց դատաւորն 'ի հուր ընկենուլ. և պատմեցաւ նմա՝ թէ ոչ այրեցաւ. ապա ետ արկանել 'ի բացի, զի կերակուր լիցի գազանաց. բայց գազանքն պահեցին զմարմին սբ͞յն, և ոչ մերձեցան 'ի նա. և հաւատացեալքն գողացան զայն գիշերայն, և տարան եդին յայրի միոջ ։

Իսկ սբ͞յն Սարգսի լուեալ 'ի բանտի զկատարումն ընկերի իւրոյ Բագոսի՝ աղօթէր լալով առ ա͞ծ՝ արժանի առնել և զինքն ցանկալի վիճակի նո͞ր. և ասէր. վա՜յ ինձ ընկերակից իմ և եղբայր իմ Բագոս, այլ ոչ սաղմոսեմք 'ի միասին, զի՞ բարի կա͞մ զի՞ վայելուչ՝ զի բնակեն եղբարք 'ի միասին. որոշեցար յինէն եղբայր. ելեր յերկինս, և զիս թողեր յերկրի միայնացեալ ։ Եւ ահա յանկարծակի 'ի մէջ գիշերի երևեցաւ նմա սբ͞ վկայն քսի՟ բագոս պայծառ տեսակաւ՝ զգեցեալ զմարմնաւորական պատմուճան իւրոյ զգեստն, և մանեակն ոսկի 'ի պարանոցին. և ասէր ցնա. ընդէ՞ր տրտմիս և հոգաս եղբա՛յր իմ և տ՟ր իմ սարգիս. ես թէպէտև մարմնով հեռացեալ եմ 'ի քէն, այլ խոստովանութբ՟ հոգւոյս կապեալ եմ ը՟ քեզ. և ոչ թողից զքեզ, այլ 'ի միասին սաղմոսեմք. 'ի ճանապարհս պատուիրանաց քոց ընթացայ, զի անդորր արարեր սրտի իմոյ: Փութացի՛ր եղբա՛յր իմ, և հասի՛ր ինձ. զի պատրաստեցաւ և քեզ պսակն արդարութե՟:

Յետ այսորիկ 'ի գնալ դատաւորին 'ի քաղաքն սուրացւոց կի՟ 'ի դղեակն սուրոն կոչեցեալ ('ի միջագետս ասորւոց,) տարաւ ը՟ իւր և զսբ՟ն սարգիս. և 'ի վաղիւ՟ անդր նստեալ յատեան՝ կոչեաց առաջի իւր զերանելին, և սկսաւ առաւել քաղցրութբ՟ շողոքորթել: Ստրջանամ ասէ ը՟ պատիւս, զոր 'ի քէն ընկալայ պատուականդ սարգիս. զի հարկ եղև ինձ զտ՟րդ իմ և զսիրելի բարեկամ օրինօք դատաստանի քննել. լա՛ւ էր 'ի բարեկամութե՟ քո վայելել ինձ առանց այսպիսի շքոյ, քան յայդպիսի վիճակ զքեզ տեսանել. և արդ աղաչեմ, խնայեա՛ յանձն քո, 'ի բաց լեր 'ի քրիստոնէութե՟դ, և 'ի միասին վարեսցուք զիշխանութի՟ արևելից. և մի՛ ստիպեր զիս դահիճ լինել բարերարիդ իմում:

Պատասխանի ետ առաքինին սարգիս, և ասէ. մի՛ ինչ գրեր զիմ առ քեզ բարերարութե՟ ը՟ մարմնոյ, և մի՛ փոխան այնորիկ զհոգւոյ

վնաս

ջանաս ինձ առթել մեքենայեր · զոր և ոչ կարես առնել՝ թէպէտ կամիս ։ Այլ թէ կամք են քեզ զիս բարեայապարտ համարել, եկ դու անսա՛ ինձ, և մեծ եւս բարութ̅ի արարից ը̅ քեզ · թո՛ղ 'ի բաց զսնոտի կռուոդ, և դա՛րձ առ արարիչ քո և կեցուցիչ · և ես քեզ յայսմ ձեռնտու եղէց զուարթամիտ ծառայութ̅բ, կորզել զանձն քո 'ի խորխորատէ մոլորութ̅ե, և վերածել 'ի լոյսն ճշմարտութ̅ե · մինչև թագաւորիս մերում անմահի ընտանի և բարեկամ զքեզ կացուցից ։

Յայնժամ պապանձեալ Անտիոքոսի և դումարեալ յանձն իւր՝ շառագունեցաւ յամօթոյ, և դառնացեալ սաստէր ս̅բյն իբրև հայհոյչի · և ս̅բն Սարգիս 'ի վ̅ր եած զարժանի յանդիմանութ̅իս ը̅դէմ մոլորութ̅ե հեթանոսաց ։ Իսկ դատաւորն անպատասխանի եղեալ՝ ասէ · մեծապէս հեզութ̅իս իմ և երկայնամիտ մարդասիրութ̅իս յառաւել յանդգնութ̅ի զքեզ կրթեաց՝ բերանաբաց բերել ը̅դէմ մեր և ա̅ծոց մերոց · այլ ես ուսուցից քեզ 'ի բաց դնել զամբարտաւանութ̅իդ · և զայս գիտեա՛, զի այսուհետև ոչ եւս ես պատրիկ և իշխան հռովմայեցի, և ոչ բան ինչ կայ քո յայսմհետէ առ արքայի · այլ իբրև անարգ ոք դերի՝ և ծառայ անխրատ՝ տանջանաց և մահու մնասցի՛ր ։

Զայս ասացեալ՝ հրաման ետ ծառայից իւրոց չու առնել յամրէ անտի Սուրացւոց 'ի Ռուծափ քաղաք, տանելով ը̅ իւր և զՍարգիս կապանօք և չարաչար խոշտանգանօք ·

և նախ յորժամ դէմ եդեալ գնայլին 'ի տեղին կոչեցեալ յունարէն տետրապիրգիա (այն է քառաբուրգն , կամ չորեքաշտարակեան) , որ հեռի էր 'ի սուրոնէ իբրև եօթանասուն ասպարիզօք (4) , ետ ագուցանել սարգսի կօշիկս երկաթիս՝ բևեռեալս յոտս նր̅ սուր բևեռօք . և այնպէս ընթացուցանէին զնա առաջի երիվարաց կառացն դատաւորի ը̅ այնչափ երկայնութի̅ Ճանապարհին : Իսկ սր̅ նահատակն արիաբար ընթանայր՝ սաղմոս 'ի բերան ունելով . համբերելով համբերի տ̅ն , և նայեցաւ առ իս , և լո՛ւաւ աղօթից իմոց . եհան զիս 'ի գբոյ տառապանաց՝ 'ի կաւոյ և 'ի տղմոյ . հաստատեաց 'ի վերայ վիմի զոտս իմ , և ուղղեաց զգնացս իմ : Իսկ որք տեսանէինն զարիւնն հոսեալ 'ի թաթից նորա , զարմանային ընդ զո՛ւարթութե̅ սրտին և երեսացն . և ոչ 'ի միտ առնուին՝ եթէ յերկնից էր այցելութի̅ մխիթարութե̅ նր̅ :

Իբրև հասին 'ի տետրապիրգիա , արկին զնա խոնջ և վաստակ 'ի բանտ . և 'ի սաղմոսել սր̅յն 'ի գիշերի՝ երևեցաւ նմա յայտնապէս հրեշտակ տ̅յ , և քաջալերեաց զնա սփոփանաց բանիւք՝ հանգոյց զոգի նր̅ յաշխատութէ̅ Ճանապարհին , և փարատեաց զվէրս ոտից նր̅ և զա̅մ ցաւս անձին նորա . և ողջագուրեալ զնա ողջունի՛ սիրոյ և խաղաղութե̅ իբրև ընտանի բարեկամ ոք՝ զո՛ւարթացոյց զնա յառաջիկայ նահատակութի̅ . և եղև 'ի նմանէ աներևոյթ :

Իսկ դատաւորն 'ի վաղիւն անդր կամեցեալ վերստին դատել զնա, և համարեալ զնա յոգիս ապաստան 'ի ցաւոց և 'ի վաստակոց՝ մինչև չկարել գալ յատեան, հրամայեաց բառնալ շալակաւ կ՟մ պատգարակօք, և այնպէս ածել առաջի իւր: Բայց սպասաւորքն եկեալ գտին զնա ողջ և կայտառ. և ինքն յարուցեալ նոյնժամայն եկն զուարթութ՟բ 'ի տուն ատենին: Տեսեալ դատաւորին զնա այնպէս՝ յիմարեցաւ 'ի միտս իւր, և սկսաւ աղաղակել. երդնում 'ի դիս՝ զի կախարդութի է ա՟մ գործ քրիստոնէից. քանզի ուստի՞ իցէ սմա առաջին համարձակութ՟ին ը՟դէմ ինքնակալի, և այժմու վիճակ՝ յանկարծակի թօթափել յանձնէ զա՟մ վէրս և զցաւս, եթէ ոչ՝ յայտնի մոգութ՟բ, զոր առնէ մրմնջանօք բանից 'ի ձև աղօթակացուէ:

Նա դարձեալ առ վկայն ողոք բանիւք ասէ. զարմացեալ եմ ընդ քեզ ո՛վ սարգիս, եթէ զիա՛րդ այր փափկասուն և ազնուական կարող եղեր տանել այսչափ դառն վշտաց և տանջանաց: Սարգիս ասէ. ո՛չ տանջանք են համարելի ո՛վ դատաւոր՝ զոր ինչ և հասանէ ինձ կրել առ սէրն ք՟ի, այլ՝ ա՟ծեղէն հանդէս յաղթութ՟ե և տօն ցնծութ՟ե, առիթ անմահութ՟ե և ճանապարհ երկնից արքայութեան: Դարձեալ աքսորեան եղև դատաւորն, և ետ հանել զնա յերեսաց իւրոց. և ինքն յուղի անկեալ գնալ 'ի ռուծափ՝ որ ինն մղոնաւ հեռի էր 'ի տետրապիւրգեայ, դարձեալ հրամայեաց բևեռել զերկաթի կօշիկս յոտս սուրբսն, և այնպէս խաղացուցանել զնա 'ի դէմ եդեալ տեղին :

Արդ իբրև հասին 'ի ռուծափ, ոչ յերկարեաց անթիպատոս զդատապարտեալ սուրբսն . այլ 'ի վերջին հարցափորձին ևս գտեալ զնա իբրև զառաջինն հաստատուն 'ի հաւատս և 'ի սէրն քո՝ հրաման ետ գլխատել զնա արտաքոյ քաղաքին : Իբրև տարան զնա 'ի տեղի կատարմանն, գնացին ը՟ նմա և ժողովուրդք բազում յարանց և 'ի կանանց . յորս ոչ սակաւք էին քրիստոնեայք : Յայնժամ հրաման առեալ ս՟բյն 'ի դահճաց՝ յաղօթս եկաց, և ասէ . Տ՟ր բարերար և մարդասէր՝ Ա՟ծ մեր և տ՟ր յ՟ս ք՟ս, որ անբաւ գթութ՟ք քով արարեր զմեզ 'ի պատկեր բարերարութ՟ն քո, և գթասիրեալ 'ի կործանեալքս մեղօք՝ յարուցեր 'ի գլորմանէ գալստեամբ քո յ՟ս և զգենլով զմերս . Նովին գթութ՟ք գթա՛ տ՟ր և ներեա՛ որոց ոչն գիտեն զինչ գործեն, և վերածեա՛ 'ի խաւարէ անգիտութ՟ն 'ի լոյս Ա՟ծգիտութ՟ն : Ու յիս հայեա՛ց աղաչեմ մարդասիրապէս, և ընկա՛լ Տ՟ր զկամաւոր պատարագս մարմնոյ իմոյ 'ի հաճոյս քո, և զհոգիս խառնեա՛ 'ի թիւ ս՟րց քոց . և որք կատարեն զյիշատակս ծառայից քոց, դու տ՟ր կատարեա՛ զկամս հայցմանց ն՟ց :

Ու եկն առ նա բարբառ յերկնից, որ ասէր . եկ և հանգի՛ր քաջ զօրական իմ սուրբս 'ի պատրաստեալ քեզ արքայութ՟ն երկնից . և որք կատարեն զյիշատակս անուան ձերոյ, կատարին 'ի բարի խնդրուածք ն՟ց : Ու ս՟բյն

ասաստացեալ զամէ̃ն՝ մատոյց ուրախութ̃ զպարանոց իւր 'ի բերան սրոյ։ Եւ եղև իբրև հատաւ գլուխ սբ̃յն, պատուեցաւ տեղին՝ ուր հեղաւ պատուական արիւն նր̃, և բացաւ յանկարծակի վիհ մեծ. յորմէ զարհուրեալ դահճաց՝ թողին զնա և փախեան. և հաւատացեալքն՝ որք զկնի եկեալ էին, բարձին զսբ̃ մարմինն, և թաղեցին սաղմոսիւք և օրհնութբ̃ անդէն արտաքոյ քաղաքին ռուծափայ՝ մօտ 'ի տեղի վկայութեն̃։

Իսկ զկնի տարւոյ՝ 'ի մեկնել անտիոքոսի բռնաւոր դքսի 'ի կողմանց անտի, եկին նախանձաւոր քրիստոնեայք 'ի քաղաքէն սուրայ 'ի ռուծափ, և կամէին յափշտակել զմարմին սբ̃յն սարգսի։ Այլ զի չէին կամք տն̃՝ զի հասարակաց պարգևն սեպհականեսցի ոմանց, խափանեաց զխորհուրդս նց̃. վս̃ զի ը̃ մերձենալ նց̃ գաղտագողի 'ի տապան սբ̃յ վկային՝ հուր սաստիկ ցոլացաւ 'ի նշխարաց սբ̃յն, և յետս նահանջեաց զարսն. և 'ի տարածել համբաւոյն՝ 'ի վր̃ հասին բնակիչք քաղաքին ռուծափայ համդերձ զինուք, և ոչ թողլ ետուն նոցա մերձենալ յա̃ծային գանձն։ Ապա միաբանեալ 'ի մի խորհուրդ՝ շինեցին 'ի վր̃ նր̃ մատուռն. զի հանդիսապէս կատարեսցի յիշատակ սբ̃յն յամենեցունց 'ի վկայարանի անդ նր̃ ամ̃ ը̃ ամէ՝ յաւուր նահատակութե̃ նորին, որ էր եօթներորդ օր հոկտեմբերի՝ յամի տն̃ իբր 300. քանի մի ամօք յետ կատարման սբ̃յն բագոսի։

Իսկ յանցանել քանի մի ամաց՝ 'ի փայլել քրիստոնէութե՟ առ մեծն կոստանդիանոսի՟ , առաւել ևս հռչակեցաւ անուն սբ՟յն սարգսի 'ի ձեռն սքանչելեաց՝ զոր առնէր ա՟ծ բարեխօսութ՟բ նր՟ . ապա ժողովեցան երկոտասան կամ հնգետասան եպ՟սունք , և հիմնարկեալ 'ի ռուծափ քաղաքի զմեծավայելուչ եկեղեցի՝ անդր փոխեցին զնշխարս սբ՟յն սարգսի . անդ կարծի փոխադրեալ և մարմին սբ՟յն բագոսի ընկերի նր՟ . որ թաղեալն էր 'ի վառվառխոն ։ Արդ քանզի 'ի նմին դարու առ յուլիանոսի՟ կատարեցաւ և սբ՟ սարգիս զօրավար 'ի պարսս , և բազում սքանչելեօք փայլեաց յարևելս , յետ ժամանակաց 'ի կարդալ հաւատացելոց անխտիր զն՟ք սարգիս յօգնութի՟ , զայս և զայն անխտիր իմանային՝ ը՟ս տեղեկուէ՟ իւրաքանչիւրոց զպատմուէ՟ միոյն և միւսոյն . ը՟ս նմին և առ պատմագիրս է զի միում , և է զի միւսում ընծային պէսպէս սքանչելիք (5) . և արդարև երկոքեանն իսկ են սքանչելագործ վկայք , 'ի շնորհաց ամենազօր փրկչին և պսակողին զն՟ս . որում փառք յաւիտեանս . ամէն ։ (6)

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ ։

(1) Այնչափ միաձայն տեսանին բանք Հ՟ . և մետափրաստեսի 'ի բովանդակ յայս վկայաբանութեան , մինչև ակն յայտնի ցուցանել՝ թէ երկոքին ևս 'ի միոյ աղբերէ են առեալ , թող զդոյզն տարբերութիս ոճոյ և զհամառօտագրութի Հ՟ . ը՟ս կերպի քաղուածոյ . մեք յերկաքան-

կերպն անկանոն՝ բաղադրութ կարգեցաք: Անուանք ոմանց ըստ յն. գրին ՍԷՐԳԻՈՍ և ԲԱԿԽՈՍ. ըստ լտ. ՍԷՐՃԻՈՒՍ և ՊԱԳՔՈՒՍ. ըստ հյ. սարգիս և բագոս: Ըստ ձայնին նոյն է և անունս բագոս, որ 'ի հեթանոսական դիցաբանութիւնս յունաց կոչի դիոնիսոս, այլ առ լատինս պագքուս. ոց և սերգիոս էր անուն գործածական և առ հելլենս և առ հռովմայեցիս 'ի հեթանոսութե:

(2) Զնոյն լատին ձայնս ատենադպրութ 'ի կիր արկանէ ստամբօլ և յոյն վկայաբանն. այսինքն ՊՐԻՄԻԿԻՐԻՈՍ, և ՍԵԿՈՒՆԴԻԿԻՐԻՈՍ. որդ ոց յայտ է՝ 'ի լեզու հռովմայեցւոց ՊՐԻՄՈՒՍ է առաջին, և ՍԵԿՈՒՆԴՈՒՍ՝ երկրորդ. իսկ ՉԷՌԱ է մոմ, իմա մեղրամոմ. և զի առի՝ թէ առ նախնիս նօտարք գրէին 'ի վր մոմապատ տախտակի կմ 'ի վր մոմշորի իբր մագաղաթի, ամին իրի առաջին ատենադպիրն կոչիւր նախամոմական, և երկրորդն նր՝ երկրորդամոմական. այլ յետոյ սովորութի եղև զնոյն անուն տալ և այլոց երևելի պաշտօնատեարց յարքունիս կմ յեկեղեցականս. որպէս թէ այժմ ունիցի զհամեմատութի ըստ լուսարարի մեծի յեկեղեցւոջ:

Իսկ որ գրի 'ի Հ. դասք և իշխանք կենդեղոնայ, և 'ի մետափր՝ սքօլա կմ դպրոց գէնդիլիօն, յերկուս մարթի վերածիլ լատին բառս. քանզի նախ ՃԷՆՏԻԼԻՍ (այսինքն ազգային) կոչիւր առ հռովմայեցիս աղնուականն՝ որ պահէր զպատուականութի զարմի իւրոյ. և սակայն դպրոց կմ ծերակոյտ կամ կարգ ճէնդիլից կոչիւր դաս օտարազգի նիզակակցաց յանձնառողաց զնոմոս հռովմայեցւոց: Երկրորդ՝ ՉԷՆՏԷՆԱՐԻՈՒՍ (այսինքն հարիւրեակ կամ հարիւրորդ) էր առ հռովմայեցիս աստիճան ինչ պատուոյ գործակալութ՝ իբրև երկրորդ ընդհանուր գործակալի, և համարակալի հաշուի և հասից կալուածոց, որք բաժանէին 'ի տրութե ըստ հարիւրեակ աւանաց, և հարիւրեակքն 'ի տասնեակս, ըստ օրինակի զինուորական կարգի:

(3) Ուղիղ երևի գրութի Հ. վառվառիսոն, քան սուրիսոյ՝ վառվալիսոն կմ պառպալէսում. այլ զոր դնէ Հ. զերևումն հրեշտակի 'ի մերձենալ ոտից յայս քաղաք, մեք եդաք ըստ մետափր՝ յելս նց 'ի հռովմայ:

(4) Իսկ անուն ուսծափ քաղաքին՝ որ գտանի և յայլ գիրս մեր, 'ի Հ. գրեալ է ըռոստալոն կմ ռուստին. զոր այլք ռօստաֆա կոչեն: Որ և փոխանակ տետրապիւրգեայ՝ յօրինակս ինչ Հ. վրիպակաւ դնի տէտրապիւրգօյ, և 'ի միում վանկատեալ, տէր տապ իւր դայ:

(5)

(5) Սուրիոս հաւաքիչ մետափրաստեսի և այլոց գրչաց՝ առ չունելոյ զբաւական տեղեկութիւն զսրբոյն սարգսէ զօրավարէ կոչեցելոյ անյաղթ վկայ պարսից, զվասն նորա գրեալսն 'ի Թէոփիլակտոսէ և յեւագրիոսէ յաւուրս խոսրովու պարսից արքայի՝ ընդօրինակէ աստանօր 'ի վարս սբ՟յն սարգսի և բագոսի։ Այլ զոր գրէ Նիկեփորոս կալլիստոս. ժէ. 23. առաւել 'ի դէպ գայ սմին սարգսի հռովմայեցւոյ. քանզի ասէ, թէ 'ի ժամանակս կայսերութե՟ լևոնի յաջորդին մարկիանոսի՝ ժողովրդապետ ոմն հրէից հանդերձ երկու որդւովքն ամբաստանեալ եղև յատենի հրէից իբրև պատճառ խռովութե՟ իրիք եղելոյ 'ի քաղաքի, և մատնեցաւ 'ի չորաչար տանջանս առաջի հրէական ամբոխին։ Եւ իբրև վտանգեցաւ՝ սկսաւ աղաղակել այրն. ո՛վ ա՟ծ սբ՟յն սարգսի օգնեա՛ ինձ. սբ՟ սարգիս նայեա՛ և ողորմեա՛ ինձ։ Յայնժամ առաւել սրտմտեալ հրէից՝ առին ընկեցին զնա կենդանւոյն 'ի մէջ հրոյ բորբոքելոյ. և ահա յանկարծակի երևեցան 'ի մէջ բոցոյն երկու ասպետք հեծե՟լք յերիվարս՝ զարդարե՟լ 'ի զէնս և 'ի զգեստս պայծառս. և 'ի բաց դարձուցեալ զհուրն՝ ոչ թողուին մերձիլ 'ի հրէայն. և այնպէս զօգուտ ժամս եկաց մնաց այրն անվնաս. վ՟ն որոյ և ժողովուրդն դիմեալ 'ի վ՟ր՝ արձակեցին զնա իբրև անպարտ։ Իսկ ն՟ր գնացեալ առ առաջնորդս եկեղեցւոյ՝ հաւատաց 'ի ք՟ս և մկրտեցաւ, և կոչեցաւ 'ի ն՟ր անուանէն սարգիս. և ապա վաճառեալ զա՟մ ստացուածս իւր՝ շինեաց տաճար մեծ յանուն սբ՟յն սարգսի 'ի տեղւոջ անդ սքանչելեաց հրոյն. և անդ առանձնացաւ 'ի ծառայութե՟ տ՟ն. զնոյն արարին և երկոքին որդիք ն՟ր, որք անուանեցան սարգիս և բագոս։

(6) Ուր ձեռագիր ճաշոցք մեր՝ համաձայն վկայաբանութեանց դնեն զտօն սբ՟յն սարգսի և բագոսի 'ի կարգի հոկտեմբեր ամսոյ, 'ի Է (կ՟մ Ը), կ՟մ սահմի. Լ. զիարդ 'ի տօնացուցի վերածեալ է յայս միջոց սբ՟ց ամսեանն մայիսի, կրկին պատճառաք մեզ երևին. մի՝ զի կարի հոծեալ է յայն միջոց հոկտեմբերի բազմութի՟ անուանց՝ Է. աշակերտացն պօղոսի. և երկրորդ՝ զի յայս միջոց սակաւաթիւ են անուանք. յորս որպէս հռիփսիմեանք, և նունէ և մանէ հռովմայեցիք յարևելս վկայեալք՝ 'ի միջոցէ հոռի և սահմի ամսոյն և կ՟մ հոկտեմբերի են ածեալ այսր, նովին առթիւ և խորհրդով փոխաբերեալ երևին նաև սարգիս և բագոս. աւելի ինչ քան զայս ասել ոչ ունիմք առ այժմ։

ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Ս͞բյն Մովկիմայ Քահանայի ։

Հ. Մայիս. 12 ։ Յ. Մայ. 11 ։ Լ. Մայ. 13 ։
Ճառընտիր Ա. երես. շշ̄ = շշշ̄ ։ Բոլլանդեանն
Հէննսքէնեոս. Է̄. հատ. Մայ. եր. 620 = 624 ։ (1)

ԵՐԱՆԵԼԻՆ ՄՈՎԿԻմոս, որ ը͞ այլոց մովկիոս՝ կամ մուտիոս, հայրենեօք 'ի հռովմայ և յազնուական զարմէ՝ հաւատացեալ ծնողաց որդի եւփրատու և եւստաթիայ, էր 'ի ժամանակս դիոկղետիանոսի կայսեր՝ քահանայ աւագ եկեղեցւոյն ամփիպօլիս քաղաքի, որ 'ի մակեդոնիա գաւառի՝ շուրջ պատեալ 'ի ստրիմոն գետոյ. (զի և ամփիբօլիսն թարգմանի շրջաքաղաք. ռամկօրէն՝ էմպօլի. կոչի և քրիստոպօլիս ։) Եւ էր աւագերէցն մովկիմոս այր իմաստուն և հոգելից, կատարեալ վարդապետ ճշմարտութ͞ե և նախանձաւոր ք͞նական հաւատոց. վ͞ս որոյ և հանապազորդ արթնութ͞բ խրատիչ լինէր դասուց հաւատացելոց, և անխոնջ ուսուցանէր նոցա զբանն փրկական՝ զգուշացուցանելով 'ի հեթանոսական խաբէութ͞ց ։

Օայ-

Յայնու ժամանակաւ կարգեալ էր 'ի կայսերն անթիպատոս, այս է փոխանակ բդեշխի՝ յեւրոպեան մասին յունաստանի ղաւոդիկոս ոմն անուն, որ նստէր յապօղոնիա, և ընդ իշխանութ՟բ նորա էր և քաղաքն ամփիպօլիս: Եւ եղև 'ի չորրորդ ամի անթիպատուե՟ սորա՝ յորժամ հասին աւուրք հեթանոսական բարեկենդանութե՟ 'ի պատուի՛ սպանդարամետական չ՟ոյն դիոնիսեայ՝ որ և բաքոս առաջնորդ արբեցութե՟ց և անառակուե՟ց (յորմէ և պաքքանալիա աւուրք տօնից նորա), յաճախեցին մոլեգնութիք կռապաշտից յա՟մ քաղաքս և 'ի գիւղս 'ի կատարել զտօն պղծոյն այնորիկ. և զի կայր երևելի արձան նորին 'ի նշանաւոր մեհենի ամփիպօլիս քաղաքի, առաւելա՟պս անդ խենեշացեալ պարէին հեթանոսք, և կատարէին զպաշտօն դիւական մոլորութե՟:

Յայն տեսեալ երանելոյն մովկիմեայ երիցու՝ ստիպէր խրատէր զքրիստոնեայս բացէ 'ի բաց հեռանալ 'ի տեսուէ պիղծ կաքաւմանց և հանդիսի սպանդից և խնջոյից ն՟ց. և ոչ այսչափ միայն, այլև առ հեթանոսս խօսէր վ՟ս ուղղութե՟ և զգաստութե՟. նայեցարուք ասէ յանձինս ձեր, և փախերուք յանարժան գնացից և 'ի կռոցն մոլեգնութե՟. փարատեցէք յանձանց զխաւար մոլորութե՟, և առ ոտն հարէք զանզգայիցն տօնս. և եկայք դարձարուք առ տ՟ր ա՟ծ, որ միածնի՛ որդւով իւրով ծագեաց զլ՟յս արդարութե՟ և լուսաւորեաց զմեզ: Եւ իբրև այսպիսի բանիւք քարոզէր զօրհանապազ , դարձոյց զբազումս 'ի կռապաշտութ՟է 'ի ս՟բ հաւատս ք՟ի ։

Իսկ յամսեանն հինգերորդի եկն անձամբ և Պաւողիկոս անթիպատոսն յապողոնեայ յամփիպօլիս . և 'ի վաղի՛ւն անդր զգացուցին նմա ոմանք 'ի քրմաց վ՟ն մոլկիմայ պաշտօնէին ք՟ի , եթէ դարձուցանէ 'ի բաց զբազումս 'ի պաշտամանէն դիոնիսեայ ընդունայն և խաբօղ վարդապետութ՟ե իւրով՝ ուսուցանելով դառնալ յա՟ծ ոմն խաչեալ և թաղեալ . որում լսօղ լեալ բազմաց՝ խոտորեցան զկնի քարոզութ՟ե նորա . արդ եթէ թողացուսցես դմա , ամենեքեան հաւատան 'ի նա , և ընդունայն արասցեն զմեր ողջակէզսն և զպանդս տօնից ։

Իբրև լուա՛ւ զայս անթիպատոսն՝ հրամայեաց զինու՛որացն , զի կալցին զմոլկիմոս , և կացուսցեն յատենի , ուր ինքն նստէր 'ի բարձր բեմի . և եկն եկաց կատարեալ զինու՛որն ք՟ի առաջի իշխանին զուա՛րթ դիմօք ։

Ասէ ցնա անթիպատոսն Պաւողիկոս . ընդէ՞ր ոչ զոհես ա՟ծոցն , և զորս զոհեսն՝ դարձուցանես ընդունայն խաբէութ՟ե ։ Նա պա՟նի ս՟բ քահանայն մոլկիմոս , և ասէ . անգիտութ՟ե մի՛ հարցանէր , այլ զգիտութիւն 'ի խորհուրդս քո հաստատեա՛ , և ուսի՛ր զճշմարտութ՟ին . զի իմ կեալս ք՟ի՛ է ո՛վ անթիպատոս . վ՟ն որոյ փութամ զամենեսեան ածել 'ի գիտութ՟ի ճշմարտութ՟ե . վ՟ն զի ուսեալ 'ի սքանչելի գրոց խրատեցայ՝ եթէ կուռք հեթանոսաց դևք են, և զօրութի՟ նց՟ է մոլեգնութի՟ : Իշխանն ասէ . շատախօսութի՟ ուսեալ ես : Ս՝ովկիմոս ասէ . ո՛չ շատախօսեմ, այլ զճշմարիտն ասեմ քեզ, զի դիք ձեր դևք են, և պատկերք նոցա կուռք անշունչք : Սաստեաց նմա անթիպատոսն, և ասէ . ոչինչ օգտեսցեն քեզ բանքդ այդ հայհոյուե՟, այլ մեծապէս վնասեսցեն . զի տանջանաց և մահու պարտական առնեն զքեզ . այլ շահ արասցես քեզ, եթէ զոհես, զի զերծցիս 'ի տանջանաց, և փառաց հասցես : Ասէ երանելին . 'ի տանջանացն ա՟յ զերծանիմ և 'ի դատաստանաց, եթէ ոչ զոհեմ : Ղաւոդիկոս ասէ . քեզ ասեմ, շահեա՛ զանձն քո, և զոհեա՛ : Ս՝ովկիմոս ասէ . ո՛չ զոհեմ . վ՟ն զի մահաբեր է ինձ այդ յաւիտեան առաջի ա՟յ :

Յայնժամ զայրացեալ ղաւոդիկեայ՝ ասէ ցսպասաւորս ատենին . կախեցէ՛ք զդա, և քերեցէ՛ք յականողաց մինչև 'ի ծնօտս դորա, և 'ի կողից մինչև ցոտս . մինչև մերկասցի ոսկրն 'ի մարմնոյն . զի խրատեսցին ամենեքեան դովաւ՝ ոչ հայհոյել զա՟ծսն, այլ զոհել յստակամութե՟ :

Իսկ նահատակն ք՟րի աղօթէր 'ի տանջանս, և ասէր . որ թագաւորդ ես յաւիտեան ա՟ծ, որ արդարութե՟ ճառագայթիւքդ լուսաւորեցեր զտիեզերս, որ անգողանալի գանձուց և անմահութե՟ց տուօղդ ես, ծանի՛ փութապէս զզօրութի՟ ա՟ծութե՟դ քո, և ծանի՛ր ըղծառայս քո . հայեա՛ց յընթացս՝ զոր վ՟ն քո ճշմարտութ̃եդ կատարեմ. և տո՛ւր ինձ անխափան հանդիպել հանդիսի քում խոստովանութ̃ե ։

Արդ յորժամ բերեցին զնա չարաչար, հրամայեաց ղաւոդիկոս իջուցանել զնա 'ի կախաղանէն, և ասէ. զոհեա՛ այսուհետև ա̃յն դիոնիսեայ, և փրկեա՛ զքեզ յայլ ևս տանջանաց բազմաց։ Բայց սր̃ն մոկկիմոս՝ որ առաւելագոյն զգեցաւ զօրութ̃ի 'ի չարչարանաց, արար քաջութ̃ե պ̃խնի, և ասէ. տ̃ծք՝ որ արուեստի՛ մարդկան լեալ են, փայտք և քարինք անձայնք և անշարժք, ն̃դ ասես թէ զոհեա՛. ո՛չ կարես երբէք հաւանեցուցանել զիս դոցա՝ որ ոչ են ա̃ծ. այլ դու անամօթ և ամենևին հնազանդեալ բանսարկուին՝ ո՛չ տեսանես, զի ամենևին ոչ այլագունեցաւ մարմին իմ 'ի տանջանացդ, ո̃ր թէ ոչինչ ազդեալ իցէ յիս ցաւ չարչարանաց. վ̃ն զի զօրութ̃ի փրկչին իմոյ և ա̃յ անգործ արար զա̃մ տանջանս քո ։

Իսկ ղաւոդիկոս ասէ. ո՛չ եթէ օգնութ̃ի ինչ եհաս քեզ յա̃յ քումմէ, այլ կախարդութ̃ե զամենեսեան խաբես. բայց արդ հրամայեմ հրոյ ծախել զքեզ, զի ա̃մ մարմին քո ցաւօք խմորեալ հալեսցի, և ոսկերք քո 'ի հող լուծեալ՝ հողմով ցրուեսցին ։ Եւ անդէն հրամանն տայր հնոց լուցանել ձիթով և որթով և վշով առ'ի տոչորել զնա. և այնպէս սաստիկ բորբոքեցին, մինչև ելանէր բոցն շուրջ զհնոցաւն իբրև կանգունս վաթսուն ։ Ապա յառաջ կոչէր բռնաւորն զմոկկիմոս, և կըրկին կէն հարցանէր. զոհէ՞ս դիոնիսեայ, եթէ ոչ: Իսկ նա լուռ կայր՝ արհամարհեալ զբանիւք նորա:

Դարձեալ ասէ ղաւոդիկոս. եթէ 'ի նոյն միտս պնդեալ կաս, ահա տեսանես ՟ը չար խորհրդոյդ զպատրաստեալ տանջանս. այլ խնայեա՛ 'ի քեզ, և ծանի՛ր զմեծին ա՟յ դիոնիսեայ զպայծառութիւնն. և վաղվաղակի գտցես զօգնականութ՟ի ն՟ր, և ապրեալ՝ 'ի տանջանաց՝ 'ի փառս հասանիցես. արդ զոհեա՛ դիոնիսեայ: Պատասխանի ետ մովկիմոս. ասացի անթիպատէ, եթէ ո՛չ զոհեմ խլից և կուրից և համրից, որ կորուսանեն զոգիս մտաւորս մարդկան. բայց դու կամի՞ս արդեօք ճանաչել, զի զոր ա՟ծ անուանես՝ չէ՛ ա՟ծ, այլ կռածոյ և քերածոյ. անսա՛ ինձ և ցուցից քեզ:

Բարկացաւ իշխանն, և ասէ. ա՛յ չարագլուխ՝ և զիա՞րդ քերածոյ իցէ այն, որ իւրով զօրութ՟բն (կի՟մ առաքինութ՟բ) ա՟ծ լեալ է. զի որ 'ի դիս զօրութ՟իքն բնակեալ են՝ զաւ 'ի մէնջ ողջակէզս ընդունին, և կեանս մեզ շնորհեն: Յայնժամ ասէ ցնա ս՟բ քահանայն մովկիմոս. կամի՞ս դու պայծառդ և փայելուչդ անթիպատոս, զի ես մտից 'ի տաճարն, և որպէս և զիա՛րդ գիտեմ, զոհեցից իմով ողջակիզօք, և ճանաչիցէք ամենեքին զզօրութ՟ի դիոնիսեայ: Իսկ ղաւոդիկոս ոչ իմացաւ զմիտս ն՟ր. փո՟յթ ասէ. ա՛ղէ մուտ և զոհեա՛. զի թէ՛ մեք և եթէ դու առհասարակ ծանիցուք զզօրու՟ի մեծ ա՟ծոյն դիոնիսեայ:

Այս

Զայս հրամա՟ն առեալ մոմկիմայ՝ դիմեաց ՚ի մեհեան անդր. և արարեալ զնշանն ք՟ի ՚ի ճակատ իւր, և այնպէս զզէնն յ՟ի ը՟դդէմ բանսարկուին զգեցեալ՝ վազեաց ՚ի ներքս ՚ի տաճարն. և կացեալ առ դրօշե՟լ պատկերին դիոնիսեայ՝ սկսաւ ասել յերկինս ՚ի վեր. Ո՛վ ամենակալ՝ որ զո՟մ ինչ փառօք ք՟ի ըստեղծեր. որ զբանսարկուն զօտարացեալն ՚ի քումմէ ա՟ծութենէդ յամօթ արարեր, և պարկեշտ երկիւղիւ պատուիրանացդ զծառայսն քո վառեցեր. որ զանշունչ և զանշարժ կուռսն բաբելացւոց ՚ի ձեռն դանիէլի փշրեցեր, և զերից մանկանցն զբարձրացե՟լ բոցն ցրուեցեր. որ զփարաւոն յանդունդս ընկղմեցեր, և կեանս ժողովրդեան՝ որ զքեզ ճանաչէին՝ շնորհեցեր. և յո՟մի զանուն քո ընքանչելի մեծացուցեր. Զքեզ՝ որ եսդ յառաջ քան զյաւիտեանս, վասն փառաց Թագաւորին և տ՟ն մերոյ յ՟ի ք՟ի աղաչեմ և պաղատիմ, լո՛ւր և ե՛կ ինձ յօգնականութ՟ի. և ցո՛յց զզօրութ՟ի քո այնոցիկ՝ որ զճշմարտութ՟ին իբրև զստութ՟ի համարին. զի դու ես տ՟ր ամենազօր և մշտնջենաւոր, և՚ի ձեռն քո լոյս անթառամ ծագեաց առ ՚ի փարատել զխաւար մեղաց, և հալածել զմոլորութ՟ի դիւաց և զպիղծ կռոցս հեթանոսաց:

Եւ զայս ասացեալ ՚ի ձայն բարձր աղաղակեաց և ասէ. անպատուեղ և անպիտան, կո՛յր և խուլ՝ անշարժդ դիոնիսէ, քե՛զ ասեմ վ՟ն անուանն ա՟յ ահաւորի և փառաւորի՝ որ ՚ի բարձունս բնակեալ է, անկի՛ր ՚ի մեհենէդ

՚ի

'ի գետին . վա՜ զի 'ի պատճառս ծածուկ մոլորութե՛ն կաս այսր, և 'ի գայթակղութիւն անմտաց ։ Եւ առժամայն եղև որոտումն և թնդիւն մեծ, և անկաւ դիոնիսոս 'ի գետին, և մանրեալ՝ եղև իբրև փոշի . մինչև ամենեքեան՝ որ տեսին, փախեան՝ զահի հարեալք ը̅ եղեալ իրսն ։ Ապա ասէ երանելին մովլկիմոս ցղաւոդիկոս, տեսե՞ր զմոլորութի՜դ, որով զանմեղաց զխորհուրդս արգելեալ 'ի կենաց՝ 'ի մահ ածէիր . արդ ե՛կ ժողովեա՛ զմոխիր ա̅ծոյ քո, և իմացի՛ր թէ յո՛րպիսի չարիս էք մոլորեալ դու և ժողովուրդ քո ։

Յայնժամ խռովեալ անթիպատոսին, և ոչ կարացեալ պատասխանի առնել նմա և ոչ բան մի, հրամայեաց սպասաւորաց արկանել զմովլկիմոս 'ի հնոցն կանխագոյն բորբոքե̅լ ։ Եւ անդ էր տեսանել զսքանչելիս երից մանկանցն բաբելոնի . քանզի իբրև եմուտ երանելին մովլկիմոս 'ի մէջ հնոյին, թուէ՛ր նմա իբրև 'ի զով դաշտի գնալ . և տեսանէր անդ զայլ երիս արս փառաւորս, և զինքն՝ չորրո̅դ . այլ միոյն 'ի նոցանէ կերպարանքն էին իբրև զտեսիլ արեգական՝ գեղեցիկ ճառագայթեալ քան զբոցոյն պայծառութ̅ի ։ Եբաց զբերան իւր ս̅բ քահանայն մովլկիմոս, և սկսաւ օրհնել զա̅ծ և ասել . փա՛ռք քեզ ա̅ծ, փա՛ռք քեզ թագաւոր յաւիտենական, փա՛ռք քեզ լուսաւորիչ անապական՝ պայծառութ̅ի օրհնեալ յաւիտեանս ։ Գոհանամ զքէն տ̅ր ա̅ծ հարցն մերոց, զի բանիւդ քո ա̅մ ինչ հնազան զանդեալ է ։ Օրհնեալ ես տ՟ր ա՟ծ հարցն մերոց , որ 'ի զօրաց քոց երկնաւորաց երկրպագիս , գովիս օրհնիս և փառաւորիս 'ի բերանոյ ս՟բ՟ց քոց հրեշտակապետացս՝ որ են է՟ իս 'ի հնոցի աստ ։ Ողորմեա՛ տ՟ր զբոց հրոյս այսորիկ արտաքոյ հնոցիս , և երևեցո՛ ըզփառս քո , և շրջափակեա՛ սովին բոցով զայնոսիկ՝ որք յանզգայութ՟ե են է՟ անթիպատոսին , և խորհեցան յանձողոպրելին մատնել 'ի պատուհաս զծառայ քո ․ զի ամենեքեան ծանիցեն , թէ դու միայն ես ճշմարիտ ա՟ծ յաւիտեանս ․ ամէն ։

Եւ է՟ ասել նորա զայս՝ ցրուեցաւ բոցն յանթիպատոսն կոյս , և այրեաց զնա հանդերձ ինն արամբք 'ի համախոհ ընկերաց ն՟ր և 'ի պաշտօնէից չա՟յն դիոնիսեայ ․ մինչև չմնալոյ և ոսկերաց մարմնոց նոցա առ 'ի ժողովել ։ Յայնժամ դողումն կալաւ զա՟մ հեթանոսս , և երկեան յա՟յ ճշմարտէ ․ իսկ երանելին մոկիմոս ելանէր գայր 'ի հնոցէն ողջանդամ , ոչինչ ամենևին կարացեալ տիրել 'ի վ՟ր ն՟ր հրոյն ։ Բայց թալասիոս ո՟մն զօրագլուխ անթիպատոսին (կամ թաղադիոս քրմապետ) ձեռն արկեալ 'ի կենդանի նահատակն ք՟րի՝ էարկ զնա 'ի բանտ առ ժամանակ մի ․ ուր անտրտում ուրախութ՟բ համբերէր երանելին ա՟մ նեղութ՟եց՝ փառաւորելով զա՟ծ ։

Եւ իբրև անցին աւուրք քանևմեց , եկն 'ի տեղի կորուսելոյն ղաւոդիկոսի այլ անթիպատոս մաքսիմոս կ՟մ մաքսիմիանոս անուն ․ և լուեալ ն՟ր 'ի զինուորացն վ՟ս սքանչելի անցիցն մողկիմեայ՝ զայրացաւ ը̅ այն դառնապէս . և զառաջին օրն խորհուրդ արարեալ ը̅ իւրսն՝ թէ որպիսի օրինակաւ զարդարն կորուսցեն , ապա յերկրորդ կամ յերրորդ աւուրն եկն նստաւ անթիպատոսն մաքսիմիանոս 'ի բարձր տեղւոջ ուրեմն , որ կոչէր փորոս (այն է ատեան բեմական 'ի հրապարակի) . և հրամանն տուեալ ածել զմողկիմոս՝ ասէ ցնա . զի՛նչ է անուն քո , և ծնողաց քոց :

Պատասխանի ետ երանելին . եթէ զանուանէ իմն հարցանես անթիպատէ , պատուական հայրն իմ եփրատէս , և գովելի մայրն իմ եւստաթիա ընծայեցուցին զիս ք̅ի , և մաքրեալ աւազանին սրբութբ̅՝ կոչեցին ինձ անուն մողկիմոս . և աճեցեալ սնայ 'ի նոցանէ իբրև ճշմարիտ որդի երկիւղին ա̅յ , մինչև հասի յայր կատարեալ , և լցեալ զաւուրս երկայնս՝ 'ի ծերութ̅ի խոնարհեցայ կորացեալ անձամբ : Անթիպատոսն ասէ . յորմէ՞ ազգէ ես , և կամ զի՞նչ էին կեանք քո և քոյոց : Մողկիմոս ասէ . հայրն իմ 'ի զինուորական կարգի նշանաւոր գտաւ 'ի մեծն հռոմ , և կանդիդատոս եղև (ո̅ր է պայծառազգեաց և յառաջադէմ) և գլուխ գնդի , և ցուցաւ սիրելի յաչս ամենեցուն . և 'ի թագաւորական քաղաքի անդ վախճանեցաւ իբրև քաղաքացի . որպ̅ և մայրն իմ էր դուստր զամպատիոսի անթիպատոսին որդւոյ կղարայ : Յայնժամ ասէ անթիպատոսն . իսկ զի՞արդ յայդպիսի ազգէ գոլով օտարացեալ է քո 'ի հռովմայեցւոց՝. և կա՟մ որպէս ոտնհարու լինելով օրինացս՝ յարձակեալ մանրեցեր զքաջն դիոնիսոս, և զղաւոդիկոս անթիպատն զսիրելին ինքնակալաց հրոյ մատնեցեր, և զօրինադրու՟ն ողջակիզացն խափանեցեր: Սովկիմոս ասէ. ես ո՛վ անթիպատէ՝ կարծեմ թէ ա՟ծս ոչ մանրեցի, և ոչ զսիրելի ինքնակալին հրով այրեցի, և ո՛չ զպարկեշտ ողջակէզս թշնամանեալ այպանեցի, այլ՝ երկիւղի՛ մեծին ա՟յ յերկինս նայեցեալ՝ զկուռս խուլս և զքերածոյս և զբնակութիս սատանայի խորտակեցի, և զսիրելին բանսարկուին զթշնամին արդարութե՟ հրով ծախեցի. և զպիղծ ողջակէզս մարդասպանին ցրուեցի և ծաղր արարի, և զծոց բարխատեաց չարին պարկեշտ ագօթիւք ունայն երևեցուցի, բոլորով սրտի՛ կացեալ 'ի խոստովանութիս վկայութե՟ Ճշմարտութե՟:

Ասէ մաքսիմիանոս. ապա քաջ զքեզ կարծես մ՟ռ այդպիսի չարաբարոյութե՟: Սովկիմոս ասէ. վասն երկիւղին՝ զոր ունիմ առ ա՟ծ, քաջ երևեցայ 'ի կործանումն կռոց ձերոց: Սաստեաց 'ի նա իշխանն, և ասէ. մոռացիր զբազում յիմարութի՟դ քո, և մատուցեալ զոհեա՛ ապողոնի, զի մի՛ չարաչար կորիցես: Պատասխանի ետ վկայն. չարաչար մեռանիմ ո՛վ անթիպատէ, եթէ մոռացայց զբարերարութի՟ն ա՟յ Ճշմարտի և զօգնականութի՟ն ն՟ր, և մերձեցայց 'ի դոսա՝ որք ո՛չգ են, և ո՛չ լեալ են երբէք: Դարձեալ ասէ մաքսիմիանոս. արդ թէպէտև մ՟ռ մոլեգնութեամբդ քո զմեծ աստուածն Դիոնիսոս մանրեցեր անզգամութեամբ , և անմիտս պահեցար՝ գտեալ զթողութիւն 'ի նոցա համբերելոյն , բայց առեալ միտս դիւցազնական մարդոյ՝ զոհեալ Ապողոնի : Մալքիմոս ասէ . մի՛ դու մոլեգնակից լինիր բանսարկուին ո՛վ անթիպատէ , և մի՛ յիշեր զվատամտութիւն Ղաւոդիկոսի . որ զօրութիւնն Աստուծոյ վատնեցաւ վասն բարկացուցանելոյն իւրոյ զնա , այլ՝ յիշեա՛ և նայեա՛ յօգնականութիւնն Աստուծոյ՝ որ յիս կատարեցաւ . և փախի՛ր յայսպիսի պատուհասէ , զի մի՛ և դու չարաչար պատուհասեալ ելցես 'ի կենացս յայսցանէ :

Լի եղև սրտմտութեամբ Մաքսիմիանոս , և հրամայեաց արկել զառաջինն նահատակն 'ի մէջ երկուց անուոց , զի 'ի հոլովիլ նոցա քակտեսցին անդամք նորա . իսկ Մալքիմայ ոչինչ զանգիտեալ՝ ասէր . տանջանքդ քո և չարախորհուրդ հնարքդ ինձ փրկութիւն հոգւոյ գործեն առ Աստուած . արդ փութա՛ զկարօտութիւն իմ լնուլ՝ կատարել կարծելով զկամս հօրն քո սատանայի . զի ինձ կեանք Քրիստոս է , և մեռանելն շահ 'ի խոստովանութիւնս յայս : Արդ 'ի հոլովել անուոցն ջախջախէին մարմինք սրբոյն . այլ նա զուարթ կայր , որպէս թէ ոչինչ տիրեցին նմա տանջանքն . և յորժամ արիւնն իջանէր 'ի մարմնոյն , և ցայտէր 'ի մէջ լիռանցն , և բ անիւն 'ի բաց հոսէր , բացեալ սրբոյն զբերան իւր՝ ասէր . Որ պարկեշտ դիտութեամբ տուող ես Աստուած՝ օգնական ապաւէն և փրկիչ , գոհանամ զքէն՝ զի զիս զանարժանս ար-

արժանի արարեր մտանելոյ 'ի հանդէս յաղթութեան ընդդէմ բանսարկուին . վ՟ս զի դու ես ա՟ծ , որ քակես զխորհուրդս չարարուեստ իմաստութե՟ն նորա . մի՛ տիրեսցեն ինձ խորհուրդք անարժանք՝ որ 'ի քէն ոչ սիրեցան . վ՟ս զի մեծ է անուն քո 'ի վ՟ր երկիւղածաց քոց :

Եւ մինչդեռ աղօթէր ս՟բն , յանկարծակի ինքնին քակտեալ խորտակէր անիւն , և եւ արդարն ողջանդամ ապրեալ զօրութ՟բ ա՟յ . և տեսեալ ամենեցուն զնոր հանդէս վկային՝ սքանչացեալ սոսկացան : Եւ Մաքսիմիանոսի ընկղմեալ 'ի տրտմութիւն՝ զի և ինքն յաղթեցաւ 'ի ս՟բյն , քան եթէ յաղթեաց , ետ հանել զնա յերեսաց իւրոց , և արկանել 'ի բանտ . ուր նա գոհանայր անդադար զա՟նէ : Իսկ յետ երից աւուրց հրամայեաց բռնաւորն , զի արկցեն զՄովկիմոս առաջի վայրենի գազանաց : Եւ իբրև ժողովեցան ա՟մ բազմութի՟ն 'ի թէատրոնն հանդերձ անթիպատոսիւն , գայր մտանէր և զինուորն ք՟նի Մովկիմոս 'ի տեսարան անդր առողջ մարմնով և զուարթ . մինչև ամենեցուն զարմանալ և ասել զնմանէ , թէ չէ՞ սա այն՝ որ ը՟ տանջանօք և ը՟ լլկանօք անկեալ : Ընդ յակնարկել Մաքսիմիանոսի առ դարմանիչն գազանաց՝ վերացոյց նա զթև մի դառաւադղին . յորմէ ելանէր մատակ առիւծ մի մեծ և ահագին . և ընթացեալ փաղփաղակի՝ գայր անկանէր առաջի ոտից Մովկիմոսի , և լիզոյր զոտնատեղիս ս՟բյն . և ժողովուրդն հայեցեալ

ցեալ

ցեալ զարմանայր՝ թէ զի՞նչ լինիցի այն։ Իսկ առիւծն յետ նստելոյ հանդարտիկ պահ մի՝ յարուցեալ գիրկս արկանէր զերանելեաւն, և լիզոյր զքիրտն մարմնոյ ն՟ր։ Յայնժամ ելին երկու գազանաբոյծք, և շողոքորթէին զգազանին՝ զի մտցէ անդրէն 'ի գառագեղն. վ՟ն զի ոչ ո՛ք կարծէինն՝ իւրքն վճարեցան. իսկ գազանն 'ի վ՟ր յարձակեալ՝ սպան զմի 'ի նոցանէ. և դարձ արարեալ առ սբ՟ն՝ համբուրեաց զնա, և ապա եմուտ ինքնին 'ի գառագեղն։

Յետ այսորիկ վերացուցին զթև այլոյ գառագղի, ուր կայր առիւծ մի քաղցեալ՝ անճաշակ յերկուց և յերից աւուրց հետէ. և սա 'ի դուրս ոստուցեալ՝ նոյնպէս գիրկս արկանէր երանելւոյն մովկիմեայ, և զագին տատանէր և քծնէր, ո՛չ թէ ողորմութ՟ի խնդրելով 'ի նմանէ. և համբուրելով հեզիկ ըզմարմին սբ՟յն՝ այսր անդր հայէր ը՟ բազմութ՟ին. և անկեալ առ ոտս երանելւոյն թաւալէր։ Յայնմ վայրկի միաբան աղաղակեաց ա՟մ բազմութ՟ին. արձակեա՛ զարդարդ, զոր և գազանք սիրեն, և մ՟ծ բարեպաշտութ՟ն ն՟ր ողորմի։ Իսկ մաքսիմիանոսի զահի հարեալ յիրացն, և ակնածեալ ձայնի ամբոխին՝ ետ հանել զսբ՟ն 'ի թէատրոնէ անտի. և առաքեաց զնա առ եպարքոսն փիլիպպոս (ո՟ր այլոյ՝ փիլիպպիսիոս, կամ փիլիսիպոն), որ նստէր 'ի հերակլիա պերինթացւոց, գրեալ վ՟ն անցից ն՟ր մի ը՟ միոջէ։

Իբրև ածաւ մովկիմոս 'ի հերակլիա, արգելաւ 'ի բանտի զաւուրս ութ. ապա հրամայեաց եպարքոսն տանել զնա 'ի բիւզանդիոն, և անդ հարցափորձել յատենի: Եւ հասեալ 'ի բիւզանդիա՝ մուծին զնա առաջի խորհըրդականն դատաւորացն, և պատմեցին նոցա զա̅մ անցս. և զոր ինչ արար մովկիմոս անուա́մբն յի̅ի ք̅ի՝ վկայելով յատենի երկուց անթիպատոսաց զաւոդիկոսի և մաքսիմիանոսի: Եւ իբրև հարցեալ լինէր երանելւոյն 'ի դատաւորացն, պատմէր ն̅ց համարձակ զսքանչելիսն ա̅յ՝ մեծացուցանելով զճշմարիտն ա̅ծ, և արհամարհելով զսնոտի յոյս կռապաշտից: Արդ յորժամ լուա́ն զայն ա̅մ 'ի բերանոյ վկային ք̅ի, արարին նմա վճիռ՝ զի հատցի գլուխ ն̅ր սրով:

Եւ մինչդեռ հանդերձեալ էր զկատարումն վկայութե̅ն ընդունել, համբարձ զձեռս իւր, յաղօթս եկաց և ասէ. Յո՛յսդ 'ի քեզ հաւատացելոց ա̅ծ, օրհնեա̀լ ե̀ս տ̅ր՝ որ զյաւիտեանս հաստատեցեր, որ փառաւորեալդ ես 'ի ս̅բս, և հրեշտակաց տ̅րդ ես. մի՛ թաքուցաներ զխորհուրդ 'ի ս̅բց, և ընկա՛լ զիս խաղաղութ̅բ. զի քեզ վայելէ փառք յաւիտեանս, ամէն: Եւ ընդ ասելն ն̅ր զայս՝ հատին զգլուխ երանելոյն. և առժամայն ձայն եղև յերկնից. Ուրա՛խ լեր բարեյաղթ մովկիմոս նահատակ ք̅ի և ս̅բ քահանայ, քանզի արիաբար յաղթեցեր բռնաւորին, և զզօրութի̅ թշնամւոյն կոխան արարեր. Եկ համարձակ, և մուտ յարքայութի̅ երկնից. և ուրա՛խ լեր ը̅ հարսն՝ որք իբրև զքեզ աշխա-

տեցան յերկրի · արդ. վայելեա՛ և դու ըստ
Ճգանացդ յարքայութ՟ես :

Այսպիսի ցանկալի հրաւիրանաւ կոչման ընկալաւ ս՟ն մովկիմոս զյաղթականն ըզպսակ 'ի մետասաներ՟դ աւուր մայիս ամսոյ յամի տ՟ն իբր 303 : Զորոյ զվայելուչ և զս՟ք նշխարսն ամփոփեալ թաղեցին պատուով փիլիպպոս և դաղմատիոս և կիւրակոս եպիսկոպոսունք հանդերձ ուխտիւ՛ եկեղեցւոյն բիւզանդացւոց՝ իբր մղոնաւ միով արտաքոյ բիւզանդիոյ : Եւ յետ քանի մի ամաց 'ի գալ մեծին կոստանդիանոսի 'ի բիւզանդիա՝ որ յանուն ն՟ր կոստանդինուպօլիս կոչեցաւ , շինեաց նա 'ի վ՟ր տապանի ս՟յն եկեղեցի մեծ և վայելուչ · կամ փոխադրեաց զմարմին ն՟ր 'ի տաճարն՝ զոր կանգնեաց յանուն նորա մերձ 'ի տեղի կատարման ս՟յն , ուր էր նախ մեհեան կռոց · այլ զնոյն եկեղեցի կրկին ևս յօրինուածով նորոգեցին և աւարտել զարդարեցին զկնի ժամանակաց՝ նախ մեծն յուստինիանոս , և ապա վասիլ արշակունի : Իսկ նշխարք ս՟յն մովկիմայ ասին այժմ լինել յարևմուտս 'ի բոլոնիա քաղաքի իտալիոյ : (2)

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ:

(1) [illegible]ին և հարազատ այս վկայաբանութն̅ ոչ գտանի 'ի մեծ և յառաջին Ճառընտրի մերում Թարգմանեալ 'ի յոյն բնագրէ, նոյնպէս գտանի Թարգմանեալ 'ի վաղուց և առ լատինս, ը̅ որում յառաջ բերեմ բովանդակեանք՝ բաղդատութե̅ այլ և այլ ձեռագրաց. յորս առաւել համաձայն տեսանի մերումս օրինակն կոչեցեալ համբուրգեան. ոչ երբեմն և սուկեանն. և զի չկայր երևելի տարբերութի ը̅ իրին, նմին իրի ոչինչ հարկ համարեցաք ծանուցանել զդուզնաքեայ զանազանութիս. այլ համեմատութե̅ իրերաց անցուցաք 'ի կարգ պատմութե̅ն. զորոյ և զքաղուածն պէսպէս համառօտեալ ունին այլ և այլ յայսմաւուրք: Իսկ անուն սր̅յն մովկիմեայ առ յոյնս գրի մօգիոս, և առ հռովմայեցիս մուչիուս, կամ մուցիուս:

(2) Յայսմաւուրք Հ. և Յ. միօրինակ պատմեն զայս, թէ մեծն կոստանդիանոս շինեաց եկեղեցի յանուն սր̅յն մովկիմոսի. միայն Հ. ասէ՝ թէ 'ի վր̅ տապանի նր̅ շինեաց, որով նշանակի տեղի թաղման սր̅յն. իսկ Յ. գրէ՝ թէ զնշխարս սր̅յն ամփոփեաց յեկեղեցին, զոր շինեաց յանուն նր̅՝ իբր 'ի բուն տեղւոջ կատարման: Յիշէ և գէորգ կոդինոս 'ի գիրսն յաղագս ծագման կոստանդնուպօլսոյ. Էրէս. 37. զտաճարս սր̅յն մովկիմոսի և մինասայ՝ զնուիրեալս յանուն նց̅ 'ի մեծէն կոստանդիանոսէ, զի յառաջին ասէ տաճարք էին կռոց. և 'ի վր̅ բերէ. * Զտաճարն սր̅յն մովկիմոսի, որ երբեմն կրկին
,, մեծութին ունէր՝ քան զոր յայժմուս, ը̅ կիսոյն որո-
,, շեաց մեծն կոստանդիանոս, և կանգնեաց անդ խո-
,, րան. և զի անդանօր էր սպանեալ սր̅ն մովկիմոս,
,, նմին իրի զտաճարս զայս յանուն նր̅ նուիրեաց, և
,, անդր փոխադրեաց զմարմին նր̅: 'Ի ժամանակս մե-
,, ծին թէոդոսի արտաքսեցան արիանոսք 'ի մեծ եկե-
,, ղեցւոյն, և ապա դարձ արարեալ թոյլտուութ̅բ
,, կայսեր կալան զտաճար սր̅յն մովկիմեայ. այլ յեօթ-
,, ներորդ ամի սիրելոյ արիանոսաց այնմ տաճարի՝ 'ի
,, ժամու պաշտաման կործանեցաւ և ճմլեաց 'ի ներքոյ
,, զբաղումս 'ի նոցանէ: Իսկ յաւուրս մեծին յուստի-
,, նիանոսի վերստին կանգնեցաւ տաճարն այն. և կայ
,, մնայ

,, մնայ ամբողջ մինչեւ ցօրս ցայս || :

Եւ ը̄ այսմ Պրոկոպիոս 'ի գ̄ Գիրս Շինուածոց Յուստինիանոսի . Գլ . 4 . նշանակէ զայն եկեղեցի եւս, եւ վկայէ լինել տաճար մեծ քան զայլ ամ̄ վկայարանս մեծի քաղաքին : Այլ յետ միւսանգամ կործանմանն՝ ասէ կեդրենոս , * Վասիլ կայսր զմեծ տաճարն մովկիմայ վկայ-
,, լին, եւ զմնացս նր̄ հարթայատակեալ, եւ զնր̄ սեղանն
,, խարխալեալ՝ որմովքն հանդերձ նորոգեալ՝ կանգ-
,, նեաց || : Յիշի այս տաճար ըստ առաջին վիճակին 'ի գործս սբ̄ ժողովոյն եփեսոսի, որ եղեւ յամի 431 . քանզի յորժամ եղեւ վճիռ դատապարտուե̄ ը̄դէմ նեստորի, հրամայեաց կայսրն Թէոդոս փոքր՝ զի ամ̄ արքիմանդրիտք ժողովեսցին 'ի տաճար սբ̄յն մովկիմայ, եւ անդ վերծանեցաւ առաջի նց̄ սահմանադրուե̄ եւ վճիռ սբ̄յ ժողովոյն :

Մասինոս ոմն 'ի քննչաց ցուցանէ, թէ նշխարք սբ̄յն մովկիմոսի կան այժմ 'ի բոլոնիա յեկեղեցւոջ ամ̄ սբ̄ց՝ որ 'ի բրենիա, եւս եւ 'ի տաճար սբ̄ ածածնի՝ որ վն̄ ազատուե̄ : Այլ թէ սորին վկայի իցեն այն նշխարք, չէ' դիւրին ցուցանել՝ ասէ հենսքենիոս բոլլանդեան :

ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Սր̃յն Կոդրատոսի կ̃մ կոտրատիոսի, և ընկերաց նորա ։

Ն. մայիս. 2. կ̃մ 1. ըստ յեռ ։ Իսկ ըստ. ապրիլի. 21 ։ Յ. մայ. 9 ։ Լ. մայ. 7 ։ Բոլլանդեանն հենաջենիոս. Է. հատ. մայ. 9. եր. 362 ։ Ռուինարդ. Ա. 2Է. և Բ. մճզ ։ (1)

ԲԱՐԵՅԱՂԹ ԶԻՆուորն ք̃մի (2) երանելին Կոդրատոս կ̃մ կոտրատիոս (ըստ Հռովմայեցւոց ջուադրատուս, որ թարգմանի չորեքկուսի կ̃մ քառանկիւնի, և բարեչափ,) էր 'ի նիկոմիդեայ մայրաքաղաքէ բիւթանացւոց՝ յաւուրս հալածանաց դեկոսի և վաղերիանոսի (3), ոչ աննշան ոք 'ի քաղաքի, վայելուչ յամենեսեան երևեալ հասակաւ և գեղեցկութ̃բ, և զօրաւոր բանիւ, և որ գլուխն է ա̃մի՝ ա̃ծպաշտութ̃բ զարդարեալ և եռանդնոտ հաւատով ։ 'Ի ժամանակին յայնմիկ պաշտօնեայք ինքնակալաց յափշտակէին 'ի տեղեաց տեղեաց զքրիստոնեայս, և ածեալ 'ի նիկոմիդիա՝ արկանէին 'ի բանտ, և քարշէին յատեան դատաւորաց • զի եթէ հաւանեսցին հաղորդ լինել զոհից, և ուտել 'ի պիղծ կերակրոց կռոցն, առանց տանջանաց արձակեսցեն յիւրաքանչիւր դաւառ· ապա թէ ոչ՝ մահու սպանցեն :

Իսկ հաւատացեալքն՝ որ 'ի քաղաքի անդ էին, ոմանք 'ի լերինս, և ոմանք յագարակս թաքչէին, և առ հասարակ 'ի տագնապ մահու կային : Այլ ոմանք նահատակք առաքինիք և պիտանի ծառայք ք՟րի քաջալերութ՟բ 'ի քաղաքին շրջէին, և մեծաւ ուրախութ՟բ սպասէին՝ թէ զիա՛րդ արժանի լինիցին փառաւորել զա՟ծ վկայական խոստովանութ՟բ :

Այսպիսի ոգւով առաւելագ՟յս եռայր քաջն կոդրատոս· վ՟ս որոյ մատուցեալ առ բանտապետսն և առ զինուո՛րս՝ ետ ն՟ց ինչս բ՟զմս, զի թոյլ տացեն նմա դարման տանել կալանաւորաց եղբարց՝ որք 'ի բանտին էին· և առեալ համարձակութ՟ի՝ ստէպ մտանէր առ ն՟ս, և խնամէր զա՟մ պէտս ն՟ց· և ը՟ս լուսաւոր մտացն հանապազ խրատատու լինէր կապելոցն վ՟ս անուանն տ՟ն· զքաջասիրտսն և զյաժարսն յորդորամիտս առնէր 'ի վկայութ՟ի տ՟ն, աղաչելով յիշել և զինքն անպակաս· իսկ զվատասիրտսն և զվհատեալսն քաջալերէր և մխիթարէր՝ մի՛ երկնչել, այլ առաւել ուրախ լինել· և ասէր, եթէ բազումք 'ի մարդկանէ ո՛չ հեշտեաւ ինչ, այլ՝ մեծաւ տառապանօք և աշխատութ՟բ ելին 'ի կենացս յայսցանէ· ո՛չ աստ 'ի ժամանակեան կեանքս հանգստեան ինչ պատահեցին, և ո՛չ անդ հանդերձելոյ բարեացն եղեն արժանի· իսկ վ՟ս ա՟յ ճգնել՝ բազում և մեծամեծ բարեաց առիթ լինի եթէ 'ի ժամանակիս, և եթէ 'ի հանդերձելումն.

Արդ՝ եղև օր, զի պերինիոս բդեաշխ նահանգին նստեալ յատեան հրապարակաւ 'ի Նիկոմիդիա՝ հրամայեաց ածել զառաջեաւ զըմբռնեալսն վ՟ն անուանն ք՟սի. և իբրև եկին յանդիման եղեն, ասէ ցն՟ս բդեաշխն. ասասցէ՛ իւրաքանչիւրոք 'ի ձէնջ զանուն իւր և զազգ իւր և զպատիւ՛ իւր և զն՟։ Յայնժամ երանելին կոդրատոս՝ որ յետոյ ամենեցուն կայր, զի չէր 'ի կապելոց կարգի, վառեալ անյագ ա՟ծպաշտութե՟ն և ծարաւի ցանկութե՟ն առ երկնաւոր արքայութի՟ն՝ ձեղքեաց զբազմութի՟ն և յառաջ մատեաւ քան զա՟մ եղբարսն, երկուցեալ՝ թէ գուցէ ոք 'ի նոցանէ տկարանայցէ 'ի պ՟նատու՛ութ՟ի, և վատասրտեալ 'ի տանջանացն՝ ուրանայցէ. վասն զի և տեսանէր իսկ զոմանս յեղբարցն գունատեալս և ընդարմացեալս 'ի նեղութե՟ բանտին, և 'ի տեսլենէ բազմապատիկ տանջանացն՝ որք պատրաստեալ կային. ամին իրի զինքն յառաջ մատուցանէր յօգնականութ՟ի ո՟պ զ.քաջ նահատակ և զպատուազէն ք՟սի, և նախ քան զամենեսեան որպէս ախոյեան 'ի դիմաց բոլորից պ՟նի առնէր առ բդեաշխն մեծաւ ձայնիւ՛, ասելով. Քրիստոնեայք կոչիմք, այս է անուն մեր. իսկ պատիւ՛ և ազատութ՟ի մեր ամենեցուն մի է, ծառայք եմք ք՟սի յ՟սի երկնաւոր թագաւորին և աներևութին ա՟յ. և քաղաք մեր է երկնաւորն եր՟մ, յորում բնակեցուցանէ ք՟ս

ըն

զմտերիմ զօրականքս իւր. ահա լուար զամենայն. ա՛յս է մեր լիապէս պատասխանի
ա՟մ հարցուածոցդ ։

Ընդ այս ցասուցեալ սպասաւորաց աթենիին՝ յետս մղեին զկոդրատոս, և ը՟ դուռն սրահից արտաքս ձգեին. զի ո՛չ զքեզ ասեն հարցանել իշխանն, այլ զդուռս՝ որք կան առաջի նր՟ ։ Իսկ բդեշխին զարմացեալ ը՟ առն համարձակութի՝ ասէ ցդռնապանսն, յառա՛ջ ածէք զամբարհաւաճն զայն. թո՛ղ տեսցուք, թէ զի՛նչ արդեօք օգտեսցէ նմա յանդգնութի ժպրհութ՟էն ։ Յայնժամ կոդրատոս կրկին ևս յայսկոյս յայնկոյս արարեալ ինքնին զամբոխն և զեղբարսն՝ յօժարութ՟բ եկաց առաջի, և կնքեալ զինքն նշանաւ խաչի՝ ասէ ցբդեաշխն. Ինքնակամ յօժարութ՟բ կամ առաջի քո ո՛ բդեաշխ, յառաջամատոյց լեալ ը՟դէմ բանսարկուին՝ որ քև մարտնչի ընդ ծառայս քո. պատրա՛ստ եմ առ ա՟մ հնարս տանջանաց՝ որք գան 'ի վերայ իմ 'ի քէն. արդ արա՛ զի՛նչ կամիս. զի գիտասցես իսկ 'ի նմին 'ի փորձոյն, եթէ քո՛ զինուորքն անյաղթք են. քանզի առեալ մեր զկնիք նորա՝ կամք աւասիկ պատրաստք պատերազ-
մել ընդ մենքենայս քո ։

Զայրացեալ բդեշխին՝ ասէ ցնա բանիւք նախատանաց. ասա՛ ինձ աղաչո՛ւր դու (այս է սէգ՝ և ժանտ) նախ զանուն քո և ըզբախտ (4) ։ Ա՟նի եմ կոդրատոս. լուա՛ր յառաջագոյն զանուն մեր՝ թէ քրիստոնեա՛յք եմք. այլ զբախտն մեք ո՛չ գիտեմք, քանզի ծա-

ծառայ եմք տ՟ն մերոյ յ՟ի ք՟ի ։ Բդեաշխն ասէ ․ չէ՛ արժան քեզ քրիստոնեայ զանձն քո անուանել ․ վ՟ն զի սպանանէ զքեզ հրաման թագաւորաց ․ այլ զի տեսանեմ զքեզ այր իմաստուն և գեղեցիկ , ուստի և կարծեմ՝ թէ 'ի մեծամեծաց տոհմէ իցես , հաւանեա՛ ինձ , և ես գրեցից առ թագաւորն , և տաց քեզ բերել զիշխանութ՟ի դատաւորական ․ միայն թէ գոհացօ՛ղ լիջիր զա՟ծոյն ։

Կոդրատոս ասէ ․ մի՛ խաբիր և խժաբաներ ո՛վ բդեաշխ , չե՛ն բազում ա՟ծք , այլ մի ա՟ծ հայր՝ յորմէ ա՟մ ինչ ․ և մի տ՟ր յ՟ս ք՟ս , որով ա՟մ , և մեք նովաւ ։ Բդեշխն ասէ ․ ե՛ն և բազումք ա՟ծք , այլ թագաւորք ա՟մի երկոտասան ա՟ծքն են , որոց հաւանել պարտիս և երկիրպագանել ։ Իսկ կոդրատոս 'ի դէմս էած նմ՟ զհոմերականն առած , թէ չէ՛ բարիոք բազմաթագաւորութ՟ին , մի թագաւոր լիցի ։ Ասէ բդեշխն ․ զայդ ևեթ ընթերցեալ է քո առդեօք , և ոչ ակնարկեալ յայլ ևս տունս բանիցն հոմերոսի , զոր վ՟ն պոսիդոնի ասէ , թէ ժողովեաց զամպս , խռովեցոյց զծով ա՟մ հողմովք , ամպովք ծածկեաց , ահագին որոտաց հայր ա՟ծոց 'ի վերուստ ․ եկն պոսիդոն և շարժեաց զերկիր , զտրովացւոց քաղաքն և զնաւս աքայեցւոց ։ Ճոխագոյնս և վ՟ն արամազդայ գրէ , թէ ո՛րչափ քաջու՟իս արար ․ որովք իմանաս զմեծութ՟ի ա՟ծոցն ։

Ասէ երանելին կոդրատոս ․ ո՛րչափ ինչ ասաց հոմերոս զդից ձերոց , ճշմարի՞տ ասաց՝ թէ սուտ ։ Բդեշխն ասէ ․ ճշմարի՛տ ։ Կոդրարատոս ասէ . ապա ուրեմն ճշմարիտ են ասացեալքն նր՟ վ՟ն անառակութ՟եց և գարշպղծութ՟եց նոցին, որ ոչ ա՟ծոց վայելեն, այլ մոլի և պղծագործ մարդկան: Ես վ՟ն ձեր ամաչեմ, զի թողեալ զա՟ծ՝ նմանութ՟ն պղծոց դիմաց երկիր պագանէք . և եթէ կամիս, 'ի ձերոց իսկ քերթողաց հաւանեցուցանեմ քեզ՝ թէ դևք են գարշելիք՝ դիքն ձեր: Ցասեաւ բդեշխն և ասէ . դու լուտալ սկսար՝ համարձակութ՟բ առեալ յերկայնմտութ՟է իմմէ . և երկնչիմ թէ գուցէ ցաւ նուցու ինձ թագաւորն, վ՟ն զի թոյլ ետու քեզ՝ արհամարհելով զիմով իշխանութ՟բս այսպ՟ս բարբառել . այլ արդ բառնամ վաղվաղակի զայդպիսի համարձակութ՟ի քո: Ասէ վկայն . զիմ համարձակութ՟իս ո՛չ դու և ո՛չ թագաւորն քո և ո՛չ այլ ոք կարասցէ բառնալ յինէն :

Յայնժամ հրամայեաց բռնաւորն մերկացուցանել զնահատակն ք՟սի, և պրկել 'ի վ՟ր տախտակի, և հարկանել զնա քրքովք . մինչև ստիպեսցի ասել զանունն իւր և զբախտ : Եւ իբրև ոչ կարաց բդեշխն առնուլ պ՟նի 'ի բերանոյ նր՟, սպասաւորքն՝ որոց լուեալ էր յառաջագոյն զնմանէ, ասացին՝ թէ Կոդրատոս կոչի, և 'ի մեծ 'ի տոհմէ է : Ապա բդեշխն կամելով ուսանել զնա քաղցրութ՟բ, և նովաւ զայլսն, ասէ ցհարկանողսն . խնայեցէ՛ք 'ի դա, և 'ի վե՛ր առէք 'ի փայտէ այտի: Եւ ցԿոդրատոս ասէ . ա՛յր դու զի՞նչ արարեր դու զայդ . թշնամանել ետուր ըզ-

պա

պատիւ՟դ քո: Կոչեաց զնա Հուպ առ ինքն, և ասէ ցնա. կամեա՛ց Հաւանել մեզ. մի՛ ըդ-պատիւ՟ քո և զազգն անարգեր՝ կրօնիւք քրիստոնէից, յոր պատրեալ ես: Ասէ երանելին. ընտրեցի ընկեցիկ լինել ՚ի տան ա՟յ մանաւանդ՝ քան զբնակել ՚ի յարկս մեղաւորաց:

Ոդեշխին ասէ. Հաւանեա՛ և զոհեա՛ ա՟ծոցն, մանաւանդ զի պատուակից եւս ես մեծի Հռոմայեցւոց ծերակուտին. զի մի՛ իբրև զմի ոք ՚ի չարագործաց մեռցիս. զՀրամանս Թագաւորաց և զմեծ սինկղիտոսին գիտես, թէ քանի՛ բիւրք են արանց քաջաց՝ որ Հաստատեցին մի՛ ումեք կեալ ՚ի քրիստոնէից: Իսկ սբ՟ն կոդրատոս փոխանակ պատասխանւոյ զգլուխ սաղմոսացն երկրորդեաց. երանելի՛ է այր՝ որ ոչ գնաց ՚ի խորհուրդս ամպարշտաց, և ՚ի ճանապարհս մեղաւորաց ոչ եկաց, և յաթոռս ժանտից ոչ նստաւ: Ոդեաշխին ասէ. մի՛ այլաբաներ՝ զքեզ խաբելով ո՛վ կոդրատիէ. քանզի միապէս ՚ի վերայ ամենայն քրիստոնէից կայ Հրամանս այս, թէ աղքատ ոք իցէ՝ և եթէ մեծատուն, եթէ գձուձ՝ և եթէ պատուական. ո՛չ յոք խնայէ ատեանս:

Կոդրատոս ասէ. ա՛յդ այդպէս է. քանզի և ա՟ծեղէն գիրն ասէ. ո՛չ ծառայ և ո՛չ ազատ, ո՛չ մեծատուն և ոչ տնանկ, ո՛չ խուժ և ոչ սկիւթացի, ո՛չ Հելլենացի և ոչ յուդայեան. քանզի ամենեքեան մի եմք ՚ի տ՟ր: Արդ աղաչեմ զքեզ, զՀրաման Թագաւորացն քոյ և զսինկղիտոսին կատարեա՛ յիս. քանզի ես քրիստոնեայ եմ. և ազգ իմ և պատիւ առ տ՟ն իմում է, որ ողջամբ պահէ զպայծառութ՟ին իմ. և ո՛չ առ մարդկան, որ այսօր է, և վաղի՛ն ոչ ևս ։ Յայնժամ բդեշխն խռովեալ յանձն՝ սկսաւ գորովանօք խօսել խնայելով՝ ՚ի վ՟ր վայելչութ՟ե հասակի նորա. հաւանեա՛ ինձ ասէ և զոհեա՛, և վայելեա՛ ՚ի բարու՟ե կենացս և ՚ի պայծառու՟ե լուսոյս այսորիկ. և զայս ասացեալ արտասուեաց բդեշխն աղուեսաբարոյ՝ հանդերձ մեծաւ հառաչանօք, և փարշամակաւ զերեսն ջընջէր ։ Իսկ քաջն Կոդրատոս յանդիմանեաց զխարդախութիւն չարին՝ ասելով. մի՛ ինձ զդժնդակ վիշապին զխորամանկութ՟ին, և զբելիարայ մարդասպանի առաջի արկաներ զարտասուս. գա՛յլ յափշտակօղ ո՛չ կարասցես յափշտակել զծառայս ա՟յ ։

Յայնժամ վայրի մի ոմն ՚ի դատաւորաց՝ որ կայր անդ, մաքսիմոս կամ մաքսիմիանոս անուն, սաստեաց ս՟բյն, և ասէ. ա՛յ չա՛ր այր, տ՟ր իմ մեծավայելուչ ողորմի քեզ, և դու թշնամանես զնա ։ Կոդրատոս ասէ. զինքն լացցէ և զօր ծննդեան իւրոյ. քանզի ես չեմ լալո՟յ արժանի. այլ դու ո՛վ ես՝ որ առաջի ն՟ր բարբառիս. չա՛ր է մեզ բդեաշխդ. ապա եթէ և դու կամիս դատել, տ՟ր խափանեսցէ ըզքեզ ։ Յայնժամ և աստերիոս վաճառապետն ասէ. ՚ի բախտ քո երդուեալ տէ՛ր իմ բդեաշխ, եթէ զդա այդպէս թողուս, ո՛չ ակնածէ և զինքնակալ թագաւորն թշնամանել,

նել, և զա՟ծսն հայհոյել, և ածել ՚ի վ՟ր մեր վտանգ մեծ ։ Տեսեալ վկային ք՟սի՝ եթէ բազմացան դատախազք իւր և դատաւորք՝ ասէ ․ բարւոք ասաց ա՟ծեղէն գիրն ․ ընդէ՞ր ամբարհաւաճեցան հեթանոսք, և ժողովուրդք խորհեցան ՚ի սնոտիս ․ յանդիման եղեն թագաւորք երկրի, և իշխանք ժողովեցան ՚ի միասին զտ՟նէ և զօծելոյ ն՟ր ․ քանզի և ահա այժմ յամպարիշտ և ՚ի սնոտի իշխանացս դատի ք՟ս ։

Հրաման ետ բդեշխն և ասէ ․ մերկացուցէ՛ք զամպարհաւաճդ զայդ, և դարձեալ հարէ՛ք չոր արջառաջլօք, զի հնազանդեսցի տ՟րանց մերոց թագաւորաց ։ Իսկ երանելին ՚ի տանջանսն գոհանայր զտ՟նէ, և ասէր ․ Փա՛ռք քեզ տ՟ր ա՟ծ իմ յ՟ս ք՟ս, զի արժանի արարեր զիս զանարժանս և զմեղաւորս՝ վ՟ս քո ս՟բ անո՛ւանդ զայս չարչարանս կրել ․ զի և ես թո՛ւակից եղէց ծառայից քոց ։ Գոհանամ զքէն տ՟ր, և առաջի անկեալ աղաչեմ զքեզ ա՟ծ իմ, կատարեա՛ զընթացս իմ անո՛ւամբ քով ս՟բվ, և կնքեա՛ զխոստովանութ՟իս իմ շնորհօք ս՟բ հոգւոյդ ․ պարգևեա՛ ինձ միտս հանճարեղս և անխոտորնակ հաւատս ․ իմաստնացո՛ զիս անչափ իմաստութ՟բ քով ․ պահեա՛ զիս աջով քով բա՛րձրեալ ․ ա՛յժմ է ժամանակ փրկութ՟ե և օգնութ՟ե ․ ա՛յժմ է ժամանակ խոստմանց քոց ․ ընկա՛լ զաղաչանս իմ ․ զի և յիս փառաւորեսցի սուրբ անունդ քո ․ կատարեա՛ զտենչ ոգւոյս, յաջողեա՛ զյօժարութ՟իս իմ, մատո՛ զիս առ հայրն

քո , և խոստովանեամ զիս առաջի նր՟ որ՟ իմ
յս՟ քս՟ :

Եւ այնչափ հարին զթիկունս երանելւոյն , զի յօգնեալ դահճացն՝ հինգ անգամ փոխեցան . և ողն ս՟բյն 'ի վեր քան զթիզ ուռուցեալ բարձրացաւ . և արիւնն իբրև զգետ իջանէր հանդերձ պատառովք մարմնոյն : Ասէ ցնա բդեշխն . հաւատա՞ս դոնեա այժմ յա՟ծսրն : Իսկ երանելի վկայն ք՟սի ասէ . կուռք հեթանոսաց ոսկի և արծաթ են՝ գործք ձեռաց մարդկան . բերան ունին , և ոչ խօսին . աչս ունին , և ոչ տեսանեն . ականջս ունին , և ոչ լսիցեն . ունչս ունին , և ոչ հոտոտեսցին . ձեռս ունին , և ոչ շօշափեսցեն . ոտս ունին , և ոչ գնասցեն . և ոչ բարբառեսցին կոկորդք նց՟ . նման նց՟ եղիցին արարիչք նց՟ , և ա՟մ յուսացեալքն 'ի նս՟ :

Առ այս ասէ բդեշխն . կարծեմ , խաբէլ զմեզ խորհիս , զի այդպէս խաւարային բանս խօսիս . հաւանեա՛ ինձ , և զոհեա՛ ա՟ծոցն : Ս՟րբն ասաց . որովհետև լոյսն քեզ խաւար թուի , և ճշմարտութ՟ին՝ մոլորութ՟ի , պայծառ և յայտնի բանի՛ս լո՛ւր . գիտութ՟ի լիցի քեզ , զի զա՟ծսն քո ես ոչ պաշտեմ , և հրամանի կայսեր և սինկղիտոսին ո՛չ հաւանիմ . արդ զոր ինչ կամիս առնել՝ արա՛ վաղվաղակի , և յուղարկեա՛ զիս առ երկնաւոր թագաւորն : Բդեշխն ասէ . մեծ անամօթութ՟ի էարկ 'ի քեզ ճակատագիրն քո (օրհասական) . ա՟ծովքն (երդուեալ) , զի ոչ խնայեցից 'ի քեզ . այլ նորօրինակ տանջանօք և դառն
մահ-

մահուամբ սատակեցից զքեզ ։
Եւ ̅զի տարաժամե̅լ էր օրն , հրամայեաց զա̅մ կալանաւոր քրիստոնեայսն անդրէն 'ի բանտ արկանել ․ տարայք ասէ ը̅ Նոսա և զկոդրատոս , և մանր խեցի տարածեալ 'ի գետին՝ արկեցէք զնա 'ի վերայ ․ և վէմ մի մեծ 'ի վ̅ր լանջացն եդեալ , և զոտս 'ի կոճեղ պնդեալ ը̅ չորս ծակս՝ հանդերձ շղթայիւք 'ի պարանոցն , թողէք անխնամ ։
Եւ յայս անբերելի տանջանս եկաց երանելին կոդրատոս զբազում աւուրս , իբրև արդարև քաջ նահատակ բարեպաշտութեան՝ ժուժկալութ̅բ համբերեալ , և ոչ իւիք փոխեալ 'ի հաստատութե̅ն՝ որ 'ի ք̅ս ։ Ուր եղեն ոմանք 'ի վատասրտաց , որք յառաջին տանջանսն անկան 'ի հաւատոց ․ վ̅ոյ ակնունէր բդեշխն ձգել 'ի կամս իւր և զկոդրատոս և զորս ը̅նմա՝ ողոքանօք և լկանօք ։
Յետ այսորիկ չու արար պերինիոս բդեշխն 'ի Նիկիա , հրաման տուե̅լ և զկապեալսն զկնի տանել ․ և մտեալ 'ի քաղաքն՝ կարգեաց և անդ ատեան ահարկու , և ետ ածել զկալանաւորսն զառաջեաւ ։ Իսկ ս̅բ վկայքն գային մեծաւ ուրախութ̅բ՝ ունելով յառաջընթաց զերանելին զկոդրատոս զպանծալի նահատակ ․ քանզի զո՛ր օրինակ առաքինի զօրավար պանծացեալ յիւր զօրութե̅ն , և 'ի ճակատամարտ մտեալ փայլուն սպառազինօք , խուժոռ հայեցի և ահագին երեսս ցուցանիցէ՝ պակուցանելով զգունդս թշնամեաց , այսպէս և նա տեսողացն երևէր յասպարիզի

նահատակութ՟ե , և իբրև զգեղեցիկ ինչ և պատուական զարդ զկապանսն զինքեամբ արկեալ՝ հրճուէր և ուրախութ՟բ կայր 'ի մէջ ատենին · մինչև զարմանալ հելլենացւոց փիլիսոփայիցն ը՟ քրիստոնէիցն արութ՟ն ժուժկալութ՟ե և ը՟ առաքինի համբերութ՟ն , և ասել ցմիմեանս · արդարև մե՛ծ են հաւատք քրիստոնէից , և առաջիկայ յոյս ն՟ց · վ՟յ և զայս չարչարանս հեշտեաւ տանին · և 'ի հաստատիլ բազմաց յոյս խորհուրդ 'ի վերին տուչութ՟ե՝ հաւատացին 'ի ք՟ր , և յաւելան 'ի խումբն կոդրատոսի՝ փոխանակ ուրացելոցն ։

Ապա սկսաւ բդեշխն միւսանգամ հարցափորձել զպարագլուխն առաքինեաց զկոդրատոս · զոհեա՛ ասէ ա՟ծոց՝ կոդրատիէ ։ Պատասխանի ետ վկայն , ծառայ եմ ք՟սի՝ որ ասաց մարգարէիւն , ա՟ծք՝ որ զերկինս և զերկիր ոչ արարին , կորիցեն ։ Բդեշխն ասէ · քանզի հաւանել պարտ է հրամանաց թագաւորաց , և ո՛չ ք՟սին՝ որ ա՟ծ կոչեն ։ Կոդրատոս ասէ · ես թագաւորին իմում ք՟սի հաւանիմ , և ո՛չ մարդկան՝ որ ոչ գիտեն զա՟ծ · աղօթս վ՟ն նոցա առնել գրեալ է մեզ , այլ զոհել դից ն՟ց ամենևին ո՛չ · և զի՛նչ օգուտ առնէք դուք կայսեր՝ զոհելով պիղծ կռոց · այլև բազումևս վնասէք , և նախ զանձինս ։

Ասէ բդեշխն · եթէ աղօթս առնես վ՟ն թագաւորի , պա՛րտ է և հրամանաց նորա լսել և հնազանդ լինել · քանզի և գրեալ է ասէք յօրէնս ձեր , հատուցանել զկայսերն՝ կայ֊

սեր , և զո՟յն՝ ո՟յ ։ Կոդրատոս ասէ․ զա՟մ պատշաճական պարտամն՝ որ յերկրէ , որ ինչ պարտ էր՝ լցի կայսեր․ փութամ և զո՟յն իմումն լնուլ զա՟մ բարեպաշտութ՟ի․ այլ արդ մեզ քրիստոնէիցս հրամայեաց թագաւորն ձեր կամ զոհել կամ մեռանել․ և մեք պատրաստ եմք վ՟ն խոստովանութ՟են որ 'ի ք՟ս՝ ոչ միանգամ մեռանել , այլ բիւր անգամ ։

Բդեշխն ասէ․ տեսանե՞ս , ո՞րչափ բազմութ՟ե քրիստոնէից զոհեաց ա՟ծոյն․ միթէ դու ք՟ զնոսա լաւագոյն ինչ իցես ։ Պատասխանի ետ քաջ նահատակն․ և՛ առաւել լաւագոյն քան զնոսա ամենեսին , և՛ իմաստնագոյն եմ , եթէ ոչ զոհեմ․ բայց սակայն ո՞ւր են՝ որ զոհեցին , կամիցի տեսանել ։ Յայնժամ ետ կոչել բդեշխն 'ի մի վայր զուրացեալսն , զի թերևս տեսցէ զն՟ս կոդրատոս և հաւասարեսցի ը՟ նոսա ։

Իսկ ս՟բն հայեցեալ ը՟ ն՟ս և պշուցեալ զայրագին ցասմամբ՝ ասէ․ հե՛գք և ամենաթշուառք վ՟ն որո՞յ անցից այդչափ վաղվաղակի սատանայի մատնեցիք զձեզ , լքե՟լ զկարգն ձեր , և ուրացեալք զտ՟րն ք՟ս , որ վ՟ն մերոյ փրկութ՟ե փրկանք եղեալ՝ գնեաց զմեզ արեամբն իւրով․ ո՞չ ուսայք զմեռելոց յարութ՟ին , և զմիւսանգամ գալուստն ք՟սի հանդերձ փառօք և հրեշտակական զինուորութ՟բ՝ դատել զտիեզերս , և տանել զարդարսն 'ի կեանսն յաւիտենից , և զմեղաւորսն մատնել 'ի հուրն յաւիտենից և 'ի խաւարն արտաքին․ ուր որդն նոցա ոչ վախճանի , և լալումն և կրճումն ատամանց անանցանելի ։ Ո՜ ի՞նչ պ՟խնի տայցէք 'ի վտանգի աւուրն այնորիկ, յորժամ զօրք հրեշտակաց երկիւղիւ և դողութ՟բ կայցեն առաջի. և եթէ նոքա սոսկան տեսանել զմեծ և զահագին ատեանն, զի՞նչ գործիցեն դեւք և որք հաղորդեն դիւաց ։ Բացէ՛ք զաչս սրտից ձերոց, և տեսէ՛ք՝ թէ ուստի՞ անկայք. զյաւիտենից թագաւորն թողէք, և անպիտան ծառայի վաճառեցայք՝ գերի եղեալ բանսարկուին, որ բնակէ յանձին իշխանին. և սա որո՞վ ծառայ՝ որ զտ՟րն իւր արտաքոյ գտեալ՝ հարկանէ զծառայակիցն իւր և սպանանէ. բայց տ՟րն եկեալ կտրեսցէ զնա ը՟ մէջ, և զմասն նորա ը՟ անհաւատս դիցէ ։ Գիտացէ՛ք թէ զի՞նչ գործեցի՛ք. զի յառժամանակեայ տանջանացն երկուցեալք՝ 'ի յաւիտենից տանջանս զանձինս մատնեցի՛ք. դուք ձեզէն տեսջի՛ք զլինելոցն ձեզ յարդար դատաւորէն ։ Ոչ լուա՛յք ձայնի նորա՝ որ ասաց, եթէ մի՛ երկնչիք յայնցանէ՝ որ սպանանեն զմարմին, և զոգի ոչ կարեն սպանանել. այլ երկերո՛ւք մանաւանդ յայնմանէ՝ որ կարող է զոգի և զմարմին կորուսանել 'ի գեհենի ։

Յայն բարբառ երանելւոյն՝ 'ի սոսկումն և 'ի զեղջ եկեալ ուրացելոցն առ հասարակ, միաբան սկսան աղաղակել և ասել հանդերձ արտասուօք. երկեաք տ՟ր 'ի տանջանաց, և խաբեցաք իբրև զանբան անասունս. և իբրև զոչխարս 'ի մէջ գայլոց օգտեալ վարատեցաք. ածին փակեցին զմեզ մեղքն մեր յորոդայլծ չարեաց. կամեցեալ մեր կեալ զժամանակեայ կեանս՝ մեռաք յաւիտենականին. և զի՞նչ գործեսցուք այսուհետև թըշուառականքս, ոչ գիտեմք։

Յայնժամ երանելին կոդրատոս լցեալ մեծաւ ուրախութե̄ 'ի վերայ դարձի նոցա, և տեսեալ զարտասուս նց՝ ասաց ցնոսա. քաջալերեցարո՛ւք եղբարք, քանզի ազնուագութ է և ողորմած տ̄րն մեր յ̄ս ք̄ս, անոխակալ է և գթած. անկերո՛ւք առաջի նորա հանդերձ բազում արտասուօք, և հաստատո՛ւն կացէք այսուհետև 'ի խոստովանութե̄ ք̄սի, և իւրով արեամբ իւրաքանչիւր ոք 'ի ձէնջ սրբեսցի 'ի մեղաց. թէև տկարութե̄ մարմնոյ երբեմն հերքեցայք 'ի պատերազմի, այլ այժմ արի խորհրդովք յաղթեցէք առաքինաբար։ Իսկ նոցա կական բարձեալ՝ լային մեծաձայն, և ընկեցեալ զինքեանս յերեսս 'ի վերայ երկրին, և հող 'ի գլուխ եղեալ՝ ծեծէին քարամբք զկուրծս իւրեանց. և այնչափ եղև տեսիլն աշխարհելի, մինչև քաղաքն ա̄մ ընթացաւ 'ի տեղին. և առ հասարակ ողբակից լինէին նց, ոչ միայն քրիստոնեայք, այլև հեթանոսք և հրէայք, արք և կանայք, 'ի փոքուէ մինչև ցմեծն. մինչև լնուլ բազմութե̄ զհրապարակս և զփողոցսն և զտանիսն։ (5)

Յայնժամ դառնացեալ բդեշխին՝ հրամայեաց կախել զկոդրատոս 'ի տեսիլ ամենեցուն, և քերել, և ջահս մատուցանել 'ի կողս նորա։ Այլ քաջն կոդրատոս անփոյթ

առատարեալ զտանջանսն՝ մեծաւ համարձակութ՟բ քաջալերէր զզղջացեալսն, և ասէր. այդ՟պս բարիո՛ք է եղբարք, աղօթեցէ՛ք յերկար առ տ՟ր. քանզի ողորմած է, լսէ ձեզ :

Եւ յասել նոցա, թէ չեմք արժանի անուանել զ՟տր անունն ք՟ի, վ՟ն զի թշնամանեցաք զնա, անդրէն զօրացուցանէր զն՟ս ս՟բ վկայն, և ասէր. կարդացէ՛ք եղբարք կարդացէ՛ք. բարերար է տ՟րն մեր և ա՟ծն. մերձ է առ այնոսիկ՝ որ կարդան զնա յօգնականութ՟ի. մի՛ յուսահատիք եղբարք. մօ՛տ առ իս եկայք, և քաջալերեցարո՛ւք, և յուսացարո՛ւք 'ի տ՟ր :

Եւ նոցա ընթացեալ անկանէին առաջի նորա ուժգին հառաչանօք, մինչև յարտասուս շարժել և զանողորմ զինուորս և զ՟ամ սիրտս քարեղէնս :

Իսկ ս՟բն կոդրատոս 'ի կախաղանէ անտի համբարձեալ զերեսս իւր յերկինս՝ գոչէր ասելով. Տ՟ր ա՟ծ մեծ և ահաւոր, բարերար և ազնուագութ, որ զմիածին որդիդ քո զ՟տր մեր յ՟ս ք՟ս ծագեցեր մեզ արեգակն արդարու՟ե, և լուսաւորեցեր զմեզ զխաւարեալքս յառաջագոյն, և նովաւ զքեզ հաշտեցուցեր ընդ մեզ, և նովաւ կոչեցեր զմեզ 'ի կոչումն ս՟բ՝ ողորմա՛ծ գթած երկայնամիտ բազումողորմ և ճշմարիտ, որ զանց առնես զմեղօք, և ջնջես զամպարշտութ՟իս մեր. վ՟ն առաւել մարդասիրութե՟դ քո տ՟ր արտասահմա՛ն արա զնախաչարն և զմարդասպանն, զբարիատեացն և զնախանձոտն սատանայ, ընդ հայրն կռոց և զառաջնորդն խաւարի. և ըն-

ընկա՛լ զզօրականս քո՝ որք սակաւ մի դթեցին որոգայթիւքն սատանայի, և այժմ ապաւինեցան 'ի քո ամենազօր բարերարութի՟դ. մի՛ բարկանար նց՟ ոպ՟ ապստամբաց, այլ՝ հա՛շտ ակամբ ընկալցիս զնս՟, ոպ՟ և զիս զմեղաւորս 'ի պատարագ քեզ ընդունելի: Արժանի՛ արա զնս՟ խառնիլ յերկնաւոր և 'ի ճշմարիտ գունդն քո, և ցո՛յց նց՟ նշան բարութե՟, թէ ոչ գարշեցար, այլ ողորմեցար և ընկալար զապաշխարօղսն: Տր՟ յս՟ քս՟ լո՛ւր ինձ ծառայի քում, և փոխանակ ընդ նոցա ա՛ռ զիմ զհոգիս. զի փառաւորեսցի ս՟բ անուն քո յաւիտեան:

Եւ 'ի կատարել ս՟բյն զաղօթս, և 'ի վերառաքել ա՟մ եղբարց միանգամայն ձայնի՛ մեծաւ զամէնն, երևեցան անդ սքանչելիքն ա՟յ. քանզի յանկարծակի շիջան զամբարքն՝ որովք այրէին զկողս երանելւոյն կոդրատոսի, և ձեռք դահճացն լուծան. և ամպ լուսոյ 'ի վերայ դասու ս՟բցն երևեալ լինէր. իսկ ը՟ հակառակն խաւար սաստիկ և ծուխ դժնեայ 'ի վերայ բդեշխին և հեթանոսացն տարածեցաւ. մինչև յահէ անտի տագնապիլ անհաւատից, և կարծել՝ եթէ քաղաքն կործանելոց իցէ: Եւ յետ բազում լռութե՟ եղելոյ՝ լսելի լինէր ձայն հրեշտակաց, որք օրհնէին և փառաւորէին զա՟ծ. յորմէ՛ 'ի միտ առին ա՟մ հաւատացեալքն, եթէ մեծ ուրախութի եղև յերկինս 'ի վերայ դարձելոցն յապաշխարութի:

Եւ յետ երկուց ժամուց անցելոյ՝ առ սա-

կաւ սակաւ խաւարն լուծանէր ․ և տեսանէին հեթանոսք զլոյսն՝ որ տակաւին կայր զսբ՟վքն ․ և որք միանգամ ցայն վայր գտանէին անդարձ յուրացութե՟ , սկսան և նոքա մեծաւ ձայնիւ՛ և լալով գոչել առ ա՟ծ ․ մեղաք տ՟ր , քաւեա՛ զմեղս մեր ․ անօրինեցաք , հաշտեա՛ ը՟ մեզ ։ Երկուցեալ բդեշխին՝ թէ գուցէ և հեթանոսք առհասարակ դարձցին ՚ի քրիստոնէութի՟ , փութացոյց վաղվաղակի զդահիճսն , զի զամենեսին՝ որք յարեցան ՚ի կոդրատոս , տարցին ՚ի բանտ հանդերձ նովաւ ․ և բազմութի՟ քաղաքին զհետ երթայր նց՟ մինչև ՚ի դուրս բանտին ․ և ապա հաղիւ՛
ուրեմն քակեալ ցրուէին բռնութբ՟ ։

՚Ի վաղիւ՛ անդր նստեալ բդեշխին յատեան՝ հրամայեաց բերել առաջի իւր զն՟մ բանտարկեալ քրիստոնեայս ․ և հարցեալ և քննեալ ստուգութբ՟ զմիտս նց՟ , եթէ պատրաստ են մեռանել վ՟ն անուանն ք՟սի , հրամանն ետ կապել զամենեսեան , և յիւրաքանչիւր գաւառս տանել , և անդ այրել կենդանւոյն յահարկութի՟ գաւառականացն առհասարակ ։ Եւ սբ՟ վկայքն երթային մեծաւ ուրախութբ՟՝ սրտապնդեալք յերանելւոյն կոդրատոսէ , և փառաւոր առնէին զա՟ծ՝ գոհանալով ՚ի վ՟ր անակնկալ փրկութե՟ն ․ և այնպէս հասեալ յիւրաքանչիւր հայրենիս՝ կատարեցան հրով ՚ի ք՟ս ․ որոց անուանք
գրեալ են ՚ի դպրութե՟ կենաց ։

Իսկ զքաջ նահատակն զկոդրատոս հանդերձ այլ ես թուով առաքինի ընկերօքն հրամայեաց տանել առաջի իւր 'ի կողմն հելլեսպոնտեայ՝ ուր ինքն երթալոց էր. և հասեալ բդեշխին 'ի քաղաքն ապամիոյ բիւթանացւոց՝ զոհս մատուցանէր դարշելի կռոցն. և բռնադատէր անդրէն զկոդրատոս 'ի կամս իւր. զոհեա՛ ասէ այսուհետև ածոցն, զի ապրեսցիս 'ի տանջանաց՝ որ մնան քեզ և որոց է քեզ: Կոդրատոս ասէ. քրիստոնեայ եմ, և ոչ զոհեմ դիւա՛ց: Հայեցեալ բդեշխին յամ մասունս մարմնոյ նր խանձողեալս և քանցեալս իբրև զպատառատուն ինչ ընդգեստ՝ զարմանալով ասէր ցիւրսն. այլ զի՞նչ ևս տանջանս մատուցից բռնամահիս այսմիկ, որ ինքնին 'ի մեռելոց համարի է. և զօրականքն տարակուսեալ կային, և ոչ գիտէին տալ պխնի. քանզի տեսանէին՝ եթէ ոչ ևս գոյր 'ի մարմնի նորա տեղի ողջ առ 'ի ներքոյ արկանել տանջանաց:

Յայնժամ բռնաւորն խրատու դիւ՛ին հնարեցաւ նորատեսիլ չարչարանս. հրամայեաց բերել քուրձ, և արկանել 'ի ներքս զկոդրատոս. ապա ետ բառնալ խորափիտ մի իբրև զանդ, և անդ ընկենուլ զվկայն, և սանդիտոռամբք ծեծել զնա: Իսկ իբրև սանդահարեցին զնա յժամ մի, ետ հանել զմարմին նր 'ի քրձէն. քանզի համարէր՝ թէ մեռաւ: Իսկ կենդանին նահատակն՝ որ անմռունչ տարաւ այնմ քստմնելի հարուա՛ծոց, իբրև ոչինչ զգացեալ ցաւոցն՝ կանգնեցաւ եկաց առաջի իշխանին (6): Ասէ ցնա բդեշխն. և ո՞չ զգացեր տանջանացդ: Իսկ սբն ոչ ետ նմ

պխնի

պլ՟խնի ․ այլ ասէր ․ փա՛ռք քեզ տ՟ր յ՟ս ք՟ս ․ քանզի նետք տղայոց եղեն վէրք ն՟ց , և տկարացաւ 'ի ն՟ա զօրութ՟ի ն՟ց ․ դու ես՝ որ զօրացուցեր զիս ա՟ծ իմ 'ի փառս քոյոյ զօրուե՟դ ։

Բարկացաւ բդեշխն և ասէ ․ զա՟մ անդամս քո յօշ յօշ կոտորեցից թ՛շուա՛ռական , թէև 'ի կախարդութ՟իդ քո վստահ ես ։ Եւ վկայն դարձեալ ասէր ․ օրհնեա՛լ է ա՟ծ իմ ։

Յետ այսորիկ չու արար բդեշխն 'ի կեսարիա բիւթանացւոց , որ և կոչիւր ապողոնիա (հանդոյն կեսարեայ պաղեստինու) , յառաջոյ իւրմէ յղեալ զկոդրատոս (7) , և անդ ևս յետ զոհելոյ կռոց իւրոց գարշելեաց՝ կոչեաց զվկայն , և ասէ ցնա ․ շատացի՛ր այսուհետև տանջանօքդ՝ զոր կրեցեր ․ և մատուցե՟լ զոհեա՛ ա՟ծոցն ։ Կոդրատոս ասէ ․ վ՟ս զի խաղացեր ը՟ն իս տանջանօք , կարծիցե՞ս արդեօք՝ եթէ հաւանեցիմ քեզ ․ արա՛ զոր առնես ․ թո՛ղ տեսցուք , դո՞ւ յաղթեսցես , եթէ անյաղթելի հաւատք ճշմարտութեան ։

Յայնժամ հրամայեաց բդեշխն պրկել զնա 'ի վ՟ր քարանց , և դնել 'ի վ՟ր ձեռաց և ոտից ն՟ր վէմս մեծամեծս , և հարկանել զնա քքովք յերկար ։ Իսկ երանելին սաղմոսէր 'ի տանջանսն և ասէր ․ բազում անգամ մարտեան ը՟ն իս 'ի մանկութէ՟ իմմէ , և ինձ ոչ զօրեցին ․ 'ի վ՟ր ողին իմոյ հարկանէին մեղաւորք , այլովքն հանդերձ ։ Եւ իբրև կատարեաց զսաղմոսն , ասէ բդեշխն ․ ծեծեացի՛ յերկար , վ՟ս զի ոչ զգայ ։ Նա պլ՟խնի ս՟բն կոդրատոս ․ հա՛ր հա՛ր զմարմինս , զոր համարիս տանջել . քանզի զոգիս ուրախ առնեն յոյժ , որ՟պ դու ոչ կարծես ։ Բդեշխն ասէ . չարի դիւ՟ի տիրեցեր արդեօք ո՛վ թշուառական ։ Սբ՟ն ասէ . 'ի փրկչէն իմ քս՟ երդուեալ, և առաւել չարի , և ոչ միոյ միայն , այլ՝ ա՟մ զօրութե՟ն չարադիւ՟ին ո՟ր եղէ յ՟իւ ք՟իւ տ՟է մերով . նմա փառք յաւիտեանս ։

Եւ իբրև զամենն աղաղակեցին եղբարքն՝ որ կցորդ էին կապանաց սո՟յն , բարկացեալ յոյժ բդեշխին , և թողել զերանելին կոդրատոս՝ հրամայեաց զերկուս ոմանս 'ի նոցանէ ունել , որոց անուանք էին Սատուռնինոս և Ռուփինոս , և մատնել 'ի տանջանս քերանաց ։ Յայնժամ կախեցին զերկոսին զն՟ս զմիօջէ փայտէ և քերեցին եղնգամբք և գզեցին զմարմինս ն՟ց , մինչև սկսան անդամք նոցա վայթիլ ։ Իսկ երանելիքն 'ի տանջանս անդ աղաչէին զսբ՟ն կոդրատոս և զա՟մ մօտակաց եղբարսն՝ աղօթս առնել վ՟ս ն՟ց . և ինքեանք 'ի կախաղանէ անտի կարդային յերկինս , և ասէին . տ՟ր յ՟ս ք՟ս որդի ա՟յ բարձրելոյ՝ առաքեա և մեզ զաւ 'ի քէն օգնականութիւնդ , և պաշտպան լեր խոնարհ ծառայից քոց ա՟ծ մեր , և տուր մեզ զհամբերութիւն և զյաղթութիւն մինչև իսպառ ։

Եւ յետ բազում ժամուց՝ իբրև ոչինչ ետուն պ՟խնի , քանզի 'ի սաստիկ տանջանացն խօսել իսկ ոչ կարէին , յայնժամ բդեշխն հրամայեաց առնուլ և տանել զն՟ս 'ի պողոտայն՝ որ հանէր յեղէսպոնտոսն , և անդ սրով սպանանել . և այնպէս կատարեցան 'ի ք՟ս երկոքին սբ̃ վկայքն այն ։ Իսկ արք ա̃ծասէրք ՚ի մի վայր ժողովեալք՝ ետուն ոսկի դահճացն , և առեալ զպատուական նշխարս նց̃՝ բերին յիւրաքանչիւր քաղաք, և եդին մեծաւ պատուով ՚ի պահարանս ։

Իսկ զերանելին Կոդրատոս հանդերձ այլովք ընկերօքն հրամայեաց բդեշխն բերել զկնի իւր յապողոնիդա (որ և ապողոնիադա) · ուր մտեալ ՚ի մեհեանն ապողոնի՝ բռնադատէր զսբ̃սն ՚ի զոհ գարշելի դիւացն · և ասէր ստիպաւ ցկոդրատոս · հաւանեա՛ այսուհետև ա՛յր դու , և ՚ի մոլորութենէդ յայդմանէ ՚ի բա՛ց լեր · ընդէ՞ր թշնամանես զպատիւ քո և զազգ · ծանի՛ր զա̃ծսն և կեա՛ց · և ես հրամայեցից բժշկաց դարմանել զքեզ · և եթէ նք̃ տկարանան , մատի՛ր առ բժշկապետ ա̃ծն ասկղեպիոս , և նա բժշկէ զքեզ · և ՚ի մի՛տ առ զզօրութիւն ա̃ծոցն , և երկի՛ր ՚ի մեծութ̃է նց̃ , ՚ի մեծէն ապողոնէ , և ՚ի դիցազն հերակղէ , և ՚ի թագաւորէն ամենեցուն յարամազդայ , և ՚ի հզօրէն արեսէ , և ՚ի ծովապետէն պոսիդոնէ · ո՞չ արդեօք նաւեցեր ուրեք , և ծանեար զնր̃ ահն · երկի՛ր պագ արեգական · միթէ և նա մեռա՞ւ , ո̃պ և դու հայհոյես · կամ թէ չի՞ցէ յերկինս ։

Յայնժամ զայրացեալ սբ̃յն Կոդրատոսի յոգի իւր՝ ետ պատասխանի և ասէ համարձակ · ես երկիր պագանեմ ճշմարտի և աներևութին ա̃յ , և միածնի որդւոյ նր̃ յս̃ի ք̃սի տ̃ն մերոյ և փրկչի · և ՚ի նր̃ սպառնալեաց երկնչիմ ,

չիմ, և յամենազօր ա՟ծութե՟ ն՟ր ևեթ սարսեմ. և ոչ ուրանամ զանուն անճառ զօրութե՟ ն՟ր. մեռելոտի կռոց ոչ հաւանիմ, և 'ի դիւաց ոչ երկնչիմ. զգործս ձեռաց մարդկան արհամարհեմ, այլև զքեզ իսկ՝ որ զիշխանութի՟դ ունիս 'ի վ՟ր իմ. քանզի ես յետ աւուրց տասանց երթամ առ տ՟րն իմ. և դու չարաչար դառնութե՟ վախճանեսցիս վատթարագոյն քան զանբանս. զի ոչ ծանեար զճշմարիտն ա՟ծ՝ որ զկեանսդ շնորհեաց քեզ. որդի՛ սատանի, և եղբայր բելիարայ, հազորդ դարշելի դիւաց, անմտագոյն քան ըզխոզ, մոլեկան շուն, արիւնարբու վիշապ, վայրենագոյն քան զգազանս մարդակերս. ո՞չ ամաչես զոհ մատուցանել այդչափ բազմութե՟դ սնոտեաց, որք ոչինչ ճաշակեն. խոհակերք ձեր պարկեշտագոյն են քան զձեզ, զի նոքա առ տնին յենուն պարկեշտութե՟ 'ի վայելել մարդկան՝ և ոչ դիւաց. դուք քարանց զոհէք, և դուք ձեզէն երգիծանիք. արդ եկեսցէ 'ի մէջ ընդունիչ զոհին ձերոյ, երևեսցի՛ երբէք և խնդրեսցէ ինքնին, ընկալցի՛ և կերիցէ. թո՛ղ ասասցէ քարեղէն ա՟ծդ քո՝ զի՞նչ կամի թէ զոհեսցէ ոք նմա. ա՞յծ, եթէ արջառ, եթէ հաւ. ամաչեցէ՛ք որդի՛ք ամօթոյ, զի դուք մոլեկանք էք, և կարծէք զմեզ մոլեկանս լինել:

Առ այս կարկեցաւ իշխանն, և առ դառնութե՟ սրտին ոչ գիտէր թէ զի՛ գործեսցէ. ապա անդրէն զառածանէր՝ կարծելով տանջանօք նուաճել զանյաղթ վկայն ք՟ի. հրաման ետ դահճաց քացախօ և աղ ցանել 'ի վ՟ր վիրաց ս՟բյն , և մազեղէն խորգով շփել . և շողացուցեալ երկաթս կ՟մ շամփուրս մատուցանել 'ի կողս ն՟ր : Իսկ երանելւոյն Կոդրատոս քաջութ՟բ համբերէր ցաւոցն , և կայր յաղօթս հեզիկ . շրթունքն միայն շարժէին , և զձայն ոչ ոք լսէր 'ի նմանէ ամենեւին . և իբրև վաստակեցան դահիճքն , յակնարկել բդեշխին իջուցին զս՟բն 'ի տանջանարանէ : Եւ 'ի վաղի՟ անդր դարձեալ յուղի անկեալ բդեշխին գնալ 'ի Յելլեսպոնտոս՝ ետ տանել յառաջոյ զԿոդրատոս անօթի ամենեւին՝ բարձեալ 'ի վ՟ր սայլի : Եւ իբրև հասին 'ի գետն Ռինդակ ('ի սահմանս Միւսիայ) , ել ընդ առաջ բդեշխին իշխան կողմանցն այնոցիկ բազում ամբոխի՟ իբրև 'ի պատճառս պատու՟ոյ , այլ ճշմարտութ՟բ առ 'ի հանդիպում՟ն ծառային ա՟յ Կոդրատոսի . զի ցանկային տեսանել զառաքինի նահատակն , որոյ համբաւ վկայուե՟ն հասեալ էր յասիա , և սփռեալ ը՟ բազում տեղիս :

Արդ եկեալ բդեշխին՝ ագաւ այն օր 'ի տաճարագիւղ անու՟անեալ աւանի (այն է ըստ յունաց Երմուպօլիս , կ՟մ Յերոպօլիս) . և ը՟ առաւօտն նստեալ յատենի՝ հրամայեաց ածել զառաջեաւ զԿոդրատոս առ 'ի դատել զնա առաջի ամբոխին , և ահ արկանել ամենեցուն . և ահա բարձեալ բերէին զնա դահիճք , քանզի ոչ եւս էր 'ի նմա զօրուե՟ի գնալոյ . և ժողովուրդն ա՟մ շուրջ հայէին տեսանել զանյաղթ վկայն : Եւ էր երանելւոյն յա-

րեան թաթաւեալ և վիրօք լի. այլ ներքին ուրախութ՟բ ոգւոյն զուարթ երեսս ցուցանէր ա՟մ բազմութ՟ն, ըստ գրեցելումն՝ թէ
սրտի բերկրեցելոյ երեսք զուարթ են։
Եւ իբրև եկաց առաջի, ասէ ցնա բդեշխն. իմաստնացա՞ր ո՛վ կոդրատէ, եթէ չև ևս բուժեալ ես 'ի փոխելութ՟էդ (այս է 'ի խելագարութ՟էդ) ։ Ասէ երանելին մեծաձայն. 'ի մանկութ՟է իմմէ զգաստ գտանիմ, և յորովայնէ մօր իմոյ՝ ք՟ի ծառայ եմ։ Յայնժամ հրամայեաց բռնաւորն բերել երկաթի կրակարան իբրև կասկարայ, և դնել 'ի վ՟ր հրատի, մինչև եղև հանգոյն հրոյ. ապա հրաման ետ դահճաց հանել զկոդրատոս 'ի վ՟ր հրացե՟լն անկողնոյն այնորիկ։ Իսկ քաջ նահատակն ասէ ցդահիճս. 'ի բա՛ց կացէք յինէն արբանեա՛կք սատանայի, ես ինձէն իսկ ելանեմ։ Եւ արարեալ յինքեան զք՟ի կնիքն՝ ել արիաբար 'ի վեր. և դահիճքն սոսկէին 'ի վ՟ր կրակարանին ձիւթ և ձէթ։ Իսկ ս՟րբն կոդրատոս սաղմոսէր և ասէր. ա՟ծ յօգնականութ՟ի իմ նայեա՛ց, և տ՟ր յօգնել ինձ փութա՛. ամաչեսցեն և պատկառեսցեն՝ ոյք խնդրեն զհոգի իմ. դարձցին յետս և ամաչեսցեն՝ ոյք կամին ինձ չար։ Եւ կատարե՟լ զսաղմոսն՝ ասէ ցբռնաւորն ուրախութ՟բ. հուրս քո այս լո՛յծ է, և երկաթ կրականիս կակղագոյն է քան զսիրտ քո. զայս բարիոք արարեր, զի անկողին ինձ պատրաստեցեր, և յաշխատանաց հանգուցեր զիս։ Իսկ բդեշխն զարմացեալ էր ը՟ն իրսն. զի բազում

ժամք անցին 'ի վ՟ր . և նահատակն ինչ ոչ զգայր , ո՟պ թէ չէր ամենևին մերձեցեալ 'ի նա հուր :

Ապա անյոյս լեալ բռնաւորին յաղթել նմա տանջանօք՝ հրաման ետ բառնալ զնա 'ի կրակարանէն , և տանել սակաւ մի արտաքոյ քան զգիւղն 'ի բարձրաւանդակ տեղի , և անդ գլխատել : Իսկ 'ի ճանապարհի սաղմոսէր երանելին . օրհնեալ է տ՟ր , որ ոչ ետ զմեզ յորս ատամանց նց՟ . և մօտակաց եղբարքն ձայնակից լինելով սաղմոսին՝ երթային ը՟ն նմա մինչև 'ի տեղի կատարման . ուր և յաղօթս եկաց յերկարս ս՟րն , և գոհացեալ զա՟յ՝ մատոյց ուրախութ՟բ զպարանոց իւր սրոյ . և այնպէս երանութ՟բ կատարեաց զընթացս իւր 'ի ք՟ս՝ յամի տ՟ն իբր 250 , կ՟մ 255 : Այլ եղբարցն առեալ զն՟ը մարմնին բազմայաղթ վկային՝ եդին զգուշութ՟բ 'ի պատշաճ տեղւոջ , փառաւորելով զք՟ս . նմ՟ փառք յաւիտեանս . ամէն :

* * *

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ:

(1) Մի 'ի հնագոյն և 'ի պանծալի արձանագրութեց վկայից է առաջիկայս վկայաբանութի ս՟րն կոդրատոսի , որ կայ յերկուս մեծ ճառընտիրս մեր՝ թարգմանեալ 'ի նախնեաց . ո՟պ և տեսանես յոճոյ շարադրութեն , զոր բազում մասամբ բառ առ բառ պահեցաք : Որոյ քաղուած է՝ որ ինչ աւանդի և 'ի յայսմաւուրս տ՟մ ազգաց : Իւր ծանիր , զի բոլլանդեանք՝ որք ը՟ս կարի զ՟ամ խորշս յուզեցին 'ի գիւտ հին աւանդից , ոչ կարացին 'ի ձեռս բերել զօրինակ այսր ընդարձակ վկայաբանութեն .

թեա. վ̄ր որոյ ոչ ինչ առնեն աստանօր, բայց քաղել զհատուկտոր մնացուածս բանից՝ որ 'ի յայսմաւուրս և 'ի ժամագիրս յունաց, և առ այլևայլ վկայագիրս լատինացւոց. և 'ի վ̄ր բերեն, թէ 'ի սոցունց աստի * ամ̄
„ իրօք հաւատալի երևի, թէ գոյր երբեմն, որ և գու-
„ ցէ այժմ 'ի խորշ ուրեք պահեալ կայցէ՝ ընդարձակ
„ գործ վկայաբանութե. յորմէ իւրաքանչիւր հեղի-
„ նակք հաւաքածոյ վկայագրոց քաղեցին զայդոսիկ,
„ ոմն զայս ինչ և ոմն զայն ինչ ստորագրելով, այլ ա-
„ ռանց հակառակելոյ իրերաց||: Այս բանք են հենաքենիոսի գոտտփրետայ բոլլանդեան. որում ընծայ մեծ լինէր՝ եթէ ոք թարգմանէր զայս մեր վկայաբանութի, և մատուցանէր նմա. ոպ̄ և յետ ժամանակաց եկեալ ոմանց յընկերութէ նր̄ 'ի տես ուխտիս մերոյ, և հաստատեալ իրացս՝ զայն զայս վկայեցին:

Անուն սբյս 'ի Ճառընտիրս և 'ի տօնացոյցս անխտիր գրի կոդրատիոս կմ̄ կոդրատոս. յորոց երկրորդն առաւել մերձ է յունական ընթերցուածոյ Codratus. որ է համառօտեալն լատին ձայնիս Quadrátus:

(2) Որպէս տեսանես յընթացս վկայաբանութես, սբ̄ն կոդրատոս ստէպ կոչի քաջ նահատակ քս̄ի կմ̄ զինուոր քս̄ի կմ̄ զօրական քս̄ի. յայտ է թէ վասն արիական վկայութեն. նմին իրի և նոյնպիսի գովութիք գտանին և 'ի վկայաբանութեան մովկիմայ քահանայի, և այլոց մարտիրոսաց առ հասարակ. ապա ուրեմն և 'ի տօնացոյցս մեր՝ ուր կոչի կոդրատիոս զինաւոր, ոչ զերկրաւոր զինուորութի պարտ է իմանալ, այլ՝ զերկնաւորն. մինչ զի ուղիղ ևս էր կոչել զ̄ Հ. և այլոց, կոդրատոս վկայ՝ քան զինուոր: Իսկ թէ յորմէ վիճակէ էր սբ̄ն, ոչինչ քաղի 'ի պատմութէն, բայց զի էր ազնուական ոք, և ազատ քաղաքացի գիտնաւոր:

(3) Ծանուցումք և այլուր, թէ յորժամ ասի ոք 'ի վկայից լինել 'ի ժամանակս դեկոսի և վաղերիանոսի, չէ պարտ իմանալ՝ եթէ սոյս կայսերք 'ի միասին թագաւորեցին (ոպ̄ դիոկղետիանոս և մաքսիմիանոս), այլ նշանակէ լինել յաւուրս հալածանաց՝ որոց սկիզբն եղև յաւուրս դեկոսի (որ նստաւ յամի. 249), և շարունակեցաւ յաւուրս վաղերիանոսի (որ նստաւ յամի. 254). առ որով համարիմք և զնահատակութի սբ̄յն կոդրատոսի:

(4) Զայնս ἀγαχοῦρ յարմարեալ է 'ի թարգմանութիւնս վկայաբանութեց՝ ենթադրութե նմանաձայն յունական εὐγένιος ἀγάθορ, ստուգաբանելով գոդցես՝ իբր ἀγα (ἀγ)

և խփօս (ձայր) : Այլ բուն առումն բառին առ յոյնս է
ձայն նախատական, իբր անձնանախատ, դիմաղլուկ,
ժանտաժուտ, խմոր չարութե̅, որոմնացան, մահապարտ
են · ըստ որոյ 'Ի Բ̅ · Տմկ · Է̅ · Գ · փոխանակ միոյ ալանտօր
ձայնի եդեալ է, այ, ուէգ, հպարփ, և ամբարտաւան : Եւ որ
'ի վերս բասսայ · Ճառընտ · Բ · դնի, * անօրէն և չար-
,, խմաց հոգւով, և աղաջուր բարեւք || , 'ի Ճ · Ա · գրի ·
* անօրէն և չարիմաց խորհրդովք և ամպարիշտ վա-
,, րուք || : Եւ դարձեալ 'ի նոյն Ճ · Ա · 'ի վերս եւստ-
ուստխօսի գրեալ կայ, * ով աղաջուր դու, և չարի բանս-
,, տի հանդիպեալդ, և թմբրեալդ արբեցութե̅ չարին
,, 'ի նանիր խորհրդոցդ || :

(5) 'Ի Հ · պատմի, թէ սբն Կոդրատոս նախ քան զդար-
ձուցանել զուրացեալսն յապաշխարութի՝ * եկեալ ('ի
,, բանտէ) կործանեաց զբագինսն || : Զնոյն դատեմք և
'ի ձեռագիր ժամագիրս յն · * Իսկ սբն բանի ձգեալ և
,, մուծեալ 'ի տաճար կուոց՝ զձմ դրօշեալս որ անդ՝
,, փշրեաց || · և մն այսր տանջեցին ասէ զնա քերանօք :
Այլ 'ի Ճառընտիրս մեր պակասի այս հատուած՝ թե-
րեւս յակամայ զանցառութե̅ դրչաց : Թող զի փոքր մի
զկնի պակասի թուղթ մի 'ի Ճ · Ա · զորոյ զթերութի̅
լնու Ճ · Բ :

(6) Միաձայնի է̅ վկայաբանութե̅ գրեալն 'ի ժամագր ·
յն · ձեռ · * 'ի քուրձ փակեալ՝ սատակադոյնս հարաւ || :
Իսկ Հ · ոչ այնպէս · զի ասէ , * արկին 'ի գուբ , և քար-
,, կոծ առնէին զնա , և քարինքն 'ի նա ոչ հասանէին || ·
կմ̅ ը̅ տր̅ իէլի, * ոչ դիպէին || :

(7) Անունս կեսարիա , ևս առաւել ապողոնիա՝ այլ-
և այլ քաղաքաց ընծայի 'ի զանազան գաւառս · յորմէ
շփոթութե̅ իմն գրեալ էր աստ կեսարիա պաղեստի-
նացւոց, 'ի Ճ · Բ · (զի Ա · պակասի) · յայտ է թէ
հայելով՝ զի և այն քաղաք կոչի ապողոնիա ը̅ հին մա-
տենագրաց · բայց առաջինկայս պատմութե̅ հայի 'ի կե-
սարիա բիւթանացւոց , ուր կայր և այլ ապողոնիա կմ̅
ապողոնիդա · կմ̅ թէ նաև այս կեսարիա կոչիւր ապողո-
նիա : Հենաքէնիոս համաձայնի է̅ մեզ յասելն · * ապամիա,
,, կեսարիա , և ապողոնիա (էին) քաղաքք եպսանիստք
,, 'ի նոյն բիւթանիա || : Միայն սա և զանունս ռինդակ
կմ̅ հռունդակ կարծէ քաղաք լինել · բայց ոմ̅ վկայաբա-
նութե̅ մեր՝ նոյնպէս և աշխարհագիրք ուսանդեն , թէ
ռինդակ է անուն գետոյ , յոր մերձ էր ապողոնիա քա-
ղաք 'ի վիճակին նիկոմիդեայ՝ սահմանակից միւսիոյ :

ՎԱՐՔ ՍՐԲՈՅՆ

Եպիփանու հայրապետին կիպրացւոյ, այն
է եպիսկոպոս սաղամինայ կմ՟ կոստանդեայ
քաղաքի՝ որ 'ի կիպրոս կղզւոջ:

Հ. մայիս. 13: Յ. Լ. մայ. 12: Ռաւընտ. Բ. չծդ. և Օ. մծը: Սա ինքն եպիփան 'ի գիրս իւր: Սողոմենոս. Է. 27: Սոկրատ. Զ. 14: Սուրիոս. հատ. Գ. եր. 229: Բոլլանդեանն Պապեպրոք. հատ. Գ. մայ. 12. եր. 36 = 49:

ՀԱՆԴԵՐՁԵԱԼՔ զմեծին եպիփանու տիեզերահռչակ վարդապետին եկեղեցւոյ գրել զն՟ր քաղաքավարութիւն՝ զարմանամք, զի ոչ ոք ը՟ արժանւոյն գրեաց զարժանաւոր վարս ն՟ր. զի Թէպէտև առաջին գրիչ ճանաչին երկոքին աշակերտք նորա ձեռասունք՝ յովհաննէս և պողիբիոս, բայց անոճ գրուած սոցա ստուերածս իմ՟ն արկանէ 'ի վերայ աչաց ընթերցանելեաց՝ անարուեստ նկարագրութ՟բ մանունց իրաց խառն ընդ մեծամեծաց, համդերձ տարապայման կուսակցութ՟բ, մինչև 'ի շինել զմի կողմ՟ն՝ զմիւսն քակել՝ առանց ընտրութե՟ն ստոյգ և անստոյգ համբաւոյ. սակայն և այնչ՟փ անմարթ

մարթ է առանց գրութեան սոցա բովանդակել զպատմութիւն սրբոյն. վասն որոյ հաւաքեմք զաւանդս նորա քաղուածով՝ զոյգ ընդ աւանդելոցն յայլոց մատենագրաց, ցորչափ անհակառակելի երեւին ընդ ինքեան ։ (1)

Սուրբ սքանչելին Եպիփան կամ Եպիփանիոս (որ թարգմանի երեւելի կամ յայտնի) աւանդի լինել ազգաւ հրէայ, և հայրենեօք փիւնիկեցի, ծնեալ յաղքատ և 'ի հողավաստակ ծնողաց 'ի գեղջ միում, որ երեք մղոնաւ հեռի էր յԵլեւթերուպօլիս քաղաքէ ։ Եւ յորժամ էր Եպիփան տասնամեայ, մեռանի հայր նորա, և մնայ մանուկն ընդ քեռ իւրում կալիտրոբեայ 'ի տան այրիացեալ մօրն. որոյ նեղեալ յաղքատութենէ՝ առաքէ զԵպիփան վաճառել զէշ մի, զոր ունէին ։ Եւ Եպիփան յերթալն իւրում հանդիպեցաւ միայնակեցի միում 'ի քրիստոնէից, որում անուն էր Կղէոբիոս. և հարցեալ 'ի նմանէ՝ թէ վաճառե՞ս զէշդ, ասէ մանուկն պարզմտութեամբ. այո՛ վաճառեմ. բայց կարի ստամբակ է. վասն որոյ երկնչիմ, գուցէ վնասեսցէ գնողին, և ես եղէց պարտական առաջի Աստուծոյ ։ Եւ յայնբան 'ի վեր վազեալ էշոյն՝ ընկէց զԵպիփան յերկիր, և թափեաց զկուռն բարձիցն, և խելագնաց նուաղեցաւ պատանին ։ Իսկ աբեղայն բժշկեաց զնա անուամբն Քրիստոսի, և զէշն սատակեաց. յայնժամ եհարց Եպիփան ցաբեղայն, թէ ո՞ ոք իցէ Քրիստոս այն. և նա ասէ. այն է Յիսուս որդին Աստուծոյ՝ զոր Հրէայքն խաչեցին. և եկեալ պատմեաց 'ի տունն, և 'ի մտի ու-

ունէր զիրան զայն ։

Իսկ ոմն 'ի հրէից տրիփոն անուն ելեւթերուպօլսեցի՝ օրինագէտ եւ մեծատուն, արար զեպիփան իւր յորդեգիր. եւ ուսոյց նմա զամենայն եբրայական գիրս եւ զա՟մ աւանդութիւնս հրէից. եւ խոստացաւ տալ նմա ըզդուստր իւր. այլ փութով մեռաւ աղջիկն. եւ 'ի մեռանիլ նաեւ տրիփոնի՝ եպիփան եղեւ ժառանգ ընչից նորա ։ Դէպ եղեւ եպիփանու տեսանել աղքատ զոմն՝ որ խնդրէր զողորմութի՟ 'ի ղուկիանոսէ միայնակեցէ, եւ ասէր. ա՛յրդ ա՟յ ողորմեա՛ ինձ, զի այս երեք աւուրք են, զի սովեալ կամ. եւ նա եհան զպարեգօտն եւ ետ նմա՝ վաճառել եւ գնել հաց. եւ նոյնժամայն անկաւ 'ի վերուստ յերկնից սպիտակ հանդերձ, եւ ծածկեաց զղուկիանոս ։ Յայնժամ ահ կալաւ զեպիփան. եւ գնացեալ զհետ ղուկիանոսի՝ ուսաւ ըզկարգ քրիստոնէութե՟ եւ զմիայնակեցութե՟. եւ ապա եկն յեպ՟սարանն հանդերձ քերբ իւրով՝ ը՟ունել զմկրտութիւն. քանզի մայրն վախճանեալ էր ։

Եւ ը՟ մտանել եպիփանու ընդ դուռն եկեղեցւոյ՝ անկան հողաթափքն յոտից ն՟ր, եւ մնացին արտաքոյ դրան. յայնժամ ուխտեաց բոկոտն շրջիլ յայնմհետէ եւ առ յապայ։ Եւ եպ՟ն 'ի մկրտելն զնա տեսանէր զերեսս ն՟ր փառաւորեալ, եւ պսակ զարմանալի 'ի գլուխ ն՟ր ։ Ապա եդ եպիփան զքոյր իւր 'ի վանս կուսանաց. եւ ինքն միայնացաւ 'ի վանս հօրն ղուկիանոսի, ուր կային տասն կրօնաւորք, և ձեռագործ նոցա էր գրչութի . յորոց մի էր Հիլարիոն ս̅ր Հայրն , և Կղոդիոս այր երևելի առաքինութ̅բ . որոց նմանող լինել ցանկայր եպիփան . և էր ինքն ամաց վեշտասանից 'ի կրօնաւորիլ իւրում :

Յայսմ միջոցի թուի լինել այն՝ զոր պատմէ զանձնէ նա ինքն ս̅բն եպիփան 'ի գիրսն ընդդէմ Հերձուածոց . իբր զի մինչդեռ 'ի տիս պատանեկութե̅ էր , և շրջէր վ̅ս ուխտի 'ի վանօրայս պաղեստինու մինչև յեգիպտոս՝ առնուլ 'ի նոցանէ օրինակ բարի , բարիատեացն սատանայ գրգռեաց զգնոստիկեան չար աղանդաւորս մարմնապաշտս՝ որք էին յծ̅ին եգիպտացւոց , յինքեանս կորզել ըզպատանին . զոր և արարին իսկ առ ժամանակ մի . զի հիւրընկալեալ զնա 'ի կաղաղն իւրեանց՝ ետուն 'ի ձեռս նորա զգիրս մոլորութե̅ իւրեանց . զոր ընթերցեալ եպիփանու՝ ողջամիտ կարծէր զգրեանն . մինչև համարձակեալ ժանտոցն՝ թելադիր եղեն չար կանանց գործակցաց իւրեանց փորձել զեպիփան . և նոքա սկսան յառնել 'ի վերայ պատանւոյն պէս̃պս պատրանօք : Յայնժամ 'ի միտ առեալ եպիփանու զխորխորատն չարութե̅ աղանդոյ նոցա՝ դիմեաց 'ի բոլոր սրտէ աղօթիւք առ ա̅ծ , և հազի՛ւ ուրեմն զերծոյց զանձն 'ի ձեռաց կանանց՝ անարատ պահեալ շնորհօքն ա̅յ . և հնարիւք խոյս տուեալ 'ի բնակութե̅ գնոստիկեանց՝ գնաց պատմեաց եպ̅սացն եգիպտոսի զանարժան ընթացս նոցա . և եպ̅սունքն 'ի վերայ հասեալ իրացն ստուգութե̃՝ աքսորեցին 'ի սահմանաց անտի իւրեանց զգլխաւորս աղանդոյն ոգիս ութսուն. իսկ Եպիփան փութացեալ դարձաւ յառաջին վանս իւր, և ետ զանձն յառաւել ճգնութ̃ի ։ (2)

Իբրև մեռաւ հայրն Ղուկիանոս, և եղև հայր վանաց Հիլարիոն, տեսեալ Եպիփանու զքաղաքավարութ̃ի նր̃՝ սովորութ̃ի կալաւ և ինքն հանգոյն նմին հաց և աղ միայն ճաշակել յերկուս և յերիս աւուրս միանգամ, և զայն ոչ յագ. ոպ̃ և ջուր չափով ըմպէր ։ Եւ զա̃մ աշխատութիւն վանաց խնամով 'ի գլուխ տարեալ՝ ոչ պակասէր և յաղօթից և 'ի ս̃բ ընթերցուածոց ։ Տեսեալ քանսարկուին զյառաջադիմութ̃ի Եպիփանու՝ սկսաւ նեղել զնա 'ի գիշերային աղօթս պէսպէս ցնորիւք ահարկու տեսլեանց. և իբրև ոչ կարաց խախտել զմիտս նորա, եհաս 'ի վերայ նորա բազմութ̃բ դիւաց, և գան եհար զնա սաստիկ. այլ նորա յա̃ծ ապաւինեալ՝ անվնաս պահեցաւ յա̃մ արկածից չարին ։ Եւ տուան Եպիփանու յա̃յ շնորհք նախագիտութե̃ և նշանագործութե̃. և այն՝ սքանչելի խոնարհութ̃բ հանդերձ ։

Եւ ը̃ այսմ պատմի, թէ միանգամ 'ի պակասիլ ջրոյ 'ի պէտս հիւրից և դրաստուց նոցա՝ զտիկ մի գինւոյ նոցին փոխարկեաց 'ի ջուր ։ Եւ 'ի փախչիլ Եպիփանու 'ի գովութե̃ մարդկան 'ի խորագոյն անապատ, գտին զնա քառասուն աւազակք սարակինոսաց. և մին 'ի նոցանէ՝ որ էր միականի, յարձակեցաւ սու-

սուսերամերկ 'ի վերայ նորա . այլ 'ի վերացուցանել զսուրն՝ բացաւ խաւարեալ ակն նորա ։ Յայնժամ անկան առ ոտս սրբոյն , և կոչէին զնա նոր աստուած ոմն . մինչև բռնի ձգեալ տարան զնա ընդ իւրեանս՝ պահել զնոսա 'ի փորձանաց ճանապարհին . և զերիս աւուրս շրջեցուցեալ զնա՝ իբրև տեսին թէ նա խրատէ զնոսա 'ի բաց կալ յաւազակութենէ , թողին 'ի բաց . բայց մին 'ի նոցանէ աշակերտեալ եպիփանու՝ մկրտեցաւ , և կոչեցաւ յովհաննէս . և կրօնաւորեցաւ 'ի վանս հիլարիոնի ։ Նա սա ինքն յովհաննէս է առաջին գրիչ վարուց եպիփանու . որ և յերկար գրէ , թէ զիա՛րդ բժշկեաց նա զդիւահար զոմն յանապատի . և դևն գնացեալ եմուտ 'ի դուստր թագաւորին պարսից . և աղաղակէր , չելանեմ ասէր՝ մինչև եկեսցէ եպիփան՝ որ 'ի սպանիտրիոն բնակէ . (այն էր անուն վանաց նորա՝ անջրդի կամ նուաղաջուր կոչեցեալ՝ 'ի փիւնիկէ) ։ Նա եկեալ արանց 'ի դրանէն պարսից՝ գտին զնա փակեալ 'ի խցի . և յերկարել նորա զաղօթս իւր՝ կամէին զդուրսն խորտակել . և 'ի ձգել ուրումն զդաշոյն ճեղքել զդուռն՝ գօսացաւ ձեռն նորա . ապա ել եպիփան և ողջացոյց զձեռն նորա . և առեալ զաշակերտ իւր զյովհաննէս՝ գնաց ընդ արանցն , և բժշկեաց ըզդուստր արքային ։ Ընդ որ զարմացեալ մոգպետին՝ կոչէր զեպիփան գլուխ մոգաց . և 'ի սաստել սրբոյն՝ համրացաւ մոգպետն . և անդրէն առողջացաւ աղօթիւք նորա ։ Յարոյց անդ և զերիտասարդ մի՝ զոր սպանեալ էր մոգուց կախարդանօք · և այնպէս բազում պատուով հրաժարեալ ՚ի թագաւորէն՝ եկն ՚ի փիւնիկէ յանապատ իւր սպանիտորիոն · ուր աղօթիւք ջուր բղխեցոյց, և հալածեաց զգազանս վայրի, և սատակեաց զաւիծ մի ։

Աշակերտեցան անդ եպիփանու իբր յիսուն թուով եղբարք, զորս կրթէր ՚ի վարս միակեցութեան · այլ ՚ի գնալ նորա երբեմն ՚ի տես վանացն հիլարիոնի, և ՚ի յամել աւուրս բազումս, սատանայ կերպարանեալ զանձն ՚ի ձև եպիփանու՝ եկն ՚ի սպանիտորիոն · յայնժամ խաբեցաւ ոմն յաբեղայից՝ որ էր պղերգ և ծոյլ, և ընդ առաջ եկեալ դիւին՝ երկիրպագանէր նմա · և դևն համարձակութիւն առեալ բնակեցաւ ՚ի նմա · և եղև խռովութիւն բազում ՚ի կրօնաւորսն յերեսաց դիւաբնակ աբեղային · զոր իմացեալ եպիփանու ազդմամբ ոգւոյն՝ փութացաւ դառնալ ՚ի վանս իւր · և ընդ մտանել նորա ընդ դուռն՝ հալածեցաւ դևն և փախեաւ ։

Եւ էր ՚ի հռովմ երևելի ՚ի ծերակուտի այետիոս անուն · որոյ որդին կալլիստոս հարեալ ՚ի դիւէ՝ տեսանէր յերազի զոմն միայնակեաց պատկառելի, որ ասէր ցնա · կամի՞ս կալլիստէ՝ զի հանից ՚ի քէն զայսն չար · և ՚ի հարցանել նորա՝ թէ ո՞ ես դու, ասէ · ես եմ եպիփան փիւնիկեցի · արդ տո՛ւր ինձ բան, զի թէ ազատեմ զքեզ՝ աշակերտեսցիս ինձ ՚ի սպանիտորիոն անապատի ։ Եւ ՚ի խոստանալ պատանւոյն՝ զարթուցեալ ՚ի քնոյ, եգիտ զանձն ողջացեալ· և պատմեաց Հօր իւրում զա՟մն· և յետ երից ամսոց անկաւ ՚ի ճանապարհ հրամանաւ հօրն· և եկեալ յաւելաւ ՚ի թիւ՛ս աշակերտացն եպիփանու ։

Իսկ ինքն այրն ա՟յ եպիփան տու՛եալ զանձն հանապազորդ աղօթից և ընթերցու՛ածոց և գրութե՟ց բազմապատիկ պիտառնութե՟ց , ստէպ առնոյր ՚ի ձեռս զս՟բ գիրս , և մեկնէր աշակերտաց իւրոց զիմաստս ա՟ծայինս տառից , և լնոյր զամենեսին հոգևոր ուրախութեամբ· և էր լուր նորա ը՟ ա՟մ տեղիս· և գային բազումք ՚ի տեսանել զնա և օրհնիլ ՚ի նմանէ ։

Սա էր ոմն հռետոր ճարտար և մեծանուն փիլիսոփայ հեթանոս բնակեալ յեդեսիա · և անուն նորա եպիփան· սա լու՛աւ վ՟ն երանելոյն եպիփանու՝ եթէ այր իմաստուն է · վ՟ն որոյ ցանկացաւ երթալ տեսանել զնա · և եկեալ ՚ի ժամու պաշտաման աղօթից՝ եկաց պահ մի լռիկ , և հայեցեալ ՚ի միտ էառ զայրն ա՟յ , և ընթացեալ երկիր եպագ նմա ։ Ասէ ցնա ս՟բն· զի՞ է քեզ մեծդ հռետոր և իմաստասէր ականաւոր՝ պարծանքդ եդեսացւոց , առ ի՞նչ աշխատեցար գալ առ անպիտան և մեղաւոր եպիփանս· զիա՞րդ պերճացեալդ գիտութ՟բ եկիր յոտս առն միոյ տխմարի· և վ՟ն որո՞յ իրաց արդեօք ։ Ասէ իմաստասէրն· մի՛ ը՟ այդ զարմանար րաբունի՛դ ցանկալի , զի ը՟ գեղեցիկ առածի դիոնեսեայ ալիկառնացւոյ , եթէ գովելիք առ գովելիս եկեալ կշռեսցին՝ ընտիրք առաւել

ե

երևեսցին. լաւքն ը̃ մատթարս խառնեալ՝ ՚ի մի փայտ տարածեսցին. ոչ ոք միով պատմուճանաւ շատանայ, գուցէ պատառեսցի. սոէպ տեսութի ծնանի զբանիցն առատութի, և յաճախութի գիտնաւոր բանից՝ փորձ առնէ զիմաստութիս բազմապատիկ գիտութեանց :

Այսպիսեօք հիմն եդեալ բանից՝ փորձէր իմաստասէրն եպիփան զը̃ ա̃յ իմաստութիւնն զեպիփան. և նորա բացեալ զբերան իւր ՚ի գրոց ս̃բց՝ անդստին ՚ի մովսիսապատում աշգործութէ, դնէր առաջի նր, եթէ այս է ճշմարիտ իմաստութիւն՝ ճանաչել զաներևոյթ արարիչն երևելի արարածովքս. և իմաստասէրն յստակ միտօք ուշ դնէր ա̃մ բանից առն ա̃յ : Եւ զերիս աւուրս խօսակից լեալ ընդ նմա՝ ոչ յագէր ՚ի քաղցրաբուղխ վարդապետութէ նորա. էր՝ զի հաւանէր ասացելոցն, և էր՝ զի զը̃դէմն առաջի արկանէր. և առեալ զլուծումն տարակուսանացն՝ հիանայր յոյժ. Եւս առաւել ՚ի քաղցր բարոյից և յառաքինի քաղաքավարութէ ս̃բյն զմայլեալ՝ սիրեաց զնա ը̃ անձին իւրում, և կապեցաւ ոգի նորա ընդ նմա. և ոչ կարէր մեկնիլ ՚ի նմանէ :

Ապա յաւուրն չորրորդի ասէ ցս̃բն. ըմբունի՝ վայելուչ է բնակութի տեղւոյս. եթէ հրամայես, կամ է և ինձ աստ բնականալ : Ս̃բն ասէ. այդ ՚ի կամս իւրաքանչիւր է ապաստան : Եւ նա ասէ. եթէ այդպէս իցէ, ես ոչ ելից աստի. այլ տամ բերել այսր և զմատեանս իմ 'ի դի՛ւանէն եդեսիոյ. և խօսեսցուք ընդ քեզ 'ի գրոց: Այլ 'ի հաւանիլ սբ՟յն՝ առաքեաց իմաստասէրն զկալիստոս հանդերձ երկու ծառայիւք նստեալ յուղտս 'ի քաղաքն եդեսացւոց. և առեալ կալիստոսի 'ի դի՛ւանէն եդեսիոյ զգիրս իմաստասիրին՝ եբարձ 'ի վերայ ուղտուց, և եբեր յանապատն եպիփանու :

Յայնժամ ասէ սբ՟ն եպիփան ցիմաստասէրն եպիփան. գրե՟լ է, ատեան նստաւ, և դըպրութիւնք բացան. և եդ սբ՟ն յաջմէ իւրմէ զա՟ծաշունչ գիրս բացեալ, և վերծանէր զսկիզբն գրոցն ծննդոց տուն առ տուն. և իմաստասէրն եդ զիւր գիրս 'ի ձախմէ իւրմէ. և նախ եբաց զգիրս հեսիոդոսի քերթողի. և սկսան քննել զգիրս, և վիճէին սիրով ը՟ միմեանս: Այլ յերկարեալ 'ի բանս՝ ոչինչ վճարէին զբազում ժամանակս մինչև ցտարի մի. զի կարծէր իմաստասէրն կամ մարդկային ճարտարութ՟բ յաղթող հանդիսանալ, և կամ մարդկային փաստիւք հաւանիլ ճշմարտութ՟ե. և ոչ գիտէր՝ թէ հեռի են խորհուրդք ա՟յ 'ի մարդկանէ, որչափ երկինք յերկրէ. վ՟ն որոյ և սբ՟ն եպիփան յորդորէր զնա 'ի վերուստ խնդրել զպարգևս ա՟ծային հաւատոց:

Դէպ եղև կամօքն ա՟յ, զի ածին առ սբ՟ն եպիփան զդի՛ւահար մի չար յոյժ, զոր վաթսուն արք հազի՛ւ կարէին սանձել երկաթի կապանօք. յայնժամ ասէ սբ՟ն ցիմաստասէրն. կամ դու բժշկեա զդա 'ի ձեռն դից հեթանոսաց , և կամ յանձն առ հաւատալ 'ի խաչեալն՝ եթէ անուն նորա տացէ դմա զբժշկութի̄ : Իսկ 'ի հրաժարել իմաստասիրին՝ մատեաւ ս̄բն , և սկսաւ քակել զշղթայս դիւահարին . և 'ի փախչիլ իմաստասիրին զարհուրանօք՝ կնքեաց ս̄բն երիցս 'ի վերայ այսահարին զնշան փրկական խաչի , և ասէ ցայսն պիղծ . հրամայէ քեզ եպիփանիոս մեղաւոր ծառայ ա̄յ յանուն յ̄սի ք̄սի խաչեցելոյ որդւոյն ա̄յ , ել 'ի մարդոյ այտի , և մի՛ ևս մտանիցես 'ի դա . և ել վաղվաղակի դևն . և այրն հանդարտեցաւ , և գտաւ զգաստացեալ բոլորովին :

Օ այն իբրև ետես իմաստասէրն , վազեաց երկիր եպագ առն ա̄յ , և ասէ . ո՛վ եպիփանէ պսակեալդ փառօք յաղթութե̄ , հաւատամ և հաւատացի՝ որոց բանիւք ասին , և արդեամբք կատարին . զի բանք ցնդելիք յօդս անարգասաւոր ե̄ն , այլ գործք արդիւնացուցանեն զպտուղ . արդ կամիմ և ես լինել մի 'ի ծառայից խաչեցելոյն . և յայնմ օրէ ստիպէր զնա տալ ինքեան զկնիքն ք̄սի : Իսկ եպիփան տարաւ զնա առ ս̄բ հայրն հիլարիոն , և ետ մկրտել զիմաստասէրն . և երևեցան 'ի վերայ ն̄ր շնորհքն ա̄յ , զի սօղոմն պօղոս եղև . վ̄ն որոյ յետ աւուրց քսանից առաքեցին զնա առ ե̄պսն ելևթերուպօլսոյ , և ետուն ձեռնադրել զնա քահանայ . և այնպէս դարձաւ յանապատն եպիփանիու օծմամբ ս̄բ հոգւոյն . և եղև ուրախութի̄ մեծ ա̄մ եղբարց , և ամենայն հաւատացելոց՝ որք

լուան

լուեան զայն . զի էր այրն անուանի ընդ ամենայն տն եդեսացւոց և ասորւոց և փիւնիկեցւոց ։ (3)

Ապա կացուցեալ սբյն եպիփանու զքահանայն եպիփան 'ի մէջ եղբարց՝ ասէ . սա այն է՝ որ երբեմն թուէր լինել ինչ, և չէր . և ասէր զանձնէ լինել իմաստասէր, և չէր . այլ այժմ շնորհօքն այ եղև ճշմարիտ իմաստասէր և իմաստուն ըստ այ ։ Սա յայնմհետէ մեծարեալ պատուեաց զնա եպիփան՝ իբրև հայր հոգևոր և առաջնորդ եղբարց եղելոց ընդ ձեռամբ իւրով 'ի սպանիտրիոն . ուր էկաց երանելին այն ընտիր քաղաքավարութբ մինչև ցմահ իւր . և ստացաւ աշակերտս բազումս 'ի հոգևոր և յարտաքին իմաստութե . յորոց մի եղև և երանելին հաւփանոս միայնացեալ 'ի սամոս՝ ձեռնտու սբյն մեսրոպայ յաւուրս գիւտի հայերէն գրոյն, ըստ պատմելոյ խորենացւոյն ։

Իսկ անուն մեծին եպիփանու ևս քան զևս քարոզեցաւ յետ դարձուցանելոյ նր զեպիփան իմաստասէրն . և գային առ նա յանապատ նր յամ կողմանց . վնյ ձանձրացեալ յամբոխէ մարդկան՝ եառ ընդ իւր գիշերայն զյովհաննէս զաշակերտ իւր, և խոյս ետ յանապատէն սպանիտրիոյ ։ Սա եկեալ նախ յեգիպտ, և երկրպագեալ սբ տեղեաց՝ էջ 'ի յոպպէ, և նաւեաց յաղեքսանդրիա եգիպտացւոց ։ Անդ վիճեալ ընդ ակիւղասայ հրէի՝ առն օրինագիտի, դարձոյց զնա 'ի քրիստոնէութիւն, և յղեաց առ սբն աթանաս հայրապետ քաղաքին՝

քին՝ մկրտել զնա . և ինքն դիմեաց յանապատն կոյս՝ գնալ ՚ի կողմանս վերին Թեբայիդոյ : Եւ հանդիպեալ երանելւոյն պափնուտիոսի՝ որ էր մի յաշակերտաց մեծին անտոնի , եհարց վ՟ս սրբոյն անտոնի և գործոց նր՟ . և պափնուտի պատմեաց նմ՟ զա՟մ : Ապա ասէ եպիփան . կամիմ և ես հանդարտել ՚ի նիտրիա : Ասէ ցնա պափնուտի մարգարէութ՟բ . ողջա՛մբ երթիջիր , և վայելեալ ՚ի շնորհս հարանց՝ ժողովեա՛ քեզ դալարիս յամարայնի , երթալ ՚ի կղզին կիպրացւոց և դարմանել զխաշինս . զի եղիցին քեզ ոչխարք ձորձաբերք . և դարմանեա՛ զմատաղս , զի եղիցին քեզ դառինք :

Եւ հասեալ եպիփանու ՚ի կողմանս ղևոնդուպօլսոյ՝ գնաց ՚ի տես հերաքսի ուրումն աբեղայի , որոյ անունն մեծ համբաւէր , և ասէին զնմանէ ունել զշնորհս կանխագիտութե՟ . և հանդիպեցաւ ՚ի ժամուն՝ յորում հերաքս խօսէր առ բազմութի՟ ամբոխին եկելոյ առ նա վ՟ս յարութե՟ մեռելոց , այլ արտաքոյ ողջամիտ վ՟դպութե՟ , (զհետ կրթել որոգինեան վ՟դպութե՟) . քանզի ասէր , թէ ո՛չ այս մարմին յարիցէ , որո՛ւմ ասացաւ , ՚ի հող դառնալ՝ ուստի առաւ , այլ՝ այլ մարմին ՚ի տեղի նր՟ . և այն ը՟ չափու հասակին՝ յորում ոք վախճանի . ո՛չ թէ տղայոց՝ մանկահասակ յառնել , և ծերոց՝ ծեր : Յայնժամ յանդիմանեաց զնա եպիփան , և ասէ . դե՛ր փականս բերանոյ քո , և ուսի՛ր չհայհոյել զյոյսն մեր ամենեցուն . և նոյնժամայն կապեցաւ լեզու հերաքսի, և մնաց պապանձեալ ։ Եւ իբրև զահի հարան ամենեքեան՝ որ անդն կային, սկսաւ ինքնին եպիփան ուսուցանել ն՟ց զճշմարտութ՟ի հաւատոց յարութ՟ե մերոյ առլին հողացեալ մարմնով՝ 'ի չափ հասակի կատարմանն ք՟ի . և ապա ասէ ցհերաքս . արդ. խօսեա՛ց զբանն ճշմարտութ՟ե , և լե՛ր լաօղ ուղիղ վճ՟պուե . յայնժամ բացաւ անդրէն լեզու ն՟ր , և խոստովանել զուղղութ՟ի իւր՝ ուղղեաց զսխալանսն ։

Իսկ եպիփանու գնացեալ 'ի վերին Թեբայիդ առ հայրն յովհաննէս՝ եկն հանդարտեցաւ 'ի տեղին կոչեցեալ բուբիղ հանդերձ յովհաննու աշակերտաւ իւրով զամս եօթն . մինչև սկսան և անդ նեղել զնա մարդիկն , որք դիմէին 'ի լուր համբաւոյ ն՟ր ։ Եկն տու նա և փիլիսոփոս ոմն եւդեմոն անուն . և յետ վիճելոյ ը՟ նմա՝ եբաց եպիփան զխաւարեալ ակն միականի որդւոյ ն՟ր . և նոյնժամայն հաւատաց փիլիսոփայն . և եկեալ յաղեքսանդրիա մկրտեցաւ ։

Այնուհետև 'ի տարածիլ համբաւոյ եպիփանու ը՟ ա՟մ եգիպտոս՝ խնդրէին զնա ձեռնադրել եպ՟ս . վ՟յ դարձաւ յառաջին վանս իւր 'ի փիւնիկէ . և ոչ եգիտ անդ զհիլարիոն . քանզի և նա փախուցեալ 'ի բազմութ՟է՝ առանձնացեալ էր 'ի պափոս կիպրոսի ։ Այց արար եպիփան և եղբարց իւրոց 'ի սպանիտրիոն . և ուրախ եղեն ն՟ք յոյժ ընդ երջանիկ առաջնորդի իւրեանց եպիփանու եգեւացւոյ .

ւոյ. և ը̄ խնդրոյ նց̄ արար աղօթս յերաշտի, և ետ ա̄ծ անձրև զերիս աւուրս. մինչև 'ի լինել հեղեղաց՝ յաղօթս եկաց, և դադարեաց յորդութ̄ն ջրոց:

Յաւուրսն յայնոսիկ ժողովեալ էին եպիսկոպոսունք 'ի փիւնիկէ՝ վասն ընտրելոյ զոք յեպ̄սութ̄ն գաւառին. և իբրև հաստատեցին զբանն 'ի վ̄ր եպիփանու, և առաքեցին առ նա պատգամաւոր զառաքինի միայնակեացն պօղիբիոս, կանխեաց ս̄բն եպիփան, և ասէ ցնա. անսա՛ ինձ որդեակ, մնասջի՛ր դու առ իս, և զերիվարդ դարձո՛ 'ի տեղի իւր ը̄ ուղևորս. թո՛ղ առաջնորդք եկեղեցւոյ ընտրեսցեն զայլ ոք հովի՛ւ արժանաւոր. զի այր մեղաւոր եմ ես, և դողամ համարս տալ ա̄յ վ̄ս անձին, թո՛ղ թէ վ̄ս հօտին: Իսկ իբրև լուաւ նմա պօղիբիոս, առեալ զնա եպիփանու ը̄ յովհաննու աշակերտի իւրում՝ խոյս ետ միւսանգամ յե̄կմ. և եկեալ 'ի կեսարիա պաղեստինոյ՝ նաւեաց 'ի պափոս ծովեզերեայ քաղաք կիպրոսի. և անդ գտեալ զհիլարիոն՝ ուրախ եղև յոյժ. և խնդրէր տեղի առանձնութ̄ն:

Իսկ հայրն հիլարիոն խրատ ետ նմա՝ երթալ 'ի սաղամինա քաղաք կիպրացւոց. զի անդ հաճոյ է ասէ ա̄ն բնակել քեզ յօգուտ ժողովրդեան. այլ նա չէառ յանձն, զի մի՛ փառաւորեսցի 'ի մարդկանէ. և յորժամ եմուտ 'ի նաւ՝ երթալ յասկաղոն, բռնութ̄բ հողմոյն հարկեցաւ ելանել 'ի սաղամինա, և սպասել նորոգման նաւուն վտանգելոյ յալեաց:

լեաց ։ Եւ ահա 'ի նոյն աւուրս ժողովեալ էին ամ՟ եպ՟սունք կղզւոյն կիպրոսի՝ ընտրել զոք յեպ՟սութ՚ի քաղաքին սաղամինոյ , որ և կոստանդիա կիպրացւոց , փոխանակ գելասիոսի խոստովանողին եպ՟սին վախճանելոյ . և խորհէին կացուցանել զպապ անուն ոմ՟ն՝ նշանաւոր սրբութ՟ և վկայութ՟ քն՟ական անուան 'ի հալածանս ը՟ գելասիոսի ։ Յայնժամ նա ինքն երանելին պապ՝ որ մի էր 'ի հարց անտի ժողովելոց , զի էր եպ՟ս աննշան քաղաքին կիւթրիայ՝ որ հինգ մղոնաւ հեռի 'ի սաղամինոյ , յոտն եկաց յատենի , և ասէ . եցոյց ինձ տ՟ր արժանաւոր հովի՟ սաղամինայ քաղաքիս զհայրն եպիփան՝ զայրն սքանչելի . որ և այժմ 'ի քաղաքի աստ է . տո՛ւք ինձ հրաման , և ես ածից զնա . և նստուցից յաթոռ եպիսկոպոսութե՟ ։

Եւ 'ի հաւանիլ ժողովոյն՝ գնաց պապ եպիսկոպոսն երկու սարկաւագօք . և գտեալ զեպիփան 'ի շուկայն՝ զի գնէր խաղող վ՟ս ընկերաց իւրոց , ասէ ցնա . թո՛ղ հայր զողկոյզդ , և եկ զկնի մեր յեկեղեցի տ՟յ . և նա գնաց ուրախութ՟ առանց ը՟ բա՛նս ինչ ածելոյ՝ յիշելով զգրեալն . ուրախ եղէ ը՟ այնոսիկ՝ ոյք ասէին ցիս , 'ի տուն տ՟ն երթիցուք մեք ։ Եւ իբրև մտին յեկեղեցին , ասէ պապ ցեպիփան , որպ՟ս օրէն էր ասել ցեկեղեցականս . աղօթեա՛ հայր ։ Պ՟խանի ետ եպիփան . ներեա՛ հայր , զի չեմ ժառանգաւոր եկեղեցւոյ ։ Եւ իբրև որսացաւ 'ի բերանոյ նորա , թէ չև է առեալ և զաստիճան սարկաւագի, ետ նմա զխաղաղութ՟ի, և ձգեալ յանդիման սբ՟ սեղանոյն՝ ձեռնադրեաց զնա սարկաւագ. և դարձեալ տուեալ նմա խաղաղութիւն՝ ձեռնադրեաց քահանայ. ապա միաբանեալ ամ՟ եպ՟սաց՝ ձեռնադրեցին զնա յեպ՟սութ՟ի սաղամինոյ ։

Եւ իբրև տարան զնա յեպ՟սարանն, լայր մծ՟ հայրն եպիփան դառնապէս. զի կորոյս զառանձնութ՟ի իւր ։ Իսկ երանելին պապ մխիթարեաց զնա, և պատմեաց զոր եցոյց նմա տր՟ վս՟ եպ՟սութե՟ նր՟. և քեզ չէ պարտ ասէ ը՟դդէմ կալ կամացն այ՟ ։ Այնուհետև բուռն հարեալ եպիփանու՝ թէպէտև ծերացեալ անձամբ, բայց ժիր հոգւով, 'ի հոգևոր աշխատութ՟իս վր՟ հօտին՝ որ հաւատացաւ նմա 'ի տ՟նէ, տքնէր արթնութբ՟ զցայգ և զցերեկ, և քարոզէր անդադար զբանն կենաց՝ ունելով սովորութ՟ի միշտ 'ի ձեռսն կրել զաւետարանն սբ՟. խրատէր զստահակս, և ուսուցանէր զտգէտս. և բազում այն էր՝ զի սքանչելեօք հաստատէր զոր ասէր ։ Հաստատեաց և բազում վանորայս 'ի կղզին կիպրոսի, և զարդարեաց զեկեղեցիս բարեկարգութբ՟. իսկ գութ նր՟ առ աղքատս էր անչափ. մինչև վաճառել երբեմն և զսպասս եկեղեցւոյ 'ի բաշխել կարօտելոց ։

Յորժամ ել զառաջինն 'ի սբ՟ սեղան երանելի հայրապետն եպիփան, ետես յայտնապ՟ս զնշանակ շնորհաց հոգւոյն սբյ՟ 'ի վր՟ սբ՟ խորհրդոյն. և նոյն սովորութ՟ի հանապազորդէր յամ՟ նուագի պատարագելոյ նր՟. քզի՟ յաղօթել նր՟ ՚ի սկզբանն ՚ի ծածուկ , իսկոյն լինէր նմ՟ յայտնութի՟ ։ Բայց յաւուր միում իբրեւ երիցս կրկնեաց զնոյն բան աղօթից , և ոչ եռեւս զտեսիլն , անկաւ յերկիւղ մեծ , և խնդրէր յայ՟ արտասուօք տալ նմա գիտել զպատճառս իրացն ։ Յայնմ վայրի հայեցեալ ՚ի ձախակողմն սեղանոյն՝ եռեւս զմի ՚ի սարկաւագաց , որ կայր ՚ի սպասու և ունէր զքշոցն ՚ի ձեռին , բորոտեալ ՚ի ճակատուն . և ասէ ցնա . տո՛ւր ցիս ո՛րդեակ զքշոցդ , և դու գնա՛ ՚ի տուն քո . և նա ել գնաց . և ոչ ոք իմացաւ զպատճառս գործոյն . իսկ եպիփան ետ զքշոցն ՚ի ձեռս այլոյ սարկաւագի . և նոյնժամայն եռեւս զնշանն ։ Եւ յարձակման պատարագի կոչեալ առանձինն զսարկաւագն զայն՝ եհարց զնա սաստիւ , թէ զի՛նչ ինչ անարժան գործեալ է քո . և նա անկեալ յոտս սրբ՟յն՝ խոստովան եղեւ , զի չէր սրբ՟ յայնմ գիշերի ՚ի լծակցէ իւրմէ ։ Եւ յայնմ հետէ պատուիրեաց սրբ՟ն եպիփան՝ ոչ՟ քահանայից , նոյնպ՟ս և սարկաւագաց՝ զգուշանալ սրբութե՟ , և ապա մտանել ՚ի սրբ՟ն սրբ՟ց ՚ի ներքոյ վարագուրին կմ՟անջրպետի բեմին ։

(Զայս վայր գրեալ էր զպատմութի՟ եպիփանու յովհաննէս աշակերտ նր՟ . և յանկանիլ նորա ՚ի մահիճս մահու՝ յանձնեաց ըզգրեալսն իւր ՚ի ձեռս աշակերտակցին իւրոյ պօղիքիոսի՝ գաղտ ՚ի սրբ՟յն , գրել և զոր զկնի զգործս նր՟ մինչեւ ՚ի վախճան նորին . և նա արար այնպէս , զ՟ որում նշանակէ ՚ի կարգի պատմութե՟ս նա ինքն պօղիքիոս , որ և յետոյ եղև եպիսկոպոս ։)

Արդ է̃ սորա վկայելոյ՝ այս սովորութի̃ էր ս̃բ հայրապետին եպիփանու, զի յա̃մ իրս դժու́արինս անկանէր ՚ի վ̃ր երեսաց իւրոց յերկիր, և խնդրէր յա̃յ զելս իրաց. և լու́էր բարբառ, եպիփանէ արա́ զայս ինչ կա̃մ զայն, յառնէր և կատարէր ուրախութ̃բ. և այսպէս հրաման առեալ յա̃յ՝ շինեաց եկեղեցի մեծ ՚ի սաղամինա. զի առաջինն փոքր էր և անբաւական բազմութե̃ ։ Իսկ իշխան ոմն հեթանոս դրակոն անուն ՚ի կղզւոջն՝ որ խոտորնակի դնայր ը̃ հայրապետին, տեսեալ զսքանչելիս ս̃բյն ՚ի բժշկել նր̃ զմանուկ նորին ՚ի հրակէզ ախտէ կողիցն, ո̃պ և զինքն գլխովին ՚ի խօթութե̃, դարձաւ և մկրտեցաւ յեպիփանէ ա̃մ տամբ իւրով. նոյնպէս ասի դարձեալ և սինեսիոս իշխանն՝ ՚ի տեսանել զորդին իւր յարուցե̃լ ՚ի կեանս աղօթիւք ս̃բյն ։ Գրի ՚ի քուն վարս եպիփանու և ՚ի գիրս սոզոմենեայ և այլ ինչ հանգոյն հրաշից ս̃բյն յակոբայ մծբնացւոյ. իբր զի յանցանել եպիփանու ը̃ տեղի ուրեք՝ տեսին զնա երկու միմոսք. և ասէ մին ՚ի նոցանէ ցընկեր իւր. ես անկանիմ իբրև զմեռե̃լ, և դու խնդրեա́ յեպ̃սէն պատանս վ̃ր իմ, և նա արար այնպէս. և ս̃բն ընկեցեալ զվերարկու իւր ՚ի վ̃ր անկելոյն՝ գնաց. և ահա գտաւ այրն իսկապէս մեռեալ. ընթացաւ ընկեր նր̃ անդրէն զհետ ս̃բյն, և արտասու́օք ասէր. ա́ռ աղաչեմ զզգեստ քո, և տու́ր կեանս՝ մեռելոյն ՚ի պատիժ անզգամութե̃ մերոյ ։ Իսկ եպիփան ասէ ցնա ․ երթ որդեակ և թաղեա՛ զնա ․ զի նա յառաջագոյն մեռեալ էր՝ մինչև խնդրեիր քո ողորմութ̃ի յինէն ․ և ես գիտէի՝ զի մեռաւ , վ՟ այն

ետու զպատասխանդ ։ (4)

Դարձոյց եպիփան և զիսահակ ոմն հրէայ գիտնաւոր ․ և մկրտեալ զնա կարգեաց ընդ պաշտօնեայս եկեղեցւոյ ։ Պատմի , թէ գնացեալ իցէ սբ̃յն եպիփանու և 'ի հռովմ , և բժշկեալ զանբուժելի ցաւս դստեր մեծին թէոդոսի ․ և մկրտեալ զարքայորդիսն զարկադէոս և զոնորիոս ․ և թէ 'ի դարձին բժշկեալ իցէ և 'ի կոստանդնուպօլիս զթէոդոս զհայրն նց̃ 'ի հիւանդութ̃է ․ և արքայորդիքն եկեալ 'ի հռովմայ՝ գտեալ իցեն զեպիփան 'ի կոստանդնուպօլիս ․ այլ այս ինչ ստոյգ է՝ զի արկադէոս , որ թագաւորեաց անդ , մեծապ̃ ակնածէր 'ի սբ̃յն եպիփանէ ։ Եւ այս ընտանութ̃ի նր̃ ե̃ դուռն արքունի՝ ետ համարձակութ̃ի եւդոքսիայ թագուհւոյն կոչել 'ի խորհուրդ ը̃դէմ ոսկեբերանի տիեզերալոյս պատրիարգի քաղաքին և զեպիփան ․ ևս առաւել՝ զի սբ̃ն եպիփան էր կարի բարեկամութ̃բ ը̃ թէոփիլոսի պատրիարգին աղէքսանդրու , որ էր գլուխ թշնամեացն ոսկեբերանի ․ և դարձեալ դժտութի էր ը̃ մէջ եպիփանու և յովհաննու հայրապետին եմ̃ի՝ սերտ բարեկամին ոսկեբերանի ։ Արդ յայս նմանցս այնու ևեթ արդարանայ եպիփան , զի ոչ գոյր 'ի նմա ատելութ̃ի ը̃դէմ սբ̃ոյ , այլ պարզմտութ̃ի՝ որով լսօղ եղև առ ժամանակ մի Թէոփիլեանց . որք պատրուակ ունէին անկարգութե՟ց ամ՟ի զվրէժ խնդրութ՟ի ը՟նդդէմ որոգինեան մ՟ղպուէ՟ , ո՟չ թէ 'ի նոյն հակամիտեալ իցեն և երկոքին ՟ոք հայրապետք՝ ոսկեբերանն և յովհան եէ՟մի . և ք՟զի եպիփան մի էր 'ի գլխաւորաց՝ որք բնաջինջ առնել խորհէին զաղանդ որոգինեան , նմին իրի խաբեցաւ 'ի չարախօսութե՟ց Թէոփիլեանց . և եկեալ 'ի կոչ եւդոքսիայ թագուհւոյն՝ կուսակից երևեցաւ ն՟ց :

Եւ եղև եպիփանու օթևանել 'ի վանս ուրեք՝ որ էր ընդ ձեռամբ թագուհւոյն , զի կեայր 'ի հասից նորա . և վանականքն՝ որք օտարացեալ էին յոսկեբերանէ , աղաչեցին զեպիփան առնել ձեռնադրութ՟ի . և ծերունին կատարեաց զխնդրուածս նոցա : Զայն լուեալ ոսկեբերանին՝ գիր մեղադրանաց յղեաց առ եպիփան , թէ չէր օրէն քեզ ձեռնադրութ՟ի առնել յայլոյ թեմի . (ո՟չ արարեալ էր նորա զայն և 'ի թեմս եէ՟մի) . և եպիփան պատասխանս ետ զթախանձանս այլոց և զկարծեցեալ հարկ իրացն :

Ազդ եղև եւդոքսեայ գժտութ՟ին եղեալ 'ի մէջ ս՟ցն . և ուրախ լեալ յոյժ՝ կոչեաց առ ինքն զեպիփան . և ասէ . հա՛յր եպիփան տեսանե՟ս , զի համօրէն տ՟րութ՟ի հռովմայեցւոց վեր 'ի վայր լինի յերեսաց ե՟պսին յովհաննու . արդ զոր օրինակ իմ է մար՟մնաւոր իշխանութ՟ին , նոյնպէս և հոգևորն քո՛ լիցի յամ՟ տ՟րութե՟ս . զի յովհաննէս վասն իւրոց հերձուածոց ոչ ևս է արժանի կալ յաթոռ թագաւորական քաղաքիս . այլ է զոր ա͞ծ յայտնեսցէ քեզ , զնա դի́ր մեզ եպ͞ս . և զսա 'ի բա́ց արտաքսեա ։ Զայս ասէր եւդոքսիա , և փրփրէր 'ի սաստիկ բարկութ͞ն ը͞դդէմ յովհաննու՝ իբրև անարգողի իւրում մեծութեան ։ Պատասխանի ետ եպիփան հեզաբար . լո́ւր ինձ դու́ստր երկայնմտու͞թ իբրև հօր . եթէ պարտաւոր գտցի յովհաննէս հերձուածոյն՝ զոր ասես զնմանէ , և ոչ զղջասցի , անարժան է քահանայու͞թե . և յայնժամ զոր ինչ հրամայէ ինձ մեծու͞թ ձեր , արարից . ապա եթէ վասն թշնամու͞թե ինչ եղելոյ կամիցիս հանել զյովհան յեկեղեցւոյ , յայդմ ոչ լիցի քեզ խորհրդակից ծառայ տ͞ն եպիփան ։ Եւ զայս գիտեա́ , զի ինքնակալացդ առաւել ա́նկ է ներող լինել անիրաւու͞թեց . քանզի և ձեր տ͞ր գոյ յերկինս՝ թագաւոր թ͞գրաց և տ͞ր տ͞րանց . որում զօրհանապազ մեղանչէք . այլ նա երկայնամիտ լինի առ ձեզ . որ և ասաց յաւետարանի անդ 'իւրում . եղէրո́ւք գթածք , որպէս և հայրն ձեր երկնաւոր գթած է ։

Յայնժամ ասէ թագուհին մոլեգին . եթէ խափան ինչ լինիցիս հա́յր եպիփան աքսորանաց յովհաննու , բանամ զտաճարս կռոց , և առնեմ զյետինն չար քան զառաջինն ։ Իբրև լուաւ զայս այրն ա͞յ եպիփան , եխից զականջս և թօթափեաց զօձիսն՝ ասելով . անպարտ եմ ես յայսմ դատաստանէ . և ել արտաքս վաղվաղակի 'ի պալատէն . և փութայր մեկնիլ և 'ի քաղաքէն ։ Բայց Եւդոքսիա եդ բանս 'ի բերանս ներքինեայ իւրոյ՝ հասուցանել յունկն յովհաննու , թէ եպիփան ևս ձեռնադրեաց 'ի տոմար աքսորանաց քոց ։ Սոյն և ոսկեբերան գրեաց առ եպիփան այսպէս . ո՛վ սքանչելիդ եպիփան՝ որ յօժարեցար յանկումն իմ , և ետուր ձեռնագիր վ̃ն իմոցս աքսորանաց , մի՛ նստցիս և դու յայսմ հետէ յաթոռ քո ։ Գրեաց և եպիփան պ̃խնի առ նա այսպէս . ո՛վ նահատակդ ք̃նի յովհան՝ վ̃պ ճշմարտութ̃ե , յաղթեցեր և յաղթեսցիս . զի որպէս ես ոչ հասից յաթոռն իմ , նոյնպէս և դու ոչ հասցես 'ի տեղի աքսորանաց քոց ։ Եւ 'ի կամացն ա̃յ կատարեցան գուշակութ̃իք երկոցունց ս̃ցն , որք առժամանակ մի մարդկօրէն գժտեալ էին ընդ միմեանս , այլ տեսութ̃ հոգւոյն ծանեան զանմեղութ̃ի իրերաց և զօրինակ վախճանի միմեանց . Ը̃ որում ս̃ք ոսկեբերանն յերկրորդ նուագի անդ արտասահմանութ̃ե իւրոյ մեռաւ 'ի ճանապարհի աքսորանացն , և թաղեցաւ 'ի կոմանա . և ս̃ն եպիփան մեռաւ 'ի նաւի՝ 'ի դարձին իւրում 'ի կիպրոս ։

Քանզի յետ տեսանելոյ եպիփանու՝ թէ չիք հնար խաղաղել զթագուհին զցասուցեալն Ը̃դէմ ոսկեբերանի , գնաց տալ ողջոյն հրաժարական արկադեայ կայսեր . եհարց զնա կայսրն՝ թէ քանի՞ ամք են քո . և նա ասէ . 'ի վաթսուն ամաց հասակի եղէ եպ̃կս . և ունիմ արդ յեպ̃սութ̃ե ամս յիսուն և հինգ , և ամիս երիս ։ Եւ ապա մտեալ 'ի նաւ 'ի նմին իսկ աւուր՝ երթալ ՚ի կիպրոս, հիւանդացաւ ՚ի նաւին. և կոչեալ զերկոսին աշակերտսն իւր՝ որ ը̅ նմա էին, խօսեցաւ նոցա խրատս հոգեշահս, և ետ պատուէր զոր ինչ ունէին առնել զկնի վախճանի իւրոյ ։ Նա և ցնաւավարսն ասէ. աղօթս արարէք որդեակք, զի ՚ի սոյն աւուրս լինելոց է մրրիկ մեծ ՚ի ծովուս. այլ մի՛ երկնչիք. զի ոչ ումեք ՚ի ձէնջ հասցէ ինչ վնաս ։ Նա և ահա ը̅ մտանել արեգականն յարեաւ մրրիկ յոյժ, մինչև մերձ յընկղմիլ նաւուն. և տևեաց ալեկոծութիւն զերկուս և զերիս աւուրս ։ Յայնժամ ասէ սբ̅ հայրապետն եպիփան. եթէ ոչ կատարեսցի բան տն̅ յովհաննու, խռովութ̅ի ծովուս ոչ դադարէ. և ինքն հասեալ ՚ի հոգեվարս՝ համբուրեաց զաւետարանն սբ̅, զոր միշտ կրէր ՚ի գրկի. և հրամայեաց արկանել խունկ ՚ի կրակն, և յաղօթս կալ. ետ փառս այ̅, և օրհնեաց զթագաւորն արկադէոս հանդերձ ամ̅ քրիստոնէիւք, և զն̅ս որ ՚ի նաւին էին. և ողջունեալ զամ̅ենին՝ աւանդեաց զհոգին իւր առ ած̅. և առժամայն դադարեաց ծովն, և եղև խաղաղութ̅ի. և էր սբ̅ն եպիփան ճ̅ և ժե̅ ամաց ։

Արդ յորժամ եհաս նաւն ՚ի նաւահանգիստ կիպրոսի, լուր եղև ՚ի կոստանդիա քաղաք՝ որ և սաղամինա աթոռն եպիփանու, և յամ̅ կղզին՝ փոխումն սբ̅յն. և հորդան տուեալ անհամար բազմութ̅ք եկին ը̅ առաջ խնկօք և մոմեղինօք. և հանեալ զերանելին ՚ի ցամաք՝ արարին կոծ մեծ ՚ի վերայ նորա ։ Ասի՝

Թէ երեք կոյրք կարդացին զանուն նր̃՝ ասելով. ո՛վ ս̃բ̃դ ա̃յ արա՛, զի և մեք արժանի լիցուք երկրպագել ս̃բ̃ նշխարաց քոց. և նոյնժամայն բացան աչք նոցա: Ապա առեալ ածին հանդիսապէս զմարմին ս̃բ̃յն 'ի մեծ եկեղեցին՝ զոր ինքն շինեալ էր. և ամփոփեցին զնա 'ի տապանակ մի՝ ցանեալ 'ի վերայ մեղր հանդերձ օծանելեօք. և պատրաստեցին տեղի գերեզմանի նորա 'ի մէջ տաճարին:

Իսկ եղև յայնժամ հակառակութ̃ի. քանզի ս̃բ̃ հայրապետն 'ի կենդանուե̃ իւրում պատուհասեալ էր զայետիոս եպ̃ս՝ որ յաղանդոյն վաղենտիանոսաց. և տարագրեալ էր արքունի հրամանաւ 'ի կղզւոյն կիպրոսի ըդ համախոհս նորա, որպէս և զայլ աղանդաւորս՝ որք կոչէին սիմոնեանք, նիկողայիտք, ոփիտեանք կի̃օձայիտք, բասիլիդեանք, սաբէլեանք, կարպոկրատեանք. և զբազումս ևս 'ի նոցանէ ձգեալ էր նորա 'ի հօտս ուղղափառաց: Արդ 'ի ժամու թաղման ս̃բ̃յն՝ արք երկու, ղոնգինոս և պետրոնիոս՝ որք առ երեսս դարձեալ էին յաղանդոյն վաղենտինեայ, ընդդէմ կացեալ պնդէին՝ թէ չէ՛ օրէն թաղել զոք յեկեղեցւոջ. որպէս և ինքնակալքն արգելին ասեն զայս. իսկ ուխտ եկեղեցւոյն վիճէր ը̃ նոսա՝ թէ այդ օրէնք ոչ են 'ի վ̃ր ս̃բ̃ցն ա̃յ. և գիտեմք ասեն՝ զի և ինքնակալն արկադէոս հաւան է ընդ այս: Իսկ յետ տասնօրեայ հակառակութե̃՝ իբրև հանդերձեալ էին թաղել զս̃բ̃ն, յայնժամ եր-

երկու այն արք բուռն հարին լրբութք զտապանակէն , և ոչ կամէին թողուլ․ յայնժամ ՚ի կարդալ սաբինէոսի սարկաւագի զսբն ՚ի վրէժխնդրութ , պատժեցան արքն չարաչար հարուածովք , և արագավախճան եղեն ։ Իսկ քահանայք հանգուցին զտապանակ սբյն ՚ի պատրաստեալ տեղւոջ սաղմոսիւք և երգովք հոգևորօք ․ և գրեալ ծանուցին զայս ամ արկադեայ կայսեր ․ և նա սուգ էառ վասն մահուան մեծին եպիփանու աւուրս ի ․ և գրեալ հրովարտակ առ ուխտ եկեղեցւոյն սաղամինայ՝ եցոյց զիւր զկատարեալ հաճութի է թաղումն սբյն ՚ի տաճարի այ ․ ասէ ․ զոր եկեացն ՚ի վեր քան զօրէնս մեր՝ ոչ կամիմք ներքոյ արկանել օրինաց մերոց ․ մանաւանդ թէ կարեմք իսկ ոչ օրէնօք զայդ առնել ։

Արդ եղև՝ վախճան սբյն եպիփանու , որ կիպրացի կոչի յանուն աթոռոյն , յամի տն 403 ․ ՚ի մայիսի ․ 12 ։ Իսկ զաթոռն կոստանդեայ քաղաքի կիպրացւոց կալաւ յետ նորա սաբինոս ․ որ և գրեաց զօրինակ թաղման նորին ՚ի թուղթն , որ առ պողիբիոս եպս աշակերտ եպիփանու յեգիպտոս ։ Եթող սբ հայրն եպիփան յիշատակ անմոռաց յեկեղեցւոջ ըզլուսաւոր վդպութիս իւր ․ քանզի գրեաց նա բազմապատիկ ճառս ներբողեանս ՚ի վերայ տնօրինական տօնից փրկչին , և բանս խրատականս բազումս յաղագս ողորմածութե և այլոց առաքինութեց ․ որպէս և մեկնութի սաղմոսաց ․ գրեաց և գիրս յաղագս ուղիղ

հա

հաւատոց և վարուց՝ անքուադոն կոչեցեալ, ոպ̃ թէ խարիսխ կենաց մարդկան. և գիրս ըդ̃էմ ամ̃ հերձուածոց և աղանդոց եղելոց 'ի սկզբանէ մինչև ցաւուրս իւր. և այլ բազում ինչ պիտանի և օգտաշահ. յորոց բազումք կան մինչև ցայսօր. և իրաւամբք դասեցաւ 'ի կարգս ժբ̃ մծ̃պաց եկեղեցւոյ.

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ:

(1) Լիակատար վարք սբ̃յն Եպիփանու, որ առի գրեալ 'ի Յովհաննէ և 'ի պօղիբիոսէ յաշակերտաց նորա, գտանի ցարդ յունարէն 'ի հին մատեանս վատիկանեան. որ և տպագրեալ է 'ի կարգի գործոց Եպիփանու 'ի պետաւիոսէ յս̃եան. և այն է՝ զոր 'ի մետափրաստոսէ առեալ 'ի մէջ բերեն լատիներէն լիպոմանոս և սուրիոս: Եւ նոյն պատմութեն հատուածք են հին թարգմանութե̃ 'ի Ճառընտիրն մեր Զ. ուր գրի՝ * վս̃ վախճանին սր̃ և երանեալ հայրապետին Եպիփանու կիպրացւոյ, 'ի նորին պատմութենէն ||. որպէս և 'ի Ճ. Բ. գրի բովանդակութի պատմուե̃ն՝ հանդոյն Հ. Յ. և Ղ. և 'ի վր̃ բերի. * և այլ բազում նշանս արար սբ̃ն Եպիփան, զոր գրեալ է 'ի կատարե̃լ պատմուե̃ն վարուց նր̃||: Եւ զի այս այսպէս, յերկուց ծայրայեղ խոտորմանց զգուշ կալ պիտի իմաստուն քննողաց՝ որոց զբուն զայն ընդարձակ պատմութի̃ յակն արկանեն. զի̃ ո՛չ զամենայն բանս իբրև անստելի ստուգութե̃ պաշտել, այլ թօթափելով 'ի բանից կուսակցութե և 'ի չարախօսութեց՝ զկարգ պատմութե̃ն ըս̃ կարի պահել. և ո՛չ յանարուեստ ոճ̃ն հայեցեալ և 'ի կուտակութի հրաշից՝ խապառ ընդոստնուլ, և զողջոյն իսկ զպատմութիւնն յերկբայս արկանել. ոպ̃ յանիրաւի արար բաբեպրոք բոլլանդեան. չափ է մեզ առ այժմ, զի և ինքն ասէ, թէ հին է յոյժ այն ըդ̃արձակ վարք Եպիփանու:

(2) Որչափ ստոյգ է այս անցք գնոստիկեանց, զոր ինքնին սբ̃ն Եպիփան պատմէ, նոյնչափ և 'ի դէպ գայ ընթացից վարուցն ըս̃ մերումս տեսութե̃: Այլ զարմանալին այն է, զի տարապայման կշռուե̃ քաջին բաբեպ-

րոքայ կարծէ այսու դիպուածով խափանել զհիմն բովանդակ պատմութե սորին , և ժխտել զլինելն նր ազգաւ հրէայ . քանզի եղեալ՝ թէ 'ի տիս տղայութե լեալ իցէ , ընդէ՝ թէ ուրեմն հաւատացեալ ծնողաց զաւակ էր եպիփան . զի դիտաց ասէ սիրել զմաքրութիւն , և ընդդէմ կալ այնպիսի փորձանաց . և չէ մարթ ասէ համարել՝ թէ յետ քրիստոնեայ լինելոյն՝ յաւուրս կրօնաւորութե կրեալ իցէ զայն փորձանս . զի ոչ իշխէին ասէ մարմնապաշտքն այն ակնունել որպէս զկրօնաւորեալն : Արդարև ձեռնարկք անպիտանք և անվայելուչք այնպիսում իմաստուն մտաց . ապաքէն գործն ինքնին վկայէ , թէ եպիփան չէր յայնժամ մանուկ փոքր , այլ չափահաս պատանի . որ գնաց անձամբ առ եգիպտոսս , և պատմեաց մի ըս միոջէ զընթացս աղանդաւորաց . և եղև պատճառ ազատելոյ զգլխաւորս նոցա : Եւ զի ըս պատմութեն՝ վեշտասան ամաց կրօնաւորեցաւ եպիփան , քաջայարմար է և յաղթութե փորձութեանս լինել յառաջին ամս դարձի և կրօնաւորութե նր . թող զի և աղանդաւորք զայնպիսի ընտիրս որպէս կամէին , և ոչ զողջայ տխմար :

(3) Իշխէ բարեպաշտքիս ծաղրել և զանցիւք դարձի եպիփանու իմաստասիրի , և հիմն 'ի վեր տապալել կարծէ զպատմութիւն սորին բացարձակ տարցուածով իւրով . * Զայսմ երկրորդ եպիփանէ ոչինչ ընթերցեալ լինի այլուր || . այլ մեք անբասիր առնեմք զայրն՝ որ առնէ զանձն դիտակ ամ գրեանց Տի . և սակայն չէ անսուաւ նր 'ի կեանս իւր զգիրս մովսեսի խորենացւոյ , որ ժամանակակից գոլով՝ քաջիկ հաստատէ զայս անցս ամ սարօք իւրովք . զի ոչ զմեծն եպիփան յիշէ 'ի ա Գիր . Գլ . 5 . այսպէս . * քանզի և որ կիպրացւոց կղզ-
,, տանդեայ եպիսկոպոս եպիփանոս 'ի հերձուածոյն
,, յանդիմանութե , յորժամ Ճշմարիտ և արդարադատ
,, զմծ ձեռնարկէ ցուցանել ||, ևն . Նոյնպէս և զիմաստասէր եպիփան զայսօրինակ 'ի մէջ բերէ 'ի Գ . Գիր . Գլ . 53 . * Զկնի այսորիկ ինքնին մեսրոպ իջանէ 'ի մի-
,, ջագետս հանդերձ աշակերտօք առ նոյն դանիէլ . և
,, ոչ աւելի ինչ գտեալ քան զառաջինն՝ անցանէ յեդե-
,, սիա առ պղատոն ոմն Ճարտասան հեթանոս իշխան
,, դիւանին : Եւ նր խնդութբ ընկալեալ . և զոր ինչ
,, միանգամ 'ի մտի առնոյր բան հայերէն՝ յինքն առեալ ,
,, և շատ ջանացեալ և ոչ օգտեալ , ադխուեթն խոստո-
,, վանեաց հռետորն : Եւ զայլ ոմն առեալ յոյժ հա-
,, սու՝

,, առ՝ վարդապետ իւր լեալ յառաջագոյն, և ապա ա-
,, ռեալ զճարտարացն գրեան 'ի նոյն դիմանէն եդե-
,, սեայ, և գնացեալ քրիստոնէութե̅ հաւատոց. որոյ
,, անուն եպիփանոս. զոր խնդրեալ գտցես լուսացանէ
,, զփափաքդ քո: Յայնժամ մեսրովպայ օգնականութե̅
,, 'ի բաբելոնէ եպիսկոպոսէ գտեալ. և անցեալ ընդ
,, փիւնիկէ ('ի խնդիր եպիփանու). 'ի սամոս դիմէ.
,, քանզի եպիփանու վճարելով զկենցաղս՝ թողեալ լի-
,, նի աշակերտ մի՝ անուանեալ հռուփանոս՝ հրաշալի
,, արուեստիւ հելլէն դրչութե̅. որ 'ի սամոս էր միայ-
,, նացեալ. առ սա երթեալ մեսրովպայ ||, ևն: Թող
այժմ ասասցէ բաբեպրոք, թէ ոչինչ ընթերցեալ լինի
այլուր զայսմ եպիփանէ. և թէ ծաղրական է վիճելն
նր̅ գրովք ճարտարաց ը̅ սր̅բյն եպիփանու, և ապա հա-
ւատալն 'ի ձեռն սքանչելեաց: Այսպէս ստէպ լինի
ծաղրելի, որ ծաղրէ զճշմարտութե̅ վարուց սր̅բյ:

(4) Զինչ և ասիցէ բաբեպրոք, քաջ միաբանի և սոզո-
մենոս մերձաւոր ժամանակաւ ը̅ նախկին գրչաց վա-
րուց եպիփանու՝ 'ի պատմել անդ զայս անցս միմոսի
մեռելոյ. որպէս և զայլ հրաշս սր̅բյն հաստահիմն առնէ
ը̅հանուր բանիւն յառելն. է. 27. * Զսր̅ն եպիփան
,, ոչ միայն առաքինի քաղաքավարութե̅ նր̅ պայծառ քա-
,, րոզեաց, այլև սքանչելիքն՝ զորս արար ած̅ 'ի պատ-
,, ուել զնա, եթէ 'ի կենդանութե̅ նր̅, և եթէ զկնի
,, մահուանն: (Եւ յարէ) Քանզի ասի, թէ յետ վախ-
,, ճանելոյ նորա՝ որ 'ի կենդանութե̅ն չէր դիպեալ,
,, դեւք հալածին առընթեր գերեզմանի նր̅, և ցաւք ո-
,, մանք բժշկին ||: Զինչ պանծալի քան զայս. այլ տես
զինչ ձեռնարկէ քաջն բաբեպրոք. ուրեմն 'ի կենդա-
նութե̅ նր̅ չեն լեալ բժշկութիւք դիմահարաց և ախտա-
ժետաց, որք դրին 'ի վարս նորա: Այլ եթէ անաչառ
հայէր այրն կրիտիս, այդ բան սոզոմենեայ հայի 'ի մե-
ծացուցանել զնշանսն յետինս քան զառաջինս, և ոչ 'ի
ժխտել. զի սովորու̅ է մարդկան զսքանչելիսն եղեալս
յաւուրս իւրեանց մեծ ևս համարել քան զորս յառա-
ջագոյն: Ուր թողից զայն, զի քս̅ ասաց զաշակերտաց
իւրոց՝ թէ մեծամեծս ևս քան զսոյնս գործեսցեն. և
միթէ սովաւ փոքրկացուցանէ՞ր զիւր ած̅ագործ նշանս.
քա՛ւ լիցի. այլ զի ետ նոցա առնել և զայնպիսիս՝ զոր
ինքն ոչ արար. զորօրինակ հովանեաւ և թաշկինակաւ
բժշկել զհիւանդս. ևն:

ՎԱՐՔ

ՎԱՐՔ ՍՐԲՈՑՆ

Կոստանդիանոսի թագաւորին, և մօրն նր՟ սբ՟ դշխոյին Հեղինեայ ։

Հ. Յ. Մայիս. 21։ Լ. (Վասն Կոստ″. առ ամսեան Մայիսի. 2.) Վասն Հեղինեայ. Օգոստ. 18։ Բոլլանդեանք. Հատ. Է. Մայ. 21. եր. 12 = 27. և Հատ. Գ. Օգոստ. 18. եր. 548 = 654։ Եւսեբ. 'ի Վարս Կոստ. և այլ պատմիչք յն. և լտ։ Խորէն. Բ. 80 = 85. և այլ պատմագիրք հյ։ (1)

ՊԱՐԾԱՆՔ ՔՐԻՍտոնէութե՟ և սիւն հաւատոյ՝ առաջին հաւատացեալն ինքնակալ, ա՟ծասէր և բարեպաշտ կայսր հռովմայեցւոց՝ և հիմնադիր նորոյն հռովմայ կոստանդինուպօլսի, մեծն կոստանդիանոս թագաւոր՝ որդի էր կոստայ կ՟մ կոստանդեայ կայսեր՝ շլոռոս կոչեցելոյ 'ի դեղնադալար գունոյ հերացն, ծնեալ յառաջ քան զկայսերութի՟ հօր իւրոյ 'ի Հեղինեայ բիւթանացւոյ, զոր ոմանք բրիտանացի ասացին (2)։ Քանզի որպ՟ս գրեն միաբան սբ՟ն ամբրոսիոս և սբ՟ն մովսէս խորենացի և այլք յոլովք՝ զոյգ ը՟ բանից սբ՟յ վկային Եւսիգնիոսի որ առ յուլիանոսիւ (3), 'ի ժամանակին՝ յորում առաքեցաւ կոստաս զօրավարութբ՛ 'ի հրամանէ ինքնակալաց 'ի կողմանս արևելից, յանցանել իւրում ը̄ բիւթանիա ասիացւոց՝ արար իջավանս 'ի գիւղն դրեպանայ (որ յետոյ հեղինուպօլիս կոչեցաւ). և անդ տեսեալ զկին մի գեղեցիկ պանդոկապան, կի̃ դուստր պանդոկապետի՝ հեղինէ անուն, մերձեցաւ 'ի նա, բանս եդեալ ընդ նմա՝ և նշանս ինչ տուեալ, զի թէ ծնցի որդի, ը̄ ժամանակին ժողովեսցէ զնա հանդերձ որդւովն առ ինքն իբրև օրինաւոր ամուսին իւր, և 'ի մեծ փառս հասուսցէ. քանզի և ինքն իսկ ակն ունէր կայսերութեան: Եւ եղև յորժամ ծնաւ հեղինէ զաւակ արու, անուն եդ նմա կոստանդիանոս, ո̃ կոստանդեան կամ որդի կոստայ. զի յայտնի լիցի՝ թէ ո՛յր որդի է:

Իսկ հայր նորա կոստաս դարձ արարեալ յաղթութբ՛ 'ի հռովմ, որքան զօր մեծանայր և սիրելի լինէր յաչս ինքնակալաց դիոկղետիանոսի և մաքսիմիանոսի. մինչև յետ քանի մի տարւոյ՝ յամի տն̃. 292. ընտրեցաւ 'ի պատիւ կեսարութեան իբր որդեգիր և գահակից կայսերաց, հանդերձ մաքսիմիանոսիւ գաղերիոսիւ՝ որ մականուանեալ էր արմենտարիոս, ո̃ է անդէորդ: Այլ առ հասանելոյ սոցա յայս պատիւ՝ կամեցան ինքնակալքն փեսայացուցանել զնո̃ ինքեանց. և առ այս՝ ստիպեցին 'ի բաց արձակել զառաջին կանայս իւրեանց, և առնուլ զդըստերս իւրեանց. և նք̃ յանձն առեալ զերսն՝

փեսայացան ինքնակալաց ։ Սն զի արմենտարիոս եթող զիւրն, և եառ 'ի կնութի զգաղերիա վաղերիա զդուստր դիոկղետիանոսի . և կոստաս լուեաց առ ժամն զհեղինեայ՝ որ չէր առ նմա, և թողեալ զմիւս այլ զառաջին կին իւր՝ յորմէ կային նորա այլ զաւակք, եած իւր 'ի կնութի զթէոդորա ըղխորթ դուստր մաքսիմիանոսի հերակլեայ կայսերակցին դիոկղետիանոսի ։

Յետ ամաց՝ յորժամ երկոքին կայսերքն դիոկղետիանոս և մաքսիմիանոս յարուցին ահագին հալածանս 'ի վերայ քրիստոնէից, և ինչ ոչ օգտեցան, ձանձրացեալ 'ի գործոց իւրեանց անտի և յայլևայլ զբաղմանց, և 'ի ծերութի մերձեալ՝ կամեցան հրաժարել յինքնակալութէ (որ էր սքանչելի տեսչութի ողորմութեն ա՟յ) . այլ զի մի 'ի թողուլ միոյն զի՟րութի՝ միւսն առանձին սեպհականեսցէ ինքեան, միաբան դաշն եդեալ՝ 'ի միում աւուր մերկացան 'ի ծիրանեաց իւրեանց, և զգեցուցին զայնս երկոցունց կեսարացն՝ ա՟յ արմենտարիոսի և կոստայ, կացուցեալ զն՟ս թագաւորս հռովմայեցւոց և կայսերս ինքնակալս, յամի տ՟ն 304 ։ Իսկ էր բաժին ի՟րութե կոստայ յառաջնմէ իսկ ն՟ն բրիտանացւոց, գաղղիացւոց և սպանիացւոց, հանդերձ շրջակայ սահմանօքն արևմտեայց . որ և յետ զօրանալոյ յիշխանուե՝ ետ բերել առ ինքն զհեղինէ . ուր յառաջագոյն կոչեալ էր զորդին և եթ զկոստանդիանոս 'ի բրիտանիա . վ՟յ և կարծեցաւ յոմանց, թէ կոստանդիանոս որդի կոստայ իցէ հայրենեօք բրիտանացի կամ անգղիացի. նոյնպէս և զհեղինէ յայնմ քաղաքէ ասացին լինել։

Բայց ունէր կոստաս առ իւր և զայլ վեց զաւակս յայլմէ կնոջէ, այս են համահայր և ոչ համամայր եղբարք կոստանդիանոսի. յորս չորեքին սոքա յանուանէ յիշատակին. յի՟ կոստանդոս հաւն յուլիանոսի ուրացողի, անաբաղղիանոս, դաղղոս, և կոստանդիա քոյր նոցա՝ որ եղև կին լիկիանոսի կեսարու։

Այլ իբրև ետես կոստաս զորդի իւր զկոստանդիանոս, ուրախ եղև յոյժ, և սիրեաց զնա առաւել քան զամենայն որդիս իւր. զի էր պատանի առոյգ և անձնեայ, աջողակ և կորովի, իմաստուն և զուարթամիտ. վասնորոյ ընտրեաց զնա իբրև անդրանիկ և ժառանգ առանձինն տէրութեան իւրոյ՝ յառաջ քան զկայսերութիւնն, որդիացուցեալ զնա և դիոկղետիանոսի։ Իսկ նախ՝ որպէս զի արդեամբք ստացցի զգահ հայրենի, զգեցոյց նմա տրիբունական իշխանութիւն, և արձակեաց որպէս զօրավար եօթն բիւր հեծելոց ընդդէմ բարբարոսաց. և նորա քաջութեամբ մղեալ զպատերազմ՝ վանեաց զթշնամիս, և դարձաւ մեծաւ յաղթութեամբ ՚ի հռոմ։ Յայնժամ ապա իրաւամբք կացոյց զնա յաջորդ իշխանութեան իւրոյ, յամի տեառն իբր 298. և յետ լինելոյ իւրոյ կայսր՝ պսակեաց զկոստանդիանոս կեսար, և արար իւր դահակից՝ յամի 304 կամ 305. վասնորոյ ասեն ումանք, թէ՝ և զմայր նորա զհեղինէ՝ դշխոյ անուանեաց։ Իսկ քանզի ինքն կոստաս էր այր բարեսէր և զգօն, և հասու փոքր 'ի շատէ ստութե հեթանոսութե, խնամ ունէր 'ի վերայ քրիստոնէից եղելոց ը՟ ձեռամբ իւրով՝ վ՟ն պաշտելոյ ն՟ց զմի միայն ա՟ծ ճշմարիտ, և ոչ զբազմութ՟ի դից. և ը՟ նմին խրատէր զորդի իւր զկոստանդիանոս՝ յանդորրու պահել զա՟ծապաշտս, և մի՛ նմանել անագորոյն բարուց կայսերաց ժամանակին՝ նախորդաց և գահակցաց, որք դառն հալածիչք եղեն քրիստոնէից. միանգամայն և աւանդէր նմա քաղցր լինել առ ա՟մ հպատակս, և արդարակորով յա՟մի ։

Այս եղև կոստայ սակաւակեաց լինել 'ի կայսերութե. և 'ի մեռանել ն՟ր թագաւորեաց փոխանակ ն՟ր որդին ն՟ր կոստանդիանոս յամի տ՟ն 306. 'ի 25. յուլիսի, հաւանութ՟բ ա՟մ իշխանաց և զօրաց՝ ը՟ պատուիրելոյ հօր նորա. բայց տակաւին ոչ կոչէր թագաւոր հռովմայ և ինքնակալ, այլ սոսկ կեսար կ՟մ թագաւոր միոյ մասին կայսերական իշխանունութե. զի տակաւին կենդանի էին կայսերք հրաժարեալք դիոկղետիանոս և մաքսիմիանոս. և ունէին զայլևայլ կեսարս 'ի դիմաց իւրեանց յայլևայլ բաժինս տ՟րութե յարևելս և յարևմուտս ։ Այս յաջորդելն իսկ կոստանդիանոսի յաթոռ հօր իւրոյ՝ եղև կամակցութ՟բ նոյն ինքնակալաց. զի սիրելի էր յաչս նոցա կոստանդիանոս, և որդեգիր և փեսայ անուանեալ նոցա առ կենդանութ՟բ հօր իւրոյ. վ՟ն զի յետ վաղամեռիկ լինելոյ առաջին կնոջ իւրոյ մինեռվայ կամ աթենայ՝ յորմէ ծնաւ զկրիսպոս, եւս ըզմաքսիմինա, որ եւ փլաբիանէ մաքսիմիանէ փաւստա՝ դուստր մաքսիմիանոսի, նոյն եւ իբր որդեգրութ՟ գոգցես դուստր կոչեցե՟լ դիոկղետիանոսի․ սորին մ՟ւ եւ կոստանդիանոս երկոցունցն եւս փեսայ կոչի առ մատենագիրս։ Իսկ ՚ի լինել այսր հարսանեաց կայսերական շքով ՚ի նիկոմիդիա քաղաք բիւթանացւոց՝ անդ գտաւ եւ մերս տրդատ որդի խոսրովու արքայի հայոց․ եւ յայնմ ժամանակէ հետէ եղեւ ընտանութ՟ի եւ սերտ բարեկամութ՟ի ՚ի մէջ կոստանդիանոսի եւ տրդատայ։

Արդ յորժամ նստաւ կոստանդիանոս կեսար փոխանակ հօր իւրոյ կոստայ կայսեր՝ եւ շրջիւր զսահմանօք հայրենի իշխանու՟ե իւրոյ ՚ի բրիտանիա, ՚ի գաղղիա եւ ՚ի սպանիա․ եւ զամ՟ մարդասէր կամս ցուցե՟լ առ հպատակս իւր՝ սիրելի եւ գովելի եղեւ յաչս ամենեցուն։ Իսկ ժողովե՟լ զզօրս իւր՝ խաղաց ՚ի վ՟ր գերմանացւոց եւ ՚ի վ՟ր մասին ինչ գաղղիացւոց վտարանջելոց յիւրմէ, եւ այլոց եւս բարբարոսաց՝ որք առ հռենոսի՛ եւ որք առ արեմտեան ովկիանու․ եւ նուաճե՟լ զապստամբութ՟ի նոցա՝ դարձոյց զն՟ս ՚ի վայրենի բարոյից յընտանութ՟ի․ եւ դարձ արարե՟լ յաղթութ՟ եւ փառօք՝ ընկալաւ զշուք կայսերական անուան օգոստոս կ՟մ սեբաստոս՝ յամի տ՟ն 308։

Այնուհետեւ դարձոյց զինքն յայլ կողմանս

ինք,

ինքնակալութե՟՝ ընդդարձակել զբազում տէրութե՟ իւրոյ և յաղթահարել զայլ կեսարս, որք բռնաւորութ՟բ վարէին զիշխանութիւն հռովմայեցւոց յայլևայլ սահմանս տիեզերակալուե՟։ Քանզի մաքսենտիոս որդի մաքսիմիանոսի հերակլեայ բռնացեալ 'ի կողմանս հռովմայ՝ դարձոյց զհայր իւր յառաջին պատի՟ ինքնակալութե՟, զի ինքեան հասցէ բովանդակ տ՟րութե՟ կայսերութե՟. և արար իւր համախոհ նաև զմաքսիմիանոս արմենտարիոս զկեսարակիցն կոստայ և կոստանդիանոսի։ Իսկ քեռորդի նորին արմենտարիոսի միւս այլ մաքսիմիանոս՝ կմ՟ մաքսիմինոս դաժ կոչեցեալ՝ բռնացեալ էր յարևելս, և հալածէր զքրիստոնեայս 'ի կողմանս Տյին եգիպտոսի. Թող զլիկկիանոս՝ որ կացուցեալ էր կեսար յարմենտարիոսէ, և էր բռնաւոր դժնեայ՝ Թշնամի քրիստոնէից։ Իսկ սևերոս այլ ոմ՟ կեսար՝ որ կեսարակիցն էր մաքսիմիանոսի դաժայ, Թէպէտև յարձակեցաւ ը՟դէմ մաքսենտիոսի բռնակալի, այլ չարաչար խորտակեալ՝ սպանաւ 'ի կողմանս հռովմայ մօտ երիցն կրպակաց։

Զայս ա՟մ լուեալ կոստանդիանոսի՝ վառեցաւ պատրաստեցաւ բառնալ զբռնակալութ՟ մաքսենտիոսի 'ի հռովմայ. զի այնուհետև դիւրացի նմա նուաճել զայլսն։ Բայց մտախոհ լեալ 'ի սրտի իւրում, Թէ չարաչար վճարեցան գործք մաքսիմիանոսի արմենտարիոսի կայսեր և սևերոսի կեսարու, որք բազմութ՟բ զօրաց երԹային 'ի պատերազմ, բարւոք համարեցաւ զմի ա̄ծ երկնից պաշտել ը̄ խրատու հօր իւր կոստայ ։ Ս̄այ ընկաւ աղաչել զմի ա̄ծ ճշմարիտ՝ տալ ինքեան լոյս ճանաչելոյ զնա , միանգամայն և յաջողութի̄ առաջիկայ մարտին • քանզի երկիւղ մեծ ունէր 'ի թշնամեաց , և բեկեալ իսկ էր սիրտ նր̄ 'ի խորտակմանէն սեւերոսի • որպ̄ս և ինքն փոքր մի յառաջ վտանգեալ էր 'ի յուսալ իւրում 'ի մնոտիս ։

Այն ինչ այսպիսեաւ վարանէր խորհրդով զճանապարհայն , յանկարծակի 'ի տեղւոջ ուրեք 'ի լոյս տուընջեան եղև նմա յայտնութի̄ մեծ 'ի վերուստ • քանզի իբրև սկսեալ էր արեւն զմիջօրէիւ անցանել և յարեւմուտս կոյս խոնարհիլ , ետես յայտնապէս նշան խաչի լուսեղէն յօրինուածով երևութացեալ յերկինս , աստղանիշ գրով պարունակեալ , այսու յաղթեա ։ Զայն նշան ահեղ և սքանչելի տեսեալ կոստանդիանոսի կեսարու և ա̄մ զօրաց նորա՝ որք գնային ը̄ նմա , զահի հարեալ առհասարակ յապուշ կրթեցան ։

Յայնժամ սկսաւ կոստանդիանոս ևս քան զևս խռովիլ ընդ միտս իւր և վարանիլ , թէ զի՞նչ խորհուրդ իցէ նորատեսիլ այն երևութի յերկնից • և մինչև ցերեկոյ 'ի նոյն մտածութի̄ յուզեալ՝ ոչ կարէր 'ի վ̄ր հասանել իրացն ստուգութե̄ ։

Ապա 'ի ժամանել գիշերոյ՝ իբրև 'ի քուն եմուտ ալեկոծ մտօք և տխուր սրտիւ , երևեցաւ նմա ք̄ս 'ի տեսլեան հանդերձ նովին աստեղեաւ նշանաւ խաչի երևելոյ 'ի ցերեկի •

և պատուիրեացն նմա , զի զդրօշակն զինուորութե՟ կազմեալ 'ի նոյն ձև նմանութե՟ խաչին՝ զայն 'ի կիր արկանիցէ 'ի պատերազմունս իբրև նշան յաղթութե՟ և զէն ամրութե՟ անվանելի : Յայնժամ զարթուցեալ կոստանդիանոսի ուրախութ՟բ 'ի հրաշալի տեսլենէ անտի՝ հաստատեաց 'ի միտս իւր ոչ պաշտել զայլ ա՟ծ , բայց միայն զոր երևեցաւն նմա :

Եւ հրամանն տուեալ կոչել առ ինքն 'ի քրիստոնէից զքահանայս ա՟յ զխորհրդագգածս գաղտնի խորհրդոյս՝ հարցանէր 'ի նոցանէ , թէ ո՞ իցէ ա՟ծն այն քս՟ անուն . և զի՞նչ ցուցանիցէ նշան նր՟ , որ երևեցաւ նմա և՛ յարթնութե՟ , և՛ 'ի քուն գիշերոյ :

Եւ նոքա ասեն . նա ինքն է ա՟ծ Ճշմարիտ՝ միոյ և միայնոյն ա՟յ միածին որդի . իսկ նշանն երևութացեալ՝ կնիք է անմահութե՟ և նշանակ յաղթութե՟ն , զոր արար նա ը՟դէմ մահու յերևիլ իւրում մարմնով 'ի վ՟ր երկրի . և սկսեալ 'ի բանից յայսցանէ՝ քարոզեցին նմա զփրկական խորհուրդ տնօրէնութե՟ բանին :

Եւ թագաւորն ա՟մ փափաքմամբ ունկն դնէր վ՟դպութե՟ քրիստոնէից . և 'ի միտ առեալ զվերնական այցելութի՟ն՝ եթէ բարձրեալն ինքնին եած զնա յա՟ծգիտութի՟ , սքանչանայր և զուարթանայր յանձն իւր :

Եւ 'ի հասանել իւրում 'ի մի 'ի քաղաքաց՝ յորժամ պատմեաց թագաւորն առանձինն խորհրդակից բարեկամաց իւրոց զտեսիլն՝ զոր ետես , ետ կոչել առ ինքն փութանակի զճարտարս յարհեստի ոսկեգործութեան և ականագործութե՟․ և բազմեալ 'ի մէջ նորա՝ բաղադրեալ նշ՟ մի խչ՟ միօջէ զձև և զօրինակ խաչանիշ դրօշակի, և հրամայեաց կազմել զայն յոսկւոյ և յականց պատուականաց․ և նոքա անյապաղ կատարեցին զհրմ՟։ Այլ էր յօրինուած նորին՝ ը՟ դրելոյ եւսեբի կեսարացւոյ, որ արժանի եղէ ասէ տեսանել յետ ամաց ինչ զդրօշակն զայն, օրինակ զայս ։ Բուն խաչանշանիս էր գաւազան ոսկւով պատեալ իբրև գեղարդն երկայն․ նոյնպէս և թևք խաչին ձևացեալք յոսկեպատ ձողոյ ձգելոյ ը՟ մէջ բնոյն ։ 'Ի գագաթան խաչին հաստատեալ էր պսակ փառացի՝ ոսկեկուռ և ականակապ ։ 'Ի չորեցունց անկեանց միջակի խաչին՝ ուր չորեքին թևք միաւորին, 'ի դուրս ցայտէին շառաւիղք չորեքկին ոսկեձաձանչք՝ 'ի ձև յունական տառիս խի X , կմ՟ հայերէն տառիս Ք․ որ է սկզբնատառ անուանս Խրիստոս, Քս՟ ։ Այլ որ 'ի գագաթան զարդ պսակին՝ 'ի կողմն մի վայրաբերեալ՝ ձևացուցանէր զկիսաբոլոր․ որ միացեալ ընդ բնոյն՝ կազմէր զյունական տառն րօ՝ P, կմ՟ զհայերէնն Ր․ որ է երկրորդ տառ անուանս Քրիստոս․ և զայս երկտառ նշանակ կրէր յետոյ կոստանդիանոս նաև 'ի գլուխ սաղաւարտի իւրոյ ։ Իսկ 'ի միջակէ խաչին և 'ի վայր՝ կախեալ էր պաստառ դրօշակի 'ի ծիրանւոյ՝ քառակուսի հաւասար ը՟ լայն և ընդ երկայն՝ ոսկեթել ականակապ զարդու փողփողեալ․ և 'ի մնացուածն խաչի 'ի ստորին կողմն բնոյն (ուր այժմ սովոր

են դնել բաղումբ զնշանակ մահու , կ՟մ ըղգլուխն ադամայ ,) դրոշմեալ էին ոսկենկար պատկերք նորին ա՟ծասէր թագաւորին կոստանդիանոսի և որդւոյ նորա՝ կիսարձան , ք՟
միջով չափ մինչև 'ի լանջս ։

Արդ զայս սե՛կնում, որ է նշան և դրօշակ՝ իբրև խաչվառ յառաջաբերեալ կոստանդիանոսի առաջի բանակին իւրոյ , խաղաց գնաց ը՟դէմ բռնաւորին մաքսենտեայ և գործակցաց նորա , հաստատուն յուսով ապաւինեալ 'ի զօրութ՟ն երևեցելոյն նմա՝ վանել իսպառ զթշնամին ։ 'Ի նոյն միտս վառեալ և զօրքն ա՟մ՝ արարին և նոքա այր իւրաքանչիւր նշանակս ինչ խաչի 'ի վ՟ր սաղաւարտից կ՟մ զրահից և զինուց՝ յայլ և այլ նիւթոց , զոր առձեռն պատրաստ գտին 'ի ժամուն ․ և զուարթամիտ յառաջեցին 'ի պատերազմ ։

Եւ սովին ոգւով և զօրութ՟բ ամենայաղթ նշանին միջամուխ լեալ կոստանդիանոսի յիտալիա՝ յամի տ՟ն ․ 312 ․ երիցս 'ի դիմի հարաւ սակաւաձեռն գնդաւ բազմամբոխ զօրացն մաքսենտեայ ․ և երիցս վանե՟լ խորտակեաց զնոսա ։ Իսկ 'ի չորրորդում նուագի , որ օր ի՟ը էր հոկտեմբեր ամսոյ (զոր ոմանք նոյնացուցանեն ընդ ի՟է ․ աւուր սեպտեմբերի՝ յորում ետես զխաչն , ուստի սկսանի և ընդիկտիոնն յունաց ,) 'ի գլուխ տարաւ զկատարեալ յաղթութ՟ն յանդիման բնակչաց հռովմայ առ միլվիոն կամրջաւ ․ յորմէ 'ի վայր գլորե՟լ մաքսենտեայ 'ի գետն տիբերիս՝ կորեաւ ․ և այնպէս տիրեաց մեծն կոստան-

դիա

դիանոս կայսերական քաղաքին Հռովմայ և բովանդակ իտալիոյ մինչև ցափրիկէ և ցեգիպտոս. և անուանեցաւ 'ի ծերակուտէն միահեծան ինքնակալ Հռովմայեցւոց, բարձեալ հետզհետէ զա͞մ բռնաւորս, և տիեզերապետեալ արևմտից և արևելից։

Յայնմ ժամանակի՝ յամի տ͞ն 315. զկնի մելքիադեայ Հռովմայ հայրապետի՝ նստաւ յաթոռ ս͞բյն պետրոսի մեծն սեղբեստրոս՝ եւսեբիոս (ո͞ւ բարեպաշտ) կոչեցեալ, լուսաւորիչ արևմտեան ազգաց. զի որպէս ս͞բն գրիգոր 'ի հայաստան ը͞դ գործակցութեամբ տրդատայ՝ լոյս ծագեաց արևելեայց իբր երկոտասան կմ' չորեքտասան ամօք յառաջ քան զդարձ կոստանդիանոսի, նոյնպէս և ս͞բն սեղբեստրոս գործակցու͞բ կայսերն կոստանդիանոսի լուսաւորեաց զծերակոյտն Հռովմայ և զա͞մ արևմտակողմն. տեղի ետ այնուհետև խաւար կռապաշտութ͞են, և պայծացան եկեղեցիք ք͞ի։

Այլ թէ կոստանդիանոս ևս յայնժամ ընկալաւ զս͞բ մկրտութի 'ի սեղբեստրոսէ, ո͞պ աւանդեն յիշատակարանք գահին Հռովմայ, եթէ մօտ 'ի վախճան իւր մկրտեցաւ, որպէս ցուցանէ կեսարացին եւսեբիոս և որք զնորա բանից զհետ երթան, չէ ինչ։ Այս ինչ ըստոյգ է, զի խորենացին՝ որ քաջ գիտէր զմիտս բանից եւսեբեայ, և չէր ինչ հեռի ժամանակաւ, ո՛չ ըստ նորա խօսի, այլ հանդերձ վկայութ͞բ ագաթանգեղոսի ժ͞մկակից և ականատես մատենագրի՝ զհռովմայեցւոցն

ա-

աւանդս երկրորդէ առանց ը̃ բանս ինչ ածելոյ, ունելով բանիւն այսպէս. (Գիրք. Է. Գլ. 80.) * Նայս կոստանդիանոս . . . յառաջքան
,, զԹագաւորելն (զի զինքնակալելն), մինչ-
,, դեռ կեսար էր, պարտեալ 'ի մարտս, և
,, տրտմութ̃ մեծաւ ննջեալ, երևութացաւ
,, 'ի քուննմա խաչ աստեղեայ յերկնից՝ պա-
,, րունակեալ գրով, ասէ, այսու յաղթեա՛.
,, զոր արարեալ սիգնոն (զի նշան) և յառաջա-
,, բերեալ պատերազմացն յաղթեաց: Բայց
,, յետոյ հրապուրեալ 'ի կնոջէ իւրմէ 'ի մաք-
,, սիմինայ դստերէն դիոկղետիանոսի (կմ̃
մաքսիմիանոսի դահակցին դիոկղետիանո-
,, սի,) յարոյց հալածանս եկեղեցւոյ. և
,, զբազումս վկայեալ՝ ինքն եղեփանդական
,, բորոտութ̃ն ը̃ բոլոր ընկալեալ մարմնոյն
,, ապականեցաւ վասն յանդգնութ̃ն. զոր
,, ոչ կարացին բուժել արիովկեան կախարդ-
,, քըն և մարսիկեան բժիշկքն. յաղագս որոյ
,, յղեաց առ տրդատ՝ առաքել նմա դիւթս
,, 'ի պարսից և 'ի հնդկաց. սակայն և այնք
,, ոչ հասին նմա յօգուտ: Որ և քուրմք
,, ոմանք հրամայեցին 'ի դիւաց խրատուէ՝
,, բազմութ̃ի տղայոց զենուլ յաւազանս, և
,, ջերմ լուանալ արեամբ, և ողջանալ. որոյ
,, լուեալ զլալիւն մանկանցն՝ հանդերձ մարցն
,, կականմամբք, գթացեալ մարդասիրեաց
,, նոցա, լաւ քան զիւրն վարկուցեալ փրկու-
,, Թի: Յաղագս որոյ զփոխարէնն ընդունի
,, յԱյ յանրջական տեսութ̃ենց, յառաքելոցն
,, առեալ հրաման՝ սրբիլ լուացմամբ կեն-

,, սատու աւազանին 'ի ձեռն սեղբեստրոսի
,, եպսի Հռովմայ. որ 'ի նմանէ հալածա-
,, նայն թաքուցեալ էր 'ի սերապտիոն (կամ
,, 'ի սորակտէ) լերինն. յորմէ և աշակեր-
,, տեալ հաւատաց, զբռնաւորսն ա՟մբառնա-
,, լով ա՟յ յերեսաց նորա. որպէս համառօտ
,, ուսուցանէ քեզ ագաթանգեղոս ‖ ։

Յայտնի է և յայլոց մատենագրաց միւս ևս չարութ՟ի մաքսիմինայ փաւստայի, որ ետ առն իւրում կոստանդիանոսի սպանանել զորդի իւր զկրիսպոս զհաւատացեալն 'ի ք՟ս. քանզի կինն անզգամ տռփեալ 'ի խորթ զաւակ իւր կրիսպոս 'ի ծնեալն 'ի մինեռվայէ, և ոչ կարացեալ որսալ զնա 'ի կամս չարութ՟ե իւրոյ՝ չարախօս եղև առաջի հօրն, որպ՟ս թէ մանուկն բռնաբարեալ իցէ զնա 'ի պղծութ՟ի. և հայրն բարկացեալ՝ ետ կարճել զնա 'ի կենաց. այլ յետոյ 'ի վ՟ր հասեալ՝ թէ անպարտ էր մանուկն, սորջացաւ յոյժ, և զնա ինքն զչարեացապարտն զմաքսիմինա չարաչար պատուհասեաց. մինչև սատակեցաւ նա տանջանօք ։

Այլ 'ի դառնալ կոստանդիանոսի բոլորովին և 'ի լուսաւորել ա՟ծպաշտութ՟բ 'ի ս՟րյն սեղբեստրոսէ, ուրախութ՟ի մեծ եղև մտերիմ բարեկամի ն՟ր տրդատայ արքայիս մերոյ. վ՟ս առեալ ը՟ իւր զս՟բ լուսաւորիչն մեր՝ գնաց 'ի Հռովմ յողջոյն կոստանդիանոսի և սեղբեստրոսի ։ Իսկ ո՞ կարէ պատմել զհոգևոր ուրախակցութ՟ի ա՟ծասէր թագաւորաց և ս՟բ հայրապետաց ը՟ միմեանս վ՟ս տիեզերական լուսաւորուն՟ և պայծառութն՟ եկեղեցեացն ք՟ի , և զսէր ն՟ց միաբանական ․ զոր և ուխտիւք հաստատեցին ․ ո՟պ պատմէ Ագաթանգեղոս՝ որ էր առաջիկայ եղելոցն ա՟մի ․ ըղնոյն յիշատակէ և Խորենացին այլովքն հանդերձ ։

Իսկ մայրն Կոստանդիանոսի բարեյիշատակ և ժրագլուխ դշխոյն Հեղինէ՝ կարծի յոմանց վաղ քան զորդին եկեալ յա՟ծգիտութ՟ի , և պատճառ լե՟լի՟ք դարձի ն՟ր ․ այլ ե՟ այլոց՝ յետոյ լուսաւորեցաւ , և որդին եղև ե՟ իմիք պատճառ դարձի մօրն (4) ․ քանզի ասի՝ թէ 'ի ժամանակս լուսաւորութ՟ե Կոստանդիանոսի՝ Հեղինէ ոչ էր 'ի Հռովմ , այլ՝ 'ի Բիւթանիա արևելից , կամ 'ի Բրիտանիա արևմտից ․ և իբրև լուաւ զա՟մ անցս որդւոյն , զարմացաւ ․ զի թէպէտև ծանուցեալ էր ն՟մ զստութ՟ի հեթանոսական բազմա՟ծութ՟ե , այլ ե՟ խրատու հրէից կարծէր՝ թէ ճշմարիտ ա՟ծպաշտութ՟ին խնդրելի իցէ յազգէն եբրայեցւոց , և թէ չիցէ արժան հաւատալ 'ի Մեսիայն եկեալ , այլ՝ որ գալոցն է ։ Բայց իբրև եկն դշխոյն 'ի Հռովմ , ստուգագոյն քննեալ զճանապարհն ճշմարտութ՟ե՝ լուսաւորեցաւ և ինքն 'ի ս՟բյն Սեղբեստրոսէ , և մկրտեալ՝ ջերմ հաւատով պաշտէր զք՟ս ․ և այնպէս ա՟ծասէր կայսրն և ա՟ծասէր դշխոյն օր ք՟ զօր յաւելուին 'ի հանդէս բարեպաշտութ՟ե , և բանիւ և օրինակաւ ձգէին զամենեսին առաքելաբար 'ի ս՟բ հաւատս ք՟ի ։ Կոստանդիանոս արքունի հրովարտակօք խափափանէր զա՟մ պաշտամունս դից , եւ զտաճարս կռոց՝ էր զոր կործանէր , եւ էր զոր փակէր , եւ զարձանս դրօշեա՟լս տայր պատել եւ աներեւոյթ առնել . եւ զոմանս 'ի մեհենից տայր սրբել եւ տաճարացուցանել ա՟յ ճշմարտի , եւ զայլ եւս եկեղեցիս 'ի հիմանց շինել , եւ համարձակ պաշտել զքրիստոնէութի՟ ը՟ ա՟մ տեղիս : Նա եւ հեղինէ յա՟մի յորդորիչ եւ ձեռնտու լինէր որդւոյն . եւ ինքն եւս բազում եկեղեցիս եւ վկայարանս կանգնէր յարեւմուտս եւ յարեւելս : Նա եւ որ մեծն է , ը՟ տեսանել զորդին գործել ինչ տիրաբար արքունի իշխանութ՟բ արտաքոյ քան զօրէնս՝ մայրենի համարձակութ՟բ 'ի լաւ անդր յեղափոխէր . եւ ոչ թողոյր զնա խոտորիլ յաջ կ՟մ յահեակ , այլ զարքունական գնալ պողոտայն . եւ 'ի տեսանել զառաքինի փաստակս ն՟ր՝ եւս քան զեւս յորդորամիտ առնէր զնա :

Իսկ հպատակութե՟ ինքնակալին առ մայր իւր , եւ յարգութե՟՝ զոր ընծայէր նմա , ոչ գո՟յր չափ . մինչեւ գեղեցիկ եւ անթերի լնուլ զա՟ծային պատուիրանն պատուելոյ զծնօղս . վ՟ն զի ա՟մ խոնարհութ՟բ լսօղ լինէր բարի բարի խրատուց մօրն , եւ ոչ թողոյր անկանիլ միոյ 'ի բանից ն՟ր 'ի գետին : Միանգամայն եւ արքունի փառացի շքով մեծարանաց պատուասիրեալ զդշխոյ մայր իւր՝ հրաման ետ , զի ոսկի դրամ հատցի յանուն ն՟ր . 'ի մի կողմն եդեալ , * փլաբիա հեղինէ օգոստա տիրուհի ‖ . եւ 'ի միւս կողման , * ապահովութիւն հասարակապետութե՟ ‖ . եւ պատուիրէր , զի 'ի թերանոյ ա̅մ դասուց զօրացն արքունի՝ որ 'ի քրիստոնէից և որ 'ի հեթանոսաց, օգոստատիրուհի և ինքնակալուհի՝ (այս է աւգուստա և իմբէռատրիքս) վերաձայնեցին դշխոյն հեղինէ ։ Եւ ոչ այսչափ միայն, այլև զիշխանութիւն արքունի գանձուն դշխոյին յանձն արար 'ի ձեռս մօրն․ զի յ̅ժ գթասէր բարոյիցն առատապէս բաշխեցէ 'ի պէտս կարօտելոց և 'ի շինութի̅ եկեղեցեաց, և յա̅մի՝ զիա́րդ և կամք իցեն նմա ։

Բազում ինչ արար ա̅ծասէր թագաւորն կոստանդիանոս նաև յօգնականութի̅ հովուապետութե̅ սր̅յն սեղբեստրոսի, և պանծալի հանդիսացոյց զգահն հռովմայ․ զի զա̅մ պէտս եկեղեցեաց լնոյր ա̅մ խնամով․ և 'ի լինել խնդրոյ վ̅ն բանի հերեսիովտաց ժամանակին՝ 'ի գործ դնէր զարքունի իշխանութի̅ իւր՝ սանձել զանուղղայս ըստ խրատու սեղբեստրոսի, զոր պատուէր ա̅մ հպատակութե̅ իբրև հայր հոգւոյ իւրոյ ։

Այլ պանծալի ևս ցուցաւ այս հանդէս բարեպաշտութե̅ կոստանդիանոսի 'ի տիեզերական ժողովն նիկիոյ՝ ձեռնարկութե̅ սեղբեստրոսի յամի․ 325․ ուր հարկեալ 'ի փոխանորդացն ն̅ր և յա̅մ հայրապետաց սր̅ց՝ նստաւ 'ի մէջ հարց, այլ ընտրելով անձին տեղի ստորին, և ո՛չ զբարձրագահն՝ զոր ընծայէին նմ̅․ և յ̅տ սահմանելոյ սր̅յ ժողովոյն բոլորով սրտիւ ընկալե̅ զուղղափառ դաւանութի̅ արտասահման արար զհերեսիովտապետն զարիոս և զգործակիցս նորա զգլխաւորս ։

Բայց քանզի աղուէսաբարոյն արիոս եցոյց զղջումն յոյժ, և միջնորդ կալեալ զբազումս յեպիսկոպոսաց համախոհից իւրոց, անգիտացեալ թագաւորին զչարութիւն խորհրդոց նորա՝ յետս դարձոյց զարիոս իբրև զղջացեալ. և յայս պատճառանաց բազումնեղութիւն և ալեկոծութիւն կրեաց աստուածասէր թագաւորն: Մինչ զի առ առաւել երկիւղածութեան՝ յարգութիւն մեծ ցուցանէր առ ամենայն քահանայս Աստուծոյ և պաշտօնեայս եկեղեցւոյ. իսկ 'ի հակառակիլ եպիսկոպոսաց ընդ եպիսկոպոսունս և երիցանց ընդ երիցունս՝ ոչ գիտէր, թէ որում կողմանն ունկն մատուցանիցէ: Եւ թէպէտև սխալեալ սխալեաց երբեմն՝ եղեալ 'ի բանս արիոսեան և կիսարիոսեան արանց, այլ ոչինչ են զարմանք. զի և երևելի եպիսկոպոսունք ոչ սակաւ նաւակոծեցան յալեկոծութեան անդ մեծի, զոր կրեաց եկեղեցին յայնմ ժամանակի. բայց յայսր ամենայնի վերայ բարեպաշտ թագաւորն ոչ երբէք երկմտեաց յողջամիտ վարդապետութենէ, այլ զնիկիականն հաստատուն պահեաց հաւատս ուղղափառութեան մինչև 'ի մահ:

Զայնու ժամանակաւ փոխադրեաց կոստանդիանոս ինքնակալն և զաթոռ իւր 'ի հռովմայ 'ի բիւզանդիա՝ 'ի գեղեցկադիր սահման կիտի արևելից և արևմտից՝ 'ի ծագսահմանաց ասիոյ և եւրոպիոյ. զոր մեծացոյց և ամրացոյց պարսպօք, և զարդարեաց ազգի ազգի շինութեամբք, եկեղեցեօք և պալատանօք. և անուանեաց նոր հռովմ. այլ բնակիչքն և ամենայն ազգ կոչեցին զայն՝ կոստանդինու պօլիս , այ՟ կոստանդիանոսի քաղաք , և պարզա՟պս՝ պալատ կ՟մ արքունիք , և Թագաւորեալ քաղաք ։ Արար շինուածս բազումս զա՟մ աւուրս իւր և 'ի բազում այլ քաղաքս . Եւ շինել և եկեղեցիս ոչ սակաւ յայլևայլ տեղիս յարքունի գանձուց . ո՟պ և յե՟մ 'ի ձեռն մօր իւրոյ 'ի գնալն ն՟ր անդր ։

Քանզի ա՟ծասէր դշխոյն Հեղինէ մեծապէս տենչմամբ փափաքեալ գիւտի պատուական խաչափայտին ք՟սի Թաղելոյ 'ի գողգոթայ լերին , և հրաման առեալ յա՟յ 'ի տեսլեան վ՟ն այնր բանի , եւ գնաց 'ի ս՟բ քաղաքն ե՟մ . և խնդիր արարեալ՝ եգիտ սքանչելեօք զփափաքելին . որ՟պս է տեսանել 'ի կատարեալ պատմութ՟ե տօնի գիւտի ս՟բ խաչին . զ՟ որոյ ասէ և խորենացին . (Է . 84 .) * Քանզի
,, շապուհ (երկայնակեաց՝ արքայ պարսից)
,, աղաչեաց զյաղթօղն կոստանդիանոս՝ խնդ-
,, րել զհաշտութ՟ի և զխաղաղութ՟ի մշտնջե-
,, նաւոր . զոր արար իսկ ս՟բն կոստանդիա-
,, նոս ։ Յետ այսորիկ առաքեաց զհեղինէ
,, զմայր իւր յե՟մ 'ի խնդիր պատուական
,, խաչին . զոր և եգիտ իսկ զփրկական
,, փայտն հանդերձ հինգ բևեռօք 'ի ձեռն
,, յուդայի հրէի , որ ապա եկաց ե՟պս յե-
,, րուսաղէմ ‖ ։

'Ի շրջիլն ապա հեղինեայ 'ի տնօրինական ուխտս ս՟բյ քաղաքին՝ շինեաց եկեղեցիս և մատուռունս բազումս 'ի պատիւ ս՟բ ծննդեան և չարչարանաց և յարութ՟ե և համբարձման փրկչին 'ի տեղիս անդ ա՟ծային տնօրէնութ՟ե .

յորս երևելի էր հոյակապ տաճարն կանգնեալ 'ի տեղի գիւտի խաչին՝ իբրև շինուած նորին հեղինեայ . և առաւել մեծավայելուչ եկեղեցին սբ̃ յարուե̃՝ իբրև 'ի կոստանդիանոսէ շինեալ . զի դշխոյն հեղինէ ոչ եհաս տեսանել զկատարումն նորա . այլ յետ մահուան նորա կոստանդիանոս կատարեաց զայն , և արար մեծաւ փառօք զնաւակատիս այնր տաճարի՝ 'ի ձեռն մեծահանդէս ժողովոյ եպիսկոպոսաց ։

Բայց ա̃ծասէր դշխոյն շինեաց և զեկեղեցին՝ որ 'ի բեթղեհէմ , 'ի մէջ առեալ զտեղի ծննդեանն քն̃ի 'ի յայրին . նոյնպէս և զմիւս այլ՝ որ 'ի լերինն ձիթենեաց 'ի տեղւոջ համբարձման ա̃ն . ուր և յայտնի սքանչելիք ցուցան . զի 'ի սալայատակ առնել անդ զտաճարն՝ անհնար եղև շինողաց ծածկել քարամբ զերկու ոտնաչափ տեղիս , որպ̃ս և ոչ զմիջնայարկն գմբեթին զուղղահայեաց 'ի նոյն վայր կարացին ծածկել . որով յայտնի եղև ոտնատեղին և ճանապարհ վերելից փրկչին 'ի պահու համբարձման ։ Հեղինեայ ընծային և այլ եկեղեցիք վաղուց շինեալք 'ի պաղեստին . զք̃ 'ի գեթսեմանի 'ի վ̃ր գերեզմանի սբ̃ ա̃ծածնի , և ծնողաց նր̃ յովակիմայ և աննայի . և 'ի տեղւոջ անդ պարտիզի՝ ուր զարեան քրտունս եհեղ տ̃րն . և 'ի բեթղեհէմ յանուն անմեղ մանկանց . և 'ի տեղւոջն՝ ուր հրեշտակն աւետարանեաց հովուաց , այլովքն հանդերձ ։

Տեսեալ հեղինեայ դշխոյի յե̃մ զբազում

կուսանս նուիրեալս այ՟՝ եցոյց նոցա գութ և մարդասիրութի՟ յոյժ . կոչէր զնս՟ 'ի ճաշ իւր . և այնչափ ջերմ սիրով խանդաղատէր զնոքօք , մինչև դժպատեհ համարել զոք յիւրոց աղախնայց կարգել 'ի սպաս նոցա , այլ ինքնին սփածեալ ղենջակ՝ պաշտէր զնս՟ 'ի մատակարարել զկերակուր , և 'ի մատուցանել զբաժակ , և 'ի լնուլ ջուր 'ի ձեռս նց՟ . և այնպէս դշխոյն տիեզերական՝ աղախին աղախնայցն քսի՟ զանձն առնէր : Եւ զի բազումք այն էին 'ի կուսանաց , որոց ոչ էր մենարան առանձնութե՟ , այլ 'ի տան հանդարտէին , շինեաց նոր կուսաստանս առ եկեղեցեօքն՝ զորս կառոյց , և նշանակեալ զանուանս նց՟ 'ի գիր՝ կարգեաց ռոճիկս արքունուստ ըստ բաւականի իւրաքանչիւր մենաստանաց , եղեն իբր մայր կմ՟ մայրապետ կուսանացն պաղեստինոյ . նորոգեաց և շինեաց և զայլ բազում վանորայս միանձանց՝ արանց և կանանց յայլևայլ տեղիս :

Եւ ոչ 'ի պաղեստին միայն այսպս՟ բարեգործեաց ա՟ծասէր դշխոյն , այլև ըս՟ գրելոյ Եւսեբեայ , ըն՟ ամ՟ արևելս յածեալ արքայավայել մեծագործութբ՟՝ անթիւ բարիս եցոյց յաճախութբ՟՝ քաղաքաց քաղաքաց և անձանց առանձնականաց . և գանձս բազումս առատաձեռնեաց զինուորական դասուն . իսկ աղքատաց և տառապելոց՝ է՛ զի ինչս և է՛ զի զգեստս բաշխէր առատապէս . զբազումս 'ի բանտարկելոց արձակեաց , զայլս յաքսորանաց յետս դարձոյց . և զհարստահարեալս

՚ի բռնութ̃է հզօրաց ազատեցոյց ։ Ամենեցուն բարերարել փութայր, և առ ամենեսին մարդասէր և հեզ ցուցե̃լ լինէր . առաւելա̃պս խոնարհութ̃բ սէր և պատկառանս յարգութ̃ե ընծայէր դասուց միայնակեցաց և եկեղեցականաց ։

Իսկ ջերմեռանդն աղօթասիրութ̃ի նորա և ստէպ կանխել յեկեղեցիս՝ օրինակ բարի տուաւ ամենեցուն . հանապազորդ կանխէր (ասէ Եւսեբիոս) ՚ի տաճարն յանդիման ամենեցուն, և ազնիւ սպասուք զարդարեալ պայծառացուցանէր զեկեղեցիս և զվկայարանս, ոչ անտես առնելով և զմատուռնս իսկ փոքրիկ քաղաքաց ։ Նա և էր տեսանել զաքանչելի դշխոյն, զի պարկեշտ և վայելուչ ձևով կայր յեկեղեցւոջ ը̃ն այլ բազմութ̃ե ՚ի կարգի անդ կանանց, ոչինչ խտրելով զտեղի շքեղ կ̃ անշուք . և կայր յաղօթս անմռունչ խոնարհական ցածութ̃բ՝ օտար յիշխանասիրութ̃է և ՚ի փառասիրութ̃է . և այնպէս զիւր առ ա̃ծ կրօնասիրութ̃ի ա̃մ կարգօք բարեպաշտութ̃ե յայտնի կացուցանէր . վ̃ոյ և ա̃ծ փառաւորեաց զնա աստ և ՚ի հանդերձելումն ։ Նկաց յ̃ծի անցաւ կենօք, և կատարեալ առողջութ̃բ հոգւոյ և մարմնոյ . և հասեալ ՚ի հասակ ութսունամեայ՝ խաղաղութ̃բ վճարեաց զկեանս ։ Նա և ՚ի ժամ աւանդման հոգւոյն բազմապատիկ խրատս բարեպաշտ և ա̃ծասէր վարուց իբրև կտակ թողոյր որդւոյ իւրում, օրհնելով զնա ա̃մ հոգևոր օրհնութ̃բ . զի այս է ասէ իմ փափաք ո՛վ որդեակ գեակ իմ, զի ա՟ծասիրութ՟ և մարդասիրութ՟ նշանաւոր եղիցիս ․ զհոգիդ զարդարեսցես ա՟մ առաքինութ՟ անման յամբարտաւանութ՟է, և զտ՟րութ՟իդ խնամով տնտեսեսցես ․ և զլուխ ա՟մի տ՟ն ծառայեսցես ահիւ և դողութ՟ ։ Եւ ապա ողջունեալ զամենեսին՝ աւանդեաց զհոգին ’ի ձեռս ա՟յ ։

Յայնժամ մեծն կոստանդիանոս սուգ առեալ ’ի վ՟ր մօր իւրոյ՝ արար նմա յուղարկաւորութ՟ի կայսերական, և թաղեաց պատուով ’ի փառաւոր շիրմի ․ զոր ոմանք ասեն լինել ’ի կոստանդինուպօլիս ’ի նորին հռովմ ’ի տաճարի առաքելոց, ուր պատրաստեալ էր և զիւր գերեզման ․ և այլք ’ի հին հռովմ ’ի ճանապարհին լաւիկանայ ’ի վկայարանի ս՟բյն մարկեղլինոսի և պետրոսի (5) ։ Ըստ առաջնոյն իբրև ստոյգ աւանդի, թէ յետ ժամանակաց փոխադրեցաւ մարմին նորա ’ի կոստանդնուպօլսոյ ’ի վենետիկ, և եդաւ ’ի կղզւոջն՝ որ յանուն ն՟ր կոչի ս՟բ հեղինէ ․ ուր ը՟ երկրորդին դնեն ոմանք փոխադրեալ ըզմարմին ն՟ր ’ի հռովմայ ’ի գաղղիա ․ բայց յայտ է թէ այլևայլ մասունք նշխարաց ն՟ր սփռեալ կան ը՟ ա՟մ եւրոպիա ․ և յիշատակ ն՟ր պաշտի յա՟մ եկեղեցիս ․ և բազում սքանչելիք պատմին ’ի յիշատակագիրս և նշանք բժշկութ՟ե՝ բարեխօսութ՟ ն՟ր ։ Ասի՝ թէ ա՟ծասէր դշխոյն էր նաև գրասէր և ընթերցասէր յոյժ ․ մինչև ընծայել նմա ոմանց և գրուածս ինչ բարեպաշտականս ։ Վախճան ն՟ր եղև յա՟մի տ՟ն իբր ․ 330 ։

Իսկ բարեպաշտ ինքնակալն կոստանդիանոս հետեւող գտեալ յա՟մի մայրենի առաքինութեանց եւ խրատուց՝ փայլէր գեղեցիկ հանդիսիւ ա՟ծպաշտութե՟ եւ արդարադատ իշխանութե՟ . մինչեւ համբաւ բարեպաշտութե՟ն ն՟ր եւ երախտիք մարդասիրութե՟ն ծաւալեցաւ ընդ ա՟մ եկեղեցիս քրիստոնէից . թող զբազմութ՟ի եկեղեցեացն՝ զոր շինեաց եւ պայծառացոյց . ուր եւ լսէր զնշխարաց սր՟ց մարտիրոսաց՝ տայր շինել վկայարանս ՚ի վերայ գերեզմանի ն՟ց , կամ ՚ի տեղւոջ կատարման նոցա . բաշխեաց եւ գանձս յոլովս ՚ի պէտս աղքատաց եւ յայլ գործս բարեպաշտութե՟ . ո՟պ եւ իւրումն առատաձեռնութե՟ էր գործ՝ զոր ինչ արար մայր նորա յա՟մ տեղիս արքունի ծախիւք ։

Նա ՚ի վերայ այսր ա՟մի՝ զարքունի իշխանութ՟ի իւր , որով մեծացաւ քան զա՟մ թագաւորս իւրոյ ժամանակի , ոչ անձին ինչ ընծայէր , այլ ա՟յ . նմին իրի եւ ը՟ բանից ագաթանգեղոսի ականատես վկայի՝ ա՟ծակարգ թագաւորութ՟ի զիւր թ՟գւորութ՟ին անուանէր . եւ ինքն այնչափ ա՟ծասէր եղեւ եւ ա՟յ սիրելի , մինչ զի հրեշտակ յերկնից երեւել ը՟ առաւօտս առաւօտս , այն՝ որ պահապանն էր ն՟ր , զօրհանապազ սպասաւորէր նմա . եւ զ՟քեան նշան թագին առեալ՝ ՚ի նորին գլուխ դնէր . եւ այսպէս տեսեալ զերկնաւոր հրեշտակն յիւրում սպասաւորութե՟ երանելին եւ ցանկալին ա՟մ թագաւորաց կոստանդիանոս՝ զիւր թագաւորութե՟ զծիրանիսն ք՟ի աւանդէր ա՟ծասէրն ․ և ա՟ծպաշտութ՟ գեր 'ի վերոյ ամենեցուն գտեալ՝ հաւատովք հաստատէր զթագաւորութ՟ իւր , և յա՟մ եկեղեցիս հաստատէր զնոյն հաւատս ճշմարտութ՟ ։ Պարձեալ արժանացաւ երանելին կոստանդիանոս տեսանել յայտնապէս զհրեշտակն՝ որ սպասաւորէր նմին յակոբայ մծբնայ հայրապետի ․ ո՟պ տեսցես 'ի վարս նորա ։

Աստանօր գրէ և եւսեբիոս ականատես վկայ վ՟ն կոստանդիանոսի , թէ սա միայն գտաւ յինքնակալս հռովմայ՝ որ զա՟ծ զթագաւորն ամենեցուն գերագոյն բարեկրօնութ՟ պաշտեաց , և սա միայն զվ՟դպութ՟ի ք՟ի ազատաբերան քարոզեաց ամենեցուն , և զեկեղեցի ա՟յ այնպիսի պատուով և փառօք պայծառացոյց ։ Եւ ո՟պ յայտ է յելից իրացն , ոչ ոք նման նմա գտաւ և 'ի յաջորդկայսերս հաւատացեալս 'ի ք՟ս ․ և որք բարեպաշտ գտան 'ի ն՟ս , (որոց գլուխ մեծն թէոդոս ճանաչի ,) զսա կալան օրինակ , և զսա ծանեան գլուխ ա՟ծպաշտութ՟ ինքնակալաց , և պատճառ դարձի ա՟մ հռովմայեցւոց 'ի ք՟նական հաւատս ։

Արդ այսպիսի կարգօք ա՟ծպաշտութ՟ լցեալ զաւուրս իւր մեծ թագաւորն կոստանդիանոս , յերեսներորդի երկրորդի ամի թագաւորութ՟ իւրոյ փոխեցաւ յաստեացս յերկնից թագաւորութ՟ի , 'ի հասակի իբր վաթսուն , կ՟ք վաթսուն և հինգ ամաց՝ յամի տ՟ն 337 ․ 'ի մայիսի ․ 22 ․ յաւուր հանդիսի մեծի պենտեկոստէին՝ զհասարակ աւուրբ յաքիրոն աւանի՝ որ յարուարձանս Նիկոմիդեայ, մահկանացուայ թողեալ (աւաղ եւսեբի) զմահկանացու նշխարս իւր, և զանմահական մասն զհոգին զզարդարեալն ա̅ծգիտութ̅ե և ա̅ծսիրութ̅ե միաւորեալ ընդ ա̅յ իւրում։

Այս եղև հանգիստ ն̅ր պատուով, որպիսի ոչ ումեք լեալ էր 'ի կայսերաց. քանզի զառաջինն սուգ մեծ առին 'ի վ̅ր մարմնոյ ն̅ր աւագանին հանդերձ ազատագունդ զօրօք 'ի տեղւոջն՝ ուր վախճանեցաւ. և ապա բարձեալ զպատուական մարմինն 'ի մահճաց՝ եդին յոսկեղէն տապանակ պատեալ արքունի ծիրանեօք, և բերեն շքով մեծաւ 'ի թագաւորեալ քաղաքն 'ի կոստանդինուպօլիս՝ հանգուցին 'ի գլխաւոր սենեակին արքունեաց 'ի բարձրադահ տեղւոջ. վառեցին շուրջանակի ջահս և մոմեղէնս 'ի վ̅ր ոսկի աշտանակաց. և բազմեցուցեալ զմարմինն 'ի մէջ նոյն տապանակին՝ զմռսեալ ազնիւ խնկենեօք, ծիրանազգեստ՝ թագապսակ՝ կայսերաշուք, զցայգ և զցերեկ հսկեալ պահէին բազմութ̅ք արանց պատուականաց. մինչև՝ եկեալ հասանիցեն և արքայորդիքն կոստանդին, կոստանդ, և կոստաս։ Յայնժամ վայրի գային ժողովելին զօրավարք և հազարապետք, կուսակալք և դատաւորք, և ա̅մ պաշտօնեայք թագաւորութ̅ե. և մատուցեալ առաջի տապանակին՝ ո̅պ օրէն էր յանդիման լինել ինքնակալի, ծնրադրական երկրպագութ̅ե ողջունէին զնա իբրև կեն-

դա

դանի․ յետ նոցա ծերակոյտն և ա՟մ աւագանի պալատանն նոյնօրինակ երկրպագութ՟ե մեծարէին․ ապա և այլք 'ի մեծամեծաց քաղաքին, և զկնի ժողովրդականք՝ արք և կանայք անհամար բազմութ՟ե ։

Ու ո՛ւր և լսելի լինէր մահ բարեպաշտ ինքնակալին՝ առ հասարակ սգազգեաց լինէին․ ևս առաւել 'ի մեծն հռովմ մնացեալ ծերակոյտն ա՟մ ժողովրդեամ՟բ ազգի ազգի նրշանակս սգոյ և յարդութ՟ե առ վախճանել կայսրն յանձինս բերէին․ երանելի և ա՟ծասէր զնա կարդային, և միակ արժանաւոր ինքնակալ հռովմայեցւոց զնա ձայնէին․ և արձանս և պատկերս յանուն նորա կանգնէին՝ ոչ միայն իբրև թագաւորի, այլ իբրև առն ա՟յ և ս՟բյ․ մինչև նկարեալ երկնային կամարս՝ 'ի խորանս երկնից փառօք բազմեալ զնա ձևացուցանէին․ և ձայն բարձեալ բողոքէին, զի մարթասցին 'ի հռովմ տալ բերել զմարմին նորա՝ 'ի պարծանս ըստ հոգւոյ և մարմնոյ․ որում անհնար էր լինել․ քանզի ա՟ծասէր թագաւորն ըզհռովմ պատուէաց հոգևորապէս, և զկոստանդինուպօլիս զձեռակերտ իւր մարմնաւորապէս․ նմին իրի և խորհրդով պատրաստեալ էր զտեղի գերեզմանի իւրոյ անդ 'ի կոստանդիանոսի ք՟ղք 'ի տաճարի ս՟բց առաքելոցն, որ յիւրմէ շինեալ․ և անդ թաղել զինքն պատուիրեալ էր 'ի կտակի իւրում։

Որդ՝ Է՟ հաստատել միջին որդւոյ ինքնակալին

'ի

'ի ք̄ղք անդր , որ այն ինքն է կոստանդ. կի̄ր կոստանդոս՝ սահմանեալ 'ի հօրէն կայսր արևելեան 'ի կոստանդինուպօլիս , բարձին յարքունեաց զմարմին ս̄բ թագաւորին , և տարան հանդիսապէս 'ի տաճար առաքելոց՝ առաջի գնալով կոստանդեայ մեծամեծօք և գունդագունդ դասուք ոսկեզէն վառելոց , և զհետ ընթանալով գրեթէ ա̄մ քաղաքին ։ Եւ զկնի արձակման արքայական հանդիսին՝ մատուցեալ ուխտի եկեղեցւոյն կատարեցին զա̄մ կարգ պաշտամանց , և սաղմոսիւք և օրհնութ̄բ հանգուցին զմարմինն 'ի պատրաստեալ շիրմի , որ էր վէմ կոփածոյ 'ի պորփիւր քարէ՝ ո̄ր 'ի ծիրանւոյ , ագուցանելով 'ի մէջ ն̄ր զոսկի տապանակ մարմնոյն ։ Եւ էր տեղի շիրմին 'ի միջավայրի երկոտասան մահարձանաց կամ տապանաձև շինուածոց կանգնելոց 'ի կոստանդիանոսէ 'ի յիշատակ երկոտասան առաքելոց , վեց աստի , և վեց անտի , և արքայն 'ի միջի , զ̄ի յառաջադիր խորհրդոյ մասնակից լինելոյ շնորհաց ս̄բ առաքելոց , և կցորդ աղօթից մատուցելոց յիւրակերտ տաճարի անդ . և ա̄ծ փառաւորեաց զնա առաքելանման պատուով . զի գործեցան ընդ ժամանակս ժամանակս նշանք 'ի տապանէ ս̄բ թագաւորին՝ զ̄ի աւանդելոյ յայսմաւուրացն յունաց ։

Այլ յետ քանի մի ամաց՝ անարժան պատրիարքն կոստանդնուպօլսոյ հոգեմարտն մակեդոն պատճառելով զհնութ̄ի տաճարի առաքելոց՝ փոխադրեաց անտի զմարմին

ս̄բյն

սրբ՟յն կոստանդիանոսի 'ի տաճար սրբ՟յն ակակիոսի։ Ընդ որ բարկացաւ յոյժ կայսրն կոստանդ. զի առանց գիտութեան իւրոյ փոխեալ էր նր՟ զտապան հօր իւրոյ, և այն ընդդէմ կամաց ժողովրդեան՝ արիւնհեղութ՟բ հանդերձ. որոյ վ՟ս իսկ ընկեց զնա ասեն յաթոռոյ պատրիարգութեան. ուստի երևի՝ թէ դարձուցաւ տապանն յառաջին տեղին յետ նորոգման եկեղեցւոյ առաքելոց. զոր և կրկին նորոգութ՟բ կանգնեաց զկնի յուստինիանոս մեծն 'ի վեցերորդ դարու, և զարդարեաց զգամբարանս թ՟գւորաց՝ որք կային յարտաքին գաւթի տաճարին. իսկ շիրիմն կոստանդիանոսի էր 'ի մէջ եկեղեցւոյ (6)։

Յետ ժամանակաց յառման կոստանդնուպօլսոյ յայլազգեաց՝ բարձան յիշատակք թագաւորաց. բայց ոսկերք սրբ՟յն կոստանդիանոսի գէթ ըստ մասին փոխադրեցան յարևմուտս 'ի կաղաբրիա, որ և կոչի մեծ յունաստան հանդէպ սիկիլիոյ, և եդան 'ի գիւղն՝ որ կոչի ս՟բ կոստանդիանոս 'ի թեմի միլետեան. ուր կատարի տօն նր՟ 'ի մայիսի աւուր երկրորդի. թող և զեղբայրութի բարեպաշտից 'ի սիկիլիա յանուն սրբ՟յն կոստանդիանոսի. սոյնպէս և յայլ տեղիս տեղիս եւրոպիոյ ասին լինել նշխարք նր՟, յորս կատարի առանձին յիշատակ անուան նր՟։ Այլ երբեմն և 'ի բրիտանիա կամ յանգղիա ոչ սակաւ եկեղեցիք և խորանք յանուն սրբ՟յն կոստանդիանոսի թագաւորի, զոր հայրենեօք համարէին լինել յԾ̄է իւրեանց. եւ մի յեկեղեցեաց անտի գեղեցկաշէն կայ մնայ ասեն մինչեւ ցարդ :

Ր.ււ յայսր ամի վր̄ լատինք առաւել զհեղինեայ դշխոյի ունին զհանդիսական յիշատակ մինչեւ ցայսօր, ո̄պ ոչ ունին զկոստանդիանոսին. իսկ յարեւելս միօրինակ պահի տօն յիշատակի երկոցունց. եւ ճանաչի մեծն կոստանդիանոս փառք պարծանաց տանն յունաց, զի ոչ միայն պայծառացոյց զեկեղեցիս նց̄, այլեւ հռովմէական կայսերութե̄ եւ անուամբ բարձրացոյց զազգ եւ զԾ̄նց̄. զի յետ նր̄ երթալով երթայր եւ նուաճէր թագաւորութի̄ հռովմայ, որ աճեաց եւ մեծացաւ յարեւելս 'ի մէջ յունաց 'ի նորն հռովմ 'ի կոստանդինուպօլիս. ուստի եւ կռէգք՝ ո̄պ յոյնք՝ յայնմ հետէ կոչեցան ռոմէի, կամ հոռոմք, ո̄պ հռովմայեցիք. եւ մնաց անուանն այն 'ի վր̄ նոցա մինչեւ ցայսօր յարդեանց կոստանդիանոսի յաւերժայիշատակ սբ̄ թագաւորի :

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ.

(1) Կրկին է առ մեզ յիշատակ տօնի սբ̄յն կոստանդիանոսի. մի՝ 'ի կարգի ապայից ընդ սեղբեստրոսի, եւ միւս եւս աստ ը̄ հեղինեայ. այլ երկրորդս այս է սեպհական տեղի տօնի փոխման նր̄, ը̄ որում փոխադրեալ 'ի միջոցէ մայիս ամսոյ 'ի կարգէ յինանց. ո̄պ եւ 'ի Հ. եւ Ց. դնի 'ի մայիսի 21 : Իսկ առաջինն այն է ընկյե-

շա

չատակ դարձի նր առ սեղբեստրոսիւ։ Տես զոր ասացաքն. Հատ. Ա. երես. 420։

(2) Միաբանին ը̃ մեզ և բոլլանդեանք բենկոս և բաբեպրոքիոս՝ առաւել ստոյգ համարել, թէ հեղինէ էր բիւթանացի 'ի դրեպանոյ գեղջէ, քան թէ՝ որպ ոմանք յարեւմտեայց կարծեցին լինել՝ 'ի բրիտանիոյ կամ 'ի տրեվերայ (ուր յետոյ եկն յարեւելից). քանզի և տկարագոյն են աւանդութիւնք նց քան զարեւելեայցն. յորս պրոկոպիոս՝ որ գրեաց ստուգապատում բանիւք զշինուածոց յուստինիանոսի հանդերձ յիշատակաւ հնութեց, մեկն աւանդէ՝ թէ հեղինուպօլիս քաղաքն՝ որ 'ի բիւթանիա գաւառի, էր նախ աւան ինչ անշուք. զոր մեծն կոստանդիանոս նորոգեալ ձոխացոյց, և կարգեաց 'ի համար երեւելի քաղաքաց. և որ կոչիւր յառաջագոյն դրեպանէ կմ տրեվանոս, անուանեաց հեղինուպօլիս 'ի պատիւ մօր իւրոյ հեղինեայ, և 'ի յիշատակ ծննդեան և սննդեան իւրոյ։ Եւ ոչ ունի ոք ասել, թէ զի՞ կայր կոստայ հօրն կոստանդիանոսի դեգերիլ յայն կողմանս արեւելից՝ ուր ինքն էր արեւմտեան ոք. վզ զի զօրավար էր կայսերաց, որք ոչ միայն տիրէին և սախական այն կողմանց, այլև նիկոմիդա քաղաք բիւթանացւոց էր գահ կայսերութե նց իբր հաւասար հռովմայ յաւուրս դիոկղետիանոսի և մաքսիմիանոսի. և բազում այն է՝ զի մին աստ, և միւսն անդ նստէր։ 'Ի դէպ գայ այսմ և ընտրելն յետոյ կոստանդիանոսի զբիւզանդիա յաթոռ կայսերութե, զի ընտել էր վայրացն և սիրեցող բնիկ գաւառաց մանկութե իւրոյ։

Թող զոր ոմանք յասորի և յարաբացի մատենագրաց եդին, թէ հեղինէ դշխոյն էր 'ի միջագետաց՝ 'ի կողմանց ուռհայոյ, որ է եդեսիա. քանզի չփոթեալ են գրողքն կմ ընթերցօղք զհեղինէ եդեսացի զտիկինն աբգարու թագաւորին առաջին հաւատացելոյ 'ի քս, ընդ հեղինեայ մօր կոստանդիանոսի. այլ խորենացին ուրոյն ուրոյն յիշէ զնախկին հեղինէն և զերկրորդն։

(3) Թէև անծանօթ իցէ արդեօք ը̃ գրութե, բայց վաւերական է ը̃ հնութե՝ վկայն նահատակեալ առ յուլիանոսիւ, և յիշատակեալ 'ի Հ. աստ այսպէս. * և թէ
„ զիարդ և որպէս էր նա (կոստանդիանոս) որդի կոս-
„ տասայ, պատմեցից 'ի գրոց եւսեբիանոսի վկային (տպ.
„ սբր վկային սինկղիտոսի)||. զոր և յիշատակեն Յ. և Լ. օգոստ. 5. և Հ. յուլ. 4։ Վասն զի զոր ինչ պատմէ ձախագոյն վզ պանդուխտական հեղինեայ 'ի տեղին՝ որ յետոյ

տոյ հեղինուպօլիս կմ̃ ելլինապօլիս կոչեցաւ, հաստատեն եւ այլ հին մատենագիրք ու հասարակ. յորս մեծ է ասելն եւտրոպիոսի ժամանակակցին եւսիգնիոսի, թէ կոստանդիանոս էր որդի կոստասայ *'ի մթին ամուսնութէ||. որ միօրինակ սուգէ զկարծիս այնոցիկ, որք ասեն ը̃ խորենացւոյն, թէ էր ծնեալ *յեղենեայ պոռնկէ||. եւ որոց ասենն՝ թէ թէպէտեւ հեղինէ լեալ իցէ օրինաւոր ամուսին կոստասայ, բայց էր յաննշան տոհմէ եւ պանդոկապան. զոր այսպ̃ս ստորագրէ եւ ս̃ն ամբրոսիոս յարձանականն թէոդոսի. * Կոստանդիա- ,, նոս նախնի հաւատացեալ թագաւոր... եւ սրբայի- ,, շատակ մայր նր̃ հեղինէ... պանդոկապան զսա ասեն ,, լինել զառաջինն, եւ այնպէս գիտացեալ 'ի կոստասայ ,, մեծէ, որ յետոյ եհաս թագաւորութե̃. քաջ պանդո- ,, կապան, (կմ̃ բարի ախոռապան,) որ այնչափ փու- ,, թով պնդութե̃ խնդրեաց զմսուր տն̃. քաջ պանդո- ,, կապան, որ ոչն անգիտացաւ զպանդոկն զայն՝ որ ,, զվէրս բժշկեաց զվիրաւորելոյն յաւազակաց. քաջ ,, պանդոկապան, որ ընտրեաց ը̃ աղբս համարիլ, զի ,, զք̃ս շահեսցի. վ̃ն որոյ եւ ք̃ս զնա յաղբից վերացոյց ,, 'ի թագաւորութի||: Հարճ̃ կոչէ զնա կոստասայ եւ զոսիմոս կոմս հեթանոս պատմիչ, եւ ս̃ն հերոնիմոս 'ի յաւելուածս քրոնիկոնին եւսեբեայ. եւ պրոսպեր, եւ կասսիոդորոս, աղեքսանդրեան ժմկագրութի, եւ այլք յոլովք 'ի յն. եւ լտ. յորոց միջի եւ բեդա գրէ 'ի պատմ. եկեղ. ա̃. 8, վ̃ն կոստասայ, թէ 'ի կենդանութե̃ դիոկղետիանոսի իշխէր գաղղիոյ եւ սպանիոյ, եւ մեռաւ 'ի բրիտանիա. եւ յարէ. * սա զկոստանդիանոս զորդի իւր ,, զծնեալն 'ի հեղինեայ հարճէ՝ ինքնակալ գաղղիացւոց ,, եթող||: Եւ զի այս այսպէս, չգիտեմ զիարդ բնաւ բոլլանդեան ոչ յաղթահարէ զզրախօսութի̃ ոմանց, որք յառասպելս կամին գրել զաւանդութի̃ ս̃րյն եւսիգնիոսի, որ յիշի 'ի վարս նորա յօգոստոսի 5. այլ ձայնակից դոգցես զինքն ցուցանէ նոցա:

(4) Եւսեբիոս 'ի վարս կոստ. գ̃իրք. գ̃. գլ. 47, յայտ առնէ, թէ կոստանդիանոս եղեւ պատճառ դարձի մօր իւրոյ 'ի ք̃ս, յասելն զբարեպաշտ ինքնակալէն. * Զոր ար- ,, դարեւ վասն այլոց իրաց, այլ առաւել վ̃ն առ մայրն ,, բարեպաշտութե̃ արժան է երանելի քարոզել. քանզի ,, զնա (զհեղինէ) զոչ ա̃ծապաշտն յառաջնմէ՝ այնպ̃ս ,, ա̃ծապաշտ եւ բարեպաշտ յարդարեաց, մինչեւ երեւիլ ,, իբրեւ 'ի փրկչէն բոլորեցունց հրահանգեալ||: Ծո-

խագոյն հաստատէ զբան Եւսեբեայ և լիակատար պատմութեն վարուց սրբոյն սեղբեստրոսի, ուր մի ըստ միոջէ գրի դառնալն հեղինեայ յետ դարձին կոստանդիանոսի : Ոչ ընդդէմ ելանէ այսոցիկ (որպէս կարծեն ոմանք) ասելն սրբոյն պաւղինոսի՝ որ մի էր 'ի ծերակուտէ հռովմայեցւոց, 'ի թուղթն առ սեւերոս. * Մինչ այս անարժան ,, ընթացք առաջնոյ դարուն մինչև մօտ յաւուրս մեր ,, ցժամանակս կոստանդիանոսի, որ արժանի եղև իշ- ,, խան լինել քրիստոնեայ իշխանաց՝ ոչ առաւել իւ- ,, րովի, քան իւրոյ մօրն հեղինեայ հաւատով ||. զի որպէս բարւոք ասէ բինիոս, այս բանք ոչ ցուցանեն՝ թէ հեղինէ յառաջն հաւատաց քան զկոստանդիանոս, այլ թէ որպէս որդին՝ նոյնպէս, և առաւել ևս մայրն՝ զարդարեալ էին հաւատովք բարեպաշտութեամբ : Թողից ասել և զտարտամ կարծիս և զբանս այլոց, որք 'ի բազում խնդիրս տարժանին վասն չընդունելոյ զմկրտութիւն կոստանդիանոսի և հեղինեայ 'ի սեղբեստրոսէ :

(5) Քանզի եւսեբիոս համաձայն գրեաց վասն հեղինեայ, թէ թաղեցաւ 'ի Թագաւորեալ քաղաքի, նմին իրի յետոյն մատենագիրք յերկուս միտս բաժանեցան. կէսք զհռովմ իմացան, կէսք զկոստանդինուպօլիս. և ոչ գիտեմ, զիարդ և երկոցունց քաղաքաց աւանդութիւն միօրինակ զօրացաւ դէմ ընդդէմ, թէ առ իւրեանս իցեն նշխարք հեղինեայ դշխոյին : 'Ի լուծումն անլուծանելի խնդրոյս եդ նիկեփորոս կալլիստոս, թէ թէպէտև զառաջինն 'ի հռովմ թաղեցաւ, բայց յետ երկուց ամաց ածաւ 'ի կոստանդինուպօլիս, և հանգուցաւ 'ի տաճարի առաքելոց. և ըստ այսմ ճշմարտի գրեալն 'ի Հ. վասն կոստանդիանոսի, թէ * եդաւ 'ի տապանի ընդ մօրն իւրոյ 'ի կոստանդինուպօլիս ||: Նոյնպէս ստուգի և ասելն այլոց ժամանակագրաց, թէ յամի տեառն 1212. այլիկարտոս ոմն լատին կանոնիկոս կրօնաւոր հնարիւք իմն բարձեալ զմարմինն հեղինեայ 'ի տաճարէ անտի առաքելոց, կամ 'ի վանից հեղինեայ՝ որ 'ի կոստանդինուպօլիս, եդ 'ի նաւ և բերեալ հանգոյց 'ի վենետիկ 'ի կղզւոջն՝ որ կոչեցաւ յանուն նորա սուրբ հեղինէ (ոչինչ հեռի 'ի կղզւոյ վանից մերոց), 'ի մատուռնն 'ի կողմն մի եկեղեցւոյն. ուր և կայ մինչև ցայսօր. թող զմասնաւոր նշխարս սփռեալս անտի յայլ տեղիս :

Բայց այլք յարեւմտեայց՝ որք ոչ տան տեղի այսմ աւանդութեան վենետկեցւոց, չընդունին և զթաղումն հեղինեայ երբէք 'ի կոստանդինուպօլիս. այլ ասեն՝ թէ 'ի հռովմ թա-

թաղեցաւ, և անդ մնաց միշտ մինչև ցամ Տ̄ն իբր 840 կմ̃ 850 · յորում ժամանակի Թէոգիսոս կմ̃ Թէոտգիսոս ոմն կրօնաւոր առեալ տարաւ զայն ՚ի գաղղիա, և հանգոյց ՚ի կամպանիա գաւառի ՚ի Թեմն ռեմեան ՚ի վանսն կոչեցեալ աւդիվիլլա · ուր ը̄արձակ գրէ ալմաննոս բենեդիկտեան միաբան այնր վանից ՚ի վախճան Թ դարուն: Իսկ նոտկերոս աբբայ նոյն վանից ՚ի վախճան Ժ̄ա դարու՝ գրէ, Թէ յամի 1095 · փոխադրեցաւ Ծաժողով հանդիսիւ մարմինն այն ՚ի տեղին պատրաստեալ ՚ի վանս անդ · այլք յաւելուն, Թէ այս փոխադրութիւն եղև առ ՚ի ցոյց ստուգութե̄ նշխարաց հեղինեայ · և Թէ ՚ի տարակուսիլ ոմանց՝ հրաշիւք հաստատեցաւ, և բազմապատիկ քննութե̄ ստուգեցաւ: Եւ իբր այնպիսի համարեցաւ նաև յետոյ ՚ի բանալ զայն տապանակ և ՚ի զննել աբբայից եղելոց յամի 1120 · և 1235 · ուր և ՚ի փոխադրել զայն եպիսկոպոսին ռեմայ յայլ նոր տապանակ արծաթի յամի · 1410: Եւ յամի · 1602 · հանաւ անտի մասն ինչ նշխարաց, և տարաւ եկեղեցւոյն աւրելիոյ՝ ՚ի խնդրոյ Ենրիկոսի Դ̄ գաղղիացւոց արքայի, որոյ նորոգեալ էր զեկեղեցի սբ̄յ խաչին յաւրելիա · նոյնպ̄ս և յայլ տեղիս սփռեցան մասունք ինչ, մինչև հետզհետէ մեծամասամբ պակասեաց յաւդիվիլլայէ · և այս է առեալն վերջին ակնատես քննողի առ բոլլանդեանս · * Մարմին
,, հեղինեայ ոչ է ամբողջ ՚ի վանսն աւդիվիլլայ · զի պա-
,, կասին գլուխն, բազուկքն և ոտքն · որք դուցէ ՚ի
,, վենետիկ կան պահին (ուր և պահեալ կան), Թէպէտ
,, և ոմանք ասեն, Թէ գլուխն է ՚ի տրեվիր: Սրունքն
,, ը̄ կողից եդեալ կան (յաւդիվիլլա) անապական զը-
,, մռսեալ մարմնով|| · և այն ոչ ևս է յարծաթի տապանակի, այլ ՚ի պղնձի, եդեալ յաւագ խորանի փառացի զարդուք:

Բայց զի՛նչ պարտ է ասել, զի տակաւին ՚ի ԺԲ̄ դարու հռովմայեցիք առ իւրեանս գոլ ասէին զմարմին հեղինեայ, ուր գաղղիացիք պնդէին՝ Թէ առ մեզ է: Վասն որոյ հարկին ասել քննիչք, Թէ նշխարք ինչ ևեթ տարեալ եղեն ՚ի գաղղիա · և մնացեալ մասունքն՝ որ կային ՚ի հռովմ ՚ի լաւիկանեան ճանապարհին, առ ինովկենտիոսի Բ̄ յամի 1140 · փոխադրեցան յեկեղեցին սբ̄յն մարիամու՝ որ կոչիւր խորան երկնից՝ անդ ՚ի հռովմ · իսկ տապանն ՚ի պորփիւր քարէ՝ ուր նախ ամփոփեալ էր ամբողջ մարմինն, ածաւ ՚ի վատիկան յաւուրս անաստասայ Դ̄՝ յամի 1153 · որ և վախճանեալ ՚ի նմին ամի՝ Թա-

Թաղեցաւ 'ի տապանի անդ ,

Արդ ոչ այլազգ միաբանին այս աւանդք երեքկին և չորեքկին , եթէ ոչ ասասցուք Ը անաչառ քննիչս , թէ յիւրաքանչիւր տեղիս էին մասն մասն նշխարաց Հեղինեայ՝ կարծեցեալք ամբողջ . զի որովհետև ամբողջ երևեցուցանէին զմարմինս պաճուճապատանօք , կարծին բազմանալ մարմինք . Թող զի գուցէ հեղինէ անուն կուսանք կամ վկայուհիք գտեալք 'ի վաղ ժամանակաց՝ շփոթեալ են Ը նշխարաց Հեղինեայ դշխոյի : Այս ինչ ստոյգ է , զի ուր և գտանին մասունք յանուն նորին սր̄յ՝ ըստ հաւատոյ ջերմեռանդից անպակաս եղեն և լինին զքանչելիքն այ̄ . ոպ̄ յայտ է 'ի յիշատակարանաց իւրաքանչիւր տեղեաց , առաւել 'ի նախայիշատակեալ վանս գաղղիոյ :

(6) Իսկ վս̄ տապանի մեծին կոստանդիանոսի գրէ գիլլիոս կմ̄ ձիլլիոս 'ի տեղագրութե̄ կոստ . Դ̄ . 2 . յետ նշանակելոյ զտեղի տաճարի առաքելոց , թէ մօտ յայն տեղին * առ ճանապարհաւն՝ որ ձգի Ը Թիկունս լեռ-
,, նոտանն դէպ 'ի տաճարն այս սօֆիայ առ ադրիա-
,, նուպօլեան դրամբ՝ ցուցանի յաւուր յայսմիկ տապա-
,, նաքար 'ի պորփիւր մարմարիոնէ , այլ Թափուր և ա-
,, ռանց կափարչի , տասն ոտնաչափ յերկայնութիւն , և
,, հինգ և կէս ոտնաչափ 'ի բարձրութի . զոր յոյնք և այ-
,, լազգիք ասեն լինել մեծին կոստանդիանոսի || . յայտ
է թէ ըս̄ գուշակելոյ բաբեպրոքայ՝ այն է , յորում ագուցեալ էր ոսկի տապանակ մարմնոյն , որ յետոյ ասի փոխադրեալ 'ի կաղաբրիա : Նոյն ինքն գիլլիոս ցուցանէ , թէ ֆէթիհ մէհէմմէտն՝ որ էառ զկոստանդինուպօլիս , կործանեալ զտաճարն առաքելոց , և անհետ արարեալ զյիշատակս Թագաւորացն յունաց , 'ի նոյն 'ի նիւթոյ տաճարի առաքելոց և այլոց մերձակայ եկեղեցեաց կանգնեաց զհոյակապ մզկիթն կոչեցեալ յանուն իւր սուլթան մէհէմմէտ , 'ի մօտաւոր վայրի անդ՝ 'ի վր̄ աւազանին , որ մատակարարէր զջուր տաճարի առաքելոց . տնկեաց և դրախտ պատեալ պատնշաւ , և 'ի մէջավայրի ետ շինել ինքեան շիրիմ մեծակառոյց (այսինքն՝ Թիւրպէ), առ չերևելոյ ընդհատ 'ի մեծէն կոստանդիանոսէ :

ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Սրբոյն Թալէլէայ բժշկին, և որոց ը̄ նմա ։

Դ. Յ. Լ. ․ Մայիս ․ 20 ։ Ըստ [illegible] Բուզանդեան ․
Ժ ․ Հոռի ․ Մայիսի ․ Եր ․ 639=654 ։

ՆՇԱՆԱԳՈՐԾ ՎԿԱՅՆ քնի Թալիլէոս կամ Թալէլէոս բժիշկ հոգւոց և մարմնոց, էր 'ի ժամանակս Նումերիանոսի կայսեր՝ հայրենեօք 'ի կողմանցն լիբանանու․ զոր ոմանք համարին 'ի բուն լիբանան լեռնէ՝ որ 'ի փիւնիկէ, և այլք յեդեմէ՝ ուր էր տունն անտառին լիբանանու շինեալ 'ի սողոմոնէ ։ Նա էր Թալիլէոս երիտասարդ վայելչադիտակ և առոյգահասակ՝ դեռաբոյս մօրուօք, յազնիւ՛ տոհմէ՝ որդի առն քրիստոնէի, խելամուտ բժշկականին, և զարդարեալ ա̄ծապաշտ վարուք առաքինութե̄ ։ Սա հանդարտեալ 'ի տան իւրում ոչինչ հեռի յանտառէն՝ դարման տանէր բժշկութե̄ հիւանդաց, զորս բերէին առ նա ․ յորոց և զբազումս հիւրընկալեալ պահէր 'ի տան, և ոչ արձակէր՝ մինչև առողջասցին ․ և այնպէս սիրելի լինէր մեծի և փոքու, զի ամենեցուն բարերարէր ․ այլ առաւել խանդաղատէր 'ի վր̄ աղքատաց , և որպէս թէ իւր համարեալ զցաւս նց̅՝ բազում սիրով և փութով ճգնէր 'ի փարատումն ախտից նոցա · դէպ լինէր երբեմն և շալակել զնս̅ անձամբ՝ տանել տեղւոջէ 'ի տեղի · և յա̅մի գուն գործէր գտանել զկարօտեալս , և առնել նոցա հնարս բժշկութե̅ :

Սոյ̅ ետ նմա ա̅ծ շնորհս բժշկութե̅ 'ի վեր քան զզօրութ̅ արուեստին , մինչ զի բազում անգամ փոխանակ դեղոց յաղօթս ապաստան լինէր , և բանիւ լոկով կամ ձեռն դնելով յանուն տն̅՝ բժշկէր զհիւանդս և զախտաժէտս : Եւքանզի առ մեծի գթոյն անխտիր դարմանէր և զաղքատս հեթանոսաց · և աղօթիւք փարատէր զցաւս նոցա , տեսեալ զոմանս 'ի քրիստոնէից դժկամակեալս ընդ այն՝ զայրանայր 'ի վե̅ր անգթութե̅ այնպիսեացն : Ետես երբեմն , զի քրիստոնեայ ոք ոխացեալ ը̅դէմ հեթանոսի՝ ուրախանայր ը̅ չարաչար մահ նորա · յայնժամ սաստեաց նմա Թալիլէոս , և ասէ · մի՛ խնդար ը̅ չար թշնամւոյ քո , այլ յայնժամ առաւելապէս խնդասցես՝ եթէ յա̅ծպաշտութի̅ զնա դարձուցանիցես : Ասէ այրն · իրաւացի էր նմա սատակումն արադահաս · զի զի՞նչ շահ իցէ կեալ՝ որոց ծերանանն 'ի մեղս : Ունի եւ սբ̅ն լու 'ի լու այլոց հաւատացելոց · աղօթել 'ի վերայ թշնամեաց հրաման ընկալաք եղբարք , և ո՛չ եթէ խնդալ ը̅ չարիս նոցա · և եթէ մարդասիրութե̅ գնամք ը̅ նոսա , դիւրաւ մեղմեմք զխստասրտութիւն նոցա , և զանհաւատութիւն նոցա վերածեմք 'ի հաւատս ։

Յետ այսորիկ բժշկեաց Թալիլէոս զօձահար ոմն հեթանոս զանյոյսն 'ի կենաց՝ անուամբն քսի, և դարձոյց զնա 'ի կռապաշտութենէ ։ Բերին առաջի նորա և զայլ ոք 'ի կռապաշտից, որ ունէր փողացաւ անբուժելի յոմ բժշկաց ․ և սբ̃յն եղեալ բանս ընդ նմա վ̃ն դառնալոյ 'ի հաւատս քսի՝ աւժամայն բժշկեաց զնա նշանաւ խաչի ։ Եւ յելանել երբեմն 'ի տանէ՝ հանդիպեցաւ ումեմն յաղքատաց հեթանոսաց, որոյ խորտակեալ էին ոտք, և անպիտանացեալ 'ի սահեցմանէ ճանապարհին ․ և իբրև սկսաւ աղաչել զԹալիլէոս օգնել նմա՝ ասէ Թալիլէոս ․ միայն հաւատա և կեցցես ․ և 'ի խոստովան լինել նորա զզօրութին քսի՝ առողջացոյց զնա, և էած 'ի սբ̃ հաւատս ։ Ազատեաց 'ի դիւէն և զաղջիկ մի այսահար ․ եբաց և զաչս աղքատի միոյ կուրի, և արար քրիստոնեայ ։

Իսկ բարիատեացն սատանայ մախացեալ ը̃ գործս սբ̃յն՝ գրգռեաց զկռապաշտս ․ որոց կալեալ զնա՝ տարան յատեան տիբերիոսի կմ̃ տիբերիանոսի դատաւորի, որ դատէր զքրիստոնեայս յեղեսիա հրամանաւ ինքնակալին նումերիանոսի, և եղբօր նորա կարինոսի ․ և ամբաստան եղեն, թէ այրս այս մոգութ̃բ պատրեաց զբազումս, և դարձոյց յօրէնս նազովրացւոց ․ եհատ գիշերի լռելեայն և զվարսաւոր ծառս անտառին լիբանանու, և խափանեաց զպաշտամունս և զպատգամս դից, և զխաչս արանց և կանանց : Յայնժամ դատաւորն գան եհար զսբ̃ն իբրև ծառայ ստահակ . և տեսեալ զնա՝ զի լուռ կայր , համարեցաւ զնա մտաթափ ոք , և հալածեաց 'ի գաւառէ անտի :

Ապա եւ գնաց Թաղիղէոս 'ի Կիլիկիա . և անդ ևս շրջէր և առնէր բժշկութ̃իս անուամբն ք̃սի : Այն չորքան կռապաշտք առ Թէոդորոս անթիհիպատոս՝ որ նստէր յԵգէա ծովեզերեայ քաղաք երկրորդ Կիլիկիոյ իբրև յիսուն ասպարիզաւ հեռի յանարզաբայ . և ասեն . գալիլեացի ոմն անծանօթ եկեալ յարևելից կողմանէ՝ կեղծաւորի զբժշկականն , և կախարդանօք ձգէ զբազումս 'ի պաշտօն խաչեցելոյն . և իշխանն առաքեաց խնդրակս . և կալան ածին յապարանս դատաւորին . և ազդ արարին՝ եթէ գտաք զայրն : Ասէ դատաւորն . կոչեցէ՛ք առ իս զչարագլուխն զայն , զորմէ լսեմ՝ թէ գլուխ է աղանդոյն քրիստոնէից , յորոց զբազումս ծախեցի սրով և հրով և ջրով : Իբրև կացուցին զնա յատենի , տեսեալ զնա դատաւորին երիտասարդ կայտառ և ոսկեհեր՝ ասէ ցիւրսն . ո՞ւր կալայք զպատանիդ գեղեցիկ : Նոքա ասեն . մինչդեռ գնայաք յանարզաբա , տեսաք զդա զճանապարհայն . և նորա գիտացեալ զմէնջ՝ թաքեաւ 'ի մէջ տնկախիտ մայրեաց . մինչև յետ աւուրց գտաք զնա ը̃ ձիթենեաւ միով , և ածաք առաջի իշխանութե̃դ ձերոյ : Եհարց զնա իշխանն . այր դու ասա՛ ինձ յի՞նչ օրէնս իցես , և յորմէ՛ քաղաքէ . և զի՞նչ է բախտ քո և անուն ։ Վխնի եմ վկայն քսի. ես քրիստոնեայ եմ. և եթէ զանուն իմ ուսանել կամիս զհասարակ, Թալիլէոս կոչիմ. և եմք 'ի լիբանոսէ՝ ես և ծնօղքն իմ. հայրն իմ բերկոկիոս էր զօրավար՝ բայց քրիստոնեայ. նոյնպէս և մայրն իմ հռոմուլիանէ անուն. և եղբայրն իմ յովհաննէս պաշտօնեայ տն՝ կիսասարկաւագ եղև եկեղեցւոյ. իսկ ես բժշկականին պարապեցի ուսմանց ընդ վարժապետութբ մակարիոսի բժշկապետի. և յորժամ փախեան այլք 'ի ժամանակի հալածանաց, ես ըմբռնեցայ և մատնեցայ 'ի ձեռս տիբերեայ դատաւորին եդեսացւոց. որ նեղեաց զիս բազմօք. այլ ես կարդացի 'ի սրտէ զհայր և զորդի և զսբ հոգի՝ զտծն ճշմարիտ և զինքնաբուն բարի զհաստիչն բոլորից. և նա ազատեաց զիս 'ի ձեռաց որսողին. արդ այժմ եկեալ կամ անդրէն ածեալ յայս ատեան. և դու արա զինչ և կամիս. քանզի և արժան իսկ է ինձ մեռանիլ վն քսի, որ է օգնական իմ հզօր՝ տծ երկնաւոր ։

Թէոդորոս դատաւորն ասէ. ա՛յ չարագլուխ մինչ կարծես զերծանիլ և 'ի ձեռաց իմոց, որպ զերծար 'ի ձեռաց տիբերեայ դատաւորի ։ Թալիլէոս ասէ. հաւատամ յայն՝ յոր յուսացեալն եմ 'ի տր իմ քս յս, զի ոչ յամօթ արասցէ զիս, այլ օգնական ինձ եղիցի մինչև իսպառ ։ Հրաման ետ դատաւորն կոչել առ ինքն զաստերիոս հիւսն՝ որ 'ի կարգի դահճացն էր մեքենապետ տանջանարանաց, և ասէ ցնա. ա՛ստերիէ ա՛ռ զդա. և ծակեա՛

շաղափով զպճղունս ոտից դորա ։ Եւ նորա քաղուածս աշխատ եղեալ՝ ոչինչ կարաց ներգործել 'ի մարմին վկային ․ եկին սպասաւորքն և պատմեցին դատաւորին , և ասեն ․ աղաչեմք զքեզ տ՟ր , յերրորդ ժամէ աւուրն մինչև ցվեցերորդս աշխատ եղեաք 'ի ծակել զպճղունս նորա ․ և ոչինչ կարացաք առնել , Բարկացաւ դատաւորն և ասէ ․ միթէ ծա՞ղր առնել եկիք ո՛վ անզգամք , դարձարո՛ւք անդրէն և ծակեցէ՛ք՝ ո՞չ ասացի ։ Եւ ն՟ք շուարեալ 'ի խելաց ցնորեալ՝ առին 'ի մէջ փայտեայ կոճ մի , և ծակեցին զծայրս ն՟ր ․ եկն այնուհետև աստերիոս , և ասէ ․ տէ՛ր իմ ծակեցաք զպճղունս առն , ո՟պ և հրամայեցեր ։ Յայնժամ ասէ դատաւորն ․ ա՛ղէ արկէ՛ք լարս և պարանս , և կախեցէ՛ք զնա գլխիվայր ո՟պ զոչխար ․ և նոքա յանզգայս եղեալ՝ կախեցին զփայտն , և համարէին՝ եթէ զԹաղիլէոս կախեն ։ Զայն իբրև ետես Թէոտիմոս (որ և Տիմոթէոս) աշակերտն Թաղիլեայ , զի կայր մօտ , ասէ ցն՟ն ․ տեսանե՞ս , զի՞նչ առնեն դոքա ։ Եւ Թաղիլէոս ասէ ․ լո՛ւռ լե՛ր եղբայր , զի մերձ է առ իս զօրացուցիչն իմ ք՟ս ։

Իսկ դտ՟ւորն իբրև 'ի վ՟ր եհաս եղելոցն , ասէ զայրագին ցդահճսն ․ զի՞ գործեցիք ա՛նմիտք ․ ես մարդ հրամայեցի ձեզ կախել , և դուք զփայտ կախեցիք ։ Եւ զի գլխաւորք գործոյն էին երկոքին 'ի դահճաց անտի՝ աստերիոս և գործակից նորա աղեքսանդրոս , հրաման ետ բռնաւորն պատուհասել զն՟ն չարաչար․ տարածեցէ՛ք ասէ զդոսա 'ի գետին, և տանջեցէ՛ք անխնայ․ զի մի՛ ևս իշխեսցեն առնել ինչ այդպիսի յանարգութի̃ աստեննիս իմոյ։ Իսկ աստերիոս և աղեքսանդրոս 'ի միտ առեալ՝ զոր գործեցին ապշութե̃, և լուսաւորեալ առ յո̃յ՝ աղաղակեցին իբրև ընդ մի բերան․ կենդանի՛ է տ̃ր, զի և մեք քրիստոնեայ եմք։ Ընդ որ սրտմտեալ յոյժ դատաւորին՝ հրամայեաց ունել զն̃ս, և բերել առաջի իւր․ և յայնմ վայրի աղօթէր ս̃բն Թալէլէոս վ̃ն ն̃ց։

Իսկ նոքա քանզի բուռն էին և զօրաւոր քան զայլ դահիճս, կորզեցին զանձինս 'ի ձեռաց ունելեացն, և ելեալ խոյս ետուն յապարանից և 'ի քաղաքէն։ Հրաման ետ դատաւորն մոտիոսի դահճապետի առնուլ արս և խնդրել զհետ նոցա․ և եթէ չկամիցին դառնալ․ սպանէ՛ք ասէ զն̃ս՝ ուր և գտանիցէք։ Իսկ երթեալ արանցն՝ կալան զն̃ս 'ի լերին անդ, ուր ըմբռնեալ էր նոցա զԹալէլէոս իբր յիսուն ասպարիզաւ հեռի 'ի քաղաքէն․ և գըտեալ զն̃ս հաստատուն 'ի ք̃ս՝ նոյնժամայն հատին զգլուխս նոցա․ և եկեալ պատմեցին տ̃ն իւրեանց․ և ուրախ եղև ս̃բն Թալէլէոս ը̃ կատարումն նոցա վ̃ն անուան ք̃սի։

Յետ այսորիկ կոչեալ միւսանգամ դատաւորին զվկայն յատեան՝ ասէ ցնա․ զի՞նչ ասես Թա՛լէլէէ, հաւանի՞ս բանից իմոց՝ եթէ ոչ․ քե՛զ ասեմ, զոհեա՛ դ̃ծոց, և կեա՛ց, և վայելեսցես 'ի լոյս արևուն։ Պ̃խնի ետ քա՛ջ նահատակն․ ո՛չ իւ՛իք կարասցես հաւանեցուցանել զծառայս ք͞ոի՝ զոհել դիւաց պղծոց · քանզի ա͞ծք քո կուռք են դիւաբնակք , զորս անարգեմ և թքանեմ ՚ի նոսա ։ Սոլեալ դատաւորին ցասմամբ՝ ասէ ցծառայս իւր · արկէք ինձ աթոռ · և ես ինքնին յարուցեալ ծակեցից զպճղունս դորա ։ Եւ ս͞բն Թալիլէոս ասէ · արի՛ ո՛վ դատաւոր , և ե՛կ առնել զոր կամիս , եթէ կարող ես · քանզի մերձ է՝ որ պահէն զիս , և ես ոչ երկնչիմ ՚ի սպառնալեաց մարդոյ ։

Այն ինչ կամէր դատաւորն ՚ի վեր յառնել յաթոռոյ անտի ատենին՝ յոր բազմեալն էր , մնաց կաշկանդեալ անդ աներևոյթ զօրութ͞բ · ո͞պ թէ մածեալ յետոյ կողմանէ յաթոռն ։ Յայնժամ ա͞մ բազմութ͞ին՝ որ կային յատենի՝ ՚ի տաճարն կոչեցեալ ադրիանու , մեծաձայն աղաղակեցին · մե՛ծ է ա͞ծն քրիստոնէից , որ առնէ զնշանս ։ Իսկ դատաւորն զամօթի հարե͞լ ասէ · աղաչեմ զա͞ծ քո ո՛վ Թալիլէէ , զի ՚ի բաց զերծցի յինէն աթոռս , և զի մի՛ արդեօք պատուհաս այլ եկեսցէ յիմ վ͞ր · քանզի արդարև մեծ է ա͞ծն քո ։

Յայնժամ յաղօթս եկաց երանելին , և արձակեցաւ իշխանն · բայց ո՛չ եթէ ՚ի միտ եառ զզօրութ͞ին ա͞յ , այլ առաւել ևս խստացե͞լ , և կրճտեալ զատամունս իւր՝ եառ զշաղափ , և սկսաւ ծակել զպճղունս ս͞բյն · և ահա անդէն դօսացան ձեռք անօրինին ։ Եւ յաղաչել նորա վերստին զԹալիլէոս՝ աղօթիւք բժշկեաց զնա ։ Յայնժամ երկուցեալ բռնաւորին այլ ևս խաղալ ը͞դ նմա , ասէ ցպաշտօնեայս ատենին ․ բարձէ՛ք զդա յերեսաց իմոց , և տարա՛յք ընկեցէ՛ք 'ի խորս ծովու ․ զի անդ սուզեալ կորիցէ , և մի՛ 'ի ձեռս իմ ։

Եւ այս ասէ ս͞բն Թալիլէոս ․ դու ինքնին սկսար դատել զիս , և քեզ ա՛նկ է 'ի գլուխ հանել զիրսդ ։ Դատաւորն ասէ ․ 'ի բա՛ց գնա ա՛յր դու , և մեռջի՛ր հեռագոյն յինէն ․ զի թէ մինչև իմ տանջե͞լ զքեզ , զայդ ո͞մ կախարդանս գործեցեր , զի՞նչ լինիցի՝ եթէ 'ի չարչարանս մատուցից զքեզ ․ որ͞պ և արժան իսկ էր , մինչև դարձցիս 'ի պաշտօն ա͞ծոցս , փոխանակ զի պարտ էր քեզ կամաւ հնազանդել նո͞ց ։ Թալիլէոս ասէ ․ արա՛ ո՛վ բռնաւոր՝ որ ինչ հաճոյ թուի յաչս քո ․ և մի՛ համարիցիս տանջանօք և սպառնալեօք որոշել զիս յս͞յ իմմէ կենդանւոյ ․ այլ զայդ քա՛ջ գիտեա , զի զդիս քո ես ո՛չ պաշտեմ , և դիւացդ՝ որոց ծառայես՝ երկիր ո՛չ պագանեմ ։

Եւ մինչդեռ բանքն 'ի բերանն էին , ձգեցին զնա դահճքն ը͞ս ակնարկելոյ դատաւորին , և տարեալ 'ի ծովեզրն՝ եդին 'ի նաւակ մի , և խաղացուցին 'ի խորս ծովու ։ Յայնժամ յաղօթս եկաց երանելին , և ասէ ․ տ͞ր ա͞ծ իմ մի՛ թողուր զիս մեռանիլ յայս նուա՛գ ․ որ͞պ զի զկատարեալ հանդէս նահատակութե͞ 'ի գլուխ տարեալ՝ ընկալայց զանմահութե͞ պսակն ։ Իսկ դահճաց կապե͞լ քար մի մեծ 'ի պարանոց վկային՝ ընկղմեցին զնա 'ի խորս ծովու ․ և եկեալ պատմեցին դատաւորին ․ որ͞պ և հրաման ետ ասեն մեծութե͞ ձեր , ընկեկեցայք զԹաղէղէոս 'ի ծով. և անդէն առաջի աչաց մերոց սուզաւ և կորեաւ :

Մինչդեռ ն՟ք խօսէին ը՟ իշխանին, յանկարծակի եկն եհաս զկնի ն՟ց կենդանի վկայն ք՟ի Թաղէղէոս՝ զգեցեալ պատմուճան սպիտակ. իբրև տեսին զնա դահիճքն, զահի հարան, և ձայն բարձեալ ասէին ցիշխանն. տեսանե՞ս տ՟ր, զի և 'ի ծովէ ապրեալ գայ ինքնին Թաղէղէոս : Յիմարեցաւ դատաւորն ը՟ միտս իւր. և կոչեալ զնա՝ ասէ. ո՛վ կախարդասար դու՝ այդչափ զօրացաւ դիւթութ՟ի քո, մինչև ծովու անդամ յաղթել : Պ՟խնի ետ երանելին. ո՞ւր է արդ զօրութ՟ի դ՟ցդ, ո՞ւր սնոտի պարծանք քո. ահա տ՟րն իմ յս՟ ք՟ս ունայնացոյց և քակեաց զխորհուրդս ձեր, և ոչ թոյլ ետ ինձ մեռանիլ, զի ես քան զես յաղթեցից հօր քում սատանայի :

Ասէ դատաւորն ցխորհրդակիցս իւր. տեսանէ՞ք, թէ զիա՞րդ կախարդեաց զծով, և զմեզ թշնամանէ անիծանօք. եթէ թողումք զդա այդպէս, զօրանայ 'ի վ՟ր մեր ամենեցուն, և սպանանէ զմեզ դեղատուութ՟բ չարարուեստ մոգութ՟բ իւրոյ : Խորհուրդ 'ի մէջ առնուլ սկսաւ ը՟ գէտս իւր՝ թէ զի՞նչ արասցեն ը՟ նա. յայնժամ ուրբիկլոս մոգն ասէ. հրամայեսցէ տ՟րութ՟ի ձեր հանել զդա 'ի թէատրոն, և գազանաց առաջի արկանել : Կոչեաց իշխանն զպահապան գազանաց, և ասէ. պատրաստեա՛ զտեղի ասպարիզին, և ա՛ծ անդր զամեհիս 'ի գազանաց : Իսկ իբրև արար այլն ը՟ հրամանի ն՟ր, ասէ բռնաւորն ցս՟ն .

ցս՟ըն․ զի՞նչ ասես Թա՛լիլէ, զոհե՞ս գոնէ այժմիկ․ ապա թէ ոչ՝ ահա մատնեմ զքեզ գազանաց ՚ի կերակուր։ Թալիլէոս ասէ․ տակաւին անգիտանա՞լ եղեր զշնորհս և ըզփառս տ՟ն իմոյ յ՟ի ք՟ի․ այլ ես զդաւթեանն երգեմ զօրհնութի՟․ ո՛չ մեռայց, այլ կեցից, և պատմեցից զգործս տ՟ն․ խրատելով խրատեաց զիս տ՟ր, և ՚ի մահ ոչ մատնեաց․ աջ տ՟ն արար զզօրութի՟․ աջ տ՟ն բարձր արար զիս։ Յայնժամ տարան զնահատակն, և արկին ՚ի մէջ թատրոնին կապեալ․ և արձակեցին ՚ի վ՟ր ն՟ր մատակ արջ մի ահագին․ իսկ գազանն իբրև ընթացաւ առ ս՟ն, խոնարհեալ ըզգլուխն՝ լեզուլ սկսաւ զոտս ն՟ր․ և չարար ինչ նմա չար։ Զայն տեսեալ Թէոդորոսի բռնաւորին՝ գոչէր զայրագնեալ սրտմտու՟ք, զի արձակեսցեն ՚ի վ՟ր ն՟ր առիւծս երկու․ սակայն և ն՟ք հեզաբար մատեան առ նահատակն, և իբրև ընդել քծնէին առաջի ն՟ր։ Յայնմ վայրի պատառեաց իշխանն զքղամիդ իւր․ և ամբոխն առհասարակ աղաղակէր․ մեծ ա՟ծ քրիստոնէից՝ ա՟ծ Թալիլէայ օգնեա՛ մեզ․ և դղրդեցաւ տեսարանն ա՟մ․ մինչև բռնադատիլ իշխանին հանել զԹալիլէոս ՚ի թատրոնէ․ և ամբոխն ստիպէր, զի ուրբիկիոս մոգն՝ որ զայն խրատ ետ, մուծցի ՚ի գազանամարտ․ և իբրև ոչ կարաց դատաւորն ը՟դէմ դառնալ, կալան և արկին զմոգն առաջի գազանաց․ և նոքա նոյնժամայն գէշ գէշ պատառեցին զայրն, և ոչ թողին ընչխարս ն՟ր։

Զա

Զահի հարաւ դատաւորն , և դարձեալ կըրանկոր յապարանս իւր՝ կամէր հրով ծախել զնահատակն . այլ երկեաւ 'ի ժողովրդենէ . և եհատ վճիռ գլխատման : Եւ առեալ դահճաց՝ տարան զնա յեգեսիա անուն կողմն մի քաղաքին Էգէացւոց . ուր ընթացան և բազումք յամբոխէն : Ընդ յաղօթս եկաց սբ՟ն Թալիլէոս . և եղև շարժումն մեծ 'ի տեղւոջն . յորում զահի հարեալ ժողովելոյն՝ դայլն անկանէին առ ոտս երանելւոյն ասելով . ողորմեա՛ մեզ , և կնքեա՛ զմեզ նշանաւն ք՟ի : Եւ իբրև խաչակնքեաց 'ի վ՟ր նոցա , եհատ դահիճն զպարանոց սբ՟յն . և այնպէս կատարեցաւ նշանագործ վկայն ք՟ի սբ՟ բըժիշկն Թալիլէոս յամի տ՟ն իբր 284 . 'ի մայիսի . 20 . յորում աւուր կատարի յա՟մ եկեղեցիս յիշատակ ն՟ր :(1)

'Ի նոյն աւուրս նահատակեցան և քանի մի վկայք՝ որք դարձան 'ի ք՟ս 'ի ձեռն սբ՟յն Թալիլէոսի . յորոց սակի համարին , թո՛ղ զերկուս 'ի դահճաց զաստերիոս և զաղեքսանդրոս զնախանշանակեալս , մակարիոս բժշկապետ վարժապետն Թալիլեայ , աստերոն , փիլադրիոս , տիմոթէոս (որ թուի աշակերտ սբ՟յն) , Թէոդուլա , մակարիա . և այլք՝ որոց անուանք գրեալ են 'ի դպրութ՟ե կենաց :

Իսկ մարմին փառաւորե՟ն վկային Թալիլեայ բժշկի թաղեցաւ զառաջինն ընդ հատեալ գլխոյն՝ մօտ 'ի տեղի կատարման ն՟ր 'ի ձեռն արանց երկիւղածաց կամ նորադարձ հաւատացելոց. և քանզի եղեն ազգ ի ազգի նշանք 'ի տապանէ սրբ̃յն, բաղումք ընթանային առ նա՝ նշանագործ վկայ զնա կարդալով։ Եւ յորժամ թագաւորեաց մեծն կոստանդիանոս, շինեաց վկայարան յանուն սրբ̃յն Թալիլէայ բժշկի 'ի կոստանդինուպօլիս. և անդ բերեալ հանգոյց զպատուական նշխարսն։ Այս մատուռն ասի լինել 'ի մէջ տաճարի սրբ̃յն ագաթոնիկոսի. և 'ի նմին եկեղեցւոջ կատարէին կոստանդինուպօլսեցիք զյիշատակ սրբ̃յն Թալիլէայ. զոր և նորոգեալ մեծացոյց կայսրն յուստինիանոս. և զի մերձ էր տաճարն այն արքունի պալատան, տիբեր կայսր աներ մօրկայ էառ զայն 'ի մէջ պատնշի պալատանն։ Թող զմասն՝ զոր յանուն սրբ̃յն Թալիլէայ կառոյց յուստինիանոս յերուսաղէմ. ուր և եդաւ ասեն մասն 'ի նշխարաց սրբ̃յն։ Իսկ այժմ երևելի նըշխարք սրբ̃յն Թալիլէայ ասին լինել 'ի վերոնա քաղաք իտալիոյ յեկեղեցւոջ սրբ̃յն նիկողայոսի, գտեալք անդանօր յամի տ̃ն. 1519. յապրիլի 29. Է̃ այլ նշխարս սրբ̃ց, իբր 'ի վաղ ժամանակաց բերեալք անդր յարևելից։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ։

(1) Քանզի սակաւժամանակեայ եղեն աւուրք Թագաւորութեան Նումերիանոսի, և յաջորդին նր՟ Կարինոսի, վ՟ն որոյ Թէպէտև Նումերիանոս՝ որ եհան զհրովարտակ հալածանաց, յամի 284. յամսեանն սեպտեմբերի (ըստ ոմանց), չիցէ ապրեալ մինչև 'ի կատարումն սո՟յն Թալիլեայ, չէ ինչ. նմին իրի 'ի զուր խախտել փորձէ բաբեպրոքիոս զօր կատարման սո՟յն՝ որ ասի լինել 'ի մայիսի. 20. ա՟յլ Թէ 'ի յետնոց մուծեալ իցէ՝ վ՟ն յայնմ աւուր լինելոյ յիշատակի նր՟. ուր և ինքն քննիչն խոստովան լինի, Թէ * Թէպէտև զկնի հրովարտակին ոչ յերկարեաց նա 'ի կեանս, բայց սակայն ամենեքին նոքա՝ ,, որք ը՟ այնմ հրամանի ընկալան զվճիռ մահու՝ նաև ,, զկնի նորին իսկ մահուան, ասին նահատակեալ յաւուրս ինքնակալութե՟ն Նումերիանոսի ||:

Զերկուս յունական վկայաբանութիւնս 'ի մէջ բերէ բաբեպրոք բոլլանդեան՝ հանդերձ լատին Թարգմանութ՟բ: Զառաջինն կոչէ հին, որ է հանեալ 'ի լաւրենտինեան դրատանէ փլորենտիոյ, պարզ ոճով և համառօտաձև բանիւք (պակասեալ 'ի նախընթաց քաղաքավարութե՟ն սո՟յն). ը՟ որ յոյժ հաւանի քննիչս, և համարի հարազատ գործ գիտնադպրաց՝ որք դրոշմէին զգործս վկայից. և մեք իսկ այնպէս ճանաչելով՝ զնոյն քաղեցաք Թարգմանաբար ը՟ մասին բուն վկայաբանութե՟ն, զ՟ի ը՟ առենախօսութե՟ն և ը՟ հարցափորձի և նահատակութե՟ն. ա՟յլ և նորուն քաղուած երևին նաև գրեալքն այլ և այլ ոճով 'ի Հ. Յ. և Լ: Զերկրորդն կոչէ նոր, որ է հանեալ 'ի վատիկանեան դրատանէ հռովմայ. ուր կայ նախ՝ նախընթաց քաղաքավարութե՟ն սո՟յն, և ապա գրի վկայաբանութիւնն ը՟ գոյացութե՟ն նոյն ը՟ առաջնոյն, բայց ը՟ ոճոյն ընդարձակեալ. վ՟ն որոյ և պախարակէ զայն քննիչն իբրև 'ի յետնոց յօդեալ. մանաւանդ վասն յաճախութե՟ն նշանաց՝ զորս եդաք և մեք ը՟ վկայութե՟ն նոյն օրինակին. վ՟ն զի զինչ և ասիցէ բաբեպրոք, ըմբռնեալ է խորագէտն 'ի խորագիտութե՟ն իւրում. և առ չկամելոյ ընդունել զբազմութի՟ն հրաշից՝ ընկալեալ է զական, որ ը՟ ինքեան էր դժուարալուր. զ՟ի է կաշկանդումն դուռն դատաւորին ը՟ աթոռն, և կախելն դաշնաց ըղկոծ փայտի փոխանակ սրբ՟յն. ևն. և զարմանամ թէ զիա՞րդ զայսոսիկ յանձն առնու Նրբամիտ քննիչն, և դժուարի ընդ վայելչական նշանս բժշկութեանց. ուր և վկայագիրք ենթադրեն՝ թէ վ՟ն այսպիսեաց կոչի սր՟ն Թալէլէոս նշանագործ վկայ։ Միով բանիւ, ըստ մեզ՝ քաղաքավարութիւն սրբ՟յն և վկայաբանութիւն ն՟ր գեղեցիկ միաբանին. և եթէ ուղղագրել կամի ոք զմին, և զմիւսն ունի ուղղագրել։

Յերկուց վկայաբանութեանց բաղադրելով արդեօք, և կմ՟ զերկու առեանս ՚ի մի խառնելով՝ եդեալ է ՚ի բարոնիոսէ ՚ի Ն. տեղի կատարման սրբ՟յն Թալէլէայ * Եգեսիա յատորիս‖. որ լինի ուռհայ. ուր ասի լինել առաջին հարցափորձ սրբ՟յն. բայց Հ. լաւ ևս որոշէ զիրսն՝ թէպէտև հանդերձ վրիպակ գրչութե՟, թէ * տարան յեգեսիա քաղաքն եգիպտացւոց (փոխանակ գրելոյ՝ Եգէացւոց), և անդ հատին զգլուխ նորա‖։ Բայց թէ բանն է զեգէայ, և զեգեսիոյ եգէացւոց, յայտ է և յայլոց բանից Հ. և այլոց վկայագրաց, թէ ըմբռնումն սրբ՟յն եղև ՚ի ձիթաստանս անարգաբար։ Արդ յայտ է յԾագրութեանց, թէ եգէա է անուն ծովեզերեայ քաղաքի կիլիկիոյ, ՚ի մէջ մալլոյ և իսսոյ (որ է ասեն այաս, կմ՟ գուցէ և էգէասն է այաս) ը՟ մետրապօլտութե՟ անարգաբար։ Էգէս կմ՟ էղէս ՚ի յն. թարգմանի այծք, ՚ի դէպ եկեալ կողմանցն կիլիկիոյ, ուստի ելանեն այծիք և օդիք (ը՟ այլազգեաց՝ դառամանն գօյունլարը)։

Բարեպրոք համարի, թէ փոխանակ էգէս ասելոյ՝ էգէս կամ եգեսիա կոչեցեալ իցէ տեղի ինչ յէգիա. Զնոյն գուշակէ և վ՟ն միւս ևս էգիս քաղաքին մակեդոնիոյ, որ ը՟ յուստինոսի յառաջն եգեսիա կոչիւր։

ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Սրբոյն Թէոդիտոնի գաղատացւոյն, և Եօթն Կուսանաց անկիւրիոյ։

Հ. մայիս. 22 : Յ. մայիս. 18. և յունիս. 7։
Լ. մայ. 18։ Բոլլանդեանն Պապեբրոք. անդ։
Նեղոս պատմիչ ականատես։ (1)

ՎԱՅԵԼՉԱԶԱՐԴ Պսակք պարծանաց յօրինեալ վարդիւք և շուշանօք՝ դասք սրբոց գաղատացւոց, էին յանկիւրիայ քաղաքէ՝ յաւուրս հալածանաց կռապաշտ կայսերաց (2). որ երևի լինել ըստ մեզ առ յուլիանոսիւ, ըստ այլոց՝ յաւուրս դիոկղետիանոսի և մաքսիմիանոսի։ Սրբոյն Թէոդիտոն՝ որ և Թէոդոտոս, էր այր ռամիկ, բայց առաքինութեամբ սքանչելի, և օրինակ բարի ամենայն հաւատացելոց. քանզի անդստին 'ի մանկութենէ սնեալ անարատ վարուք, և զարգացեալ ջերմ սիրով աստուածպաշտութեան՝ կեայր յաշխարհի իբրև յանապատի. պահացօղ և աղօթասէր, զուարթամիտ և համբերօղ. որ և փափկութիւն առն քրիստոնէի համարէր ըզչարչարանս և զվիշտս՝ որ վասն Աստուծոյ։

Եւ վասն հալածանաց ժամանակին հնարս

իմացաւ Թէոդիտոն հաւանութե՟ կնոջ իւրոյ· քանզի եղև գինեծախ, և արար զտուն իւր իբրև զպանդոկ գինեվաճառաց· և սովին պատճառանօք ընդունէր ը՟ յարկաւ իւրով զփախուցեալ քրիստոնեայսն, և կերակրէր զնոսա· և առ մեծի աղքատսիրութե՟ զոր ունէր և շահէր ՚ի գործոյ իւրմէ՝ բաշխէր աղքատաց։ Եւ որ մեծն է, բազմաց ՚ի խառնակեցիկ մարդկանէ՝ եղև պատճառ դարձի ՚ի վարս պարկեշտութե՟ և զգաստութե՟, եթէ խրատուք, և եթէ աղօթիւք օգնական լինելով նոցա· ո՟չ և զբազումս ՚ի հեթանոսաց և ՚ի հրէից ձգեաց ՚ի սբ՟ հաւատս ազդու յորդորանօք ՚ի տուչութե՟ շնորհաց հոգւոյն։ Եւ էր տեսանել զտուն նր՟ և զպանդոկն իբրև կրթարան առաքինութե՟· և ըզԹէոդիտոն իբրև վարժապետ հոգւոց և տնտես և այցելու, բարերար ամենեցուն և փարելի։

Եւ ընկալեալ յա՟յ զշնորհս բժշկութե՟ լոկ ձեռս դնելով և աղօթելով փարատէր զցաւս և զհիւանդութ՟իս, եղեալ ո՟չ բժիշկ հոգւոց և մարմնոց· և որք գոհանային զերախտեաց նր՟ գովութե՟, ուսուցանէր նց՟ խոնարհութե՟՝ զա՟յ ևեթ գոհանալ, և զնա միայն փառաւորել բերանով և գործով։

Ընդ աւուրսն ը՟ այնոսիկ առաքեցաւ ՚ի կայսերաց ՚ի կուսակալութ՟ի ազգին գաղատացւոց և ՚ի վերակացու՟ի քաղաքին անկիւրիոյ այր ոմն ժանտ և արեանարբու Թէոդեկնոս անուն, խոստումն տալով ինքնակալաց քաջ ՚ի գլուխ տանել զկամս նց՟՝ որ վ՟ս դարձուցանելոյ զբ՟մ քրիստոնեայս 'ի պաշտօն դից։ Իսկ մինչև էր հասեալ նր՟ յանկիւրիա, արձակէր յառաջ քան զինքն պատուիրակս մի զկնի միոյ՝ քանդել զբ՟մ եկեղեցիս գաղատիոյ, և զքահանայս նոցա ստիպել գնալ 'ի մեհեանս և լինել քուրմս և զոհարարս, ո՟չ և զժողովուրդն բռնադատել յերկրպագութ՟ի և 'ի զոհ ըծոց հեթանոսաց. և որ ոչն հնազանդին, պատուիրեաց մատնել 'ի գանս և 'ի կապանս բանտից. զի 'ի գալ իւրում կամ սպանցէ զնոսա, և կամ ազատեսցէ ըզխրատեալսն։

'Ի տարածիլ այսր համբաւոյ՝ եղև ժողով հաւատացելոցն իբրև նաւ ալեկոծեալ յերեսաց ահագին մրրկաց, զոր յարուցին պաշտօնեայք չարին. զի 'ի տունս տունս մտեալ՝ քարշէին զքրիստոնեայս 'ի բանտ, և զբ՟մ ինչս նոցա յաւարի առնուին, և իբրև զգազանս վայրենիս կեղեքէին զկեանս անմեղաց։ Իսկ ոչ ևս էր տեսանել զոք 'ի քրիստոնէից 'ի հրապարակի. զի կէսք ըմբռնեցան, կէսք ղօղեցան 'ի թաքստի. և շատք ևս 'ի լերինս և 'ի դաշտս վայրավատնեալք՝ յետին աղքատութ՟բ և սովալլուկ տատամսութ՟բ մաշէին։

Իսկ 'ի գալ հասանել բռնաւորին Թէոդեկնոսի 'ի քաղաքն անկիւրիա, այնուհետև բազումք 'ի բանտարկելոց 'ի մահ մատնէին վ՟ս անուանն ք՟սի. և 'ի մնացելոցն ոչ ոք իշխէր զանձն քրիստոնեայ անուանել։ Յայնպիսի աաւուրս դառն նեղութե̅ մեծապէս նպաստ լինէր հաւատացելոց երանելին Թէոդիտոս, արարեալ զպանդոկ իւր տեղի ապաւինի ամ̅ վտանգելոց, և տուն աղօթից • զի կարծէին հեթանոսք, եթէ տուն նր̅ իցէ իբրև զմի յայլոց պանդոկաց՝ տեղի արբեցութեան և շուայտութե̅ • նմին իրի ո՛չ զնա կալան, և ո՛չ զորս տեսանէին երթալ՚ի պանդոկ նորա ։

Այլ հոգ մեծ էր երանելւոյն Թէոդիտոսի վս̅ բանտարկելոցն՝ թէ որպէս մարթասցի մխիթարակից լինել նց̅, և լնուլ զկարօտութի̅ս նց̅ • Նոյնպէս և վս̅ մարմնոց սբ̅ց վկայից, թէ որո՛վ օրինակաւ հնարեսցի ժողովել զնոսա • քանզի հրամայէր բռնաւորն շանց արկանել զսբ̅ մարմինս նահատակաց • և թէ ոք իշխէր ամփոփել զնոսա, զնա ևս տայր կորճել ՚ի կենաց ։

Բայց քանզի համարձակ շրջէր Թէոդիտոս՝ անուամբ և ձևով գինեվաճառի, բազում անգամ յաջողեցաւ նմա գտանել ը̅ ջերմեռանդն փափաքանաց իւրոց զմարմինս վկայից ընկեցիկ ՚ի բացի • զորս բարձեալ տանէր ՚ի տուն իւր • և ոչ ոք ՚ի հեթանոսաց ակնունէր վս̅ այնպիսի գործոյ նր̅ ։ Ըստ նմին օրինակի մուտ գտեալ այլով պատճառանօք ՚ի բանտս և ՚ի տեղիս ատենին, սրտապնդէր զերանելի կապեալսն, և վառէր ՚ի հանդէս առաջիկայ մրցանաց և պսակաց ։

Պատուիրեալ էր Թէոդեկնոս ամենն չարութե̅ խառնել ՚ի զոհից կռոց ճարպ և արիւն ՚ի հաց և ՚ի գինի և յայլ կերակուրս՝ որոց վա-

ճաձաւէին զպարէնս և զգինի: Զայն իմացեալ Թէոդիտոնի՝ թաքոյց 'ի պահեստի ցորեան և գինի մաքուր. և անտի բաշխէր հաւատացելոց, և ևս առաւել քահանայիցն ա̃յ 'ի նուէր սբ̃ պատարագի. որ̃ և 'ի տան իւրում կարգեալ սեղան խորհրդոյ՝ անդ տայր մատուցանել զսբ̃ պատարագն. և անդր ժողովէին իբրև յեկեղեցի ա̃յ՝ որք միանգամ հնարս ազատութե̃ խնդրէին, որ̃ 'ի նոյեան տապան յերեսաց հեղեղաց:

Կալան հեթանոսք զոմն 'ի ծանօթից Թէոդիտոնի բեկտոր կամ վիկտոր անուն. քանզի ամբաստան եղեն զնմանէ, քուրմք, թէ սա անարգեաց զդիսն, և թշնամանեաց զապողոն իբրև զհոմանի քեռ իւրոյ արտեմեայ, և զմեզ նախատէ ասեն իբրև զպաշտօնեայս պղծութե̃: Արդ յետ սպառնալոյ նմա բազմօք՝ եթէ ոչ երկիր պագանիցէ կռոց, արկին զնա 'ի բանտ: Լուաւ սբ̃ն Թէոդիտոն. և գնացեալ առ նա գիշերի՝ քաջալերէր և զօրացուցանէր զնա. մի՛ լիցի քեզ ասէ սրտաբեկիլ յաւօրեայ տանջանաց, կամ զգութ ընտանեաց ածել զմտաւ. զի կեանք քրիստոնէի և խորհուրդ նորա յա̃ծպաշտութիւն անդր պարտի դեգերիլ. մի՛ հրապուրեսցեն զքեզ խոստմունք անօրինաց, որ են թոյնք մահաբերք հոգւոց. մի՛ ակնկալցիս բարւոյ 'ի չարաց. այլ յուսա՛ 'ի տր̃, և ամրացո՛ զանձն քո 'ի զօրացուցիչն մեր քս̃:

Իբրև ածին զբեկտոր յատեան 'ի վաղիւն անդր, զառաջինն համարձակ խոստովան եղև զք͞ս ․ այլ իբրև մատուցին զնա ՚ի տանջանս, զանդիտեալ ՚ի մահուանէ՝ խնդրեաց ՚ի դատաւորէն ներել նմա աւուրս քանի մի ․ Ո͞յ յետս կացին ՚ի նմանէ դահիճք, և տարեալ եդին անդրէն ՚ի բանտ ․ ուր ոչ յերկարեալ նորա զկեանս՝ մեռաւ ՚ի ցաւոց անտի ․ և եթող յերկրայս զմիտս ամենեցուն ։ Դէպ եղև երբեմն երանելւոյն Թէոդիտոնի երթալ արտաքոյ քան զքաղաքն Անկիւրիոյ ․ և յանցանելն ընդ գիւղ մի, որ հեռի էր իբր քառասուն մղոնաւ՝ Մալոս կոչեցե͞լ, իբրև մերձ եղև երկու ասպարիզաւ, կամեցաւ հանգչել ուղեկցօքն հանդերձ յայրի միում առ ափս գետով ․ քանզի անդ պահե͞լ էր ն͞ր և թաղեալ յառաջագոյն զմարմին ս͞բյ վկային Վաղեսի, որ հրով կատարեցաւ ՚ի Մեղիկոս քաղաքի, և ոսկերք նորա արկան ՚ի յորձանս ալիս գետոյ (3) ։ Արդ յորժամ նստէր անդ Թէոդիտոն, անցանէին ը͞ այն ժամանք յեղբարց՝ զորս ազատեալ էր նորա ՚ի բանտէ և ՚ի ձեռաց հեթանոսաց ․ ս͞ք եկին ողջունեցին զԹէոդիտոն, և ողջագուրէին զնա բազում շնորհակալութե͞բ իբրև հայր հասարակաց և բարեացապարտ բոլորից ։ Եւ ս͞բյն ուրախացեալ ը͞ գալուստ ն͞ց՝ աղաչեաց ճաշել այն օր ը͞ նմա յափն գետոյն ՚ի դալար վայրի, ուր էր ծառատունկ զւարճալի՝ հանդերձ քաղցրաձայնութե͞բ թռչնոց ։ Բայց քանզի սովորութի͞ էր Թէոդիտոնի ոչ ուտել զհաց առանց օրհնել տալոյ քահանայի ումեք զսեղանն, արձակեաց զերկուսյիւրոցն, զի երթեալ փութանակի 'ի մերձակայ գիւղ անդր՝ ածցեն քահանայ զոմն՝ հացակից լինել նց՟, օրհնել զսեղանն, և աղօթս առնել վն՟ ճանապարհի նց՟։ Իսկ իբրև մտին՝ որք առաքեցանն՝ 'ի գիւղամէջն, հանդիպեցան վաներիցուն փրոնտոնի, որ դայր յեկեղեցւոյ զկնի վեցերորդ ժամու աղօթից. և իբրև յանծանօթս ողջունեցին զնա, ասէ ցնս՟ քահանայն. եթէ քրիստոնեայք էք, մտէք 'ի տուն իմ. և նոքա ասեն. քրիստոնեայք եմք, և խնդամք ը՟ հանդիպումն առն քրիստոնէի։ Յայնժամ 'ի զարմացման եղև փրոնտոն երէցն, և ասէ. գոհանամ զտ՟նէ՝ որ ոչ թաքուցանէ զխորհուրդս իւր յինէն. քանզի տեսանէի 'ի գիշերիս յայսմիկ երկուս աւետաբերս 'ի նմանութ՟ի կերպարանաց ձերոց, որպէս թէ գանձ բերէին այսր ը՟ իւրեանս։ Լսեն այրքն. և կարի իսկ քաջ. զի ընդ մեզ է կենդանի նահատակն Թէոդիտոն՝ քան զամ՟ գանձ պատուական. այլ դու ցոյց մեզ աղաչեմք զերէց գեղջս։ Փրոնտոն ասէ. ես ինքնին իսկ եմ։ Իսկ իբրև ծանուցին նմա զկոչ Թէոդիտոնի, ետ պնդի երէցն, և ասէ. մեզ արժան է հիւրընկալել զնա, քան 'ի կոչ նորա երթալ. զի ուր կան քրիստոնեայք, չէ պարտ ումեք արտաքոյ ագանիլ։ Զայս ասացեալ եկն ը՟ նս՟, և ստիպէր զԹէոդիտոն և զորս ը՟ նմա՝ մտանել 'ի շէնն, և ագանիլ 'ի տան իւրում։ Բայց երանելին Թէոդիտոն ոչ էառ յանձն. փութամ ասէ դառնալ 'ի մայրաքաղաքն, զի անդ բացեալ կայ ասպարէզ ը՟արձակագոյն 'ի փրկութի՟ քրիստոնէից ․ և մեզ պարտ է փութալ յօգնութի՟ եղբարց՝ որ են 'ի նեղութե՟ ։ Եւ իբրև ճաշէցին , ասէ Թէոդիտոն ցքահանայն ժպտելով ․ կարի վայելուչ տեսանեմ զտեղիս զայս 'ի պահարան նշխարաց սրբ՟ց ․ արդ փութա՛ մի՛ հեղգար, պատրաստեա՛ վանս սրբ՟ց ։ Պ՟խնի եւ փրոնտոն ․ դու ինձ պատրաստեսջի՛ր նշխարս , և եթէ գտցես զիս անպատրաստ 'ի տալոյ նոցա վանս , յայնժամ յանդիմանեա՛ զհեղգութի՟ս ։ Թէոդիտոն ասէ ․ յիմ վերայ լիցի հաստատել տ՟ն նշխարս առ քեզ ․ միայն շինեսջի՛ր դու զհանգստարան վկայից ․ զի փութով եկեսցեն նշխարք առ քեզ ։ Եւ հանեալ զմատանին՝ ետ 'ի ձեռս քահանային , և ասէ ․ Տ՟ր ինքնին լիցի՛ վկայ ընդ իս և ը՟ քեզ՝ 'ի կատարումն խոստմանց մերոց ․ և զայս մարգարէութի՟ խօսեցաւ երանելին ․ զի թէ ոչ զայլոյ ուրուք 'ի վկայից՝ զիւրն անվրէպ առաքեսցէ առ նա զնշխարս ․ քանզի և ինքն անձկացեալ էր լնուլ զընթացս նահատակութե՟ ։

Յետ այսորիկ հրաժարեալ յերիցու՟էն՝ դարձաւ Թէոդիտոն 'ի քաղաքն իւր յանկիւրիա ․ և ետես զհրդեհ հալածանաց ևս քան զևս բորբոքեալ ։ Քանզի յաւուրսն յայնոսիկ կալան պաշտօնեայք ատենին և զեօթն կուսանս կանայս ձգնաւորս 'ի քաղաքի անդ անկիւրիոյ , սնեալս 'ի մանկութէ 'ի վարս բարեպաշտութե՟ և զարդացեալս յերկիւղն տ՟յ , հասունս հասակաւ և կատարեալս առաքինու͞բ· որք բանիւ և օրինակաւ վարժիչք էին յոգունց 'ի կարգս ա͞ծպաշտութե· և անուանք նոցա, Տեկուսա մօրաքոյր երանելոյն Թէոդիտոնի, Աղեքսանդրա, Կղաւդիա, Փենա, Եւփրասիա, Մատրոնա, և Յուղիտա ։ Զարչարեաց զեօթանեսին զն͞ո բռնաւորն Թէոդեկնոս, և փորձեաց պէսպ͞ տանջանօք· և ոչ կարացեալ խախտել զմիտս նոցա 'ի սիրոյն ք͞րի՝ խոստմամբք և սպառնալեօք, հրաման ետ անօրէնն մատնել զն͞ո 'ի ձեռս անառակ երիտասարդաց 'ի նախատինս քրիստոնէից ։

Յայնժամ տեսեալ ս͞բ և պարկեշտ կուսանացն զչարիմաց հնարս բանսարկուին, սկսան յոգւոց հանել, և ձեռս յերկինս տարածել բազում արտասուօք՝ գոչէին 'ի բոլոր սրտէ ասելով· տ͞ր յ͞ս ք͞ս դու ինքնին գիտես, զի ցորչափ 'ի մեր ձեռս էր՝ զուն գործեցաք քոյովդ շնորհիւ անարատ պահել զմարգարիտ կուսութեան մերոյ մինչև ցայսօր՝ ո͞պ գանձ պատուական յաչս մաքուր փեսայիդ հոգւոց մերոց· և արդ տես տ͞ր, նայեաց յերկնից յաթոռոյ սրբութե քո, զի անպատկառ երիտասարդք իշխանութի առին 'ի վերայ մարմնոց մերոց· խնայեա՛ 'ի մեզ տ͞ր, և այց արա մեզ ը͞ս բազում ողորմութե քում, և մի տար յապականութիւն զժառանգութի՛ս քո· զի դու կարող ես ա͞մի տ͞ր տ͞ր օրհնեալ 'ի բարձունս ։

Մինչդեռ յայսպիսի հեծութիւնս աղօթից ապաստան կային երանելիքն, ընթացաւ առ-

նու

նոսա ոմն յառաւել լիրբ երիտասարդաց, և բուռն եհար զհանդերձից տեկուսայի ձգել զնա յինքն ։ Յայնժամ անկաւ կոյսն ս՟բ յոտս նորա, և բացեալ զքօղ գլխոյն՝ ասէր ․ Հայեաց աղաչեմ որդեակ 'ի սպիտակացեալ հերս գլխոյս, և 'ի պառաւելս հասակ, և 'ի մարմին տկարացեալ 'ի պահոց և այլազգունեալ 'ի խստամբերութէ, և այն կոշկոձեալ 'ի խոշտանգանաց ատենի ․ զի՞նչ շահ իցէ քեզ յեօթանասնամեայ պառաւոյ․ ամօթ մեծ է քեզ սիրել զմարմին մեռեալ, որ յետ սակաւուց և ոչ գերեզմանի լիցի արժանի, այլ 'ի հրամանէ դատաւորին արկցի 'ի կերակուր հաւուց և գազանաց ։ Եւ զայս ասեմ քեզ և որոց ընդ քեզ, զի եթէ խնայեսջիք դուք 'ի մեզ 'ի պառաւեալքս, հասցէ 'ի վերայ ձեր շնորհք ողորմութե՟ն ա՟յ՝ որ պարգևատուն է ա՟մ բարեաց․ ապա թէ ոչ՝ գոնէ 'ի պատիւ երեսաց մարց ձերոց, որ համահասակ մեզ իցեն, խնայեցէք 'ի մեզ ։ Զայսոսիկ իբրև ասէր տեկուսա հանդերձ սրբասէր ընկերօքն, յարտասուս ցնդէին երիտասարդքն․ և սորջացեալ 'ի բաց գնային 'ի նոցանէ․ և այնպէս անփորձ պահեցան ս՟բ կուսանքն խնամօքն ա՟յ․

Լուեալ և բռնաւորին Թէոդեկնոսի զանցս ն՟ց՝ ոչ ևս կամեցաւ նեղել զն՟ս վ՟ս այնր բանի, այլ զայլ հնարս մեքենայեր 'ի կործանումն ն՟ց․ հրաման տայր պատիժ առնել ն՟ց իբրև մաքրասիրաց, և կարգել զն՟ս քրմուհիս դիցն արտեմեայ և աթենայ․ և զի հա-

սեալ

տեալ էր յաւուրսն յայնոսիկ տօն չ̃ածուհեացն, և օրէն էր քրմուհեաց տանել շքով զարձանս պղծոցն այնոցիկ, և լուանալ 'ի մօտաւոր լճին, պատուիրեաց` զի եօթն այն կուսանք կատարեսցեն զայն գործ: Իսկ երանելիքն ետուն պ̃խնի, և ասեն. պատրաստ եմք մեռանիլ վ̃ս ք̃ի ա̃յ մերոյ` քան պաշտօն տանել կռոց գարշելեաց: Եւ 'ի ստիպել զն̃ն դատաւորին բազմօք` սրբուհին Տեկուսա միաբանութ̃բ սրբասնե̃լ ընկերացն` համարձակ յանդիմանեաց զանմտութ̃ի հեթանոսաց, և անարգեաց զանօրէն պաշտամունս նոցա:

Յղեաց զն̃ն դատաւորն առ բուն իսկ քրմուհին, զի կանացի հրապուրանօք որսասցեն զմիտս ն̃ց. և ն̃ց բերեալ պսակս պսակս և հանդերձս պայծառս` մատուցանէին կուսանացն, յորդորելով պաշտօնակից լինել ինքեանց 'ի ծառայութ̃ե Արտեմեայ և Աթենայ: Բայց իմաստուն կուսանքն անարգեցին մերժեցին զշաղփաղփանս նոցա, և առոտն հարին զամենայն զարդս մնոտիս: Եբրև իրազեկ լինէր բռնաւորն, հրաման տայր բարկութ̃բ` բռնի տանել զն̃ն մերկս և խայտառակս մինչև յափն լճին հանդերձ դրօշելովք: Յայնժամ մերկացուցեալ դահճաց զեօթանեսին զն̃ն` եդին կանգուն 'ի վ̃ր սայլից, և զհետ ն̃ց բարձե̃լ բերէին յայլ կառս զարձանս դիցն. գայր և բռնաւորն զկնի բազում հանդիսիւ, թմբկօք և պարուք հանդերձ` հերարձակ կանանց: Եւ ո՞ կարէ պատմել զյետին պատկառանս պարկեշտ կուսանաց՝ 'ի տեսանել զանձինս նշաւակ բազմութեան հեթանոսաց . այլ բարեխնամ տ̅րն գթացեալ յիւր աղախնայս՝ եարկ առաւել գութ 'ի սիրտ ամբոխին . որոց տեսեալ ըզմարմինս ն̅ց գանալիցս , և զկերպարանս ցածուն համեստութե̅ նոցա , չիշխեին հայել ը̅ ն̅ս համարձակ . միանգամայն և կարեկցաբար գովէին զվարս պարկեշտութե̅ նոցա և զհամբերութի̅ն . այլ առաւել աղեգորով սրտցաւութբ̅ բերե̅լ լինէին հաւատացե̅լ կանայք , որք 'ի կերպարանս ծպտեալս տեսող եղեն անցից տ̅ր կուսանացն . ուր ոչ ոք յարանց քրիստոնէից իշխէր արտաքոյ երևել ։ Եւս առաւել երանելին Թէոդիտոն իբրև լո՛ւաւ զանցս մօրաքեռն իւրոյ և ընկերաց ն̅ր , 'ի հոգս և 'ի վարանս մտանէր յոյժ , և յաղօթս անդադարելիս կանխէր արտասո՛ւօք , զի մի՛ արդեօք կանացի տկարութբ̅ յաղթեսցի ոք յահէ տանջանաց և մահո՛ւան ։ Եւ էր յայնժամ Թէոդիտոն փակե̅լ 'ի տան աղքատի միոյ , որում անուն էր Թէոխարիտես , մերձ 'ի վկայարանն նահատակաց , համդերձ պողիքրոնիւ՛ ազգականաւ իւրով , և միւս ևս Թէոդիտոնիւ՛ 'ի նմին ազգականութ̅է , և այլովք 'ի բարեպաշտից ։ Եւ մինչդեռ յաղօթս կային ն̅ք յառաւօտէ մինչև ցվեցերորդ ժամն , եկն և պատմեաց կինն Թէոխարիտեայ , թէ սբ̅ կուսանքն եօթանեքին արկան 'ի լի̅ճն , և այնպէս կատարեցան 'ի տ̅ր ։

Քանզի յորժամ տարաւ զնոսա դատաւորն յափն լճին, և ոչ կարաց հաւանեցուցանել զնոսա 'ի կամս իւր՝ պաշտօն տանել կռոց, և լուծանալ զարձանս նց, հրաման ետ, և կապեցին 'ի պարանոցս կմ յոտս միոյ միոյ վէմս ծանունս. և խաղացուցեալ զնս նաւակաւ 'ի խորս անդր իբր երկու արտաչափ հեռագոյն յեզերացն, ընկեցին 'ի ջուր անդր. որով և կատարեցան իսկ. և պսակեցան 'ի քնէ կուսական և վկայական անթառամ պսակօք ։

Զայս ժմ լուեալ Թէոդիտոնի՝ եռայր հոգի նր 'ի նմա 'ի տարաժամիլ աւուրն, թէ որպէս հանցէ 'ի լճէ անտի զմարմինս սբ կուսանացն. և 'ի խորհել նր զիրացս ը Պողիքրոնի և ը Թէոխարիտեայ՝ եկն պատանի մի Գղիկերիոս անուն, և պատմեաց՝ եթէ զօրականք գիշերապահք կարգեցան 'ի դատաւորէ զգուշանալ լճին ։ Յայնժամ տրտմեցաւ յոյժ Թէոդիտոն, զի խափանումն եղև խորհրդոցն. Թող զայն, զի ոչ գտանէր ելս՝ թէ զիարդ լինիցի 'ի վեր ձգել 'ի խորութենէ լճին զիւրաքանչիւր մարմինս, զորոց զքարինս մի մի սայլ հազիւ կարէր շարժել ։ Իբրև երեկոյ եղև, գնաց Թէոդիտոն միայնիկ 'ի դուռն տաճարի նահապետաց. և գտեալ զմուտս նր խցեալ 'ի հեթանոսաց՝ եկաց յաղօթս յարտաքին գաւթի, աղաչելով զտր յաջողել նմա զելս խորհրդոյն. և անտի անցեալ 'ի վկայարանն՝ որ կոչէր հարանց, եգիտ և զայն որմեալ նոյնպէս (4). և

յա

յաղօթել իւրում անդ եւս ջերմեռանդն հաւատով՝ լռեաւ ստնաձայն եւ շշնջիւն․ վո՞յ խոյս տուեալ եկն երկիւղիւ՛ ՚ի յարկս Թէոխարիտեայ, եւ անդ ննջեաց տրտմութե̃ն ։ Յայնժամ երեւեցաւ նմա սր̃ կոյսն տեկուսա, եւ ասէ․ ննջե՞ս որդեա՛կ Թէոդիտոն, եւ ոչի՞նչ փոյթ է քեզ վ̃ն մեր․ ո՞չ յիշես զիմ խրատս՝ որովք դաստիարակեցի զքեզ՝ ՚ի մանկութե̃, եւ ՚ի չափ հասուցի առաքինութե̃՝ ՚ի վեր քան զակնկալութի̃ ծնողացդ ։ Զորչափ կենդանի էի, ոչ անտես առնէիր զիս, այլ պաշտէիր ո՛վ զմայր․ արդ զի՞արդ մոռացեր զկնի կատարմանս՝ ՚ի ք̃ս․ մի՛ որդեակ, մի՛ թողուր զմարմինս մեր լինել կերակուր ձկանց․ քանզի եւ քեզ կայ մնայ յետ աւուրց ինչ մեծ նահատակութիւն․ արդ արի՛ գնա՛ ՚ի լիճն․ այլ զգո՛յշ լինիջիր ՚ի մատնչէն ։ Եւ զայս ասացեալ՝ եղեւ աներեւոյթ ։

Զարթուցեալ Թէոդիտոնի ՚ի քնոյ՝ պատմեաց զտեսիլն որոց անդն կային․ եւ աղօթս արարեալ նոքօք հանդերձ՝ արձակեաց ընդ առաւօտն զպատանին գղիկերիւս ը̃ Թէոխարիտեայ լրտեսել զլիճն․ զի թերեւս մեկնեալ իցեն պահապանքն ՚ի կատարել զտօն չ̃ածոց ՚ի քաղաքին․ եւ իբրեւ գիտաց՝ թէ դեռ անդէն ՚ի տեղւոջն են, դադարեաց զայն տիւ՛ աղօթիւք եւ պահօք ։ Եւ յերեկոյին պահու էառ ը̃ իւր արս քանի մի եւ գրաստս հանդերձ սուր տապարօք ՚ի հատանել զպարանս վիմաց ։ Եւ իբրեւ յուղի անկան, պատեաց մութն գիշերոյ․ զի եւ ոչ աստեղք երեւելին . և յանցանել նոցա է տեղի գլխատմանն մահապարտաց , ահ պատեաց զնս . յայնժամ եղև ձայն՝ որ ասէր . քաջալերեա՛ց Թէոդիտոն և յառաջեա՛ . և նք առաւել զարհուրեալ՝ կնքէին զանձինս նշանաւ սբյ խաչին ։

Եւ ահա երեւեցաւ նց խաչ լուսափայլ ճառագայթեալ յարեւելից կուսէ . իսկ նք երկրպագեալ՝ զտեղի առին և յաղօթս կացին ։

Ապա յարուցեալ յառաջ խաղային . այլ միւսանգամ մածեալ խոր խաւարաւ՝ հանդերձ անձրեւով և տղմաշաղախ ընթացիւք , վերստին կարդային առ Տր ։ Յայնժամ վայրի տեսին ջահ պայծառ , որ ցուցանէր նց զճանապարհ . երեւեցան և արք երկու ալեւորք և լուսազգեացք , և ասեն . քաջալերեա՛ց Թէոդիտոն , քանզի Տրն մեր յս քս գրեաց զանուն քո է վկայս . նա ինքն լուաւ և աղօթից և արտասուաց քոց վս գլխոյ մարմնոց սբց , և առաքեաց զմեզ օգնական լինել քեզ . որ եմք 'ի համարոյ անտի հարանց՝ զորս կալար բարեխօսս առ Ած ։ Եւ եղիցի 'ի հասանել քո 'ի լիճ անդր՝ գտցես անդ զսբն սոսանդրոս սպառազէն , որ ահ արկանիցէ պահապանաց . այլ քեզ չէր պարտ ուղեկից ունել և զմատնիչն ։

Յետ այսորիկ իբրեւ ժամանեցին յափն լճին առաջնորդութբ լուսոյն , եղեն անդ ահագին փայլատակմունք և որոտմունք և անձրեւ ուժգին հողմով . և մինչդեռ տագնապէին պահապանք յերեսաց ամպրոպաց՝ տեսին յեզր լճին հսկայազօր զոմն վառեալ 'ի զէն և 'ի զարդ , յորմէ ցոլանայր հուր շուրջանակի ․ այն ինքն էր սը՟ն սոսանդրոս մին յերևելի վկայից ծ՟ին գաղատացւոց ․ մինչև իսպառ զարհուրեալ պահապանացն՝ վազս առին և փախեան 'ի տեղւոջէն՝ գնալ 'ի հիւղս , որ կային 'ի բացի ։ Իսկ ջուր լճին բռնութ՟ե հողմոյն ժողովեցաւ 'ի մի կողմն , մինչև երևիլ մարմնոց սը՟ցն ․ յայնժամ մատեալ թէոդիտոնի և որոց ը՟ նմա՝ հատին զպարանս 'ի պարանոցաց եօթանեցունց կուսանացն ․ և բարձեալ զպատուական մարմինս նց՟ 'ի վ՟ր գրաստուց՝ բերին մօտ յեկեղեցին նահատակետաց (կմ՟ը ÷ ․ մերձ սը՟ հարանցն) , և անդ ամփոփեցին 'ի մերձակայ շիրմի ։

Այլ իբրև առաւօտ եղև , տարածեցաւ լուր 'ի քաղաքին՝ թէ գողացեա՟լ են քրիստոնեայք զմարմինս կանանցն արկելոց 'ի լիճն ․ վ՟յ և կռապաշտք յոյզ և խնդիր արարեալ՝ ձրգէին զումանս յատեան ։ Խորհեցաւ սը՟ն թէոդիտոն անձամբ զանձն մատնել , զի մի այլք 'ի պատճառս իւր վտանգեսցին ․ բայց ոչ թողին զնա հաւատացեալքն ։ Իսկ պողիքրոն զգեցեալ զձև շինականի՝ գնաց 'ի դուռն դատաւորին լրտեսել զիրսն ․ այլ իբրև յայտնի եղև՝ թէ քրիստոնեայ է , կացուցին յատենի ․ և 'ի խոշտանգել զնա դատաւորին , և յերկեղուկս արկանել ն՟մ մերկ սուսերաւ , զանգիտեաց , և մատնեաց իսկ , թէ ո՞ էր՝ որ եբարձ զմարմինս , և ո՞ւր թաղեաց ։ Վ՟յ եկին հանին հեթանոսք զմարմինս սը՟ կուսանացն , և այրեցին ․ և յայնժամ 'ի միտ եառ Թէոդիտոն, եթէ Պողիքրոն էր այն՝ զորմէ երկիցս ազդեցաւ նմա զգոյշ լինել 'ի մատնչէ :

Այնուհետև վառեալ Թէոդիտոսի 'ի հանդէս առաջիկայ նահատակութեան՝ յաղօթս եկաց արտասուօք 'ի ժողովի եղբարց, և ասէ. Տէր յ՟ս ք՟ս յոյսդ անյուսից, տուր ինձ կատարել 'ի համբոյս քո զընթացս վկայուե՟, և մատուցանել զհեղումն արեան իմոյ 'ի պատարագ քեզ ընդունելի՝ փոխան ամենեցուն, որք վ՟ն քո չարչարին. թեթևացո՛ տ՟ր զբեռն ն՟ց, և հանդարտեցո՛ զմրրիկ հալածանաց. զի 'ի խոր խաղաղութե՟ վայելեսցեն հաւատացեալքն 'ի քեզ : Եւ յարուցեալ յաղօթիցն, և քաջալերեալ զեղբարսն՝ որք մորմոքէին ը՟ ն՟ր հրաժարումն, պատուէր ետ ն՟ց, և ասէ. Յորժամ եկեսցէ պատուական երէցն տ՟ր Փրոնտոն 'ի Մալոս գեղջէ՝ բերել ը՟ իւր զիմ յիշելիք զմատանին, տուք նմա զնշխարս իմ, միայն թէ կարօղ լինիջիք գողանալ : Զայս ասացեալ կնքեաց զըովանդակ մարմին իւր նշանաւ տ՟ք խաչին, և յառաջեաց յասպարէզ նահատակութե՟ :

Եւ 'ի ճանապարհի հանդիպեալ նմա երկուց 'ի բարեկամաց հեթանոսաց՝ ասեն ցնա. յո՞ դիմեդ գնաս Թէոդիտոսէ, դարձիր փութանակի 'ի յարկս քո, և ապրեցո՛ զանձնդ. զի 'ի խնդիր են վ՟ն քո. ո՞չ գիտես՝ զի Պողիքրոն վկայեաց զքէն վ՟ն գողանալոյ զմարմինս, և քուրմք հանդերձ այլովք ամբաստան եղեն զքէն վ՟ն անարգելոյ քո զդիս

իբրև զքարինս՝ անշունչս, և մի՛ յետս նահանջելոյ քո զքրիստոնեայս 'ի պաշտելութ՟է դից․ արդ մեք խրատ տամք քեզ իբրև բարեկամի զգոյշ լինել անձինդ ։ Վ՟նի եմ առաքինի նահատակն․ եթէ դուք բարեկամք էք իմ, և բարիս ինձ կամիք առնել, մի՛ լինիք խափան ընթացից իմոց․ այլ յառաջեցէ՛ք քան զիս առ դատաւորն՝ տալ աւետիս, թէ ահա թէոդիտոնն այն՝ զոր խնդրէքն,
առ դուրս հասեալ կայ ։

Զայս ասացեալ՝ էանց զնոքօք․ և եկեալ յապարանս դատաւորին՝ յայտնեաց զանձն․ և մտեալ 'ի ներքս յատեանն՝ եկաց աներկիւղ յանդիման դատաւորին, և հայէր զըճարթագին 'ի վ՟ր տանջանարանացն՝ որք պատրաստեալ կային յընդարձակ սրահի զատենին վ՟ն քրիստոնէից, խարոյկ բորբոքե՟լ և կատսայ յեռանդեան, անիւք և կախաղանք և գելարանք, և ա՟մ անօթ չարչարանաց ։ Հայեցաւ ը՟ն նա դատաւորն թէոդեկնոս, և ասէ․ զի՞ կաս այր դու՝ ակն եդեալ 'ի վ՟ր տանջանարանացս․ ո՛չ է վ՟ն քո և ո՛չ մի 'ի սոցունց յայսցանէ․ միայն թէ 'ի միտս եկեալ զգաստութե՟՝ զոհեսցես դիցն, և ազատ լինիցիս յա՟մ վնասուց՝ որովք ամբաստան եղէն զքէն․ և ոչ այսչափ միայն, այլև ը՟ն առաջին բարեկամս ղետեղիցիս, և սիրելի թագաւորաց անուանեսցիս․ և արժանի գտանիցիս ը՟ն ունել հրովարտակաւ պատիւ և մեծութի՟ յոյժ․ միայն ուրացի՛ր զյս՟՝ զոր 'ի խաչ եհան պիղատոս դատաւորն ինքնակալութե՟ հռովմայ ։

մայեցւոց 'ի Հրէաստան ։ Բազում և այլ ինչ խօսեցաւ ը՟ նմա դատաւորն՝ ողոք բանիւք, գովելով միանգամայն և զապողոն չա՟ծն և զայլ դիս իւր, յորոց ասէ յորդեն 'ի մեզ ա՟մ բարիք ։ Եւ ժողովուրդն՝ որ անդ կայր, երանի կարդայր Թէոդոտոսի վ՟ս կարօղ լինելոյ այնպիսում հասանել պատուոյ և փառաց. վ՟ս յորդորէին լսօղ լինել իշխանին ։

Պ՟խնի ետ ս՟բ վկայն ք՟սի Թէոդոտոս, և ասէ. Նախ քան զա՟մ՝ զայս շնորհս խնդրեմ 'ի փրկչէն իմմէ յ՟սէ ք՟սէ՝ զոր դուդ իշխեցեր Թշնամանօք անուանել իբրև զմի 'ի սոսկ 'ի մարդկանէ, զի կարօղ եղէց յանդիման առնել յատենիս զդիցապաշտ ձեր մոլորութ՟ին, և զտ՟ն իմոյ յ՟սի ք՟սի զխորհուրդն սքանչելի ։ Արդ հա՛րկ է ո՛վ Թէոդեկնէ, զիմ առնա զհաւատս բանիւք և արդեամբք յայտնի կացուցանել 'ի ձեռն բազում վկայից ։ Ապաքէն որ ինչ բանք իցեն վ՟ս դից ձերոց՝ զայն և խօսել իսկ աղտեղի է. այլ ասեմ յամօթ ձեր. արամազդն հայր ա՟ծոց կարդացեալ առ 'ի ձէնջ՝ ը՟ ձերոց քերթողացդ վկայելոյ՝ հայրասպան էր և մծղնեայ, և ա՟մ գարշութեց սկիզբն և կատարած. նոյնպէս և ապողոն և արէս և հեփեստոս 'ի քորս իւրեանց մտաբերեցին. Թողից զայլոցն զծանականս. զոր պարծանօք գրեցին՝ որք գրեցինն, և դուք պանծանայք յընթեռնուլն և 'ի լսելն. տեսանես ո՛վ հիւպատոս զամօթալի պաշտամունս հեթանոսացդ ։

Ուր յաղագս մեծահրաշ զօրութեն և սքանչելեաց տն մերոյ յսի քսի, զոր անդստին գուշակեցին տեսանողք հոգւոյն սբյ, չիք մեզ տեղի ամաչելոյ. զի տրն է անտխեղծ սրբութբ լի. քանզի զորօրինակ վկայեցաւ՝ մինչև եղեալ, եթէ ՚ի լրման ժամանակաց տծ յերկրի երևեսցի և ընդ մարդկան շրջեսցի, լոյս ծագել խաւարելոց, և բժշկել զախտս հոգւոց և մարմնոց, յանձն առնուլ զմահ, և յարութբ իւրով կեանս մեզ պարգևել՝ և երկնից թագաւորութեան առնել արժանի, նոյնպէս և կատարեցաւ տրն մեծավայելուչ տնտեսութբ։ Վկայ եղեն այսմ ՚ի սկզբան անդ խորհրդոյն և իմաստուն քաղդեայք և մոգք արևելից՝ եկաւորեալք առաջնորդութեամբ աստեղն յերկրպագութի տն երևելոյ ՚ի մարմնի՝ հանդերձ պատարագօք։ Եւ ո՞կարէ պատմել մի ըստ միոջէ զնշանս և զսքանչելիս տն մերոյ. այն՝ որ զջուրն ՚ի գինի փոխեաց, հինգ հացիւ զհինգ հազարս յագեցոյց, գնաց ՚ի վերայ ծովու իբրև ՚ի ցամաքի. բանիւ նր մեռեալք յառնէին, կոյրք տեսանէին, կաղք գնային, հիւանդք բժշկէին, դևք ՚ի բաց հալածէին. վս զի տծ էր ճշմարիտ՝ տր կենաց և մահու, և ոչ լոկ մարդ ոք ՚ի մարդկանէ։

Յայս վայր լուեալ ամբոխին՝ այնուհետև ոչ կարէին հանդարտել. դղրդեցաւ ատեանն ամ. զօձիս պատառեալ և զհերս փետեալ քրմաց և այլոց բազմաց՝ բողոքէին ընդդէմ իշխանին, եթէ որպէս ներեաց նմա խօսել

զայն

զայնպիսիս 'ի լսելիս ամենեցուն ։ Յայնժամ և դատաւորն ինքնին գլխովին լցեալ բարկութբ̃՝ հրաման ետ դահճաց իսկ և իսկ 'ի կախաղան քերանաց հանել զնա . և յարուցեալ յաթոռոյն՝ աւատանայր 'ի սրտի անձամբ տանջել զնա . և յայնպիսի ծուփս յուզման ամբոխին՝ թէոդորոսն կայր հանդարտ , ոչ թէ ընդդէմ այլոյ ումեք իցէ ցասումն ատենին ։ Իսկ դահիճքն այր զարամբ եղեալ՝ զամ̃ ազգս տանջանաց հնարէին միանգամայն հեղուլ զնովաւ , և եթէ մարթ ինչ իցէ՝ սրով և հրով ծախել զամ̃ ոսկերս նորա ։

Իսկ նախ մերկացուցեալ զնա և մատուցեալ 'ի կախաղան՝ յերկուս դասս բաժանեցան , և սկսան գազանաբար քերել զկողս նորա երկաթի եղնգամբք , մինչև վաստակիլ և փոփոխիլ նոցա ։ Իսկ սբ̃ վկայն զուարթերես և անայլայլելի կայր մնայր զօրութբ̃ վերին օգնականութե̃ ։ Ապա հրամայէր բռնաւորն արկանել բարկ քացախ 'ի վերայ կողիցն քերելոց , և ջահս վառեալս մատուցանել ։ Իբրև էառ սբ̃ն զկծու հոտ քացախոյն հանդերձ խանձողմամբ մարմնոյն , շրջեաց զհոտոտելիս իւր առ փոքր մի ։ Յայնժամ 'ի վեր վազեալ անմիտ իշխանին յաթոռոյ իւրմէ՝ ասէր . Ո՞ւր է արդ թէոդորոսն ճոռոմութիւն բանից քոց , զի տեսանեմ զքեզ փոքր միւս ևս և նուաղիլ 'ի տանջանացս . և եթէ չէր քո հայհոյեալ զդիս , ոչ պատահէին քեզ չարիքս այս . և արդ ա՛ղէ այդ լիցի քեզ 'ի խրատ , զի դու այր գինեվաճառ և անշուք մի իշխիցես դիմակաց լինել ինքնակալաց , որք իշխանութի՟ ունին 'ի վ՟ր արեանդ քո :

Լսէ քաջ նահատակն . մի՛ է՟ այդ զարմանալ ո՛վ հիւպատոս , եթէ դարձուցի զունդունս յանսովոր հոտոյ կողիցս . այլ պատու̂էր տուր դահճացդ ժիրաժիր 'ի գլուխ հանել զհրամանս քո . քանզի տեսանեմ զնոսա խոնջս և թոյլս . և դու ծրացի՛ր զայլ ևս ազգի ազգի տանջանս մեքենայել՝ զփորձ առնուլ զիմոյ զօրութե՟ , որ չէ իմ , այլ՝ զօրացուցչին իմոյ և ա՟ծն յսի քրի՟ . որով հզօրացեալ՝ առ ոչինչ դրեմ զքեզ և զամպարիշտ թագաւորսդ : Եթէ իբրև չարագործ կալեալ էր քո զիս , գոյր թերևս յիս տեղի երկիւղի . իսկ այժմ ոչինչ զանգիտեմ 'ի սպառնալեացդ , զի յօժարութե՟ պատրաստ եմ կրել զա՟մ չարչարանս վ՟ս անու̂անն քրի՟ :

Ընդ այս սրտմտե՟լ դատաւորին՝ ասաց հարկանել քարամբք զկզակս նորա , և խորտակել զատամունսն : Իսկ պատու̂ական վկայն ասէ . թէև զլեզուս հատանիցես ո՛վ թէոդեկնէ , նաև լռութե՟ լաւ է ծ՟ն քրիստոնէից : Յայնժամ հրաման ետ դատաւորն տանել և արկանել զնա 'ի բանտ :

Եւ իբրև անցանէր ս՟րն թէոդիտոս է՟ հրապարակս վիրալից և պատառոտե՟լ մարմնով , ասէր ցամբոխն . հայեցարո՛ւք առ հասարակ 'ի հրաշալի զօրութի՟ քրի՟ն իմոյ , և տեսէ՛ք թէ ո՟պ որոց չարչարինն վ՟ս սիրոյ նորա՝ տայ զանչարչարութի՟ . և զտկարութի՟ մարմնոյս զօրագոյն առնէ քան զհուր , և տայ տկարա-

դուղունիցն 'ի մարդկանէ չհամարել ինչ զսպառնալիս բռնաւորաց , և առ ոտն հարկանել զա՟ծ ընդդէմ հրամանս ինքնակալաց. և զայսպիսի շնորհս առանց ակնառութե՟ պարգեւէ Տ՟ր մեր մեծի և փոքու , ազատաց և բարբարոսաց : Նա ցուցանելով զվէրսն իբրև նշանակս արքունի պատուոյ՝ յայտ առնէր զուրախութի՟ սրտի իւրոյ ընդ չարչարակիցն լինել փրկչին , և ասէր . արժան իսկ է հաւատացելոց 'ի ք՟ս զայսպիսի պատարագս մատուցանել նմա . ուր նախ նա ոչ ամօթ համարեցաւ զայսպիսիս կրել վ՟ն միոյ միոյ 'ի մէնջ : Նա յետ հինգ աւուրց հրամայեաց Թէոդեկնոս ածել միւսանգամ զԹէոդիտոն յատեան իւր յերևելի տեղւոջ առաջի ամբոխին , և ասէ ցնա . Մօ՛տ եկ առ մեզ Թէ՛ոդիտոն . քանզի գիտեմ , խրատեալ և զգաստացեալ ես քո տանջանօք , և 'ի լաւ անդր փոխեալ յամբարհաւաճութե՟դ . զի արդարև անմտութեամբ յանձն առեր զառաջին զայն խոշտանգանս ը՟դդէմ կամաց մերոց : Արդ 'ի միտ առ զտ՟րութիւն ամենիշխան ա՟ծոցն , և զոհեա՛ նոցա , զի վայելեսցես յո՟մ բարիս՝ զոր խոստացայն և խոստանամ . քեզէն ընտրեա՛ զքո բարին . ապա թէ ոչ՝ պատրաստ կայ հուր կիզանող , և երկաթ սուր , և մռնչիւն գազանաց գիշատողաց . առ որովք իբրև ստուեր համարեսցին՝ որ ինչ անցք անցին ը՟դ քեզ :

Ասէ վկայն ք՟սի . զի՞ է քեզ Թէոդեկնէ այդչափ մեծամեծս խրոխտալ ը՟դդէմ զօրութե՟

տն՟ իմոյ յսի՟ քսի՟ . զի թէպէտեւ ամ՟ մարմինս ապականեալ է առաջին տանջանօք՝ ոպ՟ տեսանես , մատի՛ր անդրէն 'ի փորձ նորանոր հարուածոց . զի իմասցիս՝ թէ քանի՛ տոկուն է ամ՟՝ այն , որ կարծի քեզ իսպառ տկարացեալ ։ Դատաւորն ասէ . քերեցէ՛ք զդա միսանգամ՝ մինչեւ ցոսկերս . եւ դահիճքն արարին ը՟ բանի նորա . մինչեւ վաստակեալ լուծան . իսկ սբն՟ կայր իբրեւ զվէմ հաստատուն ։

Յայնժամ հրամայեաց բռնաւորն իջուցանել զնա 'ի փայտէ քերանաց , եւ տարածել 'ի վերայ հրացեալ խեցեղինաց . մինչեւ թափանցել ցփորոտիս նորա ։ Եւ մինչդեռ յայն անհնարին տանջանան էր , յաղօթս եկաց երանելին , եւ ասէ . տր՟ յս՟ քս՟ յո՛յսդ անյոյս եղելոց , լո՛ւր ձայնի աղօթից ծառայի քո , եւ մեղմացո՛ զցաւս զայս . զի վս՟ անուան քո սբյ՟ կրեմ զայսոսիկ ։ Զայս իբրեւ լուաց , զգեցաւ նոր զօրութի՟ն , ոպ՟ թէ ոչինչ զգալ ցաւոցն ։ Սմին իրի դարձեալ փոխել հրամայէր դատաւորն զտանջանս , եւ զառաջին վէրսն հերկագործել քերանօք . իսկ թէոդիտոն ոչինչ ցաւ յանձին ցուցանէր . եւ դահիճքն համարէին իբրեւ ը՟ խաղս չարչարել զնա . զի չէր մնացեալ տեղի ողջ 'ի մարմնի առ 'ի պէտս քերանաց . միայն լեզուն կայր անվնասելի , յորմէ ակն ունէին առնուլ ինչ բան ստրջանաց . այլ այն էր վկային քի՟ գործի հաստատելոյ զճշմարտութի՟ն , եւ օրհնելոյ զտր՟ ած՟ իւր ։

Յայնժամ վճիռ եհատ դատաւորն օրինակ զայս .

զայս․ Օ Թէոդիտոն զվերակացուն գալիլեացւոց, և զա՟ծոց թշնամին, զընդդիմակացն հրամանաց անյաղթ թագաւորաց, և զիմոյ անձին անարգուն, հրամայէ իշխանութ՟իս իմ՝ սրամահ ընդունել պատուհաս․ և յետ գլխատման հրովայրել զմարմինն, զի մի՛ անկցի ՚ի ձեռս քրիստոնէից՝ տալ նմա թաղումն պատուո՛վ ։ Եւ ընդ լինել վճռոյն կուտեցաւ քաղաքն ա՟մ տեսանել զկատարած նորա ։ Իսկ երանելոյն հասեալ ուրախութ՟ ՚ի կատարման տեղին՝ աղօթս մատուցանէր այսպէս․ Տ՟ր յ՟ս ք՟ս արարիչ երկնի և երկրի, որ ոչ թողուս զյուսացեալս ՚ի քեզ, գոհանամ զքէն, զի արժանի արարեր զիս լինել քաղաքացի երկնաւոր քաղաքիդ և կցորդ արքայութե՟ն քում․ գոհանամ զքէն, զի ետուր ինձ յաղթօղ լինել վիշապին, և ջաղխել զգլուխ նորա․ տուր հանգիստ անդորրութե՟ ծառայից քոց, յիս գլխաւորեալ զհալածանս և զհարստահարութիւն թշնամեաց․ տուր խաղաղութի՟ եկեղեցւոյ քում, կորզելով զնա ՚ի բռնութ՟է բանսարկու՛ին ։

Եւ իբրև ասաց զամէնն, հայեցեալ ետես զեղբարսն՝ զի լային, և ասէ ցն՟ս․ մի՛ լայք եղբարք, այլ փառաւո՛ր արարէք զՏ՟ր մեր յ՟ս ք՟ս, որ ետ ինձ կատարել զընթացս իմ, և կոխման առնել զթշնամին․ զի յայսմ հետէ համարձակ եղէց բարիս մաղթել յո՟յ յերկինս վ՟ս ձեր ։ Եւ զոյգ ը՟ բանիցն ընկալաւ զուարթութ՟ զհարուա՛ծ սրոյ, և կատարեցաւ ՚ի ք՟ս երանելին Թէոդիտոն ։

Յայնժամ խարոյկ մեծ պատրաստեալ դահճաց՝ եդին 'ի վերայ փայտից դիզելոց զմարմին ս՟բ վկային· այլ խնամօքն ա՟յ նոյնժամայն երևեցաւ 'ի վ՟ն ն՟ր լոյս ճառագայթել· յորմէ զարհուրեալ դահճաց՝ չիշխէին մերձենալ և հուր մատուցանել 'ի փայտսն· և այնպէս անարատ մնաց պատուական մարմին ս՟բյն։ Ազդ եղեն սքանչելիքն յունկն բռնաւորին· հրաման տայր զօրականաց պահել շուրջանակի զտեղին, ուր էր մարմինն և գլուխն Թէոդիտոնի։

Եւ 'ի կալ մնալ պահապանացս այսոցիկ անդէն առանձինն, եկն եհաս փրոնտոն երէց 'ի մալոս գեղջէ՝ ըստ պայմանադրութեան ս՟բյն, բերեալ ընդ իւր զմատանի նորա 'ի գրաւ նշխարաց· ունէր ը՟ իւր և գինի հին բարձեալ 'ի վերայ գրաստու յայգւոյ անտի իւրմէ։ Եւ եղև 'ի մերձենալ նորա 'ի քաղաքն ը՟ երեկս, նստաւ գրաստն մօտ 'ի տեղի գլխատման ս՟բյն· ընթացան պահապանքն առ փրոնտոն, և ասեն· յո՞ դիմեալ գաս 'ի տարաժամու ա՛յր դու օտար· եկ մնա՛ առ մեզ զայս գիշեր· և գտցի աստ կերակուր քեզ և իշոյդ· զի լաւ է քեզ առ մեզ օթագայիլ՝ քան նեղիլ յանմարդի պանդոկապանաց։ Զայս ասացին, զի ոչ գիտէին՝ թէ քահանայ է նա և կտ՟ր քրիստոնեայ· և ինքն իսկ փրոնտոն ո՛չ գիտէր՝ թէ առ ի՞նչ կան 'ի տեղւոջ անդ պահապանքն· բայց լուեալ խրատու ն՟ց՝ եմուտ 'ի հիւղ նոցա։ Եւ իբրև եդին առաջի նորա հաց և գինի, առեալ ն՟ր անօթ մի դատարկ՝ ելից յիւրմէ գինւոյն, և մատոյց նոցա. ասէ. Ճաշակեցէք և դուք 'ի հնգամեայ գինւոյ այտի, և տեսէք՝ եթէ բարւո՞ք թուի յաչս ձեր. և նոցա զմայլեալ 'ի համոյ և 'ի հոտոյ հին և ազնիւ գինւոյն՝ խնդրէին այլ ևս անյագաբար, և նա տայր ն̄ց զուարթառատ միտօք ։

Յայնժամ երիտասարդ մի 'ի զօրականէն Մետրոդորոս անուն՝ ասէ ծիծաղելով. ինձ պիտո՛յ է ըմպել առատութ̄բ 'ի գինւոյ աստի, զի մոռացայց զցաւս հարուածոցն՝ զոր ընկալայ 'ի պատճառս կանանցն 'ի լիճ արկելոց և գողացելոց ։ Փրոնտոն ասէ. չգիտեմ, զորո՞ց կանանց իցեն բանքդ ։ Իսկ այլ ոմն 'ի պահապանաց ասէ ցՄետրոդորոս. զգո՛յշ լեր, զի մի մեծ ևս չարիս անցուսցէ ը̄ քեզ բաժակդ այդ՝ 'ի պահուս, յորում հրաման ընկալար արթնութ̄բ պահել զայրն պղնձի, որ գողացաւ 'ի լճէ անտի զմարմինս կանանցն ։ Ասէ Փրոնտոն. ցաւ է ինձ, զի ոչ բերի ը̄ իս թարգման զոք ճարտար 'ի պէտս իմաստից թաքուն բանից ձերոց. ո՞յք իցեն աղաչեմ կանայքն հանեալք 'ի լճէ, և ո՞ այրն պղնձի՝ յորոյ կարգեցայք 'ի պահպանութ̄ի ։ Առ այս ետ պխ̄նի Գղաւկենտիոս զօրականն, և ասէ. եթէ՛ պղնձի և եթէ՛ երկաթի կոչեսցուք զայրն, տակաւին չասեմք ինչ ը̄ ուժոյ ն̄ր. քանզի պղինձ և երկաթ տեղի տան հրոյ և կռանոյ. ո̄չ և անդամանդն գլխովին ներքոյ անկանի հնարից ձեռին ճարտարաց. իսկ զայրն՝ զորմէ մեր բանքս են, ոչ հուր և ոչ երկաթ կարացին նուաճել երբեք ։ Եթէ մարդ կոչեցից զնա, ոչ ոք 'ի մարդկանէ այդպ̄ս զօրաւոր գտաւ և տևող 'ի տանջանս ․ քաղաքակից մեր էր, և մարդ ծանուցե̄լ 'ի մէջ մարդկան քաղաքիս ․ այլ 'ի վեր քան զմարդկան բնութ̄իս երևեցաւ ։ Անուն նր̄ Թէոդիտոն, և կրօնիւք քրիստոնեայ ․ որ և յետ գողանալոյ զմարմինս եօթանեցունց կանանց քրիստոնէից 'ի խորոց լճին՝ ինքնակամ մատնեաց զանձն յատեան, զի մի այլք տուգանեսցին ։ Արդ թէպէտև բազում խոստմունս և սպառնալիս առաջի եդ նորա դատաւորն, թէպէտև խստագոյն տանջանօք փորձեաց, ոչ կարաց կակղել զսառացեալ կարծրութ̄ի մտաց առնն, որ ծիծաղէր 'ի չարչարանսն ․ մինչև ել հրաման հատանելոյ զգլուխ նր̄, և զմարմինն հրով այրելոյ ․ բայց չեղև մեզ հնար հուր մատուցանել յանծախելի մարմին նր̄ ․ զի առ խարուկաւն նորանշան տեսիլք ցուցան, զոր աչօք մերովք տեսաք, այլ անկարանամք զիսկն պատմել ․ և զի մի առցեն քրիստոնեայք զմարմին նր̄՝ զոր տեսանեսդ մօտ 'ի հիւղս ծածկեալ 'ի ներքոյ խուռնոյ և խոտոյ, կամք 'ի պահպանութ̄ի ։

Զայս ամ̄ իբրև լուաւ Փրոնտոն երէց, գոհացաւ 'ի սրտի զա̄յ, և խնդրէր 'ի նմանէ զյաջողութ̄ի բառնալոյ անտի զմարմին ս̄բյ վկային ։ Այնուհետև առաւել զուարթութբ̄ 'ի զրոյցս անկեալ ը̄ պահապանացն՝ եբեր նց̄ այլ ևս գինի շատ, և արբոյց նց̄ սիրով ․

մին.

մինչև արբենալ ամենեցուն զգիշերն զայն , և խոր 'ի քուն լինել : Յայնժամ յարուցեալ արթուն երիցուն՝ եբարձ զպատուական մարմին վկային ք՟նի 'ի վ՟ր գրաստու իւրոյ , և ասէ • ով երանելիդ թէոդիտոն , կատարեա՛ զխոստումն քո՝ որ առ իս , և յաջողեա՛ զճանապարհս իմ • անցոյց և զմատանի սբ՟յն 'ի մատն ն՟ր • և յետ յարդարելոյ զխոստս տեղւոյն՝ ո՟չ և զիարդ արկեալ կային 'ի վերայ մարմնոյ սբ՟յն , ը՟ն այգանալ աւուրն թողացոյց զգրաստն երթալ յառաջ • և ինքն ո՟չ թէ կորուսեալ իցէ զէշն՝ սկսաւ ընթանալ իբրև 'ի խնդիր ն՟ր • վ՟ոյ և պահապանքն՝ որ այն ինչ զարթնուին 'ի թմբրու՟է քնոյ , ցաւակից լինէին ը՟ն կորուստ ն՟ր • մինչև հեռացաւ 'ի տեսու՟է աչաց ն՟ց : Եւ այնպէս խնամօք ն՟ն յառաջեալ փրոնտոնի անկասկած ը՟ն անկոխ տեղիս՝ եհաս 'ի գիւղ իւր մալոս • և անդ հանդոյց զպատուական գանձն • այն է վկայարանն ս՟բ և փառաւոր վկային թէոդիտոնի • ուր ընթանային հաւատացեալքն 'ի պատիւ պատուական նշխարաց նորա :

ՕՐՀ

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ։

(1) Նեղոս ականատես՝ նախկին և հաւատարիմ հեղինակ վկայաբանութեանս 'ի յոյն բարբառ, էր 'ի նմին քաղաքէ անկիւրիոյ գաղատացւոց՝ խոստովանող վկայ և բանակից սր՟յն թէոդիտոսի. վ՟յ և զայսօրինակ կնքէ զճառ պատմութեանս. * Զայս ամ՟ ես նուաստ Նե-
,, ղոս աւանդեցի ամ՟ զգուշութ՟բ ձեզ ա՟ծասէր եղ-
,, բարցդ. որ և բանակից իսկ էի նմին, և իրազեկ
,, ամ՟ի՝ զոր 'ի գիտութի ձեզ ածի, ամ՟ի՛ փոյթ կալեալ
,, ճշմարտութե. զի և դուք ամ՟ հաւատով և աներկբայ
,, ստուգութ՟բ լուեալ՝ ընկալջիք զմասն ը՟ ն՟ր և փա-
,, ռաւոր վկային թէոդոտոսի, և ը՟ ամ՟ սր՟ս՝ որ միան-
,, գամ ճգնեցան վ՟ն բարեպաշտութե 'ի ք՟ն յ՟ն 'ի տէր
,, մեր. որում փառք և իշխանութի հանդերձ հարբն և
,, ս՟բ հոգւովն յաւիտեանս. ամէն ||: Սա մարթի լինել
և Նեղոս աբբայն. տես 'ի (2):

Բաբեպրոք բոլլանդեան տպագրէ զսկզբնագիրն յունական հանդերձ լատին թարգմանութ՟բ իւրով, առեալ զօրինակն 'ի վատիկանեան գրատանէն հռովմայ՝ միջնորդութ՟բ գրապետին լեոնի ալլատիոսի քիացւոյ, որ էր այր երևելի գրով. և էր ն՟ր գրեալ և յաղագս քննուե 'ի վ՟ր հին վկայաբանութեց յունաց. ուր յերիս կարգս տրոհեալ զհեղինակութի նոցա, 'ի հին և 'ի յայտնի մատենագիրս, 'ի հինս անծանօթս, և 'ի վերջին հաւաքումն մետափրաստեան, յառաջնում կարգի անդ դասէ և զվկայաբանուն սր՟յն թէոդիտոսի զգրեալն 'ի նեղոսէ գործակցէ ն՟ր: Որում ձայնակցեալ և բաբեպրոքայ՝ ճանաչէ զայս վկայաբանութի, (զոր մեք 'ի կարև երկարութե 'ի չափաւորն վերածեցաք թարգմանողօրէն,) հաստահիմն քան զամ՟ յիշատակարանս հալածանաց ժամանակին. գովէ և զոճն անպաճուճակ. զի թէպէտև ճոխաբան է ասէ, այլ միանգամայն և ծանր և զգուշաւոր: Քաղուած նոյն հաւատարիմ գրութե է և որ ինչ աւանդի 'ի Հ. և Լ. վ՟յ ոչ մնայ մեզ դեգերիլ յայլ խուզարկութի ծանօթական քննութեց:

Միայն ծանիր, զի ոչ գիտեմ որպիսի վրիպակաւ 'ի Յ.

բս.

րս • Թիւ կուսանաց դնի ութ, շփոթելով զանուն սբյն Թէոդիտոնի 'ի գումար նոցա, և գրելով Թէոդոտէ փոխանակ Թէոդոտոսի ։ Դարձեալ անուն սբյն՝ որ յունարէն է Թէոդոտոս (Թարգմանեալ ածատուր՝ որպէս Թէոդոսն), 'ի Հ. է զի Թէոդորիտոն կոչի (որ է ածապարգև), է զի Թէոդոտոն (որ է հայցականն՝ անուանս Թէոդոտոս) • և շատ ևս այն է՝ զի Թէոդիտոն գրի • և զի այս է սովորականն 'ի տօնացոյցս, վյ և մեք զայն 'ի կիր արկաք ։

(2) Ժամանակ վկայից ոչ դնի որոշակի 'ի բուն վկայաբանութե, որ̄ և ոչ 'ի յայսմաւուրս ուրեք • այլ քանզի Նեղոս բազմաւորակի խօսի՝ կայսերս կամ Թագաւորս անուանելով զյարուցիչս հալածանաց ժամանակի իւրոյ, հաւանական համարի բաբեպրոք՝ Թէ բանն իցէ զԴիոկղետիանոսէ և զՄաքսիմիանոսէ զերևելի հալածչաց • և ը նմին մակաբերութբ դնէ զկատարումն սբց յամի տն 304 ։ Իսկ պատմական անտոն վէլսն մըսըրլեան՝ որ առ մեօք Թարգմանաբար յօրինեաց 'ի բարբառ տաճկաց զայս պատմութի, և ետ տպագրել 'ի կոստանդինուպօլիս (ձեռամբ միւսիւ վլկէրի), ոչ միայն պարզաբէս ենԹադրէ զայն աւուրս, այլև ը նմին ճոխագոյն ստորագրէ զպատմութի կայսերաց այնր ժամանակի՝ 'ի սկիզբն և յաւարտ պատմութն, հանդերձ տարեգրութբ յընԹացս • գործ սորա է ը մասին համառօտութե, և ը մասին ը լայնութն բանիցն Նեղոսի • զորոյ և զանունն վրիպակաւ (Թերևս տպագրութե) Նիկողոս կոչէ ։ Այլ զի հաստատուն է անուն Նեղոսի, և ժամանակն միայն անյայտ, եԹէ պատահի ոք լինել համարեսցի զո̄բ հայրն Նեղոս՝ զերևելին 'ի ճգնաւորս՝ յաւուրս յուլիանոսի, նա ինքն լինի գրիչ վկայաբանութես • զի և նա էր գաղատացի, և ունի գրեալ նաև զվարս ոմանց ոմանց 'ի սբց • և պատմութի Թէոդոտեանց քաջ 'ի դէպ է աւուրց յուլիանոսի ։

(3) 'ի Հ. ասի, Թէ Թէոդիտոն ինքնին կոչեաց ըզքահանայն փրոնտոն, և Թաղեցին պատուով զնահատակն քհի զվաղենտինոս կամ զվաղէս • որ առաւել դիպօղ երևէր ։ Բայց յայժմու յունական օրինակն Նեղոսի ենԹադրի արդէն Թաղեալ մարմին նահատակին յայրի անդ ։

(4) ԵԹէ գիտէաք զժամանակ կատարման Թէոդիտոնի՝ որ̄ Թէ յետոյ լինել ժամանակաւ քան զմեծանուն հայրապետն անկիւրիոյ զո̄բն կղեմէս, մարԹ էր ասել՝ Թէ եկե֊

եկեղեցի նահատակաց իցէ տաճարն, ուր նա թաղեցաւ, և կայ գերեզմանն նորա մինչև ցայսօր յեկեղեցւոջ՝ որ կոչի ս̅բ̅ խաչ. և գուցէ յառաջն կոչիւր հայրապետաց կամ նահապետաց: Այլ յոյնս՝ պատրիարքս ասի անխտիր զհայրապետաց և զնահապետաց. վ̅ն ՚ի կարծիս լինի Պապեբրոք՝ թէ գուցէ էր եկեղեցի յանուն աբրահամու, իսահակայ և յակոբայ:

Որպէս և վկայարան կմ̅ եկեղեցի բաղդէաւն ի̅ հարանց, է համաձայն. որ կարծի լինել տաճար վկայից վաղագոյն կատարելոց յանկիւրիա. յորոց մի ճանաչի և ս̅բ̅ն սոսանդրոս. զորոյ ոչ գիտելով զժամանակ՝ հաճեցաւ Պապեբրոք դասել ՚ի թիւ համարոյ է̅ ս̅բ̅յն Թէոդոտոնի և եօթն կուսանաց:

Այլ Պապեբրոք ասէ աստանօր. * Յոյժ նեղ է ժա-
„ մանակ հինգ աւուրց. վ̅ն կարծեմ, թէ գէթ պարտ
„ է ընթեռնուլ հնգետասան ||. որ է անպատճառ ուղղագրուն. զի սովին կամի գտանել պատճառս, թէ ը̅ն̅էր եօթն կուսանք յիշատակին առ յոյնս ՚ի մայիսի. 18. և Թէոդոտոն ՚ի յունիսի. 7: իցէ՛ թէ գտանէր և զայն, եթէ զիարդ դնի ՚ի Հ. կատարումն Թէոդոտոնի լինել ՚ի մայիսի. 22:

ՎԱՐՔ ԵՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Սրբոյ երանելւոյ ս̃բ հօրն մերոյ Գրիգորի
Հայաստանեայց Լուսաւորչի . և Գիւտ նշխարաց նորա ։

Հ . սեպտ . 30 . և նոյեմբ . 18 ։ Հ = Յ . սեպտ . 30 ։ Յ . Լ . սեպտ . 30 ։ Ճառընտիր ։ Ագաթանգեղոս ։ Զենոբ ։ Խորենացի . և այլ պատմագիրք մեր ։ Մետափրաստես ։ Անոնիմոս ։ Ներբողուս . յոսկեբերանէ , 'ի սարկաւագ վարդապետէ , 'ի վարդանայ , յերզնկացւոյն . Ծ̃ն ։ Բոլլանդեանն յոհն . ստիլտինգ . 'ի Ը̅ հատ . սեպտ . 30 . եր . 295 = 413 ։ (1)

Լ ՈՅՍ ԱՐՓԻԱՀՐԱՇ Լուսաւորիչ տանն Թորգոմայ, հայր հաւատոյ Հայաստանեայց, ծնօղ հոգևոր , հովիւ հսկօղ և վ̃դպ ճշմարտութե̃ , առաքելանման ս̃բ հայրապետն մեր , մեծ խոստովանօղն ք̃սի' և բազմաչարչար կենդանի նահատակն , և կատարեալ ճգնաւորն տ̃ր Գրիգորիոս , էր պարթևազգեան արշակունի' տոհմակից թագաւորութե̃ Հայոց , յազգէ պահլաւ 'ի ցեղէ սուրէնեան , որդի պարթևին անակայ և ոգոհեայ , յղացեալ 'ի չու ծնողացն հատուածի պատճառաւ յերկրէն պարսից 'ի Հայաստան աշխարհ՝ յարտազ գաւառի մօտ 'ի տեղի հանգստեան ո̃ր առաքելոյն Թադէոսի, և ծնեալ յարքունիս Հայոց 'ի վաղարշապատ քաղաքի՝

յամի տն̃ · 257 ։

Յորում ժամանակի 'ի հարկանել անակայ և եղբօր նր̃ դաւով զխոսրով արքայ Հայոց՝ ը̃ պայմանին եղելոյ ը̃ արտաշրի սասանեան բարձողի զթագաւորութի̃ արտաւանայ արշակունւոյ, 'ի սուր սուսերի բնաջինջ եղև և տուն մեղապարտին անակայ 'ի վրէժ արեանն խոսրովու ։ Միայն առաջին խնամօքն տյ̃ ապրեցան երկոքին տղայք որդիք պարթևին անակայ 'ի ձեռն մանկաբարձաց · յորոց զմին սուրէն անուն փախուցին 'ի պարսս առ հօրաքոյր իւր · և զմիւսն՝ որ լուսաւորիչ հանդերձեալ էր մեզ լինել, տարաւ 'ի յունաց աշխարհ 'ի կեսարիա կապադովկացւոց՝ որ և մաժակ գամրաց՝ ստնտու նորա սոփի կին հաւատացեալ բուրդարայ առն պարսկի, և քոյր եւթաղեայ կեսարացւոյ · զոր և ետուն մկրտել 'ի կեսարիա, և անուանեցին գրիգոր, որ̃ ասի՝ ը̃ յառաջագոյն ձայնելոյ զնա հրեշտակին յոստոց ծառոյ զճանապարհայն 'ի կերպարանս աղաւնւոյ՝ 'ի հելլէն բարբառ զրիգորիոս, այն է գրիգորիս · որ թարգմանի արթուն կմ̃ հսկող ։

Ընդ 'ի կեսարիա սնեալ գրիգորի ը̃ ձեռամբ դայեկին՝ որ էր երկիւղած քն̃ի, և ը̃ աճել հասակին զարգացեալ յերկիւղն տյ̃ և 'ի վարս ա̃ծպաշտութե̃՝ ուսաւ և զքն̃ական դպրութե̃ հանդամանս , և ընտանի եղև գրոց ո҃յ , ասէ ագաթանգեղոս ։ Այլ զայս ո҃մ գործէ յառաջատեսութիւն ո҃յ , ո҃ք կամք են ասել իմոյ բանի (ասէ խորենացին) , յաղագս որ 'ի մեզ փրկութե҃ Ճանապարհ . ապա թէ ոչ՝ որո՞յ յուսոյ ակն ունելով՝ զմանուկն պաճաւիկ 'ի հռովմայեցւոց իշխանութիւն սնուցանէին , և ք҃նի ընծայէին հաւատոց ։ Բայց յարբունս հասեալ մանկանն հասակի՝ փեսայացուցանէ հաւատացել ո҃ւմն այր , որում անուն էր դաւիթ , 'ի դուստր իւր մարիամ ։ Որ յետ երից ամաց՝ երկուց որդւոց լինելոյ , 'ի կամաց երկոցունց՝ մեկնեալ 'ի միմեանց զատչէին ։ Մարիամ հանդերձ կրսերով մանկամբն , որում անուն եդաւ արիստակէս , 'ի վանս կանանց երթեալ կրօնաւորէր . որ 'ի յարբունս հասեալ մանկանն՝ զհետ ընթանայ միաւորի ուրումն՝ որում անուն էր նիկոմաքոս , և առաքի յանապատ . իսկ անդրանիկն վրթանէս կոչեցեալ՝ առ դայեկաց էր մնացեալ . որ ապա Ծավարել ամուսնացաւ ։ Բայց հայրն ն҃ց գրիգոր՝ տեղեկացեալ հայրենի գործոց , որ եղեալ էին , ել գնաց առ տրդատ որդի խոսրովու հայոց արքայի՝ սպանելոյ 'ի հօրէն իւրմէ անակայ , զհայրենեացն հատուցանել զպարտս ը҃ հեշտ պաշտաման . և թաքուցանէր զանձն , և զայն ինչ 'ի վեր ոչ հանէր՝ թէ ո՞յր որդի է կ҃մ ուստի՞ . այլ կամաւոր ծառայութ҃ը տուեալ զանձն 'ի հնազանդութ҃ի՝ պաշտէր առաջի տրդատայ . զի թերևս փոխան ը҃ մարմնաւոր վնասուց հօր իւրոյ՝ հանձնեցի տ՟ր 'ի ձեռն նորա տանել հոգևոր օգուտ և այցելութ՟ի հայոց աշ՟խին ընկղմելոյ 'ի խոր խաւար կռապաշտութե։ Իսկ սուրբն եղբայր գրիգորի՝ ըստ գրելոյ զենոբայ, եղեալ այր զօրաւոր 'ի դրան պարսից՝ գնաց յերկիրն Ճահէն, և թագաւորեաց 'ի վ՟ր Ճենաց և դարբանդայ մինչև ցմահ իւր։ Դասակակից էր սոցա և հօրաքեռորդի սոցին, այն է որդի խորովուհեայ քեռն անակայ՝ յակոբ զգօնն կոչեցեալ․ որ 'ի ձեռս քրիստոնէից սնեալ հանդոյն գրիգորի՝ եղև զկնի եպ՟ս մծբնայ 'ի միջագետս։ Արդ զկնի կալոյ գրիգորի զժամանակ ինչ 'ի ծառայութ՟ե տրդատայ յաշ՟խին յունաց և հռովմայեցւոց, գայ ը՟ նմա 'ի հայս, յորժամ դարձաւ տրդատ արքայ յարևելս պսակեալ փառօք 'ի դիոկղետիանոսէ․ և եկն եհաս յառաջին ամի արքայութ՟ե իւրոյ, այն է յամի տ՟ն․ 286․ յեկեղեաց գաւառ 'ի գեօղն երիզայ, զի անդ 'ի մեծի մեհենին զոհս մատուսցէ անահիտայ՝ որ և արտեմիս չ՟ածուհի, դուստր կարդացեալ արամազդայ կմ՟ դիոսի հօրն չ՟ածոց, և պահապան կարծեցեալ աշ՟խի հայոց մեծաց։ Իսկ իբրև կատարեցին զգործն անարժանութ՟ե, իջին բանակեցան առ ափն գետոյն՝ որ գայլն կոչեն։ Իբրև եկն եմուտ տրդատէս 'ի խորան անդր և յընթրիս բազմեցաւ, և իբրև ընդ գինիս մտին, հրաման ետ թագաւորն գրիգորի՝ զի պսակս և թաւ ոստս ծառոց նուէրս տարցի բագնին անահտական պատկերին։ Այլ նա

ոչ

ո՛չ առնոյր յանձն պաշտօնատար լինել դիցն երկրպագութ՟ե, զի ես քրիստոնեայ եմ ասէ, և ծառայ ա՟յ ճշմարտի ։ Յայնժամ խօսել սկսաւ թագաւորն ը՟ Գրիգորի, և ասէ․ այր մի օտարական և անծ՟իկ եկիր յարեցար 'ի մեզ․ և զիա՞րդ իշխես պաշտել զա՟ծն զայն՝ զոր ես ոչ պաշտեմ․ և առ այն որ պահել հրամայեաց ։ Եւ 'ի վաղիւն հրաման ետ, և ածին զԳրիգորիոս առաջի թագաւորին ։

Ասէ արքայ․ այսչափ ամք են, զի տեսի ըզքեզ, և յո՟մ զօրութե՟ք քումք ծառայեցեր ինձ միամտութ՟բ․ և ես գոհ էի զվաստակոց քոց, որ ունէի 'ի մտի կեցուցանել զքեզ՝ հանելով 'ի մեծ պատիւ աւագու՟ե․ ընդէ՞ր ոչ առնես զկամս իմ ։ Ետ պ՟նի Գրիգորիոս, և ասէ․ հրամայեալ է յա՟յ, զի ծառայք հնազանդ լիցին մարմնաւոր տ՟րանց՝ ո՟պ և օրէն է․ ը՟ որում և դու իսկ վկայես ինձ, ո՛րպէս ծառայեցի քեզ յո՟մ զօրութե՟ք իմք․ այլ զա՟յ պատիւն և զպաշտօնն ո՛չ ումեք վայել է տալ․ զի նա միայն է արարիչ երկնի և երկրի, և հրեշտակաց՝ որ փառաբանիչք են մեծութ՟ե ն՟ր, և մարդկան՝ որ 'ի նմանէ են ստեղծեալ․ որոց պա՛րտ է պաշտել զնա և առնել զկամս ն՟ր ։ Եւ 'ի սպառնալ նմա արքային բանտ և կապանս և մահ, և 'ի մեծացուցանել զդիս իւր՝ ասէ Գրիգոր․ Որ սպառնաս ինձ մահու, ահա խառնես զիս 'ի գունդս ք՟ի, ուր են ա՟մ կոչեցեալքն՝ հարքն և արդարքն, մարգարէքն և առաքեալքն, մարտիրոսքն և ա՟մ ընտրեալքն․ երանի՛ է ինձ, զի առից յանձն զօրինակ կապանաց Տեառն իմոյ, և ըստ նմին ուրախ եղէց և ցնծացայց յուրախութեան նորա ։

Այլ որ ասես, թէ մահուամբ զայս քո հատանեմ 'ի կենաց, ոչ այդպէս է. զի աստուածասիրաց յոյսն զօրացեալ է. իսկ որ միանգամ են որպէս զքեզդ՝ որ պաշտէք զկուռս համրս և անշունչս՝ ձեռագործս մարդկան, արդարև իսկ յուսահատէք 'ի ճշմարիտ կենաց անտի Աստուծոյ. զի փոխանակ Աստուծոյ՝ որ 'ի բարիս նորա վայելէք, պաշտէք զքարեղէնս և զարծաթեղէնս, զոր Աստուծոյ կարգեալ է 'ի սպաս և 'ի պէտս և 'ի փառաւորութիւն մարդկան. իսկ ինձ լիցի ամենայն հնազանդութեամբ և ամենայն իմաստութեամբ և երկիւղիւ պաշտել զԱստուած արարիչ և զորդին հաստիչ և զհոգին կազմիչ ամենայն արարածոց. Աստուած կենդանի՝ որ կարող է կենդանութիւն տալ մեզ, թէպէտև մեռանիմք. զի և որդին Աստուծոյ մեռաւ և եկեաց, և մեզ եցոյց օրինակ կենդանութեան յարութեամբ իւրով. զի որ մեռանիմքս վասն նորա, լինելոց եմք կենդանի. և անպակաս ուրախութիւնք անդ լինին, յորժամ զիւր սիրեցեալսն և զկոչեցեալսն և զհրաւիրեալսն և զպատուիրանապահսն անմահացուցանէ յիւր աստուածութեան. որպէս և զմեղաւորսն անմահացուսցէ 'ի տանջանսն յաւիտենից ։ Արդ մեր յոյս այսմ ակնկալեալ սպասէ. և ձեր յուսահատութիւն այն է, զի ոչ ճանաչէք զարարիչն ձեր. որ պահանջէ 'ի ձէնջ համար սատակապահանջ վասն այդորիկ, զի ոչ եղէք 'ի խնդիր Տեառն արարչին ձերոյ, և ոչ ծանեայք զնա.

զնա . արդարև իբրև զձիս եղէք կամ իբրև զջորիս , զի ոչ գոյ 'ի նմ՟ իմաստութի՟ . և քան զեզն և զէշ պակասագոյն գտայք , զի ոչ ծանեայք զձեր հաստիչն , որպէս ն՟ք ճանաչեն զստացիչ իւրեանց և զմսուր տ՟ն իւրեանց : Խօսել սկսաւ Թ՟գւորն և ասէ . քանի՞ցս անգամ տուեալ է քեզ խրատ և պատուէր , զի մի՛ երկրպագեսցես զհաստուածս բանից առասպելեայ , զոր յօդեալ և ուսեալ ես . զոր ո՛չ վայել է քեզ խօսել : Ես խնայեցի 'ի քեզ իբրև 'ի վաստակաւոր , զի եկեսցես 'ի կարգ ուղղութե՟ պաշտել զդիսն . զորոց դու առէ՟ զն՟ց պատիւն՝ թշնամանես և անշշունչս և անմռունչս կոչես . և 'ի մեզ ես ձգեցեր թշնամանս , մինչև իշխեցեր և մեզ ասել անասունս : Արդ ես արկից զքեզ 'ի տանջանս , և արկից զանդանաւանդ 'ի կզակս քո որ՟պս գրաստու . զի գիտասցես՝ եթէ 'ի սին բանից քոց , զոր յաճախեցեր ասել առաջի իմ, եղեն արդիւնքն . ուր ես մեծարանս եդի քեզ , և դու ետուր ինձ պ՟նի իբրև ընկերի : Յայնժամ հրաման ետ արքայ տրդատ՝ ձեռս յետս կապել զգրիգոր , և արկանել գայլ'ի բերանն ն՟ր . և ետ կապել շառաշիղս աղի 'ի վ՟ր ողին ն՟ր , և տալ գելոցս կրծից ն՟ր . և արկանել առասանս 'ի կապանս կրծիցն գերանայցն , կապել և ամբառնալ 'ի բարձրաւանդակ տանիս ապարանից որմոյն մեքենայիւք . և կայր պրկեալ կապեալ այնպէս զաւուրս եօթն : Եւ յետ եօթնեկին ետ լուծանել զնա 'ի չարաչար և 'ի դառն տանջանացն .

նացն. և ածին կացուցին առաջի նր՟: Սկսաւ հարցանել ցնա, թէ զիա՞րդ կարացեր ժուժալ տոկալ մնալ մինչև ցայսօր. և կիմաւե՞ր զչափ, թէ արդարև իբրև զեշ և զջորի այնպէս սանձեալ բեռինս կրեցեր. վս՟ զի իշխեցեր դու թշնամանել զդիսն՝ թէ անշարժք են, վս՟ այնորիկ հատուցին քեզ զայնպիսի պատուհաս: Իսկ արդ եթէ ոչ առնուս դու յանձն պաշտօն տանել ածոցն՟, այլ ես չարագոյն անցք անցանիցեն ը՟ քեզ:

Գրիգոր ասէ. դիքն՝ զորս կոչես դու ածս՟, առոյգ իսկ են հաստուածք. վս՟ զի հաստեալք են ՚ի մարդկանէ՝ գործք ձեռաց ճարտարի. ոմն փայտեայ, ոմն քարեայ, ոմն պղնձի, ոմն արծաթի, ոմն ոսկի. ո՛չ խօսեալ նց՟ երբեք, և ո՛չ զմտաւ ածեալ՝ ո՛չ վս՟ քո և ո՛չ վս՟ իմ. և դու քեզէն քաջ գիտես, զի ո՛չ երբեք ասացեալ է նց՟ քեզ վս՟ իմոյ տանջելոյս ՚ի քէն, որպս՟ և ոչ իմացան ինչ քարինք անմռունչք զցաւս մարդկան. այլ ածն՟ իմ ճշմարիտ՝ նա պահեաց զիս անվնասելի ՚ի քոց տանջանաց, և պահեսցէ: Եւ զի կապեցեր ինձ աղ, յուսամ ես ՚ի տէրն՟ իմ, զի համեմեսցէ զանհամութիս իմ ստուգութբ՟ աղին ճշմարտութե՟, և տացէ ը՟ ամենահեշտ լծոյս խոնարհութե՟ վերանալ ՚ի բարձունս երկնից. այն որ բարձրացուցանէ զխոնարհս իւրով մարդասիրութբն՟ յանապառ և յանվախճան հատուցմունս: Իսկ որ պաշտեն զկուռս քարեղէնս, իջցեն ը՟ մարգարէին՝ իբրև վէմք ՚ի ջուրս բազումս. որպս՟ և վս՟ որոց պաշտեն զքանդակեալ փայտակերտս՝ գրեղէ , հուր վառեցաւ 'ի մ՟ջ ա՟մ փայտի ազարակի , և այրեսցէ զմեղաւորս . և մի՛ շիջցին : Իսկ որ զարծաթեղէնս և զոսկեղէնս պաշտեն , այսպէս ասէ . արծաթ նց՟ և ոսկի մի՛ կարասցէ փրկել զն՟ս յաւուր բարկութե՟ տ՟ն , որ կարօղ է կախել նց՟ բեւեռնս ծանրութե՟ , ա՟մ դիմադարձաց ասեմ և մեղաւորաց՝ որ իբրև ըզքեզդ իցեն պաշտօնեայք ամբարշտութե՟ :

Դառնացաւ Թագաւորն , և հրամայեաց կախել զնա գլխ'իվայր զմի ոտանէն , և ծխել 'ի ներքոյ նորա աղբ , միանգամայն և գան հարկանել զնա սաստիկ բրօք դալարովք : Եւ տանջեցին զնա տասն այր ը՟ հրամանի Թագաւորին . և նա կայր կախեալ այնպէս այլ ևս աւուրս եօթն . և սկսաւ երանելին խօսել ը՟ ա՟յ 'ի կախաղանին՝ 'ի ձայն գոհութե՟ , յիշելով զեղեցիկ կարգաւ զխնամս ա՟յ առ ազգս մարդկան 'ի սկզբանէ ծ՟ի մինչև 'ի գալուստ միածնին ծննդեամբ 'ի ս՟բ կուսէն , և զփրկագործ տնօրէնութի՟ս նորա յազատութե՟ մեր 'ի խաւարէ 'ի լոյս . ո՟պ այն Թէ քարոզելով 'ի կախաղանէ՝ առ որս անդն կային՝ զճանապարհն ճշմարտութե՟ , և աղաչելով զտ՟ր վ՟ն դարձի նց՟ խանդաղակաթ սիրով . ո՟պ է տեսանել լիով 'ի գիրս ագաթանգեղոսի , որ մի էր 'ի գրողաց անտի զբանս ս՟բյն օր ըստ օրէ . քանզի և ասէ իսկ զկնի .

* Եւ արդ մինչդեռ կախեալ կայր նա այն-
„ պէս , խօսեցաւ զայս ա՟մ . և գրեցին ատե-
„ նակալ դպիրքն նշանագրացն · զի առ ոչինչ

,, համարեալ զկախաղանն , և ոչ զերամեծ
,, գանին գրեաց ինչ զմիշտս • զի ջարդեալ
,, էր զա՟մ մարմինսն յոզորածեծն առնելոյ •
,, և այլ ևս բազում քան զայս խօսեցաւ •••
,, գրեցին և մատուցին զայս առաջի թագաւորին || :

Յետ այսորիկ հրաման ետ արքայ , և իջուցին և ածին զգրիգոր զառաջեաւ • և ասէ ցնա • զի՞նչ ունիս և կա՞մ զի՞նչ եղիր 'ի մտի • լինե՞լ կցորդ կենաց իմոց , ո՞չ աշխատեցար ը՟ իս 'ի մանկութենէ վաստակօք քովք , եթէ մեռանել տարապարտուց 'ի տարապարտ խորհուրդս ընդունայնութեան մտացդ՝ ուր կասդ իսկ : Նա պ՟խնի ետ , և ասէ • փութամ ես ելանել 'ի մարմնոյս , և առնուլ զպսակն և զկեանսն յաւիտենից • արդ տո՛ւր հրաման վ՟ն իմ , ո՛րպէս և կամիս , զի՞նչ մահ և հրամայես վ՟ն իմ : Ետ պ՟խնի արքայ , և ասէ • ո՛չ տամ զայդ պարգև , թէ լիցի քեզ վախճան մահու՝ արագ արագ հանգչել 'ի տանջանացդ , զոր կոչես դու կեանս յաւետենից • այլ կոտել զքեզ ը՟ երկար , և պահանջել 'ի քէն զանարգանս դիցն , և զյամառութ՟իդ քո , որ ոչ կամեցար պաշտել զն՟ս :

Եւ ետ հրաման բերել կոճեղս փայտից , և առնել ըստ ոլոքի խոստաց ոտից նորա , և դնել և պնդել ուժգին առատկօք • մինչև իջանէր արիւն ը՟ ծայրս մատանց ոտից ն՟ր : և ասէ արքայ • գիտիցե՞ս արդեօք , կամ ըզգայցե՞ս ինչ ցաւս : Նա ետ պ՟խնի և ասէ • տո՛ւ ինձ զօրութ՟ի • քանզի խնդրեցի յարարչէն

չին արարածոց , որ է Ճարտարապետ ա̃մե՝
որ երևին , և որ ոչն երևին ։

Յայնժամ հրամայեաց լուծանել զնա ․ և ետ բերել բևեռս երկաթիս , և վարել ընդ ներբանս ոտից նորա ․ և առեալ զձեռանէ ն̃ր աստի անտի՝ ընթացուցանէին զնա յայսկոյս և յայնկոյս ․ և արիւնն հոսէր իջանէր յոտից անտի , և առոգանէր զերկիրն ։ Եւ ասէ ցնա արքայ ․ այդ են աներևոյթ արարածք ա̃յն քո , զոր դու տեսանես ։ Գրիգոր ասէ ․ բարւոք ասացեր , թէ այս են աներևոյթ արարածք ա̃յն իմոյ ․ վ̃ն զի սերմանի տկարութ̃ , և յառնէ զօրութ̃ ․ սերմանի անարգութ̃ , և յառնէ փառօք ․ զի լալով լան՝ որք տանին զսերմանս իւրեանց ․ ք̃ն են վիշտք և չարչարանք՝ որ վ̃ն ա̃ծպաշտութե̃ հասանեն մեզ ․ այլ յորժամ որայն 'ի հունձս եկեալ՝ մատուսցէ զատոքուե̃ն բերրի զպտուղ՝ սերմանողացն , ը̃ նմին բերէ և զցնծալից բերկրու-
թի ուրախութե̃ց ա̃մի ։

Ասէ թագաւորն ․ բախեցէք զաման լալոյն արտասուաց , թող եկեսցէ դմա ուրախութի ․ և հանին նմա կռուփս անհնարին հարկանելով ։ Եւ հարցանէր տրդատ ․ այդ իցէ ուրախութի̃ն ։ Գրիգոր ասէ ․ այո՛ այս է ․ զի թէ ոչ քրտնեսցի մշակն՝ 'ի տապ խորշակի ջերմոցն արեգակնակեզ լինելով , ոչ ըմբռնէ արդիւնս շահեկանս ուրախութե̃ պտղոյն 'ի պէտս ձմերայնոյն հանգստեան ։ Ասէ արքայ ․ դու աստէն իսկ աշխատեա՛ց 'ի մշակութի տանջանացդ ։ Զայս ասացեալ՝ հրամա-
յեաց

յեաց բերել աղ և բորակ և բարկ քացախ · և արկանել զնա յորսայս , և դնել զգլուխ նր̃ 'ի հիւսանց մամուլս , և դնել փող եղեգան 'ի քիթս նր̃ ։

Յետ այսորիկ ետ հրաման , և բերին պարկս օձենիս մեծամեծս , և լցին մոխրով հնոցի · և արարին թուլագոյն , զի մի կարի լի իցէ վն̃ տուրևառի շնչոյն · զի հարկանելով ընդ խելսն՝ վտանգեսցէ զնա · և ագուցին զայն 'ի գլուխ նորա · և կապեցին զբերան պարկին 'ի փողս նր̃ · և եկաց նովիմբ հանդերձ աւուրս վեց ։

Եւ յետ այսորիկ ետ ածել զնա առաջի իւր · սկսաւ խօսել թագաւորն , և ասէ · ուստի՞ գաս , թերևս յարքայութ̃է անտի՞ գայցես՝ զոր ասէիր ։ Ետ պ̃խնի գրիգորիոս , և ասէ · այո՛ իսկ յարքայու̃է անտի գամ , զոր ասէի · վն̃ զի արժանի արար զիս ա̃ծ զայս ա̃մ կրել յանձն իմ վն̃ անուա̃ն իւրոյ , արդարև կայ և մնայ ինձ արքայութի̃ն՝ որ ոչ անցանէ · փոխանակ մոխրոյն՝ անթառամ ծաղիկն , և փոխանակ քացախոյն՝ անապառ ուրախութի̃ն ։ Եւ ևս բարկացեալ թագաւորն ետ պնդել զոտս նր̃ 'ի վերուստ , և կախել զնա գլխ̃'ի վայր · և ետ դնել ձագար 'ի նստոյ տեղին , և արկանել ջուր տկաւ յորովայն նորա · և եկաց այնպէս , մինչև դառնալ ը̃ քիթս և ը̃ բերան նր̃ ։ Ապա ետ հրաման իջուցանել յայնմանէ · սկսաւ հարցանել , և ասէ · առնե՞ս զկամս իմ , թէ ոչ · պաշտե՞ս զդիսն՝ որ են ա̃մ երկրի կեանք և շինութի̃ ։ Ետ պ̃խնի գրիգորիոս, և ասէ. Ես ա՟ծ ա՟յ իմոյ երկիրպագանեմ. զի նա է արարիչ և կեանք և շինութ՟ի. և որդւոյ ն՟ր՝ որ է հաստիչ և համազօր և համագործ. և հոգւոյ նորին՝ որ ելից իմաստութեամբ զա՟մ տիեզերս. այլ զկուռս կռեալս՝ կոփեալս՝ քերեալս և արարեալս՝ ո՛չ կալայ երբէք առ ա՟ծն ճշմարիտ, և մի՛ լիցի այլ ունել, ցորչափ իցէ շունչ 'ի մարմնի իմում:

Ասէ թագաւորն. փոխանակ զի իշխեաց ասել կռեալս՝ դիցն, պահանջեսցի՛ դա ընդայդորիկ. և ետ հրամա՟ն քերել զկողս նորա երկաթի քերչօք. մինչև ոռոգան ա՟մ վայրքն յարենէ նորա: Ապա ասէ ցնա. արասցես զկամս իմ գրի՛գորիոս, որ յայդպիսի տանջանս մատնեցար: Պ՟ինի ետ սբ՟ն. ինձ լիցի պահել զուխտն ա՟ծպաշտութե՟, զոր ուսայ 'ի մանկութէ՟ իմմէ. որ կարողն է փրկել զիս յա՟մ նեղութէ՟, և զքեզ արկանել 'ի տանջանս. որ ո՛չ ճանաչես զնա, և դարձեալ զայլս ևս զարհուրեցուցանել կամիս և քակել 'ի պաշտմանէ սիրոյ նորա: Թագաւորն ասէ. ո՞վ է այն ա՟ծ քո, որ փրկէ զքեզ 'ի ձեռաց իմոց, և կամ դատի՝ ո՞չ ասացեր՝ դատաստանօք իւրովք: Յայնժամ հրամա՟ն ետ բերել տատասկ երկաթի բազում սակառօք, և արկին 'ի գետնի թանձր. և մերկացուցեալ զգրիգոր՝ արկին 'ի վերայ տատասկին մերկ. և քարշեցին և թաղեցին զնա 'ի տատասկն, և շրջ շրջէին զնա անդէն. մինչև առհասարակ ծակոտեցան մարմինք նորա.

մինչ զի ոչ մնաց 'ի նմա տեղի ողջ ։ Եւ 'ի միւսում աւուրն ետ բերել զնա տրդատ առաջի իւր , և ասէ ցնա ․ զարմացեալ եմ կարի՛ քաջ , զիա՞րդ կաս դու կենդանի ․ և ոչինչ գրեցեր դու զցաւսդ , և խօսիս ևս ․ զի արժա՛ն էր՝ թէ վաղուց էիր դու վախճանեալ 'ի տանջանացդ յայդցանէ ։

Ետ պա՟նի Գրիգորիոս , և ասէ ․ ո՛չ է իմ ժուժկալութի՟ տոկալոյս իմով զօրու՟բ , այլ՝ ուժով շնորհի տ՟ն իմոյ , և իմոյ յօժարութե՟ կամացս՝ որ խնդրեցի 'ի նմանէ ․ զի և դու զփորձ առցես զծառայիս ա՟յ , և գիտասցես՝ թէ ոչ ոք կարասցէ մեկնել զյուսացեալս 'ի նա 'ի սիրոյ ն՟ր ․ զի նա տայ ույժ և զօրութի՟ համբերութե՟՝ համբերել նեղութե՟ց և փորձութե՟ ․ զի ամաչեսցեն անօրէնք յունայնութե՟ իւրեանց , և յամբարշտութե՟ և յապստամբութե՟ իւրեանց՝ որ իբրև զքեզդ իցեն ․ և կացցեն ամօթով յաւուրն այցելութե՟ և յանդիմանութե՟ ։

Յետ այսորիկ ետ հրաման արքայ՝ արկանել կապիճս երկաթի 'ի ծունկս ն՟ր , և վարել ուռունս ստոմարս , և բառնալ 'ի կախան , մինչև յօշեսցին ծունկք ն՟ր անդէն ․ և եկաց կախեալ զերիս աւուրս ։ Եւ յաւուրն չորրորդի ետ իջուցանել զնա , և ասէ ցնա ․ տես Գրիգորիոս , զի ոչ փրկեաց զքեզ սնոտի յոյսն քո՝ յոր յուսայիր դու ․ չեհան զքեզ ա՟ծ քո 'ի ձեռաց իմոց ։ Եւ պա՟նի վկայն , և ասէ ․ տեսեր դու , զի քո յոյսքն են սնոտի , և ոչ կարացին հաւանեցուցանել կ՟մ երկեցուցանել

նել զիս սնոտի պաշտամունք քո և ձեռագործք մոլորութեան քո. տե՛ս դու, զի ոչ 'ի տանջանաց քոց երկեայ ինչ ես, այլ զօրութեամբ տեառն իմոյ մարտեայ ընդ թշնամւոյն՝ որ 'ի ծածուկ քև պատերազմի ընդ ճշմարտութեանն. և մատնեցի զմարմինս իմ 'ի կիզումն տանջանաց. զի եթէ վաղ և եթէ անագան՝ սակայն քակտեսցի հնացեալ մարմինն: Այլ եկեսցէ ճարտարապետն որդւոց մարդկան, և զնոյն հնացեալս միւսանգամ նորոգեսցէ. զի զորոց զհոգիսն գտանէ 'ի պարկեշտութեան, 'ի սրբութեան, 'ի քաղցրութեան, 'ի հեզութեան, յաստուածպաշտութեան կացեալ, նորոգէ զարդարս կեցուցանէ՝ զնոյն ոգի նովին մարմնովն: Իսկ զորս գտանէ յանօրէնութեան և յամբարշտութեան, յաստուածատեցութեան, 'ի կռապաշտութեան, թէպէտև բուսանել բուսանիցին մարմինք նոցա առ ժամանակ մի, այլ զնոսին իսկ նովին ոգւով և նովին մարմնով արկանէ 'ի գեհեանն՝ յանշէջ հուրն յաւիտենից. մանաւանդ զայնոսիկ՝ որ իբրև զքեզ իցեն 'ի կռապաշտութեան:

Բարկացաւ թագաւորն, և ասէ. ինձ չէ փոյթ զայնմանէ, եթէ նորոգեսցէ զքեզ Աստուածն քո, եթէ ոչ. այլ զի ասացեր՝ թէ զքեզ յանշէջ հուրն արկանէ, ես զքեզ աստէն իսկ այրեցից չիջանուտ հրով. տեսցուք թէ քո Աստուածն զի՞ արասցէ, կամ զիա՞րդ այրեսցէ: Ապա ետ հրաման երկաթի պուտկօք հալել կապար. և ջերմն մինչդեռ ջուր իցէ՝ հոսել արկանել զմարմնովն նորա, որպէս և ընդ բերանն՝ մինչև 'ի փորոտիսն · և այրեցին զմարմին նորա առ հասարակ · և ո՛չ մեռաւ , այլ կայր մեծ ուժով · և զի՛նչ հարցանէին՝ վաղվաղակի տայր պ՟խնի ։ Զարմացեալ թագաւորին ը՟ ժուժկալութի՟ համբերութե՟ սբ՟յն , և ընդ տոկալ նորա կարի անհնարին , ասէր · զիա՞րդ կայ 'ի քեզ շունչդ յայնչափ ժամանակաց՝ յերեսաց չարաչար տանջանացդ՝ որով զքեզ կոտեցի ։ Ետ պ՟խնի կենդանի նահատակն , և ասէ · ո՞չ վաղ իսկ ասացի քեզ , եթէ ա՟ծ է գործս սքանչելի , զի առցես դու զփորձ համբերութե՟ ծառայիս ա՟յ · զի նա տայ զօրութի , և յամօթ առնէ զայնոսիկ՝ որ օտարանան յիւրմէ , և մարտնչին ը՟դէմ նր՟ իբրու զքեզդ · զի այսպէս ասէ ցիւրսն , ո՛չ թողից զձեզ և ո՛չ ը՟ վայր հարից · արդ ա՛յն է պահպանութի նր՟ առ սիրելիս իւր , զի պահեսցէ զնս՟ 'ի հաւատս իւրեանց՝ որ 'ի նա · մինչև հաստուսցէ նց՟ 'ի գալստեան իւրում ։

Արդ յետ այսչափ հարցափորձի և տանջանաց , գանից և բանտից , գելարանաց և կախաղանաց , և դառն չարչարանաց և կոտանաց՝ որով կոտեցին զերանելին զԳրիգոր , քանզի կատարեալ համբերութե՟ վկայեաց իբրև քաջ նահատակ 'ի վր՟ անուան տ՟ն մերոյ յի՟ քի՟ , խորհէր տրդատ ը՟ աւագանին՝ խօսել ընդ գրիգորի ողոքանօք , յղել պատգամս և խոստանալ կեանս և պատիւս , ուրումն ոչինչ էր լսելոց · ապա թէ ոչ՝ այլ ևս յաւելուլ տանջանս 'ի մահ ։ Յայնժամ ոմն 'ի նախարարաց տաճատ աշոցաց տ՟ր , որոյ տեղեկացեալ էր ս̄ն գրիգորի 'ի կեսարիա՝ թէ ո՛ք իցէ , ազդ առնէր աներոյ խուրումարտաւազդայ մանդակունւոյ հայոց սպարապետի . և սա մատուցեալ առ արքայ՝ այսպէս ասէր ս̄ն գրիգորի . Ս̄ն զի չէ՛ արժանի դա կենաց , վասն այնորիկ ո՛չ կամի կեալ , և ո՛չ զլոյս տեսանել . զի այս քանի՛ ժամանակք են՝ որ առ մեզ բնակեալ է , և ոչ գիտէաք զդա . այլ է դա որդի անակայ մահապարտի՝ որ սպան զհայրն քո խոսրով , և արար խաւար հայոց աշխ̄իս , և 'ի կորուստ մատնեաց զայս աշխ̄ս և 'ի գերութի̄ . արդ չէ՛ պարտ կեալ դմա , զի որդի վրիժապարտի է դա ։

Իբրև զայն լսէր թագաւորն , թէ արդարև որդի անակայ պարթևի է գրիգոր , հրաման տայր կապեալ ոտիւք և ձեռօք և պարանոցօք խաղացուցանել զնա յայրարատ գաւառ , և տալ զնա 'ի դղեակ բերդին արտաշատու քաղաքին , և իջուցանել զնա 'ի վիրապն ներքին , որ անհնարին էր խորութ̄ , մինչև անդէն մեռցի . և այնուհետև եղև լռութիւն զնմանէ . զի համարեցան՝ եթէ 'ի սակաւ աւուրս ծախեցաւ նա անդ . ո՛չ և այլ մարդիկ՝ զոր միանգամ իջուցեալ էր ն̄ց անդր , ամենեքեան մեռեալ էին վ̄ն դժնդակ չարաշունչ դառնութ̄ե տեղւոյն , և կարակուռ տղմին , և օձախառն բնակութ̄ե . զի վ̄ն չարագործաց իսկ շինեալ էր այն տեղի 'ի սպանումն մահապարտաց ա̄մ հայոց ։

Բայց սակայն սքանչելին գրիգոր պահեալ լինէր սքանչելապէս կենդանի՝ շնորհիւ ա̄ն

իւրոյ 'ի խոր վիրապի անդ՝ աւելի քան զամս երեքտասան կամ չորեքտասան. և զայնչափ ժամանակս հոգեւպէս սփոփե՟լ լինէր 'ի յետին տառապանս գբոյն՝ մխիթարուբ՟ հրեշտակի այ՟, որ պահէրն զնա 'ի մանկութենէ, նոյն և երևեալ նմա օր՟օրէ՝ ուրախ առնէր զնա 'ի տր՟ : Նաև կին ոմն այրի՝ որ բնակեալ էր 'ի բերդին յայնմիկ արտաշատու, հրաման առեալ յարհաւրաց, զի աւուրն նկանակ մի պատրաստական արարեալ՝ ընկենուցու 'ի ներքս 'ի խոր վիրապն. և այնու կերակրեալ լինէր այրն այ՟ 'ի հրամանէ տն՟ զայն ամսն՝
յորս եղև նա անդ :

Իսկ տրդատ արքայ յետ առաքելոյ զկապեալն գրիգոր յարտաշատ, ել և ինքն յեկեղեաց գաւառէ՝ ուր զնա չարչարեաց, և խաղաց յաթոռ թագաւորութե՟ իւրոյ 'ի վաղարշապատ քաղաք այրարատայ. և գրեաց հրովարտակս ը՟ ամ՟ աշխ՟ն հայոց՝ զի փոյթ լինիցին 'ի պաշտամունս դից. և եթէ զոք գտցեն քրիստոնեայ, մի՛ ապրեցուսցեն. զոր օրինակ ասէ և ես ոչ խնայեցի յիմ վաստակաւոր սիրելին գրիգորիոս. զոր վս՟ դորին իսկ իրաց չարչարեցի և սաստիկ տանջանօք տանջեցի. և յետ այնորիկ ետու զնա 'ի վիրապն ընկենուլ. զի անդէն իսկ միանգամայն հասցէ նմա օձից լինել կերակուր. զի և ոչ զմեծ վաստակ նր՟ համարեցայ ինչ առ սիրով և ահի՟ դիցն : Արդ զայս գրեցի, զի և ձեզ ահ լիցի և երկիւղ 'ի մահուանէ. և կեցջիք ը՟ հովանեաւ դիցն. և 'ի մէնջ բա-

րիս

ըիս գտանել մարթասջիք ․ ո՛ղջ լերուք , և մեք մեզէն ողջ եմք ։

Արդ զկնի ամաց անցելոց՝ 'ի հնգետասաներորդի ամի արկանելոյ ս՟բյն Գրիգորի 'ի վիրապն , այն ամ վեշտասաներորդ էր տրդատայ թագաւորութ՟ենն՝ յամի տ՟ն 301 , լինէր գալուստ ս՟բ կուսանացն հռիփսիմեանց 'ի հռովմայ 'ի հայս , և նահատակիլ վ՟ս սրբութ՟ե և ս՟բ հաւատոց մօտ 'ի վաղարշապատ ։ Եւ մինչդեռ անթաղ կային 'ի բացի մարմինք ս՟բցն , թգ՟ւորն տրդատ նորատեսիլ պատիժ պատուհասի և խրատ բարկութ՟ե ը՟ունէր յա՟յ ․ քանզի յաւուրն վեցերորդի յելանել իւրում յորս երէոց 'ի դաշտն փառական շեմակաց , յանկարծակի հարեալ այսոյն պղծութ՟ե զթագաւորն՝ 'ի կառացն 'ի վայր կործանէր ․ և անդէն մոլեգնել սկսաւ , և իւրովի ուտել զիւր մարմինն ․ նաև ը՟ նմանութ՟ե նաբուգոդոնոսորայ արքային բաբելացւոց եղե՟ ը՟ մարդկան բնութ՟ի արտաքս՝ 'ի նմանութ՟ի վայրենի խոզաց , իբրև զն՟ս ը՟ ն՟ս 'ի մէջ ն՟ց երթեալ բնակէր , և անհնարին անզգայութ՟բ խոտաճարակ լե՟ յեղեգնուտս՝ մերկ զամ՟ն ը՟ դաշտս կոծէր ․ զի թէպէտև կամեցան 'ի քաղաքին արգելուլ , ո՛չ կարացին ․ մի՝ վ՟ս բնական ուժոյն , և մի՝ վ՟ս զի էր և ոյժ դիւացն , որ 'ի նմա հարեալ էին ։ Նաև ա՟մ ընտանիք թագաւորին , ծառայք և սպասաւորք և բազումք 'ի մարդկանէ քաղաքին առհասարակ հարուածովք հարեալ լինէին , և դիւաբախ մոլեգնէին ․ և այնպէս անհնարին սուգ և կոծ 'ի վ̃ր Տ̃էրն հասանէր ։

Յայնմ ժամանակի տեսիլ մ̃յ երևեալ 'ի վ̃ր քեռ Թ̃գւորին, որում անուն էր Խոսրովիդուխտ, ազդ առնէր՝ եթէ չի՛ք հնար բժշկութ̃ե հարուածոցդ, եթէ ոչ ելանիցէ Գրիգոր 'ի վիրապէն. և թէպէտև լսօղքն ոչ հաւատային նմա, այլ յետ կրկին, և կրկին պատգամաց տեսլեանն՝ առաքեցաւ Օտայ նախարար. որոյ եկեալ յԱրտաշատ՝ եգիտ զծառայն մ̃յ կենդանի. և հանեալ պարանաւ 'ի գբոյն՝ տեսին զի թխացեալ էր մարմին նորա, և իբրև զածուխ սևացե̃լ. և անդէն լուացե̃լ մաքրեցին, և հանդերձս նորս մատուցեալ զգեցուցին նմա. և խնդութ̃բ առին գնացին յԱրտաշատայ 'ի Վաղարշապատ ։

Իսկ նախարարքն արտաքոյ ք̃ղքին սպասէին. և իբրև տեսին 'ի բացեայ զԳրիգորիոս Օտայիւ̃ն հանդերձ և բազմութ̃բ եկելոցն ը̃ նմ̃, ը̃ առաջ խաղացե̃լ հարուածելոցն՝ մոլեգնէին և փրփրէին առաջի սբ̃յն. ո̃պ և զԹագաւորն վարէր ածէր դևն ը̃ առաջ նր̃ մերկ և խայտառակ։ Իսկ սբ̃ն Գրիգոր վաղվաղակի ծունր եդեալ յաղօթս եկաց. և նոքա առ ժամայն 'ի զգաստութ̃ի դառնային՝ այնչափ, որչափ պէտք էին 'ի միտ առնուլ զխայտառակութ̃ի իւրեանց և զբանս սբ̃յն. և նա անդէն հրամայեաց արկանել զիւրեամբք հանդերձս ։

Յայնուհետև մատուցե̃լ Թագաւորն և նախարարքն՝ բուռն հարկանէին զոտից նորա, աղաչէին և ասէին. Թո՛ղ մեզ զյանցանս մեր՝

մեր՝ զոր մեք ը՟ քեզ արարաք ։ Իսկ նա մատուցեալ կանգնեաց զնոսա ՚ի գետնոյն, եւ ասէ. ես մարդ եմ իբրեւ զձեզդ, եւ մարմին ունիմ իբրեւ զձերդ. բայց դուք ծաներուք զձեր արարիչն, որ զերկինս եւ զերկիր արարեալ է, զարեգակն, զլուսին եւ զաստեղս, զծով եւ զցամաք, նա կարող է բժշկել զձեզ ։ Եւ նախ սկսաւ հարցանել սբ՟ն, թէ ո՞ւր եդիք զմարմինս վկայից ա՟յ. եւ նոքա ասեն. զորո՞ց վկայից ասես. եւ նա ասէ. որ վ՟ն ա՟յ մեռեալ են ՚ի ձէնջ ։ Եւ իբրեւ ցուցին նմա զտեղին՝ փոյթ կալաւ ժողովել զնշխարս նց՟ ՚ի սպանման տեղեացն. եւ տեսին՝ զի զօրու՟թ ա՟յ պահե՟լ էր զմարմինս նց՟ ինն աւր՟ եւ ինն գիշեր, յորմէ հետէ ընկեցեալ էին մարմինքն նց՟ արտաքոյ. զի ոչ գազանի էր մատուցեալ եւ ոչ շան եւ ոչ հաւու, եւ ոչ էր հոտե՟լ մարմինն նոցա ։ Իսկ նոքա բերէին բազում հանդերձս պատանաց. այլ երանելին Գրիգոր ոչ արժանի համարեցաւ զպատանս բերեալս Թագաւորին կամ զայլոցն. այլ իւրաքանչիւր պատառատուն հանդերձիւ՟ն պատէր զսբ՟ն առ անդամ մի. ասէ. մինչեւ լիցին պատանք ձեր արժանի սբ՟ մարմնոց սց՟ ։ Եւ ամփոփեաց, եւ առ գնաց ՚ի հնձանն՝ ուր էին իսկ վանք նց՟. եւ իւր վանս անդէն կալեալ օթեւանս առնէր. եւ զայն գիշեր ողջոյն աղօթս մատուցանէր առ ա՟ծ վ՟ն փրկութե՟ն հայաստանեայց, եւ խնդրուածս առնէր վ՟ն դարձի նոցա ։

Ի վաղիւ՟ն անդր Թագաւորն եւ աւագանին

հանդերձ բազմութ՟բ եկեալ, և 'ի ծունր իջեալ առաջի ս՟բյն գրիգորի, և առաջի ս՟բ ոսկերաց վկայիցն ա՟յ, խնդրէին և ասէին. Թող մեզ զա՟մ զչարիս մեր. և խնդրեա՛ դու վ՟ն մեր յա՟յ քումմէ, զի մի՛ կորիցուք մեք: Զանն՛ մեզ և հաստատեա՛ զմիտս մեր, զի մարթասցուք աղաչել զերեսս արարչին մերոյ՝ զոր ոչն գիտէաք. իցէ՞ թէ դարձցի և ընկալցի զմեզ յապաշխարութ՟ի. և չիցէ՞ արդեօք հատեալ յոյս կենաց մերոց 'ի նմանէ: Զայս ասացեալ առ հասարակ լային և կոծէին, և խնդրէին զողորմութ՟ի ճշմարտին ա՟յ, զգեցե՟լ քուրձ, և նստե՟լ 'ի վերայ մոխրոյ:

Յայնմ հետէ սկսաւ երանելին գրիգոր լուսաւոր բանիւ՛ և լի հոգւով ս՟բով քարոզել ն՟ց ճօխ և առատ վ՟դպութ՟բ զճանապարհն ճըշմարտութե՟ն՝ զաւուրս վաթսուն և հինգ. յորս ժողովէին առ նա յա՟մ կողմանց եր՟ին հայոց բազմութիւնք յոյժ, և ունկն դնէին ա՟ծային պատգամաց՝ զորս խօսէր 'ի հին և 'ի նոր կտակարանաց, խրատելով, ուսուցանելով, յանդիմանելով և մխիթարելով. և ո՟պ իմաստուն բժիշկ գտանել ջանայր ըզդեղն օգտակարութե՟ն, զի բժշկեսցէ զանձինս նոցա աւետարանաւն ք՟սի:

Եւ զայնչափ աւուրս պահօք և աղօթիւք կրթէր զնոսա. և յաւուրն վաթսներորդի վեցերորդի պատմէր ն՟ց տեսիլ անպատում սքանչելի, զոր ետես 'ի գիշերին յայնմիկ. զի բացաւ ասէ խորանաշէն յարկն հաստա-

տու

տութէ երկնից , և իջեալ զուա՛րթնոյն 'ի նմանութ̃ի լուսոյ՝ կոչեաց զիս յանուա՛նէ , Գրի՛գորիոս , նայեա՛ց դու 'ի վեր , և տե՛ս զսքանչելիսս . և իմ նայեցեալ տեսի , զի լոյս հոսեալ վերուստ 'ի վայր մինչև յերկիր հասանէր , և ը̄ լուսոյն զօրք անչափ լուսեղինաց երկթևեանք 'ի տեսիլ մարդկան . և որ զառաջն ունէր 'ի նմանութ̃ի որդւոյ մարդոյ՝ ահեղ տեսլեամբ սլացեալ գայր իբրև զարծո՛ւի . և 'ի ձեռին իւրում ուռն մի մեծ ոսկի . մինչև եկն էջ 'ի շինամէջ քաղաքին վաղարշապատու , և բախեաց զթանձրութ̃ի գետնոյն . և մեծ և անչափ թնդիւնք հնչեցին 'ի սանդարամետս անդնդոց ։ Եւ տեսանէի 'ի մէջ քաղաքիս մօտ յապարանս արքունի խարիսխ ոսկի ճախարակաձև՝ մեծ և բարձր , և 'ի վ̃ր ն̃ր սիւն հրեղէն , և 'ի վ̃ր ն̃ր թակաղաղ մի ամպեայ , և խաչ լուսոյ 'ի վերայ ն̃ր ։ Տեսի և այլ խարիսխս երիս կարմիր 'ի գոյն արեան՝ հանդերձ ամպեղէն սեամբք և հրեղէն խոյակօք և լուսեղէն խաչիւք 'ի տեղիսն , ուր վկայեաց ս̃րն գայիանէ երկու ընկերօքն , և ս̃րն հռիփսիմէ երեսուն և երկու ընկերօք , և 'ի տեղւոջ հնձանին՝ ուր մինաւորն կատարեցաւ ։

Զայս ա̃մ խելամտեցուցանէր գրիգոր թագաւորին և ա̃մ ժողովրդեանն , և ը̄ յայտնելոյ նմա յ̃այ՝ ձեռն 'ի գործ առնէր պարըսպել դրամբք և դռնափակօք զտեղի շինուածոյ տաճարին ա̃յ , որ է կաթողիկէն վաղարշապատու 'ի տեղի իջման միածնի , և զտեզի երից վկայարանաց ս՟բց կուսանաց ․ և կանգնէր 'ի նոյն տեղիս զնշան տ՟րունական խաչին ․ զի լիցի ամենեցուն անդ ժողովիլ , և ծունր կրկնել երկրպագութ՟բ ամենազօր արարչին ա՟յ ։ Եւ այսպէս լուսաւորեալ ըզսիրտս և զհոգիս ժողովելոցն՝ տայր ն՟ց թողուլ զհեթանոսական պաշտօն կռոց ձեռագործաց , և դառնալ 'ի պաշտօն ա՟յ Ճշմարտի ։ Որդ՝ իբրև ժողովեալք միահամուռ 'ի պաշտօնարան տեղւոյն յարկի տանն ա՟յ կային , ասէ ցն՟ն ն՟ր լուսաւորիչն Գրիգոր ․ դի՛ք ծունր ամենեքին , զի արասցէ տ՟ր բժշկութ՟ն հարուածոյդ մնացելոց ․ և ինքն իսկ Գրիգոր եկաց յաղօթս ուժգին խնդրուածովք և պաղատանօք և արտասուօք վասն թագաւորին բժշկութ՟ե ։ Եւ ահա յանկարծակի հարաւ տրդատ զդողման , և զխորխացեալ խոզակերպ կաշին 'ի բաց ընկենոյր , հանդերձ քստմնելի տեսլեամբ դիմացն ․ և դարձան երեսք ն՟ր յիւր իսկ կերպարանսն , և մարմինն փափկացեալ մատաղացե՟լ լինէր իբրև զառօրեայ մանկան ծնելոյ ․ նոյնպէս և ա՟մ հարուածեալք և ախտաժէտք յիւրաքանչիւր ախտից թօթափե՟լք , եթէ դիւահարք և գոնջացեալք , և եթէ անդամալոյծք և գօսացեալք , բորոտք , ջրգողեալք , և պատագրոսք ։ Եւ այսպէս բացեալ մարդասէր շնորհացն ք՟ի զիւր ամենակարն բժշկարան՝ բժշկեաց զամենեսին 'ի ձեռն ս՟բյն Գրիգորի ։ Եւս առաւել բացե՟լ լինէր աղբիւր գիտութ՟եցն ք՟ի՝ ընուլ Ճշմարտապատում վար-

դա

դասպետուե՟ցն ա՟յ զլսելիս և զսիրտս ամենեցուն ։ Անդ էր այնուհետև սրտալիր ուրախութի, և անհնավայել տեսիլ մեծամեծացն ա՟յ․ և որքան զօր խմբէին 'ի գաւառաց գաւառաց Հայաստան ե՟ին 'ի նոյն վայր՝ յորդորեալք և դրդեալք 'ի կոչմանէն ա՟յ գալ հասանել 'ի բացեալ աղբիւր շնորհացն ք՟ի յայրարատեան գաւառի 'ի Թագաւորական կայանսն ։

Անդէն վաղվաղակի տրդատ արքայ ինքնիշխան հրամանաւ և ամենեցուն հաւանութ՟՝ ձեռն 'ի գործ տայր երանելոյն գրիգորի բառնալ յե՟էն զա՟մ գայթակղութի՟ս կռոց, և զհայրենական նախնեացն աւանդս մոլորութ՟ և զիւր կարգեալ ա՟ծսն՝ չա՟ծս անուանել, անյիշատակ առնել, և ջնջել 'ի միջոյ ։ Իսկ 'ի շրջիլ և 'ի քանդել ս՟րյն գրիգորի ըզմեհեանս և զբագինս հանդերձ թագաւորաւն՝ բազմապատիկ նշանք երևէին զօրութ՟ տ՟րունական խաչին ․ մինչև ինքնին կործանիլ մեհենաց 'ի հիմանց, և հալածական լինել դիւաց երևելոց 'ի նմանութ՟ի այրուձիոյ, ձիչ բառնալով մեծագոչ լալեօք, և ասելով․ վա՜յ մեզ՝ վա՜յ մեզ՝ վա՜յ մեզ, զի յա՟մ երկրէ փախստական արար զմեզ Յ՟ս որդին Մարիամու դստերն մարդկան ․ և աստ ևս 'ի ձեռն կապելոյս և մեռելոյս Գրիգորի եհաս մեզ փախստական լինել․ արդ յո՞ դէմ եդեալ փախիցուք, զի փառք ն՟ր լցին զտիեզերս ։ Իսկ զայս ասացե՟լ սևադունդ դիւացն՝ չքոտեալք 'ի տեղւոյն իբրև զծուխ՟ պակասեցան ․

ցան ․ և զայս ամ՟ տեսեալ և լուեալ մարդկան՝ առաւել ևս 'ի հաւատս հաստատէին ամենեքին ։

Եւ յետ քանդելոյ և աւերելոյ մարդկանն զհիմունս մեհենաց զմնացեալս, ը՟ս հրամանին գրիգորի և տրդատայ 'ի գանձից մեհենիցն մասն առնէին աղքատաց և տառապելոց՝ որբոց և այրեաց ։ Եւ զդաստակերտսն և զսպասաւորսն քրմօքն հանդերձ, և նոցունց գետնովքն և սահմանօքն՝ 'ի ծառայութիւն սպասաւորութեան եկեղեցւոյ նուիրէին ։ Եւ այսպէս առհասարակ ամենեցուն սերմանէր սբ՟ լուսաւորիչն հոգւոց զա՟ծպաշտութեան բանն, և զամենեսեան 'ի ճանապարհս տ՟ն կացուցանէր՝ գիտուն առնել պատուիրանաց արարչին ․ և յա՟մ քաղաքս հայոց և 'ի գիւղս և յաւանս և յագարակս երևեցուցանէր զտեղիս տանն ա՟յ ։ Բայց ոչ առնէր յայտ հիմնարկութեան հետս, և ոչ սեղան ուղղէր ուրեք յանուն տ՟ն ․ զի չունէր զպատիւ քահանայութեան ․ միայն լոկ պարսպէր քաղաքորմով զտեղիսն, և կանգնէր զնշան տ՟րունական խաչին ․ նոյնպէս և յելս և 'ի մուտս ճանապարհաց՝ 'ի փողոցս և 'ի հրապարակս և 'ի ճանապարհակիցս պահապան և ապաւէն զնոյն նշան կանգնէր ։

Եւ յայնմ հետէ փոյթ 'ի վ՟ր ունէր երանելին գրիգոր առաւելապէս զառընթերակաց արքունիս հանդերձ մեծամեծ աւագանւոյն և ա՟մ ազատագունդ բանակաւն՝ ա՟ծեղէն իմաստութեան վարդապետել, և հաստահիմն առ-

առնել ՚ի ճշմարտութեան քնի՝ զոր ընկալան ։ Իսկ թագաւորն տրդատիոս հանդերձ միաբանութբ՝ կնաւ իւրով աշխէն տիկնաւ, և քերբն իւրով խոսրովիդխտով հրաման ետ ՚ի ժողով կոչել զամ մեծամեծս ծին ՚ի վաղարշապատ քաղաք թագաւորութե . և կուտեցան ՚ի ժամադիրն ը հրամանին՝ կուսակալք, դաւառակալք, զօրագլուխք, պետք և իշխանք, նախարարք և ազատք, դատաւորք և պաշտօնականք ։ Յայնժամ խորհուրդ ՚ի մէջ առեալ թագաւորն ը ամենեսին՝ փութալ հասանել բարեաց գործոցն լինել ժառանգաւոր, եկայք ասէ ձեպեսցուք՝ զայս առաջնորդ կենաց մերոց տուեալ մեզ յայ զգրիգոր՝ հովիւ կացուցանել մեզ, զի լուսաւորեաց զմեզ մկրտութբ, և նորոգեաց զմեզ օրէնսուսոյց խորհրդով արարչին մերոյ այ ։ Բայց գրիգոր ոչ անսայր և ոչ կամէր առնուլ յանձն զմեծ պատիւ քահանայութեն · ասէ · ոչ կարեմ հանդարտել բաւել անչափ բարձրութե աշտիճանիդ · զի անպատում է այն պատիւ քսատուր փառացն առաջնորդութե՝ միջնորդ կալ ը ած և ը մարդիկ · այլ զարժանին խնդրել գտցեն ։ Յայնժամ տեսիլ սքանչելի երևէր յայ թագաւորին · քանզի տեսանէր զհրեշտակ այ, որ խօսէր ը նմա և ասէր · պարտ է ձեզ զգրիգոր վիճակեցուցանել առանց յապաղելոյ ՚ի քահանայապետութի, զի լուսաւորեաց զձեզ մկրտութբ ։ Որպէս երևեցաւ և գրիգորի տեսիլ հրեշտակի այ, զի մի ինչ իշխեսցէ պընդել յամառել վ՟ն այնր . զի ՚ի ք՟ն է ամէ այդքեղ հրամայեալ . և նա անդէն բարբառէր , կամք ո՟յ կատարեսցին ։

Յայնժամ թագաւորն վաղվաղակի երկիւղիւ և մեծաւ խնդութ՟բ հոգացեալ՝ գումարեաց զգլխաւորս ՚ի նախարարաց՝ հնդետասան իշխանս աշխարհաց , ընտիր ընտիր արամբք , և առաքեաց զերանելին գրիգոր ը՟ն նմ՟ա արքունական ոսկեապատ կառօք ՚ի կեսարիա կապադովկացւոց առ մեծն ղևոնդիոս պատրիարգ՝ հանդերձ արքունի հրովարտակաւ , և մեծամեծ պատարագօք ։ Եւ նոցա հասեալ անդր , և տուեալ ողջոյն՝ պատմեցին որ ինչ միանգամ եղեալ էր յ՟ոյ այցելութ՟ի հայոց Տ՟ի , և մատուցին զթուղթ թագաւորին առաջի ս՟ր՟յ հայրապետին . և նա մեծաւ խնդութ՟բ և ուրախութ՟բ ամ՟ քաղաքին ընկալաւ զն՟ո . մինչև ամ՟ ուխտ եկեղեցւոյն հանդերձ ժողովրդեամբն առնէին տօնս ցնծութե՟ ը՟ն դարձ տանն թորգոմայ . և զս՟ր՟ն պատուեալ ը՟ն արժանւոյն վ՟ն առաքինութե՟ ճգնութե՟ վկայօրէն մարտին՝ փառաւոր առնէին զա՟ծ նովաւ ։ Եւ եղև ժողով բազում եպ՟սաց ՚ի քաղաքն կեսարացւոց . գլխաւորն՝ ղևոնդիոս . և ձեռնադրեցին զս՟ր՟ն գրիգոր ՚ի քահանայապետութ՟ի հայոց մեծաց . և բազում պատուով և թղթով յուղարկեցին զնա իշխանօքն հանդերձ յամի տ՟ն 302 ։

Առաւ ս՟ր՟ն գրիգոր ՚ի ս՟ր՟յն ղևոնդեայ ՚ի պարգևի մասին ը՟ն իւրունին փափաքման և զպատուական նշխարս ս՟ր՟յն յովհաննու կարապետի , տի, և սբ՟յն աթանագինեայ եպ՟սի · զորս ամփոփեաց 'ի զանազան տեղիս՝ ը՟ որում պատմեցաք յաւուր տօնի սր՟ նշխարացս , հանդերձ ազգի ազգի նշանօք՝ որք եղեն 'ի դարձի լուսաւորչին 'ի կեսարիոյ ։ Եբեր ը՟ իւր անտի սբ՟ն գրիգոր 'ի գործակցութ՟ի աւետարանին և անձինս ընտիրս , յորս էին և սբ՟ն անտոն և կրօնիդէս միայնակեայք · նոյնպ՟ս և 'ի սեբաստիոյ հաւանեցոյց զբազումս յեղբարց ը՟ իւր գնալ 'ի մեծն հայս · զի վիճակեցուսցէ զն՟ս 'ի քահանայութ՟ի յիւրում աշխ՟րին ։ Իսկ ընդ որ անցանէին , կուտակէին ժողովուրդք քաղաքաց քաղաքաց տեսանել զսբ՟ եպ՟սն գրիգորիոս , զի օրհնեսցին 'ի նմանէ · և առէին ցմիմեանս · եկա՛յք տեսցո՛ւք զսբ՟ն գրիգորիոս · զի այս այն այր է ասեն , որ վ՟ն ք՟սի համբեր չարչարանաց · վկայ հաւատարիմ գտեալ՝ խոստովանողական անուն ժառանգեաց ։

Եւ այսպէս զբազում օթևանօք անցեալ՝ առողջութ՟բ յաջողութ՟բ և հոգելից ուրախութ՟բ եկեալ հասանէին 'ի հայաստան աշխ՟ր ։ Եւ ը՟ ամ՟ տեղիս և ը՟ ամ՟ գաւառս շրջէր սբ՟ն գրիգոր 'ի ճանապարհի գալստեան իւրոյ , շինէր եկեղեցիս , և առնէր մկրտութ՟իս , և կացուցանէր քահանայս ։ Ընդ առաջ ելնէր թագաւորն տրդատ առ ափն եփրատ գետոյ մօտ 'ի բագուան՝ որ և դիցաւան՝ մեծաւ բանակաւ , առեալ ը՟ իւր և զաշխէն տիկին և զքոյրն իւր խոսրովիդուխտ · ուր և ը՟ պատահեալ՝ լի առնէր զամենեսեան սբ՟ հայ-

րա

րապետն գրիգոր շնորհիւ՟ աւետարանին ք՟ի յողջոյն խաղաղութե՟ . և բաղում ցնծութե՟ և ուրախութե՟ յաւանն դառնային . և անդ ընթերցեալ տրդատայ զթուղթ ուրախակցուէ՟ սրբ՟յն ղևոնդեայ՝ ընդոր ա՟մ մխիթարութե՟ : Այնուհետև 'ի գործ արկեալ սրբ՟յն գրիգորի զանդադար վ՟դպութին իւր՝ հաւատարու՟թ. բարեպաշտ արքային տրդատայ , հրաման տայր արքայագունդ բանակացն և ա՟մ ժողովրդոցն , ամսօրեայ ժամանակաւ 'ի պահս և յաղօթս յամել . և երախայացուցել զամենեսին՝ պատրաստ առնէր 'ի ս՟բ մկրտութի՟ . և ա՟մ երկիր դարձեալ սրտիւք իւրեանց՝ կանխէին 'ի պահս և 'ի պաշտօն և յերկիւղ ա՟յ :

Իսկ 'ի լնուլ կիտին եդելոյ պահոցն կատարելոյ՝ առեալ սրբ՟յն գրիգորի զա՟մ բանակ զօրացն , և զինքնին զթագաւորն , և զկին նր՟ զաշխէն , և զմեծ օրիորդն խոսրովիդուխտ , և զմեծամեծսն ա՟մ , և զա՟մ ամբոխ բազմութեան , ել այգուն առաւօտուն լուսանալոյ յափն եփրատ գետոյն մատուցանէր . և անդէն մկրտէր առ հասարակ զամենեսեան յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբ՟յ : Իսկ իբրև իջանէին մարդիկն ա՟մ և թագաւորն 'ի մկրտութիւն անդր 'ի ջուրսն եփրատ գետոյն , նշան սքանչելի երևէր յա՟յ . զի զտեղի առեն ջուրց գետոյն՝ անդրէն ընդ կրունկն դարձան . և լոյս սաստիկ երևեալ 'ի նմանութի՟ սեան լուսաւորի՝ եկաց 'ի վ՟ր ջուրց գետոյն , և 'ի վ՟ր նր՟ նմանութի՟ տ՟րունական խա-

խաչին ․ և այնչափ ծագեաց լոյսն , մինչև արգելուլ զճառագայթս արեգականն և նուաղեցուցանէր ։ Եւ իւղն օծութեան՝ զոր արկանէր գլխոյ ՚ի վ՟ր մարդկանն , շրջան առեալ ՚ի մէջ գետոյն՝ շուրջ զմարդկամբն խաղայր ․ և ամենեքեան զարմացեալ՝ բարձրացուցանէին զօրհնութի ՚ի փառս ա՟յ ․ և ը՟ երեկս աւուրն նշանն աներևոյթ լինէր ․ և նոքա ՚ի վեր յաւանն դառնային ։

՚Ի վաղիւն անդր մատուցանէր ս՟բ հայրապետն զօրհնութեան պատարագն , և հաղորդէր զամենեսեան ՚ի խորհուրդն գոհութեան ․ և դադարեաց անդ յետ այսորիկ աւուրս եօթն վ՟ն հոգևոր մխիթարութեան , միաբանելով զայլ ևս անհամար բազմութի՝ ը՟ այր և ը՟ կին և ը՟ մանուկ , հանդերձ գործակցու՟բ քահանայից եղելոց ը՟ նմա ։ Եւ այնուհետև ծովացուցեալ զվ՟րդպութեն զխորութի՝ դարձուցանէր զա՟մ տունն Թորգոմայ , և լուսաւորէր արեգականաբար զհամօրէն հայաստանեայս ․ և սատարութ՟բ ա՟ծասէր արքային շինէր եկեղեցիս ՚ի քաղաքս , յաւանս , ՚ի շէնս , ՚ի գիւղս և յագարակս ․ և կացուցանէր քահանայս յա՟մ տեղիս , և բազմացուցանէր զպաշտօնեայս սեղանոյն , հանդերձ սահմանեալ հասիւք ։ Նոյնպէս և զեպ՟սունս վիճակեցուցանէր ՚ի գլխաւորութի ժողովրդոցն ն՟ն , և պատուէր տայր նոցա՝ հաւատարիմ առաջնորդութ՟բ վերակացու լինել լուսաւորապէս հօտին ք՟ի ։

Հաւանեցուցանէր զԹագաւորն՝ ժողովել

յա՟մ ծէն բազմութե՟ մանկտւոյ առ 'ի նիւթ վ՟ժպութե՟, և տալ յարուեստ դպրութե՟, և կարգել 'ի վ՟ր հաւատարիմ վ՟ժպս . առաւել զմանկունս քրմաց գումարէր դասս դասս յարժանաւոր տեղիս՝ դարմանօք ռոճկաց : Նա և զն՟ս յերկուս բաժանեալ, զոմանս յասորի դպրութի՟ կարգէր, և զոմանս 'ի հելլէն . որով անդէն յական թօթափել վայրենամիտքն և դատարկասունքն և անասնաբարոյ ծաբնակքն՝ վաղվաղակի մարգարէագէտք և առաքելածանօթք և աւետարանաժառանգք լինէին, և ա՟մ աւանդելոցն ա՟յ ոչ իւիք անտեղեակք, հայաբարբառ և հայերէնախօս լեզուօք :

Նա և դ՟րձլ բազում գունդս վանականաց 'ի շէնս և յանշէնս, լեռնականս՝ դաշտականս, արգելականս և քարանձաւամուտս առնէր : Նա և զոմանս յորդւոց քրմացն առեալ առ իւր՝ 'ի հայրապետանոցի անդ 'ի վաղարշապատ, ուր զԷջմիածինն կառոյց, ձեռնասունս առնէր, ը՟ հոգևոր խնամով և երկիւղիւ սնուցանէր . որ յաստիճան եպ՟սութե՟ն լինէին արժանի կալոյ՝ առեալ ձեռնադրութի՟ 'ի նմանէ : Նա և որ յաստիճան եպ՟սութե՟ ձեռնադրեցան 'ի նմանէ՝ էին աւելի քան զչորեք հարիւր եպ՟ս, որք կացին տեսուչք տեղեաց տեղեաց . յորոց մի եղև և երանելին արիստակէս կրտսեր որդի գրիգորի . զոր համդերձ աւագաւն վրթանէսիւ ետ բերել տրդատ արքայ 'ի կեսարիոյ . և էր արիստակէս գործակից հօր իւրում յա՟մի 'ի ծերութե՟ նորա, և 'ի վերջին

ամս

ամս հայրապետութեան ն՟ր ունէր զաթոռն իբրև փոխանորդ ն՟ր . ոչ և յետ ն՟ր նստաւ յաթոռ կթ՟ղկոսութե՟ հայոց մեծաց :

Ս՟ա զի ս՟բ լուսաւորիչն յետ տեսանելոյ ըզհայաստան ձ պայծառացեալ ա՟ծգիտութե՟բ և ա՟ծպաշտութե՟բ՝ թողոյր զալբոս եպս՝ այր ճշմարիտ և ա՟ծասէր վերակացու արքունի դրան , և ինքն ընդ ժամանակս ժամանակս յանապատ լերինս ելանէր՝ առեալ զոմանս յաշակերտաց , ոչ և երբեմն առանձինն , միայնակեաց լինելով խստամբեր ճգամբք և խոտաքուտ կենօք , հանդերձ կրթութեամբ քաղցրուսոյց ընթերցուածոց հոգեպատում գրոց , և անդադար աղօթիւք և խնդրուածովք վ՟ս ամենեցուն կենաց առ մարդասէրն ա՟ծ : Եւ էր՝ զի իջանէր 'ի լերանց , և ս՟բ որդւովն իւրով արիստակիսաւ և ա՟մ երևելի օգնականօքն զա՟մ աշակերտելովքն շրջէր , և հաստատէր զնոսա կալ 'ի պատուիրանին ճշմարտութե՟ :

Ընդ այն ժ՟մկս 'ի լինել դարձի մեծին կոստանդիանոսի հռովմայ ինքնակալի 'ի ս՟բ հաւատս , և 'ի պայծառանալ քրիստոնէութե՟ ընդ ա՟մ տիեզերս , տրդատ արքայ էառ ընդ իւր զս՟բն գրիգոր , և գնաց բազումշքով 'ի հռովմ յողջոյն կոստանդիանոսի թագաւորին և ս՟բյն սեղբեստրոսի հայրապետին . որք մեծաւ սիրով ը՟ առաջ ելանէին , և տուեալ հանդիստ՝ պահէին զն՟ս ժամանակս ինչ անդէն 'ի տիեզերական քաղաքին . պատմէին իրերաց զսքանչելի օրինակ դարձի երկոցունց ձայն, և միաբան փառս մատուցանէին այ՟. և 'ի վր՟ ամի՟՝ սէր և միաբանութիւն յաւերժական հաստատէին 'ի մէջ ազգի և ազգի, հաստատուն ուխտիւք դաշանց. և մեծաւ փառօք յուղարկեալ լինէին անդրէն ։

Յետ այսորիկ 'ի լինել և սբ՟ ժողովոյն նիկիոյ 'ի բիւթանիա արևելից, թէպէտև հրաւիրեցաւ մեծն գրիգոր, այլ զի մի փառաւորեսցի 'ի մէջ բազմութե՟ հայրապետաց վն՟ խոստովանողական անուան իւրոյ՝ չեառ յանձն երթալ ։ Յայնժամ խորհուրդ արարեալ մեծ արքայն տրդատ և սբ՟ կաթուղիկոսն գրիգոր հանդերձեցին և արձակեցին զարիստակէս երանելին 'ի ժողովն անդր. ուր ամ՟ տիեզերաց կարգեցաւ սահման ուղղափառ հաւատոյ, և կարգ լուսաւորութեան, և կանոնք պայմանաւորք. զորս առեալ եբեր 'ի հայս սբն՟ արիստակէս, և առաջի եդ թագաւորին և կաթուղիկոսին սբյ՟ ։ Իսկ սբն՟ գրիգոր յաւել ինչ ինչ 'ի նոյն լուսաւոր կանոնսն վն՟ առաւել զգուշութե՟ իւրոյ վիճակին. ոպ՟ և 'ի փոխանակ հանգանակին զկնիք հաստատութեան իւրոյ, ասելով. * Իսկ մեք փառաւո-
,, րեսցուք որ յառաջ քան զյաւիտեանս՝ եր-
,, կրպագանելով սբ՟ երրորդութեան և մի
,, ածութեան՟ հօր և որդւոյ և հոգւոյն սբյ՟,
,, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից.
,, ամէն ‖ ։

Իսկ յայնմհետէ սիրեաց զմիայնաւորութի՟ և զլռութի՟ ը՟ ինքեան, ը՟ ած՟ միաւորելով, և միշտ առ ած՟ խօսելով. յայնժամ գրեաց և պճրաշալի գիրս յաճախապատում վիպութե՟, որ վ՟ռ ուղիղ հաւատոց և առաքինի վարուց՝ ազդու և հոգելից եռանդեամբ ա՟ծեղէն սիրոյն լի (2) . և որ քան զոր մեկուսացոյց զանձն յաչաց մ՟դկան՝ արարեալ իւր վերջին ճգնարան 'ի յայրսն մանեայ, որ 'ի սեպուհ լերին դարանաղեաց գաւառի ։ Այս ե՟ գրելոյ խորենացւոյն, յ'իսկզբանէ քահանայանալոյ նր՟ 'յեօթնևտասներորդ ամէ թ՟գրութե՟ տրդատայ՝ մինչև ցքառասուն և վեցերորդ ամ՟ն նորին, այն է ցամ՟ին . 331 . յորմէ հետէ ոչ ևս յաւելու ումեք երևիլ գրիգոր, համարեալ թուին ամք . Է ։ Բայց սբ՟յն գրիգորի 'ի մանեայ այրս կեցեալ աներևութաբար ամս բազումս՝ փոխի մահուամբ 'ի կարգս հրեշտակաց ։ (3)

Գիւտ նշխարաց ս՟բ լուսաւորչին 'ի պէսպէս ժամանակս ։

Արդ՝ զոր 'ի կարճոյ նշանակէ նա ինքն խորենացին, թէ * հովուաց գտեալ զնա վախ-
„ ճանեալ՝ 'ի նոյն տեղւոջ թաղեցին, ոչ
„ գիտելով՝ թէ ո՞վ ոք նա իցէ ‖ . և թէ՝
* վայել իսկ էր նց՟, որք փրկչին մերոյ եղեն
„ խորհրդածուք, լինել և աշակերտին յու-
„ ղարկմանն սպասաւորք ‖, ճոխագոյն աւանդէ ո՟ր իէ՟լ այսպիսի հանգամանօք ։
* 'Ի կատարման երանելոյն հանգստեան 'ի
„ լերինն ծածուկ 'ի մարդկանէ, հրամանաւ
„ ա՟յ եղև գտանել զնա հովուաց՝ նստեալ

,, ոչ կենդանի ը̃դէմ արևելից , խաչանման
,, 'ի վեր ունելով զաջն առաքելական 'ի վ̃ր
,, ա̃ծատիպ պատկերին . և սեղան ս̃բ 'ի փայ-
,, տէ պատուականէ . և սկիհ և մաղզմայ
,, փայտեայ՝ պատեալ դիպակ հանդերձիւք
,, ս̃բ կտաւօք . և քօղ ոսկէթել ծայրիւք
,, ծալեալ՝ վուշ դաստառակաւ , և եդեալ
,, 'ի պահարան կտաւեայ : Նաև գաւազան 'ի
,, ձախոյ ձեռին՝ հաստատելով 'ի վ̃ր ծըն-
,, կացն : Նաև անդէն ձայն տուեալ միմեանց
,, հովիւքն ողբերգական ձայնիւ , որք և
,, թուով եօթն գոլով , գտաք ասեն զս̃բ ծե-
,, րունի ոմն՝ որ է հաւաստեաւ մարդ ա̃յ . և
,, լալով ողջունէին զնա զանօթն սրբութե̃ .
,, և ոչ ը̃ կենդանւոյ խօսէին ը̃ նմա՝ խընդ-
,, րելով զօրհնութիւն 'ի նմանէ որդւոց և
,, տանց և խաշանց իւրեանց :

,, Նաև սթափեալք 'ի տրտմութե̃ն՝ արիացան ,
,, և առեալ բերին վէմս մեծամեծս , որպէս
,, եղեն իմաստնացեալք յա̃յ . և շինեցին
,, շուրջ զնովաւ գմբէթաձև և բարձրագոյն ,
,, զի մի հասցէ 'ի նա (ոք 'ի մարդկանէ կ̃մ
,, 'ի գազանաց) , և կապեցին զգմբէթն՝ զայն
,, օր . և երկրպագեալ ս̃բյն՝ գնացին 'ի խո-
,, րան իւրեանց , և պատմեցին ամենեցուն .
,, և փառաւոր առնէին զա̃ծ : Նաև 'ի վաղիւն
,, եկին ա̃մ խաշամբք իւրեանց , երկրպագե-
,, ցին անտեսաբար ը̃ ծերպս վիմացն հայե-
,, լով և խնկելով : Նաև սկսեալ միաբան՝ արա-
,, րին 'ի վ̃ր գմբեթին քարակոյտ մանրա-
,, պէս՝ իբր փոքրիկ բլուր . և զայն արարին
,, առ

,, առ 'ի պատրաստութ՟ի անձրեւի եւ ձիւնի ,
,, զի մի կարասցեն մտանել ը՟ քարակոյտս
,, մանրախճին . եւ երկրպագեալ ս՟բ նշխա-
,, րացն՝ գնացին 'ի յարկս իւրեանց , գոհա-
,, նալով զա՟յ՝ որ արժանաւորեաց զն՟ս որպէս
,, գերեզմանական պատուով սպասաւորել
,, մեծ քահանայապետին եւ խոստովանողին
,, ք՟ի . թէպէտ եւ յանուանէ ոչ գիտէին՝
,, թէ ով իցէ . այլ իբրեւ ս՟բյ սպասաւորէին .
,, եւ պահեցաւ անդ ս՟բն ա՟յ իբր 'ի յարկեղ
,, հրամանաւն ա՟յ ‖ : Այս է եւ ասելն յայսմ
աւուրաց . * Հովուաց ոմանց գտեալ զմար-
,, մինն կանգուն 'ի փորուած գիոյ ծառոյն ,
,, եւ ծածկեցին քարով 'ի նմին տեղւոջն , ոչ
,, գիտելով՝ թէ ով ոք իցէ ‖ :

Բարւոք 'ի վ՟ր բերէ քերթողահայրն մով-
սէս . * Եւ ծածկեալ ամս բազումս՝ ա՟ծա-
,, յին իմն գոգցես տեսչութ՟բ՝ իբրեւ զմով-
,, սէսն զայն 'ի հնումն , զի մի 'ի պաշտօն
,, դեռահաւատ մարդկան 'ի բարբարոսացս
,, առցի ազգաց : Իսկ յորժամ սերտեալ հիմ-
,, նեցան հաւատք կողմանցս այսոցիկ՝ զկնի ,
,, յետ բազում ամաց յայտնեցաւ ձգնաւորի
,, ումեմն՝ գառնիկ անուն կոչեցելոյ , եւ բե-
,, րեալ եղաւ 'ի գեօղն թորդան նշխարք ս՟բյն
,, գրիգորի ‖ : Եւ էր գառնիկս այս՝ ըստ այ-
լոյն աւանդելոյ՝ 'ի բասեն գաւառէ 'ի գեղ-
ջէն յաւընկոյ (կ՟մ որնկայ կ՟մ կլթնոյ) . որում
յայտնեցաւ ս՟բն գրիգոր 'ի տեսլեան , եւ ասէ .
եկեալ հանցես զիս աստի , եւ տարեալ թա-
ղեսցես 'ի թորդան . եւ նա արար այնպէս .

և տարեալ եդ յեկեղեցւոջն մեծաւ պատուով ը̄ այլ բազմութեան սբ̄ցն՝ որ անդ կային հաւաքեալ. ուստի եղեն բազում սքանչելիք ՚ի հիւանդս և յամ̄ ցաւագնեալս ։

Արդ՝ ո՛չ յայտ է ՚ի հաստատուն բանից խորենացւոյն, թէ փոխադրութիւն նշխարաց սբ̄ լուսաւորչին ՚ի թորդան՝ էր յառաջ քան զաւուրս իւր, (թերևս առ կթղկութ̄ մեծին սահակայ, և առ ժամանակօք բարձման թագաւորութե̄ հայոց յարշակունեաց՝ որ եղև իբր հարիւր ամօք յետ վախճանելոյ սբ̄յն գրիգորի, և գուցէ և՛ս վաղագոյն ըստ բուզանդայ), նոյնպէս յայտ է և ՚ի հաստատուն վկայութէ̄ ղազարայ փարպեցւոյ՝ թէ յաւուրս սբ̄ց վարդանանց էին փոխադրեալ գլխաւոր նշխարք լուսաւորչին յէջմիածին կամ ՚ի վաղարշապատ, ուր էր յայնժամ աթոռ կթղկոսութե̄. նոյնպէս և յաւուրս վահանայ մամիկոնոյ՝ ՚ի կթղկութե̄ յովհաննու մանդակունւոյ՝ որ նստէր ՚ի դուին, անդ ՚ի կաթուղիկէն դունայ էին. և էր սովորութի̄ հայրապետաց՝ զի յելս բանակի հայոց երթալ ՚ի պատերազմ, կա՛մ ՚ի դարձի նց̄ խաղաղութ̄, ՚ի հանդէս հանէին յառաջոյ նց̄ կամ ը̄ առաջ նց̄՝ ը̄ պատուական նշանի կենսատու խաչին և զնշխարս առաքելանման ճգնազգեաց նահատակին քի̄ ։ Բայց քանզի յաւուրս նորին վահանայ մամիկոնոյ առ թգ̄րութեամբ զենոնի կայսեր յայտնեցան և նշխարք սբ̄յն գրիգորիսի աղուանից կաթղ̄կսի, կարծեցին ոմանք՝ թէ այն իցէ գիւտ նշխարաց լուսաւորչին . յորմէ և օր տօնի գիւտի նշխարաց երկոցունց սրբ̃ց շփոթ լինի նշանակի յումանց : Այլ յայսմ միաբանին պատմիչք Հայոց՝ որ զկնի փարպեցւոյն , թէ զենոն կայսր խնդրեաց 'ի Հայոց յաւուրս բաբկենայ կթղ̃ սամուելի կաթողիկոսի զնշխարս սրբ̃յն գրիգորի . և եկին 'ի կոստանդնուպօլսոյ իշխանք կայսեր հանդերձ զօրօք բազմօք՝ մեծաւ հոգաբարձութ̃բ ը̃ս արքունի հրամանի զիրսն կատարել . և յոչ տալ թոյլ բնակչաց Տ̃ին և ազգին հայաստանեայց՝ զմերային բարիս առեալ ոչ ներեմք այլոց լինել ճոխութ̃ի , ամբոխք և խռովութիւնք յուզեցին : Բայց յոմանց այսպէս ասի , թէ զաղուանից կաթուղիկոսին գրիգորիսի ետուն զնշխարս . այլք թէ զգրիգորիսի արշարունեաց եպ̃սի . և այլք թէ զմերոյն լուսաւորչի : Արդ թէպէտև հաւանելի է , թէ տարան և մասն 'ի նշխարաց լուսաւորչին , բայց մեծ մասն տակաւին մնայ 'ի Հայս : Թո՛ղ զի և մասն մի 'ի նշխարաց անտի փոխադրելոց 'ի յոյնս՝ ասի սքանչելեօք ամփոփեալ 'ի բլրակի միոջ , որ կոչեցաւ Ջորեհանդիստ . ուր և համարի կատարեալ մարգարէութ̃ի սբ̃ լուսաւորչին . զի 'ի տեղւոջ անդ բնակեալ էին սբ̃ ճգնաւորքն յոհան և սիմէոն (յորոց յոհաննիսեանք և սիմէոնեանք) . առ որս եկն սբ̃ն գրիգոր 'ի կենդանութե̃ իւրում ը̃ս արդահատանաց սարասի : Եւ յորժամ դառնայր 'ի նոցանէ , նոքա ը̃ս ըղձից յեղանակի ձայն բարձեալ ասէին . գրիգորիոս , իցէ՞ եթէ եկեցցես և ս առ մեզ ։ Իսկ նորա պատասխանեալ զայս ինչ . եթէ ոգւովս ոչ եկից , մարմինս եկեսցէ առ ձեզ ։ Այս տեղի է ասեն , ուր յետոյ հրամանաւ կայսեր յունաց շինեցաւ բարձրաբերձ և զարմանալի եկեղեցի առ ՚ի պատիւ սրբոյ հօրն մերոյ և լուսաւորչին ոգւոց ։

Իսկ վասն նշխարաց մնացելոց ՚ի հայս գրէ յովհաննէս կաթողիկոս , թէ յաջորդն եզրի ներսէս շինօղն կոչեցեալ՝ ՚ի հիմնարկել եկեղեցի հոյակապ յանուն սրբոյն գրիգորի լուսաւորչին ՚ի ներքոյ չորից սեանցն հաստահեղուսիցն բաժանեալ , դնէ զնշխարս ոսկերաց սրբոյն գրիգորի՝ առ ՚ի յանշուշտ մնացականութեամբ պահիլ զանձուն երկնաւորի ՚ի գերչաց ապականչաց , և ՚ի պարծանս քրիստոնէական կարգաց ։ Իսկ զքրիստոսադրոշմ և զպատուական գլուխն ոչ ՚ի խորոջ , այլ արտաքոյ ՚ի գզրոցի եդեալ՝ դնէ ՚ի գանձարանս աստուածութեան ՚ի յոյս բարեաց փափաքողաց նմա և ՚ի բժշկութիւն ախտակրելոց ։

Յաւելուն դարձեալ գրել յետին պատմիչք մեր , թէ գրիգոր մամիկոնեան պատրիկ հայոց ՚ի գնալն դեսպանութեամբ ՚ի կոստանդինուպօլիս՝ հնարիւք բարձեալ իցէ և զոր անդ զնշխարս լուսաւորչին , և բերեալ ՚ի հայաստան . կամ թէ յաւուրս բագրատունւոյ աշոտոյ կամ սմբատայ լեալ իցէ այս վերադարձումն ։ Նա և զվերջնոյս այս աւանդութեան հետս գտանեմք ՚ի յունաց փոխանցեալ ՚ի հայս . քանզի գրի ՚ի հին յայսմաւուրս անդ՝ որ է թարգմանեալ ՚ի յունական և ՚ի հայկական կարգաւորութ՟է, 'ի սեպտ. 30. ը՟ նմին և վերածեալ 'ի Ճառընտիրս՝ պատմութ՟ի այսպիսի :

* Գիւտ նշխարաց սրբ՟յն գրիգորի լուսաւորչի, հռոփսիմեայ և գայիանեայ, (և սարգսի և բագոսի) : 'Ի ժամանակին՝ յորում հայոց թուականն երեքհարիւր և քսան և հինգ էր, (այն է յամի տն՟. 876.) առաքեալ լինի ներքինի ոմն, անուն նր՟ նիկողիմոս 'ի վասիլէ կայսերէ յունաց (արշակունւոյ) առ աշոտ իշխանաց իշխանն 'ի հայս (որ եղև առաջին թագաւոր բագրատունի). և հանդիպեալ 'ի գաւառին աշարունեաց 'ի զարեհաւանի գեղջ, ասէ. ունիմ ինչ պատմել քոյոյ մեծութ՟եդ վ՟ս գրիգորի հայոց մեծաց լուսաւորչի, և նախաշար վ՟դպին ձերոյ : 'Ի ժամանակս միքայելի կայսեր (նախորդին վասիլի, որ յամի 842. թգ՟րեաց մանուկ հասակաւ ը՟ թէոդորայ մօր իւրում, ը՟ հովանեաւ քաջ զօրավարին մանուէլի մամիկոնեան,) ներքինապետ ոմն՝ անուն նր՟ նիկողիմոս (ը՟ անուան իմոյ), ունէր զպատիւ պռոպոսութ՟ե. էր նր՟ պատանեակ մի ընդոծին՝ 'ի նահանգէն կոչեցե՟լ սկլաւիկք, զոր ունէր այս պիղծ. և ոչ ուստեք գտեալ բժշկու՟ի հանգոյն կնոջն տեռատեսի՝ որ յաւետարանին պատմի : Եւ նր՟ գոլով 'ի տեղի մի թագաւորական քաղաքին, որում անուն էր դափն (կմ՟ ռափն), յորում եկեղեցիք երեք ձեռակերտեալք. անուանեալ մինն՝ միասնական ս՟բ երրորդութ՟ն. և երկրորդն՝ յանուն նախավկայ

վկային ս̃րյն ստեփաննոսի . և երրորդն՝ յանուն կենսաբեր խաչին . ժամանեալ Նիկոդիմոս , և մտեալ յեկեղեցին կաթողիկէ՝ յորոյ վ̃ր ս̃բ երրորդութե̃ն կոչեցեալ անուն . յորում էր գիր մի (յ̃մ տապանակ) մարմարեան՝ պատեալ արծաթով , 'ի Հիմանէ եկեղեցւոյն (առ որմ տաճարին)'ի բազում ժամանակաց պնդեալ . զոր միայն նշխարս գոլ կարծէին ս̃րց ումանց (առանց գիտելոյ զանունն և զժամանակն) ։ Եւ 'ի մտանելն ն̃ր անդ , և պատանին (էր) ը̃ իւր , իսկոյն յանկարծակի գոչեաց պատանին ուժգին ձայնիւ՛ աղաղակելով , և շարժեալ սաստկապէս դողացաւ . և 'ի ձայն մեծ բարբառեալ՝ ասէ . Ո՛վ մեծդ գրիգորիոս եկեալդ 'ի Հայոց Տէ̃ն հալածել և դատել զիս՝ հանելով 'ի բնակութե̃ յայսմանէ . և դու հռիփսիմեա եկիր 'ի Հայոց երկրէն նեղել զիս . և դու գայիանէ և որ ը̃ ձեզ ս̃րք իցեն՝ հանդերձ սարգսիւ՛ և բագոսիւ՛ եկեալ կշտամբէք զիս ։ Եւ ասացեալ զայս 'ի լսելիս ժողովրդեանն՝ դիմեալ զարկաւ 'ի վ̃ր տապանին . և ժայտքումն յոյժ լինէր 'ի վ̃ր տապանին , զոր ոչ գիտացաք՝ զի՛նչ ոք էր . և փութացեալ քահանայիցն՝ 'ի բաց մաքրեցին՝ զոր արտաքս եբեր պատանին ։ Եւ եկեալ 'ի միտս պատանւոյն , և 'ի զգաստութե̃ մեծի եղեալ՝ անկանէր առ ոտս տ̃ն իւրոյ նիկոդիմոսի՝ ասելով . ո՛վ տ̃ր իմ , յաղթեցին ս̃բ վկայք՝ որ կան 'ի տապանի աստ , և բժշկեցին 'ի չար այսոյն պղծոյ ։ Յայնժամ առաքեաց նիկոդիմոս զեկուցանել զեղեալսն այտխոսի պապխոսին , որ էր վերակացու եկեղեցեացն , և իշխանութիւն ունէր բանալ զդրունսն . և ասէ . բե՛ր այսր զբանալի տապանիս այսորիկ , զի ծանիցուք՝ եթէ զի՞նչ է՝ որ 'ի սմա կայցէ . իսկ նր̃ հրաժարեալ չիշխէր բանալ զտապանն ։ Ապա մատուցեալ Նիկոդիմոս , և խորտակեալ զփականսն՝ բանայր զտապանն։ Ապա գտաք 'ի նա արկեղս չորս . մինն էր մեծագոյն մարմարիոն . և երեք արծաթեղէն պատկերս քանդակեալս . և մատեան մի՝ յորում գրեալ էր վ̃ն մարմարիոն արկեղն այսպէս . Այդ Նշխարք սբ̃յն Գրիգորի Լուսաւորչին Հայոց է . և էր բարձքն նր̃ ստուար և մեծագոյն իբրև սկայի ։ Եւ յերկրորդումն արկեղն կայր նշխարք սբ̃յն Հռիփսիմեայ , ձեռն իւր հատեալ 'ի յօդուածոյն . և այնքան ունէր զմորթն ձեռացն՝ հանդերձ հերովն և եղնգամբքն՝ որպ̃ առժամայն 'ի բաց հատելոյ . և էր գրեալ մատեան գրով առընթեր տապանին , եթէ Սբ̃յն Հռիփսիմեայ է ։ Եւ յերրորդումն արկեղն գտաք զնշխարս սբ̃յն Գայիանեայ ։ Եւ 'ի միումն զայլ սբ̃ցն զսարգսի և զբագոսի հանդերձ այլ ևս սբ̃վք ոմամբք . զոր յիշատակս նոցունց անուանց ոչ գտաք 'ի մատենի գրեալ ։ Եւ հանեալ արտաքս՝ առաջի անկաք հանդերձ բազմութ̃բ ժողովրդոցն , և 'ի ծունր իջեալ երկրպագութ̃ի մատուցաք ։ Եւ իսկոյն ազդ արարեալ մեծի Թագուհւոյն (Թէոդորայ ,) գալ յերկրպագութ̃ի հանդերձ միքայէլիւ որդւովն իւրով ։

Ապ-

Տուեալ այնուհետև պատրիարգին փոխեալ ը՟ իւր զուխտ սբ՟ եկեղեցւոյն սոփիայի, և դիմե՟լ ամենեցուն 'ի հրաշալի նշխարս սրբ՟ցն՝ որք գտան, հանդիպեալ մծ՟ային գանձուց նշխարաց մերոյ լուսաւորչին գրիգորի, և սբ՟յն հռիփսիմեայ, և այլ սրբ՟ցն՝ որ ը՟ նոսա, զորս վերագոյն ասացաք: Եւ ամենեքեան ուրախութ՟ մեծաւ օրհնէին զամենօրհնեալն ա՟ծ. և ը՟ արժանաւորութե՟ սրբ՟ցն փոխեցին զն՟ս 'ի հանդիստ ջահիւք լուցելովք, անուշահոտ խնկօք. և սահմանեցին զօրն զայն տօնախմբել ամ՟ յամի 'ի փառս սբ՟ երրորդութե՟ն: Իրագործեցան ասացե՟լքս 'ի ի՟ներորդի մեծի պասեքին՝ 'ի հինգերորդ շաբաթին, 'ի ժամանակս տ՟ն գէորգեայ հայոց կաթողիկոսին (որ նստաւ յամի տ՟ն. 876. և 'ի թուիս մերում. յիե), և աշոտոյ բարեպաշտ իշխանի, կարգեցաւ տօն սբ՟յն գրիգորի պարթևի 'ի փառս ամենասբ՟ երրորդութե՟ն ‖:

Քաջ միաբանի է այսմ աւանդութե՟ այն, զի 'ի քանի մի օրինակս հին տօնացուցից՝ 'ի հինգերորդ շաբաթու աղուհացից, գտնի * Սբ՟յն գրիգորի գիւտ նշխարացն ‖. և յայլ օրինակս այսպէս. * Սբ՟յն գրիգորի հայոց լուսաւորչին՝ գիւտ նշխարացն 'ի կոստանդինուպօլիս, և մուտն 'ի վիրապն ‖. և կի՟ յառաջադասութ՟. * Տօն է սբ՟յն գրիգորի լուսաւորչին, մուտն 'ի վիրապին, և գիւտ նշխարացն 'ի կոստանդնուպօլիս ‖: Ուր այժմ մուտն 'ի վիրապն առանձին կատարի յայնմ միջոցի, իսկ գիւտ նշխարացն հաստատեալ

է

է իբրև նոյն՝ ըստ տօնի փոխման նորա և ըստ առաջնում գիւտի 'ի լեառն սեպուհոյ ․

Արդ՝ որչափ հանդիսացեալ է այս պատմութիւն գիւտի նշխարաց 'ի կոստանդինուպօլիս՝ 'ի յունաց առեալ, նոյնչափ և լռութիւն է առ հայս և առ յոյնս, թէ զի՞նչ եղեն զկնի այն նշխարք ․ միայն ստոյգ է՝ թէ այժմ կէս մի 'ի նշխարաց սրբոյն է յէջմիածին հայոց, և կէս մի յարևմուտս ․ զի ոչ մնաց 'ի կոստանդինուպօլիս ։ Ըստ առաջնոյն գրի 'ի պատմութեան աթոռոյն հռոմկլայու յաւուրս շնորհալւոյն, թէ նշխարք սրբոյն գրիգորի 'ի բազում տեղիս գանձեցան ․ բայց * այն լուսընկալ և շնոր-
,, հաբաշխ՝ հանդերձ այլ նշխարօք, և նորին
,, պատարագամատոյց սեղանովն, և գաւա-
,, ռանն կայ յաթոռ սրբութեան իւրոյ յանձա-
,, հաստատուն գղեակ հռոմկլայն կոչեցեալ ‖ ։

Եւ յայտ է թէ 'ի փոխել աթոռոյն 'ի հռոմկլայէ 'ի սիս, անդ էր առ ժամանակ մի նորա աջն ․ իսկ 'ի փոխել աթոռոյն յէջմիածին՝ փոխադրեցաւ և այն ․ որ և ցարդ հաստատութիւն ունի ազգն համօրէն ․ միայն թէ և 'ի սիս ցուցեալ լինի այլ մասն 'ի նշխարաց սրբոյն՝ եդեալ 'ի նոյնպիսի անօթ արծաթի 'ի ձև աջոյ, և որք հաւատով պատուեն զոր և է մասն նշխարաց սրբոյն՝ եթէ աջ իցէ, և եթէ ձախ, զնոյն զօրութիւն պարտին ճանաչել միշտ 'ի սրբոյն այ ։

Իսկ ըստ երկրորդին՝ աւանդեն նէապօլսեցիք իտալիա, թէ 'ի ժամանակս հալածանաց կոստանդնուպօլսոյ յերեսաց պատկերամարտից կամ օտարաց՝ փախստեամբ ելին անտի կուսանք ոմանք 'ի կարգէ սբ՟յն բարսղի , և մտին 'ի նաւ՝ բարձեալ ը՟ իւրեանս զսրբազան աւանդս եկեղեցւոյ իւրեանց , ը՟ որս և զպատուական գլուխ սբ՟յն գրիգորի Հայրապետի Հայոց մեծաց՝ Հանդերձ քանի մի նշխարօք նորա . և ելեալ 'ի կամպանիա իտալիոյ՝ մասն ինչ 'ի նշխարաց անտի Հանգուցին 'ի ներետոն քաղաքի . իսկ զսբ՟ գլուխն Հանդերձ գործեօք ինչ վկայութ՟ե բերին 'ի մայրաքաղաքն նէապօլիս (որ և նաբօլի) . ուր և պաՀեցաւ պատուով առ նմ՟ յերևելի կուսաստանի . և յետ վախճանի նց՟ մնաց պատուական գանձն 'ի ձեռս լատին կուսանաց բենետիկտեանց՝ որք 'ի վանս անդ բնակեցան . և շինեցին Հոյակապ տաճար յանուն սբ՟յն գրիգորի ։ Որոյ վ՟ս գրէ բարոնիոս տարեգիր՝ Հաւատարիմ վկայ , թէ * զայսոսիկ ես ինձէն տեղեկացայ՝ յորժամ էի 'ի նէապօլիս , 'ի Հին յիշատակարանաց նորին եկեղեցւոյ ‖ ։

Ժամ է արդ՝ և զոր ես ինձէն աչօք իմովք տեսի 'ի մօտոյ՝ անդ 'ի նէապօլիս , ը՟ս կարգի վիպագրել 'ի յիշատակ յետնոց ։ Արդ՝ ը՟ս յաջողելոյ տ՟ն բարեխօսութ՟բ սբ՟յ Հօրս մերոյ (յորմէ ստէպ խնդրէի բազում փափաքմամբ ,) եղև ինձ 'ի ճանապարհորդութեան իմում՝ յամի տ՟ն 1810 . և 'ի թուականութ՟ե մերում . ռմծթ՟ . անցանել 'ի սիկիլիոյ 'ի կաղաբրիա , և գալ չորիւք ընկերօք ազգայնովք 'ի նէապօլիս . ուր 'ի Հինգերորդ աւուր մայիսի՝ .

սի՝ յետ պատարագելոյ յեկեղեցւոջ անդ ս՟բյն գրիգորի լուսաւորչին մերոյ, խնդրեցաք և տեսաք և համբուրեցաք զերկրպագելի նշխարս ն՟ր։ Ա՟ն զի 'ի տաճարի անդ՝ որ նու՛իրեալ է յանուն * ա՟ծայնոյն գրիգորի հայոց մեծաց եպ՟սապետի ||, 'ի կարգի բազմութե՟ խորանաց՝ մին կոչի մատուռն ս՟բյն գրիգորի լուսաւորչի . ուր կայր պատկեր ս՟բյն 'ի միջի հայրապետական զարդու՝ ահաւոր և փառացի՝ մատեան 'ի ձեռին, և առ նմա ոչ ոք այլ՝ բայց հրեշտակք ո՟յ չորս և հինգ շուրջ պատեալ . կայր և արձան ս՟բյն ուրոյն յաջմէ սեղանոյն . իսկ յերկուս որմունս նոյն մատրան՝ նկարեալ վարք ս՟բյն . 'ի միում՟ն ելք 'ի վիրապէն, և 'ի միւսում՟ն քարոզութ՟ի յետ ելիցն . ուր և որդատ խոզադէմ՝ այլովք անդամօք մարդ կատարե՟լ՝ 'ի լուր բանիցն կանխեալ՝ ահաբեկ և ցաւագին, և խոսրովիդուխտ կամ աշխէն աղաչաւոր վ՟ն նորա, ե՟ն։ Ընդ խորանաւ՝ որ է վէմ պատու՛ական փորեալ՝ տեսաք ընդ երկաթի վանդակ զերկոսին սրունս ս՟բյն գրիգորի կամ զոսկերս ոլոգայ ամբողջ՝ թխագոյն, բայց իբրև արծնեալ, ո՟պ փայտեգոյն ողորկ և փայլուն, ըստ ծայրիցն արծաթապատ և բեհեզապատ։ Եբաց ապա աւագերէցն ըզտապանակատեղի կամ զտաղաւար խորանին, ուր կայր տուփ մի փառաւոր . և 'ի միջի նորա շղթայ մի, զոր առաք 'ի ձեռս և համբուրեցաք, այն է ստնակապ ս՟բյն երկաթի՝ հինգ աղխաղխիւք օղից, է՛ որ երկայն և է որ կարճ՛, իբր ՚ի կիր արկեալ փոքր մի և մաշե՟լ, յար և նման ոտնակայլի արևելեան կալանաւորաց:

Յետ այնորիկ եկաք ՚ի բուն մենաստան անդր եկեղեցւոյս, ուր կային բենեդիկտեան պարկեշտաժողով կուսանք իբր քառասուն. յորս յարեալ էին յաւուրս յայսոսիկ և յայլմէ մենաստանէ կուսանք իբր վաթսուն. Թո՛ղ և զդաստիարակելի օրիորդս իբր հարիւր. ընդ ա՟մ իբր երկերիւր: Արդ ՚ի մտանել մեր ՚ի մեծ սենեակ վանդակապատ խօսարանի աբբասուհւոյն ՚ի տեղի փառաւոր և հոյակապ, ը՟ յառաջագոյն ժտելոյ մեր բարձեալ բերին իբր երեսուն կուսանք միաժողով՝ ջահիւք և մոմեղինօք՝ զպատուական գլուխ ս՟բյ հօրն մերոյ գրիգորի լուսաւորչի, որ միշտ պահի ՚ի ներքին գանձարանի մենաստանին: Այս էր ս՟բ և պատուական գանկն ամբողջ և մաքուր ՚ի գոյն Թխատեսիլ և փայլուն՝ հանգուցեալ ՚ի մէջ ապակւոյ՝ ՚ի շքեղ գզրոցի, որ էր անօթ արծաթի ոսկեզօծ՝ ՚ի ձև հովանոցի կառաց՝ իբր երկթզաչափ բարձրութ՟բ և լայնութ՟բ, ունելով ՚ի վերնակող՟մն ճակատու գիր ոսկեդրոշմ ՚ի բարբառ հռովմայեցւոց. * Ածայնոյն գրիգորիոսի հայաստանեայց վկայի գլուխ ||. ո՟պ և ՚ի ստորին կող՟մն յիշատակ նորոգ կազմութ՟ե գզրոցին ՚ի վանաց մօրէն. * Աննա ռուփփօ աբբասուհի՝ յամի տ՟ն. 1788 ||. Իսկ որ եցոյցն մեզ զս՟բ գլուխն զայն՝ կենդանի մայր վանացն կոչիւր Իզապէլլա գառաչչիօլօ: Որ և ետ բե-

բերել զկնի զայլ մասնատուփ նշխարաց արծաթի՝ ապակաւոր, թզաչափ մեծուբ̃. զոր զատուցեալ 'ի պատուանդանէն՝ որ և գոյր թզաչափ մի, անցոյց ը̃ պատուհանն՝ որ առ վանդակօք, և ետ 'ի ձեռս մեր՝ տեսանել 'ի մօտոյ և համբուրել. յորում կայր մին 'ի մեծ ատամանց սբ̃յն՝ կամ արմատն ատաման. և շղթայ մի բարակ ոլորեալ շուրջ ըզմասնատուփովն. և 'ի միջոցին երկու կոտորակք բարակ գաւազանաց, որովք ձաղկեալ է սբ̃ հայրն մեր՝ թանձրութ̃ին իբր ճկութի, 'ի գոյն կարմիր սևորակ, ո՛չ թէ երկաթի գաւազան իցէ ։ Ընդ յետ երկրպագելոյ մեր սբ̃ նշխարաց 'ի ձայն օրհնութե̃, 'ի վաղի́ն անդր և կուսանք զկնի տեսանելոյ զմեր պատարագ՝ ջերմ հաւատով ո՛չ ը̃ արարողութեան սբ̃ լուսաւորչին հայաստանեայց և իւրեանց պաշտպանի, նուագեցին և ինքեանք երգեհոնաւ 'ի ներքոյ վանդակի վերնատան զերգս օրհնութե̃ և զներբողեանն, զոր նուագեն 'ի տօնի լուսաւորչին 'ի բարբառ իւրեանց ։ (4)

Կայ 'ի նմին քաղաքի նէապօլսոյ և արծաթի կիսարձան լուսաւորչին, զոր ճանաչէ քաղաքն մի 'ի պաշտպան սբ̃ց իւրոց. զոր և ը̃ այլս հանին 'ի թափոր յաւուր տօնի սբ̃յն գենարիոսի եպ̃սի. յորոյ անուն է շինեալ մայր եկեղեցին, և չէ ինչ հեռի անտի և եկեղեցի և վանք լուսաւորչին. զոր կոչեն նէապօլսեցիք՝ սան կռէկօրիօ կմ̃ լիկուօրի արմէնօ. ո̃ր սբ̃ գրիգոր հայ. և տօնախմբեն զյիշատակ նորա 'ի սեպտեմբերի 30. ո՛չ և այլ լատինք և յոյնք . ը̄ նմին եղեալ է և 'ի յայսմաւուրս մեր 'ի նմին աւուր , և դարձեալ 'ի նոյեմբ . 18 :

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ :

(1) Պսակ պարծանաց մերոց ս̄բ հայրն մեր գրիգորիոս , որ և 'ի ժամագիրս յունաց կոչի պարծանք հայաստանեայց . և լուսաւորիչ համաշխարհական , ունի զայս առանձին պանծալի ձիրս , զի ոչ ոք գտաւ 'ի վ̄ր ե̄ի նման նմա տիրապէս ծնող ազգի միոյ միանգամայն , զոր ազգն ողջոյն այնպէս ծանիցէ 'ի փոքունց մինչև ցմեծամեծս 'ի սկզբանէ և այսր՝ գրով և անգիր . մինչ զի ոչ ինչ պակասի մեզ յայսմ մասին աներկբայ աւանդութե՛ , բայց միայն հետևողութի որդւոյս զկնի հօր մերոյ . զի որպէս նա լուսաւորիչ , նոյնպէս և մեք լուսաւորեալ գտցուք միշտ՝ ը̄ առածի մեծին վարդանայ վ̄դ̄ի , ճշմարիտ և ուղիղ հաւատով և անարատ վարուք ը̄ ա̄յ : Իսկ 'ի հանդէս աստուածութե՛ պատմական աւանդիցս՝ եթէ որ անաչառ քննէ , տեսանէ զբովանդակութի վկայաբանութե՛ ս̄բ հօրս մերոյ՝ զոր ը̄ բանից անգամ հաւատարմութե՛ ընդօրինակեցաք 'ի մեծէն ագաթանգեղոսէ , դուլ հարազատ և յստակ գրչութի դիւանական՝ յականատեսն և յականջալուր աւանդողաց արձանագրել . և զի գլուխ սոցա էր նա ինքն ագաթանգեղոս քաջ քարտուղար տրդատայ արքայի , չէք տեղի յերկուանալոյ և ը̄ մի նշանախեց ինչ . Թող զխնթական վրիպակ գրչաց , կամ զթերութիւն տարբերութեանս՝ որ ը̄ հայերէն ընթերցուած մեր , և ը̄ յունարէնն՝ որ առ մետափրաստեսի . զոր և քաղեն նմ՝ պատմիչք՝ ը̄ խորենացւոյն և ը̄ փարպեցւոյն . որք միով դարու զկնի փայլեցին . նոյնպէս և յայսմաւուրք նմ՝ ազգաց :

Իսկ զի այս այսպէս , ոչինչ ունին առաջի մեր մրախոի և իցէ անպատճառ քննութիւն առն վերջնոյ ոսխլաննգայ բոլլանդեան . որ թէպէտև այլով մասամբ քաջ գիտնաւոր , այլ անծանօթ գլխովին արևելեան հնութեց՝ 'ի թարգմանելն զյունական վկայաբանութիւն 'ի լատին՝ ձեռներեց եղև ինչ ինչ աւելորդ քննութիւնս ճարտարել

Իը՟դէմ ճշմարտութե՟ն իւրայն · և արդարև խօսեցաւ արտաքոյ սովորական հմտութե՟ն իւրոյ և զգուշաւոր արթնութե՟ն · շատ է այնպիսւոյն ախնատուճութին նշանակել ՚ի ծանօթութիս պատմութե՟ն հայոց ։ Անդր առաքեմք զբանասէրս և վասն այլոց պէսպէս պատմական տեղեկութե՟ց և քննութե՟ց · զի մեզ ոչ միայ ինչ յաւելուլ աստանօր, բայց միայն վկայել, փորձիւ, թէ ՚ի մէջ ամ՟ հին վկայաբանութե՟ց՝ յորս մաշեցաք զկեանս մեր, չիք քան զլուսաւորչեանս զայս՝ կարգաւորան, վայելչական, անկեղծ և բնական · վա՟յ և անկարօտ քննութե՟ն կրիտիսաց ։ Գիտեմք, զի գերաբնական ձև պատմութենն և ահաւոր հրաշքն հրաշացուցանեն զլսելիս, որպ՟ և զգրիչն հարկեցուցանեն անսովոր եղերօք իբր դիցաբանօղ երևիլ · բայց յայտ է որոց միտս ունին, զի ներքին մեծութի իրացն ոչ փոքրկանայ յարտաքին հանգամանաց բանից · և որ ոչն ժխտէ զսքանչելիսն ա՟յ ՚ի սուրբս իւր, ոչ ունի իրաւացի ինչ պատճառել և յայսմ մասին ։ Եւս առաւել, եթէ խորհեսցի ոք՝ զոր հարկ է խորհել խորագոյն, թէ անմարթ էր ազգի միոյ ողջոյն յանկարծակի ՚ի խոր խաւարէ կռապաշտութե՟ն ՚ի լոյս եկաւորիլ ճշմարտութե՟ն, քանզի, անյիշատակ առնել յոէն զամ՟ հետս մեհենաց և բագնաց, և եկեղեցեօք պայծառանալ, առանց այսպիսի նորատեսիլ և ընդոստուցիչ հրաշից մատինն ա՟յ ։

Վ՟յ և ս՟ր ոսկեբերանն տիեզերալոյս վկ՟այ ՚ի կրկին ներբողեանս իւր ՚ի վ՟ր փառաւորեալ ս՟ր լուսաւորչին մերոյ՝ առանց ը՟ բանս ինչ ածելոյ՝ զնոյն իսկ զագաթանգեղոսի զպատմութիւն յեղյեղէ, և պանծալի բանիւք սխրացուցանէ · զոր և քննիչք ոչ կարացին ժխտել, այլ հաստատեցին՝ թէ է յար և նման ոճոյ բերանին ոսկւոյ · իսկ թէ կամեցան ոմ՟ իմիք ը՟ քննութե՟ արկանել, ոչինչ տկարացուցին, այլ զօրացուցին · որպ՟ ունիմք ասել ՚ի ծանօթութիս վարուց յովհ. ոսկեբ ։

(2) Չունիմք, և ոչ կարեմք ունել երկբայութի ինչ, թէ բաց ՚ի վկ՟այութե՟է անտի սրբոյն գրիգորի յելան ՚ի վիրապէն՝ զոր ատենադպիրք նշանակեցին ը՟ գրով, որպ՟ ձեռագոյն եդեալ կայ ՚ի կարգի գրոցն ագաթանգեղոսի, գրեալ ս՟ր հայրն մեր լուսաւոր բանիւք և զայլ յաճախապատում ճառս · զոր և ունիմք ուրոյն ՚ի ձեռին ։ Զայս նշանակեն որոշ որոշ ս՟ր գրիգոր նարեկացին ՚ի մեկն. երգ. և գրիգոր մագիստրոս յատենաւորս իւր. և ս՟ր ինէլ ՚ի յայսմաւուրս իւր. և յայտ է թէ ՚ի նոյն հայի

տիրապէս և բանն ագաթանգեղոսի 'ի վախճան պատմութե՟ն. ուր յետ ասելոյ՝ թէ * երանելին ռըստակէս
,, գայր պայծառացեալ հաւատովքն, և հաստատուն
,, ա՟ծահաճոյ նիկիական կանոնօքն գայր երևել 'ի հայ-
,, աստան երկրին, առաջի դնէր թագաւորին և կաթու-
,, ղիկոսին ս՟բյ զբերեալ աւանդութիւն ||, 'ի վ՟ր ածէ.
* Որով ս՟բյն գրիգորի 'ի նոյն լուսաւոր կանոնսն յա-
,, ւելեալ, առեալ զիւր վիճակն զհայաստան երկրին
,, պայծառացուցեալ հանդերձ միաբանութ՟բ արքայիւն
,, տրդատաւ, և զա՟մ աւուրս կենաց իւրոց լուսաւո-
,, րէր: Ապա յետ այսպիսի գործոց առաւել պայծա-
,, ռագոյն (կմ՟ բարձրագոյն) վ՟դպութեի սկսեալ երա-
,, նելոյն գրիգորի 'ի ճառս յաճախագոյնս, դժուարա-
,, պատումս, առակս խորիմացս, դիւրալուրս, բազ-
,, մադիրս, շնորհադիրս, յորդարեալս 'ի զօրութէ և 'ի
,, հիւթոյ գրոց մարգարէականաց, ըստ ա՟մ ճաշակօք կար-
,, գեալս և յօրինեալս աւետարանական հաւատոյն ճշմար-
,, տութե || . ևն:

(3) Քանզի որ ննջման ս՟բ լուսաւորչին յառանձնութե՟ լերինն սեպուհոյ՝ ոչ եղև ստուգութ՟բ գիտելի, (եթէ ոչ գուցէ 'ի հովուեաց պատմելոյ զառաջին գիւտ նշխարաց ն՟ր.) նմին իբր յարմարութ՟բ ևեթ եդեալ է յիշատակ ս՟բյն 'ի սեպտ. 30. 'ի Հ. Յ. և Լ. միօրինակ: Զայս այսպէս գնելով և տ՟ր լէլի՝ հնարի պատճառս իմն տալ, յասելն աստանօր. * Իսկ զօր ննջման ս՟բ լուսաւորչին
,, հայոց՝ երանելին յոհան օսկեբերան հարկ եղև 'ի գե-
,, րահռչակ տօնի ս՟բ լուսաւորչիս զներբողեան ասել
,, ճառս, և խնդրել յո՟յ, և յայտնել նմա. զոր յիշէ
,, յա՟ծազարդից արանց ճառին ասելով. որ՟պս ասէ 'ի
,, սեպտեմբերի. Ի. լեալ զննջումն ս՟բ լուսաւորչին մե-
,, րոյ ||:

Այլ չէր ինչ հարկ՝ թէ օսկեբերանն խնդրիցէ և ընկալցի զյայտնութի զօրէն զայնմանէ, զի ը՟ հակառակն ցուցանի 'ի բանից անտի օսկեբերանին՝ թէ յաւուրս իսկ իւր յոյնք 'ի սեպտեմբերի Ի. տօնէին զս՟բ լուսաւորիչն. և գուցէ նաև 'ի կոկիսոն հայոց՝ ուր զճառն խօսեցաւ, այն որ էր տօնի ս՟բյն: Այլ ո՟չ պարտ է ասել, այն որ եւ ոչ 'ի ննջումն հայի, այլ՝ 'ի գիւտ մար՟մնոյ ն՟ր 'ի հովուեաց, զոր և առընթեր պատմէ անդանօր օսկեբերանն: Մ՟չ և իցէ՝ յարմարութ՟բ գրին (ասեմ) այս հաշւէք աւուրց եթէ առ յոյնս՝ յորոց առին և լատինք, և եթէ առ հայս՝ որք շարժական ամսովք վարէին, և

զան

զանշարժն 'ի յետին ժամանակս 'ի փոխ առին 'ի յունաց և 'ի հռովմայեցւոց ։ Յոյնք և լատինք միացուցեալ զտօն Լուսաւորչին ը̅ հռիփսիմեանց՝ զամիսն կատարման կուսանացս զհայերէն, որ էր վերջն հոռի ամսոյ, վերածեալ են 'ի վերջն սեպտեմբերի․ և հայք՝ որ ո՛չ ըստ աւուր ամսոյ կատարեն զտօնս, այլ ը̅ միջոցի շաբաթուց անկելոց 'ի մէջ երևելի տօնից տ̅րունականաց, տեսեալ թէ յայսմաւուրքն յունաց 'ի 30․ սեպտ․ դնեն զգր․ լուս․ ինքեանք ևս 'ի կարգի յայսմաւուրաց այնպէս են կարգեալ ը̅ անշարժ տօնմարի ։ Եւ երկրորդեալ են դարձեալ 'ի նոյեմբ․ 18․ որ̅ երևի՝ կամ հայելով յայն, զի հոռի ամսին անկանէր առ Լուսաւորչին 'ի նոյեմբեր․ կմ̅ չփոթելով ը̅ միջոցի գիւտի նշխարաց ս̅յն Գրիգորիսի աղուանից կ̅թղկսի, և կմ̅ ընդ մասնաւոր գիւտի նշխարաց Լուսաւորչին ։ Այլ այս հաշիւք ոչ ինչ հային 'ի մեզ, և ոչ օգտեն ինչ ազգին․ որ ը̅ կարգաւորութե̅ տօնացուցի՝ առանց որոշման աւուր ամսոյ՝ յայս ինչ միջոցի և յայն ինչ շաբաթու կատարէ զայս և զայն տօնախմբութի ս̅յն երրեակ․ ո̅ զմուտն 'ի վիրապ, զելն 'ի վիրապէ, և զգիւտ նշխարաց իւրև զօր փոխման ն̅ր․ զորոց գրեցաք յիւրաքանչիւր տեղիս ։

(4) Յամ քաղաքս՝ ուր գոյ երևելի բազմութի ազգիս մերոյ, գտանի և եկեղեցի մի յանուն ս̅ր հօրս մերոյ Լուսաւորչի․ որ̅ և վանք և անապատք յանուն ն̅ր՝ առաւել 'ի հնումն․ թող զխորանս նորա՝ որ յայլ եկեղեցիս, եթէ յօրևելս և եթէ յարևմուտս ։ Այլ զի մեք 'ի պատճառս նշխարաց ս̅յն յիշեցաք զվանս և զեկեղեցին Նեապօլսոյ, դրոշմեսցուք աստ և զյիշատակ տեղւոյն՝ զոր անձամբ ընդօրինակեցի 'ի ճակատէ եկեղեցւոյն․ ուր 'ի վ̅ր դրան փորագրեալ էր 'ի վիմի լատիներէն այսպէս․ * Տէօ Օբդ״․ Մաքս״․ Տիւօ Կռէկօրիօ Արմէնիէ „ Մայօռիս Ալքիէր״․ դէմբլում տիգամթում ||․ ո̅․ * Է (ա̅լ կմ̅ 'ի փառս ա̅յ)․ Ա̅ծայնոյն Գրիգորիոսի „ մեծին Հայաստանու Արքեպ̅սի՝ տաճար նուիրական ||։ Դարձեալ յաջմէ դրան (ը̅ ձախմէ մտանողաց) փորագրեալ էր նոյնպէս լատին գրով բանս այս․ * Օգոստա„ փառ այս մենաստան սրբաստան կուսանաց 'ի Հեղի„ նեայ գովելի ծնողէ մեծին Կոստանդիանոսի՝ յարքու„ նի նպաստից շինեալ յամի՝ 328, յետ տրիդենտեան „ սիւնհոդոսի՝ ակնարկութը̅ Պիոսի դ̅՝ կրօնաւորական „ պարսպաւ որմոց ամբողջապէս պարփակեցաւ յամի „ 1569․ յորում զառաջինն հանդիսական ուխտ ընծե_

,, գիկաեան արարողութբ սկսաւ անուանիլ (կմ նուէ-
,, րիլ)․ ապա յամի 1580․ տաճարն հանդիսապէս նուէ-
,, րեցաւ սբյն գրիգորի՝ մեծ հայրապետի հայաստա-
,, նեայց․ զի պաշտպանութն խոյրաւոր վկային ծիրա-
,, նազգեաց յօրինեսցէ զուխտ պարկեշտաժողով (կամ
,, զերգունեալ պարկեշտութին)||:

Իսկ 'ի ճախմէ գրան (Է ալիմէ մնանողաց) դրոշմեալ
էին այս բանք․ *'Ի պատրաստել առատաձեռն աբբա-
,, սուհւոյն գամիլլայ գօսսօյի զսակ ծախուց 'ի նուակա-
,, տիս (կմ 'ի նուէրումն) տաճարիս՝ յամի 1672, և 'ի
,, կանխել օրհասի նախ քան զկատարումն ոենչանից,
,, յամի 1679․ յութերորդ աւուր հոկտեմբերի, 'ի վսե-
,, մափայլ առաջնորդէ քաղաքիս 'ի գառաչչիօլօյէ, յա-
,, ւուրս մօր վանիս լուկրետիայ բիննեադելլէի, պայ-
,, ծառազարդ այս տաճար շքեղագոյն վայելչութբ՝ Է
,, քրիստոնէական հանդիսի եղև շնորհաւորեալ․ որով
,, յաղթական աստ հանդիսանայ Ածպաշտութիւն, որ
,, զմեծութն տիկնութն Ծի՝ ուխտիւք նուէրէ յօժարա
,, Ծյ ||: Իբր զի կուսանք վանիս լուսաւորչին էին առ-
հասարակ ղաւակք մեծատանց և ազնուատոհմ օրիորդք․
ապ Թէ՝ զր սբ հռիփսիմեանք՝ կուսանք արքայազունք
եկին յարևմտից 'ի մեծն հայս 'ի պատուել զսբ լուսա-
ւորիչն մեր, նոյնպս և սբ հայրն մեր Թադաղարմ պար-
Թևազեան եկն յարևմուտս 'ի պատուել զդասս սրբա-
նուէր կուսանաց : Տէս և յԾադուէ իտալիոյ Նաբօլի :

* * *

ՎԵՐՋ

ՎԱՐՔ ՍՐԲՈՅՆ

Ներսեսի մեծի՝ հայոց հայրապետի. և Խադայ եպ̃սի :

Հ. Նոյեմբ. 19. Խոր. Դ. 20—38 : Բուզանդ.
Դպր. Դ. և Ե : Մեսրոպերէց : Յովհ. Կաթ. և այլք :
Ճառընտ. Ի. Եր. ԿԷ—ՀԵ. և Ի. յԻԷ—յԷ :
Հարանց : (1)

ՍՐԲԱԶԱՆԻՆ Ի ՀԱՐՍ և 'ի հայրապետս հայաստանեայց եկեղեցւոյ, մարգարէական հոգւով առլցեալ, և առաքելական վաստակօք պայծառացեալ, սբ̃ հայրն մեր՝ մեծն Ներսէս առաջին՝ էր պարթեւ արշակունի 'ի սերնդոց սբ̃յ Լուսաւորչին, և հինգերորդ 'ի նմանէ, թ̃ թոռն թոռին նր̃. զի էր որդի աթանագինեայ որդւոյ սբ̃յ յուսկան՝ որդւոյ սբ̃յն վրթանիսի որդւոյ սբ̃յն գրիգորի: Որդ սա ինքն երանելին ներսէս դաստիարակեալ 'ի տղայ տիոց առ ոտս երջանիկ հաւուն իւրոյ սբ̃յ յուսկանն՝ սնաւ յերկիւղն այ̃ . և զգեցաւ հոգի ա̃ծպաշտութե̃ : Նա մինչդեռ մանուկն էր՝ առաքեցաւ 'ի հրահանգս դպրոցաց կեսարիոյ կապադովկացւոց . և վարժեցաւ անդ յամ̃ իմաստասիրական ուսմունս հելլենացւոց , եւս առաւել 'ի գիտութիւն ա՟ծային գրոց . և որ քան զոր յառաջադէմ գտաւ յընթացս առաքինութե՟ ա՟ծահաճոյ քաղաքավարութե՟ :

Ապա անցեալ 'ի կեսարիոյ 'ի կոստանդինուպօլիս՝ եւս քան զեւս զարգացաւ իմաստութե՟ և առաքինութե՟ . և սիրելի եղեալ յաչս յունաց և հայոց անդ եղելոց՝ փեսայացաւ միում յերևելի իշխանաց , որում անուն էր ասպիոնէս . և տուչութե՟ն ա՟յ ծնաւ որդի մի արու , որում անուն եդ իսահակ . այն ինքն է ս՟բն սահակ պարթևն : Եւ լսելի լինէր յառաջադիմութ՟ի և բարեհամբաւութ՟ի ներսիսի մինչև 'ի բնիկ աշխարհն իւր 'ի հայս : Եւ եղև 'ի ժամանակին յայնմիկ՝ իբրև մեռաւ փառներսեհ կաթողիկոսն հայոց յերկրորդ ամի թգ՟րութե՟ն արշակայ տիրանեան , խորհուրդ արարեալ եպ՟սաց ծ՟ին հանդերձ թագաւորաւն և նախարարօք՝ արժանաւոր ժառանգ լուսաւորչեան աթոռոյ համարեցան զնա ինքն զներսէս : Մ՟ոյ ստիպաւ հրեշտակս առաքեալ՝ եռուն բերել զնա 'ի կոստանդնուպօլսոյ 'ի հայս . թէպէտև բազմօք հրաժարէր երանելին , բայց 'ի բռնադատել զնա ազգին յօգուտ եկեղեցւոյ՝ ոչ կարաց ը՟դդէմ կալ կոչմանն ա՟յ : Միայն ազդ արար զեկոյց կանխաւ թագաւորին և մեծամեծաց նր՟ , թէ յընտրել ձեր զիս ձեզ հովիւ և առաջնորդ՝ պարտական դատիմ անաչառ յանդիմանել զօխալանս մեծի և փոքու , և վերածել զն՟ 'ի բարեզարդութ՟ի առաջին՝ որ առ մեծաւն գրիգորիւ, բառնալով զեկամուտ անկարգութիւս ։ Եւ ն՟ք յանձն առին զա՟մ բանս ն՟ր ․ և յղեցին զերանելին շքով ՚ի կեսարիա՝ ո՟պ երբեմն զլուսաւորիչն, առ ՚ի ձեռնադրիլ յեպ՟սութ՟ի յեպ՟սապետէն եւսեբեայ՝ յամի տ՟ն իբր ․ 364 ։

Եւ եղեն անդ մեծահրաշ սքանչելիք ՚ի տ՟նէ յօրհնիլ ս՟րյն ներսեսի ․ քանզի ՚ի ժամ օծութեան տեսանէին ակներև ա՟մ բազմութ՟ի ուխտին և ժողովրդեանն զհոգին ս՟բ ա՟յ, զի թռուցեալ ՚ի ս՟բ սեղանոյն աղաւնակերպ տեսլեամբ՝ էջ և նստաւ ՚ի վ՟ր գլխոյն Ներսեսի, ո՟պ և ՚ի վ՟ր բարսղի կեսարացւոյ՝ որ ասի ձեռնադրեալ ՚ի նմին ժամու ՚ի քահանայութ՟ի կ՟մ յեպ՟սութ՟ի ։ Յետ այնորիկ յորժամ հրաւիրեցաւ երանելին ներսէս մատուցանել զա՟ծային պատարագն ք՟նյապետական հանդիսիւ, էջ յերկնից ՚ի վերուստ հրեղէն սիւն լուսոյ ՚ի վ՟ր եկեղեցւոյն, և լսելի եղեն ձայնք երկնաւոր զօրաց՝ որք նուագէին ձայնակցութեամբ զերեքսրբեան օրհնութ՟ին ։ Իսկ զկնի արձակման պատարագին՝ յորժամ ելանէր ս՟բ հայրապետն ներսէս ՚ի տաճարէ անտի, երևեցան երեսք ն՟ր լուսափայլեալ հանգոյն նախամարգարէին մովսէսի յէջս սինէական լերին ․ և ահ կալաւ զա՟մ տեսօղս ․ և սկսան ամենեքին երանել հօտին՝ որում ընտրեցաւ յա՟յ հովիւ այսպիսի ։

Դարձ առնէր այնուհետև յաթոռ իւր ՚ի հայաստան աշխ՟ ․ և ՚ի Ճանապարհին՝ ընդ որ

ան

անցանէր , ը՟ առաջ ելանէին նր՟ բազմութի՟ք 'ի քաղաքաց և 'ի գիւղից . քանզի լուեալ էր և նշ՟ զսքանչելիսն՝ որ եղեն 'ի վր՟ նորա . և խնդրէին զօրհնութիւն առն ա՟յ . մինչ զի և ոչ սակաւ նշանք բժշկութե՟ եղեն նովաւ 'ի վերայ ախտաժետաց : Իսկ իբրև եմուտ 'ի Հայս , հանդիպեցաւ ը՟ առաջ նր՟ Թագաւորն Արշակ հանդերձ նախարարակոյտ զօրօք յառիւծ անուանեալ լերինն . և առեալ ածին զնա պատուով յաթոռ իւր յէջմիածին վաղարշապատու . և եղև անպատմելի ուրախութի ազգին համօրէն . զի հայէին 'ի նա իբրև 'ի հրեշտակ ա՟յ , և համարէին 'ի նմա տեսանել զկենդանի նահատակն ք՟ի զմեծն Գրիգորիոս :

Սա արդարև նման նախահաւուն իւրոյ մեծ լուսաւորչին հոգւոց՝ ծագեաց մեծն ներսէս յա՟ս հայոց , և նորոգեալ պայծառացոյց զեկեղեցի հայաստանեայց՝ ըստ սահմանին աւանդելոյ 'ի ս՟բյն գրիգորէ և յորդւոց և 'ի Թոռանց նր՟ , 'ի բաց բառնալով զանշքու՟ս և զանկարգութիս մուծեալս 'ի ձեռն ծոյլ և թուլամորթ մադկանն յանբարի ժամանակին , և 'ի վր՟ բերելով զայլ ևս օրէնս բարեկարգութե՟՝ զոր տեսես 'ի յունաց ազ՟ին :

Սա բուռն հարեալ զկատարեալ մշակութ՟ե հոգւոց՝ դուն գործէր զարման մատուցանել ամենեցուն ը՟ ա՟մ վիճակի՝ անձամբ և գործակցութ՟ ընտիր ընտիր պաշտօնէից . զտգէտսն ուսուցանէր , զմոլորեալսն դարձուցանէր . զանուղղայս յանդիմանէր , և

ըղզհլուսն յորդորամիտս 'ի բարիս գործէր. և ա͞ծատուր պարգևօք վ͞դպութե͞ն և շնորհօք նշանագործութե͞ սքանչելի լինէր. և օրինակաւ վարուց սրբութե͞ն՝ հայելի ա͞մ առաքինութե͞ց երևէր ։ Եւ տեսեալ ամենեցուն զկատարեալ ողորմածու͞թ սր͞բյն 'ի վ͞ր աղքատաց, այնուհետև և ինքեանք զուարթամիտ բաշխէին զինչս իւրեանց 'ի պէտս կարօտելոց և եկեղեցեաց ։

Արար սբ͞ հայրապետն Ներսէս հաւանութե͞բ Արշակայ արքայի և ժողով եպ͞սաց և աւագ իշխանաց յաշտիշատ տաճարին իբրև 'ի նախկին եկեղեցի հիմնարկեալ 'ի սբ͞ Լուսաւորչէ ։ Ուր օրինադրեաց առաւելապէս, Նախ՝ զօրինաւորն պահել զկարգ աստիճանաց և իշխանութե͞ 'ի մէջ եկեղեցւոյ, նոյնպէս և զկարգ պատուոյ և երիցութե͞ յարքունիս. ո͞պ զի 'ի խաղաղութե͞ մարթասցին տեսանել զեկեղեցին և զթագաւորութի͞ն ։ Երկրորդ՝ պահել զօրինաւոր կարգ ամուսնութե͞՝ ցեօթն ազգ, և խորշիլ ը͞ս կանոնաց նաև 'ի մերձաւոր խնամութենէ. զի մի՛ լիցի ումեք յիշխանաց և յազատաց մերձաւորիլ ը͞ն ազգականս՝ պատճառանօք պահելոյ զհայրենի ցեղապետու͞թ ։ Երր͞դ՝ պահել զկարգ թաղման ը͞ս օրինի քրիստոնէութե͞, և ո՛չ հեթանոսական օրինօք կոծել 'ի վերայ մեռելոյն՝ իբրև անյոյսք 'ի յուսոյ հասարակաց յարութեան ։

Չորրորդ՝ չհալածել զուրուկս և զպիսակոտս հրէական խտրանօք և հեթանոսական անգթու՟թ յանբնակ վայրս՝ անդարման և սովալլուկ ՚ի կերակուր գազանաց, այլ ՚ի պէտս ա՟մ ցաւագնոտաց շինել ուրոյն ուրոյն տեղիս ը՟ունելու՟թ ՚ի բարեխառն վայրս գաւառաց գաւառաց հայոց աշխ՟ին · ուրկանոցս վ՟ն բորոտից, անկելանոցս վ՟ն կուրաց, կաղաց և այլոց հաշմանդամից · հիւանդանոցս, որբանոցս, այրիանոցս, աղքատանոցս, օտարանոցս, հիւրանոցս և հոգետունս, կարգելով գիւղս և ագարակս ՚ի պէտս ռոճկաց ն՟ց՝ հանդերձ վերակացուօք և պաշտօնէիւք · և գլուխ կարգէր ամենեցուն սոցա իբրև կոնոմոս և տընտես ՚ի հոգաբարձութ՟ի հաւատարիմ զառաքինի սարկաւագն իւր զերանելին Խադ, որ էր ՚ի գաւառէն կարնոյ ՚ի մարդաց գեղջէ : Հինգերորդ՝ կանոնեաց առանձնացելոցն յաշխ՟է սիրել և պահել զառանձնութ՟ի իւրեանց ը՟ սահմանեալ կարգաց կրօնաւորութ՟ե · մի՛ յումպէտս դեգերիլ ՚ի քաղաքս և ՚ի շէնս ՚ի տունս աշխ՟ականաց, և բնականալ արտաքոյ վանորէից · և զի բազմացեալ էին կրօնաւորք, զորս ոչ տանէր արդեօք թիւ կրօնաստանաց, սահմանեաց շինել զայլ ևս վանս միաբանակեցաց և եղբայրանոցս, և մենաստանս և միայնանոցս և խրձիթս՝ ը՟ իւրաքանչիւր վիճակի միայնակեցութ՟ե · և կացոյց ՚ի վերայ ամենեցուն սոցա տեսուչ և հայր հասարակաց զշաղիտա զայր առաքինի՝ զաշակերտ մեծ ծերոյն դանիէլի, և զեպիփան հանդոյն նմին, ևս և զեփրեմ և զգինդ սլկունի · թո՛ղ զառանձին առաջնորդս ընտրեալս և կար-

գեալս

դեալս 'ի վր՟ իւրաքանչիւր ուխտից ։

Այսու օրինակաւ վայելչացեալ պայծառացաւ Հայաստան ամենայն իբրև զդրախտ Այ՟ առ սբյն՟ Ներսեսիւ՝ ոպ՟ տունն Իէլի՟ առ Մովսեսիւ ․ յամ՟ քաղաքս և 'ի գիւղս՝ 'ի շէնս և յանշէնս փայլէր նորոգութի՟ և բարեզարդութի՟ շինութե՟ ․ կանգնեցան նորանոր տաճարք և վանորայք ․ բազմացան պաշտօնեայք եկեղեցւոյ ․ և լցան լերինք կրօնաստանօք՝ ոպ՟ առ մեծն Անտոնիւ յեգիպտոս ․ քանզի ընդ մեծ և ը՟ փոքր՝ երկու հազար և քառասուն վանս ասեն շինեալ 'ի սբյն՟ Ներսիսէ ։ Բազմացոյց և զդպրոցս և զկրթարանս յոյն և ասորի դպրութե՟ ․ (զի ոչ գոյր տակաւին գիր հայերէն ․) և հոգ յանձին կալաւ՝ զի որք յաստիճան եկեղեցւոյ հրաւիրին, կիրթ գտանիցին 'ի մարդս գիտութե՟ և ածային՟ իմաստութե՟ ։

Իսկ վայելչուի՟ և զարդ հայրապետանոցին իւրոյ էր ասպնջական լինել աղքատացն Քի՟, և սեղան հայրապետին սբյ՟ կարգեալ էր յընդունելութի՟ ամ՟ կարօտելոց ․ թող զորս արտաքոյ խնամարկէր ․ ոչ նստէր 'ի ճաշ կամ յընթրիս առանց բարձակից աղքատաց և կուրաց, կաղաց, և ցաւագնելոց ․ որոց բազում անգամ անձամբ ծառայէր սբ՟ հայրապետն՝ ջամբելով զկերակուր, և լուանալով զձեռս և զոտս նց՟, ոպ՟ և օծանէր՝ պատէր և դարմանէր զվիրաւորս ․ և զամ՟ ինչս իւր 'ի պէտս նց՟ ծախէր ։ Եւ 'ի վր՟ ամի՟՝ սբ՟ և ընդդաստ արթնութբ՟ հսկէր 'ի վր՟ հօտին ․ զամ՟

մարդ պատրաստական յարդարէր յունկնդրութիւն բանին ա՟յ. զի զոր ասէր՝ նախ ինքն առնէր. և ոչ դադարէր զցայգ և զցերեկ 'ի խրատելոյ զամենեսին, և 'ի բողոքելոյ առ ամենեսին վկայութ՟բ ա՟ծային պատգամաց. և զառաջնորդութիւն համօրէն եկեղեցեացն Հայաստանեայց անձանձրոյթ և անվրէպ 'ի

գլուխ տանէր :

Այսպիսի կարգօք վայելչութեան պայծառացեալ Հայաստանեայց յաւուրս մեծին Ներսեսի՝ միաբան խորհրդով եպ՟սաց և իշխանաց հանդերձ Թագաւորաւն հաստատեցին, զի կաթողիկոսն Հայոց՝ այն է ընդհանրական եպ՟սպետն ազգին մի ևս կարօտասցի ձեռնադրութիւն առնուլ յեպ՟սպետէն կեսարիոյ ը՟ս առաջնոցն սովորութեան, որ և ոչ սակաւ դժուարութիւն և զժտութիւն առթէր ը՟դ պէսպէս գլխոց 'ի մէջ յունաց և Հայոց, այլ յեպիսկոպոսաց ազգին ձեռնադրեսցի՝ որպէս պատրիարգ ազգային. վ՟ն որոյ միանգամայն պատրիարգ՝ ս՟բ Հայրապետ ինքնագլուխ անուանեցին զմեծն Ներսէս. և այն սովորութ՟ի մնաց 'ի յաջորդս աթոռակալս ն՟ր մինչև ցայսօր, ունելով և զայն աւանդ հաստատուն՝ եթէ և 'ի սկզբանէ անտի ս՟բն Գրիգոր այսպիսի պատուով վերապատուեցաւ 'ի Հռովմայ դահէն առ քահանայապետութ՟բ ս՟բյն

սեղբեստրոսի :

Ընդ այն ժամանակս ծագեաց թշնամութիւն ընդ Արշակ արքայ Հայոց և ը՟դ Վաղենտիանոս կայսր Հռովմայեցւոց. վ՟ն որոյ սպան կայսրն զեղբայրն արշակայ զտրդատ՝ որ կայր առ նմա 'ի պատանդի, և առաքեաց զսպարապետ իւր զմեծն Թէոդոս սպանիացի՝ զօրու ծանու 'ի վերայ հայոց աշխարհին ։ Յայնժամ զահի հարեալ արշակայ՝ աղաչեաց զս̅բ հայրապետն Ներսէս՝ գտանել իւրով իմաստութ̅բ զհնարս հաշտութ̅ն, և զիջուցանել զցասումն ինքնակալին ։ Իսկ ս̅բն Ներսէս ել գնաց անդանդաղ ը̅ առաջ Թէոդոսի արամբք պատուականօք. և հաւանեցոյց զնա ողոք բանիւք՝ չառնել ինչ վնաս աշխարհին. և ապա դէմ եդեալ չոգաւ ը̅ նմա մինչև 'ի դուռն արքունի. և ա̅ծիմաստ զգօնութ̅բ և շնորհաբուղխ շրթամբք բերանոյ իւրոյ՝ համոզեաց զինքնակալն 'ի խաղաղութի̅ ։ Յայնժամ մեծապէս սիրով անսաց կայսրն, և մեծարեաց յոյժ զս̅բ հայրապետն. և ետ 'ի ձեռս ն̅ր զայլ ևս պատանդս հայոց. յորս էին և տիրիթ արտաշիսեան՝ եղբօրորդի արշակայ, և գնէլ տրդատեան՝ միւս եղբօրորդի նորուն արշակայ. և վ̅ն զի 'ի զուր սպանեալ էր կայսեր զտրդատ, առաւել գութ ցուցեալ 'ի վերայ գնէլայ որդւոյ նորա՝ ետ նմա պատիւ հիւպատոսութ̅ե և գանձս բազումս ։ Իսկ 'ի վ̅ր ա̅մի՝ լուեալ, թէ մեռեալ է կինն արշակայ արքային հայոց, առաքեաց 'ի տիկնութ̅ի նորա զուլումպիադա անուն օրիորդ չքնաղ և գովելի յազգականութ̅է իւրմէ (զոր ոմանք քոյր կոչեն կայսեր) ։ Իսկ այնպէս դարձ արար փառօք մեծն Ներսէս 'ի հայս, և ուրախ արար զամենեսին, առաւել ուել զթագաւորն զարշակ ։

Բայց արշակ առ ոտն եհար յետ սակաւուց զվաստակս սրբոյն ներսեսի և զսէր կայսերն, յանհնարին չարիս հակամիտեալ գործակցութեամբ տիրիթայ ։ քանզի իբրև ետես տիրիթ՝ թէ գնել հօրեղբօրորդի իւր մեծացաւ յոյժ, և փեսայացաւ անդովկայ սիւնեաց նահապետի՝ առեալ 'ի կնութիւն զդուստր նորա զփառանձեմ մեծահանդէս շքով իբր թագաւորական հարսանեօք , չարախօս եղև զնմանէ առ արշակ ։ Եւ արշակ քանզի ակն եղեալ էր յինչս գնելայ՝ միանգամայն և 'ի կին նորա , ետ սպանանել զգնել յորս , և էառ զփառանձեմ առ իւր ։ և զի դեռ կենդանի էր նոր թագուհին ոլոմպիադա , փառանձեմ ետ անօրինաբար սպանանել զնա , խառնելով 'ի ձեռն սուտ քահանայի միոյ մրջնիկ կոչեցելոյ զմահադեղ 'ի դեղն կենաց 'ի խորհուրդն սուրբ ։ և ինքն եղև փոխանակ նորա թագուհի ։

Զայս ամենայն չարիս արշակայ և զգործակցաց նորա տեսեալ սրբոյ հայրապետին ներսէսի՝ անէծ զնոսա ։ և առանձնացեալ մեկուսի 'ի վաղարշապատ 'ի թագաւորական քաղաքէ՝ սուգ էառ 'ի վերայ արշակայ , որպէս սամուէլ 'ի վերայ սաւուղայ ։ Յետ այսորիկ 'ի թշնամութիւն դարձան ընդ արշակայ նախարարք հայոց 'ի պատճառս արշակաւանայ վատանուն քաղաքի , և գրգռեցին ընդդէմ նորա զշապուհ արքայ պարսից ։ Մինչդեռ յայն վարանս կայր արշակ , լուեալ և վաղեսի կայսեր յունաց

եղ-

եղբօրն վաղենտիանոսի՝ թէ արշակ նշկահեալ զհռովմայեցիս՝ միաբան է ընդ պարսիկս, առաքեաց զթէոդոս զօրավար զօրօք բազմօք՝ աւերել զտ՟ն հայոց: Յայնժամ յա՟մ կողմանց տագնապեալ արշակայ՝ դիմեաց անդրէն առ ս՟բն ներսէս, միջնորդ ունելով զեպ՟սունս և զոմանս յաւագանւոյն, և խոստանալով ապաշխարել 'ի վերայ ա՟մ չարեաց իւրոց, միայն թէ գտցէ հայրապետն հնարս խաղաղութ՟ե :

Իսկ մեծն ներսէս զիջեալ յաղաչանս այլոց՝ եկն և հաշտեցոյց նախ զնախարարս ը՟ թագաւորին, դնելով ուխտ 'ի միջի, զի թագաւորն յայնմհետէ զհետ լիցի ուղղութ՟ե և շինութ՟ե, և նախարարքն ցուցցեն նմա զարժանի պատիւ հպատակութ՟ե : Ապա երթեալ միասանգամ անձամբ ը՟ առաջ մեծին թէոդոսի՝ արգել զնա չառնել ինչ աւեր տ՟ին հայոց, խոստանալով տալ նմա հարկս և պատանդս զորդիս ոմանց 'ի նախարարաց, ընդ որս և զպապ արքայորդի : Իսկ թէոդոս երկիւղած յա՟յ դիւրաւ զիջաւ յաղաչանս ս՟բյն. այլ յորդորեաց զնա գալ ը՟ իւր վերստին 'ի դուռն, և անձամբ հանձել զթ՟գւորն : Յանձն էառ հովիւն քաջ վ՟ն օգտի իւրում հօտի, և գնաց ը՟ թէոդոսի հանդերձ պատանդօք և թղթովն արշակայ 'ի կոստանդինուպօլիս :

Իսկ վաղէս՝ որ էր աղանդովն արիոսեան, և բարուքն ժանտ, ը՟ լսելն զգալուստ առն ա՟յ ներսեսի՝ թափեաց զա՟մ ցասումն իւր 'ի վերայ նորա. քանզի դիտելով զնա կատարեալ վճ̃պ ուղղափառութե̃ և անաչառ յանդիմանիչ մոլորութե̃՝ իսկ և իսկ հրամայեաց աքսորել զնա հանդերձ երկու սարկաւագօք նր̃ և քանի մի քահանայիւք ։ (2)

Եւ քանզի աւուրքն էին ձմերայնոյ, 'ի նաւարկել սոցա 'ի տեղի աքսորանաց՝ յարեաւ 'ի ծովու հողմ դառնաշունչ, և ընկեց զնաւն յեզր անբնակ կղզւոյ միոյ. ուր ղ.քարի հարեալ նաւուն խորտակեցաւ. այլ որք 'ի նաւուն էին՝ իջեալ 'ի մակոյկն՝ ապրեցուցին զանձինս 'ի ցամաքն. և դադարեցան 'ի կղզւոջն յայնմիկ. (որ ը̃ աւանդութե̃ ումանց կարծի լինել մի 'ի կղզեացն մարմառայ ծովուն, որ այժմ յայլազգեաց եասը ատա կոչի, ո̃պ թէ կոչելի իցէ ներսեսի կղզի)։ Եւ զի ոչ գոյր նոցա ինչ ուտել՝ բաց յարմատոց ծառոց, տեսչութե̃ն ա̃յ և աղօթիւք ս̃րն ներսեսի ընկենոյր ծո̃վն յիւրմէ զձկունս 'ի կղզին. յորոց առատապէս կերակրէին զամիսս իբր ութ կամ ինն, ցորչափ մնացին անդ. այլ ինքն ս̃րն ներսէս կամաւոր անսուաղութբ̃ ձգնէր, և յաւուրն միանգամ դոյզն ինչ մի առնոյր 'ի բերան ։ Բղխեցոյց երանելին աղօթիւք և ջուր ցուրտ և քաղցրահամ 'ի կղզւոջն. և էր հանապազորդեալ յաղօթս ա̃յ ։

Իբրև մեռաւ վաղէս չարաչար մահուամբ, և թագաւորեաց փոխանակ նորա բարեպաշտն թէոդոս՝ գահակից լինելով գրատիանոսի կայսեր և փոքուն վաղենտիանոսի, հաւանութբ̃ նոցին յետս դարձոյց յաքսոր տորանաց զամ՟ սբ՟ Հայրս․ ընդ որս և զմեծն Ներսէս ետ ածել պատուով մեծաւ և փառօք 'ի Թագաւորեալ քաղաքն․ և նստոյց զնա յերևելի տեղւոջ 'ի մէջ սբ՟ց Հայրապետաց ժողովոյն կոստանդնուպօլսոյ, որ գումարեցաւ յաւուրսն յայնոսիկ ը՟դէմ Հոգեմարտին մակեդոնի և այլոց հերձուածոց ժամանակին։

Եւ մինչդեռ հանդերձեալ էր սբ՟ն Ներսէս դառնալ յաթոռ իւր, լուաւ զվտարանդուն՟ և զչարաչար մահ արշակայ Հայոց արքայի, և զաւեր Տ՟րն յերեսաց պարսից․ վ՟յ ապաչեաց զմեծն Թէոդոս՝ Թագաւորեցուցանել զպապ արքայորդին, որ կայր անդէն 'ի կոստանդինուպօլիս, և առաքել 'ի Հայս զօրօք յունաց՝ առ 'ի վանել անտի զպարսիկս։ Եւ իբր․ արար մեծասէր կայսրն զամ՟ ը՟ կամաց սբ՟յն Ներսեսի, դարձ արար սբ՟ Հայրապետն հանդերձ պապաւ և բանակաւ կայսեր յ[illegible] իւր։ Յայնժամ առաքեաց արքայն պարսից գունդ ստուար 'ի վերայ Հայոց․ և Հայք ժողովեալ 'ի մի ը՟ կայսերական զօրու՝ Ճակատեցան ը՟դէմ պարսից։

Եւ 'ի խմբել պատերազմին՝ օրհնեաց սբ՟ Հայրապետն Ներսէս զզօրավարս և զզօրս Հայոց և յունաց․ և խաչակնքեալ 'ի վ՟ր զինուց ն՟ց՝ քաջալերեաց զն՟ս աներկիւղ մարտնչել ը՟ Թշնամիս խաչին ք՟ի։ Եւ ինքն ելեալ 'ի գլուխ լերինն Նպատայ՝ համբարձ զձեռս իւր յաղօթս, և եկաց բազկատարած 'ի ձև խաչի՝ անխոնարհելի պահելով զբազուկսն ը՟ օրինակի նախամարգարէին մովսեսի , մինչև պարտեցաւ երկրորդն ամաղէկ · քանզի հարին և խորտակեցին զօրք քրիստոնէից զճակատն պարսից 'ի հարուածս մեծամեծս , և զմնացորդս նց՟ հալածական արարին յերկրէն հայոց ։ Եւ յետ յաղթութե՟ պատմէր բանակն ոմ՟, թէ տեսանէաք զտ՟րն ներսէս՝ որ երթայր առաջի , և ձեռամբն ցուցանէր մեզ զթշնամիսն՝ վանել զնս՟ զօրութե՟ խաչին քս՟ի ։

Եւ եղև յետ խաղաղելոյ երկրիս հայոց յերեսաց պարսկական մարտին , դնէր վկայուե՟ մեծն ներսէս , և աղաչէր զթագաւորն և զա՟մ իշխանսն գնալ յօրէնս և 'ի պատուիրանս տ՟ն անարատութե՟ , և վկայ ունել հաւատոցս քրիստոնէութե՟ զգործս բարութե՟ ։ Եւ թագաւորն պապ՝ մանուկ հասակաւ և բարուք խակամիտ՝ գնաց զճանապարհ կորստական , ծառայելով ամօթալի ախտից · մինչև զզուելի լինել ամենեցուն · նմին իրի ընդէպ խրատէր զնա և յանդիմանէր ս՟բ հայրապետն ներսէս · իսկ նր՟ անսաստ գտեալ , և ը՟դէմ խթանի աքացեալ , նիւթեաց մահ ս՟բյ հայրապետին ։ Քանզի կոչեցեալ զնա 'ի ճաշ սիրոյ պատճառաւ յեկեղեաց դաւառի 'ի գիւղն խախ , խառնեաց դեղ մահու 'ի բաժակն գինւոյ , և արբոյց նմա ։

Իբրև էանց պահ մի 'ի վր՟ , զգացեալ ս՟բյն զցաւն՝ 'ի միտ էառ զդաւաճանութի՟ անօրէն արքային · բայց ոչինչ խռովեցաւ յանձն իւր , այլ գոհացաւ զա՟յ , զի 'ի պատուի՟ անուան

նր՟

ն՟ր մեռանի՝ վկայելով ճշմարտութե՟ և արդարութե՟ օրինաց 'ի վրէժխնդրութի՟ փառացն ա՟յ ։ Եւ կամեցեալ 'ի զեղջ ածել զանապաշաւ Թագաւորն՝ խօսել սկսաւ երանելւոյն, և ասէ ․ օրհնեա՛լ է Տ՟ր Ա՟ծ մեր , որ արժանի արար զիս ըմպել զբաժակս զայս , և հասանել մահուս՝ որ վ՟ն տ՟ն է ․ որում և ցանկացեալ իսկ էի 'ի մանկութէ՟ ․ արդ զբաժակս փրկութե՟ ընկալայց , և զանուն տ՟ն կարդացից ․ զի և ես հաւասարեցից հարցն իմոց առաջնոց՝ հասանել 'ի մասն ժառանգութե՟ ս՟րցն 'ի լոյս ։ Այլ քեզ ո՛վ Թագաւոր արժա՛ն էր իբրև զայր Թագաւոր յայտնի հրաման տալ և սպանանել ․ զի ո՞վ էր՝ որ արգելոյր զքեզ , կամ ո՞վ էր՝ որ պահէր զձեռն քո 'ի գործոյ՝ զոր ինչ կամէիր գործել ։ Բայց դո՛ւ տ՟ր թո՛ղ սոցա զայս գործս՝ զոր ինչ գործեցին յիս ․ և ընկա՛լ զհոգի ծառայիս քո , որ հանգուցիչդ ես ա՟մ աշխատելոց , և կատարիչ ա՟մ բարութե՟ց ։

Օ այսպիսի բանս ասելով՝ յարեաւ ս՟րն 'ի կոչնոց անտի , և գնաց 'ի վանս իւր յեկեղեցին ․ գնացին զհետ ն՟ր և բազումք յաւագ իշխանացն հայոց՝ հանդերձ քահանայիւքն և պաշտօնէիւք ս՟րյն ․ ը՟ որս էր և դպրապետ ն՟ր երանելւոյն Մաշտոց , այն ինքն է ս՟րն Մեսրոպ ․ որ եղև առաջին գրիչ այս ա՟մ անցից՝ ը՟ Ճառընտրաց ․ (Թո՛ղ զայլ ո՟մն մեռրոպ երէց պատմիչ ը՟ բուզանդայ՝ զկնի խորենացւոյն և որոց զկնի ։) Արդ սոքա առհասարակ հնարս խնդրեալ ապրեցուցանել

զս՟րն՝

զս՟րն՝ մատուցանելին նմ՝ անդեղեայս և թխրակէս. իսկ նա ոչ կամեցեալ զայն՝ 'ի բաց տանել հրամայէր. ասէ. այս մեծապ՟ս եղև ինձ բարի, զի եհաս ինձ մեռանել վ՟ն զգուշութե պատուիրանացն ք՟ո. ցանկայի արդեօք՝ որ՟պ և 'ի դէպ էր ինձ՝ հրապարակաւ մեռանիլ, ուր հրապարակախօս բանիւ քարոզէի ամենեցուն զճշմարտու՟թի և զուղղու՟թի. բայց և այս վիճակ բարւոք էր ինձ ընդ ընտիրս, և ժառանգու՟թի իմ հաճոյ եղև ինձ. օրհնեցից զտ՟ր՝ որ այսմ մասին պահեաց զիս. և մեծապէս խնդու՟թի է ինձ, զի վաղվաղակի լուծայց ես յշխ՟է աստի չարէ.

Յաւել երանելին խօսել և բազում խրատս որոց անդն կային, իբրև կտակ թողլով հօտի իւրում զհոգեշնորհ վ՟դպունի իւր և զմ՟ծայլին յայտնու՟թիս. Նախ քան զմահ աղաչէր զամենեսին զգուշանալ անձանց, և պահել ըզպատուիրանս տ՟ն. զի ոչ ևս տեսանելոց էք ասէ զծառայակիցս ձեր զներսէս մարմնով. զի ես երթամ առ արարիչն իմ՝ որում ցանկացեալ եմ 'ի մանկու՟է իմմէ. արդ փոխանակ իմ նա ինքն տ՟րն հովուեսցէ ձեզ, և պահեսցէ զձեզ ս՟բս և անարատս 'ի հաւատս ճշմարտու՟թե և 'ի գործս բարու՟թե. Եւ մինչդեռ եմ 'ի մարմնի, պատմեցից ձեզ ըզտեսիլն՝ զոր տ՟ր եցոյց ինձ յանբնակ կղզւոջն յարտասահմանու՟ե իմում. և ես ոչ կամեցայ յայտնել ումեք մինչև ցօր մահուան իմոյ. և այժմ ինքնին տ՟ր հրամայէ պատմօղ լինել վ՟ն ձերոյ օգտի.

Յայնժամ սկսաւ երանելին պատմել մարգարէաբար զլինելոցսն ըստ կարգի. զաւեր աշ՟իս հայոց, և զբարձումն թգ՟րուն յազգէն արշակունեաց, և քահանայական ցեղին ՚ի տանէ լուսաւորչին. որպ՟ և զելս պղծոյն անապատի, և զյարձակումն ազգին նետողաց, և զզօրանալ թագաւորացն արևելից՝ ապականել զերկիր լծի՛ իւրով. զառումն ս՟բյ քաղաքին երուսաղէմի, և զգերութ՟ի ս՟բյ խաչին. և զոր այլ ևս երևելի երևելի փոփոխութ՟իս ը՟ տիեզերս՝ մինչև ՚ի գալուստ նեռինն։ Ասաց և զվ՟ կատարածի աշ՟ի, և զմեծն ահագին ատենին և արդար դատաւորուե՟ն ք՟սի ՚ի միւսանգամ՝ գալստեանն, և զվ՟ արդարակշիռ հատուցմանն ըստ իւրաքանչիւր գործոց։ Եւ ունկն դնէր աշակերտ իւր մեսրոբ, որ անուանեցաւն մաշտոց (ասէ ճառընտիրն), և ՚ի միտ առնոյր զա՟մ ասացեալսն ՚ի ս՟բյն։ (3)

Եւ երբ դադարեաց ս՟բն ՚ի խօսելոյ, ըսկսաւ արիւնն գունդ գունդ ՚ի ներքուստ ը՟ բերանն արտաքս հոսել երբ ժամս երկուս։ Եւ յետ այսորիկ յարուցեալ եկաց յաղօթս, և ծունր եդեալ խնդրէր թողութ՟ի ՚ի վ՟ սպանողին իւրոյ, և յարտասուս ցնդէր զա՟մ տեսօղս և զլսօղս. ապա յիշեաց յաղօթս իւր զա՟մ աշ՟ս՝ զմերձաւորս և զհեռաւորս, զանարգս և զպատուականս. զի գտցեն զողորմութ՟ի ՚ի տ՟նէ. և խնդրեաց և հաղորդեցաւ կենարար խորհրդոյ մարմնոյ և արեանն տ՟ն. և յաւարտ աղօթիցն համբարձեալ զձեռս իւր և զաչս իւր ը̅ երկինս զուարթ սրտիւ ասաց. տ̅ր յ̅ս ընկալ զհոգի իմ։ Եւ մինչդեռ մեք պշուցեալ կայաք (ասէ ս̅բն մաշտոց ՚ի Ճառընտիրս՝) վարանեալք սգով և տրտմութ̅բ վ̅ս մեկնելոյ ս̅բյ քահանայապետին ՚ի մէնջ, յաղօթելն աւանդեաց զհոգին։

Եւ արարին կոծ մեծ ՚ի վ̅ր ն̅ր քահանայք և նախարարք. յայնժամ և ինքնին թագաւորն պապ կեղծաւորեալ զչքմեղութի՝ սուգ եառ ՚ի վ̅ր ն̅ր. և հրամայեաց թաղել զնա մեծաւ հանդիսիւ, անձամբ լինելով յուղարկաւոր մարմնոյ ն̅ր. և բարձեալ երիցանց զպատուական մարմին ս̅բյ հայրապետին ՚ի խախ գեղջէ՝ տարան յիւր գիւղն ՚ի Թիլն աւան՝ որ ՚ի նմին եկեղեաց գաւառի, սաղմոսիւք և օրհնութ̅բ և մեծամեծ պաշտամամբք. և ամփոփեցին զերանելին ՚ի վկայարան երևելի իբրև զկատարեալ խոստովանող և վկայ ք̅սի։

Եւ էին հեռագոյն առանձնացեալք յայլևայլ լերինս՝ երկոքին ս̅ք միայնակեացք կարգեալք ՚ի ս̅բյն Ներսիսէ ՚ի հանրական տեսչութի կրօնաստանաց. ս̅բն Շաղիտա յամիդ քաղաքէ ազգաւ ասորի, որ բնակեալ էր յառիւծ լերին. և ս̅բն եպիփան ազգաւ յոյն, որ նստէր ՚ի մեծի լերին, ուր երբեմն էր պաշտօն դից, և կոչիւր աթոռ նահատայ կամ անահտայ։ Մ.ք տեսին յիւրաքանչիւր տեղւոջէ աչօք բացօք ՚ի տունջեան ժամու զս̅բն Ներսէս իբրև յամպս յափշտակեալ և փայլատակեալ ոչ լոյս ․ և ահա գունդք զու՛արթնոց ս՟բց պարառեալ զնովաւ շուրջանակի՝ հրեղէն կառօք տանէին զնա յերկինս ՚ի վեր ․ և դասք դասք ս՟բց ը՟առաջ գային նմա՝ մարգարէք և առաքեալք և վ՟դպք և ճգնաւորք և մարտիրոսք ․ և այնպէս վերընկալան զնա ՚ի խորանս երկնից ։ Յայնժամ սքանչացե՟լ երկոցունց հոգետես արանցն յիւրաքանչիւր միայնարանս՝ յայլևայլ միտս եղեն ․ շաղիտա խելամուտ եղև՝ եթէ մահու՛ամբ փոխեցաւ տ՟ր ներսէս ․ իսկ եպիփան համարեցաւ՝ թէ մարմնով յափշտակե՟լ իցէ տ՟րն իբրև ՚ի տեսլեան ։ Ապա իջեալ փութապէս ՚ի լերանց անտի իւրեանց մի զհետ միոյ՝ եկին յեկեղեաց գաւառ, հարցանել և ստուգել զիրսն ․ և լու՛եալ՝ թէ արդ ևս տարեալ թաղեցին զերանելին ՚ի թիլն աւան, գնացին անդր ՚ի տես տապանի ս՟բյն ․ և անդ պատահեալ միմեանց՝ պատմեցին զտեսիլն առաջի ամենեցուն ․ և որք լու՛անն՝ տային փառս ա՟յ, որ փառաւորեաց զհաւատարիմ պաշտօնեայն իւր զտ՟ր հայրապետն զներսէս ։

Եկաց մեծն ներսէս յաթոռ հայրապետութեան ամս ի՟ ․ կ՟մ ը՟ այլ հաշու՛ի՝ ամս լ՟դ ․ և որ՟պս բերէ կարգ ժամանակին, փոխեցաւ յառոյգ հասակի՝ թերևս մինչև լցեալ էր զամս յիսուն, յամի տ՟ն իբր 383 ․ յամսեանն հրոտից՝ ոչ ասի ՚ի Ճաւրնտիրս (5), որ օր հինգէր ամսոյն յաւուր հինգշաբաթի, (որ անկանէր յայնմ դարու յառաջին օր յուլիսի ․) այլք ՚ի տրէի ժ՟ա, կամ ՚ի նաւասարդի ը՟աաեն ։

սեն ։ Յաւելու մեսրոպ երէց յաւանդու͞է , թէ յետ այսորիկ սիւն լուսոյ եկաց 'ի վ͞ր գերեզմանի ս͞բյն զաւուրս խ ․ եւ բազում բժշկութիւնք եղեն 'ի գերեզմանէ ն͞ր ․ եւ առնուին հող 'ի գերեզմանէ ն͞ր , եւ բուժէին յախտէն՝ զոր ժանդ անուանեն ․ եւ հող գերեզմանի ն͞ր առէ բժշկէ զժանդ եւ զփողացաւ եւ զա͞մ վէրս մարդոյ եւ անասնոյ ։ Եւ թէպէտ անյայտացաւ գերեզմանն ս͞բյն յետ ժամանակաց , բայց վերստին յայտնեցաւ՝ ո͞պ ասասցի զկնի ․ եւ ցարդ եւս է ուխտատեղի նշանաւոր ։

Իսկ երանելին խադ էր վախճանել յառաջ քան զմեծն ներսէս ․ այլ 'ի միասին կատարի յիշատակ ն͞ր իբրեւ զգործակից խոստովանութ͞ե վ͞դպին իւրոյ , եւ ա͞մի նմանօղ առաքինութ͞եց նորա ․ քանզի նախ՝ յորժամ կարգեցաւ խադ սարկաւագ 'ի ս͞բյն ներսիսէ 'ի վերակացու͞ի հիւանդանոցաց եւ օտարանոցաց , այնչափ փոյթ էր եւ առաւել 'ի դարմանել զհիւանդս, եւ 'ի յանձանձել զաղքատս եւ զօտարս , մինչեւ սպառել նմա զա͞մ շտեմարանս պատրաստեալս 'ի պէտս կարօտելոց ․ եւ 'ի կարդալ ն͞ր առ ա͞ր՝ լուաւ ա͞ծ աղօթից խադայ , եւ հայեցեալ 'ի զուարթառատ ողորմածութ͞ի նորա՝ աղբերացոյց սքանչելեօք զշտեմարանս նորա իբր առ եղիայիւ եւ եղիսէիւ ․ զի որչափ եւ տայր ռոճիկս կարօտելոց , անպակաս գտանէր զհամբարս ։

Իսկ 'ի ժամանակին՝ յորում հանդերձեալ էր գնալ մեծն ներսէս 'ի յոյնս՝ 'ի հաշտեցուցանել զվաղէս կայսր ը̃ արշակայ Հայոց արքայի, ձեռնադրեաց զերանելին զխադ յեպ̃սութիւն բագրևանդայ և արշարունեաց ․ և կարգեալ զնա որպէս փոխանորդ իւր՝ յանձն արար 'ի նա զգործ հովուապետութե̃ ամե̃ին մինչև 'ի դարձ իւր ։ Եւ քանզի յամեաց սր̃ն Ներսէս՝ երթալով և յաքսորս, նա ինքն խադ եպ̃ս հովուէր 'ի ժամանակին զհօտ նորա ․ և էր հզօր 'ի բանս, և անաչառ 'ի խրատել և 'ի յանդիմանել ոչ միայն զժողովրդականս, այլև զմեծամեծս և զթագաւորն գլխովին ․ և չէր ոք՝ որ զդէմ ունէր բանից նր̃ ։

Բայց քանզի առ փոքր մի պճ̃նօղ զանձն ցուցանէր խադ 'ի հանդերձս, և էր ձիասէր, նմին իրի յանդիմանեալքն 'ի նմանէ՝ փոխանակաբանեալ եպերէին զնա ․ իբր այն թէ՝ զոր մեզ ուսուցանէ, զի՞ է՝ զի ինքն ոչ առնէ ․ յայնժամ երանելոյն խրատ անձին առեալ 'ի բամբասանաց այլոց՝ եթող այնուհետև զշուք հանդերձից և զերիվարն, և խարազնազգեաց եղեալ՝ իշով շրջէր մինչև ցօր մահուան իւրոյ ․ մինչև չկարելոյ ումեք արատ գտանել սրբութե̃ նր̃ ։

Եւ եղև 'ի կոտորել թագաւորին արշակայ անգթութբ̃ զազգն կամսարականաց, և 'ի հրամայել ընկենուլ զմարմինս նց̃ 'ի կերակուր շանց, ոմանք 'ի սայլորդաց գտեալ զոսկերս նց̃ 'ի բացի՝ ժողովեցին և ամփոփեցին 'ի նոյն խորս, ուր հրամայեալ էր թգ̃ւրն գտանել զինչս սպանելոցն ․ զոր զգացեալ արշակայ՝ հրաման ետ կախել զսայլորդսն ըզփայտէ 'ի վ՟ր նոյն խորոյ ։ Իբրև լուաւ երանելին խադ զանբերելի գործս արքայի , եմուտ առ նա , և սաստկագոյնս յանդիմանեաց զնա սաստիւ սպառնալեաց մ՟ծային դատաստանաց ․ Ը՟ որ ցասուցեալ արշակայ՝ հրամայեաց քարշել զայրն ա՟յ , և քարկոծ առնել ։ Բայց քանզի անդ հանդիպեցան երևելի արք 'ի քաջ տոհմէն ապահունեաց՝ տագերք դստերացն խադայ , սուսեր հանե՟լ ահայուցին զքարշօղսն , և յափշտակեալ զխադ՝ զերծուցին 'ի գաւառն իւրեանց ․ ուր ոչ յերկարեալ ն՟ր զկեանս՝ փոխեցաւ առ տ՟ր խոստովանողական պարծանօք ․ նշխ՟ն իւր և յայսմաւուրքն ասէ զնա քարկոծմամբ կատարեալ 'ի ք՟ն ։

ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ ՆՇԽԱՐԱՑ

Ս՟յն Ներսէսի մեծի
յեկեղեաց գաւառի 'ի փետրվարի ․ ա՟ ։

Ճառընտ․ Ը․ եր․ յկ՟ն=յղ ։ Աղաւթեաս պատմէ ։
Յովհ․ Երզնկացի 'ի շարակ՟ն ։ (5)

Յետ երջանիկ փոխման ս՟բ հայրապետին մերոյ Ներսէսի , որոյ պատուական մարմինն թաղեցաւ 'ի մեծ եկեղեցւոջ՝ որ 'ի Թիլն աւանի յեկեղեաց գաւառի մօտ յերիզա , որ և երզնկա , փայլէր գերեզման նորա նշանօք բժշկութ՟ց՝ պատուեալ 'ի հաւատացելոց , ցորչափ շէն էր եկեղեցին այն ։ Իսկ եղև յանցանել քանի մի դարուց՝ 'ի ժամանակին, յորում յարեաւ պատերազմ 'ի մէջ խոսրովու պարսից արքայի և Հերակլի կայսեր յունաց, ոտնակոխ եղեն բազում տեղիք աշխարհին Հայոց յերեսաց զօրուն պարսից, և առաւել ևս զկնի սակաւուց՝ յերեսաց զօրուն Հագարացւոց ։ Քանզի ութ ամօք յետոյ քան զմահն խոսրովու՝ աբդռահիմ ամիր քեռորդի առաջնոյ ամիրապետի եկ 'ի Հայս ութևտասն հազար արամբք․ ժողովեաց հարկս 'ի բնակչաց աշխարհի, և կոտորեաց զզօրս քրիստոնէից՝ որ 'ի տարօն գաւառի ։ Եւ նոյնօրինակ շրջեալ 'ի բարձր Հայս, 'ի բասէն, 'ի վիրս, 'ի ջաւախս, և 'ի վանանդ, յետ բազում աւերածոյ դարձ արար 'ի տեղի իւր 'ի տաճկաստան ։

Եւ ահա 'ի նոյն արշաւանս՝ յամի Տեառն 632, քակեցան երեք մեծամեծ հին եկեղեցիք հիմնարկեալք 'ի սրբոյն Գրիգորէ Լուսաւորչէն․ մի են՝ եկեղեցին որ յաշտից վանսն յաշտիշատ տարօնոյ․ վկայարան սրբոյն յովհաննու յիննակնեան վանս՝ այն է սուրբ կարապետ մշոյ․ և կաթուղիկէն՝ որ 'ի թիլն աւանի յեկեղեաց գաւառի, ուր էին գերեզմանք որդւոց և թոռանց սրբոյ լուսաւորչին, ընդ որս և գերեզման սրբոյն ներսէսի մեծի ։ Արդ՝ յաւերածոյ և 'ի փոփոխմանէ շինուածոյ այնր եկեղեցւոյ, և 'ի սրով սպառելոյ պաշտօնէից տաճարին՝ որք ծանօթք էին միոյ միոյ 'ի գերեզմանաց սրբոցն, անյայտացաւ զկնի ժամանակաց և գերեզման մեծին ներսէսի․ զի ոչինչ այլ գիտէին բնակիչք տեղւոյն, բայց միայն զայս, թէ 'ի տաճարի անդ է տեղի գերեզմանաց նախնի ս՟րց հայրապետաց իւրեանց. որոյ վ՟ն կոչիւր և տաճարն այն եկեղեցի ս՟բ հայրապետաց, կամ Հանգուցեալ եկեղեցի, զի ս՟րց հարցն հանգուցելոց 'ի ք՟ն ։ Եւ մնաց այնպէս զբազում դարս մինչև ցաւուրս Լևոնի երրորդի Հայոց արքայի՝ որ 'ի Կիլիկէ, և յակոբայ կլայեցւոյ կաթողիկոսի ա՟մ Հայոց. յորում ժամանակի՝ յամի տ՟ն. 1272. և 'ի Թուականութեան Հայոց. չիա. կամք եղեն ա՟յ սքանչելեօք յայտնել զայն՝ ը՟ օրինակիս ը՟ այսմիկ ։

Որ յայսմ ժամանակի առաջնորդ մայրաքաղաքին Եզնկայ և բովանդակ եկեղեաց գաւառի՝ տ՟ր Սարգիս արքեպ՟ս, այր առաքինի և ա՟ծասէր. որ և շինեաց զգեղեցկայարմար եկեղեցին՝ որ յանուն փրկչին՝ յԵզնկա, բարեսէր իշխանաւն պարոն յովհաննիսիւ. և ունէր ևս փափաք այլ ևս բարեշինութեանց և պայծառութեան եկեղեցւոյ ։ Իսկ առաջնորդ վանիցն՝ որ 'ի Թիլն աւանի յեկեղեաց գաւառի անդ, էր Ներսէս վ՟րդպ. որոյ ը՟ ձեռամբ էին վանականք ոչ սակաւ. և 'ի մէջ նո՟ց էր սարկաւագ մի սրբակրօն՝ կարգեալ 'ի գործ սպասաւորութեան վանիցն, և եկեղեցւոյն՝ որ յանուն ս՟բ Հայրապետացն, Պարոնշահն անուանակոչեալ, և արդեամբք ա՟մ պատուոյ արժանի՝ այր հեզ և հանդարտ վարուք, և անօթ ընտիր ընդունելութեան հոգւոյն ։

Արդ՝ տեսիլ երևեցաւ պատուական սարկաւագիս 'ի գիշերի հինգշաբաթոջ, որ օր իէ էր յունվարի։ Տեսանէր այր մի ծերունի, որ զգեցեալ էր զհանդերձ ծիրանի՝ քահանայական ձևով, և նստեալ ՚ի ջորւոջ փառաւորապէս՝ մտանէր ը̅ դուռն վանիցն, և ասէր ցսարկաւագն. Եղբայր՝ ո՞ր է հանգուցեալ եկեղեցին, որ աստ կայ. և նորա կալեալ զսանձս ջորւոյն՝ իջոյց զնա, և առաջնորդեաց մինչև ՚ի հանգուցե̅լ եկեղեցին։ Եւ իբրև եմուտ ծերունին ՚ի ներքս, ասէ. ա՛ստ է գերեզման ս̅բ̅յն Ներսիսի. և գաւազանաւն՝ զոր ՚ի ձեռին ունէր, նշանակէր զտեղին ՚ի կողմ̅ն գլխոյն. և ՚ի հարկանել գաւազանաւն՝ լոյս հրախառն փայլատակէր ՚ի տեղւոյն. և ասէ պատուիրելով ցսարկաւագն. տեղիս՝ զոր ցուցի, ստուգապէս է գերեզման ս̅բ̅յն Ներսեսի, յորում կան նշխարք ս̅բ̅ ոսկերաց նորա. ասասջի՛ր առաջնորդի տեղւոյդ, և եկեալ հանջի՛ք. և չէ՛ խորագոյն, այլ՝ սակաւ հողով ծածկեալ. և այս չորս անգամ է՝ զի ասացին ինձ գալ և ցուցանել զտեղիս, և ես պատճառէի զծերութի̅. և ետուն ինձ զջորիս զայս, զի բարձցէ զծերութ̅իս իմ. և ես եկեալ ցուցի։

Եւ իբրև զարթեաւ ՚ի քնոյ պատուական սարկաւագն, ՚ի զարմացման եղեալ՝ կայր ահի՛ պակուցեալ. և իբրև պատմեաց զտեսիլն առաջնորդին և եղբարցն՝ որ ՚ի վանսն, ն̅ք ասեն ցնա. աղօթեա՛, զի երկրորդեսցի տեսիլն։ Եւ առաքինի սարկաւագն ա̅մ հլութ̅բ աղօթից հպատակեալ՝ ՚ի միւսում գիշերի յորում ուրբաթ լուսանայր, տեսանէր երիտասարդ մի 'ի ձև զինուորի , և հանդերձ նր̃ 'ի գոյն ծիրանւոյ . և ասէ ցնա . հանի՞ք զնշխարս սբ̃յն ներսիսի : Պ̃խնի ետ սարկաւագն , և ասէ . ո՛չ . վ̃ զի չհաւատան ինձ : Եւ նր̃ իբրև կնիք մատանւոյ ունելով 'ի ձեռինն՝ գրոշմեաց 'ի վ̃ր տեղւոյն , և ասէ . ա՛ստ է գերեզմանն՝ յորում կան նշխարք սբ̃յն ներսեսի . փութապէս հանջի՛ք զնա : Եւ իբրև զարթեաւ սարկաւագն , և պատմեաց զտեսիլն , դարձեալ դժուարէին հաւատալ եղբարքն . քանզի անհնարին է այդ ասեն , թէ կարասցուք գտանել զգերեզման սբ̃յն , որ անյայտացեալն է յայնչափ հարիւրաւոր ամաց հետէ : Ապա 'ի միւս գիշերի երևեցաւ դարձեալ նոյն երիտասարդ , և ասէ ցսարկաւագն իբրև սաստիւ . ընդէ՞ր յապաղէք և ոչ հանէք զնշխարս սբ̃յն ներսեսի : Եւ նորա զարթուցեալ պատմեաց եղբարցն . և նց̃ 'ի զարմացման եղեալ՝ ասեն ցնա . աղօ՛թս արա , զի միանգամ այլ երևեսցի քեզ տեսիլդ . և գիտեմք այնուհետև՝ զի ճշմարիտ է բանդ :

Ապա 'ի միւս գիշերի՝ յորում միաշաբաթլուսանայր , երևեալ նոյն երիտասարդ՝ ասէ . ընդէ՞ր ոչ փութայք հանել զփառաւորեալ նշխար սբ̃յն ներսիսի . զի ահա այս երեք անգամ եկեալ ցուցի քեզ . և հասեալ է ժամանակ յայտնելոյ սբ̃յն , որ մինչև ցայսօր եկաց անյայտ և կոխան ոտից՝ վ̃ ազգին իւրոյ կոխան լինելոյ 'ի բազում ազգաց . այլ այժմ փութասջի՛ք հանել . զի զձնձղուկ որքան 'ի ձեռին ունիս՝ զգուշասջի՛ր պահել. ապա թէ զերծեալ թուիցէ, դժուարին է ըմբռնել: Եւ յորժամ յարուցեալ պատմեաց պատուական սարկաւագն զվերջինս զայս տեսիլ, հաւատարիմ եղեւ ամենեցուն. եւ 'ի միտ առին զտեսութ̃ի առակաւոր բանին, թէ անձն ո՞ք՝ որ իբրեւ զճնճղուկ ապրեալ եղեւ յորոգայթից որսողին, հրեշտակական վարուք 'ի մարմնի ազատ մնացեալ յա̃մ խաբէութ̃է չարին, եւ զայսքան ժամանակս անյայտ լեալ 'ի մարդկանէ՝ այժմ ինքնին յօժարի յայտնել զինքն իւրոյն. եւ եթէ անհոգասցին իւրքն գտանել զնա, դարձեալ ծածկէ զինքն. եւ այնուհետեւ թէեւ կամիցին՝ չկարեն գտանել: Աո̃յ փառս ետուն ա̃յ ա̃մ եղբարքն վ̃ա այց առնելոյ նոցա յայտնութ̃ք այնպիսի անգին գանձուն:

Ապա փաղփաղակի վդ̃պն ներսէս հայր վանիցն փութացեալ գնաց 'ի քաղաքն եզնկայ առ մեծապատիւ արքեպ̃ն տ̃ր սարգիս, եւ պատմեաց նմա զա̃մ հանգամանս տեսլեանն՝ աւետիս տալով նմա, թէ մեծամեծ բարեաց եւ փրկութ̃ե նշան է այսպիսի երեւումն ս̃բյն ներսեսի, որ յաւուրս առաջնորդութ̃ե նորա կամեցաւ յայտնել զինքն: Յայնժամ լցեալ արհիեպ̃սին մեծաւ խնդութ̃բ՝ գոհանայր զա̃յ. եւ ապա ասէ ցներսէս վդ̃պ. գնասջի՛ք զգիշերս զայս եղբայրական դասիւն հսկումն արասջի՛ք. եւ 'ի վաղիւն բերցէ՛ք զտեղին, մինչեւ երեւեսցի գերեզմանն. եւ ինձ ա̃զդ արարէք, զի եկեալ հանցուք զուրախարար գանձն

Հայաստանեայց ։

Եւ արարին վանականքն ըստ հրամանի եպիսկոպոսին . քանզի յետ հսկելոյ զգիշերն զայն , ապա 'ի վաղիւ անդր՝ որ օր առաջին էր փետրվարի ամսոյն , բրեցին զտեղին նշանակեալ 'ի տեսլեան . մինչև 'ի վեր երևեցաւ գերեզման սրբոյն Ներսեսի . և ազդ արարին եպիսկոպոսին ։ Եւ մինչ չև եկեալ էր նորա , փութացան բնակիչք վանիցն հանել զնշխարս սրբոյն արտաքոյ գերեզմանի , երկուցեալ 'ի բազմութենէ ամբոխին , գուցէ ոչ կարիցեն հանել պատրաստութեամբ ։ Եւ էր կազմեալ գերեզմանն ըստ երկայնութեան՝ չափ երից կանգնոց , և լայնութեամբ իբր կանգուն մի 'ի կողմ ներքին . և խորութեամբ չորս աշտիճանօք մարդաչափ մի , կազմեալ կրամած քարիւ . և յարևմտից կողմ գերեզմանին էին նշխարքն սրբոյն Ներսիսի բազմեալ յաթոռ , և այնպէս եդեալ 'ի գերեզմանն հանդէպ արևելից ։ Որ և նոյնպէս կային ընդ յօրինուածք մաքուր ոսկերացն յիւրում տեղւոջն , և գլուխն դեր 'ի վերոյ ընդ անդամոցն որպէս կենդանւոյ . և էին առաջի սորա 'ի մէջ գերեզմանին այլ նշխարք , ո՛չ բովանդակ մարմին . այլ՝ մասն ինչ եդեալ 'ի մեծամեծ անդամոցն , և սակաւ ինչ հողով ծածկեալ էին սուրբ նշխարքն . և ապա 'ի վերոյ երեք կրկին կամարք կապեալ 'ի կրոյ և 'ի քարանց 'ի վերայ գերեզմանին .

Գայր այնուհետև 'ի նմին աւուր 'ի մուտս փետրվարի ամսոյ ընծապատիւ արքեպիսկոպոսն եզնկայու տ՟ր սարգիս , և բարեսէր իշխանն պարոն յովհաննէս որդի նորա , առեալ ընդ ինքեանս և զպաշտօնեայս եկեղեցւոյն , և 'ի պատուաւոր արանց ք՟ղքին . և այլ բազմամբոխ ժողովուրդ ելին զհետ նորա իբրև զեղջերուս ծարաւի 'ի ջուր փափագեալ . զի վկայէր 'ի միտս ամենեցուն մեծի և փոքու , թէ եհաս ժամանակ փրկութե՟ և ազատութե՟ հայաստանեայց ։ Իսկ իբրև եկին 'ի տեղին , անկեալ երկրպագեցին գերեզմանին՝ հրեշտականման մարմնոյն օթարանի , և յարկին ս՟բյ ծածկողի զգանձն լուսոյ ։ Իսկ հրամայեաց եպ՟սն սպասաւորաց եկեղեցւոյն՝ բերել զնշխարս ս՟բյն մերձ 'ի գերեզմանն . զի անդ տեսցէ ինքն և բազմութի՟ ժողովրդեանն ։ Իսկ իբրև ետես զա՟ծային հոգւով կենդանի նշխարս ոսկերաց ս՟բյ հայրապետին մերոյ ներսէսի և երկրորդ լուսաւորչին հայոց , յարտասուս եղեալ սկսաւ լալ . և ողբական ձայնիւ իբրև ը՟ կենդանւոյ խօսելով՝ գութս արկանէր ս՟բյն , և ասէր ։ Ահա՛ ժամանակ գթալոյ ս՟բդ ա՟յ , եթէ ողորմեսցիս քո անկեալ և տառապեալ ազգիս ։ 'Ի բազում ալեաց ծփեալ և հողմակոծեալ կայ նաւ եկեղեցւոյ . ձեռնտու լեր և օգնեա՛ բազմահրմուտ և ամենիմաստ նաւավար ։ Մոլորեալ է հօտ ք՟սի , և կարօտեալ 'ի կենաց կերակրոյն . գահավիժեալ և ցրուեալ՝ մատնեալ 'ի ձեռս գայլոց յանխնայ վիրաւորողաց . այս է ժամանակ այցելութե՟ և թափելոյ քաջ հովուիդ զգառինս քո 'ի գայլոց . Հիմանդացեալ է մարմին եկեղեցւոյ, և ոչ գտանէ հարազատ բժիշկ իւրոյ բեկմանն, և դեղ մահաբեր ցաւոյն. ո՛չ է մասն՝ եթէ պատեցի, և ո՛չ 'ի միում տեղւոջ՝ թէ սպեղանի դնիցի, այլ՝ բոլորովին է ախտացեալ. հայեա՛ց բժիշկդ ցաւակցաբար. և հայցեա՛ 'ի մարդասէր բժշկէն բնութեանս ստեղծողէ, զի խոնարհեցուսցէ զունկն լսել տառապանօք ձայնի հեծութեան նեղելոցս:

Զայս և որ սոցին նման է, մաղթէր սարգիս եպիսկոպոսն առաջի սրբոց նշխարացն. և ապա հրաման տայր բազմութեան ամբոխին՝ քահանայից և ժողովրդոց, միջնորդութեամբ սպասաւորի ումեմն բանի՝ զնախնեացն խոստովանել զյանցանս, և զանհնազանդութիւն նոցա խնդրել զթողութիւն, յաղագս որոյ այս ամենայն չարիք եկին 'ի վերայ մեր. և դնել ուխտ առաջի կենդանի նշխարացն՝ ո՛չ գնալ ըստ նոյն Ճանապարհ չարեաց, և ոչ ապստամբ լինել աստուածային պատուիրանացն, և օրէնսդրացն խրատու: Յայնժամ յառաջ մատուցեալ ոմն յընտրելոց վարդապետաց՝ սկսաւ ասել 'ի բերանոյ ազգին ողջոյն, ձայնակցութեամբ ամենայն եկեղեցւոյն՝ այսպէս.

Մեղաք քեզ հայր սուրբ, և հոգւոց մերոց վերակացու. մեղաք մեք և հարքն մեր, անօրինեցաք և յանցեաք: Եթէ Ճաշակեալ էաք զպտուղ քաղցր պատուիրանացն քոց, ո՛չ էաք կարօտ մնացեալ 'ի լուսաւորիչ հարցն տեսչութենէ: Յիրաւի ծածկեաց զմեզ տրտմութեան խաւար, զի 'ի լոյս պատուիրանացն ոչ հետևեցաք ։ Արդարապէս աղքատացաք , զի զցանկալին քան զոսկի և զարծաթ և քան զամ ականս պատուականս՝ զօրէնսն Ածային յոգիս մեր ո՛չ գանձեցաք ։ Ո՜ այնորիկ տիրեցին մեզ ցաւք մահաբերք , զի հոգիացուցիչ և կենդանի բանին Այ ոչ կերակրեցաք . տիրեաց մեզ քաղց կսկծելի և ծարաւ պապակման , զի զԱյ բանին կերակուր 'ի քաղցր հարանցդ ոչ ըմպեցաք . և քաղցր պտուղ լուսաւորիչ զարմին սրբյն գրիգորի պակասեաց 'ի մենջ ։ Մոռացաք մեք զխրատ խաղաղութե հօրդ հոգևորի , մոռացար և զմեզ աջդ յաջողակ . աջդ՝ որ պարիսպ հրեղէն էր զօրացն հայոց . աջդ՝ որ բարձրացուցանէր զդրօշ թագաւորացն հայաստանեայց . աջդ շնորհաբաշխ և պարգևաշատ . աջդ սնուցանօղ և դաստիարակ կաթնասուն մանկանց սիոնի ։ Արդ՝ հա՛յր , հաշտեա՛ց հայրենի գթոյդ միջնորդութբ , թող զպարտիս յանցաւոր որդեացս ։ Հարկանէ հայր զորդի , ցաւեցուցանէ , և ինքն ոչ մնայ առանց ցաւոց . այլ քան զխրատեալն դաւազանաւ զանհնազանդ որդի՝ առաւել ևս զգայ ցաւոյն վս ծնողական գթոյն ։ Եւ զի եկեալ կատարեցան 'ի վերայ մեր տեսիլքն 'ի քէն մարգարէական հոգւով , և կրեցաք զբերմունս դառնութե ժամանակաց 'ի պատուհաս պատուիրանազանցութե մերոյ , և արդ հա՛յր՝ եթէ զայս աղէտ տարակուսանաց յիշեցուսցես հօրն գթածի և մարդասիրի , որ ոչ երբէք մոռանայ , գիտեմք՝ զի դարձցի 'ի բարկութէ սրամտութեան, որ ո՛չ է իւր բնական. և շարժի 'ի գութ քաղցրութեան և ողորմութեան՝ որ իւր է սեփհական ։ Այս հա՛յր մաղթեաւ ընդ մեղուցելոյս. գիտէ հայրն հասարակաց լսել մաղթանաց հօր, որ վասն որդւոյ անառակ կենօք վարեցելոյ. պատուէ՛ զայլս պատուա՛կան, որ վասն պարտաւոր որդւոց երաշխաւորէ ։ Արդ այսպիսի և որ ինչ նման է սոցին բանք պաղատանաց յիշատակեցան 'ի տեղւոջն, և ուխտադրութիւնք արտասուա՛ց հառաչանօք յամենայն ժողովրդենէն եղեն առաջի կենդանի նշխարաց սրբոյն Ներսեսի ։

Յայնժամ առեալ եպիսկոպոսին զսուրբ նշխարսն՝ պատէր 'ի սպիտակ և 'ի նուրբ կտաւ, և առանձին դնէր յեկեղեցւոջն յերկուս արկեղս, և կնքէր իւրով մատանեաւ ։ Եւ երկու մասն մեծ տայր 'ի սպասաւորս եկեղեցւոյն՝ 'ի համբոյր և 'ի տես ուխտականաց ժողովրդեանն, որ գային յամենայն կողմանց. և այն կայր պահեալ զգուշութեամբ. և ինքն եպիսկոպոսն դարձաւ 'ի քաղաքն՝ մնալով տեսչութեան Աստուծոյ, թէ զի՛նչ արասցէ ։ Եւ վասն զի հնչեաց համբաւն յոյժ, և զուա՛րճացան որ յամենայն տեղիս ազգ հայաստանեայց, և դիմեալ գային բազմութիւնք հաւատացելոց յերկրպագութիւն և 'ի տեսութիւն սուրբ գերեզմանին, յայսմանէ ընդոստուցեալ այլազգեաց՝ զմտաւ ածէին, եթէ յի՛նչ կամի աւարտիլ խորհուրդ բանին. քանզի գոյր և 'ի մէջ նոցա յիշատակ հրաշալի տեսլեան սրբոյն Ներսիսի՝ գրով և բանիւ, վասն հանդերձելոց ժամանակաց, և տագնապէին խորհրդով. և բազումք 'ի նոցանէ 'ի նախանձ մտաբերեալ՝ խորհեցան գնալ գիշերի 'ի վանսն, և յափշտակել զնշխարս սբ̃յն. Թերևս կարասցեն ծածկել զհամբաւն աշխարհալուր։

Ազդ եղև եպ̃սին. աճապարեաց գնաց անդրէն 'ի վանսն, և առեալ զսբ̃ նշխարսն՝ բերէր 'ի քաղաքն, ուր զաջն սբ̃յն և զմիւս բազուկն տայր յօրինել իմաստուն ոսկեգործաց. և զմանր մասունս մատանցն առ միմեանս միաբանել՝ պատէր արծաթով և ոսկւով, մանրամասն յօրինուածով տեղի երևման 'ի ցոյցս տեսլեան արարեալ պահպանիչ աջոյն և շնորհաբաշխ բազկին։ Նոյնպէս տայր յօրինել գլուխ արծաթեղէն՝ յարմար մեծահասակ անձինն, պահարան գլխոյն նշխարաց, և 'ի բաց առնելով զդիրս երեսացն և զբերանոյն, և յերիս տեղիս համդէպ ճակատուն խաչաձև հատուածս արարեալ յարծաթոյն, տայր երևիլ նշխարացն։ Իսկ զմնացեալ նշխարս նը̃ ոսկերացն լուանայր և մաքրէր 'ի հողոյն մածելոյ՝ անապակ և անուշահամ գինւով յանուշահոտ ծաղկանց խառնելով, և օծանէր խնկահոտ իւղով՝ կազմեալ արուեստաւորապէս. և պահէր զգուշութբ̃, մինչև շինեսցի եկեղեցի նոր 'ի վերայ գերեզմանին. որոյ վն̃ և տայր հաւաքել նիւթ շինուածոյ և պատրաստութ̃ քարանց. զոր կատարեաց կամ անձամբ և կամ 'ի ձեռն յաջորդաց իւրոց. և կոչեցաւ յայնմհետէ եկեղեցին այն և վանքն՝ որ 'ի թիլն աւանի, Ներսէս հայրապետ. ուր սկսան նստել զկնի առաջնորդք եզնկայու մինչև ցայսօր :

Բայց թէ ո՞ւր պահին յայժմուս այս և այն մասունք նշխարաց ս՟բյն, աւանդապահից անկ է գիտել. զայս գիտեմք 'ի պատմութ՟է, զի սարգիս եպ՟սն զաջ ս՟բյն եդ յիւրաշէն եկեղեցին եզնկայու, ուր աւագ խորանն էր յանուն փրկչին մ՟րի. և խորանն երկրորդ կոչիւր կաթուղիկէ. և երրորդն էր յանուն ս՟բց առաքելոց : Իսկ զմիւս բազուկն եդ 'ի ս՟բ ուխտն տիրաշէն՝ շինեալ յիւրմէ յայնկոյս գետոյն եփրատայ, ո՞ւր թէ (ասէ պատմագիրն) տարածեալ ունիցի ս՟բն ներսէս զթևսն հովանի եկեղեա. գաւառին և քաղաքին եզնկայ, և զբազուկսն աղաչօղ բարեխօս առ բարձրեալն, և զձեռնն յառնուլ յաննուազ բարեաց և բաշխել եկեղեցւոյ մանկանց 'ի փարթամութ՟ի փառաց հայրենի գանձիւք :

Զայս ամ՟ ճառօրէն վիպասանութ՟ք և ներբողենիւ ճոխագոյն նկարագրէ՝ վայելչաբան և իմաստուն վ՟դպ ոմն եզնկացի, ականատես եղելոցն. և թերևս ինքն իսկ յովհան երզնկացին իցէ՝ որ և ծործորեցի կոչ՟ պլուզ վ՟դպ վերաձայնեալ, որ փայլէր 'ի ժամանակին, և 'ի պատճառս այսր յայտնութ՟ն նշխարաց երևի յօրինեալ զշարական ս՟բյն ներսիսի. ը՟ որում և խորագիր ճառիս ունի այսպէս.

* Յայտնութ՟ի նշխարաց ս՟բյն ներսիսի հայոց
,, պատրիարգի և երկրորդ լուսաւորչի. որ
,, օր մի է ը՟ հռոփսիմեցւոց ամսոյն փետրու-
,, արի.

„ արի ․ և հայոց ամսոյն որ է արաց իէ ․ յո-
„ րում տօնեն եկեղեցիք հայաստանեաց (ի-
„ մա՛ յեկեղեցեաց գաւառի) մեծաւ հանդի-
„ սիւ ։ Զոր կարգեալ հաստատեաց արհի-
„ եպսն տէր սարգիս՝ տօնել յամ ամի զնոյն օր
„ յայտնութե նշխարաց սբյն՝ խորհրդական
„ երգովք շարականայ, և ներբողական ճա-
„ ռիւ ‖ ։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ ։

(1) Վարք սրբյն ներսէսի մեծի քաղի յերից մատենագրաց, յորոց առնուն և յետինք. Առաջին ը ժամանակի է բուզանդ փաւստոս՝ ժամակից և ականատես. երկրորդ՝ մերձաւոր ժամանակաւ, և տեսող ականատեսից՝ խորենացին. և երրորդ մեսրոպ երէց ոմն յետոյ ժամանակաւ՝ հաւաքիչ հին պատմութեց, և առաւել 'ի բուզանդայ ։ Յորս յայտ է թէ նախապատիւ է վկայութն խորենացւոյն առ հաւատարմութն իւրոյ, զորմէ չունիմք երկբայութն. ուր զբուզանդայ ամ իմաստուն միտք վկայեն գոլ շաղակրատ և շաղփաղփ. մինչ զի և 'ի խօսելն զճշմարիտն՝ աղօտացուցանէ զճշմարտութին աւելորդաբանութեք. սմին իրի այնչափ ինչ առաք 'ի նմանէ՝ որչափ միաձայնի ը հարազատ աւանդութե խորենացւոյն. որպ առնեն և յովհաննէս կաթողիկոս. ասողիկ, շնորհալին, վարդան, երզնկացին և այլք. ը իմիք և յայսմաւուրքն ։ Իսկ մեսրոպ երէց թէպէտև բազում ինչ 'ի բուզանդայ առնու, և սակայն ունի իւր առաջնորդ և զայլ ընտիր հեղինակ՝ զանանուն գրիչն տեսլեան մեծին ներսէսի. Քզի բուզանդ զանց առնէ զբանիւ տեսլեանն, զոր մեսրոպ երէց լիով յառաջ բերէ ։ Արդ որպ նշանակեցաք 'ի կարգի պատմութես, հաւանելի երևի մեզ, որպ ցուցանեն և ճառընտիրք, թէ առաջին գրիչ այնր տեսլեան եղև սբ վրդպն մաշտոց՝ որ և մեծն մեսրոպ՝ աշակերտ և նօտար սրբյն ներսէսի ։ Թող զի թէև անյայտ մնացէ անուն գրչին, ոչինչ

տկարանայ ստուգութի՟ տեսլեանն, որ արդեամբք կատարեցաւ և կատարի հետզհետէ դարուց 'ի դարս. զի և յետին օրինակագիրն մեսրոպ երէց՝ որ սաի գրեալ 'ի խնդրոյ վահանայ ուրումն մամիկոնեայ 'ի գիւղն վարժի, կանխէ ժմկաւ քան զկատարումն գուշակութե՟ցն՝ զորս պատմէ 'ի բերանոյ սբ՟յն ներսեսի. զ՟ի է ելք ազգին նետողաց՝ թաթարաց, ազատութի՟ եղ՟մի 'ի ձեռն փռանգ ազգին 'ի ձեռաց այլազգեաց. ևն՟: Եւ ո՞ չ գիտէ, թէ առանձին ծիրք մարգարէական տեսլեան միօրինակ փայլեցին 'ի սբ՟ լուսաւորիչն մեր, և 'ի մեծն ներսէս 'ի շաւակէ նր՟, և 'ի մեծն սահակ յորդի նր՟. այլ իցէ՞ թէ մեք չահեսցուք յազդեցութե՟ց անտի հոգւոյն եղելոց 'ի խրատ մեզ և 'ի զգուշութի՟ 'ի ձեռն ա՟ծամերձ սբ՟ հարց մերոց, որովք պարծիմք 'ի տր՟:

(2) Հ. դնէ ը՟ բուզանդայ և ը՟ մեսրոպայ երիցու, թէ սբ՟ն ներսէս յանդիման եղև վաղեսի, և խոստացաւ առողջացուցանել զորդի նորա զմերձեալն 'ի մահ, եթէ դարձցի յաղանդոյն արիոսի. և 'ի չառնուլ նր՟ յանձն՝ մեռաւ մանուկն, և կայսրն բարկացեալ աքսորեաց զնա: Բայց քանզի խորենացին յայտնապէս ասէ, թէ վաղէս չկամեցաւ տեսանել իսկ զերեսս սբ՟յն, ը՟ նմին եգաք և մեք. ո՟պ և զեղանակ աքսորանացն, և զյետագայ պատերազմին՝ Հ. առաջի առնէ առաւել ը՟ բուզանդայ, այլ մեք ը՟ կարի զխորենացւոյն պինդ կալաք զհետս:

(3) Ճառընտ. Բ. 'ի յիշելն աստանօր զսբ՟ն մեսրոպ մաշտոց, և 'ի պատմելն զաւանդումն հոգւոյ սբ՟յն ներսէսի, խորհրդով արդեօք յաւելու. * և այլն մն՟, զոր գտանես 'ի լիակատար պատմութեան իւրում ||. ուր 'ի դէպ է իմանալ զսկզբնագիր պատմութե՟ն շարագրելոյ 'ի սբ՟յն մաշտոցէ. յորմէ էառ յետոյ և անուանակից նր՟ մեսրոպ երէց:

(4) Այսպէս է 'ի Ճառընտ. ֆ 'ի հրոտից ե՟, յաւուր հինգշաբաթոջ. զոր չգիտեմ զիարդ մեսրոպ երէց դնէ *յերեսունն նաւասարդի ամսեան, և յօգոստոս ամսեան իթ՟. յաւուր հինգշաբաթոջ ||. թերևս չփոթեալ է ը՟ աւուր ծննդեան և փոխման մեծին սահակայ որդւոյ ներսիսի: Թող զՃաշոցս, որք դնեն 'ի տրէ ամսոյ. ժմ՟. ը՟ որոյ եդեալ է և 'ի Հ. նոյեմբ. 19:

(5) Յայտնութի՟ նշխարացս աւանդեալ յականատես մատենագրէ՝ կայ 'ի Ճառընտ. Ը. որ գրեալ է 'ի քաղաքն եզընկայ 'ի գրիգորիս քահանայէ՝ իբր 70. ամօք յետոյ քան զյայտնութիւնն, ֆ 'ի թուին հայոց. չղբ՟. և յամի տն՟. ռյխգ:

ջյիֆ ։ Իսկ ժամանակ յայտնութեան նշանակի 'ի պատմութեան անդ այսպէս ․ * Ար և այժմ շնորհօքն Այ յայտ-
,, նեցաւ 'ի ժամանակս վերջին, յորում էին 'ի ծննդե-
,, նէն քնի ռճ․հե (պարտի լինել՝ հբ), և 'ի սբյն
,, գրիգորէ թճ․ կը, ամ․ և 'ի մահուանէ սբյն ներսէ-
,, սի՝ ըճ․ հբ, ամ․ և Թուականին հայոց՝ որ յաւուրս
,, մովսէսի հայոց կաթողիկոսի եղաւ 'ի պատճառս պատ-
,, ճենի մերոյ տումարիս ․ ջճ․իա․ 'ի հայրապետութեան
,, հայոց տն յակոբայ հոգեշնորհ վրդի ․ 'ի Թագաւո-
,, րութեան հայոց լևոնի որդւոյ հեթմոյ, և Թոռին քա-
,, ջին լևոնի որդւոյ ստեփաննեայ՝ որդւոյ լևոնի՝ որդ-
,, ւոյ ռուբենի՝ մեծի իշխանին, որ էր 'ի զօրացն բագ-
,, րատունեաց և յազգէ նորին, և 'ի տանէ և 'ի տոհմէ
,, արծրունեաց ․ որ և մեր պսակաւորն լևոն զերկուցն
,, ունի Թագաժառանգ ազգաց զազգականութիւն ․ 'ի
,, յարքեպսութե մայրաքաղաքիս եզնկայ և գաւառիս
,, եկեղեաց տն սարգսի ||․ ևն ։

Այնպէս և մաղաքիաս պատմիչ Ճիմկակից, յետ դնելոյ՝ թէ 'ի Թուին հայոց ․ չի․ վախճանեցան վարդան վրդ և կիրակոս վրդպ աշակերտք վանականի, 'ի գրեւն զբանս իւր զլևոնէ արքայէ երրորդէ՝ 'ի վր բերէ ․ * Ընդ այս
,, աւուրքս (իմա 'ի Թուին չլա․) յայտնեցաւ պատուհա-
,, կան և սբ նշխարք մեծին ներսեսի հայրապետին հայոց
,, յիւր հանգստարանին ․ որոյ սբ աղօթիւքն տացէ քս
,, մծ խաղաղութի ամ ձի ||։

ՎԱՐՔ ՍՐԲՈՅՆ

Դանիէլի մարգարէին, և Երից մանկանց:

Հ. օգոստ. 24. և մարտ. 15: Յ. դեկտ. 17:
Լ. յուլ. 21. և դեկ. 16: Բոլլանդեանն պենեւոս.
'ի Է. հատ. յուլիսի. 21. եր. 117=130: (1)

ՅԱ՛ՆԿԱՐԺԱՆ ՕՐՀՆՈՒԹԵնոց, և պանծալին 'ի պատգամաւորս այ, մարգարէն Դանիէլ՝ էր ազգակից և տոհմակից քի յի փրկչին մերոյ՝ ըստ մարմնոյ, այս է 'ի տանէն յուդայ. և այն՝ 'ի Թագաւորական զարմէ, կմ յազատաց յուդայեանց. զորօրինակ էին և երեք մանկունքն երանելիք, անանիա, ազարիա և միսայէլ, ազգակիցք և գերեկիցք դանիէլի. և ոչ հասակակիցք, նոյնպս և առաքինութբ հաւասարորդք նմին: Զորեքեան սք 'ի մատաղ հասակի մանկութե կմ յառոյգ տիս պատանեկութե գերեցան 'ի հրէաստանէ 'ի բաբելոն ընդ յովակիմայ, իմն ը եղիակիմայ արքայի յուդայ՝ 'ի վախճանի երրորդ ամի Թագաւորութե նորին, որ և սկիզբն չորրորդին. այն ամ առաջին էր նաբուգոդոնոսորայ արքային քաղդէացւոց 'ի կենդանութե հօր իւրոյ նաբուպաղասարայ:

Եւ եղև յետ արձակելոյ յովակիմայ և դառնալոյ անդրէն յեէ՟մ յիւր թագաւորութ՟ի՝ թողլով'ի բաբելոն իբր պատանդ զմանկունս աւագաց և ազգականաց իւրոց , հրաման ետ նաբուգոդոնոսոր ցասփանէզ ներքինապետն, զի առցէ ընտրանաւ մանկունս անարատս և գեղեցիկս և մտավարժս յորդւոց անտի գերուե՟ն հրէաստանի , և դիցէ յարքունի կրթարանի՝ մարզիլ'ի դպրութ՟ի քաղդէացւոց և 'ի պալատական հրահանգս , զի արժանի լինիցին կալ'ի սպաս արքայի ։ 'Ի կարգի սոցա ընտրեցան և դանիէլ , անանիա , ազարիա , և միսայէլ'ի տանէն յուդայ ․ այլ սոքա չորեքեան չառին յանձն ուտել'ի սեղանոյ արքայի ․ վ՟յ աղաչեցին զմաղասադ ներքինապետ՝ որ վերակացուն էր ն՟ց , տալ ինքեանց լոկ ունդս'ի կերակուր , և ջուր յարբումն ․ և յայսր ա՟մի վերայ առաւել կայտառ և բարի երևեցան երեսք ն՟ց քան զա՟մ մանկանց՝ որք ուտէին'ի սեղանոյ թ՟գւրի ։

Եւ ետ ա՟ծ չորեցունց ն՟ց իմաստութ՟ի և հանճար յա՟մ դպրութ՟ե և 'ի գիտուե՟ ․ այլ քան զերիսն ևս առաւելաւ դանիէլ հոգետեսութ՟բ ․ զի խելամուտ էր ա՟մ տեսլեան յա՟ծակոյս կողմանէ ․ և ընդարձակութ՟բ խորհրդոյ և ուշոյ մտաց երևէր ո՟պ սողոմոն այլ ․ զորոյ և զնմանութ՟ի անդստին եցոյց յանձին յայտնի փորձիւ՟ սքանչելի դատաստանին , զոր արար՝ յապրեցուցանել անդ զանմեղն զշուշան՝ յանդիմանելով զչարախօսս նորա զանօրէն ծերս ․ քանզի մինչդեռ տանէին զշուշան 'ի սպանանել, խաղաց Հոգի տ̅ն 'ի վերայ դանիէլի մանկանն. և նովին Հոգւով ա̅յ ազատեաց նա զանպարտն, և կորոյս զանիրաւ դատաւորս ժողովրդեանն. և եղև դանիէլ մեծ առաջի ժողովրդեանն յօրէ յայնմանէ և առյապա ։

Նոյնպէս մեծացաւ յոյժ և առաջի Նաբուգոդոնոսորայ արքայի՝ Հանդերձ երեքումբք ընկերօքն. քանզի իբրև լցան աւուրք ՀրաՀանգութե̅ ն̅ց ամք երեք, և կոչեցան զառաջեաւ թագաւորին, խօսեցաւ ը̅ նո̅ արքայ, և մեծապէս Հաճեցաւ ընդ նո̅. և ընտրեաց զնո̅ կալ առաջի իւր 'ի սպասու. և ոչ գտաւ ոք յայլոց անտի մանկանց, որ̅ք և ոչ 'ի չափահաս արանց ոք՝ նման դանիէլի և անանիայ և միսայէլի և ազարիայ. քանզի յա̅մ բան իմաստութե̅՝ զոր խնդրէր 'ի նոցանէ թագաւորն, գտանէր զնո̅ տասնապատիկ առաւել քան զա̅մ գէտս և զմոգս, որք էին 'ի թագաւորութե̅ նորա ։

Եւ առ առաւել սիրոյ Նաբուգոդոնոսորայ առ դանիէլ իբրև յորդի իւր՝ ետ կոչել զանուն նորա յանուն արքայորդւոյն բաղտասար. որ էր անուն պատուական առ բաբելացիս պաշտօնեայս բաՀաղու իբրև կոչումն ա̅ծական. որո̅վ և լոկ անուանափոխութե̅ն՝ պատուոյ մեծի էր նշանակ. Նմին իրի և պատուակիցք դանիէլի երեք մանկունքն ընկալան զանուանցն փոփոխու̅մն 'ի Ներքինապետէն, և կոչեցան սեդրաք, միսաք, և աբեդնագով ։

Այն ինչ առանձինն Թագաւորեաց Նաբուգոդոնոսոր զկնի մահու հօր իւրոյ, յերկրորդ ամի անդ տեսանէ զահաւոր զայն երազ մեծի արձանի ՚ի զանազան նիւթոց կազմելոյ, որոյ գլուխն էր ոսկի. այլ ընդ յառնելն ՚ի քնոյ՝ մոռացեալ արքայի զոր ետես, կոչեաց զա՟մ մոգս և զքաղդեայս, զի պատմեսցեն նմա զերազն, և տացեն զմեկնութ՟ն նորա. և յանկարօղ լինել նց՟ ել հրաման յարքայէ կոտորել զա՟մ մոգս։ Եւ զի նաև զԴանիէլ և զընկերս նորա մոգ համարէին քաղդեացիք վ՟ն իմաստութ՟ն նց՟, փութացաւ Դանիէլ և աղաչեաց զԹագաւորն՝ արգելուլ զկոտորած մոգուց, և տալ ինքեան ժամ վ՟ն բանին այնորիկ։ Եւ ՚ի կալ Դանիէլի և ընկերաց նորա յաղօթս, ուսաւ Դանիէլ յա՟յ ՚ի տեսլեան գիշերոյ զխորհուրդ իրացն. և մտեալ առաջի Թագաւորին՝ պատմեաց նմա մի ըստ միոջէ զերազն նորուն, և ետ զստոյգ մեկնութ՟ին։ Ընդ որ սքանչացեալ Թագաւորին՝ գովեաց զա՟ծն Դանիէլի, և մեծացոյց զԴանիէլ փառօք և պարգևօք. կացոյց զնա իշխան ՚ի վերայ ա՟մ իմաստնոց բաբելացւոց, և միանգամայն վերակացու աշխ՟ին՝ անպակաս լինելով և յարքունի դրանէ։ Եւ Դանիէլ խնդրեաց յարքայէ, և կացոյց ՚ի վ՟ր գործոց աշխ՟ին բաբելացւոց իբրև գործակիցս իւր զիւր սիրելի սննդակիցս՝ զսեդրաք, զմիսաք և զաբեդնագով։

Արդ՝ ոչ էին չորեքեանն իսկ հաւատարիմ յիրս արքունի, նոյնպէս և անարատք ա՟մ յօրէնս ա՟յ՝ փայլեալք ա՟ծային իմաստութ՟բ և առաքինի գնացիւք. որ և միանգամայն բազմօք ձեռնտուք ազգակցաց բնակելոց 'ի բաբելոն, որք առաւել բազմացան զայնու ժամանակաւ. քանզի յայնմ միջոցի գերեցաւ և երկրորդն յովակիմ, որ և յեքոնիա որդի յովակիմայ առաջնոյ՝ արքայ յուդայ հանդերձ բազմութ՟բ հրէից. ե՟ որս էր և եզեկիէլ մարգարէ. ե՟ ոմանց նաև մուրթքէ. որ՟պս և յետ քանի մի ամաց նաև սեդեկիա վերջինն 'ի թագաւորս յուդայ :

Եւ յայն աւուրս գերութե՟՝ ո՟չ երեմիա մարգարէանայր 'ի հրէաստան, նոյնպէս և յ՟երին բաբելացւոց ի՟մ քաղդէացւոց մարգարէանայր եզեկիէլ. և այն՝ յիշելով զդանիէլ 'ի կենդանութ՟ե նո՟ր իբրև համադաս ե՟ նոյի և ընդ յոբայ, ե՟ որում արդար քան զ՟ամ մարդիկ ժմկին. և դր՟ձլ կշտամբելով զիշխանն ծուրայ, որ կարծէր զանձն ա՟ծ ո՟մն լինել իմաստութ՟ե մասամբ, այսպիսի ի՟մն պանծալի հարցուածով. * միթէ իմաստնագո՟յն իցես քան զդանիէլ‖. որով և զայն է իմանալ, թէ անուանն դանիէլի և իմաստութ՟ն նո՟ր անհամեմատ՝ համբաւե՟լ էր ե՟ ա՟մ տեղիս :

Օայնու ժամանակաւ քանզի զօրացեալ էր նաբուգոդոնոսոր ք՟ զ՟ամ թագաւորս երկրի, մեծամտե՟լ յետին ամբարտաւանութեամբ՝ կանգնեաց զիւր պատկեր ոսկի ահագին մեծութ՟բ յ՟երին բաբելացւոց, հրաման տուե՟լ զի ա՟մ ազգք և ազինք երկրպագցեն արձանին իւրում իբրև ա՟յ. և որ ոչն հնազանդի,

արկցի

արկցի 'ի հնոց հրոյն բորբոքելոյ ։ Այլ 'ի գործոյ անտի ամպարշտութե՟ն անարատ պահեցին զանձինս դանիէլ և երեքին բարեկամք ն՟ր, զգուշացուցանելով և զհրէայս ։ Ընդ այս զչարեալ քաղդէացւոց, և ոչ իշխեալ ասել ինչ զդանիէլէ՝ որ սիրելին էր արքայի և իբրև գլուխ ա՟մ իշխանաց, ամբաստան եղեն զերից ընկերաց ն՟ր, և ասեն ցնաբուգոդոնոսոր․ ահա երեքին այն արք հրէայք գլխաւորք՝ զորս կացուցեր 'ի վերայ գործոց [illegible] բաբելացւոց, սեդրաք, միսաք, և աբեդնագով, ո՛չ հնազանդեցան հրամանի քում ա՛րքայ․ զի ո՛չ զդիս քո պաշտեն, և ո՛չ պատկերիդ քում ոսկւոյ երկիր պագանեն ։ Իսկ թագաւորն բարկուե՟ կոչեալ զն՟ս առաջի իւր՝ իբրև ստուգեաց 'ի ն՟ցէ զիրսն, սպառնացաւ ն՟ց արկանել զն՟ս 'ի հնոց հրոյ․ և ո՞վ է ասէ ա՟ծ՝ որ փրկեսցէ զձեզ 'ի ձեռաց իմոց ։ Պ՟խնի ետուն երեքեան ն՟ք իբրև 'ի միոջէ բերանոյ, և ասեն ցթագաւորն․ ոչինչ է պիտոյ վ՟ն բանիդ այդորիկ տալ քեզ պ՟խնի․ զի է մեր ա՟ծ յերկինս՝ զոր մեքն պաշտեմք․ նա կարօղ է փրկել զմեզ 'ի հնոցէ հրոյդ բորբոքելոյ, և 'ի ձեռաց քոյ ա՛րքայ ապրեցուցանել զմեզ․ ապաթէ ոչ՝ այս ինչ յայտնի՛ լիցի քեզ, զդիս քո մեք ո՛չ պաշտեմք, և պատկերիդ ոսկւոյ՝ զոր կանգնեցեր, երկիր ո՛չ պագանեմք ։ Այս գեղեցիկ վկայաբանութիւն երեցունց քաջ նահատակացս, որք կոչին Երեք Մանկունք, եղև նախանկար օրինակ ա՟մ վկայիցն ք՟սի, որք արիաբար դաւանեալ զճշմարտութիւնն առաջի թագաւորաց և դատաւորաց՝ մատնեցին զանձինս 'ի հուր և 'ի սուր ։

Իսկ թէ զիա՛րդ սքանչելեօք պահեցան սր՟ մանկունքն 'ի հրոյ անտի հնոցին՝ յոր արկան հրամանաւ թագաւորին, և որպէս յաղթեցին ն՟ց և յօրհնեցին զա՟ծ՝ էջ հրեշտակ ա՟յ 'ի հնոց անդր 'ի նմանութիւն որդւոյն ա՟յ, և ապրեցոյց զն՟ս, յայտ է ամենեցուն յօրհնութե՟ անտի՝ զոր ա՟մ եկեղեցիք հաւատացելոց 'ի կիր արկանեն 'ի պաշտամունս առաւօտին ժամերգութե՟. յորմէ և շարականք գլխովին՝ որ զընթացս օրհնութե՟ երից մանկանցն պահեն, Հարց անուանին՝ վ՟ս օրհնելոյ ն՟ց զտ՟ր ա՟ծ հարցն մերոց ։

Արդ՝ իբրև ետես Նաբուգոդոնոսոր զսքանչելիսն, որ եղեն, և զհրեշտակն՝ որ ընկերէր երից մանկանց 'ի մէջ հնոցին, զահի հարաւ. և մատուցեալ 'ի դուռն հնոցին՝ ասէ. Սեդրա՛ք, Միսա՛ք և Աբեդնագո՛վ՝ ծառայք ա՟յ բարձրելոյ, ելէ՛ք և եկա՛յք. և ն՟ք ելին ողջանդամ 'ի միջոյ հրոյն, ուր ոչ սակաւք 'ի քաղդէացւոց այրեալ էին և արտաքոյ հնոցին ։ Յայնժամ երկիրեպագ թագաւորն առաջի ն՟ց ա՟ն. և ետ պատուէր հրամանի՝ զի մի ոք խօսեսցի հայհոյութի՟ զա՟յ նոցա. իսկ զն՟բսն ա՟յ առաւել ևս շքեղացոյց պատուով, և աղաչեաց զն՟ս լինել իշխան ա՟մ հրէից՝ որք էին 'ի թշ՟րութե՟ ն՟ր ։ Գործակից էր ազարիանց և մեծն դանիէլ աղօթիւք իւրովք. և զուարճացեալ տայր փառս ա՟յ վ՟ս այնպիսի սի պանծալի վկայութե՟ սիրելեաց իւրոց ։ Բայց Նաբուգոդոնոսոր գրաստամիտն իբր 'ի մոռացօնս արկեալ զզօրութի՟ն այ՟՝ ոչ ցածեաւ յամբարտաւանութե՟ սրտի իւրոյ , այլ Ա՟ծակերպ ձոխանալ կարծէր 'ի վր՟ համօրէն տիեզերաց ․ և ոչ առնոյր 'ի միտ՝ եթէ 'ի Տ՟նէ է յաջողութի՟ իշխանութե՟ նր՟ և յաղթութիւն պտ՟րզմաց , զի Տր՟ էառ զնա իբրև զաւազան բարկութե՟ 'ի ձեռս իւր՝ խրատել նովաւ զա՟մ ազինս , և ապա խորտակել զնա և զթգ՟րութի՟ նորա միանգամայն ․ զոր և եցոյց նմա 'ի տեսիլ երազոյ՝ օրինակաւ երկնաբերձ և երկրաւոր ծառոյ , յորմէ կերակրիւր ա՟մ մարմին ․ այլ փոյթ հատաւ յարմատոյ ։ Եւ զայս ևս տեսիլ արքայի , զոր լուան , բայց ոչ կարացին մեկնել ա՟մ իմաստունք քաղդէացւոց , մեկնեաց մարգարէն դանիէլ , յայտ արարեալ թագաւորին զցասումն այ՟ 'ի վր՟ հպարտութե՟ նր՟ ․ և գուշակելով նմա՝ թէ հալածեսցեն զքեզ 'ի մարդկանէ իբրև գազան վայրենացեալ , և ը՟ գազանս անապատի եղիցի բնակութի՟ քո ․ մինչև ծանիցես՝ թէ տիրէ բարձրեալն թգ՟րութե՟ մ՟դկան ․ և ում կամի , տացէ զնա ։ Եւ թէպէտ խրատեաց զնա դանիէլ հաշտ առնել զԱ՟ծ ողորմութբ՟ և գթովք տնանկաց , զի թերևս ողորմութի՟ գտցէ յայ՟ , այլ յապախտ առնել նորա՝ եկն այս ա՟մ 'ի վր՟ նորա ․ զի 'ի մարդկանէ հալածեցաւ , և խոտ իբրև արջառ ուտէր , և 'ի ցօղոյ երկնից մարմին նորա ներկաւ ․ մինչև վարսք նր՟ իբրև զառիւծուց մեծացան, և եղնգունք նորա իբրև զթռչնոց։ Եւ այսպէս զեօթն ժամանակս՝ ըստ բանի Դանիէլի, այս է զեօթն ամ, կամ զեօթն ամիսս, գազանական կեանս վարեաց 'ի բացի՝ անկեալ 'ի մտաց, և այլափոխեալ ըստ կերպարանաց. և ապա միտք նորա առ նա դարձան, և զբարձրեալն օրհնեաց. և Աստուած դարձոյց զնա յաթոռ իւր։

Յետ այսորիկ յաւուրս թագաւորութեան Բաղտասարայ՝ որդւոյ (կամ թոռինն) Նաբուգոդոնոսորայ, յորժամ երևեցան 'ի ժամ ընթրեաց յանկարծակի մատունք ձեռին մարդոյ, որ գրէին գիր անծանօթ 'ի վերայ բռելոյ որմոյ տաճարի թագաւորին, դարձեալ անկարանային ամենայն մոգք և քաղդեայք ընթեռնուլ զայն, թող թէ մեկնել։ Յայնժամ խնդրեցաւ Դանիէլ, և եկեալ ընթերցաւ զգիրն, և ետ զմեկնութիւն նորա, որ վասն լրման ժամանակի 'ի բարձումն թագաւորութեանն 'ի տանէն Նաբուգոդոնոսորայ, որ եղ 'ի գլուխ առ օրին. քանզի և 'ի նմին գիշերի սպանաւ Բաղտասար արքայ, և Դարեհ մար էառ զթագաւորութիւն քաղդեացւոց՝ ձեռնտուութեամբ մեծին Կիւրոսի պարսկի։

Եւ եղև 'ի կացուցանել Դարեհի զնախարարս հարիւրևքսան 'ի թագաւորութեան իւրում՝ կարգեաց 'ի վերայ նոցա երիս գլխաւոր հրամանատարս. և մի 'ի նոցանէ էր Դանիէլ՝ ծերացեալ հասակաւ, այլ զօրաւոր հոգւով և մարմնով։ Որ և այնչափ սիրելի լինէր յաչս Դարեհի, մինչև կարգել 'ի նմա իբրև գլուխ

ամ

ա՟մ իշխանաց, և վերակացու ա՟մ թգ՟րութե՟ նորա․ վ՟յ նախանձեցան ը՟ նա հրամանատարք և նախարարք, և խորհէին տալ կորուսանել զնա ։ Եւ իբրև ոչ գտին պատճառս չարախօսութե՟ զնմանէ առ արքայ, պատճառեցան զօրէնս ա՟յ նորա․ և ետուն դարեհի հանել հրաման անհեթեթ, զի թէ ոք խնդրեսցէ խնդրուա՛ծս յա՟մ ա՟յ կամ 'ի մարդոյ մինչև յաւուրս երեսուն, բայց միայն 'ի դարեհէ արքայէ, անկցի 'ի գուբ առիւծուց ։ Եւ զայս վ՟ն այն արարին, քանզի գիտէին, զի դանիէլ ե՟ հանապազորդ սովորութե՟ իւրում աղօթէ առ ա՟ծ բարձրեալ 'ի տան իւրում, ուր պատուհանք բաց էին նմա 'ի վերնատան ը՟դէմ եր՟մի․ և երիս ժամս յաւուրն դնէր ծունր, և կայր յաղօթս և գոհանայր առաջի ա՟յ իւրոյ․ արդ տեսեալ՝ զի և յաւուրս արքունի հրամանին զնոյն առնէ նա, չոքան չարախօս եղեն թշնամիքն առ արքայ, եթէ արհամարհեաց դանիէլ զհրաման քո․ վ՟յ հարկեցուցանէին ընկենուլ զնա 'ի գուբ․ և թագաւորն յակամայս արար զկամս նոցա․ և ասէ ցդանիէլ․ ա՟ծ՝ զոր դու պաշտես, նա փրկեսցէ զքեզ ։ Եւ իբրև 'ի վ՟ր եանց գիշեր մի, եկեալ արքայի ը՟ առաւօտն՝ եգիտ զդանիէլ ողջանդամ․ զի եխից ա՟ծ զբերանս առիւծուց, և ոչ արարին ինչ նմա վնաս․ յայնժամ եհան զնա թագաւորն, և ընկէց փոխանակ նո՟ր զչարախօսս նորա․ զորս և նոյնժամայն ծախեցին առիւծքն ։

Ընդ այն ժամանակս կիւրոս արքայ պարւոյց՝ յառաջնում ամի թ՟գրելոյ Կիւրոյ տիրաբար 'ի վ՟ր արևելեայց ամ՟ի, արար զդարձ գերուե՟ հրէից 'ի բաբելոնէ յե՟ղմ, որոյ վ՟ն ստէպ աղօթեալ էր դանիէլի · այլ ինքն դանիէլ ոչ դարձաւ յե՟ղմ ը՟ զօրաբաբելի և որոց ը՟ նմա · զի ոչ միայն դարեհ արքայ չկամէր թողուլ զնա, այլև դանիէլ ինքնին լաւ համարէր կալ մնալ անդէն յերկրին քաղդէացւոց, զի օգնական լիցի հրէից մնացելոց անդ · քանզի բազումք անդէն հաստատեալ էին զտուն և զբնակութի՟, և ոչ ելին յե՟ղմ։

Նա էր դանիէլ կենաց կցորդ դարեհի արքայի, միանգամայն և կիւրոսի, որ երբեք երբեք գայր 'ի բաբելոն · և քանզի ամ՟ի յաջողեալ էր դանիէլի 'ի թ՟գրութե՟, համարձակութի՟ առեալ 'ի դարեհէ՝ կործանեաց զերևելի բագինն բելայ գլխաւոր չ՟ծյն բաբելացւոց, յայտնելով արքայի զխարդախանս քրմաց · որոց արարեալ գետնափոր անցս 'ի մեհեանն՝ ուտէին զսեղան թագաւորի կանամբք և որդւովք՝ զեդեալն առաջի դիցն բելայ ։ Սպան զկնի և զմեծ վիշապն, զոր 'ի պաշտօն առեալ էր բաբելացւոց · ը՟ որ չհանդուրժեալ ամբոխին՝ կուտեցան 'ի վ՟ր թագաւորին · Հրեայ եղև ասեն թագաւորն, զի բանի՛ դանիէլի զբէլ կործանեաց, և ըզվիշապն սպան, և զքուրմսն կոտորեաց · և ստիպէին զթագաւորն՝ տալ զդանիէլ 'ի ձեռս իւրեանց · ապա թէ ոչ՝ սպանանեմք ասեն զքեզ և զտունդ քո · և նա հարկեալ մատնեաց զդանիէլ 'ի ձեռս նց · և նք արկին զնա

'ի

'ի գուբն առիւծուց , ուր կային առիւծք եօթն. և եկաց անդ դանիէլ զվեց օր. յորում ժամանակի եբեր նմա ճաշ ամբակում մարգարէ յեհ՟մ՝ փոխադրեալ ձեռամբ հրեշտակի տն՟ 'ի բաբելոն ։

Իսկ յաւուրն եօթներորդի իբրև եկն թագաւորն աշխարել զդանիէլ իբրև զմեռեալ , այն ինչ եգիտ զնա կենդանի , աղաղակեաց և ասէ . մե՛ծ ես տր՟ ա՟ծ դանիէլի , և չի՛ք այլ ոք բաց 'ի քէն . և 'ի վեր առեալ զնա՝ ընկեց փոխանակ նր՟ 'ի գուբն զգլխաւորս յոսոխաց նր՟ . և նոյնժամայն գէշ գէշ պատառեցան ն՟ք առաջի թագաւորին .

Զայս վայր են պատմութի՟ք մեծին դանիէլի աւանդեալ 'ի գիրս մարգարէութե՟ նորա . ուր գրին և այլ սքանչելի տեսիլք և յայտնութի՟ք՝ որք եղեն առ նա 'ի տն՟է վս՟ հանդերձելոց իրաց , և վս՟ կրկնակի գալստեան փրկչին յս՟ , և մեկն աւանդի 'ի ձեռն եօթանասուն եօթներորդաց թուական ժամանակի կործանման երկրորդ տաճարին , և բարձման զոհից ա՟մի 'ի հրէից յետ պատարագելոյ գառինն ա՟յ 'ի վր՟ խաչին ։ Արդ քանզի յիշէ դանիէլ զհասանել իւր յաւուրս կիւրոսի , և ոչ յիշէ զկնի ինչ , ասեն ոմանք 'ի մեկնչաց՝ թէ եհաս մինչև յերրորդ ամն կիւրոսի , և վախճանեցաւ իբր 534 ամօք յառաջ քան զծնունդն ք՟ի՝ 'ի կատարեալ ծերութեան իբրև հարիւրեմեան ։ Որպէս և երեքին բարեկամք նր՟ անանիա , ազարիա , և միսայէլ 'ի ծերութե՟ փոխեցան առ տր՟ ։

Բայց էին որ դնէին թէ դանիէլ եհաս և ցաւուրս արտաշէսի արքային պարսից. և զի յայնմ ժամանակի եզրաս դպիր օրինաց հաւաքեալ էր կանխագոյն զգիրս մարգարէից առաջնոց 'ի մի մատեան, և գիրք դանիէլի չև էր տակաւին ամբողջ հանդիսացեալ, նմին իրի հրէայք զսորա գործն թուեցին յայլում կարգի սրբազան մատենից՝ արտաքոյ հին օրինաց, և հին մարգարէից. և կ̃մ յետնորդք հրէից յայտնի տեսեալ զժ̃մկ գալստեանն ք̃նի գլխաւորեալ ը̃ բանի ն̃ր՝ զոր ոչն կամէին, ուրոյն զատուցին զգիրս ն̃ր. մանաւանդ զի քաղդէարէն էր գրեալ, և ոչ եբրայեցերէն ։ (2)

Ոմանք 'ի մատենագրաց վկայս կամ մարտիրոսս անուանեն զդանիէլ և զերիս մանկունս՝ թերևս վ̃ս խոստովանողական վկայութեանն ն̃ց. բայց եղեն և վկայադիրք առ յոյնս, յորոց էանց և 'ի յայսմաւուրս հայոց, որք յանստոյգ աւանդութ̃եց ուստեք հրէից՝ գրեցին, թէ աստաղոս կ̃մ ատտիկոս ոմն թագաւոր (յաջորդ արտաշեսի կարծեցեալ,) յանդիմանեալ վ̃ս ամպարշտութ̃ե իւրոյ 'ի դանիէլէ և յերից մանկանց ծերացելոց՝ սրով նահատակեալ իցէ զն̃ս, հանդերձ պէսպէս պարագայիւք, որոց չիք վաւերական վկայութ̃ի 'ի հաւատարիմ պատմագրաց առաջնոց ։

Միայն գրէ յովսեպոս եբրայեցի ('ի Ժ̄ ԳԻՐՍ ՆԱԽՆԵԱՑ. ԳԼ. ՎԵՐՋԻՆ), թէ դանիէլ 'ի կենդանութ̃ե իւրում շինեաց յեկբատանս մարաց զաշտարակ մի հոյակապ՝ գործ չքնաղ և սքանչելի , 'որ կայ մնայ ասէ մինչև ցայսօր՝ ոչ նորաշէն երևեալ , անվնասելի ամենևին յերեսաց հնութեան , իբր այն թէ առ օրին կանգնեալ իցէ ․ և մինչև ցօրս ցայս յաշտարակի անդ թաղին թագաւորք մարաց և պարսից և պարթևաց ։ Արդ՝ ոմանք 'ի նախնեաց համարին , թէ յաշտարակի անդ իւրում թաղեցաւ և ինքն դանիէլ պատուով յառանձին այրի իբրև 'ի թագաւորական շիրմի ․ և զայն այր կոչեն ոմանք 'ի պատմագրաց՝ գուբ կամ գերեզման դանիէլի ․ բայց կէսք ասեն զայն լինել 'ի խուժաստան , որ և եղամ կամ երկիր եղիմացւոց՝ յ՟ պարսից ․ կէսք 'ի շօշ կամ յասպահան պարսից , որ և ամուրն շուշան կամ տուշտար քաղաք ․ որպէս և պատմագիրք մեր բաբելոն կամ բաղտատ կոչեն , ուր երբեմն բանտարկեցան նախարարք հայոց՝ 'ի տեղին կոչեցեալ գուբ դանիէլի , իբրև որիշ 'ի գբոյ առիւծուց ։ (3)

Պատմէ և եւսեբիոս վասն մեծին կոստանդիանոսի 'ի վարս նորա (Գիր․ Գ ․ Գլ․ 49 ․) թէ շինեաց մահարձան կամ արձան յիշատակի 'ի պատիւ դանիէլի մարգարէին 'ի կոստանդինուպօլիս ․ այս է՝ յաղբերս անդ , որ կային 'ի մեծ հրապարակի , ետ դնել զպատկեր դանիէլի պղնձի հանդերձ առիւծուք՝ պատեալ ոսկի թիթղամբք ։ Նա և կայսրն վասիլ արշակունի՝ ընդ այլոց պերփեռուժէն , հեղինակ յայսմաւուրացն յունաց բասիլեան կոչեցելոյ , նկարել զպատկեր դանիէլի մարգարէի՝ կանգնեալ 'ի մէջ երկու առիւծուց կենդանի նի ՚ի գբի, և արտաքոյ ուրոյն նկարէր գըլխատումն ո̄ղ մարտիրոսի ։ Նաև ը̄ս հռովմայեցւոցն աւանդութե̄ն՝ հին սովորութիւն էր քրիստոնէից՝ ՚ի գերեզմանս իւրեանց տալ փորագրել ՚ի նշանակ յուսոյ յարութե̄ն զդանիէլ անարատ ՚ի գբի առիւծուց․ թո՛ղ զի և մեկն քարոզեաց մարգարէն զյարութիւն մեռելոց ։

Յիշէ յայսմաւուրքն հայոց զգիւտ նշխարաց երից մանկանց՝ լինել ՚ի բաբելոն յաւուրս վռամայ պարսից արքայի․ յորում ժամանակի հրէայ ոմն նստեալ ՚ի բաբելոն ՚ի տան միում առանձին՝ տայր ո̄մ ցաւագնելոց և հիւանդաց զջուր ինչ մաքուր յըմպել, և ողջանային բազումք․ յայնժամ այր ոմն քրիստոնեայ անուն մալխութայ յազատ ազգէ՝ կարգեալ յարքայէն պարսից իշխան կողմանցն բաբելացւոց, առաքեաց զմի ՚ի ծառայից իւրոց, և ՚ի վերայ եհաս՝ թէ զօրութի̄ բժշկութե̄ց էր ՚ի տեղւոջն՝ յայսմանէ, զի ասէր հրէայն, թէ յայսմ տեղւոջ՝ յորում դնեմ զամանս ջրոյ, են նշխարք երից մանկանցն ՚ի մէջ տանս․ զի անդ շինեալ էր շիրիմք նոցա ։

՚Ի մէջ բերէ և բարոնիոս զաւանդութիւն արևմտեայց, թէ նշխարք երից մանկանցն ընդ դանիէլի ասին փոխադրեալ ՚ի բաբելոնէ յաղեքսանդրիա եգիպտացւոց, և եդեալ յեկեղեցւոջ սր̄ցն յովհաննու և կիւրոսի․ և ապա նշխարք երից մանկանց համարին փոխադրեալ ՚ի վենետիկ, իսկ բարձք սր̄յն դանիէնիէլի 'ի վերկեզա։ Աւանդի և 'ի Հնումս կոստանդինուպօլսոյ, թէ վաղագոյն դշխոյն Հեղինէ եդ անդ մօտ յեկեղեցի սրբոյն Ռոմանոսի զստապանակ մի, յորում կային նշխարք Դանիէլի մարգարէի. Նոյնպէս ամփոփեաց և զայլոց ոմանց 'ի մարգարէից զնշխարս, զորս բերեալ էր յե՟մ։ Ըստ գաղղիացւոց՝ սկաւառակ գլխոյ Դանիէլի մարգարէին եդաւ յուրբանոսէ հինգերորդէ Հռովմայ Հայրապետէ 'ի տեղւոջ ծննդեան իւրոյ 'ի տրեկա՝ յեկեղեցւոջ, զոր շինեաց յանուն համանուան իւրոյ սրբոյն Ուրբանոսի։ Ըստ՟ և ը՟ իտալացւոց՝ մասն մի սրբոյն Դանիէլի 'ի բաբելոնէ բերեալ է յարետ քաղաք յամի տն՟ իբր 1220։ Թող զեկեղեցիս և զվանս շինեալս 'ի զանազան տեղիս 'ի վաղ ժամանակաց յանուն սրբոյն Դանիէլի մարգարէի։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ։

(1) Դանիէլ Թարգմանի դատաստան այ՟, կմ՟ դատաւոր այ՟, և կմ՟ դատ արար ինձ ած՟, 'ի դէպ եկեալ գործոց և բանից մարգարէիս. ոմանք կարծեն՝ թէ նաև Բաղտասար զնոյն նշանակիցէ քաղդէարէն, զոր այլք լաւ ևս ստուգաբանեն՝ բանհաղու գանձ ծածկեալ, կմ՟ իմաստութ՟ի բէլայ. զի և արքայորդին այնպէս կոչիւր։ Յորդւոցն յուդայ ասին դանիէլ և երեք մանկունքն՝ 'ի դն. ա. 6. ուր և 'ի համարն 3. յիշին ընհանրապս որդւք գերութ՟ե՝ 'ի զաւակէ թագաւորութ՟են և 'ի պարթևաց, իմ՟ քաջաց իբրև տոհմականաց, վսյ՟ այլք ընթեռնուն՝ 'ի բռնաւորաց։ Յովսեպոս պարզապէս դնէ զսոսա լինել յազգականութ՟է սեդեկիայ արքայի յուդայ. որում

'ի

'ի դէպ գայ և կանխատեսութիւն Եսայեայ առ Եզեկիա արքայ Յուդայ, թէ՝ և յորդւոց քոց՝ որք ելանիցեն 'ի քէն, առցեն և արասցեն ներքինիս 'ի տան թ՟գ՟րին Բաբելացւոց: Այլ տարադէպ լինի կարծեցն Թալմուտեանց հրէից, թէ սովին բանիւ և Դանիէլ՝ ներքինի ասդնել պէտք լինիցեն. զի նա, և ընկերք ն՟ր՟ 'ի վերայ արքունի գործակալութե՟ց Ծին կային, և ոչ 'ի սպասու տիկնայց թ՟գ՟րին. այլ քանզի կուսակրօն մնացին՝ որ է լինել ներքինի վ՟ս՟ արքայութեանն ա՟յ՟, Թանձրամիտ հրէայք յայլ միտս բերեալ եղեն: Ս՟բ՟ն Եպիփան 'ի գիրսն ը՟դդէմ հերձուածոց Մելքիսեդեկեանց ասէ. * Քանզի
,, և այլք ոչ ունին աղգաբանութիւն յայտնի. Դանիէլ,
,, Սեդրաք, Միսաք, Աբդենագով, Եղիա Թեզբացին.
,, Արդ յա՟մ՟ գիրս ս՟բ՟ս ոչ ուրուք 'ի սոցանէ յառաջ բե-
,, րին հարքն և մարքն. այլ զի մի՟ յայն սակս մոլորեսցի
,, ոք, ոչինչ դանդաղիմ՝ զոր ինչ յաւանդութե՟ց առաքն՝
,, ասել. քանզի գտաք զհայրն Դանիէլի՝ Սաբաա անուն
,, ոմն կոչեցե՟լ . . . իսկ Եղիա Թեզբացի՝ եղբայր էր յո-
,, վիդայեայ քահանայի, յայտ է թէ և ինքն 'ի քահանայից
,, գոլով, որդի Աքիմաամայ. իսկ Աքիմաամ էր որդի
,, Սադովկայ. . . . Այլ վ՟ս՟ ծագման երից մանկանց՝ Սեդ-
,, րաքայ, Միսաքայ և Աբդենագովայ՝ ոչ յանդիպաւ գիրս,
,, և ոչ յաւանդութիւն գտանեմք ինչ: Արդ՝ զի՟նչ ասա-
,, ցուք. մի թէ և սոքա՝ Սեդրաքեանք ասեմ, պղտորեսցեն
,, զմիտս մեր՝ խորհել զինչ է զոր չէ արժան, և սքանչանալ
,, ը՟ նո՟ց ափշութ՟ (որպէս ը՟ որդիս ա՟յ՟) գեր 'ի վերոյ քան
,, զչափ իւրաքանչիւր աստիճանի. այլ մի՟ լիցի. քանզի և
,, սահմանք եդան մեզ և հիմունք և շինուածք հաւատոյ,
,, և աւանդութիւնք առաքելոց, և գիրք ս՟բ՟ք, և յաջորդու-
,, թիւնք վ՟ր՟դպութ՟. և ա՟մ՟ ուսանէք ճշմարտութիւն ա՟յ՟ հաս-
,, տատեալ կայ. և մի՟ ոք զաւանցուսցէ նորանոր ա-
,, ռասպելեօք ||:

Եղեն և ոմանք, որք ասացին՝ թէ Դանիէլ էր մայրենեօք 'ի տանէն Յուդայ, և հայրենեօք ղեւտացի. այլ 'ի զուր. զի ուր գրի 'ի Դան. ժ՟դ՟. 1. * և Դանիէլ էր կե-
,, նաց կցորդ թ՟գ՟րին, և փառաւոր ք՟ զա՟մ՟ բարեկամս
,, նորա ||, յօրինակի միում յանուն եօթանասնից ընթերցեալ է ս՟բ՟յն Հերոնիմոսի այսպէս. * այր ոմն էր քա-
,, հանայ՝ անուն Դանիէլ, որդի Աբդայ ||. զոր ոչ ոք ը՟ունի իբրև վաւերական: Ոչ՟ և անստոյգ է գրեալն 'ի ս՟բ՟յն Դորոթէոսէ և 'ի ս՟բ՟յն Եպիփանէ յաղագս մահու մարգարէից, թէ քաղաքն Դանիէլի էր Բեթորոն,

որ ասի լինել նոյն մղոնաւ հեռի յեմէ՝ մօտ յեմմաուսա, 'ի վիճակի ցեղին եփրեմայ՝ որոշեալ 'ի բնակութիւն ղևտացւոց:

(2) Եթէ հրէայք յաւուրս փրկչին մերոյ չճանաչէին զդանիէլ տիրապէս 'ի կարգս մարգարէից, ունէին արդեօք եպերել զբան նր ասացեալ, * յորժամ տեսանիցէք ,, զպղծութիւն աւերածոյն, որ ասացեալն է 'ի ձեռն ,, դանիէլի մարգարէի || եւն: Զի՛ ոչ ունէին ասել և արդի հրէայք առ գրեալսն 'ի յովսեպոսէ եբրայեցւոյ. 'Ի Ժ. Գիրս Նախնեաց. Գլ. 12. յաղագս դանիէլի այսպէս. * Ամ ,, բարեվայելչութիւն երբև գերապանծ մարգարէի 'ի դէպ ,, յաջողեաց նմա. այն՝ որ 'ի կենդանութեան և՛ առաջի ,, թգրաց, և՛ առաջի ժողովրդեան եգիտ շնորհս. և յետ ,, մահու յաւերժական եհաս յիշատակի. քանզի գիրք նր՝ ,, զորս եթող մեզ գրեալս, մինչև ցարդ ընթերցեալ լինին ,, 'ի միջի մերում. որք հաւատարիմ առնեն մեզ, եթէ ,, ածախօս էր նա, Եւ ոչ եթէ զհանդերձեալսն միայն ,, գուշակեաց որպս զայլս 'ի մարգարէից, այլև զժամանակն՝ ,, յորում հանդերձեալ էին լինել, կանխեալ արձանագրեաց ,, . . . Աւանիկ առ ձեռն պատրաստ կան ,, գիրք նր, յորմէ զստուգութիւն մարգարէութեան նորա ,, ունիմք իմաստասիրել || . եւն:

(3) Ընդ անստոյգ պատմութիւնս գրի և այն, զոր խառն 'ի տեսոյ և 'ի լրոյ աւանդէ բենիամին տուդելացի պատմիչ հրէայ 'ի ժբ դարու, թէ 'ի խուժեստան կմ՝ 'ի շուշդան լսէ գերեզման դանիէլի մարգարէի՝ առաջի միոյն 'ի չորեքտասան սինակոկէայից հրէից անդ եղելոց. * Անցանէ ,, (ասէ) գետն տիգրիս ը մէջ քաղաքին, և անդրպէտ ,, զբնակութիւնս հրէից. 'ի մի կողմն գետոյն են ,, ամ ճոխք, և ունին հրապարակս լի ընչիւք և վաճառուք ,, . իսկ 'ի միւս կողման են առ հասարակ սինլիքօրք՝ ,, զուրկ 'ի հրապարակաց և 'ի վաճառուց. ոչ ,, գոն նց և պարտէզք. մինչև 'ի նախանձ բերեալ ըդէմ ,, բնակչաց հանդիպակողմանն՝ համարէին, թէ մեծութիւն ,, և ճոխութիւն նց է 'ի մերձաւորութենէ դանիէլի ,, մարգարէին անդ թաղելոյ. վս խնդրեցին 'ի նցէ ,, փոխադրել զգերեզմանն դանիէլի յիւրեանց կողմն: ,, Եւ զի չառին նք բնաւ յանձն, գրգռեցաւ հկռութիւն ,, և կռիւ բազմօրեայ, մինչև անկանիլ բազմաց 'ի մարտի ,, յերկուց կողմանց. ապա պարտասեալ սց և նց՝ ,, դաշն հաստատեցին խաղաղութեան սովին պայմանաւ ,, , զի ամ ը ամէ փոխանակաւ փոխադրեսցի կո-

,, թողն

,, թողլ (կէՒ մահարձանն) դանիէլի յայսկոյս և յայնկոյս ·
,, և այնպէս արարին զքանի մի նուագս ։ Ընդ այն ժա-
,, մանակս եկն յերկիրն յայն սենիգար շահ որդի շաայ՝
,, մեծ ինքնակալն ամ՟ թագաւորացն պարսից · · · և
,, զտեղի էառ 'ի քաղաքի անդ զժամանակ ինչ · և տե-
,, սեալ՝ եթէ փոխադրեն զտապան դանիէլի կողմանէ
,, 'ի կողմն քաղաքին , զ՟ նմին և բազումք 'ի հրէից և յիս-
,, մայելացւոց փոխէին զբնակութիս իւրեանց , եհարց
,, զպատճառս իրացն ։ Եւ իբրև իրազեկ լինէր , դժպա-
,, տեհ համարեցաւ թողացուցանել զայնպիսի անպատ-
,, ուութի ընդէմ դանիէլի · ապա անվրէպ զչափ աւէ-
,, միջոցին՝ որ ընդ մէջ երկուց կողմանց քաղաքին , և
,, եդեալ զմահարձանն դանիէլի 'ի մեծ տապանակ ա-
,, պակեայ՝ կախեաց զայն 'ի միջավայրի անդ (գետոյ)
,, զահագին գերանէ պղնձի շղթայիւք , և հրաման ետ
,, շինել տաճար 'ի պէտս ժողովարանի , որ անխտիր բաց-
,, ցի ամ՟ եկելոց անդր յամ՟ ազգաց , և մի ոք արգելցի՝
,, եթէ հրէայ և եթէ արամացի , որ միանգամ կամիցի
,, մտանել անդր՝ վն՟ աղօթից ։ Եւ կայ տապանակն այն
,, կախեալ զգերանէ մինչև ցօրս ցայս ։ Եւ յաւել ինք-
,, նակալն դնել պատուէր հրամանի , զի մի ոք իշխես-
,, ցէ ձուկն որսալ 'ի գետոյ անտի՝ մղոնաչափ 'ի վայր ,
,, և մղոնաչափ 'ի վեր , 'ի պատիւ մեծարանաց և պաշ-
,, տամանն դանիէլի || ։ Արդ՝ ո՞ ոչ ասիցէ , թէ այս
հրէական պատմութի զօրէ միայն 'ի սփոփել զհրէայս ,
զի հաստատեսցեն մարգարէութե դանիէլի՝ զոր այսչափ
պաշտեն · այլ թէ յինչ հիմնեալ է ստուգութի պատ-
մութեաս , որոյ ժմկն և հանգամանք են անյայտ , թո-
ղումք դրչին ։

ՍՐԿ·

ԵՐԿՐՈՐԴՈՒՄ՛Ն ՏՕ՛ՆԻ

Սրբ՟ց Թարգմանչաց մերոց՝ Սահակայ, և Մեսրոպայ, և աշակերտաց ն՟ց ։

Հ . սեպտ . 17 . և նոյեմբ . 25 . Շարակն . Ը . Նախ—Ննջ ։ Կցուրդ . Խորհրդոյ . Ճարտարեալ . և այլ ըննե նոյա ։

ՎԱՐՔ ՍՐԲՈ՛ՅՆ ՍԱՀԱկայ պարթևի աւանդեցաւ 'ի մէնջ յառանձին աւուր տօնի ն՟ր 'ի միջոցի առաջաւորաց և աղուհացից . նոյնպէս և վարք ս՟բյն Մեսրոպայ և գլխաւոր աշակերտացն տեսցի 'ի միջոցի ա՟ծածնի և խաչի ։ Իսկ պատճառ աստանօր կրկնութեան միաբան տօնի սոցա՝ այն է , զի ըստ հին կարգաւորութեան ճաշոցին , ո՟չ տօն սահակայ պարթևի ուրոյն եղաւ 'ի Նաւասարդի Է . յաւուր փոխման ն՟ր , և տօն Մեսրովպայ յօր վախճանի ն՟ր 'ի մեհեկի ժգ , նոյնպ՟ և 'ի ժէ տրէ ամսոյ՝ որ կարծի լինել ը՟ս յայսմաւուրաց օր գիւտի գրոյն հայոց (թէպէտև 'ի ժէ սեպտ . ևս կրկնէ . ուր միայն դնէ ո՟ր ինքն ,) վայելչապէս՝ յաւելաւ հանրական տօն ս՟բց թարգմանչաց . նմին իրի յայսմ միջոցի զկնի ս՟բյն ներսեսի (հօրն սահակայ) որ դնի 'ի Ճաշոցս 'ի տրէ ամսոյ ժ̃ա , և զկնի դանիէլի և երից մանկանց 'ի ժ̃է տրէի , գրեալ է ը̃ս ուղղագոյն օրինակաց հին Ճաշոցին այսպ̃ս ․ * Տրէ ․ ժ̃է ․ սահակայ Թարգմանչի և մեսրոպայ և այլոց Թարգմանչաց ‖ , կամ * Տրէ ․ Ժ̃ ․ Թագմանչին սահակայ , և այլոց Թարգմանչաց ‖ ․ կի̃ւ տրէ ․ ժ̃է ։ * Սահակայ , և այլոց Թարգմանչացն ‖ ․ և կամ պարզապէս՝ * Թարգմանչացն ‖ ։ Իսկ արդարև եթէ գիւտ գրոյն հայոց՝ որ է պատճառ և գործի Թարգմանութե̃ , և եթէ բուն Թարգմանութի̃ ս̃բ գրոց և այլոց մատենից անբաւից՝ որ եղև պտուղ նորագիւտ գրոյ , անմոռաց յիշատակաց և յաւերժական տօնախմբութե̃ էր և է արժանի ․ ը̃ս նմին և փաստակ և արդիւնք ս̃բց Թարգմանչաց՝ վարդապետաց և աշակերտաց նոցին յաւիտենական օրհնութե̃ պատուելիք և պաշտելիք ․ զի եղեն մեզ յետ մեծին գրիգորի լուսաւորչի , և մեծին ներսեսի նորոգողի , լուսաւորիչք և պայծառացուցիչք պանծալիք ․ մինչ զի յոր ինչ բարի և վայելէ մինչև ցայսօր տոհմն Թորգոմայ հոգեպէս և բանաւորապէս , 'ի ս̃բց Թարգմանչացն յորդէ իբրև 'ի կրկնավտակ աղբերէ՝ անհատահոս բղխմամբ հոգւոյն պարգևաց ․ որում փառք և պատիւ յաւիտեանս ․ ամէն ։

ՎԱՐՔ ԵՒ ԿԱՏԱՐՈՒՄՆ

Ս͞բյն Զաքարիայ մարգարէի ։

Հ. Մայիս. 16 ։ Յ. Փետր. 8 ։ Լ. Սեպտ. 6 ։
Բոլլանդեանն յոհ. ստիլտինգ. 'ի Բ͞. հատ. սեպտ.
եր. 655=661 ։

ԶԱՔԱՐԻԱՅ ՈՐԴԻ ԲԱրաքեայ՝ որդւոյ ադդովայ, 'ի դասէ երկոտասան մարգարէից, էր ժամանակակից և գործակից անգեայ մարգարէի՝ միանգամայն և ազգակից ․ Ջղի երկոքին ևս էին ղևտացիք ։ Ծնաւ ը͞ ոմանց 'ի կադդի յերկրին քաղդէացւոց յաւուրս եօթանասնամեայ գերութեանն յուդայ ․ իսկ ըստ այլոց՝ 'ի հրէաստան ծնեալ՝ վարեցաւ 'ի բաբելոն, ուր եկաց մինչև ցծերութ͞ի ․ և բազում օրինակօք մարգարէացաւ վ͞ս դարձի ժողովրդեանն, և վասն այցելութ͞են ա͞յ՝ որ լինելոց էր առ ն͞ա 'ի մօտոյ և յապայ ժամանակս ․ և նշան ետ սքանչելեօք 'ի հաստատութ͞ի բանից իւրոց ․ ետ և նշան վ͞ս յաղթութ͞ե կիւրոսի և զօրանալոյ ն͞ր և ձեռնտու լինելոյ ի͞էլի ։ Գուշակեաց և առ յովսեդեկ քահանայ 'ի բաբելոն, թէ ծնցես որդի, և կոչեսցես զանուն ն͞ր յեսու, որ լինիցի քահանայ ը՟յ յե՟տիմ : Օրհնեաց և զսաղաթիէլ , և ասաց , ծնցիս որդի , և կոչեսցես զանուն նորա զօրաբաբէլ : Զորս և ետես իսկ · և ը՟ նոյին դարձաւ յե՟մ յարձակիլ ժողովրդեան հրամանաւ կիւրոսի · և անդ առ դարեհի՛ւ զօրացուցանէր զնս՟ հանդերձ անգէի՛ւ մարգարէի՛ւ 'ի շինել և 'ի կատարել զտունն տ՟ն :

Ետես և ազգի ազգի տեսիլս և յայտնութի՟ս , և խօսեցաւ և գրեաց յայտապատում կանխասացութի՟ս վ՟ս կրկնակի գալստեանն ք՟ի , ող՟ և վ՟ս անօրէնական գործոց նո՟ր , և վ՟ս վիճակի եկեղեցւոյն ք՟ի : Յանդիմանեաց զպարասանութի՟ ազգին , և մխիթարեաց զյուսացեալսն 'ի տ՟ր · և լի աւուրբք կատարեցաւ և թաղեցաւ մերձ 'ի գերեզման անգեայ մարգարէի :

Եւ քանզի տ՟րն մեր զզաքարիայն՝ որ սպանաւ ը՟ մէջ տաճարին և սեղանոյն , կոչէ որդի բարաքեայ , և չի՛ք այլ ո՟ք յայն անուն յայտնի ծանուցել՟՝ ող՟ սա ինքն մարգարէս զաքարիա , նմին իրի 'ի մէջ ա՟մ կարծողական մեկնութե՟ց զառաջին տեղին ունի՝ ասել , թէ ա՟ք մարգարէն զաքարիա կատարեալ լիցէ մարտիրոսութ՟բ , սպանեալ 'ի հրէից 'ի մէջ նորաշէն տաճարի երկրորդի՝ վ՟ս մկայութե՟ բանին ա՟ն և յանդիմանելոյ զժողովուրդն խըստապարանոց : Եւ զայսմանէ տես ճոխագոյն 'ի ծանօթութի՟ս : (1)

Ծ.Ա.

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ։

(1) Առ 'ի չգոյէ այլում տեղեկութ՟ 'ի վ՟ր զաքարիայ մարգարէի, խնդիր 'ի մէջ առնու աստանօր ստիլտինգ, թէ * որդեօք զաքարիա մարգարէ՟ն իցէ այն, զորմէ ,, ասէ ք՟ս՝ եթէ սպանաւ ը՟ մէջ տաճարին և սեղանոյն ||. զոր և մեզ կարևոր է հետազօտել։ Արդ՝ նախնի հարք և վդ՟յք քանզի զերիս արս ս՟ս գտին 'ի ս՟բ գիրս զաքարիա անուամբ, 'ի վ՟ր երեցունց ևս 'ի կարծիս եղեն. ա՟ են. ա. ազարիա՝ ը՟ այլոց զաքարիա կոչեցեալ՝ որդի յովիդայեայ. բ. զաքարիա մարգարէ. գ. զաքարիա հայրն յովհաննու մկրտչի։

Պատճառն է, զի ք՟ս տ՟րն մեր 'ի բանս իւր. մատթ. իգ. 35. նախ՝ կոչէ զզաքարիայն սպանեալ՝ որդի բարաքեայ. որ տիրապէս անուն է մարգարէին, զի 'ի գլուխ գրոց իւրոց կոչէ զանձն իւր * զաքարիա որդի բարաքեայ որդւոյ ադդովայ ||. 'ի նոյն միտս և եզրաս կոչէ զնոյն մարգարէն զաքարիաս՝ որդի, այ՟ թոռն ադդովայ։ Երկրորդ՝ ասէ տ՟րն, թէ սպանաւ 'ի հրէից ը՟ մէջ տաճարին և սեղանոյն, որ 'ի դէպ գայ ազարիայի կ՟մ զաքարիայի որդւոյ յովիդայեայ. զոր ետ քարկոծել և սպանանել յովաս արքայ 'ի սրահի տանն տ՟ն. բ. մնաց. իդ. 20. և՟ն։ Երր՟դ՝ ցուցանէ տ՟րն մեր, թէ զաքարիայն յիշատակեա՟լ յիւրմէ՝ է վերջինն արդարոց սպանելոց յաւուրց անտի աբէլի արդարոյն առաջնոյ՝ մինչև ցօրն, յորում խօսեցաւ զայն բան. մանաւանդ զի առ լսօղսն ասաց. * զոր սպանէք ||. և այս անուն է զաքարիայի հօրն յովհաննու մկրտչի։

Ուր տեսանես, զի միոյ միոյ յերից զաքարիայից մի մի փաստ ելանէ 'ի բանից տ՟ն. ը՟ նմին և պակասի միոյ միոյ 'ի ն՟ցէ կարևոր ինչ պարագայ. զի ո՟չ վասն զաքարիայ մարգարէի, նոյնպէս և վ՟ս հօրն մկրտչի չունիմք 'ի գրոց, թէ սպանեալ եղեն 'ի հրէից. իսկ զաքարիա կամ ազարիա սպանեալն 'ի յովասայ ոչ էր որդի բարաքեայ, այլ յովիդայեայ. թող զանուն հօրն զաքարիայի վերջնոյ, զոր այլուստ անգիտանամք։

Յորին վ՟ս ոսկեբերան յիշել յիշէ զերեսին ևս կարծիս, այլ ոչինչ որոշէ իբրև ստոյգ։ Բայց հերոնիմոս հաստատեայ զբանն ՚ի վ̄ր որդւոյն յովիդայեայ․ և ըս̄ այսմ խօսեցան ոչ սակաւք ՚ի նոր մեկնչաց․ ըստ որոց եդ և Հայրն մեր Մխիթար րաբունապետ ՚ի Մեկն․ Մատթ․ Երես․ 609, և 610․ տես անդ։ Այլ արժան է լսել զբուն ասութ̄ն սբ̄յն Հերոնիմոսի ՚ի Մեկն․ Մատթ․ Իգ․ 35։

* Խնդրելի է (ասէ), թէ ո՞ իցէ զաքարիայս որդի բա-
,, րաքեայ․ քանզի յոլովս վերծանեմք զաքարիայս․ այլ
,, զի մի տացի մեզ տեղի համարձակագոյնս սխալելոյ,
,, յաւելաւ ('ի տն̄է)․ զոր սպանիք ը̄ մէջ տաճարին և
,, սեղանոյն։ Ըստ զանազանս զանազան ընթերցայ բանս․
,, և պա՛րտ է ինձ զիւրաքանչիւր կարծիս դնել առաջի։
,, Ոմանք զզաքարիա զորդի բարաքեայ ասեն, որ յեր-
,, կոտասան մարգարէսն է մետասաներորդ․ և այսմ
,, ՚ի դէպ գայ անուն հօրն․ այլ թէ ու՞ր իցէ սպանեալ
,, ընդ մէջ տաճարին և սեղանոյն, ոչ խօսի ինչ գիրն․
,, Թող զի ՚ի ժամանակս նր̄ և ո՛չ իսկ աւերակք տաճա-
,, րին կային։ Ոմանք զզաքարիա զհայրն յովհաննու ասեն
,, լինել, հաստատելով զայս յերազոց ուստեք անյայտ
,, գրոց․ որ̄պս թէ յայն սակս սպանաւ, զի քարոզեաց
,, զգալուստ փրկչին․ այլ այս քանզի չունի վաւերական
,, վկայութ̄ն ՚ի գրոց, նովին դիւրութբ̄ մերժի՝ որով
,, հաստատի։ Իսկ ոմանք դնեն զզաքարիա՝ որ սպանաւ
,, ՚ի յովաս արքայէ յուդայ ընդ մէջ տաճարին և սեղա-
,, նոյն․ ո̄պ պատմէ պատմութիւն Թագաւորաց։ Այլ
,, պարտ է ՚ի միտ առնուլ, զի այս զաքարիա ո՛չ էր որ-
,, դի բարաքեայ, այլ՝ որդի յովիադայ քահանայի․ վ̄յ
,, և գիրն ասէ, թէ ոչ յիշեաց յովաս զգութն՝ զոր ա-
,, րար ը̄ նմա յովիադա հայրն նր̄․ բայց քանզի ունիմք
,, ՚ի ձեռին զզաքարիայդ անուն, և ՚ի դէպ իսկ գայ տե-
,, ղի սպանմանն, խնդրելի է՝ թէ ը̄է՞ր բարաքեայ որ-
,, դի ասի ('ի տն̄է), և ո՛չ յովիդայեայ։ Բարաքիա ՚ի
,, մեր լեզու վերածի՝ օրհնեալ տն̄․ և յովիդայեայ քա-
,, հանայի արդարութ̄ն եբրայական բարբառովս յայտ-
,, նաբանի։ Յաւետարանն՝ որով վարին նազարեցիք,
,, փոխանակ որդւոյ բարաքեայ գտաք գրեալ որդի յո-
,, վիդայեայ ||։

Այս կարծիք Հերոնիմեան՝ որ զօրացաւ և առ ոմանս յարեւմտեայց, ունի արդարև հաւանականութ̄ն, բայց ո̄պ տեսանես՝ չունի հաստատութիւն բաւական, Թո՛ղ թէ աւելի քան զայլ կարծիս՝ զորս կարծէ հերոնիմոս դիւրաւ սասել․ բայց ո՛չ հաւաստեաւ։ Նախ՝ զի ենթադրէ, զոր պա՛րտ էր ցուցանել, թէ զաքարիա՛ իցէ ա-

նուն որդւոյն յովիդայեայ, քան թէ ազարիա. ա՟յլ ունին այլ ընթերցուածք ը՟ մեզ հաստատութ՟ք ։ Երկ՟դ՝ թէև ընկալցուք զայդ, ինքն՝ որ զայլոց բանս ը՟ երազս դրէ, երևի հակամիտել 'ի կրկին երազս հրէական լեզուէի, և այլայլութ՟ե օրինակին նազարեցւոց. զի ո՞ առնու յանձն զվիպեան ընթերցուած ա՟մ եկեղեցեաց ուղղափառաց թողուլ, և անսալ ինքնահնար փոփոխութ՟ե ռաստրայ. կմ՟ ո՞ յանձն առնու զյատուկ անունս բարաքիա 'ի փրկչէն յիշատակեալ՝ ը՟ կամի մեկնել, օրհնեալ ը՟ն, որ հասարակ է ա՟մ արդարոց ։ Երր՟դ՝ յակամայս արդեօք պաշարեալ են միտք ա՟յն հերոնիմոսի յասել անդ, թէ առ զաքարիա մարգարէիւ չկային և աւերակք տաճարին. ապաքէն և ինքն գիտէ, զի առ նովաւ շինեցաւ տաճարն զօրաբաբէլեան. և միթէ ո՞չ է հաւանական, թէ բանն ք՟սի հայի առ այն տաճար՝ յորում և ինքն քարոզէր, և ո՞չ եթէ զհնոյն ։ Չո՟րդ՝ զիարդ կրկին պաշարմամբ միոյ սաստկացուցանէ զբանն, և երագ կոչէ զկարծիս որոգինի՝ զոր կամի յամի կծանել. եթէ չիք վկայութի 'ի գրոց վ՟ր զաքարիայի հօր յովհաննու մկրտչի, չա՟ էր այսչափ միայն ասել՝ ա՟յլ ասաց զզաքարիայ մարգարէէ. ապա թէ ո՞չ թող և ինքն գտցէ վկայութի 'ի ճշմարիտ գրոց, թէ որդին յովիդայեայ կոչիւր զաքարիա որդի
բարաքիայ. եւ՟ն ։

Զայնակցի ը՟ մեզ յայսմ և ստիլտինգ բոլլանդեան այրովքն հանդերձ, և անզօր կոչէ զհերոնիմոսի դրութ՟ի և զդիմադրութիս ։ Ժամ է արդ լսել և զկարծիս որոգինի՝ բանիւք նր՟ 'ի մեկն. մաթ. իգ. 35. ուր գրէ այսպ՟ս ։

* Զաքարիա առէ (ո՟րն) զհայրն յովհաննու. զորմէ թէ-
,, պէտ և չկարեմք կանոնական գրովք ցուցանել՝ ո՞չ
,, զլինելն որդի բարաքեայ, և ո՞չ զսպանումն նորին 'ի
,, դպրաց և 'ի փարիսեցւոց ը՟ մէջ տաճարին և սեղա-
,, նոյն, բայց եհաս առ մեզ աւանդութի այսպիսի, ա՟յլ
,, թէ դոյր տեղի ինչ 'ի տաճարի, ուր օրէն էր գալ
,, կուսանաց և կալ յաղօթս. և ո՞չ էր թողացուցեալ
,, ումէք յորոց գիտէին զայր՝ կալ անդանօր ։ Արդ մա-
,, րիամ յետ ծնանելոյ զփրկիչն՝ մտեալ 'ի տաճարն եր-
,, կիր պագանել, եկաց 'ի տեղւոջ անդ կուսանաց ։ Եւ
,, յարգելուլ զնա այլոց՝ որք գիտէին, թէ որդի ծնաւ
,, նա, յայնժամ եկն եկաց զաքարիա, և ասաց ցարգե-
,, լօղսն. արժանի է դա տեղւոյ կուսանաց, զի կոյս է ։
,, Այն իրի յարեան 'ի վ՟ր զաքարեայ արք յազգէ նր՟.
,, ա՟յլ թէ յայտնապէս առ ոտս հարեալ իցէ զօրէնս, և
,, թոյլ

,, Թոյլ տուեալ կնոջ կալ 'ի տեղի կուսանաց, և սպա-
,, նել զնա ը̄ մէջ տաճարին և սեղանոյն ||:

Այս աւանդութի է, որ պէսպէս օրինակաւ գտանի 'ի գիրս արևելեայց՝ յունաց և հայոց, ունելով վկայութի և յայլոց 'ի նախնեաց՝ թէ հրէայք սպանին զզաքարիա վս̄ փախուցանելոյ զմանուկ իւր զյովհաննէս, և վս̄ քարոզելոյ ը̄դէմ հերովդի և հերովդիանոսաց զեկեալ հասեալ մեսիայն. ոպ̄ և յաւուր թլփատութե որդւոյն յայտնապէս ասացեալ էր նր̄ յօրհնելն զա̄ծ ը̄ արձակիլ լեզուին, թէ մկրտիչն եղիցի մարգարէ բարձրելոյն՝ որ ծագեալ է իբրև զարեգակն 'ի բարձանց. վս̄յ կարի հաւանական է, թէ զաքարիա կրեաց զառաջին հալածումն վս̄ ք̄սի:

Հաստատէ որոգինէս զաւանդութիւն և գրովք. քանզի 'ի վր̄ բերէ՝ ասելով. * Բայց ցն̄՝ որք ոչն ընծայեն
,, հաւատս այսպիսի աւանդութե, հարցանեմք, և պատ-
,, ճառս խնդրեմք, թէ զի՞ է՝ զի յս̄ 'ի կշտամբելն ըզ-
,, հրէայս վս̄ զաքարիայի, ոչ յանդիմանէ զնս̄ (լոկ ը̄-
,, հանրապէս) իբրև որդիս սպանողացն զմարգարէս,
,, ընդ նոսին և զզաքարիա, այլ՝ ոպ̄ այն թէ նոքին իսկ
,, ինքեանք սպանին զզաքարիա ը̄ մէջ տաճարին և սե-
,, ղանոյն: Իսկ եթէ ճշմարիտ է բանն ք̄սի, զոր ասացն
,, առ առաջիկայս յայնմ ժամու դպիրս և փարիսեցիս,
,, զոր դուք սպանէք ընդ մէջ տաճարին և սեղանոյն, չէ՛ հնար
,, այլաւ իմանալ զզաքարիայն՝ որ մին էր յերկոտասա-
,, նից ||, որ էր հնագոյն ժամանակաւ. թո՛ղ թէ զազարիայն՝ յումպէտս զաքարիա կոչեցեալ, և նա հնագոյն:

Արդ յա՛յտ է թէ ո՛չ են երազ այս բանք որոգինի, այլ քաղեալք 'ի բերանոյ անսուտ ճշմարտութե ք̄սի. վս̄յ բազմօք զօրագոյն քան զկարծիս հերոնիմոսի: Այլ քանզի ո՛չ գիտեմք՝ թէ անուն հօր զաքարիայի հօրն մկրտչի՝ բարաքիա՞ կոչիւր արդեօք, եթէ այլազգ, ցուցանի անստոյգ մնայ այս ը̄ աւանդութենն եղանակէ մահուան նր̄, զորէ բան տն̄ 'ի վր̄ այնր՝ որ էր ը̄ գրոց որդի բարաքեայ. որդի է միայն զաքարիա մարգարէն. վս̄յ և ատիլաինդ զայն ոնդէ ը̄դէմ հերոնիմոսի և որոգինեայ միանգամայն, զ̄ի թէ ք̄ս տ̄րն մեր խօսի զմիոյ յերկոտասան մարգարէից:

Բացասական պատճառ հերոնիմոսի դիւրաւ լուծանի ը̄հանուր ստորասականօքս 'ի ս̄բ գրոց. ուր առ վասն մարգարէից, * քարկոծեցան, սղոցեցան, փորձեցան,
,, սպան-

,, սպանմամբ սրոյ մեռան || . Եբր. ժա. 37. և թէ, * զմ
,, 'ի մարգարէիցն ո՞չ հալածեցին հարքն ձեր, և սպա_
,, նին զայնոսիկ՝ որ յառաջագոյն պատմեցին վասն գա_
,, լստեան արդարոյն, որոյ դուք այժմ մատնիչք և սպա_
,, նողք եղէք || . Գործ. է. 52: Իսկ պատճառն որոգինի՝ թէ տրն առ առաջիկայս խօսէր՝ ապանէֆ, չունի լուծումն տկարապէս. նմին իրի և սակաւինչ այսչափ միայն ցուցանէ, թէ հայելով 'ի սովորական ոճ գրոց՝ ո՞չ է յաղթահարիչ մտաց և այն պատճառ:

Այլ 'ի կողմն զաքարիայ մարգարէի դրական պատճառք ընծային այսոքիկ: Առաջին և էական պատճառն է, զի քն առ որոշելոյ՝ թէ զմ ոք զաքարիա անուամբ կամի նշանակել, յաւել ասել՝ որդի բարաքեայ. որ է ստոյգ և սեպհական նշանակ մարգարէին: Երկդ՝ զի տրն մեր երեւի խօսել զյայտնի մարգարէէ ծանուցելոյ առ ամենեսին. արդ ոչ յայտնի էր աբէլ առաջինն 'ի մէջ նահատակաց արդարոց, նոյնպէս և զաքարիա էր յայտնի 'ի կարգի մարգարէից վերջնոց: Երդ՝ զի զաքարիա մարգարէն էր 'ի ժամկի շինութե տաճարին՝ յանդիմանիչ պէսպէս թերութեց տանն իէլի. յորում ժամանակի յարմարութի տեսանի ոչ սակաւ՝ այսպիսի մոլեգնութե ապերասան ազգին ըդէմ մարգարէին: Բայց և այս կարծիք մնայ 'ի սահմանի հաւանականութե. ոչ և յայտ է:

Յաւելլին նոր մեկնիչք ասել, թէ գուցէ բան տն հայի առ այլ ոք՝ բաց յերից նախագրելոց. և այն կամ իցէ անյիշատակ 'ի գիրս, և կմ թերևս մին 'ի յիշատակելոց անտի. Բ. Մնաց. ԻԶ. 5. ուր ասի ըստ մեզ, թէ ոզիա արքայ յուդայ * խնդրեաց զտր յաւուրս զաքարիայ իմաստ_
,, նոյ երկիւղիւ տն || . ըստ լատ. * յաւուրս զաքարիայ
,, իմացողի և տեսողի զտր ||: Եւ 'ի գիրս Եսայ. Ը. 2.
* և վկայս կացուսցես ինձ արս հաւատարիմս, զուրիա
,, քահանայ, և զզաքարիա որդի բարաքեայ ||: Ուր թէպէտև կայցէ տարբերութի տառի յեբրայականն՝ յանուանս բարաքեայ հօրն մարգարէին զաքարիայ, և հօրն այսր զաքարիայ. բայց չէ ինչ. ոչ և 'ի Հ. ձեռ. զաքարիա մարգարէն կոչի որդի բարեքայ կմ բարուքայ. ապա թէ ոչ՝ յայսպիսի թեթև տարբերութեց չէ արժան բազմացուցանել զկարծիս:

Եւ արդարև անբերելի է վերջին և նորահնար կարծիք ոմանց, թէ բան քսի հայի մարգարէաբար 'ի լինելոցն. Իբր զի պատմէ յովսեպոս 'ի Է գիրս պատերազմաց հրէից. Գլ.

1. կմ ը ա.Լոց. Ե. 19. Թէ յաւուրս պաշարման Եմի (բազմօք զկնի համբարձմանն քի) երևելի էր 'ի մէջ հրէից զաքարիա ոմն որդի բարուքայ. զորմէ եղև ամբաստանութի, թէ խորհի մատնիչ լինել քաղաքին, և տալ զեմ 'ի ձեռս վեսպասիանոսի. և յորժամ քննեալ յատենի՝ արձակեցաւ ոպ անպարտ, երկուք ոմանք յանզգամաց զհետ մտեալ նր՝ սպանին զնա 'ի մէջ տաճարին. և ընկեցին զմարմին նր 'ի խորափն մերձակայ: Արդ խորհեցաւ ալլեմանտիոս զայս դիպուած մերձեցուցանել 'ի բանն քի՝ տարադէպ կարծեօք. և կալեալ հնարեցաւ հաւանել զնոյն ընծայել ճարտարմտութե. որոց իրաւամբք ըդէմ զինի ստիլտինգ: 'Ի նոյն տարադէպ մեկնութիւն հայի և գնելն հուբերտոսի, թէ գուցէ տրն մեր ակնարկէր 'ի յակոբ արդարն՝ եղբայր տն կոչեցեալ. այլ այսպիսի գիւտք ոչ են մեկնութիւնք գրոց, այլ՝ ստեղծաբանութիւնք որդւոց մարդկան:

Մեք ոպ յաւուր տօնի զաքարիայ մարգարէի, և զաքարիայ հօրն յովհաննու մկրտչի՝ անխտիր ընթեռնումք զաւետարանն. Մտթ. ԻԳ. 34 = 39. նոյնպէս և 'ի մին յերկուց աստի վերաբերեալ գիտեմք զբան փրկչին, քան թէ առ այլ ոք անծանօթ:

Այլ ծանիր, զի պատճառ տօնելոյ մեր յայսմ վայրի զզաքարիա մարգարէն ը. անոփրիոսի նք հօրն՝ երևի, թէ առեալ է 'ի գիւտոյ ինչ նշխարաց նց 'ի միասին. բայց զատոյգն ասել ոչ ունիմք. միայն յիշեսցուք աստ՝ որ ինչ բանք իցեն առ մատենագիրս վս նշխարաց սբյն զաքարեայ (որո՛յ և իցէ):

Սոզոմենոս 'ի վախճան պատմութե իւրոյ. Գիրք. Թ. Գլ. 16. 'ի խօսելն զվախճանէ ոնորիոսի կայսեր, ասէ՝ թէ յաւուրս հիմնադրութե նր եղև գիւտ նշխարաց * զա-
„ քարիայ հնագոյն մարգարէի, և ստեփաննոսի սար-
„ կաւագի ձեռնադրելոյ յառաքելոց. և զի երկաքան-
„ չիւրոցն գիւտ հրաշափառ և ածային եղև, հարկ է
„ ասել զօրինակն ||. և 'ի վերայ բերէ 'ի ԺԷրդին Գլ. 17.
այսպէս. * Արդ սկսայց 'ի մարգարէէն. Քափար գիւղ
„ զաքարեայ է 'ի սահմանս Ելևթերուպօլսոյ պաղես-
„ տինեայ. և էր հողագործ նորին կալիմերոս ոմն
„ ծառայակից յագարակին, ողջամիտ առ ստացօղն, այլ
„ դժնեայ և խիստ՝ և առ մերձակայ շինականս անի-
„ րաւ: Այսպիսումն եղելոյ յարթնութե եկն եկաց 'ի
„ վր մարգարէն, և յայտնեաց զանձն իւր. և պարտէզ
„ ինչ ցուցեալ, ա՛յէ ասէ՝ աստ բրեա՛, երկու գիրկս
„ չա-

,, չափեալ 'ի ցանկոյն 'ի պարտէզ անդր, դէպ 'ի ճանապարհն՝
,, որ տանի 'ի բիթթերեբին քաղաք ։ Եւ գտայես
,, տապանակ կրկին · փայտեայ ներքինն, և արճճեայ
,, արտաքուստ · և շուրջ զտապանակաւն ապակի անօթ
,, լի ջրով, և երկու օձս մեծութ՟բ չափաւորս, և հեզս
,, և անվնասս · որ՟ զի երևիլ ձեռնընտել լինել ։ Արդ ը՟
,, հրամանի մարգարէին եկեալ կալիմերոսի 'ի յայտնել
,, տեղին՝ փոյթ կալաւ գործոյն · և 'ի նախասացեալ
,, նշանակաց արտափայլեալ ո՟ր արկեղն 'ի վեր երևեցաւ
,, ծծարեալ մարգարէն, զգեցեալ պատմուճան սպիտակ,
,, զի որպէս կարծեմ՝ քահանայ իսկ էր · իսկ ը՟
,, ոտիւք նորա արտաքոյ տապանակին՝ մանկիկ եդեալ
,, կայր՝ թագաւորական արժանացեալ թաղման · վ՟ս զի
,, ունէր 'ի վ՟ր գլխոյն ոսկի պսակ, և ոսկի կօշիկս, և
,, հանդերձ պատուական ։ Ի տարակուսիլ յայնժամ
,, իմաստնոց և երիցանց վ՟ս մանկանս այսորիկ, ո՞ իցէ
,, և ուստի, և ո՞յր աղագաւ այնպէս զգեցեալ, ասէ՝
,, թէ զաքարիա, որ առաջնորդ էր միայնակեցացն վանից
,, 'ի գերարա, հանդիպեալ իցէ եբրայական և հին
,, մատենի, բայց ո՛չ յորոց ը՟ունելի են յեկեղեցի · ուր
,, յայտնէր, թէ յորժամ զզաքարիա մարգարէն սպան
,, յովաս արքայ յուդայ, ոչ յետ բազմաց դառն աղէտք
,, հասին 'ի վ՟ր տան ն՟ր · քանզի յաւուր եօթներորդի
,, սպանման մարգարէին, յեղակարծ ցաւով մանուկ ն՟ր
,, շնորհագեղ կորնչի ։ Եւ 'ի միտ առեալ՝ թէ յա՟յ պատուհասեցաւ
,, այսպիսի կրիւք, ը՟ ոտիւք ն՟ր զմանկիկն
,, թաղեաց, քաւելով այսուճիկ զոր 'ի նա յանցեաւ ։ Եւ
,, զայսոսիկ այսպէս լուեալ ։ Բայց մարգարէն՝ թէպէտև
,, 'ի շատ դարուց ը՟ հողով ամփոփեալ, ամբողջ 'ի վեր
,, յայտնեցաւ · ը՟ մորթոյն քերեալ, ունչքն լաւ, մօրուսն
,, չափով երկայնեալ, գլուխն կարճագոյն · և
,, աչքն փոքր մի 'ի խորս՝ յօնիւք ծածկեալ || ։ Ցայս վայր
սոզոմենոս · ուր պակասի խոստումն նորա և զնշխարաց
ստեփաննոսի ։

Արդ՝ ո՞ ոչ տեսանէ, թէ որչափ տարբեր կարծիք եղեն 'ի վ՟ր զաքարիայ որդւոյ բարաքեայ, նոյնչափ և 'ի վ՟ր այս նշխարացս ունելին լինել · զի զաքարիա առաջնորդ վանից գերարայ հանդոյն հերանիմոսի ը՟ հրէական աւանդից մեկնել է զնա 'ի վ՟ր զաքարիայ կմ՟ աղարիայ որդւոյ յովիադայ · բարոնիոս ընտրէ իմանալ սովաւ զնշխարս զաքարիայ մարգարէի · կարէր ոք և զհայրն յովհաննու մկրտչի իմանալ որդեօք · այլ զնմանէ տես

'ի

'ի վարս նորա:

Յաւելու ստիլտինգ, թէ գուցէ սորին զաքարեայ յայտնեալ իցէ և այն ոսկր, զոր ը̅ այլ նշխարս պարգևեաց պռումեան վանից կայսրն լոթարիոս յամի 855. կոչելով զայն՝ * ոսկր զաքարեայ որդւոյ բարաքեայ ||. բայց ո՛ւմ և կամ իցէ քեզ՝ ունիս ընծայել զանյայտ անունն: Հռաւիսսոս գրէ 'ի սրբազան գանձարանի բելգայ, Երես. 200. թէ յաթոռանիստ եկեղեցին բրուգացւոց՝ որ յանուն սր̅յն դոնատիանոսի, կան և նշխարք սր̅յն զաքարիայ մարգարէի և սամուէլի: Եւ յերես. 278. 'ի մէջ ս̅բ նշխարաց եղելոց 'ի վանս լեսեայ՝ որ 'ի հաննոնիա, թուէ * զոսկերս զաքարիայ մարգարէի, որ յծէն
„ քաղդէացւոց 'ի ծերութեն դարձ արարեալ 'ի հայրե-
„ նիս՝ թաղեցաւ առ անգեայ մարգարէի ||:

Գերեզման սր̅յն զաքարեայ 'ի պաղեստին՝ է մի յերևելի ուխտատեղեաց. ը̅ որոյ գրէ կուարեզմիոս 'ի ստորագրութ̅ ս̅բ երկրին. գիրք. է̅. գլ. 12. թէ այն է վեցերորդ տեղի եօթներորդ ուխտագնացութեան. * Այս
„ գերեզման է (ասէ) կորեալ յապառաժ վիմէ լերինն
„ ձիթենեաց, հաստատեալ 'ի գետնի առ ստորոտս նո-
„ րին՝ 'ի ձև չորեքկուսի, առ փոքր մի սրածայր, առ
„ երի քարայրի սր̅յն յակոբայ ալփեան: Հասարակօ-
„ րէն կոչի յամենեցունց 'ի կողմանսն յայնոսիկ՝ գե-
„ րեզման զաքարեայ որդւոյ բարաքեայ, սպանելոյն 'ի
„ հրէից ը̅ տաճարն և ը̅ սեղանն, զոր յիշատակէ փրկ-
„ իչն մեր ||: Նոր յաւելու խնդիր 'ի մէջ առնուլ և կուարեզմիոս, թէ ո՞ իցէ նա. և ինքն յօժարի հակամիտել 'ի կարծիս հերոնիմոսի. և սակայն գրիգոր տուրոնեցին հնագոյն՝ որ յիշէ զայն գերեզման 'ի ա̅. Գիրք. Ծը. Փառաց Վկայից. Գլ. 27. ընծայէ զաքարեայ հօրն յովհ. մկրտչի. զի նա թաղեցաւ ասէ 'ի լերինն ձիթենեաց ը̅ սիմէոնի և ը̅ յակովբայ եղբօր տ̅ն:

'Ի վախճանի ծանիր հարևանցի, զի ստիլտինգ բոլլանդեան յիշելով զվերնագիրս ինչ սաղմոսաց՝ որ յանուն անգեայ և զաքարեայ ը̅ եօթանասնից, պնդէ ընդդէմ կալմէթի՝ թէ չեն նք̅ յօրինեալ 'ի մարգարէից աստի. և թէ՝ ա̅մ սաղմոսք որ 'ի սաղմոսարանի, են գործ դաւթի. այլ այս անկ է սաղմոսամեկնչի մերում:

ՎԱՐՔ

ՎԱՐՔ ՍՈՒՐԲ ՀՕՐՆ

Ոնոփրիոսի անապատականի ։

Հ. Յ. Լ. յունիս. 12 ։ Մարտ հայոց. գլ. էա ։ Սուրիոս 'ի Հեպոմաննոսէ. լա ։ Բոլլանդեանն յաննենգ. 'ի Է. հատ. յունիսի. էր. 519=533 ։(1)

ՈՆՈՓՐԻՈՍ ՄԾ ՀԱՅՐՆ, գանձ ծածկեալ յագարակի, միանգամայն և քաղաք արտափայլեալ 'ի վ՟ր լերին, եր ծննդեամբ յԵգիպտացւոց, կրօնաւորեալ 'ի մանկութ՟ 'ի հասարակաց վանս՝ որ կոչիւր ուխտի մերձ յերմոպօլիս քաղաք Թեբայեցւոց, կմ՟ ուխտի եռմիպօլիտացւոց. ուր բնակէին անձինք իբրև հարիւր մի ։ Արդ յետ ուսանելոյ անդ Ոնոփրիոսի զա՟մ կարգս բարեպաշտութե՟ և ճգնութե՟, յորժամ մերձ լինէր 'ի չափ հասակի կատարելութե՟ հոգւոյ և մարմնոյ՝ լսէր 'ի ս՟բ հարանց տեղւոյն ասել, թէ վերագոյն են քան զմեզ՝ որ բնակեմք 'ի հասարակաց վանս միաբանակեցաց, անապատաւորք և ճգնաւորք, առանձնացեալք միայնակեցութ՟ յանապատս, և որոշեալք ա՟մի՛ 'ի մարդկանէ, ը՟ նմանութեան եղիայի մարգարէի՝ որ այնպիսի անապատական վարուք հաճոյ եղեալ ա՟յ՝ փոխեցաւ, և կամ յովհաննու մկրտչի անապատաստուն եղելոյ 'ի մանկութե՟. որում չիք զուգահաւասար 'ի ծնունդս կանանց:

Իսկ ոնուփրիոս վիճաբանէր ը՟ ո՟ք հարս, թէ զիա՞րդ հնար է միայնացելոյ յանապատ հանդարտութե՟ վերագոյն լինել ք՟ զվանականս. զի քաջ գիտէր՝ թէ բազում խոնարհութե՟ և կատարեալ համբերութե՟ և անձին մեռելութե՟ պէտք են առ 'ի կարող լինելոյ բնակել ընդ եղբարս առանց տրտնջմանց, և սիրով ծառայել ամենեցուն: Եւ լսէր պիմնի, թէ մեծ ևս է պատերազմն անապատականաց յերեսաց գաղտնորոգայթ հնարից աներևոյթ թշնամւոյն. և չիք ինչ նց՟ մխիթարութի եղբայրութե՟ 'ի հոգևոր կ՟մ 'ի մարմնաւոր պէտս. այլ մ՟մ այցելութի նց՟ մ՟նայ 'ի բարձանց, եթէ գիտասցեն համբերել իմաստութբ՟ 'ի ճգնութիս նեղութե՟. և երանի է ասէն այնպիսւոյն՝ որ յայնպիսի չափ հասեալ իցէ:

Օ այսոսիկ իբրև լսէր ոնուփրիոս, լնոյր սիրտ նր եռացմամբ՝ լինել իբրև զմի 'ի նոցանէ, և յանձին զգայր քաղցրութի իմն հոգևոր առաւել քան զխորիսխ մեղու. վ՟ոյ ևս քան զևս հարցանէր և ստուգէր զիրսն այլևայլ պատճառանօք: Ապա 'ի միում գիշերի յարուցեալ բազում յօժարութբ՟ էառ ընդ իւր հաց սակաւ և ջուր, զոր կարծէր բաւական լինել անձին զաւուրս չորս. և դէմ եդեալ գնաց յանապատն կոյս՝ 'ի տեղին, ուր առաջնորդեսցէ նմա ա՟ծ: Այլ ը՟ հեռանալ

նո

նորա 'ի տեսութե՟ն մարդկան ,'ի մուտս անդ անշէն անապատին՝ տեսեալ գիշերայն լոյս մեծ առաջի իւր , զարհուրեցաւ յոյժ . մինչև խորհել յետս դառնալ . այլ յա՟ծ ապաւինեալ՝ զօրացաւ յառաջ խաղալ ։ Եւ նոյնժամայն երևեցաւ նմ՟ հրեշտակ տ՟ն՝ որ պահէր զնա 'ի մանկութե՟ն , և առաջնորդեաց նմա մինչև 'ի խորս անապատին ։ Իբր գտեալ ոնոփրիոսի քարանձաւ փոքրիկ՝ բաղխեաց զդուռն , և ձայնեաց . օրհնեա՛ տ՟ր . զի թերևս իցէ ասէ ոք բնակե՟լ 'ի ներքս ։ Եւ ահա ել յայրէ անտի այր մի ալևոր պատուական և շնորհալի դիմօք . և ողջունեաց զնա , և ասէր . դո՛ւ ես եղբա՛յր իմ ոնոփրիոս , և ա՟ծ գործակիցն իմ 'ի տ՟ր . մո՛ւտ օ՛րդեակ , և ա՟ծ օգնական լիցի քեզ . այն՝ որ կոչեացն զքեզ յայս կոչումն ս՟բ ։

Եւ կացեալ ոնոփրիոսի ը՟ ծերոյն ը՟ այնմիկ աւուրս ինչ՝ ուսաւ ա՟մ փութով զա՟մ զգործս սրբութե՟ կրօնից նր՟ ։ Եւ իբրև ետես ծերն զյօժարութի՟ ոնոփրիոսի , առեալ տարաւ զնա այլ ևս 'ի ներքսագոյն անապատ՝ մինչև աւուրս չորս և գիշերս չորս , և ապա հասին առ խուց մի փոքրագոյն , առ որով էր ծառ արմաւենի ։ Յայնժամ խօսեցաւ այրն այն պատուական , և ասէ ցոնոփրիոս . ահա այս է տեղին՝ որ պատրաստեցաւ քեզ 'ի մարդասիրութե՟ն տ՟յ , զի բնակեսցես յայրի աստ առանձինն՝ կրել քեզ աշխատութի՟ վ՟ն տ՟ն ։ Եւ յետ կալոյ ծերունւոյն առ նմա աւուրս երեսուն՝ ուսուցանելով զա՟մ կարգ անապա-

տա

տական վարուց , մեկնեցաւ 'ի նմանէ ․ և այնուհետև միանգամ 'ի տարւոջն հանդիպէին միմեանց ․ մինչև փոխեցաւ երանելի ծերն այն 'ի կենաց ․ զորոյ զնշխարս ամփոփեաց Ոնոփրիոս մերձ առ բնակութ̃ի իւր ։ Իսկ ինքն Ոնոփրիոս ճգնասէր՝ յօրէ յորմէ եկն յանապատ անդր , ետ զանձն 'ի խիստ ճգունս պահոց և աղօթից ․ ուր 'ի սկզբան անդ առանձնու̃ե իւրոյ այնչափ աշխատու̃ի կրեաց բազմաժամանակեայ յերեսաց քաղցոյ և ծարաւոյ , տօթոյ և խորշակի , ցրտոյ և դժնդակ օդոյ , մինչև բազում անգամ մերձ լինել նմա 'ի դրունս մահու ։ Այլ բարերարն ա̃ծ իբրև ետես զայնպիսի համբերութ̃ի կենդանինահատակին իւրոյ և զջան վաստակոյն , հրամայեաց հրեշտակի իւրոյ ս̃բյ՝ տանել նմա զօրըստօրէ կերակրիկն և ջուր չափաւոր ․ որ̃պս և արմաւենին՝ որ առ դուրս այրին , բերէր երկոտասան բազուկ ամի ամի ․ և այնպէս ողկոյզ մի ամսոյ ամսոյ բաւական լինէր նմա՝ հանդերձ բանջարօքն անապատին ։

Արդ եկաց երանելին յառանձնութ̃ե անդ անապատի զամս վաթսուն այսպիսի խստամբեր վարուք և բազմապատիկ մրցանօք ընդդէմ հասարակաց թշնամւոյն , զօրացեալ տ̃րամբ յ̃տմի , և դէր 'ի վերոյ ա̃մ փորձանաց երևեւ̃՝ անմարմին քաղաքավարուք̃ 'ի մարմնի ։ Որ և ա̃ իւրաքանչիւր շաբաթուց ընդունէր զանապական խորհուրդ փրկական հաղորդութ̃ե սպասաւորութ̃ք հրեշտակի ա̃յ ․

և զմայլեալ 'ի քաղցրութ͞ե ա͞ն՝ հալէր սիրով ն͞ր իբրև զմոմ առաջի նորա ․ և բազում անգամ արտաքոյ իւր յափշտակեալ՝ տեսանէր զանձն իբրև յերկնաւոր դրախտի՝ վիճակակից ը͞ դասս երջանկաց ․ և յայնպիսի տեսլեանց լցեալ լինէր հոգի նորա անպատում ուրախութ͞բ , մինչև ոչ յիշել նմա՝ թէ իցէ 'ի կենցաղս յայս ․ վ͞ոյ և 'ի միտս եկեալ՝ առաւել յօժարութ͞բ ձգնէր , զմտաւ ածեալ զանդանոր վարձս ընդ վաստակոց՝ զանճառ բարիս ։

Եւ յորժամ մերձեցան աւուրք ելից երանելւոյն 'ի մարմնոյ աստի , եարկ ա͞ծ 'ի սիրտ ծառային իւրոյ պափնուտիոսի՝ որ մին էր 'ի ն͞բ հարանց և 'ի միայնակեցացն եգիպտացւոց , շրջել 'ի ներքսագոյն անապատս , տեսանել՝ թէ իցէ՞ ոք անդ բնակեալ առանձինն , և առաւել քան զինքն հեռացեալ 'ի բնակութ͞է մարդկան ։ Եւ եղև յետ հանդիպելոյ ձգնաւորի ումեմն սր͞յ տիմոթէոս կոչեցելոյ , առեալ զօրհնութ͞ի ն͞ր՝ դարձաւ ուրախութ͞բ 'ի տեղի իւր , և պատմեաց ամենեցուն ։

Այլ զկնի այնորիկ միւսանգամ կարօտեալ տեսոյ այնպիսի ա͞ծահաճոյ միայնացելոց՝ յարեաւ անդրէն ազդմամբ ա͞ն , և դիմեաց յե՛ս խորագոյն անապատ , անցանելով ընդ բնակութ͞ի վայրենի ազգին՝ որ մազիկք կ͞մ մազիննոնք կոչէին , և միջամուխ լինելով յանշէն անապատն՝ որ յոմանց յովասիս ասի ․ և այնպէս ճանապարհ արարեալ զաւուրս հընգետասան կամ եօթնևտասան , հասանէր առաջնորդութբ՟ հրեշտակի տ՟ն մօտ 'ի լեառն մի · և անդ տեսանէ 'ի հեռաստանէ զս՟բ հայրն ոնոփրիոս՝ ահաւոր տեսլեամբ և քառամ՟նելի ձևով · զի երևէր իբրև երէվայրի մարդակերպ հերարձակ , մերկ 'ի զգեստուց , պատեալ յերկայնութե՟ հերացն իջելոց զբովանդակ մարմնով , և տերև բանջարոյ սփածեալ զմիջովն · իսկ դէմքն այլագունեալ 'ի պահոց , և անձամբքն ողջոյն տկարացեալ 'ի բազում աշխատութե՟ ճգնողական վարուց · և յայսպիսւոյ տեսլենէ զարհուրեալ պափնուտիոսն՝ 'ի վեր վազեաց զերծանիլ 'ի լեառն։ Իսկ ս՟բ հայրն ոնոփրիոս իբրև ետես զնա , ձայն ետ և ասէ · էջ առ իս ո՛վ այրդ սրբանեալ · քանզի և ես մարդ եմ իբրև զքեզ , և բնակեալ եմ յայսմ անապատի վ՟ս անուան տ՟ն մերոյ յ՟ի ք՟ի ։ Յայնժամ փութացեալ էջ պափնուտիոս , և անկաւ առ ոտս ս՟բյ ծերունւոյն · և նա ասէ · արի՛ կաց որդեա՛կ իմ · քանզի և դու ծառայ ես ա՟յ , և սիրելի ս՟բց։ Ապա իբրև նստան 'ի միասին , սկսաւ երանելի ծերն հարցանել նմա զն՟է և զկրօնաւորացն բնակելոց յեգիպտոս · և պափնուտիոս արար պ՟խնի 'ի կարճոյ , և ինքն աղաչել սկսաւ զս՟է ծերն պատմել նմա զքաղաքավարութի՟ իւր · զի ծարաւի էր լսել զս՟է վարս ն՟ր և յաջողուցանել զփափաք իւր , և մխիթարիլ 'ի բազում աշխատութե՟ց ճանապարհի ։ Եւ ս՟բյն զիջեալ յաղաչանս նորա՝ պատմեաց նմ՟ մի՟միոջէ զօրինակ գալստեան իւրոյ յանապատ՝ ըստ նախաճառելոցս , և զաշխատութ՟իս՝ զորս կրեաց յանապատի անդ վ՟ն սիրոյ տ՟ն , և զայցելութ՟ին ա՟յ եղեալ առ նա զա՟մ աւուրս կենաց իւրոց . ո՟պ և գրեալ է բանիւ պափնուտիոսի 'ի վարս հարանց ։

Եւ իբրև դադարեաց երանելին 'ի խօսիցն , առեալ տարաւ զպափնուտիոս 'ի խուցն իւր . ուր կացեալ զտիւն ողջոյն՝ պատմէին միմեանց զշնորհս ա՟յ բարերարութե՟ն ։ Եւ 'ի մտանել արեգական՝ գտաւ 'ի մէջ խցին նկանակ մի հաց , և սակաւ մի ջուր . յայնժամ ասէ երանելի ծերունին ցպափնուտի . արի՛ որդեակ ճաշակեա՛ սակաւ մի հաց և ջուր՝ որ եդեալ կայ առաջի . քանզի տեսանեմ զքեզ մերձեալ 'ի մահ յերեսաց անսուաղութե՟ և յաշխատութենէ ճանապարհիդ ։ Իսկ պափնուտի ասէ . կենդանի է տ՟ր իմ և փրկիչն իմ յ՟ս ք՟ս , զի ոչ ճաշակեմ և ըմպեմ , եթէ ոչ 'ի միասին արձակեսցուք զձեռս մեր և ճաշակեսցուք . և այնպէս բազում աղաչանօք ստիպեալ հաւանեցոյց զս՟բ ծերն մխել զձեռն իւր ը՟ն իւր . և բեկեալ զհացն՝ ճաշակեցին 'ի միասին . և գոհացեալ զա՟յ՝ կացին զգիշերն ա՟մ յաղօթս ։

Եւ իբրև այգ եղև , տեսանէր պափնուտի 'ի ժամ առաւօտեան աղօթից՝ զի այլագունեալ պայծառացան երեսք ս՟բ հօրն ոնոփրիոսի իբրև զարեգակն , և այլափոխեալ եղև 'ի կերպարանս հրեշտակի ա՟յ . ը՟ն որ զահի հարեալ պափնուտի՝ կայր պակուցեալ ահիւ և դողու՟բ ։ Յայնժամ ասէ ցնա այրն ա՟յ . մի երկնչիր եղբայր պափնուտիէ , քանզի որ յա՟մ գլթած և մարդասէր ա՟ծն է , նա առաքեաց զքեզ առ իս , զի ամփոփեսցես զնշխարս մարմնոյ իմոյ . զի աւասիկ ես 'ի սմին իսկ աւուր կատարեմ զընթացս վաստակոյ իմոյ 'ի տ՟ր 'ի հանգիստն յաւիտենից . և է օրս այս ը՟ թու՛ոյ ամսոյ եգիպտացւոց պունի ժը. և ը՟ հոռոմոց՝ յունիսի երկոտասան : Այլ արդ յեղանել քում յերկիրն եգիպտացւոց եղբա՛յր պափնուտիէ , քարոզեա՛ զյիշատակս իմ 'ի խունկս անուշահոտութե՟ 'ի մէջ եղբարց և ա՟մ հաւատացելոց . քանզի և տ՟ր հաճեցաւ ընդունել զխնդրուածս իմ . զի որ ոք վ՟ն յիշատակի իմոյ մատուսցէ ինչ նուէրս , կամ արասցէ աղօթս , կամ բարեգործեսցէ եղբարց , յիշեցից զնա առաջի տ՟ն . և տ՟ր արժանի արասցէ զնա բիւրապատիկ բարութե՟ց երկնից :

Ապա աղաչեաց պափնուտիոս զս՟բ ծերն , զի յետ ելանելոյ ն՟ր 'ի մարմնոյ՝ ինքն բնակեսցէ 'ի տեղւոջ անդ նորա : Իսկ նա ասէ . ո՛չ եկիր 'ի գործդ յայդ . այլ դա՛րձ 'ի տեղի քո . զի ա՟ծ առաքեաց զքեզ՝ տեսօղ լինել ծառայից ն՟ր բնակելոց յանապատի , և պատմել զվաստակս ն՟ց 'ի մէջ եղբարց ածասիրաց՝ յօգուտ լսողաց և 'ի փառաբանութիւն անուանն ա՟ծ : Յայնժամ անկաւ պափնուտիոս յոտս ս՟բ ծերունւոյն , և ասէ . աղաչեմ զքեզ հա՛յր պատուական՝ օրհնեա՛ զիս , զի գտից ողորմութ՟ի առաջի ա՟յ . և ո՟չ արժանի արար զիս փրկիչն իմ ք՟ս տեսանել զքեզ յայսմ աշ՟ի և երկիրպագանել , սոյնպէս ար-

ժա

ժանաւորեսցէ զիս և 'ի հանդերձելումն հանդիպիլ քեզ ։

Եւ նա ետ պխնի՟ ․ որդեա՛կ պափնուտիէ՝ տր՟ ոչ ընդունայն առնիցէ զխնդրուածս քո , այլ օրհնեսցէ զքեզ , և հաստատեսցէ զքեզ 'ի սէր իւր ․ և լուսաւորեսցէ զմիտս քո լուսով ածուէ՟ իւրոյ , և փրկեսցէ զքեզ յամ՟ ապականուէ՟ և յորոգայթից թշնամւոյն ․ և կատարեսցէ զընթացս քո 'ի բարի ․ և պահպանեսցէ զքեզ հրեշտակօք իւրովք , օգնական լինելով յամ՟ մարտս պատերազմի բանսարկու թշնամւոյն ․ ոպ՟ զի և ոչ մի ինչ գտանիցի նր՟ յանդիմանել զքեզ 'ի ժամու ահեղին , յորժամ կայցես առաջի այ՟ , և առնիցես պխնի՟ ամ՟ վարուց ։

Յետ այսորիկ յարուցեալ երանելւոյն Ոնոփրիոսի՝ եկաց յաղօթս առ ած՟ արտասուօք և բազում հեծեծանօք ․ և սակաւ մի դադարեալ՝ խոնարհեցոյց զծր՟ անձն իւր յերկիր ․ և ծունր եդեալ՝ ասէ , 'ի ձեռս քո ած՟ յանձն առնեմ զհոգի իմ ․ և նոյնժամայն կատարեցաւ 'ի տր՟՝ աւանդեալ զմաքուր հոգին 'ի ձեռս այ՟ ։ Եւ նոյնժամայն լուաւ պափնուտիոս զձայն հրեշտակաց սբ՟ց քաղցր բարբառով , որք օրհնէին զած՟՝ երթալով առաջի հոգւոյ երանելւոյն Ոնոփրիոսի ․ և եղև ուրախութի՟ մեծ 'ի ժամու հանդիպման հոգւոյ նր՟ առաջի այ՟ ։ Ապա յարուցեալ պափնուտի՝ մերկացաւ յանձնէ զաղաբողոնն իւր , և կտրեալ յերկուս մասունս՝ էարկ զմի մասն 'ի վր՟ մարմնոյ սբ՟յն ․ և գտեալ վէմ մի փորեալ իբրեւ զգերեզման՝ եդ անդ զպատուական մարմին առն ա̅յ. և ժողովեալ քարինս մեծամեծս՝ ծածկեաց զսբ̅ նշխարս նորա՝ արտասուօք և օրհնութբ̅ ։

Իսկ այնուհետև սկսաւ պափնուտիոս խնդրել յա̅յ աղօթիւք, զի մնասցէ 'ի տեղւոջ անդր. և ահանոյնժամայն ետես զխուց սբ̅յն 'ի վայր կործանեալ, և զարմաւենիսն՝ յորմէ կերակրիւր, անկեալ 'ի գետին. ը̅ որ զահի հարեալ՝ 'ի միտ էառ, զի ոչ էին կամք ա̅յ բնակել նմա անդ ։ Յայնժամ զգացեալ պափնուտի զանջատումն սբ̅յն ա̅յ յիւրմէ, որոյ տեսութբ̅ն և լուսաւոր բանիւքն մոռացեալ էր զաշխատութի ճանապարհին, սկսաւ հեկեկանօք լալ, և աղօթել առ տ̅ր ։ Իսկ նոյնժամայն երևեցաւ նմա հրեշտակ ա̅յ. և մխիթարեալ զօրացոյց զնա. և առաջնորդեաց նմա անդրէն դառնալ յշ̃ն եգիպտացւոց. Բայց 'ի ճանապարհի անդ անապատին հանդիպեցաւ երանելւոյն պափնուտիոս նաև այլոց ճգնաւորաց բնակելոց յայլ և այլ տեղիս. որք ընդառաջ ելեալ ողջոյն տային նմա յանուանէ, և երանի կարդային նմա վ̅ս հանդիպելոյ սբ̅ հօրն ոնոփրիոսի, և արժանի լինելոյ առնուլ զօրհնութի ն̅ր և ամփոփել զսբ̅ նշխարս նորա ։ Իսկ յետ բազում սքանչելի անցից անցելոց՝ դարձ արար պափնուտիոս յեգիպտոս, և պատմեաց ա̅ծասէր եղբարց զա̅մ զոր ետես և զոր լուաւ. և ն̅ք ը̅ գրովարկին զա̅մ. և ընթացեալ ընդ ա̅մ սկիտէ և ը̅ բնակութիւնս միայնակեցաց՝

պատմէին ամենեցուն զսքանչելի քաղաքավարութիւն ծառային ա՟յ և կատարեալ ճգնաւորին ա՟յ Ոնոփրիոսի, և հետևողաց ն՟ր ։ Եւ իբրև ընթերցան և լուան ս՟բ հարքն եգիպտացիք, փառաւոր առնէին զա՟ծ՝ որ սքանչելին է ՚ի վ՟ր ա՟մ ս՟բց իւրոց ։ Եւ յետ ժամանակաց գտեալ անդէն յեգիպտոս զհարազատ օրինակ նորին լիակատար պատմութե՟ն՝ երանելին տ՟ր գրիգորիոս առաջնորդ եգիպտոսի՝ քեռորդի վկայասիրի, կ՟մ ինքնին գրիգոր վկայասէրն՝ ՚ի ժամանակին՝ յորում էր նա յաթոռին եգիպտացւոց, թարգմանեաց ՚ի հայ բարբառ. որ այն իսկ է տպագրեալն ՚ի կարգի հարանց վարուց ։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ։

(1) Հարազատ պատմութե՟ն վարուցս ս՟բյն Ոնոփրիոսի է մի և նոյն՝ որ գտանի ՚ի հարանց վարս և ՚ի յայսմաւուրս ա՟մ ազգաց, և առ զանազան մատենագիրս, առեալ ՚ի մի և ՚ի նոյն աղբերէ՝ ք՟ ՚ի ս՟բյն պափնուտիոսէ. որ կամ անձամբ գրեաց, և կ՟մ գրել ետ յեգիպտոս ։ Գտանին զանազան օրինակք առ յոյնս և առ լատինս՝ է զի նովին շարադրութ՟բ ը՟ս հայումս, և է զի ը՟ս մասանց. է զի ամբողջ օրինակեալ, և է զի ը՟ս մասին՝ որ հայի լոկ ՚ի վարս Ոնոփրիոսի. ո՟պ յիշէ և յաննինգ կոնրադոս բոլլանդեան, որ զմասն վարուց եւեթ տպագրէ ։ Թող զանծանօթն մեզ զայլ անհարազատ վարս Ոնոփրիոսի՝ զառ ՚ի յաննինգայ յիշատակեալ, ուր առաջի դնի ասէ մանրապատում պատմութի ճոխաբան ՚ի մանկութէ մինչև ՚ի մահ Ոնոփրիոսի, յերիս գրքոյկս և յերեսուն գլուխս բաժանեալ՝ ՚ի լատին բարբառ. անդանօր Ոնոփրիոս ասի լինել արքայորդի պարսից. զորմէ կասկածեալ արքային՝ թէ չիցէ զաւակ իւր, ընդ ծնանիլն՝ ՚ի

հուր լիցէ արկեալ, և սքանչելեօք անկէզ պահեալ. և թէ հրեշտակի ազդմամբ տարեալ լիցէ զնա Թագաւորն մկրտել ը̄ օրինի քրիստոնէից, և անուանել ոնոփրիոս. և ապա Թգ̃րն ածեալ լիցէ զնա ը̄ իւր յեգիպտոս, և 'ի մ̃ջ ճանապարհի եղջերու մի սնուցեալ լիցէ զմանուկն, և առաջնորդեալ նմա մինչև 'ի վանս կրօնաւորաց, և զերիս ամս դիեցուցեալ զնա անդ կաթամբ իւրով. և յորժամ լինի ոնոփրիոս ութամեայ, ընտրի հայր վանից։ Յետ այսպիսի տղայական պատմուե̃՝ զոր և 'ի պատկերի փորագրեալ տեսի ուրեք և ես, կցեալ լինի 'ի գրչէն հարազատ վարք ոնոփրիոսի՝ առեալ 'ի բանից պափնուտիոսի. ուր յայտ է թէ ոչ վերջին մասն է անտարակուսելի և ը̄ունելի առ ամենեսին, նոյնպ̃ս և առաջինն մերժելի իբրև կեղծիք մտացածին ։

Անշ̃աս է արդեօք՝ թէպէտև անընդունելի, աւանդութե̃ սիկիլիացւոց, թէ ս̃ն ոնոփրիոս էր որդի արքային եգիպտոսի. զոր չէ՛ մարթ ուստեք հաստատել. այլ թերևս առեալ է յանորոշ բանից օրինակաց ինչ. ը̄ որոյ պատմի և 'ի յայսմաւուրս Հ. թէ յաղաչել պափնուտիոսի՝ զի պատմեսցէ նմա զանուն իւր և զվարս, * և նա ասէ. ես յառաջնումն եգիպտոս անուանէի. և ,, այժմ կոչիմ օնոփրիոս ||։ Ուր գուցէ զբացարձակ անունն եգիպտոս՝ առեալ իցեն ոմանք իբրև զանունն փարաւոն՝ 'ի նշանակ արքայազուն գոլոյ. այլ չիք հիմ̃ն ուստեք։

Մնայ միայն ստուգել, թէ ո՞ իցէ պափնուտիոս կամ պափնուտիոս կոչեցեալն ը̄ հյ. կմ̃ ը̄ յն. բաֆնուտիոս, հաւատարիմ հեղինակ հարազատ վարուց ս̃ն ոնոփրիոսի, որ ը̄ յն. օնուֆրիոս։ Արդ յայտ է թէ երևելին պափնուտիոս՝ ծանուցեալն առ ամենեսին էր մի յաշակերտաց ս̃ն անտոնի աբբայի, որ և եղև զկնի եպ̃ս թեբայիդոյ. և 'ի հալածանս գաղերիոսի և մաքսիմիանոսի՝ բրեցաւ աջոյ ակն նր̃, և խորտակեցաւ կարթ ծնկանն. և 'ի դարձին յաքսորանաց՝ գտաւ 'ի ս̃բ ժողովն նիկիոյ, և պատուեցաւ խոստովանողական անուամբ, գոլով մի 'ի գլխաւոր հարց ջաղխողաց զգլուխ արիոսեան աղանդոյ. զի էր զօրաւոր բանիւ և գրով։ Արդ սակարծի լինել սովորաբար՝ այցելու ս̃ն ոնոփրիոսի, և առաջին պատմօղ վարուց նր̃։

Այլ քանզի՝ որ 'ի մեզ սրապիոն կոչի դարձուցիչն տայասայ պոռնկի, առ այլս պափնուտիոս գրի, և ասի զմանէ բնակեալ գոլ 'ի կողմանս հերակլեայ քաղաքին

թէթեբայիդոյ, և 'ի խնդրելն յայ՝ թէ յոր չափ հասեալ իցէ, դարձուցինչ լեալ երից արանց 'ի կրօնաւորութեն, վսյ զմանէ չունիմք ասել՝ եթէ նմին իցէ ը առաջնոյն պափնուտիոսի, եթէ այլ : Այլ է ասեն և պափնուտիոս աբբայ կեփալաս՝ երևելի 'ի գիտութիս և 'ի մեկնութիւնս սբ գրոց, ը պաղադիոսի, զամս ութսուն ճգնեալ՝ ոչ ունելով զերկուս պարեգօտս միանգամայն : Այլ է ասեն և պափնուտիոս աշակերտ սբյն մակարայ՝ ը նորին պաղադիոսի · Թող զպափնուտիոս զհայրն եփրոսինեայ, և զայլ համանուն վկայս կամ անձինս անծանօթս : Արդ զոր և գիւտս 'ի նախագրելոյ այցելու սբյն ոնոփրիոսի, ժամանակն անկանի կամ 'ի չորրորդ դար, կամ առ առաւելն 'ի սկիզբն հինգերորդի · և չէ փոյթ՝ թէ չիցէ ծանուցեալ որոշ ամն :

Բայց տես դու ինձ զաւելորդ խղճմտութի կմ զանհիմն պատճառաբանութի յաննինգայ · որ փոխ ձեռնարկելոյ 'ի բազմաւորութէ երևելի արանց պափնուտիոս կոչեցելոց զստուգութի պատմութես, թերեհաւատութի կամի քաղել, ասելով · * Այլ 'ի գործս ամենեցուն ոչ ոչինչ
„ նշան գտանեմ, որ գէթ կարծիս ինչ տայցէ, թէ մի
„ 'ի սոցանէ է այն՝ զորմէ մեր բանքս են, քն է պափ-
„ նուտիոս հեղինակ վարուցն ոնոփրիոսի : Եւ արդարև՝
„ եթէ մին 'ի սոցանէ յանձին կալեալ էր զայնպիսի սբ
„ ճգնողութի, և զայնպիսիս տեսեալ և լուեալ՝ զոր-
„ պիսիս մերն աստ տեսեալ և լուեալ, պարտ և ար-
„ ժան էր ամ իրօք, զի յիշատակութի ինչ այդր բանի
„ լինիցի 'ի մէջ այլոց ևս դուզնաքեայ իրաց պատմելոց
„ զնոցանէ || :

Չէ արժան տալ պխնի այսպիսում առն կրիտիկի, որ 'ի կարգի բոլլանդեանց ո՛չ գիտեմ զոր տեղի ունի · զի ենթադրէ՝ թէ լիով ունի զպատմութի վարուց և գործոց միոյ միոյ 'ի պափնուտիոսաց · և այն զի՝ սոսկ դուզնաքեայ իրք և բանք գրեալ կան զնոցանէ յայլևայլ վարս հարանց, և ո՛չ կատարեալ պատմութի : Բայց եդեալ ևս՝ թէ լինէր կատարեալ պատմութի միոյ 'ի նցէ, միթէ ճոխագոյն և լիակատար գտանիւր քան զվարս սբյն անտոնի աբբայի զառ 'ի մեծէն աթանասէ գրեալ · և սակայն զի՞ գործեսցուք, կամ զի՞նչ լուծումն գտանէ յաննինգ, զի երթն անտոնի յայցելութի սբյն պօղոսի անապատականի ոչ յիշատակի անդ · արդ զոր պխնի գտանէ առ այն, զնոյն և աստ դիցէ · զի մեք չկամիմք ժամավաճառ լինել յոչինչ սկէաս :

Այլ լուր զպատճառանս յաննինգայ, որ կամի ընդդէմ զլինիլ բուն պատմութեան բանիւքս այսոքիւք. * Եւ սորդ՝
,, Եթէ այդչափ անծանօթ է այլուստ պափնոտիոս, որոյ
,, միայնոյ պատմութիւն՝ զոր գրեալ են անապատաւորք
,, նոյնպէս անծանօթք, և աւանդեալ յետնոց, ունիմք
,, զանտեղեկութիւն վարուցն ոնոփրիոսի, ոչ գիտեմ՝ թէ
,, որչափ հաւատք ընծայելի իցէ այդմ. մանաւանդ զի
,, ընթացս այդր վարուց գտանին ինչ ինչ ասացեալ և
,, գրեալ յանդգնագոյնս և դժպատեհագոյնս՝ քան զոր
,, վայել է սրբոց ||:

Ահա պատճառանք յանդգնագոյն քան զոր վայել է բոլլանդեանց, որք գիտեն և պարտին գիտել՝ թէ մեծամասամբ եթէ աստուածային և եթէ մարդկային պատմութիւնք հաւատարիմք՝ նախ յումեմնէ են գրեալ, և առ նովաւ հանդիսացեալ. և ցորչափ չունին ընդդիմութիւն յայտնի, ընդունելի լեալ՝ ոչ առ նովաւ, նոյնպէս և զկնի: Բայց թէ կարծէ ոք ինքն ընդդիմութիւնս տեսանել աստ, և այն՝ դժպատեհագոյնս, լուիցուք զյաջորդ բանս առնն՝ պատեհագոյն իցեն, եթէ աւելի դժպատեհագոյն. * Քանզի (ասէ) ոչինչ կամելով խօսել զհրեշտակէն՝ որ աս
,, օր ըստ օրէ բերել հաց առ ոնոփրիոս, և զայլ ևս նոյն-
,, պիսի իրաց, որք նուաղ անսովորք են, ասպաքէն ամէ
,, անսովոր և անլուր է՝ թէ հրեշտակաց սպասաւորու-
,, թեամբ բերեալ լինիցի ըստ իւրաքանչիւր շաբաթուց սուրբ
,, հաղորդութիւն ոչ առ մի մարդ սոսկ, այլ՝ առ ամե-
,, նեսին, որք բնակեալ իցեն յայնմ անապատի՝ որոշեալ
,, 'ի կենակցութենէ մարդկան, և ևս՝ թէ դոքա իբր ըստ
,, հաճոյս իւրեանց յափշտակեալ լինէին մնօք յերկինս,
,, և ընկերութեամբ սրբոց զմայլէին անդ . . . զինչ ասացից
,, և վասն խոստմանցն, և յետագայ բանիցն . . . մինթէ
,, անկ իցէ սրբոց դեռ յաստի կեանս եղելոց՝ այնպիսի
,, մտածութիւն, թող թէ ասութիւն, ոչի ընծայի աստա-
,, նօր ոնոփրիոսի, ոչ թէ կամս ցուցանելով՝ զի յետ
,, մահուն իբրև սուրբ պատուեսցի, և զի պատուողաց իւ-
,, րոց խոստանայ վստահութեամբ զառանձին վարձս, որ 'ի
,, ձեռս է միայն Աստուծոյ պարգևատուին ամենեցուն: Զի՞նչ ևս
,, յաւելից զանձամբ անձին դիմախօսելն, ուր յառաջն
,, հաստատութեամբ կնքէ՝ թէ զամս վաթսուն յառանձնութեան
,, կեցեալ՝ չիցէ տեսեալ մարդ զոք մարմնազգեստ՝ բաց
,, 'ի պափնոտիոսէ ևեթ. իսկ յետոյ խոստովան լինի,
,, թէ 'ի տարւոջն միանգամ յայց ելանէր նմա առաջնորդն
,, իւր և վարժիչ անապատաւորն՝ ցորչափ և եկեաց ||.

Դա՛ս

Դա՛տ արտաքին ա՟մ քննիչք իմաստունք՝ եթէ ը՟ստ ո՟յ, և եթէ ը՟ստ մ՟ի, որը բանք դժպատեհագոյնք իցեն, յաննինգայ՝ եթէ պափնուտիոսի կ՟մ ոնոփրիոսի ։ Եթէ կա՛մ էր մեզ մի առ մի նշաւակել զգրութիս և զենթադրութիս այսպիսի դիմախօսի, թերևս երևէաք՝ կամ վայրախօս, կամ շատախօս. այլ 'ի կարճոյ ասելի է. թէ՛ կամիցի յաննինգ, և թէ ոչ կամիցի, այդպէս անսովորք են և ճգնութիք և սքանչելի այցելութիք ս՟ց 'ի տ՟նէ. ը՟ստ եղիայի՝ ագռաւք բերեն ն՟ջ կերակուր, ա՟ն նա և հրեշտակք. ը՟ստ եսայեայ՝ հրեշտակք բերեն ն՟ջ ոչ լոկ կայծակն խորհրդաւոր յօրինակ ն՟ք խորհրդոյն, այլև զխորհուրդն փրկական 'ի սեղանոյ տ՟ն. ը՟ստ երեմիայի եղբայրասիրի՝ աղօթս մատուցանեն 'ի կեանս և յետ մահուա՟ն մեր, և առ ա՟ծ ապաւինութ՟բ համարձակախօս լինին ք՟ զոր կարծէ ոք ։ Ո՛չ են հակառաբան, այլ ճշմարտախօս, երբ ասեն ոչ զոք տեսաք ցմահ մեր՝ բայց յայս ինչ անձնէ, զոր տեսանէաք մինչև ցմահ ն՟ր բազմօք յառաջ ք՟ զմեզ, Ո՛ւր թողից, զի կարգակիցք յաննինգայ յ՟եանք իրաւամբք պանծան 'ի նորընծայն իւրեանց ստանիսլաւոս, որ երկիցս 'ի հրեշտակէ ընկալաւ զ՟բ խորհուրդն, և միթէ փոքր ո՟ք էր քան զնա ոնոփրիոս. և՟ն։ Զի՞նչ ևս ասացից. ես կարծէի, թէ առ մեօք է լցեալ, բայց իմացայ՝ զի և յառաջ քան զմեզ յաւուրս յաննինգայ լցեալ էր գուշակութ՟ի այսպիսի հարանց ս՟ց, որք նախաձայնեցին՝ ըստ որում գրի 'ի վարս հարանց, թէ

❋ եկեսցեն աւուրք՝ յորում ապականեսցեն և լուծցեն
,, կրօնաւորք զգիրս աւետարանի և զառաքելոցն ք՟ի
,, և զմարգարէիցն բանքն. եղծցեն և զհարանցն գրե՟ան.
,, և գրեն իւրեանց եռմոսս և ձայնաւոր տունս հելլե-
,, նացիս և ատտիկեցիս և բարբարոսս. և դարձուցա-
,, նեն զմիտս իւրեանց և զփոյթ 'ի տունս և 'ի բանս և
,, 'ի ղօղանջմունս յայնոսիկ. (իմա՛ ը՟ստ փորձոյ՝ զհոմերական և զվիրգիլեան առասպելս, որոց առաւել միտնեն՝ քան բանից և վարուց ս՟ց հարց, և՟ն) ։ Վասն
,, այսր բանից ասացին ն՟ք հարքն մեր, զի մի՛ գրեսցեն
,, յանապատս յայս՝ որք աստ բնակեալ իցեն գրիչք,
,, զբանս և զվարս հարանց 'ի մագաղաթի, այլ՝ 'ի
,, թուղթս. զի հանդերձեալ ազգն՝ որ գալոց է, ջնջեն
,, զվարս հարցն 'ի գրէ իւրեանց, և այլ ինչ գրեն ըստ
❋ կամաց իւրեանց ❋ ։

Ո՛չ կամիմք, թէ այս բանք յարմարեսցին հոգեսէր կրիտիկին մերում յաննինգայ, բայց և ոչ զայն կամիմք՝ զի կե-

կեղակարծ բանք նր՟ տեղի գտցեն անբանաւորապէս. վն՟ զի առ քննութն՟ պատմութն՟ զօրէ զօրագոյն և սաստկագոյն պատմութն՟, և ոչ ընտրել և անպատճառ պատճառաբանութն՟. որպէս է և այն, զի կամելով տկարացուցանել և զգիւտ նշխարաց սրբ՟յն, ասէ. * ո՞ ոք խորամուխ եղև յանկոխ և յանշրգի անապատ, և եգիտ ,, զփապարն պափնուտիոսի և եթ ծանուցեալ. և գտեալ ,, եբարձ անուն զնշխարս ||: Շնորհ ունիմք, զի այժմ ենթադրէ ընդունել զպատմութն՟ պափնուտեան. թող չընկալցի՝ թէ ո՞ և կմ՟ զիարդ եգիտ զնշխարս նր՟. որ բիւր օրինակաւ մարթի լինել՝ յետ լսելոյ բազմաց ըզտեղի ոնուփրիոսի 'ի պափնուտիոսէ: Նմին իրի մեղմէ զկնի յանկինինդ՝ զբանս իւր, և ոչ զանց առնէ նշանակել՝ թէ 'ի զանազան տեղիս յիշատակին նշխարք սրբ՟յն ոնուփրիոսի յարևմուտս. զի ասէ՝ * բենեւենտացիք կանխաւ ,, նուիրեցին տաճար յանուն նր՟, և զնշխարս նր՟ պահեն ,, յեկեղեցւոջ սրբ՟յն սոփեայ . . . զայս իմ՟ ցուցանէ որ ,, մարիոս վիպերացի 'ի ցուցակի սբ՟ց եկեղեցւոյն բենեւենտու՝ վկայ 'ի մէջ ածեալ զհին մատեան և զարձանագրութիս ||. և ասէ՝ թէ ութօրեայ տօնեն բենեւենտացիք զսբ՟ն ոնուփրիոս: Ըստ պօղոսի հռեգիոսի մասն ինչ յաջոյ բազկէ սրբ՟յն ոնուփրիոսի բերաւ 'ի հռովմայ 'ի նէապօլիս, և եդաւ 'ի տաճարի մարիամու շնորհաց կոչեցեալ:

Յիշի 'ի վարս սբ՟ցն գալակտիոնի և եպիստիմեայ նահատակելոց առ դեկոսիւ, ը՟ սուրբոսի 'ի նոյեմբ. 5. և այլ ոմ՟ ոնուփրիոս որ՟ բնակեալ 'ի կողմանս եմեսիոյ փիւնիկեցւոց, որոյ աղօթիւք էր ծնեալ սբ՟ն գալակտիոն 'ի լեւկիպպեայ յամուլ մօրէ. բայց սա չէ՛ր անապատաւոր. գուցէ կային և այլ համանուն սբ՟ք. և սակայն ուր և կայցեն նշխարք ոնուփրիոսի, ամենեքին կամին ընծայել զայն երևելւոյն ոնուփրիոսի անապատականի: Եւ ը՟ այսմ սիկկիլեացիք մեծապէս ջերմեռանդն ցուցանեն զանձինս առ սբ՟ն ոնուփրիոս. զի 'ի սուտեր քաղաքի սիկկիլեայ կղզւոյն կատարի յիշատակ նր՟ իբրև պաշտպանի իւրեանց ը՟ սրբ՟յն պաւլինոսի և արքիրիոնի. քանզի ը՟ գրելոյ հռոքոսի պիռռոսի՝ գոյ ասեն անդ յեկեղեցւոջ սրբ՟յն պաւլինոսի * արծաթի տապանակաւ ,, ամբողջ մարմին սրբ՟յն ոնուփրիոսի, որ է ը՟ աւանդութն որդի արքային եգիպտոսի. որոյ տօնն կատարի ,, 'ի յունիսի. 12 ||: 'Ի բալերմօ կայ եկեղեցի առանձին յանուն սբ՟ հօրն ոնուփրիոսի, ուր յաւուրս պանդըխ-

տու

տութեան իմոյ ստէպ կոչէին զիս 'ի պատարագել՝ իբրև մերձաւոր արևելեան սրբոյ․ պատկեր սրբոյն յաւագ բեմի էր թաղուածն 'ի պամինոտախոսէ՝ յարևմտեան պատմութեան վարուց նորա ։ Կայր և 'ի հռովմ եկեղեցի սրբոյն Ոնոփրիոսի 'ի տեղին կոչեցեալ յանիկուլոն՝ որ է մի յեօթն բլրոց հռովմայ ։

'Ի վախճանի ծանիր, զի 'ի մէջ ընտիր օրինակաց վարուց սրբոյն Ոնոփրիոսի գտելոյ առ յոյնս և առ լատինս՝ ընտրելագոյն օրինակ է եդեալն 'ի հայերէն վարս հարանց․ ուր 'ի վերջոյ գտանի յիշատակարան այսպիսի․ ＊ Զնորոգօղ և զթարգմանիչ սրբոյ պատմութեան զտէր գրիգոր հայոց կաթողիկոս յիշեցէք 'ի Քրիստոս․ և թարգմանեցաւ 'ի թուականութեան հայոց շծթ ամին (այն է ամի տեառն․ 1110․) յձիս եգիպտացւոց 'ի փառս ամենասուրբ երրորդութեան ||։ Ուր եթէ իմասցուք զգրիգոր վկայասէր, պարտ է ընթեռնուլ շճթ, կամ շծբ․ զի վկայասէրն վախճանեցաւ 'ի թուին շծդ․ ապա եթէ իմասցուք ըզգրիգորիոս եպս զքեռորդի վկայասիրին՝ զկարգեալն 'ի նմանէ առաջնորդ եգիպտոսի, թերևս կենդանի էր նա տակաւին 'ի թուին շծթ ։

ՎԵՐՋ

ՎԱՐՔ ՍՐԲՈՅՆ

Տրդատայ Թագաւորի, և Աշխէն տիկնոջն, և Խոսրովիդխտոյ ։

Դ. Նոյեմբ. 29 ։ Ճառընտ. Բ. ջէ ։ Ագաթանգեղոս ։ Խորենացի. և այլք ։ (1)

ՔԱՋԱԶՕՐՆ ԵՒ ԲԱրեյաղթն ՚ի թագաւորս՝ երկոքումբք թ՟գրեալ սրով և խաչիւ, մեծն Տրդատէս՝ լուսաւորեալ լուսաւորիչ Հայաստանեայցս, որդի էր խոսրովու Հայոց արքայի ՚ի տանէ արշակունեաց պարթևաց, անձնեայ և թիկնաւէտ, հաստաբազուկ և զօրաւոր, հսկայ ահեղ և փառացի իբրև զդիւցազն ՚ի դիւցազանց ։ Արդ՝ յորժամ սպան անակ պարթև դաւով զխոսրով զհայրն տրդատայ, և արտաշիր սասանեան պարսիկ համարձակ միջամուխ եղև յ՟ծն հայոց՝ ջնջել զզաւակ թագաւորութե՟, և տիրել ինքնին հայաստանեայց համօրէն, ապրեցաւ ՚ի կոտորածէ մանուկն արքայորդի տրդատ եէթ, և քոյր մի նորա խոսրովիդուխտ անուն ։ Զտրդատ ապրեցուցանէ արտաւազդ մանդակունի նախարար հայոց՝ փախուցեալ զնա ՚ի կեսարիա կապադովկացւոց, որ էր ընդ ծ՟րութ՟ կայսեր · իսկ զխոսրովիդուխտ ազատեաց օտայ ամատունի, և տարե՟լ յամուրն անի՝ որ և կամախ, անդ սնուցանէր զնա գաղտ, և զամուրն պահէր զգուշութ՟ ։

Եւ եղեւ յետ սնանելոյ տրդատայ առ ժամանակ մի 'ի կեսարիա՝ առեալ տարաւ զնա արտաւազդ յարեւմուտս 'ի հռովմ քղ՟ք · ուր յարքունս հասեալ պատանւոյն՝ եկաց յարքունի դրան ը՟ ձեռամբ լիկիանեսի, որ մին էր յաւագ իշխանաց կայսեր, և յետ ժամանակաց եղեւ կեսար ։ Եւ քանզի էր տրդատ հզօր զօրութ՟ և անպարտելի ուժով, յաջողակ 'ի զէնս և յառաջադէմ յա՟մի, արար բազմապատիկ գործս քաջութ՟ և զարմացոյց զհռովմայեցիս · մինչև համարէին հերակլէս զոմն նոր, կամ աքիլլէս տեսանել · վ՟ զի՝ էր զի առանձինն զգունդ թշնամեաց 'ի բաց դարձուցանէր, և էր՝ զի միայնակ զբազում 'ի բերան սրոյ կոտորէր · էր զի 'ի գազանամարտ մտեալ՝ զամեհի ցլուց զեղջիւրս միով ձեռամբ 'ի բաց թափէր, և էր զի 'ի կառամարտիկ ասպարիզի բուռն զօրութ՟ զընթացս քառաձի կառաց ձեռամբացի յետս ընկրկէր ։

Եւ այսպիսի արութ՟ք անուանի լինէր մինչև յաւուրս կայսերութ՟ դիոկղետիանոսի գաղմատացւոյ · որոյ զանդիտեալ մենամարտիլ ը՟ հաչէի գոթացւոյ, և լուեալ 'ի լիկիանեայ զմեծամեծ գործս տրդատայ, ըզգեցոյց նմա զիւր կայսերական զարդ, և եհան

հան 'ի հանդէս . և՛ իբրև զօրացաւ քաջն տրդատիոս , և ձերբակալ արար զբռնամարտիկն զհռչէ , պատուեցաւ յոյժ յինքնակալէն պարգևօք և փառօք . և պսակեալ 'ի նմանէ թագաւոր բնիկ ծին իւրոյ՝ եկն 'ի հայս կայսերական գնդաւ . և վանեալ ահագին քաջութ՟բ զպարսիկս և զա՟մ թշնամիս՝ տիրեաց հայաստան ծի 'ի ծագաց մինչև 'ի ծագս նորուն , և բազմեցաւ իրաւամբք յաթոռ հայրենի թագաւորութ՟ե : Նաւ էառ իւր կին զդուստր ալքային ալանաց զԱշխէն տիկին , որ ամենևին համանման էր հսկայաձև հասակին իւրոյ : Փառաւորեաց և զքոյր իւր զԽոսրովիդուխտ մեծ օրիորդն . որ ոչ կամեցաւ լինել առն , և սիրեաց զկուսութ՟ի զա՟մ աւուրս իւր :

Բայց սէգ արքայն տրդատ մոլեալ 'ի պաշտօն դից իւրոց հայրենեաց՝ յորոց կարծէր լինել զյաջողուածս թ՟գրութ՟ե իւրոյ , յառաջնում ամի անդ չարչարեաց բազմօք ըղվաստակաւոր և զսիրելի ծառայն իւր զերանելին գրիգոր քաջ նահատակն ք՟ի , որ անծանօթ երեսօք կայր 'ի սպասու նորա . և յետ ահագին տանջանաց՝ զորս ետ նմա , իմացեալ՝ եթէ որդի անակայ պարթևի է նա , հրամայեաց տանել արկանել զնա 'ի խոր վիրապ մահապարտաց՝ որ յարտաշատ քաղաքի . և ինքն գրեաց հրովարտակս՝ զի յա՟մ ի՟րութ՟ե իւրում անխափան լիցի պաշտօն դից , և մի՛ ոք գտցի քրիստոնեայ . զո՛ր օրինակ և հայր նորա խոսրով գուն գործել էր

ընդէլ

ընջել զհաւատացեալս մ՟նացեալս յաւուրց անտի սրբ՟ց առաքելոցն Թադէոսի և Բարթողիմէոսի ։

Անցին ՚ի վ՟ր ամք չորեքտասան , և եկին գաղթականք յաշխ՟ն հռովմայեցւոց ՚ի հայս ո՟ք կուսանքն հռիփսիմեանք . և կատարեցան նահատակու՟թ յարքայէն տրդատայ ՚ի սահմանս վաղարշապատ քաղաքի ։ Եւ եղև զկնի երից աւուրց կատարմանն նոցա՝ յելանել թագաւորին արտաքոյ քաղաքին յորս , հարաւ ՚ի տ՟նէ նորանշան պատուհասիւք . քանզի անկեալ ՚ի կառացն՝ սկսաւ մոլեգնիլ իբրև զայսահար . և ը՟ նմանութ՟ն նաբուգոդոնոսորայ բաբելացւոց բռնաւորի՝ օտարացեալ ՚ի մարդկային գնացից՝ վայրենացաւ և եղև ՚ի կերպարանս անասնոյ ՚ի նմանութիւն վայրենի խոզի . և վարեալ ՚ի դիւաց մերկ և խայտառակ ՚ի շամբս եղեգնուտս՝ վայրաբնակ լինէր իբրև զվարազ . և ոչ ոք իշխէր մանձել զնա և բերել ՚ի քաղաքն ։ Ընդ նմին և բազումք ՚ի ծառայից թագաւորին և յիշխանաց և ՚ի զօրաց ա՟ծ ասաստ բարկու՟թ բախեալ ՚ի դիւաց՝ հարան ՚ի մոլեգնութ՟ , մինչև ատամամբք ուտել զմարմինս իւրեանց , և առ հասարակ ա՟մ բնակիչք աշխ՟ին յահ և յերկիւղ պաշարեալ կային ։

Արդ յայնմ ժամանակի յետին աղէտից տարակուսանաց՝ այց առնէր ողորմութ՟ի տ՟ն ՚ի բարձանց՝ նորոգել զհնութ՟ի հայաստան աշխ՟ի . քանզի արժանի լինէր երկնաւոր տեսլեան առաքինի կուսանն խոսրովիդուխտ քոյր թա-

գաւ

գաւորին . և եկեալ օրիորդն խօսէր ը՟ն մարդիկն , պատմէր տեսիլ, և ասէր . տեսիլ երևեցաւ ինձ յայսմ գիշերի . այր մի 'ի կերպարանս լուսոյ եկեալ պատմեաց ինձ , եթէ ոչ այլ ինչ բժշկութի՟ գոյ հարուածոցդ՝ որ եկին հասին 'ի վ՟ր ձեր , եթէ ոչ առաքէք 'ի քաղաքն արտաշատ՝ ածել անտի զկապեալն գրիգորիոս . նա եկեալ ուսուսցէ ձեզ զդեղ ցաւոցդ բժշկութե՟ :

Իբրև լուան մարդիկն , սկսան ծիծաղել ըզբանիւքն՝ զոր խօսեցաւ խոսրովիդուխտն . և ասեն ցնա . և դու ուրեմն մոլեգնեցար , դև ուրեմն հարաւ 'ի քեզ . զիա՞րդ է՝ զի այս հնգետասան ամ է , զի ընկեցին զնա յանհնարին 'ի խոր վիրապն . և դու ասես՝ թէ կենդանի իցէ . արդ և ոսկերոտին իսկ ո՞ւր իցէ . զի նոյն օրին իսկ իբրև իջուցին զնա անդր՝ 'ի տեսլենէ օձիցն սատակեալ իցէ : Կրկնեաց դր՟ձլ հրեշտակ ա՟յ զնոյն տեսիլ առ օրիորդն, և հինգկնեաց սպառնալեօք . զի թէ ոչ պատմեսցէ ստէպ ստէպ , մեծամեծ տանջանս ընկալցի , և հարուածք մարդկան և թագաւորին՝ առաւել ևս սաստկասցին մահուամբ : Եւ մտեալ անդրէն խոսրովիդուխտ առ աշխէն տիկին և առ մեծամեծ աւագանին՝ մեծաւ երկիւղիւ և զգուշութ՟բ ասաց զբանս հրեշտակին : Իսկ նոքա վաղվաղակի յղէին յարտաշատ զաւագ նախարարն օտայ, որոյ իբրև սան էր խոսրովիդուխտ . և նորա երթեալ եգիտ զս՟բն գրիգոր կենդանի 'ի խոր վիրապին . և 'ի վեր հանեալ՝ առ եբեր ուրախութ՟բ ՚ի վաղարշապատ ։

Յայնժամ ընդառաջ գնաց սբ՟յն ը՟ այլ աւագանին՝ և խոզակերպեալ Թագաւորն , և ամենայն դիւաբախ մարդիկն ընդ նմա , և անկան յոտս գրիգորի ։ Եւ նա խնդրեաց յա՟յ տալ նոցա զգաստութիւն միտաց , զի կարող լինիցին իմանալ զկենարար մջ՟պութ՟ե փրկչին ՚ի բժշկութ՟ե հոգւոց և մարմնոց ։ Եւ օթեւանս կալեալ սբ՟յն գրիգորի մերձ ՚ի հնձանատեղին սբ՟ց կուսանաց՝ ուր հաւաքեաց զմարմինս նոցա , քարոզէր ամ՟ ժողովելոցն զաւուրս վաթսուն կամ վաթսուն և վեց՝ պահօք հանդերձ և աղօթիւք ։ Իսկ տրդատ՝ որ դեռ ՚ի պատժին կայր քստմնելի կերպարանաց , բայց զգաստացեալ մտօք , հանապազ դեգերէր հեծեծանօք առ ոտս գրիգորի քրձազգեաց , և զցաւս սրտին արտասուօքն յայտնէր , և յախտակցութ՟ի ինքեան զսբ՟ն ստիպէր ։ Եւ յետ կատարման աւուրց պահոց՝ բժշկեաց սբ՟ն գրիգոր զձեռս և զոտս Թագաւորին , զի կարող լիցի աշխատիլ՝ ոպ՟ փափաքէր , ՚ի շինութ՟ի շիրմաց և վկայարանաց սբ՟ց կուսանացն՝ ը՟ տեսլեանն , զոր ետես և պատմեաց սբ՟ն գրիգոր ։

Ապա առեալ Թագաւորին զաշխէն տիկին զԹագուհին , և զքոյր իւր խոսրովիդուխտ , նոքօք հանդերձ պատրաստէր զդիրս սբ՟ կուսանացն . ինքնին տրդատ բերէր բահով և փայտատով , և նոքա ՚ի հանդերձս իւրեանց ընկալեալ զհողն՝ արտաքս պեղէին . և ամ՟ բաղբազմութի մարդկանն ընթացեալ պատրաստէին նուէր շինուածոյ վկայարանաց, և բերեալ կուտէին 'ի հրամայեալ տեղին՝ ոմն քար, ոմն աղիւս, ոմն զմայր փայտ՝ խնդալից փութով 'ի Տր, և մեծաւ երկիւղիւ։ Նա և ինքն սբն Գրիգորիոս զլար ճարտարութեան շինողաց 'ի ձեռն առեալ՝ ճարտարապետ լինէր 'ի կանգնել զվկայարանս. և ամ ոք ձեռնարկեալ 'ի գործս՝ գործէին զշինուածն. մինչև կանանոյն անդամ սատարել ըստ իւրեանց տկարութե։ Նա յաւել բերել տրդատ անձամբ քարինս մեծամեծս 'ի մասիս լեռնէ՝ 'ի պէտս սեմոց վկայարանացն, իբրև փոխարէնս կամելով հատուցանել անմիտ մարտին՝ որով մրցեցաւ ընդ սրբուհւոյն Հռիփսիմեայ. որ զօրութբն այ յաղթեաց հսկայ արքային, և այսչափ զարմանալեաց եղև առիթ. վնյ և սա իբրև պսակ յաղթութեան կուսին զիւրոյ ձեռագործութե զվաստակն մատուցանէր։

Բերին և Աշխէն տիկին և Խոսրովիդուխտ և այլ օրիորդք թագաւորազունք և կանայք պատուականացն և դստերք մեծամեծաց ծիրանիս և ոսկեհուռ դիպակս և երկնագոյնս, և այլ ազգի ազգի ազնիւ հանդերձս, 'ի հանդերձանս և 'ի պատանս մարմնոյ սբ կուսանացն. նոյնպէս և թագաւորն և արքայազունքն և ազատքն բերէին զիւղս անուշահոտս և խունկս ազնիւս, և զգունագոյն նարօտս պատանաց՝ զմետաքսաւէչս և զոսկէթելս կերպասուցն, հանդերձ ոսկւով և ար-

ծա

ծաթոյլ, և կուտելին առ դուրս հնձանին ։

Արդ իբրև ելեալ տեսանէր զերն գրիգորիոս զայն ամ, ասէ ․ ոչ վաղ իսկ ասացի ձեզ, եթէ ոչ է պատշաճ զձեր ինչ՝ որ չեւ էք սրբեալ մկրտութբ, առ նս մատուցանել ․ այլ յօժարութիդ ձեր բարիոք է վն ձերոյ փրկութե ․ այլ այս ամ յարքայական գանձուն պահեալ կայցէ ․ զի յորժամ տացէ ձեզ տր քահանայապետ՝ և հովիւս և առաջնորդս՝ եկեղեցական կարգօք լուսաւորութե, այդ ամ երթիցէ 'ի սպաս պաշտաման փառաւորընկալ սեղանոյն այ ․ այլ այժմ եկա՛յք զոն յիւրաքանչիւր հանդիստ մատուսցուք ․ զի և նոքա բարեխօսութբ իւրեանց տացեն ձեզ հանգիստ 'ի տառապանաց հոգւոյ և մարմնոյ ։

Եւ իբրև ամփոփեցին զմարմինս սրբց կուսանաց յիւրաքանչիւր վկայարանս, պարսպեցին որմով և զտեղի իջման միածնին՝ առ 'ի շինել անդ եկեղեցի ըստ տեսլեանն ․ ուր և կանգնեալ գրիգորի զնշան սրբյ խաչին՝ հրամայեաց ամենեցուն ծունր դնել և երկրպագել, և կարդալ աղօթիւք առ ած ․ զի արասցէ նց բժշկութի 'ի հարուածոցն մնացելոց ։ Յայնժամ 'ի կալ և սրբյն գրիգորի յաղօթս ուժգին գոչմամբ վն կատարել բժշկութե թգւորին և ամ վտանգելոց, անդէն վաղվաղակի թօթափել տրդատայ յանձնէ զամ հետս օտար կերպարանաց՝ դարձաւ յառաջին կերպարանս իւր, առաւել պայծառ և վայելուչ ․ սոյնպէս և ամ ախտացեալքն ողջացան , և առհասարակ փառս տային ա՟յ ճշմարտի , որ միայն կարող է հարկանել և բժշկել ։

Առաւելապէս արքայն տրդատ նորոգեալ յայր այլ հոգւով և մարմնով՝ անչափ գոհութ՟բ մեծացուցանէր զ՟որ վ՟ն այցելութ՟ենն , զոր արար ը՟ նա 'ի խրատել և 'ի կենդանագործել սքանչելապէս ։ Ընդ նմին և աշխէն տիկին և թագաւորաքոյրն խոսրովիդուխտ անպատում ուրախութ՟բ լցեալ՝ ևս քան զևս հաստատէին յերկիւղ տ՟ն և 'ի ջերմ պաշտօն ք՟նի ․ և սկսաւ յորդել լուսաւորութ՟ի ա՟ծպաշտութ՟ե 'ի ձեռն ս՟բ լուսաւորչին ը՟ ա՟մ աշ՟խն հայոց՝ սկսեալ յայրարատոյ , ուր բղխեաց աղբիւր շնորհաց 'ի թագաւորական կայանսն ։

Եռայր այնուհետև հոգւով ա՟ծասէր արքայն տրդատ տարածել զքրիստոնէութիւն ը՟ ա՟մ տեղիս իշ՟խութ՟ե իւրոյ , և փութայր հանդերձ աւագանւոյն անձամբ երթալ և ջնջել յա՟մ քաղաքաց և 'ի գիւղից զհետս կռապաշտութ՟ե ։ Եւ ինքնիշխան հրամանաւ ձեռն 'ի գործ տայր ս՟բյն գրիգորի համարձակ բառնալ յաշ՟խն հայոց զա՟մ գայթակղութիս , և յայնմ հետէ չա՟ծս անուանել զա՟ծս նախնեացն , և անյիշատակ առնել զա՟մ արձանս և զբագինս կռոց՝ ո՛րչափ և բազմածախ և ճարտարագործ հնութ՟իք իցեն ։

Եւ յորժամ այս ա՟մ 'ի գլուխ ելանէր՝ բազմադիմի սքանչելեօք , ժողով մեծ արար թագաւորն տրդատ՝ միաբանութ՟բ աշխէն տիկնոջ և խոսրովիդխտոյ, յամ՟ աւագաց և յիշխանաց հայաստան աշխարհի · և հաստատեաց նոքօք հանդերձ՝ ընտրել հովիւ և առաջնորդ և քահանայապետ իւրեանց զմեծն գրիգոր, զի մկրտեսցէ զնոսա, և հաստատեսցէ զեկեղեցիս : Եւ յոչ առնուլ գրիգորի յանձն՝ տեսլեամբ հրեշտակի ա՟յ ազդ եղև տրդատայ, թէ պարտ է ձեզ զգրիգոր վիճակեցուցանել անյապաղ 'ի քահանայապետութ՟ի · նոյնպ՟ս և զգրիգոր հաւանեցոյց հրեշտակն, թէ 'ի ք՟նէ է քեզ այդ հրամայեալ :

Յայնժամ թ՟գրն մեծաւ երկիւղածութ՟բ և խնդութ՟բ՝ արձակեաց զգրիգոր բազմութ՟բ նախարարաց և զօրաց, 'ի կեսարիա կապադովկացւոց · ուր ձեռնադրեցաւ ս՟բ լուսաւորիչն յեպ՟սապետութ՟ի հայաստանեայց 'ի ձեռն ղևոնդեայ պատրիարքէ · և դարձաւ փառօք 'ի հայս՝ հանդերձ բազմութ՟բ պաշտօնէից · և յետ մկրտելոյ զճանապարհայն զուղեկից նախարարս և զզօրս նոցա, իբրև մերձեցաւ 'ի մեծն հայս, ել ը՟առաջ նորա թագաւորն 'ի քաղաքագեօղն բագաւան առ ափն եփրատ գետոյ՝ հանդերձ աշխէն տիկնաւն և խոսրովիդխտով և ամ՟ արքունի բանակաւ :

Եւ յետ տեսանելոյ զք՟հնյապետն ա՟յ անչափ ուրախութ՟բ՝ պատրաստեցան յը՟ունելութ՟ի ս՟բ մկրտութ՟ե պահօք և աղօթիւք, ջերմեռանդն հաւատով : Ապա առեալ ս՟բ հայրապետին գրիգորի զթագաւորն տրդատ և զաշխէն տիկինն և զմեծ օրիորդն խոսրովիդուխտ հանդերձ

դերձ աշխարհաժողով բազմութ՟ե՝ էջ յափն եփրատայ. և անդ մկրտէր զնոսա յանուն հօր և որդւոյ և հոգւոյն ս՟բյ. և որ՟պ ասեն յայսմաւուրք՝ 'ի մկրտութ՟ե անդ փոխեաց ս՟բ լուսաւորիչն զանունն տրդատայ, և կոչեաց զնա Յովհաննէս՝ յանուն ս՟բյն յովհաննու կարապետի և մկրտչի որդւոյն ա՟յ, զորոյ զնշխարս բերեալ էր ը՟ իւր 'ի կեսարիոյ: Այս եղև 'ի մտանել թագաւորին, և որոց ընդ նմա՝ 'ի գետն, լոյս սաստիկ երևեալ 'ի բարձանց 'ի նմանութ՟ի լուսեղէն սեան՝ եկաց 'ի վերայ ջրոց. և 'ի վերայ սեանն նմանութ՟ի տ՟րունական խաչին, հանդերձ այլ ևս ահաւոր նշանօք. և 'ի վաղի՛ւ անդր մատուցեալ ս՟բյ լուսաւորչին զս՟բ պատարագն 'ի բագուա՛ն՝ հաղորդէր զթագաւորն և զորս ը՟ նմա 'ի պատուա՛կան խորհրդոյն:

Յայսմ հետէ օր քան զօր՝ բիւրք բիւրուց ,և հազարք հազարաց գային 'ի լուսաւորութ՟ի ս՟բ մկրտութ՟ե. և տ՟ծանէր թագաւորն բանի՛ւ և օրինակաւ ծաղկեցուցանէր զհաւատս բարեպաշտութ՟ե ը՟ ամ՟ն. և տայր լուսաւորչին շինել ը՟ ամ՟ տեղիս եկեղեցիս արքունի ծախիւք , և կարգել եպ՟սունս և քահանայս և պաշտօնեայս՝ հանդերձ հասիւք 'ի կալուա՛ծոց իւրաքանչիւր տեղեաց: Այս դարձեալ ը՟ խորհրդոյ գրիգորի հրաման տայր թագաւորն ժողովել յամ՟ գաւառաց մատաղ մանկունս , և բաժանեալ զն՟ս յերկուս դասս՝ զոմանս կարգէր յասորի դպրութ՟ի , և զոմանս 'ի հելլէնն. նոյնպէս և զորդիս քրմաց

ը՟

ը՟ հաւատարիմ վարժապետօք տայր մարզել յուսումն ս՟բ գրոց , և այնպ՟ 'ի սակաւ ժամանակի ծաղկէր հայաստան աշխարհ իբրև զդրախտ ա՟յ ա՟մ շնորհօք պարգևաց ս՟բ հոգւոյն ։

Յետ այսորիկ 'ի կամիլ ս՟բ լուսաւորչին աւանձնանալ յանապատ տեղիս՝ բաղում թախանձանօք աղաչէր զնա ա՟ծասէր թագաւորն , զի հանապազ առ նմա կացցէ . և յոչ առնուլ ն՟ր յանձն՝ տեղեկացեալ արքայի , եթէ երկու որդիք են ս՟բյն գրիգորի 'ի կեսարիա , վրթանէս յաշխարհական կարգի , և արիստակէս միայնակեաց , առաքեաց պատուիրակս , և ետ ածել զն՟ս առ ինքն . և նոքօք հանդերձ ելեալ 'ի խնդիր ս՟բյն գրիգորի՝ եգիտ զնա 'ի դարանաղեաց գաւառի 'ի սեպուհ լերին յայրան մանեայ . և իջուցեալ զնա 'ի լեռնէն՝ ետ ձեռնադրել փոխանակ իւր զարիստակէս 'ի կթ՟ղկոսութ՟ ա՟մ հայոց ։ Եւ հանդերձ արիստակիսիւ գնացին տրդատ և գրիգոր 'ի տես կոստանդիանոսի և սեղբեստրոսի 'ի հռոմ . որպ՟ս ասացաւ 'ի վարս լուսաւորչին . և յետ ամաց զնա ինքն զարիստակէս առաքեցին 'ի դիմաց իւրեանց 'ի ս՟բ ժողովն նիկիոյ . և յայնմհետէ իսպառ աւանձնացաւ ս՟բ լուսաւորիչն 'ի միայնութ՟ ։ Իսկ ա՟ծասէր թագաւորն տրդատ յավհաննէս օր քան զօր առաւելեալ 'ի հանդէս կարգաց ա՟ծպաշտութ՟՝ ետ զանձն բոլորանուէր 'ի պաշտօն փրկչին իւրոյ ք՟ի , անձանձիր յաղօթս և 'ի պահս , և յընթերցուածս ս՟բ կտակարանաց 'ի յոյն բարբառ , զի քաջ իսկ տեղեակ էր հելլեն՝ դպրութ՟ե. որով քաղցրացեալ յօրէնս ո՟յ՝ հեղոյր զանձն առաջի տ՟ն, և անդադար արտասուօք ուրախութ՟ե գոհանայր զանբաւ մարդասիրութ՟է արարչին. և ա՟մ արթնութ՟բ հսկէր ՚ի վ՟ր անձին և ոգին՝ գնալ ամենեցուն յա՟մ պատուիրանս և յիրաւունս տ՟ն անարատ. և ինքն թէպէտև յոգի կալով գեր ՚ի վերոյ լինէր քան զանապատաւորս, գեղեցիկ կրօնաւորեալ սրտիւ ը՟ն արքունի ծիրանեօք: Որոյ զպանծալի գովութ՟ի այսպէս առաջի առնէ ատենադպիր ն՟ր մեծն ագաթանգեղոս՝ վկայ ականատես.

* Ա՟ծասէր թագաւորն տրդատիոս բարեպաշտութ՟բ սպասաւորէր ը՟ն աշակերտական հաւատոց ՚ի ք՟ս՝ երկիւղած դաւանիւր. որով տեղեկացեալ և վարժեալ ա՟ծակեաց հրամանօքն, և ցանկալի եղեալ օրինապահն կալով, և բարեաց օրինակ ա՟մ ոգի: Նւ անդէն ՚ի նմին ուշ եղեալ փութով ընթերցուածոց ա՟ծեղէն գրոց. զի յունական ոգական դպրութ՟են երկրաւոր իմաստութ՟են յառաջագոյն էր տեղեակ՝ առաւել փիլիսոփայական մտաց հանճարագիտութ՟ե. զի ուսեալ էր զայս:

Արդ ընկալեալ և շնորհս երկնաւոր պարգևացն. որով առժամայն լուսաւորեալ և թևակուռ թևամուխ եղեալ ա՟ծատուր հրամանացն ուղղութ՟եց, և ա՟մ պատրաստութ՟բ զանձն յարդարեալ, և ը՟ն աւետարանական չափոյն ՚ի ծառայութ՟ի ո՟յ մարդասիրին դարձեալ, մերկացեալ այնուհետև զհեթանոսակիր ցանկութ՟իս, առեալ զնշան պար-

ծա

ծանեաց խաչին յանձն իւր . և պաշտել զկնի ամենակեցոյց խաչելոյն , հանել զհրամանացն պայման , զկնի խաչակիր գնդին ք՟նի աշակերտելոցն հետևել : Եւ անձին իւրում եղեալ սահման՝ պահօք և տքնութ՟բ աղօթս մշտնջենամռունչս , և բազկատարած պաղատանս առ ա՟ծ , և արտասուս համապազաբուղխս վ՟ս աշխ՟ին իւրոյ : Նոյնպէս և վ՟ս իւր խնդրել , զի մի՛ յիշեսցին մեղքն՝ որ յառաջին տգիտութե՟ն յայնժամ որ 'ի հնութե՟ անդ գործէր : Եւ բազում և ա՟մ ուժով նպաստաւորութ՟բ ընծայեցուցեալ աւետարանագործ վ՟րպութե՟ն՝ հպատակութ՟բ ցուցեալ , և ծառայեալ ք՟ի աւետարանին փայլելութ՟բ . և այսպէս խրատեալ և զգաստացեալ կրօնաւոր վարուք յառաջադէմ լինել ա՟մ ուղղութ՟բ յա՟մ գործս բարութե՟նց , առաւել ևս պայծառացուցանէր զվ՟րպութե՟ սատարութ՟ի ‖ . իմա՛ աջակից և գործակից լինելով յա՟մի՝ ո՟ղ ս՟բ լուսաւորչին , նոյնպէս և յետ ն՟ր ս՟բ՟յն արիստակիսի , և զկնի՝ ս՟բ՟յն վրթանիսի , որ յաջորդեաց յաթոռ եղբօր իւրոյ .

Բայց յորմէ հետէ զատաւ երանելի թագաւորն 'ի տեսութ՟է ս՟բ լուսաւորչին հոգւոց , համապազ յիշէր զնա , և փղձկէր յոյժ կարօտանօք ն՟ր . և անձկանայր ընթանալ զհետ կոչման ն՟ր ճգնաւորական վարուք . Թո՛ղ զի ձանձրացեալ էր 'ի հոգոց աշխ՟ի , և տաղտկացեալ յոմանց ըմբոստ իշխանաց և յանլսող նախարարաց . զի ո՛րչափ և խրատէր զն՟ս արժանի գնալ կոչման ս՟բ հաւատոց քրիստոնէութե̃, գտանէր զնոսա թարթափեալս 'ի խառնակեցիկ վարս ը̃ն առաջին հեթանոսական սովորութե̃ ։ Մինչև ոչ կարացեալ այլ ևս հանդուրժել ա̃ծասէր թագաւորին, այլ ընկեցեալ զթագն արքունի՝ գնաց 'ի լեառն սեպուհոյ 'ի միայնարան սր̃յն գրիգորի. և տուե̃լ զանձն 'ի խիստ ճգունս և 'ի խոկումն ա̃ծայնոց՝ նոյն ժուժկալութե̃ անցուցանէր զբազում աւուրս ։

Այլ թէ զիարդ եղև վախճան սր̃ թագաւորին, արժան է լսել զգրեալսն 'ի խորենացւոյն՝ օրինակ զայս. * Օ սր̃յ և զմեծէ և զերկրորդ նահատակէ, և զմերոյ լուսաւորութե̃ց հոգևոր վերակացուէ ճառելով, զ'ի քն̃է հանուր եղելոցս ճշմարիտ թագաւորէ, հրաշափառագունից պարտ էր անցանել բանից, ոչ զգործակցէ և զհաւատար ճգնողէ մերոյ նախաշաւղի և լուսաւորութե̃ց նահապետի. որպ̃ թուեցաւ հաճոյ հոգւոյն սր̃յ՝ երիցացուցանել զիմ լուսաւորիչն՝ վկայութե̃ն միայն վիճակաւ, 'ի վ̃ր բերեմ՝ թէ և առաքելութե̃ն. իսկ որ ինչ զկնի այսորիկ, զուգաքսն և հաւատարագործ ։ Այլ զառաւելուի̃ ասեմ զթագաւորին. քանզի խորհելն յաղագս ա̃յ, և ճգնազգեցիկ լինել՝ զոյգ երկոցունց. իսկ նուաճել հաւանողական կմ̃ բռնաւորական բանիւք՝ առաւել թագաւորին շնորհ. քանզի ը̃ն հաւատոցն ոչինչ կասեցուցանէր զգործսն. այսորիկ աղագաւ կոչեմ զնա նախաշաւիղ ճանապարհ (յետ լուսաւորչին), և լուսաւորութե̃ մեր հայր երկրորդ . . .

Սա յետ հաւատոցն որ 'ի ք՟ս՝ ա՟մ առաքինութ՟բ բացափայլեալ, եւս քան զեւս յաճախէր՝ որ ինչ յաղագս ք՟սի գործ եւ բան, սաստելով եւ հաւանեցուցանելով զմեծ նախարարսն, միանգամայն եւ զա՟մ բազմութիւնս ռամկին, լինել արդարեւ ք՟սի. որ՟պ զի վկայեսցեն ը՟ն հաւատոցն ամենեցուն եւ գործքն ։ Այլ զխստասրտութի՟ն կամիմ ասել, թէ՝ եւ զամբարհաւաճութի՟ն մերոյ ազգիս յիսկզբանն եւ այսր, որ՟պս անհամբոյր բարւոյ, եւ ճշմարտութե՟ անհարազատ, կ՟մ թէ բնութե՟ ունելով զբարձրայօնութի՟ն եւ կամակորութե՟, ընդդիմանան կամաց թագաւորին յաղագս կրօնից ք՟սականաց, զհետ երթալով կամաց կանանց եւ հարճից ։ Որում ոչ կամեցել ներել թագաւորին, ընկեցեալ զերկրաւոր պսակն՝ զհետ ընթանայր երկնաւորին, արագ հասանելով 'ի տեղին՝ ուր ճգնաւոր զինուորն ք՟սի ծակամուտ լեռնակեցիկ եղեալ ։ Աստանօր ամաչեմ ասել զճշմարտութի՟ն, մանաւանդ թէ զանօրէնութի՟ն եւ զամպարշտութե՟ ազգիս մերոյ, զմեծի ողբոց եւ արտասուաց արժանի զսոցա զգործս. քանզի զհետ առաքեալ՝ կոչեն զնա ռբ՟ լինել ը՟ն կամաց նր՟, եւ ունել զթագաւորութի՟ն ։ Իսկ 'ի չհաւանել սր՟յ՝ (կ՟մ ը՟ն այլ օրինակի, 'ի հաւանել սր՟յն՝) տան նմ՟ արբումն, որ՟պ անդ ուրեմն 'ի հնումն զսոկրատայ զմոլախինդսն. եւ կ՟մ թէ զմեր իսկ ասել՝ կատաղեալ եբրայեցիք ըմպելի լեղեաւ խառնեալ ա՟յ մերոյ. եւ զայս արա-

րեալ՝

բեալ՝ շիջուցին յինքեանց զբազմափայլ ճառագայթ ածպաշտութե՟ն նր՟ ‖ ։ Որոյ վ՟ն յողբս դարձուցանէ քերթողահայրն զձայնս բանից . և անդրէն հաստատէ զայսօրինակ կատարումն նր՟ . * Այլ (աւէ) պատմութի՟ս յաղագս սր՟յն տրդատայ ճշմարիտ է . քանզի արբուցեալ նմա դեղ մահու՝ զրկեցան 'ի լուսոյ շնորհաց ճառագայթից նր՟ . որ թագաւորեաց ամս յիսուն և վեց ‖ ։

Արդ զոր հարեւանցի նշանակէ խորենացին զմահ տրդատայ , և այլք 'ի պատմագրաց նոյնպէս՝ փոքր մի այլայլութբ՟ հանգամանաց , գտանեմք 'ի հին ճառընտրի մանրապատում աւանդեալ յումեմնէ 'ի նախնեաց օրինակ զայս . * Իսկ թագաւորն տրդատ յետ հաւատոցն 'ի քս՟ ամ՟ առաքինութբ՟ փայլեալ մինչև ցվախճան արի ծերութե՟ . այլ խստասրտութի՟ ազգիս մերոյ կ՟մ ամբարտաւանութի՟ն որ 'ի սկզբանէ՝ պատահեցին ամ՟ գլորմանց սոցա պատճառք ։ Քանզի չարք ոմանք հրամանաւ շապհոյ խորհեցան սպանանել զտրդատ , և միաբանգամ անդրէն զկռապաշտութի՟ն հաստատել յշխս՟ հայոց . յորում խորհրդի լեալ էր և սենեկապան տրդատայ՝ ը՟ օրինակի յուդայի մատնչի ։ Բայց ո՛չ գիտէր թագաւորն , թէ քանի՞ք կ՟մ ո՞յք իցեն . վ՟ն կոչէր զսենեկապանն զայն՝ հարցանէր , եթէ իցէ՞ ինչ 'ի դրանս արդարև այսպիսի խորհուրդ ։ Նա իբրև լուաւ , զահի հարե՟լ սրտաբեկ լինէր . և ուրացաւ՝ թէ ո՛չ երբէք լու՛եալ է իմ այսպիսի բանս . վ՟ն ելեալ առընկերսն երկիւղագին՝ 'ի բաց կորուսանելն զխորհուրդն անօրէնութե՟ , ո՟պ զարհուրեցք ։ Բայց ինքն Թագաւորն ոչ առնլով դուլ՝ հեռանայր յարեւմուտս կոյս՝ մինչեւ 'ի գաւառն եկեղեաց՝ տեղի տուեալ լրոյն այնորիկ ։

Եւ քանզի բազումք էին 'ի խորհրդին , ոմանք զկնի նր՟ գնացին . մանաւանդ ազատքն սիւնեաց կողմանցն , որք առաւել հրամանակատարք շապհոյ լինէին՝ վ՟ն ծին իւրեանց խաղաղական մնալոյ ։ Որք եւ 'ի յորս երէոց երբեմն ընդ Թագաւորին լինելով . յորոց եւ խոցեալ լինի Թագաւորն , ո՟պ Թէ յանդգէտս ուստեք դիպեալ պատահեաց նետն ։ Եւ եկեալ յարքունիսն դնի 'ի մահիճս սակաւ ինչ վիրաւորեալ . յորոց մտեալ սենեկապանն այն պատել զվէրս նորա , եւ տեսեալ՝ զի ոչ է մեռանել նմա 'ի վիրէն , արբուցանէ դեղ մահու եւ վախճանէ . որ յետոյ յայտնի իսկ եղեւ 'ի նորին խորհրդակցացն ։

Եւ բարձեալ տարան զնա 'ի Թորդան արծաԹապատ դիակիր դագաղօք , յորում լծեալ ջորիք ոսկէսանձք , եւ գունակ գունակ հանդերձիւք զդագաղսն զարդարելով . եւ վաշտք զօրացն աստի եւ անտի վառեալք զինուք եւ նշանակօք ։ Իսկ առաջի դագաղացն ձայնք ա՟ծօրհնութե՟ եւ բուրմունք խնկոց . իսկ աստի եւ անտի բարեկամք եւ սիրելիք , ընտանիք , եւ բազումք յորդւոցն նր՟ հետեւակ անկեալ ։ Եւ զկնի դագաղացն փողք եւ տաւիղք ողբոց , եւ կուսանք ողբասացք . Թող զայլ ա՟մ ռամիկսն՝ որ երԹային զհետ ան-

Թիւ

Թի՛ւ բազմութ՟ք ։ Եւ այսպէս հասեալք ՚ի տեղին , արարեալ տապան թագաւորական ՚ի քարանց կճեաց , և ՚ի վ՟ր ապակի արկեն , յորում եդեալ զգանձն պատուական , զանուշահոտ զպատարագն , զմեծ վաստակաւորն ․ և տարեալ թաղեցին զնա ՚ի տեղւոջ զբօսանաց մեծին գրիգորի ․ զոր պարսպեն անուանեաց իւր պարտէզ ․ և կանոնեցին զօր կատարման նր՟ տօնել ամ յամէ ․ զոր յանձն արարեալ եպ՟սին գեղջն՝ գնացին ‖ ։ Եւ այս եղև յերկրորդ ամի կթ՟ղկսուե սբ՟յն վրթանիսի , յամի տ՟ն ․ 341 ։ Բայց թէ ՚ի թորդան թաղեալ իցէ սբ՟ն տրդատ , և եթէ յամուրն անի՝ որ է կամախ (ոչ՟ երևի ցուցանել խորենացին ,) աւանդի ՚ի գիրս ինչ՝ թէ ոմանք գողացան մասն ինչ ՚ի պատուական նշխարաց նր՟ , և տարան ՚ի հոգւոց վանս ա՟ծածնի ։

Իսկ զի՞նչ պարտ է ասել զառաքինազարդ թագուհւոյն հայոց զաշխէն տիկնոջէն ․ որ ՚ի վաղուց հետէ հրաժարեալ էր ՚ի վայելչութենց կենցաղոյս , և առանձնացեալ բնակէր ՚ի գառնի քաղաք , զորոյ զամրոցն նորոգշինեաց տրդատ ընտիր կոփածոյ քարամբք ․ ուր և եկաց ա՟ծասէր թագուհին ճգնողական վարուք , մինչև փոխեցաւ յերկրէ յերկինս ։

Ըստ նմին օրինակի և սքանչելի քոյր թագաւորին մեծ օրիորդն և սբ՟ կուսանն խոսրովիդուխտ , որ ճանաչի մայր կուսաստանաց համօրէն հայաստանեայց , մաքրափայլ վարուք սրբութե՟ միայնացեալ անդէն ՚ի գառնի նի , 'ի տանն՝ զոր վ՟ն նորա ուրոյն շինեալ էր եղբայր նր՟ , ելից զաւուրս իւր բարեգործութբ՟ , և փոխեցաւ առ անձկալին իւր քս՟ ։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ ։

(1) Բանզի բովանդակ վարք տրդատայ և որոց ընդ նմա , բովանդակի 'ի բանից ագաթանգեղոսի ականատես վկայի՝ ձայնակցութբ՟ խորենացւոյն և որոց զկնի հաւատարիմ մատենագրաց , նմին իրի ոչինչ կարօտիմք բանս 'ի մէջ առնուլ քննութե՟ 'ի պէտս հետաքննին ծանօթութե՟ ։ Թո՛ղ զի որ ինչ կարևոր քննելիք կմ՟ ասելիք կայցեն վ՟ն սոցին իրաց , լիով գտանես 'ի կարգի պատմութե՟ հայոց և 'ի ծանօթութիս ն՟ր ։ Մեք յաւելցուք աստ ինչ մի գիտելի 'ի դատաստանական գրոց , կամ 'ի նոմոսական վճռոց մեծի կայսերն կոստանդիանոսի · զի ասի անդ 'ի բերանոյ ինքնակալին՝ 'ի տիտղոսն ռոմկաց և հարկաց կմ՟ ապահարկութե՟ , 'ի լատին բարբառ · (Գիր· ԺԱ· գլխ· 1·) * Ինքնակալ կոստանդիանոս օգոստոս առ
,, պրոկղիանոս (հազարապետ արքունի) ։ Բաց յառ-
,, անձին իրաց մերոց , և 'ի կաթուղիկէ եկեղեցեաց , և
,, 'ի տանէ պայծառայիշատակ եւսեբիոսի՝ որ երբեմն
,, հիւպատոսն էր և մագիստրոս այրուձիոյ , և արշա-
,, կայ (կմ՟ արշակունւոյ) հայոց արքայի , ո՛չ ոք այլ 'ի
,, մերմէ հրամանէ օժանդակեսցի գլխաւոր սատարու-
,, թե՟ք ընտանեկան ընչից ||:

Ուր քաջ գիտեմ , թէ յո՛րպիսի կարգի ընտանութե՟ յիշէ զանուն ազգիս՝ իբրև զիւրսն ընտանիս և մտերիմս , իմանալով՝ որպէս երևի՝ զիւրսն արշակունիս 'ի տանէ տրդատայ արքայի , զոր կոչէ պարզապէս արսակէս , որ է արշակ կմ՟ արշակունի ։ Պիտէին մեզ հին յիշատակագիրք առ իմանալ բազում ինչ վ՟ն սոցին իրաց · այլ ունիմք 'ի ձեռին և ոչինչ՝ բաց 'ի տպագրեալ թղթոյ դաշանց , յորում ընկղմի ճշմարտութին հարազատ՝ ը՟ աւելորդ պատուճառաս անստոյգ բանից ։

Իսկ թէ լատին քննիչք զի՞նչ իմանան յայսմ մթութէ բանից կոստանդիանոսի (առանց ունելոյ զտեղեկութի՟ պատմութե՟ց հայոց), շատ լիցի լսել ընթերցանելեաց զմէկ ·

զմեկնիչն դատաստանագրոցս զյակոբ գոթոփրեդոս, որ և գրէ աստանօր օրինակ զայս. * Այս ևս ազատու-
,, թիւն է անձնական տոհմն արշակայ հայոց արքայի :
,, Զի ըստ որում 'ի վաղուց հետէ հռովմայեցիք 'ի կարգի
,, սպասու ծառայութեն ունէին և զթագաւորս, ըստ
,, նմին թագաւորք հայոց անդստին 'ի վաղուց դաշնա-
,, ւորք և բարեկամք հռովմայեցւոց՝ գտան և 'ի սպասու
,, ինքնակալաց 'ի ժմկի առ մեծին կոստանդիանոսի և
,, կոստանդեայ, ևս և զկնի առ յուլիանոսիւ : Այսպա-
,, քէն զոսիմոս (որ մօտ մատչի յայս նոմոս,) 'ի Բ. գիրս.
,, գլ. 27. յետ լիկինեան մարտի՝ իբր ութ ամօք զկնի
,, ձեռնագրեալ գոլոյ այս օրինացս՝ յայտնի ցուցանէ,
,, թէ թագաւորն հայոց դաշնակից էր և բարեկամ կոս-
,, տանդիանոսի, ուր զզօրարձակն զայն պատմութիւն
,, պատմէ յաղագս որմզդայ պարսից արքունականի՝ 'ի
,, ձեռն հայոց արքայի անցանելոյ առ կոստանդիանոս:
,, Եւ ևս յուլիանոս 'ի բանն Ա. առ կոստանդ՝ կոչէ
,, զհայս հին նիզակակիցս հռովմայեցւոց ||: Բերէ և զբանս ամմիանոսի մարկեղինոսի, որ յիշէ զարշակ արքայ հայոց (իմա խոսրով արշակունի) յաւուրս կոստանդեայ կայսեր՝ իբրև խրատեալ յինքնակալէ կալ մնալ 'ի հաւատարիմ բարեկամութեան հռովմայեցւոց. Գիրք Ի. Գլ. 11. յամի իբր. 360: Ոչ և 'ի ԻԳ. Գիրս. Գլ. 2. և ԻԵ. 7. յիշէ նոյն ինքն ամմիանոս առ յուլիանոսիւ յամի. 363. զարշակ (ըստ զտիրան) արքայ հայոց: Զորս մեկնիչն խառնելով Բ. միմեանս՝ ոչինչ ստոյգ 'ի վր բերէ. բայց միայն զայս. * Առ այժմ 'ի նոմոսէ աստի երևի, թէ այս թա-
,, գաւոր հայոց ունէր կալուածս ինչ ստացեալ 'ի հռով-
,, մէաստան, ըստ 'ի տրուե հռովմայեցւոց, որում այսու
,, նոմոսաւ շնորհի ազատութին ռոճկաց և հարկաց ||:

ՎԵՐՋ

ՎԱՐՔ ԵՒ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆ

Սրբ̄ց Հայրապետաց մերոց, Որդւոց և Թոռանց Լուսաւորչին.

Եւ սբ̄յն Արիստակիսի, Վրթանիսի, Յուսկանն, Գրիգորիսի, և Դանիէլի.

Հ. դեկտ. 1. (Եւս և մարտ. 6. և սեպտ. 30.)
Ագաթանգեղոս. Բուզանդ. Խորեն. Ճառընտիր. և այլն.(1)

ՀԻՆԳԵՔԵԱՆ ՍՈՒՐԲՔ ՊԱՆծալի զաւակք և ժառանգակալք առաքելական հօգւոյ և սրբութե̄ և իշխանութեան սբ̄ լուսաւորչին, 'ի բարի արմատոյ եղեն շառաւիղք բարիք, 'ի լուսաբուղխ աղբերէ վտակք շնորհասփիւռք. արիստակէս և վրթանէս հարազատք՝ ծնունդք սբ̄յն գրիգորի, և յուսիկ և գրիգորիս՝ որդիք վրթանայ՝ թոռունք գրիգորի. ե̄ որս և դանիէլ աշակերտ սբ̄յն գրիգորի՝ 'ի հոգեւոր որդւոց նորա համարի, առ հասարակ հոգելից հարք և վ̄դք, ճգնեալք նահատակութ̄բ 'ի վկայութի̄ ճշմարտութե̄. զորոց մի առ մի մնայ մեզ ճառել.

Այն ինչ երիցս երանելի հայրն մեր սբ̄ն գրիգոր լուսաւորիչ մնէր 'ի կեսարիա 'ի տան բարեպաշտ դայեկին իւրոյ սոփիայ՝ յարբունս եհաս հասակի, սոփիա մայրագիր նորին էած նմա 'ի հարսնութիւն զպարկեշտ օրիորդ զոմն դուստր դաւթի իշխանի հաւատացելոյ՝ մարիամ անուն. և ծնան 'ի նմանէ գրիգորի պարթևի որդիք երկու. յորոց զանդրանիկն կոչեաց վրթանէս, և զկրտսերն ռստակէս կամ արիստակէս: Յետ այսորիկ իբր յերրորդ ամի անդ ամուսնութե՟ն՝ 'ի մի խորհուրդ միաբանել երկոքին մաքուր լծակիցքն, ս՟բն գրիգոր և սրբասէր ամուսին ն՟ր մարիամ, հաստատեցին միակամ հաւանութ՟բ, զի յայնմ հետէ հրաժարել 'ի միմեանց՝ երկոքին ևս պարապեսցին հոգալ զտ՟ն, և մի՛ զաշխ՟ս:

Ս՟բն գրիգոր՝ որ կարգեալ էր յա՟յ լուսաւորիչ մեզ լինել, ազդմամբ ա՟ծ գնաց եմուտ 'ի ծառայութ՟ի տրդատայ որդւոյ խոսրովու հայոց արքայի՝ սպանելոյ 'ի հօրէն իւրմէ անակայ, փոխարէնս հատուցանել ը՟ իւրում կարի. ո՟պ և եղև իսկ առաւել քան զոր խորհէրն և իմանայր: Իսկ մարիամ զերեց որդին զվրթանէս յանձնեալ 'ի ձեռս դայեկի երկիւղածի յա՟յ 'ի տան հօր իւրոյ, էառ ը՟ իւր զկրտսերն զարիստակէս երեխայն, և եմուտ 'ի վանս կանանց. ուր եկաց մարիամ ա՟մ սրբութ՟բ մինչև 'ի փոխումն իւր առ ք՟ս: Բայց արիստակէս տղայն ը՟ զարգանալ փոքր մի՝ եթող զմայրն, և եմուտ 'ի վանս աբանց. և աշակերտեալ ս՟բյ միայնակեցի ումեմն նիկոմաքոս կոչեցելոյ՝ յառաջադէմ եղև

շնոր.

շնորհօքն այ՟ յամ՟ կարգս կրօնաւորական վարուց . մինչև 'ի չափ հասակի կատարելութե՟ հրաման առեալ 'ի ծերոյն իւրմէ՝ առանձնացաւ յանապատ . և փակեալ զանձն յարգելական խցի՝ ետ զանձն 'ի մեծ ճգնութիս պահոց և աղօթից , և եղև միայնակեաց սքանչելի՝ զարդարեալ ամ՟ առաքինուք՟ և իմաստութք՟ . և ստացեալ աշակերտս ը՟ այ՟՝ փայլէր իբրև զլուսաւորս երկնից 'ի վ՟ր երկրի , պայծառացեալ 'ի ժամուն ոչ միայն քան զերեց եղբայր իւր զվրթանէս , այլ և քան ըզհայր իւր զմեծն գրիգորիոս :

Քանզի այսմ՟ս վկայէ զնմանէ ականատեսն ագաթանգեղոս . * Արիստակէս (ասէ) , որ
,, 'ի մանկութէ՟ ը՟ ա՟ծապաշտ ծառայութե՟
,, սնեալ էր , որ 'ի միայնակեաց լեռնակեաց
,, կրօնս էր մտեալ , և բազում ազգի ազգի
,, վշտակեցուի՟ ը՟ աւետարանին կրեալ ամ՟
,, կրթութ՟ք . և ամ՟ իրաց հոգևորաց զանձն
,, տուեալ՝ միայնաւորութ՟ք , լեռնակեցութե՟ ,
,, քաղցի և ծարաւոյ , և բանջարաճաշակ
,, կենաց , և արգելանաց անլուսից , խարազնազգեստ՝
,, և գետնատարած անկողնոց .
,, և բազում անգամ զհանգիստ գիշերաց
,, և զհարկ քնոյ յոտնաւոր տքնութե՟ 'ի
,, թարթափ ական վճարելով . և զայս արարեալ
,, ոչ սակաւ ժամանակս : Գտեալ ևս
,, զոմանս , և յինքն յարեցուցեալ , և աշակերտեալ
,, սմին աւետարանական սպասաւորութե՟ն .
,, և այսպէս ամ՟ փորձութե՟ց 'ի վ՟ր
,, հասելոց կամայական քաջութ՟ք տարեալ .

,, և նովիմբ լուսաւորեալ և պայծառացեալ.
,, և ծանօթական և հաճոյ եղեալ առաջի ա՟յ
,, և մ՟դկան ||:

Իսկ վրթանէս աւագ եղբայր նորա յաշխարհի կալով՝ գեր 'ի վերոյ լինէր քան զաշխարհական կարգ. քանզի իբրև աճեաց բարեպաշտութ՟բ ընդ ձեռամբ դայեկաց իւրոց 'ի կեսարիա, և վարժեցաւ յարտաքին և 'ի հոգևոր հրահանգս ուսման, մուծին զնա 'ի կարգ ք՟հի. և ծնաւ երկուս որդիս՝ ո՟չ աւելի՝ երկուորեակս. որոց անուանք կոչեցան գրիգորիս և յուսիկ: Եւ ապա վ՟ն իւրոյ անարատ քաղաքավարութ՟ե և իմաստութ՟ե հրաւիրեցաւ յա՟ծային կոչմանէ 'ի կարգ երիցութ՟ե եկեղեցւոյ. և պաշտէր զքահանայութ՟ի ա՟մ սրբութ՟բ և առաքինութ՟բ, դաստիարակեալ և զմանկունսն նովին գովելի վարուք. մինչև օրինակ բարի լինել ա՟մ տեսողաց:

Արդ մինչդեռ այսպիսի ա՟ծահաճոյ քաղաքավարու՟բ փայլէին երկոքին որդիք ս՟բ լուսաւորչին 'ի կողմանս կեսարիոյ, սքանչելի հայր ն՟ց ս՟բն գրիգոր՝ յետ բազմամեայ հանդիսի նահատակութ՟ե, և լուսաւորիչ լինելոյ հայաստան աշ՟խին հայրապետական փառօք, կամաւոր մոռացութ՟բ լռէր զորդւոցն. և որդիքն գիտելով զհօրն փառաւորութիւն՝ նոյնպ՟ս լռիկ մ՟նջիկ կային անփառասէր մտօք: Եւ այս է ասելն խորենացւոյն. * Արդարև
,, հօր սքանչելւոյ որդիք զարմանալիք՝ առա-
,, ւել քան զառաւել. զի ոչ նա խնդրեաց
,, զորդիսն, յորժամ դարձաւ ի՟ տրդատայ
,, ('ի

,, ('ի Թագաւորելն նր՟), և ոչ նք՟ չոգան առ
,, նա ։ Այլ այն՝ գրեմ թէ յաղագս երկիւղի
,, հալածանացն (յերեսաց տրդատայ , կամ
,, դիոկղետիանոսի) . բայց և ոչ 'ի քահանա-
,, յանալն (գրիգորի 'ի կեսարիա՝) եր-
,, եւալ , փառօք հօրն պերճացան ։ Վ՟ն որոյ
,, և ոչ նա յամեաց 'ի կեսարիա , (զի մի՛ յայտ-
,, նեսցի որդւոցն ,) այլ՝ փութապէս դար-
,, ձեալ՝ 'ի սեբաստացւոց քաղաքին ան-
,, սայր հաւաքել զնիւթ մ՟կեցութե՟ ։ Բայց
,, թէև բազում աւուրս արարեալ (էր նր՟)
,, 'ի կեսարիա , ոչինչ յորոց զմտաւ ածէր առ-
,, նելոց էին , անսպառին և մնացականին
,, միայն սպասելով . որք ոչ զպատիւն յին-
,, քեանս ձգէին , այլ՝ պատիւն զհետ նոցա
,, ընթացաւ . ո՟պ ուսուցանէ քեզ ագաթան-
,, գեղոս ‖ ։

Քանզի յետ անցանելոյ ամաց բազմաց՝ յորժամ սբ՟ն գրիգոր զկնի լուսաւորելոյ զբովանդակ հայս , և պայծառացուցանելոյ զեկեղեցիս , յաւուրս ծերութեան ցանկացաւ առանձնութե՟ և միայնացաւ 'ի լերինս , երանելին տրդատ արքայ կարի կարօտեալ աշխարհաւն հանդերձ զնմանէ , լուաւ ասել յումանց՝ թէ կան երկու որդիք գրիգորի 'ի կողմանս կեսարիոյ , երէցն քահանայ , և կրտսերն աբեղայ . քանզի տաճատ աշոցայ տ՟ր՝ փեսայ արտաւազդայ մանդակունւոյ , տեղեկացեալ զնոցանէ 'ի կեսարիա՝ պատմեաց աներոյ իւրում . և նա հասոյց յունկն թագաւորին ։

Արդ իբրև զայս ամ՟ լուաւ թագաւորն տրդատ, լի եղև ուրախութ՟բ․ և վաղվաղակի փութով արձակէր արս երիս աւագս փառաւորս պատուականս՝ հրովարտակօք հանդերձ, զի զերկու որդիքն գրիգորի վաղ առ նա հասուսցեն։ Եւ որք առաքեցանն յարքայէ՝ զի ածցեն զն՟ա, այսոքիկ են․ առաջնոյն անուն արտաւազդ, որ սպարապետ էր ամ՟ զօրացն հայոց մեծաց․ և երկրորդին տաճատ անուն՝ իշխան աշոցացւոց գաւառին․ և երրորդն դատ անուն՝ կարապետ արքայի։ Հասեալ ս՟ց յ՟ն կապադովկացւոց, և հարցփորձ արարեալ գտին զս՟բ երէցն մրթանէս ՚ի քաղաքի անդ կեսարացւոց․ և առին զնա յոչ կամաց նորա առ խուրեանս՝ հանդերձ երկու մատաղ մանկամբք նորին, ո՟ր էին գրիգորիս և յուսիկ։ Ապա երթեալ գտանէին և զս՟բ միայնակեացն ռստակէս բնակեալ յանապատի ՚ի միայնաստանս իւր․ և իբրև ծանուցին նմա զկոչն արքայի, նա ոչ հաւանէր իջանել յանապատէ անտի․ մինչև եղև ժողով բազմութ՟ե քրիստոնէից, որք հաւանեցուցին զնա գնալ անտի․ զի լաւ է ասեն քեզ գործ մշակութ՟ե ա՟յ՝ քան զայդ միայնաւորութ՟ի բնակութեան յանապատի այդր․ և այնպէս յուղարկեցին զն՟ա անտի ընդ նախարարսն։

Իբրև եկին հասին յ՟ն հայոց, յանդիման ունէին նախարարքն զածեալսն զերկու որդիսն գրիգորի առաջի թագաւորին․ և ա՟ծասէր թագաւորն յետ ցուցանելոյ ն՟ց զա՟մ մեծառանս պատուոյ իշխանութ՟բ՝ առեալ զերկուսին զնո՟ ը՟ իւր՝ եւ ինքնին նոքօք հանդերձ 'ի խնդիր սբ՟յն գրիգորի , ո՛ւր և գտցէ . և եկե՟լ գտանէին զնա 'ի դարանաղեաց գաւառին , 'ի լերինն՝ որ կոչի մանեայ այրք՝ յանապատին ։ Ապա աղաչեաց երանելի թագաւորն տրդատ զսբ՟ն գրիգորիոս , զի փոխանակ այնր՝ զի ոչ հաւանեցաւ նա կալ և շրջել ը՟ նմա , և սիրեաց զմիայնաւորութ՟ե կեանս , ձեռնադրեսցէ և տացէ նմա եպս՟ 'ի հայրապետութի՟ ա՟մ հայոց զսբ՟ն ռըստակէս զորդի իւր . ը՟ գրեցելոյն՝ թէ փոխանակ հարց եղիցին որդիք ։

Օ իջեալ սբ՟յն գրիգորի յաղաչանս թագաւորին՝ էջ 'ի լեռնէ . և արարեալ ժողով եպսաց՝ ձեռնադրեաց իւր փոխանակ զերանելին արիստակէս . որ առաւել ևս քան զհայրն (ասէ ագաթանգեղոս) լաւագոյն ևս երևեցուցանէր սա զիւր վդ՟պութի՟ն՝ առ հարբն . և յետ նորա կալաւ զտեղի հայրենեացն անգէն նստեալ յաթոռ կթղկուե՟ հայոց մեծաց ։ Այլ ցորչափ կենդանի էր սբ՟ն գրիգոր՝ գայր ը՟ ժամանակս ժամանակս , և ը՟ որդւոյն իւրով ռըստակիաւ և ա՟մ երևելի օգնականօքն զա՟մ աշակերտելովքն շրջէր , և հաստատէր զնոսա կալ 'ի պատուիրանին ճշմարտութե՟ ։

Լու ո՟մ տարաւ սբ՟ լուսաւորիչն զարիստակէս ը՟ իւր 'ի հռոմ , 'ի գնալն հանդերձ տրդատաւ յողջոյն սբ՟յն սեղբեստրոսի և կոստանդիանոսի , նոյնպէս և զկնի ամաց ինչ 'ի

Հրաւիրել իւրում՝ 'ի կոստանդիանոսէ գալ 'ի ժողովն Նիկիոյ Տրդատաւ հանդերձ, առաքեաց փոխանակ իւր զս՟բն Արիստակէս եպ՟ս․ որում ուղեկից գտան և ս՟բն Յակովբ մծ՟բնայ հայրապետ, և Եւթաղ եպ՟ս Եդեսիոյ, և Յովհան եպ՟ս Պարսից ։ Իսկ յորժամ անցանէին չորեքին սոքա ը՟ Կեսարիա, հանդիպեցան ս՟բյն Ղեւոնդի․ և առաջիկայ գտան հանդիսին՝ յորում մկրտէին մեծն Ղեւոնդ և եպ՟սն Նազիանզու զԳրիգորիոս զհայրն Գրիգորի ա՟ծաբանի․ և տեսին լոյս շուրջ փայլատակէ՟ զնովաւ յելանելն 'ի ս՟բ աւազանէ ։ Ապա առեալ սոցա ը՟ իւրեանս և զս՟բն Ղեւոնդիոս՝ գնացին 'ի միասին 'ի ս՟բ ժողովն, և մեծապէս պատուեցան և փառաւորեցան յինքնակալէն և 'ի հարց ժողովոյն ։

Գրի աստանօր 'ի յայսմաւուրս ը՟ հին աւանդութեց, թէ 'ի գնալ ս՟բյն Արիստակիսի 'ի ժողովանդր՝ ունէր ը՟ իւր զս՟բ նշանն 'ի կենաց փայտէն, զոր տուեալ էր ս՟բյն Գրիգորի ս՟բ հայրապետն Սեղբեստրոս պապն Հռովմայ․ և թէ՝ այնու արար ս՟բն Արիստակէս բազում սքանչելիս յա՟մ ճանապարհս իւր՝ ը՟ որ էանց․ և մանաւանդ 'ի ծովն Բիւթանիոյ՝ ուր ձգեաց զակոս անհետ ընթացիւք․ քանզի իբրև տեսին ասէ զս՟բն գծուած կերպարանաւ, և անձամբն նիհար և ներդևէն 'ի բազում ճգանց, ոմանք 'ի ռամկաց չարափառ արիանոսաց այպն առնելով անարգեցին զնա, և ասէին ցմիմեանս․ տեսէ՛ք տեսէ՛ք զառաջնորդդ արևելից, որում արժան

է

է լինել մշակ մաճակալ։ Նա զի էր անդ ամոլ մի եզանց՝ որ վարէր մերձ 'ի ծովափին, եկեալ ոմանք 'ի նոցանէ կեղծաւորութ՟բ ասէին ցս՟ն. ո՜վ այրդ ա՟յ և որդի նահատակի՝ լծեա՛ զլուծս եզանց, և ե՛լ 'ի յուս դոցա, և գնա՛ 'ի վ՟ր ծովուդ։

Պ՟նի ետ ս՟բ հայրապետն արիստակէս, և ասէ ցն՟ս. իրաւացի՛ են բանքդ՝ զի մշակ զիս անուանեցիք. բայց մշակ եմ տ՟ն ա՟յ ամենակալի՝ որ առնէ սքանչելիս միայն։ Զայս ասացեալ՝ կորզեաց զմաճն 'ի ձեռաց մաճակալին, և վարեաց զեզինսն 'ի վ՟ր ծովու արտաչափ մի. և այնպէս պատառեալ զակօս յերեսս ջրոյ երթեւեկ մի՝ դարձաւ 'ի ցամաք. և ասէ ցայպանիչս իւր. ո՜վ արիանոսք՝ եթէ ունիք հաւատս, բերէ՛ք զհետ իմ զսերմն ցորենոյն, ցանեցէ՛ք և տափեցէ՛ք. ապա թէ ոչ՝ զի՞ աշխատ առնէք զս՟բ հարսդ, որ աստ ժողովեալ են. և որք տեսինն և լուա՛ն, զահի հարան, և պատկառէին 'ի նմանէ իբրև 'ի հրեշտակէ ա՟յ։

Արդ՝ իբրև արձակեցաւ ս՟բ ժողովն Նիկիոյ բիւթանացւոց, առեալ ս՟բն արիստակեայ զսինհոդոսական սահմանն հաւատոյն և ըզկանոնական օրինադրութ՟իս՝ դարձ արար 'ի հայս, և մատոյց առաջի հօր իւրոյ և թագաւորին. և ն՟ք ընկալան սիրով. և յաւել և ս ս՟բն գրիգոր ինչ ինչ 'ի զգուշուն՟ վիճակին իւրոյ. և յայնմհետէ յանձնեալ բոլորովին զհօտ իւր 'ի ձեռս որդւոյն՝ իսպառ առանձնացաւ յանապատ անտես 'ի մարդկանէ.

Իսկ սբ՟ն արիստակէս այնուհետև առանձինն կալեալ զաթոռ կթղկութե՟ յէջմիածին վաղարշապատու, եւս քան զեւս պայծառացուցանէր զեկեղեցիս հայաստանեայց․ զարդարէր զվանորայս, և կարգաւորէր զկրօնաստանս․ և զամ՟ ուխտ եկեղեցւոյ վայելուչ կարգօք փայլեցուցանէր։ Եւ բազում այն էր՝ զի անձամբ շրջագայեալ այցելութբ՟ ՚ի տեղիս տեղիս՝ հաստատէր և զօրացուցանէր զհօտ հաւատացելոց․ խրատէր և ուղղէր զյանցաւորս, և անաչառ յանդիմանէր զխոտորեալսն՝ զփոքունս և զմեծամեծս։

Իսկ արքեղայոս ոմն վերակացու չո՟րդ հայոց յանդիմանեալ ՚ի սբյ՟ն վ՟ն անուղղայ գործոց իւրոց՝ սպանէր նմա նենգութբ՟ դաւել զնա․ և եղև անցանել սբյ՟ն արիստակեայ ը՟ գաւառն ծոփաց, ուր շինեալ էր նր՟ եկեղեցի մեծ ՚ի գիւղաքաղաքն խողան․ և անդ ՚ի ճանապարհի եհաս ՚ի վ՟ր նր՟ արքեղայոսն այն, և սուսերաւ հարեալ սպան զսբ՟ հայրապետն․ և մինչդեռ աշակերտքն փութային այսր անդր աղդ առնել, զերծաւ անօրէնն փախըստեամբ ՚ի տարսոն կիլիկեցւոց։ Այսու օրինակաւ կատարեցաւ երանելին արիստակէս վկայական խոստովանութբ՟՝ ՚ի ծդ՟ ամի թագաւորութե՟ն տրդատայ, կացեալ յաթոռ հայրապետութե՟ առանձինն ամս եօթն կմ՟ ութ։ Եւ բարձեալ աշակերտացն զմարմին սբյ՟ն՝ տարան յեկեղեաց գաւառ, և հանգուցին ՚ի թիլն աւանի, որ էր կալուած հայրապետանոցին՝ տուեալ սբյ՟ն գրիգորի ՚ի տըրդատայ • ուր և ինքն իսկ արիստակէս շինեալ էր իւր առանձին վանս բնակութեան ։

Յետ կատարման սբ՟յն արիստակեայ՝ միաբանութբ՟ եպսաց Ցին և ըստ փափաքանաց տրդատայ արքայի , կոչեցաւ յաթոռ կաթողիկոսութեան աւագ եղբայրն սր՟ն վրթանէս • որ նորին մաքուր վարուք և պայծառ վդպուբ՟ փայլէր 'ի պաշտօն հովուապետութեան իւրոյ՝ ամենեցուն խրատիչ գոլով և յանդիմանիչ • և հանապազորդ տքնէր հսկողութբ՟ 'ի վր՟ հօտին՝ օր քան զօր յառաջել 'ի կարգս ա՟ծպաշտութեան ։ Եւ առ առաւել յարդարելոյ զբարեզարդութի՟ եկեղեցւոյ իւրոյ՝ գրեաց առ երանելին Մակար եպ՟ս հայրապետ , և խնդրեաց 'ի նմանէ զկարգաւորութիւս եկեղեցւոյն եմացւոց 'ի պաշտամունս սբ՟ խորհրդոց և այլ եկեղեցական արարողութիւս , ը՟ որում հաստատուն աւանդութբ՟ իջեալ 'ի սբ՟յն յակոբայ առաքելոյ՝ ա՟ծեղբայր կոչեցելոյ , և հանդիսացեալ առ բազումս ։ Եւ առեալ 'ի նմանէ զխնդրելին՝ յարմարեաց ինչ ինչ իւրումն վիճակի , լրացուցանելով զաւանդս հօր իւրոյ սբ՟ լուսաւորչին , և առաւել ևս պայծառացուցանելով ։ Ունէր երանելին վրթանէս ընտանի թղթակցութի և ը՟ սբ՟յն յակոբայ զգօն կոչեցելոյ՝ հայրապետին մծբնայ • յորմէ ընկալաւ և զօրինակ հոգելից ճառից նր՟ , զոր՝ ոպ՟ ցուցանէ ճառընտիրն՝ խոստացեալ էր եղբօր նր՟ արիստակեայ ։

Եւ յառաջին ամս անդ կթղկութեան սբ՟յն

վրթանիսի՝ եկին գործակալք յաղուանից , որ 'ի կողմանս փայտակարան Տի , և խնդրեին 'ի մեծէն տրդատայ արքայէ՝ տալ ինքեանց հովիւ զոք 'ի զարմէ զաւակաց սբ̃յն գրիգորի . զի թերևս պատկառեն̃ յանուանէ լուսաւորչին՝ յորմէ լուսաւորեալ էին և ինքեանք , զգուշասցին 'ի պահել զօ̃ր հաւատս և զկարգս ուղղութե̃ . քանզի էին բնակիչք կողմանցն հեթանոսամիտք և բարբարոսք՝ անհաւանք առաջնորդաց և քահանայից ։ Յայնժամ ետ թագաւորն ձեռնադրել վ̃ն ն̃ց ուրոյն քահանայապետ իբրև կաթողիկոս ա̃մ աղուանից զերէց որդին սբ̃յն վրթանիսի զերանելին գրիգորիս . որ էր պատանի տիօք իբր ին̃ , կմ̃ ը̃ այլոց ժ̃ն՝ ամաց , այլ հասակաւն բարձր , անձնեայ և ուռոյգ՝ նման հսկայազօրն տրդատայ , և գեղեցիկ տեսլեամբ . Նա առաւել հոգւով և մտօք կատարեալ . ը̃ գրեցելումն՝ ալիք մարդոյ իմաստութի̃ իւր ։

Արդ՝ զսա յղեաց տրդատ արքայ ը̃ սանատրկոյ ումե̃մն իշխանի երևելւոյ յազգէ արշակունեաց 'ի քաղաքն փայտակարան 'ի կողմանս աղուանից . ուր սքանչելի երևեցաւ ս̃բն գրիգորիս առաքինի գնացիւք և յորդառատ վ̃րդպութբ̃՝ համանման հաւուն իւրոյ մեծին գրիգորի ։ Բայց վայրենամիտ բնակիչք Տին իբրև տեսին՝ թէ քաջ հովիւն յորդորէ զն̃ս յերկիւղածութի̃ և 'ի պատուիրանապահութի̃ ը̃ օրինի քրիստոնէական անուան , և աներկիւղ կշտամբէ զանմարդի բարս և զանարժան վարս նց՟, ոխային ընդդէմ Երանելւոյն • այլ երկնչէին յահէ տրդատայ ։

Եւ եղև իբրև լուան յետ ամաց ինչ զվախճան արքային տրդատայ, յարեան անօրէնքն ՚ի վր՟ սր՟յ կթղ՟կսին իւրեանց գրիգորիսի՝ համախոհ ունելով զնա ինքն զսանատրուկ արշակունի, որ խորհէր թագաւորել ՚ի վր՟ սահմանացն աղուանից • և կալեալ զերանելին՝ կապեցին յագի ձիոյ, և վարեցին արշաւակի ը՟ դաշտս և ը՟ բլուրս • և այնպէս հարեալ ՚ի քարս և ՚ի թուփս՝ չարաչար խորտակմամբք ամ՟ անդամոց կատարեցաւ մեծ նահատակն և սքանչելի այրն այ՟ ՚ի վատնեան կամ ՚ի վատնիանեան դաշտի մերձ ՚ի ծովն կասպից ։ Զորոյ զպատուական մարմինն բարձեալ պաշտօնէիցն՝ բերեալ եդին ՚ի փոքր սիւնիս յամարեանն աւանի • ուր և յետ ժամանակաց սքանչելեօք յայտնեցաւ • ոչ՟ ունիմք ճոխագոյն պատմել յաւուր գիւտի սր՟ նշխարաց նորա ։ Իսկ որք յաջորդեցինն յաթոռ սր՟յն գրիգորիսի ՚ի փայտակարան և ՚ի գանձասար, կոչեցան կթղ՟կսք աղուանից կամ գանձասարայ ։

Լուեալ մեծին վրթանիսի զայսպիսի կատարումն զուգահրեշտակ զաւակին իւրոյ, ոչ՟ և զկանխաւ սպանումն սր՟յն տրդատայ դեղով մահու յիւրոցն, ՚ի սուգ ներքին համակէր անփարատելի • քանզի որչափ և գուն գործէր յա՟ծպաշտութ՟ին անդր կրթել զմերձաւորս և զհեռաւորս, տեսանէր զբազումս ՚

՚ի վատթար անդր հակամիտեալ ։ Մինչ զի և ոմանք յանխրատից խորհէին դաւել և զնա ինքն զսբ̃ հայրապետն ․ այլ Տ̃ր պահեաց զնա սքանչելեօք ։ Քանզի յաւուրս կատարման մեծին տրդատայ սբ̃ն վրթանէս գտաւ ՚ի վկայարան սբ̃ կարապետին ՚ի մատրավանս տարօնոյ ․ յայնժամ դաւաճանօղքն տրդատայ առաքեցին պատուէր առ բնակիչս տարօնոյ , զի սպանցեն և զհայրապետն վրթանէս ․ և եղև ՚ի յարձակիլ ոմանց յանօրինաց անտի ՚ի վերայ սբ̃յն՝ կապեցան ձեռքն ն̃ց աներևոյթ զօրու̃թ ․ և երանելին էանց գնաց ը̃ մէջ ն̃ց անվնաս ․ և եկեալ ՚ի թիլն աւան՝ որ յեկեղեաց գաւառի , դադարեաց առ ժամանակ մի առ տապանի եղբօր իւրոյ սբ̃յն արիստակիսի , խնդրելով ՚ի Տ̃նէ այցելութ̃ի ՚ի վերայ հօտին իւրոյ ․ զի մի կորիցէ ազգն նորահաւատ ։

Իսկ քանզի անտ̃րունչ և անթագաւոր մնաց հայաստան աշխարհ զամս երկուս , և բազմացան չարիք ՚ի վ̃ր երկրին յանմիաբանութ̃է նախարարաց և յարշաւանաց պարսից , տեսեալ աւագ իշխանաց և ազատաց բարեպաշտից՝ եթէ աշխարհն աւերի , և քրիստոնէութ̃ին լռեալ դադարէ , ժողովեցան առ սբ̃ն վրթանէս՝ խորհուրդ ՚ի մէջ առնուլ վ̃ս հնարից խաղաղութե̃ աշխարհին ։ Ապա հաւանութ̃բ ամենեցուն գրեաց մեծն վրթանէս գիր աղաչանաց առ կոստանդ կայսր որդի մեծին կոստանդիանոսի ՚ի թագաւորեալ քաղաքն ՚ի կոստանդինուպօլիս՝ ձեռն տալ ինքեանց ը̃ հայրենի նի բարեկամութե՟ , և թագաւորեցուցանել 'ի վր՟ Հայոց զխոսրով զորդի մեծին տրդատայ ։ Եւ կոստանդ առաքեաց 'ի Հայս զանտիոքոս զօրավար զօրօք բազմօք ․ և նր՟ միաբանեալ զերևելի նախարարս՝ թագաւորեցոյց զխոսրով, և կարգեալ զզօրս Հայոց և զյունաց յայլևայլ գունդս՝ առաքեաց ընդդէմ ապստամբաց , և խաղաղացոյց զա՟ն ։ Եւ եղև յետ անցանելոյ ինն ամաց՝ յորժամ մեռաւ խոսրով, եկին անդրէն նախարարք առ սբ՟ն վրթանէս , զի փոյթ կալցի 'ի ձեռն կայսեր նստուցանել զտիրան զորդի խոսրովու յաթոռ թագաւորութե՟ հօր իւրոյ ։ Եւ սբ՟յն զիջեալ 'ի խնդիր նոցա՝ գնաց անձամբ 'ի դուռն կայսեր հանդերձ տիրանաւ ․ և թագաւորեցուցեալ զնա՝ դարձոյց անդրէն 'ի Հայս ։ Եւ եհաս սբ՟ Հայրապետն վրթանէս մինչև ցերրորդ ամ՟ տիրանայ ․ և լցեալ զաւուրս իւր՝ խաղաղական մահուամբ և լի արդեամբք փոխեցաւ յա՟էս , յետ ժե՟ ամաց կթղ՟կութե՟ իւրոյ ․ և եդաւ մեծաւ պատուով 'ի թորդան աւանի եկեղեաց գաւառի ․ քանզի այսպէս հրաման տուեալ էր երանելին (ը՟ գրելոյ խորենացւոյն) , ոչ՟ թէ մարգարէական ակամբ տեսեալ՝ թէ զկնի ժամանակի և մարմին հօր իւրոյ սբ՟յն գրիգորի անդր փոխադրելոց իցէ ․ որ՟պս և եղև իսկ՝ յորժամ եգիտ զայն սբ՟ն գառնիկ , և եբեր 'ի թորդան ։

Իսկ զաթոռ Հայրապետութե՟ ազգին կալաւ սբ՟ն յուսիկ՝ կրտսեր որդի նորին սբ՟յն վրթանիսի , և եղբայր գրիգորիսի աղուանից կթղիկոսի , ամենևին յար և նման հօրն և եղբօրն առաքինութեց՝ լի հոգւով սբյ ։ Սա յառաջագոյն մտեալ էր 'ի կարգ Ցի , փեսայացեալ՝ որդ̃ ասի , տիրանայ արքայի նախ քան զթագաւորել նր̃ ․ այլ յետ ծնանելոյ զերկու որդիս՝ որք կոչեցան պապ և աթանագինէ , հրաժարական վարէր կեանս՝ աղօթասէր գտեալ և Ճգնասէր ։ Արդ իբրև ընտրեցաւ 'ի կարգ եկեղեցական և յաթոռ հայրապետական , յաւել և ևս 'ի Ճգունս և 'ի մշտամռունչ աղօթս , փայլեալ՝ սքանչելի սրբութբ̃ ։ Բայց որդիք նր̃ չեղեն նման հօրն իւրեանց ․ և ևս առաւել թագաւորն տիրան՝ անէր կարծեցեալ յուսկան , և հաւ մանկանցն 'ի մօրէ , խոտորնակի գնայր յա̃ծակողմն կոյս ․ և բազում անգամ խրատեալ 'ի սբ̃ հայրապետէն՝ ստունգանօղ լինէր ․ և վարէր կեանս անհոգութբ̃ և անպիտանութբ̃ ։ Ընդ այն ժամանակս յուլիանոս կայսր ուրացօղ՝ յաջորդ կոստանդեայ , մինչդեռ խաղայր ը̃դէմ պարսից 'ի պատերազմ , առաքեաց 'ի հայս զպատկեր իւր նկարեալ՝ 'ի տախտակի հանդերձ ուրուական և դիւական նմանութբ̃ք ը̃ հեթանոսական պաշտաման , հրաման տուեալ տիրանայ հայոց արքայի՝ դնել զայն պատկեր յեկեղեցւոջ իւրում յարևելից կուսէ , և պատուել ։ Եւ տիրան այր վատասիրտ՝ յանձն էառ առ ահի ուրացողին կատարել զգործն անարժան ․ եբեր զդիւական զայն պատկեր 'ի դաւառն ծոփաց , և եմոյծ յիւր արքայական եկեղեցին՝ զի կանգնեսցէ անդ :

Ազդ եղև բանն յականջս սբյ՟ հայրապետին յուսկանն · վազեաց իսկ և իսկ յեկեղեցին , և հասեալ առ Թագաւորն՝ մինչդեռ 'ի ձեռին նոր էր պատկերն , խրատել սկսաւ զարքայն սիրով և սաստկութբ՟՝ յետս կալ 'ի հեթանոսական գործոյ անտի դիւապաշտութե՟ , զի մի պղծեսցի ինքն և եկեղեցի սբ՟ : Եւ յոչն անսալ Թագաւորին , բուռն եհար սբ՟ն յուսիկ , և կորզեալ զպատկերն դիւական 'ի ձեռաց արքայի՝ ընկէց անարգանօք 'ի գետին , և առաւթուր կոխեալ՝ խորտակեաց և մանրեաց զայն քաջութբ՟ :

Յայնժամ սրտմտեալ տիրանայ , և յիշեալ զայլ ևս յանդիմանութիս՟ որ 'ի սբ՟ հայրապետէն վ՟ս անկարգ գնացից իւրոց , յաւել զայն ևս 'ի վ՟ր , և հրամայեաց ջայլոտիւք ծեծել զնա յերկար · և յայն հարուածս աւանդեաց առաքինի նահատակն զհոգի իւր՝ զկնի վեցամեայ կթղկսուե՟ իւրոյ · իսկ պատուական մարմին սբյ՟ն եդաւ պատուով 'ի Թորդան առ հօրն իւրում վրթանայ :

Այնուհետև ընտրեցաւ յաթոռ լուսաւորչին սբ՟ ծերունին դանիէլ՝ ազգաւ ասորի , որ ձեռասուն աշակերտ էր սբյ՟ն գրիգորի , ձեռնադրեալ 'ի նմանէ քահանայ , և կարգեալ խնամակատար և քորեպիսկ՟ 'ի վերայ Տին · որ և յաւուրս անդ ծերուե՟ բնակեալ էր 'ի մենարանի միում՝ 'ի վանսն կոչեցեալ հացեաց դրախտ 'ի կողմանս տարօնոյ : Արդ իբրեւ ածին զերանելին նստուցանել յաթոռ կթ՟ղկսութե՟, մտեալ նորա առաջի արքային տիրանայ՝ սկսաւ յանդիմանել զնա բանիւ տ՟ն վ՟ն անօրէնութեն, զոր անիրաւեցաւ առ ս՟բն յուսիկ առ այրն ա՟յ, եւ յորդորէր սպառնալեօք յա՟ծակոյս կողմանէ՝ զի զղջասցի եւ քաւեսցէ զմեղս իւր ճշմարիտ ապաշխարութ՟բ ըստ ա՟յ ։

Եւ յարհամարհել տիրանայ զբան տ՟ն՝ անէծ զնա դանիէլ իբրեւ զանուղղայ ծրդեալ 'ի չարիս ։ Իսկ թագաւորն մոլեալ բարկութ՟բ՝ հրամայեաց փաղփաղակի խեղդամահ առնել զերանելին ։ եւ այնպէս կատարեցաւ ս՟բ ծերունին դանիէլ ։ զորոյ զմարմինն բարձին աշակերտք նորա շաղիտա եւ եպիփան, եւ տարեալ թաղեցին 'ի մենարանի նորուն 'ի հացեաց դրախտ ։ Բայց անէծք ս՟բյն կատարեցաւ փաղփաղակի 'ի վ՟ր տիրանայ ։ զի կալաւ զնա արքայն պարսից, եւ խաւարեցոյց զերկոսին աչս նորա ։ եւ այնպէս զրկեալ 'ի թագաւորութե՟՝ 'ի փախճանի խեղդամահ ըմպանաւ 'ի դաղտնի հրամանէ որդւոյ իւրոյ արշակայ ։

Զայս տ՟մ ճոխագոյն ստորագրէ պատշաճաւոր գովասանութ՟բ հնգեցունց ս՟բ հայրապետացս՝ յառանձին ներբողեան նոցին, յովհաննէս վ՟րդպ երզնկացի՝ որ եւ ծործորեցի, մականուանեալն պլուզ ։ ուր եւ յայտ առնէ ցաւագնութ՟բ՝ թէ որպիսի լուսաւորիչս խաւարեցուցին հարքն մեր, ապաշնորհ գտեալ առ նախածնօղս մեր ը՟ հոգւոյ՝ առբազմերախտ և բարեացապարտ լուսափայլ շառաւիղս ս̃րյ լուսաւորչին մերոյ . և 'ի մաղթանս զօրաւոր բարեխօսութե՛ն ն̃ց կնքէ զճառն , զի մի՛ հայեսցին յանարժանութիւն մեր , այլ հայրագութ ներողութ̃բ խնամակալու լինիցին տառապեալ ազգիս առաւել քան զառաջինն :

* Որ այժմ (ասէ) առաւելունիք համար-
,, ձակութ̃ի բարեխօսել առ որում մերձ էք՝
,, ա̃յ , քան յորժամ 'ի մարմ̃նի տաղաւարէիք.
,, Այլ և խնդրեսջի՛ք յամենողորմ տ̃նէն՝ աշխ̃ի
,, զխաղաղութ̃ի , և եկեղեցւոյ ս̃րյ զհաստա-
,, տութ̃ի . և մանկանց նորին զմաքրու-
,, թ̃ի , և սիրոյ կապակցութ̃ի . վերակաց-
,, ուաց բանաւոր հօտից զմիաբանութիւն ,
,, և զուղիղ քարոզութ̃ի . ժողովրդոց զհա-
,, ւանութ̃ի և զանդորրութ̃ի : Եւ մեք խը-
,, րախացեալք 'ի հոգևոր սեղանոյ ձերոյ՝
,, փառաւորեսցուք զհայր և զորդի և զհո-
,, գին ս̃ր՝ այժմ և միշտ և յաւիտեանս
,, յաւիտենից . ամէն || :

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ:

(1) Զունիմք և աստանօր պէտս քննու̃է և ծանօթութ̃ե վ̃ս հնդեցունց ո̃ր հայրապետացս . զի վարք ն̃ց և պատմութ̃ի ը̃ մասին յագաթանգեղոսէ և ը̃ մասին 'ի խորենացւոյն արժանահաւատ վկայուէ են առեալ . ո̃չ տեսանես : Թո՛ղ զառ 'ի յետնոց աւանդուէս , կ̃մ զբուզանդեան կեղակարծ բանս . որք ցորչափ համաձայնին և կամ գո՛նէ ո՛չ հակառակին առաջնոց , ը̃նդունելի գտանին . ապա թէ ոչ՝ մնան յանստուգութե իւրեանց . բայց որում և փոքր 'ի շատէ նշանակեալ է 'ի ծանօթութե̃ն պատմութե̃ հայոց :

ՎԱՐՔ ՍՐԲՈՅՆ

Եղիսէի մարգարէի ։

Հ. յունիս. 17 ։ Յ. և Լ. յունիս. 14 ։ Գ. Թագ. ԺԹ. և Դ. Թագ. Բ—Ը. և ԺԳ ։ Պոլլանդեանն Բաբէպրոք ՚ի Բ. հատ. յունիսի. եր. 784 ։

ԿՐԿԻՆ ՀՈԳՒՈՎ ԵՂԻԱյի մեծապայծառ փայլել սքանչելին Եղիսէ, որ և Եղիշա, մարգարէութ՟բ ասեմ և նշանագործութ՟բ, և ը՟ անուան իւրոյ՝ որ թարգմանի ա՟ծ փրկիչ կ՟մ փրկութ՟ի ա՟յ՝ նախանկար օրինակ ցուցեալ բազմօք ա՟ծ եղեն նշանաց փրկչին մերոյ երևելոյ ՚ի մարմնի, որդի էր առն չինականի սափատայ յաբէլմաուլայ ՚ի վիճակէ կիսոյ ցեղին մանասէի յայսկոյս յորդանանու ։ Արդ՝ յորժամ առաքեցաւ եղիա մարգարէն յաւուրս հալածանաց յեզաբելայ՝ օծանել փոխանակ ը՟ իւր մարգարէ զեղիսէէ, եգիտ զնա յանդի, զի վարէր երկոտասան եզամբք. և իբրև ընկէց եղիա զմաշկեակն իւր ՚ի վերայ նորա, վաղվաղակի փութացաւ աշակերտիլ նմա՝ ո՟պ առաքեալքն ՚ի կոչ տ՟ն մերոյ. ողջոյն ետ՝ հրաժարեցաւ ՚ի ծնողաց իւրոց, և էառ զզոյգս զոյգս եզանցն, և եզեն. և գործեօք եղանցն հաստոյց զնոսա , և ետ ժողովրդեանն և կերան , և յարեաւ գնաց զհետ Եղիսէի , և պաշտէր զնա որ՟պ սպասաւոր կի՟ փոքրաւոր ։

Եւ եղև 'ի վերացուցանել տ՟ն զԵղիայ շարժմամբ յերկինս , մինչդեռ էին երկոքեան 'ի գաղգաղա՝ պատճառէր իմ՟ Եղիա , որ՟պ թէ ինքն առաքի 'ի տ՟նէ 'ի Բեթէլ . վ՟յ դու նիստ աստ ։ Իսկ Եղիսէէ գիտելով՝ եթէ յանկարծ ունի յափշտակել զնա տ՟ր , ոչ մեկնեցաւ 'ի նմանէ երբէք . այլ ասէր , կենդանի է տ՟ր և կենդանի է անձն քո , թէ թողից զքեզ . քանզի կամէր տեսօղ լինել վերացման նր՟ , և առնուլ զվերջին օրհնութի՟ն . որ՟պ և ժտելով խնդրէր 'ի նմանէ , թէ եղիցի կրկին ոգիդ քո 'ի վերայ իմ ։ Արդ որ՟պ ետես զվերանալն նր՟ առ յորդանանաւ , նոյնպէս և ընկալաւ զխնդիր իւր՝ յարկանել Եղիայի զմաշկեակն իւր նմա 'ի ժամու վերանալոյն . որով իսկ և իսկ արար զնոյն նշան՝ զոր տեսեալ էր յԵղիա , զի մաշկեկաւն բաժանեաց զջուրս գետոյն , և էանց ը՟ ցամաք ։

Եւ 'ի նստիլ իւրում յերիքով՝ ըստ խնդրոյ բնակչացն բժշկեաց զանպիտան ջուրս տեղւոյն , և արար առողջարար և բեղմնաւորիչ ։

Եւ 'ի բեթէլ սաստեաց որդւոյն քրմաց մանրիկ մանկտեաց , որք այպն առնէին զնա , կոչեաց զնս՟ որդւք յանցանաց և դատարկութե՟ . և անդէն ելին երկու արջք յանտառէն , և պատառեցին 'ի նոցանէ քառասուն և երկու մանկունս ։ Իսկ Եղիսէ գնաց 'ի լեառն կարմեղոս, ուր ճգնեցաւ առ ժամանակ մի ըստ եղիայի . և անտի դարձաւ 'ի սամարիա քաղաք թագաւորութեան իսրայելացւոց :

Եւ եղև 'ի տագնապի յովրամայ արքայի իսրայելի ընդ յովսափատայ արքայի յուդայ՝ յանջրդի վայրի 'ի ծարաւոյ յաւուր պատերազմի ընդդէմ արքային մովաբու, իբրև եկն յովրամ ընդ յովսափատայ աղաչել զեղիսէ, յանդիմանեաց զնա նախ մարգարէն վասն կռապաշտութեան . և ապա 'ի շնորհս յովսափատայ աստուածապաշտի՝ ետ սքանչելեօք լնուլ զհեղեղատն ջրով, և հարկանել զթշնամիս իսպառ : Բազմացոյց և զիւղ կնոջ միոյ այրւոյ 'ի կանանց որդւոց մարգարէից . զի 'ի միոյ ամանոյ ո՛րչափ և լնոյր յայլ անօթս դատարկս՝ ոչ պակասէր իւղն, մինչև պակասիլ անօթոց : Ետ աստուած բանիւ եղիսէի և զաւակ՝ ամուլ կնոջ սոմնացւոյ . և զկնի ամաց ինչ 'ի մեռանիլ մանկան 'ի տղայութեան՝ յարոյց զնա եղիսէ աղօթիւք 'ի կեանս :

Դարձեալ բանիւ եղիսէի անվնասելի եղև եփոյն վնասակար աղօխոյ . և 'ի բաշխել բազմութեան հարիւրաւոր արանց զքանի մի նկանակս գարեղէնս՝ կերան ամենեքին և յագեցան . և թողին նշխար ըստ բանին տեառն : Սրբեաց եղիսէ և զբորոտութիւն նէեմանայ ասորւոյ՝ հրամանն տալով լուանալ զանձն 'ի յորդանան . և յագահել գէեզեայ առնուլ ինչ պարգև յառնէ անտի՝ ասաց ցնա եղիսէ . բորոտութիւնն նէեմանայ յարեսցի 'ի քեզ և 'ի զաւակ քո յաւիտեան . և ել յերեսաց նորա րա բորոտեալ իբրև զձիւն ։ Խորհրդաւոր էր և այն, զի 'ի հարկանել որդւոց մարգարէիցն փայտս յեզր յորդանանու՝ վ̃ն շինելոյ իւրեանց բնակութ̃ի, անկաւ 'ի ձեռաց միոյն երկաթն 'ի ջուր. յայնժամ եղիսէ ձեղքեաց փայտ, և ընկէց անդր 'ի խորս. և 'ի վեր եկաց երկաթն ։

Յայտնեաց եղիսէ արքային ի̃էլի զդարանս ասորւոց. և արքային ասորւոց կարծէր՝ թէ մատնիչ կայցէ 'ի բանակէ իւրմէ. և ասէ մի ոմն 'ի ծառայից իւրոց. ո՛չ տ̃ր իմ արքայ, այլ եղիսէէ մարգարէ յի̃էլի պատմէ արքայի ի̃էլի զա̃մ բանս զոր խօսիցիս 'ի սենեակի քնոյ քո ։ Եւ նր̃ դժուարեալ՝ առաքեաց կառս և երիվարս և զօր ծանր 'ի դովթայիմ, ուր էր յայնժամ եղիսէ՝ ունել զնա. և եկին գիշերի, և պատեցին զքաղաքն ։ Իսկ եղիսէ կանխեաց յառնել 'ի պաշտօն առաւօտու, և ել գնաց ը̃ մէջ նց̃. այլ քանզի երկնչէր պատանեակն, ասաց եղիսէ. մի՛ երկնչիր, զի ընդ մեզ բազում են քան ը̃ նս̃. որոյ վ̃ն իսկ յաղօթս եկաց մարգարէն, և ասէ. տէ՛ր բա՛ց զաչս պատանեկիս, և տեսցէ. և եբաց տ̃ր զաչս նորա, և ետես, և ահա լեառնն լի էր ձիովք, և հրեղէն կառօք շուրջ զեղիսէիւ ։ Եւ 'ի գալ թշնամեաց 'ի վ̃ր նորա՝ որք ոչն տեսանէին զերկնաւոր զօրս, եհար տ̃ր շլացութ̃բ զասորիս ը̃ բանին եղիսէի. և եղիսէ ճանապարհ հորդեալ նց̃՝ տարաւ 'ի սամարիա. և անդ բացան աչք նոցա. և 'ի կամիլ արքային ի̃էլի կոտորել զնս̃՝ ոչ եթող եղիսէ.

սէ. այլ ասէ, տո՛ւր ինձ ուտել և ըմպել. և երթիցեն առ տէր իւրեանց, և պատմեսցեն: Յետ այսորիկ իբրև եկն որդի աղերսոյ արքայ ասորւոց, և պաշարեաց զսամարիա, եղև սով մեծ 'ի քաղաքին. մինչև ծանրագին լինել և խալամոյ իշոյ, և աղբոյ աղաւնեաց յոյժ. և ոմանք 'ի կանանց սկսան եփել զզաւակս և ուտել: Զայն իմացեալ արքային իսրայէլի, փոխանակ 'ի միտ առնլոյ զմեղս իւր և զժողովրդեանն՝ զորս խրատէր տէր, չարացաւ և կամէր առնուլ զգլուխ եղիսէի. և եղիսէ կանխագոյն ծանոյց այլոց զգալն արքայի. և ասէ ցարքայ. վաղիւ այս ժամ իցէ, զի ցորեան և գարի դիւրագին լիցի յոյժ 'ի դրունս սամարեայ: Եւ եղև այնպէս. զի 'ի գիշերին յայնմիկ տէր հնչեցոյց 'ի բանակն ասորւոց շաչիւն կառաց, և բարբառ զօրու մեծի. և փախեան ընդ մութն մարդապուր, թողեալ զվրանս իւրեանց և զձիս և զգրաստս պաշարոյ: Եւ այնպէս առատութիւն եղև ամենայն իրաց 'ի միումաւուր. և սպառազէնն՝ որոյ չէր հաւատացեալ բանին եղիսէի, կոխան եղև 'ի նմին աւուր 'ի խռան ամբոխին և մեռաւ, և ոչ վայելեաց 'ի բարեաց անտի՝ ըստ բանին տեառն: Այսպիսեօք մեծամեծ նշանօք փայլեալ եղիսէի զամենայն ժամանակս իւր՝ սքանչելի եղև յոյժ և զկնի մահուանն. զի յետ տարւոյ միոյ՝ 'ի կամիլ իսրայէլացւոց թաղել զոմն մեռեալ, իբրև տեսին զմեկնակազէնս ասորւոց՝ երկեան, և ընկեցեալ զայրն մեռեալ 'ի գերեզմանն եղիսէի, փախեան 'ի տեղւոջէն. և 'ի մեր-

ձենալ մեռելոյն յոսկերսն Եղիսէի՝ կենդանացաւ, և կանգնեցաւ 'ի վ՛ր ոտից իւրոց ։ Ցայս վայր են բանք սբ՟ գրոց զԵղիսէէ մարգարէէ ։ յոր յաւելուն և ռաբբիք Հրէից պէսպէս աւանդութիւս՝ կարծելով և նս մեծացուցանել զնա ։ ուր շատ է գովութիւն մեծութեան նր՟ յա՟ծաշունչ տառից ։ 'Ի նոյն րաբունեացն աւանդից առեալ է և այն՝ որ գրի 'ի յայսմաւուրս, թէ * մարգարէն Եղիսէ էր 'ի
„ 'ի յաբեղմաւուլայ յազգէն ռուբենի ։ և
„ յորժամ ծնաւ զնա մայր իւր, երկու ե-
„ րինջքն ոսկի՝ որ կային 'ի դան և 'ի բեթէլ՝
„ այնպէս գոչեցին մեծաձայն, զի լսելի եղև
„ յե՟մ ։ և քահանայապետն՝ որ կայր 'ի տա-
„ ճարին՝ ասաց ։ մարգարէ մեծ ծնաւ այսօր,
„ որ բարձցէ զկռապաշտութիւն յի՟է ‖ ։ Սմին
նման գրեալ կայ և 'ի յունաց յայսմաւուրս ։ Բայց չէ արժան լսել այսպիսի կեղծեաց հրէական ազգին, որք անփոյթ առնեն զճշմարտութ՟, և 'ի ստայօդ աւանդութիւս զբազեցուցանեն զանձինս ։

Գրէ Հերոնիմոս յարձանականն պաւղայի, թէ երևելի ուխտատեղի էր յաւուրս իւր գերեզմանն Եղիսէի մարգարէի և աբդիու ընդ յովհաննու մկրտչի 'ի սամարիա՝ որ և սեբաստուպօլիս կոչեցաւ, փայլեալ սքանչելեօք ։ իսկ յետ ժամկաց մասունք ինչ նշխարաց եղիսէի առին բերեալ յաղեքսանդրիա և 'ի կոստանդինուպօլիս, և ապա յարևմուտս ։ այլ զայսցանէ ունիմք ասել ճոխագոյն 'ի ծանօթութիւս ։ (1)

ՕՐ-

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ:

(1) Այսպէս գրէ Հերոնիմոս վն̄ սրբուհւոյն Պաւղայի
. * Անց ը̄ն Սիւքեմ... և անտի դարձ արարեալ՝
„ետես զՍեբաստէ, այն է Սամարիա... Ընդ Թաղեցան
„Եղիսէ և Աբդիաս մարգարէք, և մեծն ՚ի ծնունդս
„կանանց Յովհաննէս մկրտիչ. ուր ՚ի տեսիլ բազում
„հրաշից զարհուրեալ պակեաւ (պաւլա). քանզի տեսանէր՝
„զի դևք պէսպէս լլկանօք մռնչէին. և առաջի
„գերեզմանաց սր̄ցն մարդիկ (այսահարք) կաղկանձէին
„իբրև զգայլս, մեծաձայն հաչէին իբրև զշունս,
„մռնչէին որպէս զառիւծս, շչէին որպէս զօձս. և ՚ի
„կախիլ կանանց զոտիցն (գլխ ՚ի վայր. սքանչելեօք)
„հանդերձքն ոչ վայրանկան յերեսս||: Բարեպրոք բոլլանդեան
ոչ երկուանայ ը̄ սքանչելիքս. այլ յաւելու
մակաբերել, թէ մի գերեզման էր թերևս երկուց և
երից մարգարէիցս. որ թէպէտև թափուր էր առ յոսկերաց,
այլ զօրութ̄ե սքանչելեաց հռչակաւոր լինէր:
Զպատճառս թափուր լինելոյ գերեզմանի մկրտչին իմանաս
՚ի գրելոց անտի մերոց՝ ՚ի պատմութեան գիւտի
նշխարաց յովհ. մկրտ. որպէս և ՚ի վարս սր̄յն աթանասի,
և ՚ի վախճան վարուց կիւրղի սարկաւագի: Իսկ
աստ երկրորդեսցուք ը̄ս քաղուածոյն՝ զոր առնէ բարեպրոք.
քանզի գրի առ սուրիոսի. հոկտ. 20. ՚ի վարս
արտեմեայ վկայի, թէ յորժամ ուրացօղն յուլիանոս * ետ
„իշխանութիւն հեթանոսաց՝ մտանել յեկեղեցիս քրիստոնէից,
„և առնել զոր կամին ... զոսկերս եղիսէի
„մարգարէին և յովհաննու մկրտչին՝ որպէս կարծէին,
„հանեալ ՚ի տապանացն, և խառնեալ ը̄ ոսկերս անա̄
„անասնոց՝ այրեցին. և զմոխիրն յօդս ցնդեալ հոսեցին
„||: Կամ ը̄ս ասելոյ հռուփինոսի. Ժ̄. 18. զն̄ր ոսկերսն
* ցրուեցին, և անդրէն ժողովեալ ՚ի մի՝ ՚ի հուր
„այրեցին. և զն̄ր մոխիրսն խառնեալ ը̄ փոշւոյ՝ յանդս
„և յագարակս ցիր և ցան սփռեցին||:
Զայս նշանակէ ըստ իմիք և ինքն անօրէն ուրացօղն ՚ի
բանն իւր միսօբոգօն, ը̄դ մօրուսատեաց. գրելով հայհոյանօք
այսպէս. * Զա̄մ գերեզմանս անա̄ծիցն՝ ընդ առնուլ
„զնշան ակնարկութ̄ե իմոյ՝ տապալեցին (հեթանոս
„ասորիք), այնչափ բարձր ՚ի գլուխ և ժիրաժիր

,, երևելք, մինչև զչարութիւն այնոցիկ՝ որք զմարմին անարգեցին,
,, խստագոյն ևս քան զյօժարութիւն կամաց իմոց՝
,, խնդրել զվրէժ ||: Այլ որպէս յաւելու Ռուփինոս
վասն նշխարաց մկրտչին, ոմանք 'ի միայնակեցաց եկեալ՝
* խառնեալ զանձինս 'ի մէջ նոցա, որք ժողովէին զոսկերս
,, առ 'ի այրել, և մեծաւ փութով պնդութեամբ ըստ
,, կարի և կրօնաւորութեամբ հաւաքեալ զպատուական
,, նշխարս (մկրտչին)՝ գաղտագողի սպրդաքս կորզեցին
,, զանձինս 'ի միջոյ ապստաւորաց, որք անգէտ էին իրացն,
,, կամ զարմացեալ կային ընդ նմին. և առեալ բերին
,, առ բարեկրօն հայրն փիլիպպոս ||:

Արդ՝ ըստ բաբեպրոքայ, որպէս ոմանք բարձին զայն նշխարս իբրև զմկրտչին, սոյնպէս և այլք զայլ նշխարս կարող եղեն կորզել իբրև զեղիսէի մարգարէին, ստոյգ գոլով թէ սրբոց նշխարս բարձին, այլ անստոյգ՝ եթէ զոյր յերկուց անտի սրբոց։ Այսպիսի նշխարք էին արգեօք, զորս սրբոյն աթանաս էառ յեմէ, և ամփոփեաց իբրև նշխարս մկրտչի. որ և յերևան եկին, և ամփոփեցան յառանձին վկայարանի նորա առ մեծն Թէոդոսիւ։

Յաւուրս նորին Թէոդոսի կայսեր նստաւ պատրիարգ աղեքսանդրիոյ Թէոփիլոս յամի 385. արդ գրի զմանէ 'ի վկայագիրս հապէշից՝ ոստանաւոր բանիւ 'ի ժա ամսեանն պաւնայ, այսինքն 'ի 27. մայիսի՝ այսպէս. * Տեսեն
,, զպանծելիս սրբոյն յովհաննու և եղիսէի, և թէ զիարդ
,, պահեցին 'ի վտանգէ մանկաբերութեան զմեծազգի
,, կինն, շնորհս մատոյց նոցա ||. և օրս այս կոչի անդանոր՝ * յայտնութիւն մարմնոց յովհաննու և եղիսէի՝ անբաժան
,, միացելոց ||: Կամ ըստ զփառեաց՝ * գիւտ ոսկերաց
,, յովհաննու մկրտչին Տեառն ||. զի յանուն մկրտչին շինեցաւ այն եկեղեցի. վասն այն նա յիշի առաւելապէս։ 'ի նշխարաց անտի եղիսէի էին արգեօք մասունքն այն յիշատակեալք 'ի կեդրենոսէ յամի տեառն 463. ուր ասէ.
* Յեօթներորդ ամի (լևոնի կայսեր) մարգարէն եղիսէ
,, փոխադրեցաւ յաղեքսանդրիա 'ի վանս պօղոսի բորոտի.
,, և այսպէս՝ այն, որ զբորոտն (զնէեման) բժշկեաց,
,, և բորոտութեամբ պատուհասեաց (զգէեզի), 'ի
,, վանս բորոտի եդաւ ||: Ժամագիրք յունաց ձեռ՛. 'ի յունիսի 14, և 'ի 17. յիշեն 'ի կոստանդինուպօլիս ըզմարգարէարան կամ զվկայարան սրբոյն եղիսէի, ուր կարծին լինել նշխարքն ինչ նորա բերեալ յաղեքսանդրիոյ կամ յեմէ։ 'ի հերոնիմեան օրինակն լատին վկայաբանութեան՝ 'ի 29. օգոստ. զկնի տօնի գլխատման մկրտչին դնի.

գնի, * Հանգիստ (կմ՛ փոխադրութն) սբ̃յն եղիսէի ,, մարգարէի ||։ Դանիէլ կարմեղական՝ որ որպէս զեղիա, նոյնպէս և զեղիսէ առնէ կրօնակից իւր, ասէ՝ թէ 'ի հին օրինակս ժամագրոց կարգի իւրոյ գտանիւր գրեալ վասն մարմնոյ սբ̃յն եղիսէի այսպէս. * պահի ,, արժանաւոր պատուով 'ի ռաւեննա ||։ Իսկ թէ զիարդ բերեալ իցէ անդր, այսպէս գրէ յովհաննէս պաղէօնիւգորոս. * 'ի ձեռն թէոդոսի կայսեր (ադրամիւտենոս ,, կոչեցելոյ) յամի տն̃ 718. եգաւ 'ի ռաւեննա 'ի վանս ,, միանձանց ||. որպէս թէ՝ ը̃ մեկնաբանութեան բարեպրոքայ, կայսրն այն՝ որ նստաւ յամի 715, և յետ սարւոյ ընկեցեալ յաթոռոյ՝ եղև կղերիկոս և իբր միայնակեաց, թերևս յաւուրս հալածանաց լևոնի իսաւրացւոյ պատկերամարտի՝ նաւեալ իցէ 'ի ռաւեննա իտալիոյ, և բերեալ ը̃ իւր զնշխարս սբ̃յն եղիսէի առ բասիլեան կրօնաւորս յուռնածէսս. և ը̃ այսմ հերոնիմոս փաբրոս ընթեռնու 'ի յիշատակարանս ռաւեննացւոց զայս ինչ. * Սբ̃յն եղիսէի մարգարէի մարմինն եգեալ կայ յարուճարձանս ռաւեննայու՝ առ եկեղեցեաւ սբ̃յն լաւ,, րենտիոսի 'ի կեսարիա, 'ի մատրան սբ̃յն գերուասիո,, սի և պռոտասիոսի ||. կմ՛ թէ ասէ, գուցէ իցէ մարմին եղիսէ անուն սբ̃յ անծանօթի. որպէս առ սուրիոսի 'ի 29. դեկտ. յիշի եղիսէ ոմն առաքինի առաջնորդ ակումիտաց կմ՛ անհանգստից վանաց։ Թող զոր ասեն ոմանք, թէ ծունկն եղիսէի մարգարէի իցէ 'ի լևաւեան վանս հանհոնիոյ։

ՏՕՆ ՍՐԲՈՑ

Երկոտասան Առաքելոցն, և գլխաւորացն Պետրոսի և Պօղոսի ։

Հ. յունիս. 29. և 30։ Յ. յունիս. 29. և 30։
Լ. յունիս. 29։

Զերկոտասան կ՟մ զերեքտասան ս՟բ առաքեալս ք՟ի ա՟յ մերոյ, զլուսաւորիչս աշխարհի, ոչ միայն ուրոյն ուրոյն կամ երկու երկու տօնեն յառանձին աւուր յիշատակի նոցա՝ ա՟մ եկեղեցիք քրիստոնէից, այլ համախումբ տօնախմբեն յոյնք և հայք ՚ի յունիսի 30, այսինքն միով աւուրբ զկնի տօնի գլխաւորացն պետրոսի և պօղոսի, որոց սեպհական տօնախմբութ՟ին կատարի առ ամենեսին ՚ի յունիսի 29. այլ հայք կրկին ևս տօնեն զպետրոս և զպօղոս ՚ի դեկտ. 27 կամ 28. ՚ի կարգի աւագ տօնից. ուր ունիմք և մեք աւանդել զկատարեալ պատմութ՟ի վարուց նոցա. որպէս և զիւրաքանչիւր առաքելոց յաւուր տօնի նոցա առանձինն ։ Բա՛ւ լիցի աստանօր նշանակել զպատճառս համագումար տօնախմբութ՟ե նոցա (զոր չունին հռովմայեցիք), ՚ի Բասիլեան անուանեալ յայսմաւուրացն յունաց, որ ունի այսպէս. ՚ի յունիսի. Լ.

---

* Տօնախմբութ՟ի ս՟բց երկոտասան առաքելոց։ Թէպէտ
,, և իւրաքանչիւրոք ՚ի ս՟բց առաքելոց յայլ և այլ
,, ժամանակս վկայեաց, այլ արդ եկեղեցին ա՟յ ՚ի նշա-
,, նակ գերապանցեալ պատուոյ տօնէ զհամախմբութ՟ի
,, նո-

,, Նոյա՝ առընթեր յեղապակէ սբ̄ց առաքելոցն պետրո-
,, սէ և պօղոսէ, և շամբնեանն մանգամայն վերատըր-
,, ուածէ եբերն շլրաստասարէյս աշխարհէ ։ Նա արդ՝
,, առաջին վան շնմ՝ գողթնէց արժանաւոր պետրոս՝
,, Ջերմ աղաբերան, որ 'ի ներքոյ գլխ 'ի վայր խաչե-
,, ցաւ. երկրորդ՝ պօղոս անօթն ընտրութե̄, որ 'ի նմա-
,, նէ գլխատեցաւ. երրորդ՝ անդրէաս նախակոչ, որ
,, յեգիպտեայ 'ի վր̄ ծառոյ խաչեցաւ. չորրորդ՝ յա-
,, կոբոս զեբեդեայ, որ 'ի հերովդէ սրախողխող եղև.
,, հինգերորդ՝ յովհաննէս եղբայր նր̄, որ կենդանւոյն
,, թաղեցաւ և փոխադրեցաւ. վեցերորդ՝ փիլիպպոս,
,, որ 'ի հելլենացւոց շպարապէ կախեցաւ. եօթներորդ՝
,, թովմաս երկուորեակն, որ 'ի հնդկաց աշտէակոց
,, սպանաւ. ութերորդ՝ բարթողիմէոս, որ 'ի խաչ հա-
,, նաւ. իններորդ՝ մատթէոս, որ քարկոծ եղև. տաս-
,, ներորդ՝ յակոբ ալփեայ. մետասաներորդ՝ շմաւոն նա-
,, խանձայոյզ. երկոտասաներորդ՝ յուդա յակոբեան, որ
,, կախեցաւ և նետիւք հարաւ ‖ ։ Ո մատթէայն
շանց աւանդ յիշել, թերևս 'ի պահել զերկոտասան
թիւ. Բայց երաամբք յեղապակէ յայսմաւուրքն մեր,
և ըստ նմին պօղոս՝ որպէս և է իսկ, երեքտասան ա-
ռաքեալ կոչէ, հանդերձ փոքր մի ընդարձակագոյն սար-
րագրութե̄ օրինակէ կատարման նոցա. զոր մեք պա-
հեմք 'ի վարս և 'ի վկայաբանութ̄ն մի մի 'ի նոցա-
նէ, յարմարեալ ատենն զներբողեան խորհրդաւոր յօ-
գուտ ունողաց ։

ՃԸ.Ա

ՃԱՌ ԳՈՎԵՍՏԻ

՚Ի պատիւ համօրէն Առաքելոց ։

ՏԻՐԱԿԱՆԻՆ ԱՐԺԱՆԱցեալք երանութե՟՝ երանելի՛ք առաքեալք, յայսմ աշխարհի և ՚ի հանդերձելումն . և նմանապէս կրկնակի գովելիք և պանծալիք և նախանձելիք մեզ իսկապէս՝ յերկրի, և յերկինս ։ Ապաքէն ըստ առաջնոյն ասէր առ ն՟ս բանն ճշմարտութե՟ . * Ձեր երանի՛ է աչաց՝ զի տեսանեն, և ականջաց ձերոց՝ զի լսեն . ամէն ասեմ ձեզ, զի բազում մարգարէք և արդարք ցանկացան տեսանել՝ զոր տեսանէքդ, և ոչ տեսին, և լսել՝ զոր լսէքդ, և ո՛չ լուա՛ն ։ Յայտ է, թէ՝ զի երանելի աշակերտքն առաքելական կոչմամբ պատուեալք՝ ականատեսք և սպասաւոր եղեն բանին երևելոյ ՚ի մարմնի, նախաձայնելոյն ՚ի մարգարէից անտի անդուստ ՚ի հեռուստ ըղձափափաք տեսութե՟ք, և օրինակելոյն ը՟աղօտ օրինակաւ յազգի ազգի անցս նախահարց առաջնոց և նահապետաց արդարոց՝ ակնունողաց գալստեան փրկչին . և լուան զբանս և զխորհուրդս ա՟ծայինս ընտանի կենակցութե՟ք ՚ի բերանոյ անտի բանին ա՟յ, յորում ա՟մ գանձք իմաստութե̃ և գիտութե̃ ծածկեալ կան ։ Եւ ըստ երկրորդին ասէր ․ * Ընդ այն մի՛ խնդայք , եթէ այսք հնազանդին՝ ձեզ ․ այլ խնդացէ՛ք , զի անուա՛նք ձեր գրեալ են յերկինս ‖ ․ և դարձեալ՝ թէ * Եւ ես ուխտեմ ձեզ , ոպ̃ և հայր իմ ուխտեաց ինձ զարքայութի̃ ․ զի ուտիցէք և ըմպիցէք 'ի սեղան իմ յարքայութե̃ն իմում , և նստիցիք յերկոտասան աթոռ՝ դատել զերկոտասան ազգ իէ̃լի‖ ։ Եւ արդ՝ զո՞րն 'ի կրկին մասանց աստի անպատում երանութե̃ս մարթ իցէ թարգմանել հողեղէն լեզու՞ի ․ և այն՝ անճաշակ եղելոցս յերկոցունց միանգամայն ․ յորոց մին անցեալ անդառնալի , և միւսն հանդերձե̃լ ակնունելի ։ Ուի թէ կենաց կցորդ լեալ եր իմ ը̃ առաքելոց , որով և ը̃ փրկչին Տ̃ի՝ 'ի մ̃ր երկրի , թերևս փորձի՜ բերկրապատար խնդութե̃ անձին կարող լինէի փոքր 'ի շատէ և զառաքելոցն բարերջանիկ զայն վիճակ ընտիր բանի՜ բացայայտել ․ և կ̃մ եթէ ը̃ պօղոսի 'ի վերուստ կոչեցելոյ յառաքելութի̃՝ յերրորդ ելեալ երկինս՝ զփառսն տեսանէի զերանելի առաքելոց աթոռակցաց տ̃ն և վ̃դպի իւրեանց , գէթ դոյզն մի յանբաւ բարեմասնութե̃ նշ̃ ճառել իշխէի , զանճառսն լուեալ զներքինս ․ զոր լինի վայելել , այլ ոչ պատմել ։ Իսկ արդ՝ զիա՞րդ ․ և լուե՞լ զյայտնիս 'ի դէպ համարեսցուք առ անկարութե̃ խօսելոյ զանյայտից և զծածկեցելոց ։ Ո՛չ այդպէս ․ ո՞չ ապաքէն գրեալ է , * զխորհուրդ թագաւորի բարւոք է ծածկել ։

կել. այլ զգործս ա՟յ յայտնել՝ փառօք ||:

Եւ կարի իսկ քաջ. զի թէ երկինք պատմեն զփառս ա՟յ, և զարարածս ձեռաց նր՟ պատմէ հաստատութի, յօրինակ երկնանման պայծառութե առաքելոց երկոտասանից՝ ը՟ թուո՛յ կենդանատեսակ զարդուց երկնից՝ ընտրելոց. և եթէ լուսաւորն մեծ և փոքր՝ լուսատու լինին տուընջեան և գիշերոյ՝ 'ի տիպ գլխաւոր առաքելոցն պետրոսի և պօղոսի, մեք զի՞արդ անտես արասցուք անկարկել 'ի յայտնի տեսութի երանութե գեղեցիկ պարու առաքելական դասուն. ո՞չ այն թէ առ չկարելոյ համարձակահայեաց լինել 'ի պայծառ դէմս արփւոյն՝ 'ի վայելից անգամ լուսոյն զանձինս գլխովին զրկեաք. կմ՟ զի՞արդ անլսօղ լինիցիմք տիեզերալուր բարբառոյ աւետարանութե աւետարանչացս սիոնի. ուր ը՟ ամ՟ երկիր ել բարբառ նոցա, և մինչև 'ի ծագս ա՟ի են խօսք նց՟, եթէ աւետարանաւ, և եթէ թղթովք, եթէ բանիւ՛ և եթէ գործովք:

Այլ դո՛ւք երանեալք և փառաւորեալք յա՟յ և յմ՟ծ, և փառաւորիչք ա՟յ յերկինս 'ի վեր և յերկիր 'ի խոնարհ. կոչեցեալքդ և ընտրեալքդ, հրաւիրեալքդ 'ի սկզբանէ, և վայելեալք յանսահման բարին՝ 'ի ժամանակի, և յետ ժամանակի յաւիտեան և յաւիտեանս և ևս, երջանիկ դա՛սք առաքելոց, դի՛ք բան 'ի բերան իմ, աղաչեմ, խօսել զձէնջ գէթ չափով զարժանն և զօգուտն 'ի պէտս լսելեաց, յուշ ածելով ևեթ տօնասիրաց զձեզ սիրողաց՝ հանրական առասացութ՟բ, նախ՝ զոր յերկրի զձեր բարեմանութ՟ի, և երկրորդ՝ զոր յերկինս յաւերժական ը՟ ք՟սի թգ՟րութ՟ի :

Օ առաջինն այսպէս ինձ իմաստասիրեսջի՛ք՝ ո՛վ հանդիսացեալ ժողովուրդք, լուսածնունդ զաւակք և հարազատ աշակերտեալք երանելի առաքելոյն : Ո՛ր փառք կ՟մ ո՛ր պատի՛ւ և կ՟մ ո՛րպիսի երջանկութ՟ի կայցէ յաշ՟խի, ո՟պ կոչիլ և ընտիր գտանիլ 'ի սպասաւորութ՟ի թգ՟րին թգ՟րաց և տ՟ն տ՟րանց՝ ք՟սի փրկչին մերոյ և ա՟յ մարդացելոյ . որ և զառհաւատչեայն անսուտ կնքէր առ պաշտօնեայս իւր՝ անզուգական խոստմամբ հանդերձեալ վարձուց 'ի փոխարէն գեղեցիկ պաշտամանն, եթէ՝ * ուր եմ ես, անդ և պաշտօնեայն իմ եղիցի ‖ :

Եւ ո՛ր պարծանք պարծանաց՝ ա՟մ երանութ՟բ լի, ո՟պ գրիլ 'ի զինուորութ՟ի զօրագլխին հաւատոց յ՟սի, անդէն և անսուսեր և անվահան՝ վանել վարել՝ հարկանել յաջ և յահեակ զօրաւոր զինուքն արդարութ՟ե զաշ՟խ և զիշխան աշ՟խի միանգամայն, թիկնապահ և անձնապահապետ գոգցես երևելոյն տ՟ն տիեզերաց . և այն՝ հանդերձ վկայութ՟բ գովու՟ե հաւատարիմ նիզակակցու՟ե առաքինի զօրականացս յապենիազ տ՟նէ անտի . ք՟զի ասէ . * և դուք էք՝ որք ցանդ կայիք ը՟ իս 'ի փորձութիս իմ ‖ :

Կամ զի՞նչ այլ ցանկալի վիճակ ընտրութ՟ե 'ի վե՟ր երկրի, ո՟պ աշակերտիլ առ ոտս երկնանաւոր վիճակին՝ իջելոյն յերկնից յաղագս մեր մարդկան և վ՟ն մերոյ փրկութե՟ն ․ որ և ընտրանաւ և թուով որոշեալ զերանելի առաքեալսն յիւր ձեռասուն աշակերտութի՟ն՝ զոր ա՟մ դա՛ս ասէր ն՟ջ երկնային , և խօսէր ա՟ծեղէն բերանովն մարդկապէս վ՟ն արքայութե՟ն ա՟յ , և զանյայտս և զծածկեալս իմաստութե՟ն իւրոյ բանայր նոցա առաջի յայտապատում ․ և ուր առ ժողովուրդն առակօք հրապարակախօս լինէր , * առանձինն աշակերտաց իւրոց մեկնէր զա՟մ ․ զի ձեզ տուեալ է (ասէ) գիտել զխորհուրդս արքայութե՟ն ա՟յ ․ բայց այլոցն առակօք լինի ‖ ։

Նաև պարզաբար՝ զի՞նչ նախանձելի այլ , ո՟ք բարեկամ լինել ք՟ի , և հազարապետ և խորհրդագգած խորոցն ա՟յ ․ * Դուք բարեկամք էք իմ (ասէր տ՟րն ցառաքեալսն) , եթէ առնիցէք՝ զոր ես պատուիրեմ ձեզ ․ ոչ ևս կոչեմ զձեզ ծառայս ․ զի ծառայն ո՛չ գիտէ՝ զի՞նչ գործէ տ՟րն ն՟ր ․ այլ զձեզ կոչեցի բարեկամս , զի զա՟մ զոր լուայ 'ի հօրէ իմմէ , ծանուցի ձեզ ‖ ։

Ո՞վ սքանչելեացս ․ որք աննշանք՝ զաւակք յետնորդք յորդիս աբրահամեան տոհմին , և տխմարք յաշակերտս մովսիսական օրինաց , դեր 'ի վերոյ գտանին և՛ պատուով և՛ գիտութե՟ք և ա՟ծամերձ ընտանութե՟ք քան զաբրահամ և քան զմովսէս ․ որք տգէտք և առանց դպրութե՟ն՝ խորագգած լինին երկնային վարդապետութե՟ն և գաղտնեաց միածնին հօր ․ որք գալիլեացիք և որսորդք ձկանց՝ աջակից լինին բարձրելոյն ահաւորի , և գործակից փրկագործին տիեզերաց , որ արարին զնոսա լինել որսորդս մարդկան՝ առ 'ի ժողովել զազգս և զազինս յուսկան աւետարանին ․ արք արհամարհեք յաչս աշ՟հի՝ սիրելիք և ընտանիք լինին ա՟յ , խոստակիցք և հացակիցք , ընթացակիցք , և վաստակակիցք ․ միով բանիւ՛ ասել , հաղորդք և կցորդք տ՟ն իւրեանց և վ՟պի յա՟մ 'ի տնօրինական գործս ն՟ր ։

Ո՟պ և զկնի իջման հոգւոյն ս՟բյ՝ նովին զօրացեալք սքանչելապէս՝ ընթացան ը՟ն տիեզերս , և աշակերտեցին վ՟պին իւրեանց ք՟ի ․ արծուօրէն խոյացան , և առիւծաբար շահատակեցին յասպարէզ հանդիսի աւետարանական քարոզուե՟ ․ և յաղթօղ գտեալ ն՟ք՝ ա՟մ ը՟դիմակաց զօրութե՟ երևելի և աներևոյթ թշնամւոյն , յեղափոխեցին զաշ՟հ համօրէն 'ի նոր կերպարան ա՟ծահրաշ , հանդերձ նշանօք և արուեստիւք մեծամեծօք , գերագոյն հանդիսացեալք զօրաւորաց և իմաստնոց և աշ՟հակալաց ․ վ՟յ ոչ առաւելու՟բ , այլ նուաղու՟բ առաւել ըղձաձայնէ զառաքելոցն եկեղեցի զառածն դաւթեան ․ ✱ թ՟գրք երկրի , իշխանք աշ՟հի , անպակաս գանձուց բաշխօղք‖ ․ և որ սոցին նման են ։

Ուր այնուհետև պարծանք հողեղինաց պարծելոց յերկրաւոր մեծակս արքունիս , յիշխանականս և 'ի մեծահարուստս , 'ի գիտնաւորս և 'ի զօրաւորս , բարձրապատիւս և գերապատիւս ․ զի մարդ 'ի մարդոյ և առ մարդկան գտաւ երբեմն , և գտանի երբէք մեծարու ։ Իսկ ս՟բ առաքեալք յա՟յ և առ ա՟յ մեծացեալք և վերապատուեալք եղեն և եղիցին յայսմ հետէ մինչև յաւիտեան ։ Եւ այս ա՟յ անքննին տեսութե՟ն գործ՝ յառաքելոյ անտի յայտնաբարբառ քարոզեալ ․ * Զյիմարս աշ՟խի (ասէ) ընտրեաց ա՟ծ , զի յամօթ արասցէ զիմաստունս ․ և զտկարս աշ՟խի ընտրեաց ա՟ծ , զի յամօթ արասցէ զհզօրս ․ և զանարգս աշ՟ի և զարհամարհեալս ընտրեաց ա՟ծ և զոչինչսն , զի զէսն ի՟մ խափանեսցէ ․ ո՟պ զի մի՛ պարծեսցի ա՟մ մարմին առաջի ա՟յ ‖ ։ Եւ այս ՚ի մեր ամենեցուն մխիթարութի՟՝ կոչեցելոցս ՚ի ք՟ս , զի փոյթ կալցուք պինդ պահել զկոչու՟մն , և զ՟ ընտրեալս գրիլ ․ ո՟պ և կանխէ ասել առ ետեղ ․ * Թէպէտև զձեր իսկ կոչու՟մնդ տեսէք եղբարք , զի ո՛չ բազում իմաստունք ըստ մար՟մնոյ , և ո՛չ բազում հզօրք , և ո՛չ բազում ազնուականք ‖ ։ Ո՛չ կոչեաց զհերովդէս արքայ , ո՛չ զկայիափա քահանայապետ , ո՛չ զիշխանս հրէից , և ո՛չ զբարձրայօն դպիրս և զփարիսեցիս ․ այլ զխոնարհս և զանպիտան կարծեցեալս յաչս աշ՟ի և յաչս անձանց իւրեանց ։

Այլ ձեզ հաւատացելոցդ ասեմ՝ կոչեցելոց ՚ի ք՟ս ս՟բց ՚ի ձեռն ս՟բ առաքելոց , ծաներո՛ւք զյարգ կոչման ձերոյ ընդ ընտրեալ առաքեալսն , զի արժանի լինիջիք շնորհս առնուլ և ընտրութե՟՝ փոխանակ շնորհաց կոչման ․ ապա թէ ո՛չ՝ երկերո՛ւք , հայեցեք յորդին կորստեան ․ որ զնոյն շնորհս ընկալաւ առաքելութե՟, այլ ապաշխարհ գտեալ՝ անկաւ և չարաչար 'ի բարձրութէ՟ անտի․ և կոչումն ոչ եհաս ընտրութե՟․ որ է վիճակ ողբալի քան զա՟մ վիճակ․ Թշուառանալ յերջանկութե՟, տնանկանալ 'ի մեծութե՟, գերի վարիլ 'ի Թագաւորութե՟, և յա՟ծամերձ գոլոյ՝ Է՟ սանդարամետականին կապիլ։ Եւ այս նշանակ լիցի և քեզ 'ի քումդ վիճակի՝ ով դու աշակերտեալդ ք՟ի առաքելովք․ եթէ հաւատարիմ գտանիցիս 'ի կոչմանդ, գիտեա՛, զի և ընտրեալ գտանիս․ և եթէ 'ի փոքուն հաւատարիմ եղեր, և 'ի բազմին եղիցիս։ Այլ յայդմ իսկ գթեմք բազումքս բազում մասամբ, զի ոչ պահեմք զպայմանն ընտրութե՟․ զայն՝ թէ իւրաքանչիւր ոք յոր կոչումն կոչեցաւ, 'ի նմին կացցէ։

Ահի՟ և դողութ՟ պէտք են լսել և զայն, որ 'ի նոյն հայր խորհուրդ․ կա՛լ զոր ունիսդ, զի մի ոք առցէ զպսակն քո․ ո՟պ երանելին Մատաթիա էառ զվիճակն և զպսակն առաքելութե՟, զոր ոչ կալաւ յուդա, այլ լիք եթող, և եգև բաժին որսողին․ ք՟զ և մին 'ի քառասնից անկաւ վկայից, և այլ ոք օտար փոխան նո՟ր պսակեցաւ․ զի ոչ պակասին ա՟յ ծառայք 'ի լնուլ զթի՟ ընտրելոց․ այլ իւրաքանչիւր ոք 'ի մէնջ տեսցէ լինել 'ի թուո՟յ անտի շնորհօք ա՟ն, գործակից լինելով շնորհաց․ զի և առաքեալք սովիմբ ընտրեցան, սովիմբ զարգացան, սովիմբ բարձրացան 'ի գեր 'ի վերոյսն քան զընութի՟․ և այս է լրումն գովութե՟ նո՟ց առ յա՟յ, զի զհետ գնացին կոչողին , և ոչ մեկնեցան 'ի հետոց նորա կենօք և մահու ։

Իսկ մեք ո՞րպէս • զառաքելոցն ս՟րց զկոչումն և զընտրութիւն նախանձելի վարկանիմք , և շնորհաց նոցա իղձ լինիմք , և վիճակի նոցա երանեմք • այլ 'ի գործոց անտի նց՟ 'ի բաց խուսափեմք • զհաւատս նոցա դաւանեմք ունել , այլ իբրև անյոյսք՝ անպտուղ դատանիմք , զի չեն հաւատք մեր սիրով յաջողեալ ։ Ո՞ւր , և ո՞ 'ի մէնջ խաչասէր ը՟ պետրոսի և անդրէի • ո՞ւր և ո՞ ոք 'ի մէնջ պատրաստ վ՟ա անուանն ք՟սի 'ի գլխատումն և 'ի տապակումն ո՟պ զյակոբոս և զյովհաննէս • ո՞ նմանող վաստակոց և կրիցն պօղոսի՝ լնուլ զչարչարանս ք՟սի 'ի մարմնի իւրում վ՟ա մարմնոյ նր՟ , ո՟ր եկեղեցւոյ ս՟րյ , մեռեալ աշխ՟ի , և կենդանի 'ի ք՟ս , պարծելով 'ի խաչն կենարարին • ո՞ ճշմարիտ աշակերտ յս՟ի հանգոյն այլոց առաքելոց՝ քրտամբ և արեամբ չափ • որք ո՟պ յերկրի եղեն խաչակցեալք ը՟ ք՟սի , նոյնպէս և ը՟ նմին թագաւորեալք 'ի յերկինս ։

Իսկ մեք կամիմք աստ թագաւորել ը՟ ք՟սի , և անդ • որում անհնար է լինել • զի և տ՟րն ասաց • * իմ թագաւորութիւն չէ յայսմ աշխ՟է ‖ • և թէ՝ * ո՞չ զնոյնս պարտէր չարչարիլ ք՟սի , և մտանել 'ի փառս իւր ‖ • և առաքեալք նորա եդին միաբան վկայութի՟ , թէ * բազում նեղութ՟բ պարտ է մեզ մտանել յարքայութ՟ին ա՟յ ‖ ։ Այլ թէ ո՛չ են արժանի չարչարանք ժամանակիս հանդերձելոցն փառաց , մեկն գրեաց պօղոս • և մեք յարգեանց անտի իմատաւորեսցուք՝ վերակնելով այսուհետեւ 'ի վերին երանութիւն երանելի առաքելոց ։ Եթէ հաւատամք , եթէ զոր ակն ոչ ետես , եւ ունկն ոչ լուաւ , եւ 'ի սիրտ մարդոյ ոչ անկաւ , պատրաստեաց ած՟ սիրելեաց իւրոց , ք՟ որոց սիրեցինն զած՟ , զի՞նչ պարտ է ասել զառաքելոցն դասուց ․ զորոց վկայէր ծոցածին բանն հայրական , թէ * ինքն իսկ հայր սիրէ զձեզ , զի՛ դուք զիս սիրեցիք ‖ ։ Եթէ զհարիւրապատիկն աստ խոստացաւ տրն՟՝ որոց թողուն զամ՟ վն՟ նր՟ , եւ 'ի հանդերձելումն զժառանգութիւն կենացն յաւիտենից , ո՞չ ապաքէն զառաջին ունին տեղի եւ յայսմ մասին սբ՟ առաքեալք ․ զի նոքին իսկ եղեն որք նախ հարցին համարձակութբ՟ , զի՞նչ լինիցի մեզ՝ որոց թողաք զամ՟ եւ եկաք զկնի քո , եւ առին զպինդ անսուտ խոստմանն ամ՟ փառօք եւ պատուով լի ։ Եթէ ամ՟ պատուիրանապահաց պահեալ է մուտն 'ի կեանս յաւիտենականս , ո՞ առաւել կատարեալ 'ի պահպանութե՟ ամ՟ պատուիրանաց , եւ խրատուց անդամ կամաւորաց՝ քան զսբ՟ առաքեալսն ․ ապա չիք չափ եւ քննութի՟ բարձրութե՟ աստիճանաց նց՟ յերկնից բարութիւս , ըստ գլխոց գլխոց առաքինի վաստակոց նց՟ ։

Յայտնի է եւ այն , զի ըս՟ առն եւ զօրութիւն իւր , ըս՟ հանդիսին եւ յաղթանակ իւր , ըստ մրցանացն եւ պսակ իւր , ըստ աստիճանին եւ պատիւ իւր , ըստ շնորհին եւ փառք իւր ․ Եւ արդ՝ քանզի երանելի սբ՟ առաքեալք առաքինացան 'ի մարմնի հոգւով գեր 'ի վերոյ քան զբնունի, և բազմաշահ քանքարով յորդեցին զտաղանդս շնորհաց տ՟ն ՚ի մեծի պաշտաման, որ՟յ և ՚ի գերբնական վիճակ պարգևական՝ յերանութ՟ե երկնից ասեմ, անհամեմատ է քան զամ՟ դասս ս՟րց՝ յաղթանակ նոցին և պսակ և փառք․ զոր նա միայն գիտէ՝ որ հանդիսադիրն է նց՟ և պսակիչ։ Մեզ զայն ևեթ է ասելի, զոր ճշմարտեալ գիտեմք ը՟նհանուր տեսութեամբ, զի ս՟ք են ընտրեալք յընտրելոց, և փառաւորք ՚ի փառաւորաց երկնից արքունեաց, ա՟ծամերձք և ընտանիք երկնաւոր արքային, և գերագոյնք քան զվերագոյնս յաստիճանս պէսպէս և ՚ի զանազանեալ օթևանս հօրն երկնաւորի, և գլխաւորք և մեծագոյնք ՚ի նս՟՝ որք ըստ տ՟ն ձայնի մեծ կոչեսցին յարքայութ՟ե երկնից․ Նաև մի՛ ոք յերկբայեսցի․ զի թէ յերկրի փակակալ արքայութ՟ե երկնից երանելին պետրոս, զի՞նչ անդ յերկինս իցէ․ եթէ աստ երեցփոխան ք՟ի և հովի՛ւ ոչխարաց նորա, և վէմ հաւատոյ, և գլուխ եկեղեցւոյ, զի՞նչ անդ կարծիցես ՚ի վեր քան զհասողութիւն մարդկեղէն մտաց։ Նաև պօղոս եթէ աստէն տեսօղ անճառելի դրախտին և երրորդ երկնից․ անօթ ընտրութ՟ե արարչին իւրոյ, հեթանոսաց առաքեալ՝ հայր համատարած և զտիեզերս աշակերտեալ, ո՞րպիսում արդեօք փառաց իցէ ժառանգորդ ՚ի թգ՟րութ՟ե երկնից։ Այնօրինակ և զմիոյ միոյ յառաքելոցն իմասցիս, և զբոլորեցունց առ հասարակ․ զորոյ զա՟ծապատիւ բարձրութի ժ՟բ առաքե-

լոց

լական պաշտամանն՝ դատաւորական աթոռակցութե՟ իւրով բացածանոյց ո՟րն բոլորից և դատաւորն կենդանեաց և մեռելոց, նըստել ընդ նմա և դատել զերկոտասան ազգն
ի՟էլի։

Սորին մ՟ն և արքայն դաւիթ՝ ոչ լոկ որպէս զթ՟գրազնից խօսէր զնոցանէ, այլ ո՟պ զմ՟ծազանից արանց՝ յասել անդ իւրում. * Ա՟ծ եկաց 'ի ժողովս աստուծոց ||: Եւա՞րբէ ահաւոր մեծութիւն. ա՟ծացեալս ուրեմն աստուածացուք զառաքեալսն ա՟յ. և կարի յիրաւունս. զի թէ նախամարգարէն մովսէս ա՟ծ փարաւոնի կարգեցաւ յա՟յ ճշմարտէ, և գիրն ա՟ծս ասէ՝ առ որս բանն ա՟յ եղև, քանի՞ն և առաքելոց անկ անուանակոչութ՟ի այդպիսի, առ որս ոչ միայն բանն ա՟յ եղև իբրև առ պատգամախօս մարգարէս, այլ և ինքն բանն ա՟ծ ը՟ն՟ս եղև զայնչափ ժամանակս, և եդ զբան իւր 'ի բերանս ն՟ց, և զհոգի իւր ս՟բ 'ի սիրտս ն՟ց, աշակերտել զընդհանուր տիեզերս. և ը՟ չափու յօժարութե՟ և վաստակոց իւրեանց՝ որ ոգւով չափ վաստակեցին ը՟ կարի և առաւել քան զկար մինչև 'ի մահ, անճառից լինել ժառանգորդ վարձուց մեծամեծաց. և վերաբազմիլ յաթոռս պատրաստեալս յա՟յ առաջի աթոռոյ բարձրութե՟ ա՟ծութե՟ իւրոյ
բնակելոյ 'ի լոյս անմատոյց։

Եւ արդ՝ զո՞ 'ի թագաւորաց և յինքնակալաց անցաւորաց կարող ոք իցէ բերել յօրինակ՝ գէթ ստուերաբար և պիտակութ՟, անզուգական փառաւորութե՟ և անանցական

ան

անպատում թգ՟ւրութե՟ երանելի առաքելոցն քս՟ի յարքայութե՟ անդ՟ նր՟ · յոր վայելեն և վայելեսցեն անկորուստ և անկապտելի՝ յաւերժական անմահուբ՟ 'ի մշտնջենաւոր կենդանութե՟ ը՟ ա՟յ կենդանւոյ յաւիտեանս յաւիտենից ։ Ո՞ 'ի մեծամեծաց Տի, կամ 'ի բազմագանձ կարծեցեալ մեծատանց իշխիցէ ոք 'ի կշիռ դնել ը՟ անբաւ մեծութե՟ նց՟ և անչափ հարստութե՟ · որոց անսպառ ճոխութի՟ է ինքն իսկ թագաւորն փառաց քս՟՝ հանդերձ հարբ և ամենասբ՟ հոգւով ։ Ո՞ 'ի հզօրաց կմ՟ 'ի փառաւորաց Տի, կմ՟ 'ի չն՟Տիկ անո՛ւանել գեղաւորաց և յամենապխի բախտաւորաց՝ համարիցի ոք նմանեցուցանել միում 'ի յետնոց և 'ի փոքունց յարքայութեան երկնից, թող թէ ը՟ աւագացս և մեծամեծաց · ը՟ առաքելոց ասեմ սբ՟ց՝ երջանկաց, փառաւորելոց, ա՟ծազգեցից և ա՟ծացելոց ։

Այսու հետև տկարանայ բանս ձգել յառաւել անդր · ահաւադիկ ձեզ՝ ո՛վ աշակերտեալքդ առաքելոց սբ՟ց, մատամբ ծայրի՛ նշանակեցի զընտրեալս ա՟յ, և զերանութի՟ նց՟ յերկրի և յերկինս · հայեցարո՛ւք յառեցարո՛ւք խորհրդով մտաց և հոգւոյ ակամբ՝ ո՛րչափ և բաւական իցէք, 'ի մեծութի՟ շնորհաց և փառաց նց՟, 'ի ճոխութի՟ սքանչելի մեծութե՟ նց՟, 'ի գեղ անթառամ վայելչութե՟ նց՟, և 'ի զօրութի՟ զօրացելոցն յա՟յ և յա՟ծ, արիական նահատակաց, առաքինի զօրավարաց, ժիր մշակաց, քաջ հովո՛ւաց, Տատեսուչ ոստիկանաց, տիեզերաց դիտապետաց, տիեզերալոյս վ̃դպաց , եկեղեցւոյ հիմանց , ա̃ծապատիւ քհ̃նյապետաց , ք̃ի բարձակից իշխանաց և աթոռակից դատաւորաց , խնկապէս ծնողաց մերոց հոգւովն յորդիս ա̃յ . և զի՞նչ ես ասացից . Ճշմարիտ աշակերտաց և երանելի առաքելոցն ք̃ի , հարազատ սիրելեաց և որդեկաց և բարեկամաց արարչին իւրեանց : Որոց զօրաւոր մաղթանօք և շնորհաբաշխ օրհնութե̃բ լիցի մեզ ամենեցուն՝ զհետ ընթանալ զհետոց ն̃ց , և ճանապարհին՝ որ տանի առ ա̃ծ . և՚ի նոյն վիճակ երանութե̃ հասանել՚ի ք̃ս յ̃ս ՚ի տ̃ր մեր . որում և ը̃ որում հօր ամենակալի և կենդանարար ս̃բ հոգւոյն փառք և երկրպագութի̃ յաւիտեանս . ամէն :

Մաղթիմ առ ձեզ՝ աղերս սրտի ,
ո̃ք Առաքեալք՝ հովիւք հօտի ,
յեկեղեցւոյ դիմաց աստի ,
տենչմամբ ոգւոյ՝ վերառաքի :
Նայեցարո՛ւք յերկնից անտի ,
՚ի հոյլս խաշանց՝ ձեր արօտի .
առաջնորդել՝ դէպուղղակի ,
յերկնից գաւառ փափաքելի :
Հայեցարո՛ւք սիրով ծնողի ,
՚ի պանդխտեալս աստէն յերկրի .
՚ի ձեր ծընունդս որովայնի ,
հոգւով երկնեալ՝ աղեաց որդի :
Ձե՛ր եմք զաւակք ՚ի սիոնի ,
աշակերտեալք՝ ձերում բանի .

Ձեր ձեռագործ աշխատալի ,
'ի տիրական տնկեալ յայգի :
Արդ կարօտեալ կամք յիրաւի ,
Ձեռընտուութեան ձեր հզօրի ·
Նեղեալք հոգւով 'ի հոգս սրտի ,
Թո՛ղ , տառապեալք և 'ի մարմնի :
Կամք վատթարեալ վարանելի ,
'ի չար մեղաց հարեալ յոգի ·
Տնանկացեալ՝ կարօտ շնորհի ,
Հիւանդ մտօք՝ անյոյսք յերկրի :
Դիտէք ըզմերս ազգի ազգի ,
Ցաւս և ըզվէրս անբերելի ·
Միշտ տեսանէք ա՛չք ընտանի ,
Ըզմեր կարիս յամենայնի :
Դուք զօրաւորք 'ի հանդիսի ,
Դե՛ղ դարմանոյ մեր միակի ·
Դի՛ք խոցուածոցս ըսպեղանի ,
Ըզկարօտեալս լցէ՛ք հացի :
Խաւարելոցս լո՛յսք աշխարհի ,
Ծագեցարո՛ւք՝ որպէս զարփի ·
Անհամելոցս՝ ո՛վ աղք երկրի ,
Համեղութի՛ւն տո՛ւք արժանի :
Իշխանութիւն ունիք յերկրի ,
Թէ և բնակեալք այժմ 'ի յերկնի ·
Փոյթ հասանէք յամենայնի ,
Որում առ ձեզ ապաւինի :
Այլ օգնութիւն մեզ պիտանի ,
Մեծ կարևոր՝ յօր օրհասի ·
Նոյն և յահեղ անդ ատենի ,
'Ի թի՛ւ լինել ձեր սբ՟ հօտի :

Իցէ՞ երկնից փակակալն ,
բանալ զդուռն մեզ արքունի ․
և երկնաւոր գործակալն ,
տալ մեզ տեղի յօթևանի ։
Եւ սբ՟ սիրոյն աշակերտի ,
մեզ հանդիպել ը՟ սիրելի ․
և խաչակիր մեծն անդրէի ,
հանգիստ շնորհել խաչազգեցի ։
Բարթուղիմեայ ընդ թադէի ,
հայել 'ի հայս՝ ը՟ զաւակի ․
առաքելոցդ հանուր գնդի ,
ուրախ առնել զմեզ 'ի հոգի ։
Զի յանվախճան կեանս բերկրալի ,
զուգապարեալ ձերում խմբի ,
փառաւորեսցուք անլռելի ,
զՀայր և զՈրդի և զսբ՟ Հոգի ։

ՀԱՅԿ.ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ

ՑԱՆԿ

ՑԱՆԿ

ՎԱՐՈՒՑ ՍՐԲՈՑ

որ 'ի Հատորն Գ.

Երես.

ա. Հռիփսիմեանց 5
բ. Գայիանեանց 43
գ. Փոխադրութ՟ն նշխարաց յովհ. կար. և աթանագինեայ . 56
դ. Ելք 'ի վիրապէ ս՟բյն գրիգորի լուսաւորչին 74
ե. Անմեղ մանկանց բեթղեհեմի. 86
զ. Ակակիոսի վկայի ամասիացւոյ. 100
է. և դ՟րճլ՝ բիւզանդացւոյ . . 103
ը. Յունեայ և Մանեայ . . 130
թ. Սարգսի և Բագոսի . . . 140
ժ. Սովկիմայ քահանայի . . 164
ժա. Կոդրատոսի վկայի 182
ժբ. Եպիփանու հայրապետի կիպրացւոյ 210
ժգ. Կոստանդիանոսի թագաւորի ; և մօր ն՟ր Հեղինեայ . . 239
ժդ. Թալիլեայ բժշկի 274
ժե. Թէոդիտոնի գաղատացւոյ , և Եօթն կուսանաց . . . 289
ժզ. Գրիգորի լուսաւորչի վարք , և

ժէ

գիւտ նշխարաց 321
ժզ̃. Ներսէսի Հայրապետի, և Խադայ եպ̃կսի 375
ժէ̃. Դանիէլի մարգարէի, և Երից Մանկանց 412
ժը̃. Տօն սբ̃ց Թարգմանչաց . . 421
ի. Զաքարիայ մարգարէի . . 433
իա̃. Ոնոփրիոսի սբ̃ հօրն . . . 443
իբ̃. Տրդատայ Թգ̃րի, և Աշխէն տիկնոջ, և Խոսրովիդխտոյ. 460
իգ̃. Որդւոց և Թոռանց Լուսաւորչին, Արիստակիսի, Վրթանիսի, Յուսկանն, Գրիգորիսի, և Դանիէլի . . . 481
իդ̃. Եղիսէի մարգարէի . . . 508
իե̃. Տօն ժբ̃ առաքելոց, և գլխաւորացն Պետրոսի և Պօղոսի. 509

ՎԱԽՃԱՆ

Հատորիս։

591

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1971 Թ.

ՀԱՅԿ. ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԻՄՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ



ՀԱՅԿ. ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ
[illegible]



[35 ռ.]

ՀԱՅԿ. ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ